137. Բ. Իտալիա առանձնական

Բնիկն Իտալիա գրաւեր զՏոսկանա, զման մի արգեան Հաւմայ և կեսաղարդ, և եր բաժանեալ ի գաւառս գաւառս.

Ա. Եթրուրիա (Տոսկանա). Նահանի ժողովուրդք աշխարհս համարին գաղթականք Պելազգեանց և ոմ. բրիացիք ոմք ի բաղում ցեղս զատուցան զնին, և ըստ անուանց նոցին յորջորջեցան քաղաքանի նոցուն. Վոլատերրա, Արրետիոն (Արեցցոյ), Սենա, Վետուլոնիա (Դորրէ Վէգգիա), Կորտոնա, Կլուսիոն (Գիուզի), Պերուսիա, Վոլսինիա, Տրոսլ (Դրոսսոյ), Տարկուինիա (Դարգինոյ), Փալերիս, Վէյա, Կերէ, Սուտրիոն (Սուգրի), Պիստորիս (Բիսթոյա), Լուկա, Պիզա, Փլորենտիա, և այլն։

138. Ե. Ումբրիա, ընդ մէջ Գաղղիոյ յայսկոյս Պադոսի, Եաբուրիոյ, Ագրիականին և Սաբինացւոց. բնակիչք ի նահին Գաղղիացւոց։ Քաղաքք. Արիմինոն (Րիմինի), Պիսաուրոն (Բեզարոյ), Սենա Գաղղական (Սենեկալլիա), Փորոն Սեմպրոնեան (Ֆոսսոմպրոն), Ուրբինոս (Ուռպինոյ), Կամերինոն (Գամերինոյ), Նուկերիս, Մուանիս (Գելուանեայ), Սպոլետոն, Իճուեզիում (Գետուն), Ամբրիս (Ամպիա), և այլն։ — Ընդ մէջ Ումբրիոյ և Սաբինացւոց երկրին, կայր Պիկենոն գաւառ, յորում Անկոնա, Փերմոն (Ֆերմոյ), Ասկուլոն (Ասքոլի), Ագրի (Աթրոնի)։

139. Զ. Սաբինիա. սահման ունեալ յԱ. զԱպէնենեանս. ի Հար. զԱնիոյ. ի Մ. զՏիբերիս. ի Հ. զՈմբրիա. Սաբինացիք բնիկք Իտալիոյ սերեցին բազում ցեղս, կոչեցան և Կուրիքիոք կամ Կուրիքինեանք ի Կուրիոյ քաղաքէ։ Քաղաքք. Նուրսիս, Մուտուսկա (Մոնդէ Լէոնե), Ռեաատէ (Րեգի), Կուր (Գորրեզէ), Նոմենտում (Մենտանա), Կոռնիկուլում (Բալլոպարոյ), Անտեմնէ Հռոմ ի գետասահմանին Տիբերի և Ալանոյ։

140. Է. Լատիոն. սահմանք նորա՝ ի Հ. Տիբերիս և Անիոյ. ի Ա. Սաբինոն. ի Հար. Կամպանիա. ի Մ. Տիւռենեան ծով։ Լատինացիք բնակիչք երկրիս սեռ ըստ ազգ ի նահին Խոալցւոց ընդ որս ազգ Հռոմէացիք եին Նեկուսիք, և ի նոցանէ ելին Եկուսացիք, Հեռնիկեանք, Հառուգուբեանք, Վոլսկեանք, Աբորիգինեանք, և այլն։ Քաղաքք. Հռոմ, Ոստիս, Լաւրենտոն (Դորրէ տէ Բագհեռոյ), Լաւինիոն (Բրաթեբա), Ալբա Երկայն կոչեցեալ (Բալացցոլոյ), Տուսկուլում (Գրասգադի), Պրենեստ (Բալեստրին), Լաթիկոն (Գոլոննա), Տիբուր (Դեւոլի), Գաբիս, Սորա, Արդեա, Անտոն (Անցիոյ), Սեռամ (Սեցցա), Ակուինոն, Ասպինոն, Պրիվերնոն (Բրեներոյ), Ասինա (Ագնոյ), Փոմետի (Ֆոնտի), Տարրակինա (Դերրացինա) որ և Ածսուռը, Ամիկլէս (Ամիքլեա), Կայետա, Փորմիս (Մոլա), Աստնս, Մինտուրնէս (Դրայեգդոյ), և այլն։

141. Ը. Կամպանիա, որոյ սահմանք. ի Հ. Լատիոն. ի Հար. Լուկանիա. յԱ. Սաբինոն. ի Մ. Տիւռենեան ծով։ Քաղաքք. Վէնաֆրոն (Վէնաֆրոյ), Կոլէս (Ռաւլի), Կապուա, Գաղատիա (Կոստայցոյ), Լիմատեռնոն (Բագրեա), Կուման, Միսենոն, Բայա, Պուտէոլիս (Բուեցցոլ), Նէապոլիս, Հերքուլանոն (Րեզինա), Պոմպէա, Սաարէա (Գասգելլամարէ), Նոլա, Աբելլա, Մաբրինոն, Սալեռնոս, Պիկենտիա (Բիչենցա), Սաալիկոլա (Գալերդա Վեգգա), Ակերրա։

142. Զ. Սամնիոն. սահմանք, ի Հ. Պիկենոն. ի Հար. Լարգուլիա. ի Մ. Լաթիոն։ Գրաւէ զպժմեան Ապրուցք և զՏրիկերն գրծոյ. ի Սաբինացւոց սեռեալ ազգք, Մարսիկք, Վեստինեանք, Սամնիացիք, և այլն։ Քաղաքք. Ալբա՝ Փուչինեան կոչեցեալ, Տճատ (Դիեզի), Առեռնոն (Բեսագարա), Կորփինոն

(Թևինոյ), Մուշեղն (Մուշեղեան) Ռովհաննէն (Պոյանոյ), Օսիփէն (Ասլիհանեան), Տէվլեխա (Դևլեխ), Բէնեվէնտան, Կասդհոն (Աբրիոլա), Կոմպայա (Գոնդցա), Հռոմուվէա (Պիզացէխա), Ակուիլոնիա (Լազետանեա)։

143. Դ. ՄհՆ Յուհաստան

Կոչէր և Հարաւային Իտալիա, ուր գաղթականք Յունաց կառուցին բնակութիւնս. Էին ի նմա գաւառք.

Բ. Նպատլիա, որ ունի զայժմուս Պարի, զԴրաքոզ, զՊռաքիկգազ և զԱբրիդատոզ գաւառս Նեապօլոյ, և Էին ի նմա քաղաքք. Տէանոն Նպուլեան (Ձևիվիգան), Սեպտոնան յոտս Գարգանեան լերին, Լուկէբրիա, Հէրդոնէա (Որատնա), Սալպէր), Ակուզոն Ապուլեան (Ասգոլի), Կաննէ, Վէնուսիա, Փերինոն (Փորինցա), Բրունդուսիոն (Պրինտիզի), Տարէնտո, Հիդրունտն (Ոգրոնգ)։

Գ. Լուպանիա, որ է այժմեանս Պաղիլիգազ և մասն Կալաբրիոյ. յորում քաղաքք. Պեսատն կամ Պոսիգոնիա, Եղէա (Գաագելլամարէ ու Պրուգա), Հերակլէա (Մերձ ի Բուիգորոյ), Սիւբարիս (Տորրէ Պրոսնենեագոյ), Բուքանեան (Բուլիքասդրոյ), և այլն։

Դ. Բրուդեան, որ է մասն մի Կալաբրիոյ, և ի նմա. Պանդոնիա (Մենկլոնա), Կոնսենիա (Գոնձցա), Պեսուլիա (Սգրոնկոլի), Կրոտոնա, Սիպէրսիկոն (Շիլլոյէ), Մասիբոնի (Ոմփիսոյ), Հաեգիոլիս (Րէձձիոյ), Լոկրիս (Պրուցցանոյ)։

144. Դ. Կողիք

Յողմէ ի Կղզեաց Իտալիոյ մասն համարիին Մեծին Յունաստանի, ընդ որս և Սիկիլիա.

ՌՆ. Սիկիլիա ի նախնումն համարեալ բնակութեամբ լինել Կիկլոպացց և այլոց հսկայից, և զնոսին անուամբ ի ձեռս Սիկիանացոց, Կարքեդոնացոց, Հռոմայեցւոց. և քաղաքք բազումք կառուցան ի նմա. Դրէպանոն (Դրեպանի), Սեգեստա (Հռոմ ի Գաղղիայէն ու Կոլշիոյ), Պանորմոն (Բալերմոյ), Հիմերա ի Ծովէզերին հիւսիսակողմն, Տիւնտարիս (Գինտարոյ), Մեսանէն, Լիլիբէոն (Մարսալա), Սելինոս (Դորրէ ու Բոլոշէ), Ակրագանդ, Գելա (Հռոմ ի Գերրա Նովա), Կամարինա, Կենդուրիպէ (Ձենդորպի), Հիւբլա Մեծն, Էննէ (Գաագոյ Ֆիովանին), Կասսանա, Էքսոնոն (Լէնգինի), Սիրակուսա, Տրոտիկէ, և այլն։

Բ. Մասը կղզւոյ Սիցիլեան Յունաստանի. Եաղելանք ողբ և Հրաբղխի. Սգրոնկիվէ (Սգրոմպոլի), Լիպարա, Հիերա (Վուլգանոյ)։ Եգեստանք. Սէլինէ (Մալգա) յորում Գաալտա (Կոզցոյ) քաղաք. Ովգիպէոն յորում կալնպտեան կղզին։

Գ. Խաշտեան կղզին։ Կորսիկա զոր Յոյնք կոչեցնոս կոչէին, յորում քաղաքք. Նիկիկա և Ալերիա Սարդինիա, յորում Տիւրսալ (Լոնկոդ-Սարսոյ), Կոռնոս (Դոռնենգոյ), Կալարիա (Գալեարի)։ Իլլա կամ Եթալիա (Էլլոպա), Պլանասիա (Բիանոզա), Պոնտիա (Փոնցա), Պանդատարիա (Վանտաէնա), Պիթեկուսա կամ Ենարիա (Իսքիա), Պրոկիւտա (Փրոչիտա), յորում Կասպրէա (Գասբի)։

145. Թ. ՅՈՒՆԱՍՏԱՆ

Գերագհամարեալըն Յունաստանի սահմանք էին ի Հ. Լիւրիկէ. Միւսիա և Թրակիա. և Յովք այսոցս պարսկեցին զնուաս. ի հիւսիսային կողմանց Թուին նախին բնակիք Յունաց գաղթեալ այսր, ի Հնգհազարամանցի աղգաց, և գլխաւորք ասհմք նոցա են Պելասգեանք, Հելլէնք, Լելլեկանք կամ Կաբէսք, յորոց շառաւիղեցան բազմացեղ Ժողովուրդք Յունաց։

Ծովք Յունաստանի՝ Ցռիկական և Եգեան, յորում Կրետացին և Միւրտոյնեան Ծովակք. — Կիրճք Ծովու. Եւրիպոս (Նեգրոպոնտ) և Պաղտիս. — Ծոյք. Ամբրակիոս (Արտա), Մեսինայ (Գորոն), Լակոնեան Ծոց (Գոլքերիգնա), Մալեական (Զէյդոնն), Պելասգեան (Վոլոյ), և այլն։ — Գետք. Լուսս (Վոյուսա), Թեւսամիս (Գալատաս), Ախեղոոն (Մավրոզոգամոս), Աքեղոոս (Աբբրոզոգամոս), Եւրէնոս (Գիփասրի), Պենէոս (Կասգոտնի), Ալփէոս, Պամիսոս, Եւրոտաս (Իրի), այսոքիկ ի Յունիկանն Թաքէին Ծով. խակ յԵգեանն. Ինաբոս (Չէրթոս), Կեփիսոս, Նսոսոս, Պինէոս Թեսալեան (Սալամպրիս), Ասիական (Ինձէ Գաղասոս), Կնոսոս (Մէնդոյ). և վտակքն Կոկիտոսի, Նիլոէոս (Սագալձէ), Եւրիգոն (Վ.ֆագրկա)։ — Լիճք. Լիւգնիտոս (Օգրիգա), Պգիսմիսլոս (Զաբագա), Լեռնեան լիճ (Մուլին), կոպայիս ի Բեոզոնիս. — Լերինք. Ակրոկերաունեանք՝ Աթոս (Մոնդէ Սանդոյ), Պինգոս, Ոլիմպոս, Պիերոս, Ոսսս, Պելիոն, Խպս (Անինոս), Պառնասոս (Լիաքուրաս), Ելիկոն (Զագարա), Կիւթերեոն (Ելլոմեա), Պենտելիկոս, Հիւմեթ, Լաուբիոն, Երեքին սորա յԱտտիկէ, Կիւբելնէ (Չէրբեր), Երիմանթոս (Գելմոյ), Տայիգետոս (Մաինս), Խոռմ (Վ.ուլգանոյ), Տիքասս (Լազսերիզ)։

Տասն նահանգք էին Հնոյն Յունաստանի։

146. Բ. ՄԱԿԵԴՈՆԻԱ. — Սահմանք. Ց. Թրակիա. ի Հ. Լիւրիկէ. ի Մ. Պինգոս. ի Հար. Ակրոնեփիա։ Քաղաքք նշանաւորք. Հերակլէա Լինկեստաեան, Եդեսսա կամ Եգէա (Վանինա), Թեսսալոնիկէ, Ամֆիպոլիս (Խոզոլի), Խոն ի բերան Սարիսմոն գետոյ, Եղեհա (Կրեշոյ), Սեհոն (Լէուգերտորի). Պիգոնա կամ Պիտրոն (Գիգրոս), Բերէա, Պատիգնա որ և Կասսանդրիա, Ոլիւնթոս (Ա.յա Մաննա), Տորսն, Ականթէա (Երիսաս), Ստագիրս (Ոգալգոս), Տիւսականի (Տուբացցոյ), Ապոլոնիա (Փոլինա), Աբդոն, և այլն։

147. Բ. ԵՊԻՒՌՈՍ. — Սահմանք. ի Հ. Լիւրիկէ յանտական. ց. Պինգոս. ի Հար. Ակրոնեփիա. ի Մ. Յունիական Ծով. Քաղաքք. Կիմմէր յորմէ

Ակրոկերաձեան լերինք, Պուէրտոն (Պուէրինդոյ), Գվեգիա (Կվեքի), Նիկոպոլիս (Բրնվեզա վէրգիա), Ամբրակիա (Արգա), Դոգոն (Ի հիւսիսոյ Նանեայ), և այլն։

148. Գ. ԹԵՍՍԱԼԻԱ. — Սահմանք՝ ի Հ. ու Լիմպոս. յՀ. Եգեան ծով՝ ի հար. Իպա. ի Մ. Պինդոս. Բաղում Ժողովրդոց նշանաւորեալ հայմամբ Թեսսալիա, որպէս և Էպիրեցւոց և Մարգոլոցւոց։ Քաղաքք. Դոմոկի առ. Պիներան վտակաւ, Տրիկկա (Դրիքալա), Գոմֆոս (Կոմֆկա), Լարիսա առ Պինեայ, փերքա (Վէրքագիա), փարսալիս (Սաթալճը), Մելիբէ յոյս Ովսոյ լերին, Պագասէս ձոր Նաւն Արգոնաւորդաց կառուցաւ, Լարիսա Կրեմաստեան, Փթիա, Աքոսկիւռա, Լամիա (Զէյթունն), և այլն։

149. Դ. ԱԿԱՈՒՆԱՆԻԱ. — Սահմանք՝ ի Հ. եպիւռոս. յԵ. Թեսսալիա՝ ի հար. Եւռոդիա՝ ի Մ. ՅՀնի ականն։ Քաղաքք. Ակոռոն (Ագիոյ), Անակտորիոն՝ ի հարաւոյ Ակոռոնի, Արգոս Ամֆիլոքեան, Ոլիմբիա Հուպ յԱրգոս։

150. Ե. ԵՏՈՂԻԱ. — Սահմանք. ի Հ. և ի Մ. Ակառնանիա. յԵ. փռվկիս՝ ի հար. Ծոց Կորնթոսի. Քաղաքք. Կալիւդոն, Թերմոն։

151. Զ. ՓՈՒԿԻՍ. — Սահմանք. ի Հ. Իպա. յԵ. Ռէովտիա՝ ի հար. Կորնթեան ծոց՝ ի Մ. Եւռոպա։ Քաղաքք. Դելփիա (Դաադրի), Նէյաոիա (Դուբրօնորիոյ), Դաւլիա, Կրիսա առ Ծովէզերն, Կիւռա և Անտիկիւռա առ երի։


152. Ե. ԼՈՒՐԻՍ. — Յերկուս բաժանէր գաւառս յարեմտեան և յարեւելեան, որոց սահմանք Եւռոպա, Փռվկիս, Կորնթեան ծոց, Թեսսալիա, Ռէովտիա և Եգեան ծով։ Քաղաքք. Ամֆիսա (Սալղնա), Նաւպակտոս (Լէբանդոս), Ոպոս (Հուպ՝ ի Դալամոսա), Թրոնիան (Մերձ ի Ռոմանի), և այլն։

153. Է. ՌԷՈՎՏԻԱ. — Սահմանք. ի Հ. Լոկրիս. ի Հար. Ատտիկէ՝ ի Մ. ծոց Կորնթոսի. յԵ. Ակրոն Եւբիպոսի. Քաղաքք. Թեբէ (Թիվա), Որքոմէն (Ագրիքոս), Քերոնէա (Գաբրանու), Կորոնէա (Դոմարի), Ազիարտոս ի հարաւոյ կոպպիս ձմի, Լեւադէա (Լիվատա), Ակրա (Կէսոխորիոյ), Թեսպիս (Հուպ յԵրմոյ Գաագրոյ), Լեւկտրա (Բարարոձիա), Պլատէա (Հուպ ի Գոգա), Դելֆոն (Տրասիդի), Ասկրա (Մերգրոյ Վաթի), և այլն։

154. Ը. ԱՏՏԻԿԷ. — Ատտիկէ Թերակղզի էր, և սահմանք նորա, ի Հ. Ռէովտիա. ի Մ. Կորնթոս, և Ծովը յայլոց կողմանց։ Քաղաքք. Ազիէք, Մարաթոն, Հեռաւիոս (Ագաւրոյ Գաագրոյ), Դեկելիա (Պիալա Գաագրոյ), Եղեւերեվիս (Հուպ ի Գոնաուրա), Եղեւսիս (Լէքսինա), Լաւրիոն (Լէկրանդ), Մեգարա։

155. Թ. ՊԵԼՈՊՈՆՆԷՍ. — Որ ագի Մոռէա կոչի, կիրճէ Կորնթեան հաղորդէ զնա ընդ Ատտիկոյ, Ծովը պատ գոլով աւնեւսւս։ բնիկք երկրին էին Աքէացիք կամ Արկադացիք. և բաժանէր պեղոպոննէս ի գաւառս գաւառս. — ա. Աքայիա. սահմանք, ի Հ. Կորնթեան ծոց՝ ի հար. Եղիդէս, յԵ. Մեգարա։ Քաղաքք. Պատրաս, Եգիոն (Վօստիցա), Սիկիոն (Վասիլիգա), Կորնթոս որ երբեմն Եփիւռա կոչէր, Փլեոն՝ ի հար. Սիկիոնի։ — բ. Եղիդէս. սահմանք, յԵ. Աքայիա, ի հար. Մէսենէ, ի Մ. Յունիական։ Քաղաքք. Եղիս (Բալէօրիս), Ոլիմպիա առ Ալֆեոսիս, պիսա՝ Հուպ յառաջինդ, Սիկիւռա ի հար. Ոլիմպիոյ՝ գետ Քսենոփոնի, Պիւլոս Տրիփիւլիական։ — գ. Արկագիա, ի մէջս պեղոպոննեսեայ, կոչէր ի Նաճնուռնի պեղոպոննես։ Քաղաքք. Կարիէ Հուպ ի լճէն Սաւրմիալոյ, Սաւրմիալ (Գիրնիա), Որքոմին (Դալբագի), Մանտինէա (Ի հիւսիսոյ Տրիբոլիցայ), Տեգէա (Բիալի), Մեգալոպոլիս (Սինանոյ)։ — դ. Արկոլիգա. սահմանք, ի Հ. Աքայիա, ի Մ. Արկագիա, ի հար. Լակոնիա, յԵ. Եգեան ծով։ Քաղաքք. Արգոս, Նաւպլիա, Տիւրինթ ի հար. Արգոսի, Միւկինէ, Նեմէա, Եւոիգաւրոս, Տրեզէն (Տամալա), Հերմիոն (Մերձ ի Գաագրի), Թիւրէա (Անյիսա Անտրէասս)։ — ե. Մեսենէ. սահմանք, ի Հ. Արկադիա, յԵ. Լակոնիա, ի հար. և ի Մ. Յոնիս։ Քաղաքք. Մեսենէ, Պիւլոս (Հին Նաւարին), Սոեւ Նեւկլաբոս (Նիսի), Կարոն, Մեթոն կամ Մոտոն։ — զ. Լակոնիա. սահմանք, ի Հ. Արկադիա, ի Մ. Մեսենէ, ի հար. և յԵ. Յոնիս։ Քաղաքք. Սպարտաս կամ Լակեդեմոն, Սեզասիս՝ ի հիւս. Սպարտայ, Ամիւկլէս (Ագըսլօսորիոյ), Եւրս (Սկիլի), Եւսիդաւրոս Լիմիրեան (Հին Մալոյազի), Կիւթիոն (Գոլոգիթիա) առ Լակոնական Տոցոլ։

156. ՀԱ. ԿՂԶԻՔ ՅՈՒՆԱՑ. — ա. Յոնիական կղզիք. Կորկիւրա (Գորֆու), Լէւկադիա (Ս. Մաւրա), Իթական (Թէաքի), Կեփալղնիա, Զակինէթոս (Զանգա) յորում քաղաքն համանուն, Սաւրտիգա (Սդրիվալի)։ — բ. Եգեան կղզիք. Սկիաթոս (Աքիսդոյ), Պեպարէթոս (Բիբելի), Սկիւռոս (Աքիւրոյ), Եւբիս (Էյրիպոզ կամ Նէկրոպոնտ)՝ յորում խալկիս քաղաք և երեսփոխ (Բալէոյ Գագդրոյ), Միւրգոս (Գարիսդոյ), Սաղսմիւս (Ռէզուրի), Եգինէ, Կիւթէրէա (Ձէրիկոյ), և այլն։ — գ. Կիւկլադեաք որ և Շրջապատիւքն զՆէլոսիւս. Անդրոս, Կէոս (Ձէա), Գիւարոս (Նուրա), Տենոս (Դինոս), Կիւռնիոս (Թերմիա), Միւկոն (Միգոնի), Դէլոս (Սդիլի), Սերիփոս, Պարոս յորում անուանի քարահատաք ասկիսակ կոչոյ, Նաքսոս, Մէլոս, և այլն։ — դ. Սպորադէանք Եւբոյեան. Սքիրգոս, Թերմս (Սանդորինի), Ասիւպալէ (Ագամբալի)։ — ե. Կրետէ (Գանտիա), յորում քաղաքք, Կիւդոնիա (Գանէ), Կնոսս առ Ծովէզերն, Հեթակէնոն (Գանտիա), Գորտիւնա երկու փառաւոր հեռի յիւթոյ, Լիւկաստոս (Լասդի)։



Ա Ն Գ Ղ Ի Ա

կամ

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Մ Ե Ծ Ի Ն Բ Ր Ի Տ Ա Ն Ի Ո Յ

Տարածութիւն 15,800 *փարսախ* □. *Բնակիչք* 27,000,000։

157· Ի ՆԿԻ աշխարհ ծովակալ Թագաւորութեանն Անգղիոյ որ նուաճեալ ունի ընդ իւրև գրեթէ զուրթերորդ մասն երկրի և զվեցերեակ մասն համարէն բնակչաց նորա, է Մեծն Բրիտանիա կամ Բրիտանեան կղզիք, և կայ ընդ 0°, 35′–13° աստիճանաք արեւմտեան երկայնութեան, և ընդ 50°–61° հիւսիսային լայնութեան։ Կրկին մասունք են աշխարհիս, Մեծ մեծ կղզիք, մին Բրիտանիա մեծն, յորում Թագաւորութիւնք Անգղիոյ և Սկովտիոյ և Իշխանութիւնն Կալլէս կամ Ուէյլզ· և միւսն Իռլանտա, և շուրջ զաղաք կղզիք մանունք· որոց միահամուռ չափ տարածութեան է 15,800 փարսախ □։ Առաջնականն ովկիանոս պատէ շուրջանակի· բայց սահմանք նորա հեռաւորք են ի հարաւոյ կողմանէ աշխարհն Գաղղիոյ, և յարեւելից Ջանիմարգա, իսկ յարեմտից և ի հիւսիսոյ նոյն ինքն ովկիանոսն· որ և յարեւելակողմն աշխարհին կոչի Ծով Հիւսիսոյ կամ Գերմանիոյ, և Մանիկա՝ ի հարաւոյ։

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

158· Չբնին Անգղիոյ տաք ասա զնկարագիրս երկրին, զայնչափ երկայն մասանց Թողուլ զկնի· բայց զբերս նոցա յիչեացուք ասա։

Անգղիա որպէս և հարեւան Բրիտանիա երկիր գաչտային է, բլուրս նեթ ունելով մանուռնս և յայլով, մանաւանդ յարեւմտեան և ի հիւսիսային կողմանս· լեռնաշէտ է գաւառն Տըրպի (Derby) և Նըշանաւոր է ի բարձրութեան լեառն Բիք (Peak)· իսկ ի հարաւային կողմանս ամբառնան կաւուտ սարաւանդակք սպիտակափառք, յորս սակս և աշխարհն Ալբիոն առ հինն և մինչև ցարդ առ քերդողս՝ կոչի, որ նշանակէ Սպիտակ· լեռնային է և իշխանութիւնն կալլէս։

159· ԳԵՏԻ ԵՒ ԼԻՃՔ·— Բազմաթիւ են գետք Անգղիոյ, այլ ակոյք և մանուռնք· գլխաւոր է Գաճէ որ քան Անգղիացոց Թեէմզ (Thames) և քան հնոց Տամեսիս և Խոս, որոյ զհարաւային կողմանէք պատեալ և անցեալ ընդ մայրաքաղաքն Թաճի՝ ի ծովն Հիւսիսոյ· ի նոյն ծով Թաճի և Հըմըռը (Humber) որ է խառնուրդ Ուզ (Ouse) և Դրէնդ (Trent) գետակաց·

Վ֊֊ըֆ (Warf), Էր (Air), Տէր֊֊ըէ (Derwent) վըտակք հառնին յԱԷվ, և Տըվ (Dove) ի Դրենդ. Մըրսէյ (Mersey) առևալ յինքն զԸր֊֊էյ (Irwell) և զՈ֊Է֊էր (Waver) հասե ի ծովն Իռլանտայ. Սեվըռ (Severn) հզօրագոյն ի գետս Անգղիոյ անցեալ ընդ կալէա և ընդ բաղում գաւառս Անգղիոյ և ընկալեալ զՈ֊֊յ (Wic) յաջմէ և զԷյվըն (Avon) ի ձախմէ հոսէ ի ջրանցս Պրիստըլի. — Ձկը ԱՆգղիա վէմ մեծ, այլ մանուկք և գեղեցիկք ի գաւառն Ռէսթըրլանա, Գրմոըրըլանա և Լէքէսթըրզ։

160. ԿԼԻՄԱՏ· ՀՈՂ. ԲԵՐՔ. — Բարեխառն ևամարի կլիմայ երկրի և մասանց Բրիտանիոյ առ աշխարհագրական դրիւքն, և ձմեռն մեղմագոյն է ի Լոնդրա քան ի Բարիզ· գուն ուրեք պտղի Դամիղ և ձիւն այն ինչ նստեալ և հալի· բայց խոնաւութեան սեվոյն արգասիք են բազմահանութիւնս, զի երկինք յաճախ մառախլապատ են անդ և անձրևք ասեկոսս իսկ խոնաւութեան օգոց և նուազութեան ջերմեռնեան՝ ոչ սոսրացուցանէ զբոյս ԱՆգղիա, և ժողովրդեանն Թռէի ասակ զմիամտոյին բնաւորութիւնն ձգէ (զոր ևոքա ֊էյն (spleen) կոչեն), և զիաժուկ կազմած մարմնոյն՝ որ վաղ ախեղծանայ։

161. Բայց երկրին արգասաւորագոյն է, Թէպէտ բազում են խոպան դաշտքն և ևողակոյտք վառելիք զոր գ֊ի (bog) կոչեն, և մշակութիւն քաջ բարգաւաճեալ· այլ արգիւնք երկրին ոչ բաւեն ժողովրդեանն, վասն որոյ ամի ամի ցորեան բազում բերեն ի պարզիսան գաւառաց· ոչ սակաս են և անվաուէրս արտք ևորա։ Փոքու իւիք զանազանին բերք Բրիտանական կղզեաց· ի բոլոր մասունս երկրին խառնապէս և ընդհանրական գտանին ծառք պտղաբեր. առատագոյն են և խնձոր և տանձ ընսիր յոյոց և օշոկաս գործեն· չիք անգ այգի, այլ որիք ձողաբաղէք, և բազում խնամոց կարօտք, վասն որոյ զգինի ի Գաղղիոյ և ի Լուսիտանիոյ առնուն։ Առանձինն խնամով պահեն ի ջերմանոցս և բազում տգղա ատրաստ բուսոց Ասիոյ և Ամերիկոյ, և համարեն 3,300 տգղա բնիկ անկոց համարին բնակօք ԱՆգղիա։

162. Ի կենդանիս պատուական են խաշինք և արջառք, մանաւանդ ոչխարքն գեղմնաւորք յոյոց առանձնագծեն տգղեղագիի հիւսուածս կերպասոյց. և երկիրքդ գեղեցիկք և ընսիրք, յոյոց զքաշքեղեցկիս բազում ծախուք և խնամով բուծանեն և վարժեն յարշաւ. ի տիրեցեալք զրօսանք և զուարճալի յոյժ պարապուձին է ԱՆգղիացւոց· լինի ԱՆգղիա և այծեամն և եղջերու և գոնէ· ի վարրնէ կենդանեաց ոչնի պաղուկս և գպիս, գիսատս և գշուն։ Ի հաւուց՝ աքաղաղ ընսիր, զոր հանդգոյն երկրիսդ կռուեցյանցն ի հաւամարտս, սրածայր ճանկեք և մոյակեք վնասել զկոճս նոցա. ոչնի և լոր և սպիրք և փասիան և գրաստահաս ԱՆսխոյ թերեալ. և ի գեղս տիէ հաւուց զարձուի և զծովածուի և զանգղ։ Ի սեռս միջատաց մեղու և Թիւճենդիկ անասնի են ի Բրիտանիա. և ի ձկանց արծիկա և սալմոն, և ոսպրէ և ժժմանիք և ծովաբոյսք։

163. Հանիքք առատ են ի Բրիտանիան կղզիս և առատեալ քան զայլն աղի և սպիծոյ և կապարի, ի գաւառան Չէսթըր, Դըմոըրըլանա և ի Կալլէս· առատագոյն ևս անտ, քայց զերկաթ ի Մաէնտոյ բերեն զի նուազ և անպիտան է երկաթ Անգղիոյ· լինի անդ և մասիս կ֊ի֊է առատեալ, որով զպատկերս անդ բնաց գործեն, և կապար բրածոյ, և ֆ֊ըֆ֊ի (castine) որ է քարնման ֆ֊ըֆ քարի, կարծրագոյս և քաջ մագուցի, յորմէ անօթս լինին։ Այլ առատ և շահաւետագոյն քան զանձնայն ածուխն հանքային գըտանի լերանցն և յերիր մասունս աշխարհին, և ասուար մեծ լինի գերբաեձեան և բարգաւաձանաց ազգին՝ ի Նարտարութիւնս՝ ածխագեկերով մեքենայից, և զայն վառնաւանեան ևեձեան յանելով· ոչ միայն ի գործարանս վարեն զածուխս, այլ և ի պէտս լուսաւորութեան, զոմանք անոի զգին գերազոտ զանուա նեալն ի֊ը և ամիսիկալ յընդունասան մեծ, կապալեալ խողովակաք խառնացուցանեն ի փողոց և ի տունս և ուր ուրեք և կամիցին. և զանկալ ածուխն ֆ֊ը կոչեցեալ (coak), ի կրակարանս վառեն։

164. ՌԱՀՒ· ԵՐԿԱԹՈՒՂԻ· — Ի գերբութիւն և ի բարգաւաձանս վաձառականութեան յարգարեալ է Անգղիացւոց ռահս բազումս ի հեղս և յերագ երթևեկ, և չիք ևերթոյս բաց ի գաւառաց ուսուեք խուսիոյ աշխարհ որոյ իցեն ոչխարն գերազանալի հարի ձանապարհք որպէս ԱՆգղիա։ Այլ գերութիւն մեծագոյն մասունչին ի ձանապարհս Հորդութիւնն երկաթուղեաց (railways) չոգեհոյր կառաց, զոր նախ ի Կալլէս հնարեցին առ ի պէտս վաձառիոյ բովանց, և յայնմանէ տակաս ի կատարելագործութիւն եկեալ արուեստին ընդ աշխարհն Համերէն յարգարեցան, յորս նշանաւորք են որք ի Նիւթքասըլ և ի Կլըմերդէն, և շահիւն ընդ Քարպիֆ և Մըրթը֊Տիվուռէլ (Cardiff, Merthyr Tydwill), շահիւն ընդ Լիվըրբուլ և Մէնչեսթըր, շահիւն ընդ Պըրմինկհամ և Պրիսթըլ. շահիւն ընդ Լիվըս և Մէնչիլ, շահիւն Լէյտըրսյ ընդ Եարտսյ, ընդ Քէմպրիճ, ընդ Պըրմինկհամ, ընդ Կրենիֆ, ընդ Պրիսթըլ, շահիւն ընդ Քարլէյլ և Նիւքասըլ։ Ի Սկովտիա, շահիւքն ընդ Քիլմառնոք և Դրուն, ընդ Պերիք և Կլասկոյ։ Ձհաձնտա, շահիւ ընդ վ֊ուռդըքիրըլա և Լիմերիք։

165. ՁՐԱՆՑ·Ր. — Բազմաձիս են և ջրանցք ի Բրիտանիա և գերբաեձեան մեծ ընծայեն երեսնեկից· ամենեքին ուղղեալ ձգին ի քաղաքս ինչ գլխաւորս և բաժանեալ ի բազում գարձուածս պատեն զքաղաքսն· շատք ի տոցունց տձռեալք են և ոչ խոտնիսք, այլ են և խորագոյնք, որք երերն և ձուլն· կենդանեք կամ ուսարնք ջանացեալ են ի չորեսին ածանուցը քաղաքն Մէնչեսթըր, Լիվերբուլ, Լէյտսյ և Պըրմինկհամ, յորս մարձի է յաւելուալ Պրիսթըլ և Չէսըլ։ Ի ջրանցս Մէնչեսթըրայ գլխաւորք են Ուէյ֊ֆէյ որ ի Մէնչեսթրայ ասանի ի Հեվինկհամ, Պրիջ֊֊ըէյ որ բաժանեալ յերիս առաձս Համրոքի ընդ ջրանցն Բրէնդպյ և Մըրզէյայ. և այլն։ Ի Լիվերբուալի ջրանցս գլխաւորք են Էլլէսմէր (Ellesmere) բաժանեալ ի յորս Թևս, Շէ֊֊ըշըրի, Դրէնթ֊Մէրճի, Տէրոի, և այլն· Լոնդրայեն, Ասրօ֊ֆոի ջրանցն, Բնէ֊ֆֆինֆըն, Մ֊ո֊ռնեան անուանեալ ջրանցք, և այլն· ի Պըրմինկհամ, Ջրանցս Պըրմինկհամ, Գեղչեսթր, Ո֊ոռոսֆո,

և այլն։ Ի Սկովտիա անուանի են Ջանդքի Կալեթ-Նեան, Գլոյտ և Փերթ, Գրինկն (Crinan), Եքսինկեն-թընել (Քոռնէլ Լրանդ) ընդ Ֆորթըրկի և Լոխմոլըրի, և այլն։ Յուանտաս, Աբեռնի Լրանդն ընդ Տըպլին և Թարմընսթեգի (Tarmonbarry), Մէնի Լրտըռնըն ընդ Տըպլին և Պէնեգկըր (Banagher), և այլն։

ԲԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

166· ԲՆԱԿԻՉՔ.— Թէև համօրէն բնակչաց պետութեանն Բրիտանիոյ հանրի սրդ $27\frac{1}{2}$–28,000.000· յաշխարհագրի 1851 ամին (յ30 մարտի) գտան անբնակին մասունս պետութեանն 27,435,328 ոգիք, յորոց 17,905,834 Անգղիա, 2,870,784 ի Սկովտիա, 142,916 ի Կղզիս, և 6,515,794 Յրլանտաս. ի յետնումն տասն ամաւ յառաջ իբրև երկու միլիոնաւ աւելի էին բնակիչք, այլ ի սովոյ և ի ատելս գաղթականաց ՅԱմերիկա՝ նուազեցին։ Անգղացիք և Սկովտիացիք ի գերմանական ազանց սերեալք են, իսկ Յրլանտացիք (Ա.յեռ), Կիմրացիք Կալլէսի, Կալեռնեանք Սկովտից, Ման և Հերբրիտեան կղզեաց բնակիչք՝ ի Կելտաց ազգէ են։

167· ՀԱՐՏՈՒԹԻՒՆ· ՎԱՃԱՌՔ.— Թէպէտ և երկիր Անգղոյ ոչ է ի կարի արգասաւորաց, այլ յերկոց դարուց հետէ բարգաւաճեալ մշակութեամբ առաւել քան զկարծիս տեսողացն։ չիք ազգ որ իբրև զԱնգղացին գիտաց զբերս աշխարհին իւրոյ ի հաց և յօգուտս սրկանել։ ընդ ամենայն գաւառս պետութեանն կարգեալ են գործարանք ամենազգեղ, որք և օր քան զօր ի յառաջադէմն ընթանան։ Այլ ամի իբրև 2,000.000 տաեղ. լերկից տուեալ հիւսածք գործեալ առաքին ընդ ամենայն աշխարհ, և իբր 500.000 գործաւորաց վաստակին յայն գործ· Գաղղացիք, Պելճիացիք և Գերմանացիք միայն հաւասարեն սոցա ի մասինս. բամբակ տարեւոր 130.000.000 լիարաչ մեռանէ ի մեքենաւոր գործարանս Անգղոյ, յոր վաստակին 160.000 ոգիք, և գին գործելոյ բամբակաց՝ 30.000.000· և ոչ ոքիք գտանի մանած բամբակի ընթեր քան զԱնգղոյ· բայց ի կերպասեսցս՝ Գաղղացիք գերազանցեն նպաստիւք օդոյ աշխարհին իւրեանց։ Ի գործ ջանալոյ մեռազոց 380.000 անձինք պարապեալ են և չաշ տարեւոր ի հոգուն 20,000.000· ի ձեռն 160.000 գործաւորաց հանեն ի տարւոջ 6,000.000 տակառաչափս ածխոյին հանքոց, և ի բոլոր ազի հանեն 51,000.000 գրօսիս և զ40,000.000 առաքեն յօտար աշխարհս· գործեալ և պղինձ առատութեամբ ելանէ ՅԱնգղոյ։ Բայց հանքերէն Վաճառուց սիրելոց՝ ի գործարանաց Անգղոյ ընդ ընդհանուր օրինակ ելոյն պատճէն 1831 ամին, յորում առաքեցաւ անտի ի գրօս, տառեղէնն 5,000.000 լիրայից, բամբակ անգործ 13,000.000, բամբակ մանածոյ 4,000.000, ապանելիք իբր 400.000, զէնք 24,000, տպագիր մատեանք 94.000, տպակիք 385.000, կտաւիք 2,000.000, մեքենայք 208.000, չոքար 1,288.000, պղինձի անօթք 1,078.000, գանակք և նմանիք 1,412.000, ըստ սմին և այլքն։ Վաճառագործ նաւուց գումար համարիս յԱմի 1832 ամին 95.000 որք տանէին միաշտամեռս 2,620.000 տակառաչափս, և նաւատոմ 162.000· Իսկ ի 1834, հանին վաճառս 42,000.000 լիրայից։

Իսկ յերեսին	Վաճառք բե-	Վաճառք հա-
յետին ամեաց	բելոք·	նելոք·
1848 Լ· սա·	90,921,866	146,167,146
1849	93,547,134	150,985,794
1850	105,874,607	190,101,394

Վաճառքս առաքելոք արտաքս՝ արգասիք են Հարստատուն Բրիտանիոյ, իբրև ըստ ծերեբերգ մասամբ միայն բերք են գաղթականաց և օտար աշխարհաց։

Ցամին 1849 առաքեցին արտաքս՝

Հանդերձս· · · գնոյ ստեղինաց	772,200
քաշիք · · · · · ·	500,700
անօթս մետաղեայս · · · ·	2,270,000
բամբակ · · · · ·	100,000,000
բամբակ հիւսեալ · · · ·	13,300,000
գանակ, սրզպատս · · · ·	10,818,000
կտաւ · · · · ·	6,910,000
գերձան · · · · ·	985,500
տառզէ · · · · ·	2,574,600
մեքենայս · · · · ·	700,500
համեստս · · · · ·	602,300
մետաքսեայ · · · · ·	1,434,500
չաքար զուտ · · · · ·	593,000
անագ գործեալ· · · · ·	726,200
կտաւ վշոյ· · · · ·	14,902,080
Թել վշոյ · · · · ·	685,600

168· Սահմանս վաճառականութեան Անգղացւոց մարթ է ասել զսահմանս երկրի· յամենայն կողմանց զպետութեանցն և զաշխատեան բերելով հաւաքեն. ի Սուետեայց, ի Ռուսաց և յայլոց պալտիական կողմանց գնայս, զերկաթ, պղինձ, կանեփ և ցորեան· զայս ի Գերմանիոյ, յԻտալոյ և ի Սպանիոյ· զբամբակ յերկրացուն ի Հնդկաց· զթէ ի Չինաց աշխարհէ մատճանեն յԵրոպա և զմանուշեղս ի կրկին Հնդկաց· Երևելիք ի վաճառաշահ քաղաքս Ծովեզերեայս Անգղիոյ են, Լնտոպա, Լիվերբուլ, Պրիսթըլ, Հըլ, Նիւքաստլ, Փլիմըտհ, Սըռեհմփթըն, Սընտերլենտ, Փորթսմըտհ, Եարմըտհ, Աքսբրիտջ, Տարթմըտհ, Բռել, Սուռնիսի, Կլոսթըր, և այլն։ Ի Սկովտիա՝ Եդինբըրկ և Լայտհ, Կրընիք, Պլասկոյ, Տընտի, Էպէրտին, Կրէհրմըտհ, և այլն։ Յրլանտաս՝ Տրպլին, Պէլֆաստ, Քորք, Նիւրի, Լիմըրիք, Վաթռկըրհըրտ, և այլն։ Շահաստանք ի ցամաքի Պըրմինկհամ, Մէնչըսթըր, Շէֆիլտ, Լիես, և այլն։

169· ՓԱՐԹԱՄՈՒԹԻՒՆ.— Այսպիսւոյ պետութեան որ յամենայն մասունս աշխարհի գաւառս ընդարձակս ունի և վաճառականութեամբ և գումարք առաքք նաւուց յօրացեալ է՝ Թուի ինն այնպես Թէ

և քան զբնաւս երջանկագոյն ի գէպ էր լինել. և են ի նմա արդարև ընդարմնդ փարթամք ոչ սակաւ. 50 գերդաստանք են ի նմա, որոց տարեկան մուտք են առաւել քան ₹350,000 ստեղիս, որ է առաւել քան ₹8,600,000 ֆր., և հարիւրաւոր տունք որոց մի կամ երկու միլիոն ֆրանգք. սակայն առ սոքօք տուայտանք մնանկաց մեծագոյն ևս են, և ԹԷչէ ամ ըստ ամէ հաւաքին ի պէտս նոցին 200 միլիոն ֆրանգք, այլ ի վերայ այսորիկ հազիւ զոգեպահչին պարէն ժամանեն հայթհայթել. և բազում մարդասէր սրտից ձգնեալ ոչ քաւելոյն դարման յարեացն գտանել. և պատճառք աղէսին այն են զի ոչ ունի ռամիկն անգ. գնացի կալուածս առանձինն, այլ երկիրն ամենայն ժառանգութիւն է սակաւուց ոմանց ազնուատոհմն ոմանց. և սակ հարկին ծանր է ի հասից մշակութեան, վասն որոյ և աւք գործոյ Թոզեալ զերկիր ի ծով և ի վաճառականութիւն տան զմնձինս, կամ յարուածս՝ յորս առաւելագոյն յաջողութեան և չահու գուչ ցոյս. սակայն բազում և այլ մարդիկ վճռեալ յայսցանէ չէռնուհայն դանդաչել: Հրիսակ տերութեանն ի 1831 եղոյց յԱնգղիա և ի Սկովտիա տունս 961,000 պարապուաս յերկրագործութիւն, 1,500,000 ի վաճառականութիւն և յարուեստս, և 1,500,000 արուեստ սոցուն:

170· ՀԱՍԱՐ· ՊԱՐՏՔ· — Միահամուռ հաւք տերութեանն համարին իբրև 1,300 միլիոն ֆրանգք· սուղ ինչ նուազ լինին ծախքն տարեկր· իսկ պարտք հաստատուն և անհաստատ իբրև 21 միլիար: Մուրհակ 1852–1853 ամին հաստատեաց զՀասս պետուրութեանն ի 51,625,500 լ· ստե· զոմս ի 51,163,979 լ· ստե· բաժանեալ այսպէս·

Հասք

	լ· ստե·
Մաքս	20,572,000
Բաժ վաճառուց	14,604,000
Կնիք լաթոց, Թղթոց, և այլն	6,339,000
Հարկ	3,090,000
Բաժ եկամտից	5,187,500
Թղթաթերք, և այլն	938,000
Կալուածք պետուրութեան	235,000
Այլ և այլ հաւք	660,000
	51,625,500

Ծախք

Վաշխ պարտուց	30,550,000
Թոշակք պաշտօնէից, և այլն	4,182,086
Ծովային զինուորութիւն և Թղթատուրք	6,493,000
Ձինուորութիւն	6,491,893
Հրարուեստ զինուորութիւն	2,437,000
Դաւթք պատերազմին Ափրիկիոյ	1,010,000
	51,163,979

171· ՁԻՆՈՒՈՐՈՒԹԻՒՆ· — Մեծ զօրութիւն Անգղիոյ ի նաւականն է, որով գերազանցէ քան զամենայն պետութիւնս. Նաւահանգէս Նորա բազմազոր է քան զաորիվիղ համբերն ամենայն ազգաց Եւրոպայ. ընդ մեծ և ընդ փոքր առաւել քան հազար նաւք են Նորա, Թէպէտ և յոլովք չայիցանէ անշարժք ի նաւահայս անդ փաթալ ապականիցին. կարգք նաւացն ըստ Թուոյ հրանօթոցն կրելեաց՝ անուանին, Նաւք նախակարգականք՝ որք ստանիցին 80–120 հրանօթս, երկ կարգականք ցվեցկարգեանս՝ որոց հցեն 20–80, և որոց նուազ քան զքսան՝ ի լեզուս նոցա կոչին ֆրէյէթ, ցրիկ, ֆրէյտ, ֆրիգէյթ, և այլն· Թայլ երբէ 500 նաւք ընդ մեծ և ընդ փոքր կազմք կան, յորս են և 150 չոգեվար նաւք՝ և հրանօթք 17,000· Ի մարտի ժամանակս նաւատորմին Անգղիացոց պէտք են 100,000 նաւասեւեռ և 40,000 նաւամարտուց· ի խաղաղութեան ժամանակի 30,000 է նաւասեռն· սակայ նաւուցն նախապատրաստ են քան զյամաքազօրուն սպայս· ընդհանուր հրամանատուն կոչի Ծ·ֆրէդ, որ է ծովապետ· և որ ջոկատիք միայն հրամայեն՝ տեղապետք կոչին ծովապետի, և երեք գաղթ են նոցա կ·ոմոդ և կ·ոմոդոր և Ծաբ·ոն·տ· Առաքելոյն գնդի յակամուտս կոչի Գ·ոնէռ, և նաւաց Թրպաքանչիւր՝ Գէրէն, որ է նաւապետն, և ընդ իշխանութեամբ սոցին են սպայք և նաւատեաց գլուխք· Ազգովք ինքնայօժար կամք գրին ի զինուորութիւն ծովային· այլ ի ժամանակս պատերազմի արքունի հրամանաւ կոչին ի ծառայութիւն զինուորին վաճառականաց, և անխափ զամենայն որ յաջողակ իցեն յարուեստն· Առ ի պահպանութիւն նաւուց և նաւաստեաց և ամենայն կալուած կազմածոց՝ ծախին ամ ըստ ամէ իբր 5 կամ 6 միլիոն ստեղիս· Ձինուորական կայարանք նաւահանգիստից գլխաւորք՝ են Էճէմբրտ, Վուլիչ, Չէտհէմ, Շըռնէս, Խորդսմուտ, Բլիմըտհ, Էմարմըտհ, Ա՛նկղլա· Իսկ Ա՛ռաքինոտ՝ Գորք, Վատորըմիքըս, Պէնգըլ, և այլն· և ի Սկովտիա Լէռհ և Ինվէռնէս:

Ի ցամաքային զինուորութեան այժմ 145,000 զբանակաք են, յորս 15,000՝ հրանօթոց սպասիկք· ԳԷլ խաւորք յամրական քաղաքս են Տուվըր, Ֆէլչըռհ, Խորգրամհամ Հզոր քան զքնաւս, Շըռնէս, և այլն· Փորթ Ձորճ՝ ի Սկովտիա, և Գորք և Ենիսիքըլէն յԻռլանտա· և արուարձ Բրիտանիոյ՝ Ձիսլուգհամ, Մաչգա, Լիվկրըլնա:

172· ՕՐԷՆԳ· ԴԱՒԱԳ ՄԱՐԴԿԱՆ· ԿԱՐԳԱԳ ՊԱՏՈՒՈՒՑ· — Մի՛ ի հնագունից անաի և չարչատ կանոց Ճանաչի սահմանագրութիւն օրինաց Անգղիոյ· որ զիշխանութիւն օրինագրութեան և զնաւակալութեան բաժանէ ընդ Գաղատուրն, ընդ առնեղակալս և ընդ ժողովս հասարակաց· Թագաւորն ընդհանուր գլուխ է պետութեանն և ընդ օրինօք գտուատանի ոչ անկանի, անմեղանչական համարեալ· վասն որոյ ասի բան առ նոսա Թէ «Թագաւոր ոչ մեղանչէ,,, (King can do no wrong) այլ ի պատմանէից նորա համարս պահանջեն ընդ նորա· Կրթս միայն է իշխանութիւն գործադիր, և նա ինքն է գլուխ Ռեհենակալացն, և կոչի Դատաւոր գերագոյն և յանուն Նորա հատանին գատաստինքք· Հօրինաց անուն իրաւունս ունի ընթերցել առ ամենայն իշխանութիւն արս յաչխարհական և յեկեղեցական կարգէ, պատերազմին հրատարակել,

դաշինս հաստատել, զինագրել առնել կամ՝ ի հաշտութիւն խօսել, առեան գործարել և լուծանել զսեան և ընդհանս թագուհեանն առնել։ Հաւտիճ թագաւորի հանգանակի՝ ի քաղաքաժողովել սրոց՝ զոր սահմանեն Առնեակաք յընտրութեան թագաւորին և հաստատուն գնոյն օրինս ունել ցմահ նորուն. և է այժմեան թագաւհոյն հաւտիճ սուղ ինչ պակաս 10 միլիոն ֆր. իսկ թագաւորացանց հաւք ի տերութենէն՝ նէն ուսելալ լինին. և լինի հանգանակն այն որ ի Բրիտանիոյ և ի թագաւորութենէն Հանովայ լոր 36 միլիոն ֆր. որ հաղիւ բաւէ ի հատուցանել զծախս և զծախս պատճառակաց և դեսպանաց և գաւառաւորաց։

173. Նէրքին կարգադրութիւնք պետութեանն որ վասն օրինաց և հարկաց՝ հաստատութեամբ կրկին ժողովով վճարին. յորոց առաջինն է ազատականն, որք Բիր կամ Բառն կոչին և Առնեակաք՝ ի մէնջ, և ժողով նոցա Բաբրլաթնէ՝ Առեան մեծ. իսկ երկրորդն՝ Առեան նուիրակաց կամ հատարակաց. (Chamber of Peers կամ Lords, և Chamber of Commons). Վերնատ առեանին երիք գասք առենակալաց են, ժառանգաւորք՝ որք են իշխանազունք, ցեղապետք, արքեպիսկոպոսունք, և այլն. Ընտրեալք՝ որք յԱյրլանտայ և ի Սկովտիոյ ազգէն, և Կարդէալք՝ յարքունուստ. զարդիս 434 առենակալք են, և նախագահ՝ի նոսա մեծ քարտուղարն պետութեան։ Իսկ առեանին հատարակաց 658 նաւերդակք են՝ որք զԼօնդն ամ միայն վարեն զգործ պատճառն հրեանց. 471 ի նոցանէ՝ Անգղացիք են, 105 Իռլանտացիք, 53 Սկովտիացիք և 29 ի Կալլիսէ. նախագահ ժողովոյս կոչի «Էքսէր (speaker), այս է բանասաց կամ Առնեակաս. որ և առաջի արկանէ ժողովոյն զգրէնս ինչ կարեւորս, և եթէ ունիք յոմնինդրացն կամք իցեն խօսել՝ տեղի տայ նմա բանասացն, և այսպէս մի ըստ միոջէ երկուս և չորիցս քննեալ նոցա զառաջարկեալն ինդիր բան առ բան, ուղղելն և չարդարելն, և ապա գառնայ առեանցն ոք ի տեղի իւր և նախաձառն բազմի յիւր գահ։ Յորժամ ընդունելի լինիցի պետանն (bill) քաւէնք, անցանէ առ առեանն վերին, որպէս և սորայս առ երկրորդն, և երկրորդքիք հատատեալ ընծայի ապա առ Թագաւորն. և ի հաստնել նորա՝ հրատարակի հաստատակ յանուն նորա, և այնուհետև ընդ օրինս հաստատի՝ կոչելով նմին Հրաման կամ Գործ Առենին մեծի (Act of parlement).

174. Սահմանադրութիւնք օրինաց Անգղիոյ են, ա. Մեծ գաղանց Յովհնոն 1215 ամին (Magna carta). բ. Պահանջք իրաւանց (Petition of rights), որ առեներակալաց ապ զիրաւունս հարկահանութեան. գ. Պայմանք առանձին ազատութեան քաղաքացեաց Անգղիոյ (Habeas-corpus-act). դ. Յայտաբարութիւն իրաւանց (Declaration of rights), որ հատատեալ զիշխանութեան առենակալացն. ե. Պայմանք յաջորդութեան Թագաւորաց (Act of settlement). զ. Դաշն միաբանութեան, որով Սկովտիա ընդ Անգղիոյ միացաւ. է. Դաշն միաբանութեան Իռլանտայ ընդ Անգղիոյ. ը. Կորգորացիոն օրինաց 1832 ամին, որ ուզղեաց զօրինս ընտրութեան առենակալաց. իսկ հին պայմանն (Test-act) տարագրութեան ուղղափառաց յատնէն՝ ընկեցաւ ի 1829, և ազատութեան ընդ հեգաւ նոցա։

175. Զորք կարգք են աւագ պաշտօնէից, օձնականք արքայի և յանձնառիչք իրաց տեղապետին. ա. Նէրքին կամ առանձին խորհրդականք (the privy council), և են սոքա արքայազունք, և երկրքին արքեպիսկոպոսունքն, առեներսեան Հաւտարակաց ժողովոյն և եօթն աւագ պաշտօնեայք տերութեան. Հանդերձ սովիմբ և յընտրութենէ Թագաւորին մասնեն և այլք ընդ սոս հաճելիք։ բ. Խորհրդականք տեսչութենան աշխարհին, յորս նախապատիւ է Գանձապետն մեծ. գ. Գանձապետք հատարակաց կամ հարկաժողովք (the Exchequer). դ. Ծովիշխանք (the Admiralty), նաւական արուեստին վերակացուք։

176. Յօրինաց և ի սովորութենէ ի կրկին գասս բաժանին Անգղիացիք, յազնուական (nobility) և ի ռամիկ (commonalty). յազնուականաց անուն են որ ազատագինք են, որպէս գուքս (Duke), մարկիս (Marquis), կոմս (Count), վիսկոմս (Viscount), և պարոնայք. որոց պատիւ անուան յաջորդութենամբ առ անդրս նիկս անցանէ, և սոքա կոչին Լորդ (Lords) որ են սեպուհք. և են որ կրեալք համարին, որպէս ղինուհք (Squires), ասպետք (Knights), ընդ որս գասին և այլ արքունի պաշտօնեայք, և խնամուհք, ուսուցիչք, վաճառականք և միջնաւորք, որք առհասարակ կոչին ՋԷՆԹԼՄԷՆ (Gentlemen): Ըստ սոցանէ են գասք գասք արուեստաւորաց, Հարտարապետ և գաւառապետաց, և հոգևկ ամենեցուն լինականք կամ արուարձանեայք, յորս են գործատուքք, ծառայք, և այլն, և որոց միանգամ չիցէ տուն առանձին։ Այլ երբեմն հասարակ են առ ամենայն գասս մարդկան. և ոչ ամն քան զոմն յորոյեալ ազատութենէ։ Ի պրոցաորութենան սովոր են կոչել զարս «Ըր (sir), այն է Տէր, և այս հասարակաց է պատիւ ի Թագաւորէն ցգործիչ լինականն. բայց զաւագս Լորդ անուանեն, զմարիշնս և զկինոցս Լէյտ (lady), զորիորդս Դ» (miss), և զառնականացս Դ»ՏՏԷ (mistress): Արքային պատուոյ կոչումն է՝ Թագաւոր Մեծին Բրիտանիոյ և Իռլանտայ, պատչան Տաճարաց. և վերտառութենամբ մակդիր ի գաղղիականէն առեալ Dieu et mon droit, որ է Ա»»»Ա Ե Իր»»»Ա Ի՛։ Արքայորդիքն Ժառանգ գաւառիկն կոչի Գուքս Գառնուալայ և ապա Իշխան Կալլսոլ. իսկ հասիր որդիքն զգեսի անուն Ժառանգին, որպես գուքս Եօրքայ, գուքս Գէմպրիճայ, և այլն։ Ժառանգքն զինագն և գաւելք եթէ չգոցէ արքայի որդի սրոյ։

177. Զորք կարգք ասպետաց են յԱնգղիա. ա. Կարգ Ժարտէնին (the garter), հաստատեալ ի 1349, զորոյ գլխն կրեն ի ծունր ահենին, և ասպետք կարգին ազատք միայն լինեն։ բ. Կարգ Պաթայ (bath), հաստատեալ ի 1399 և երեք աստիճանք են սորին։ գ. Սկովտիոյն կարգն Ս. Անդրէի, զոր հաստատեալ Յակոբոս Ե, որպայ Սկովտիոյ ի 1540։ դ. Կարգն Իռլանտայ Ս. Պատրիկ կոչեցեալ (Saint-Patrick), հաստատեալ ի Գեորգայ Գ, յամին 1783, և ասպետք կարգիս են Իռլանտացի առեներակաք։

178. ԿՐՕՆՔ. — Նորաղանգն կրնայ ծաւալեալ են ԱՆԳղիա և ի Սկովտիա, իսկ Յրլանդիա ուղղափառ կրնայ սիրեն. Իբրև 7 միլիոն ուղղափառք Հաշուին ի Բրիտանիա. ամենեցուն ընդհանուր է յորինոց ընդհանուր Քրիստոնէից, այլ եկեղեցին անգլիական կամ եպիսկոպոսական որ և Բարձր կամ Մեծ եկեղեցի (High chruch), զոր գաւանի արքունական տունն, Համարեալ և կրօն պետութեան, և հետեւին նմին իբր 16 միլիոն անձինք. վարդապետութիւն կրօնից յիրս իրս զանազանի յայլոց աղանդոց և համանձն է ի գլխաւոր մասունս, բայց միայն ղի երևին ի նմա տակաւին բազում հետք կարգաց հնամենական եկեղեցւոյն զոր յառաջն խոստովանէր աշխարհն այն. անգլիական եկեղեցւոյն գլուխ է Թագաւորն, և յետ նորա պատուականք են արքեպիսկոպոսունք, եպիսկոպոսք, վարդապետք նոցա, և այլն. և քանզի ամենեքին սոքա մեծատունք են ընդհանք և ազատորդիք, ոչ քաջ պարապին ի խնամել զհօտն. վասն որոյ և բազում այլ ազանդք հերձեալ ելին ի նոցանէ, զորս զամենեսին հանդերձ ուղղափառօք և Սկովտիացւովք՝ հերձեալսն համարին նոքա (dissenters). Գլխաւոր հերձուած է ի նոսա Կաթոլիկ՝ (Ռէոմէթ) կոչեցեալսդն, հնարեալ յանցեալ դարուն, որք ոչ զիշխանութիւն եկեղեցւոյ ընդունին, ոչ զապաշխարութիւնն և ոչ զաղօթս, այլ ի քարոզութիւնս միայն և յերգս պարապին. սոքա հաստատեցին ըզ վարդապետութիւն Կիւրակէից, զի ի տերունական աւուրս ուսուցանեն զառաքին, և յայս գործ փուլ թաղանթ են յոյժ:

Միւս ևս աղանդ երևելի է ԱՆԳղիա Գուաքերացն (Գուէյքըր Quaker), որք ինքեանք կոչեն Քրիստոնեական ընկերութիւնն բարեկամաց, և յայլոց Երեքականք ձայնին. Գերոյ ոմն Ֆոքս յուսնգործ առաքինորդ եղև աղանգոյս ի 1650, և ուսուցանէ, ամենայն քրիստոնէի որ ըմբռնմամբ ինդրիցի զՀոգի սուրբ՝ յայտնութիւնս ընդունել, և զնորին ուղղութիւն եղծուցոյ աւետրոյ համարի. չկք ի Հոգևորական նոցա սեղան կամ պատկեր կամ Ծիրանոցք, և ձայն երգոյ և զանգակաց ոչ լսի, այլ ի տաճարանալ ինչ Հանուս աւուրն Հոգևոյն անգր և կան բազում գլխով անչշուկք, մինչև յայտնեսցի ուրիք տեսիլ, և սկիզբն ապրացեալ պատմել զպատգամն, և ամենայն Հոգևորին լսե զոյնոյ կամ քարոզութեան տաճառագրեցիկ ածեն. և ուրիք զի յանկեզեզա տարուբերիլ և չարժել նորա, և եկեղեցին համարէն զնոյն օրինակ գանգաչէ, և ասասի նորա երերականք յորջորջուածն. չկք նոցա պաշտօնեայ կամ քահանայ կարգեալ, զի ում և չնորհիցի յայտնութիւնն եթէ առն և եթէ կնոջ մարդոյ՝ նա է քարոզիչ Հաստն. սակայն են նոցա և ընտրաեալք նահանգիք ինամով քարոզիչք առաքեցեալ յորմէ ազգս. Կանոնս բարոյականս ունին գժտաբերիս. Հրաժարեն յերդմանց, ի ռազմամրթնեանց, ի հանգանակաց, ի զինուորութենէ, ի վաճառականութենէ, և յամենայնէ որ յառաւել ինչ գիւրութիւն կենաց և ի չհայրենութիւն մխիցէ. և փոխանակ զինուորութենեանն հարկին արծաթ զարգել տերութեանն. — Ոչ սակաւ տարածի արդ ԱՆԳղիա և վարդապետութիւն Քուակէի, որ ի բազում ինչ իրս հետևի հռովմէականին:

Ալլք յաղանգոց, որպես Միլոտականքն՝ որք զաւ-փասաս միտեն և ոչ զերախայ մանուկ, Մորաւեան եղբարք՝ որոց վարդապետութիւն նման է կարգաւ նակացն, և այլք՝ փոքու իւիք զանազանեալք են յանդղիականէն և ի սկովտիացւոյն:

Սկովտիացւոցդ եկեղեցի Երիցական կոչի (Բրէզ-թէրէեան) կամ Մաքրական. և գաւանողք նորին ոչ ատան տասանորդս անգղիականին, որպես այլքն. սոքա գնան զնեա վարդապետութեան կայնիոյ, և ոչ ընդունին զքահանայութիւն և զպատարագամատոյց եպիսկոպոսականաց, այլ Ժողովուրդն ընտրէ ինքեան քահանայս և օգնական նոցա զգաս ներընտրեացն, որք միասին յանձնանին զհոգս վիճակաց իւրեանց:

179. Խաղաղասիրք գրեա ԹԷ ամենեքին ուղղափառք են, և յերկրիս ոմանց հետէ հալածեալք էին ԱՆԳղիացւոց, որք արդ Լրանին զնոսա ի հասարակաց պաշտամանց, և ոչ խոչ Թագուհին նոցա սոսկալ կալուածս սեփականս. և ի Ֆրնեչ նոցա Թեթևաթեռնել զանձինս ի լճոյ անոթ, խոտագոյն կամ Ծանրագեաք լինէին, մինչև ի սկիզբն գարուս. յորում ծանրեալ քաջն Ճարտասանին Օքռնէլն խռլանեացւոյ պարտեցան Նախանձայոյզքն (Torys), և շնորհեցան խաղաղասցւոց Հրաւիրք քաղաքական Ընդհանուր. և օրինեալ ի 1829 հաստատեցին զազատութիւն նոցա, որով համարձակեալ մնանէին արդ յատեանս և հասանեին յատագոհութիւն պաշտամանն: Զարդիս ԱՆԳղիա ինքեին բարձրագոյնս լինին կաթոլիկէ հաւասք, և հաստատին աճեալք եպիսկոպոսութեանց ի նմա, հանդերձ նախագահ արքեպիսկոպոսաս Ռէաոսիինիսոպայ որ հաստատեցաւ յեղս 1850 ամին, ընդ որով են 13 եպիսկոպոսունք. Յհագնաս յաձաքարդն իսկ կային 22 եպիսկոպոսունք և 4 արքեպիսկոպոսունք:

180. ԿՐԹՈՒԹԻՒՆ ՀԱՍԱՐԱԿԱՑ. — Կրթութիւնք ըստ արժանի բաւականին ոչ գոն ԱՆԳղիա, քանզի տերութիւնն զՀամալսարանաց և զարուեստարանաց և զանհատուց արքունի գոլոցաց խնամ տանի, և այնք ևս ըստ կամի մեծատանց որք զնոսա կառուցինն՝ կառավարին: Ուսումնարանք նորոգ հիմնեալք և նշանաւորք ի բարձր մակացութիւնս են, Նոր Համալսարանն Լրնդարձ հաստատեալ ի 1830 ըստ ոմն գերմանացի Համալսարանաց, և արքունի գոլոցն (Kings college) զոր Նախանձայոյզքն կառուցին հակառակ համալսարանին՝ որում պատկան կայր Տերհռետն Ագատացն (Whigs), զի յայս երկուս հերձուածս որոյն գլխաւորք Ժողովրդեանն: Ալլ զաւանին տեսի ի համարն վարժարանս աշխարհին ուրնին համալսարանք Օքսֆըրտի և Գեմբրիճայ, ընդ որոց խնամարկութեամբ կան միայ միայ 40 գոլոցք, և համալսարանքն որ յԼոնտոնդրի և ի Պլակոյ. ի հասարակաց գոլոցս նշանաւորք են Ուեսմինսթրին, Ռուճեսթրայ, Ա յաքնայ, և այլն. և ի գոլոցս նախատիպ ուսանող տղայոց՝ Լրնտոնին, յորում 1100 մանկունք վարժին: Բայց զնորին ասկորութիւնս անփոփոխ պահելով զորդիք են յարգեանս գիւրամատոյց բարգաւաճանաց. են նոցա և ըստ տեղեաց տե-

ղեաց սեփական ուսումնարանք յատուկք միոյ երիք մակացութեան. այլ աղնուականք ի ձեռն առանձին դաստիարակաց կրթեն զմանկունս իւրեանց։ Աղքատ ազգ մանկունք բարձի Թողի կան ի բաղում կողմունս. ի գեղս դուն ուրէք գտանի գպրոց, և թէպէտ այժմ ի Լոնդրա և յայլ գլխաւոր քաղաքս կառուցեալ են ոչ սակաւ դպրատունք, այլ և այնքին չէն բաւական ժողովրդեանն։ Սկովտիացիք քաջախրատ հանդիպ են քան զԱնգղիացիս։

Յուսումնական ընկերութիւնս անուանիք են, Արքունի ընկերութիւնք բնական գիտութեանց Լոնդրայ, Հնութեանց ընկերութիւն հաստատեալ առ Եղիսաբեթա և բարեկարգեալ յամին 1824, Աշխարհագրական, Ասիական և Եգիպտական ընկերութիւնք, Լինննեոսեան և Միհեան ընկերութիւնն, Երկրաբանական Մէկքըլըջ-յայ (Macculloch)։ Աղբունի ձեմարան գեղարուեստից, որոյ 40 կամաւորգք են և վարժապետք չորք ինկորչութեան, Յարատապետութեան, ընդօրինակութեան և անգամհատութեան, և այլն։

181. ԴՐԱՄՔ. ԿԵՒՒՔ, ՉԱՓՔ. — Ցմէգրնա գրամք հաշուոյ են Լիւէր կամ Բ-ունդ Սթ-ըլ (Liver, pound Lst.), շիլլի (shilling), բէնս (pences), բէննի (penny) և ֆ-ըրթին (farthing). սա փոքրագոյն է ի գրամս և չորրորդ մասն միոյ բէննեայ. բէննի երկաթաձեւորդ մասն է շիլլին, բէնս չորեքականն է բէննեայ. շիլլի քառներորդ մասն սահեալին կամ միոյ լիբրայ. իսկ սահեալին արժէ բան գաղղիական գրամ՝ 25 ֆրանգք, սուղ ինչ աւելի, և իբր 110 գահեկան սամանեան։ Ցիրական գրամս վարին յԱնգղիա, պղինձք՝ ֆարտինն, կէս բէննի, բէննի, բէնս և կըրկնաբէնս. Արծաթիք՝ եռաբէնս, քառաբէնս, վեցաբէնս որ է կէս շիլլին, շիլլին, ֆրաուն կամ Պաակ (Krown) որ է 5 շիլլին քառորդ սահեալին, և կէս քրաուն. Ոսկիք՝ Բ-ունդ կամ սուվերէն (sovereign), որ է սահեալին, գինի (guinee), որ է 21 շիլլին, կէս կինի, կըրկնակ կինի, եռակ կինի, քառակ կինի։ Բայց ի տուր և առս չամախագոյն վարի Թղթեայ գրամ։

Կշռոց միութիւնն է Անգղիա լիարն Տրոյ (troy), որ ունի 12 ունկիի, ունկին՝ 20 Բէննի ուէյթ (weight), և սա 24 դրէնուքի. և համեմատի լիարս առ գաղղիական քիլոգրամ 0,373202. գոյ և բեռանց լիար 0,453544։ — Ընդունակութեան չափք են կալլըն (gallon), կէս կալլըն, ուշերեակ կալլընի որ կոչի բիւշ. բէթ որ է կրկնակ կալլըն, պուշել (bushel) որ է ութ գալլընի, սաք (sack) որ է ութ պուշել, և չէլդրըն (chaldron) որ է ութ սաք. և է կալլըն գաղղիական լիտրս 4,543457։

Երկայնութեան չափ է ֆ-ութ (foot) որ է ոտն (0,304794 գաղղ. մեթրի), և բաժանի յ12 բոյթ. եարդ (yard) որ է կանգուն, և է 3 ոտք, ֆեյհըմ (fathom) որ է երկկանգուն, բէրչ կամ բ-ոլ (perch, pole) որ է 5½ կանգուն, ֆըռլըն (furlong) 220 կանգուն, մղոն (մայլ) որ է 8 ֆրըլըն (1,609314 քիլոմեթր). լիկ (league) որ է փարսախ ծովային (5,592369 քիլոմեթր)։

Տարածութեան չափք են՝ բ-ոդ (rode) որ է 1 □ ձողաչափ. բ-ոդ 1200 կանգ. □. է-ըր (acre) որ է 4 բոլա □։

182. ՎԱՃԱՌՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆ. — Ցերիս Թագաւորութիւնս բաժանի Բրիտանիա և երեքին ևս՝ գաւառս գաւառս, որք չէր (shire) կոչին ի լեզու նոցա, այս է՝ Սասունք, և սոքա ևս ի վիճակս փոքունս։ Իւրաքանչիւր գաւառաց՝ որ և կոմսութիւնք կոչին, կարգին զանազան վերակացուք. որպէս Շէրիֆ, որ է գաւառի և միջնորդ խաղաղութեան առ արքայի և պաշտօնեայ վերին առնին գաւից. սա ընտրի ի Թագաւորէն ի ձրի կայ ի պաշտաման զամ մի աւեղ. Աբենաման, որ պահէ զիւանս առնին և առաջնակայ գաւին առնին խաղաղութեան. Նուիրեալ խաղաղութեան, որ առաքէ զՀրամանագիրս և հսկէ ի կատարումն նոցին, և ընծեռնուս յասնին ըզպատգամս. Գոբրոյբ (coroner), և կոչին այսպես ջորք կամ վնց պաշտօնեայք ընտրեալք ի կոմսութենից առ ի քննել զդիակունս մեռելոց, բնականաբ եթէ բռնաւ կան սպհու մեռեալ. Գոռնդոռալ մեծ և փոքր, և գործ սոցա է հսկել ի պահպանութիւն խաղաղութեան ի վիճակս գաւառացն, վասն որոյ խնամոտ թիւն ունին ի բանս արկանել զնաւամարտս։ Իսկ գաւառական օրէնք Անգղիոյ նորոգինակ կին են. այլ են գաւառորք նոցա և այլ իրաւարարքն կոչեցեալք. 15 միայն գաւառորք են Անգղիոյ, որոց ապարանք են ի Լոնդրա, և զանն ողջոյն չորին ի կոմսութիւնս երկից կամ երկոցս այլ եւեալ միոյ միոյ և տեսանեն զգաւառ ի գլխաւոր քաղաքս իւրաքանչիւրում, և զրան մեծ յանձնեն ի տեսութիւն Առենակալացն. իսկ իրաւարարքն են գաւառորք խաղաղութեան գաւառացն։ Բայ ի սոցունն են և այլ երեք տեսչաք, Թագաւորին, Գանձապետին և Առեան գաւի հատարակաց, և վերագոյն քան զսոսին Առեան քարտուղարին, որ և է տեսչան վերին բոլորոց, և այս տեսչան միայն բայ է հանապազ։ Բայց զարգիս հատատուն նոր օրէնս գատաստանայ և տեսչից։



Ա. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԱՆԳԼԻՈՑ

Տարածութիւն . 7,380 փարսախ □ . Բնակիչք 20,000,000 :

183 . Սահմանք Թագաւորութեանս որ է բուն Անգղիա և Իշխանութիւնն Կալլէս հանդերձ կղզեօք, են յարևելից կողմանէ Ծովն Հիւսիսոյ , ի Հար . Մանչ , ի Մ . Ծովն Խաղաղասէր որ և Լրանցք հիւսիսոյ անուանի ընդ Ջէջ Խաղասէր և Սկոտիոյ և Լրանցք Ս . Գէորգեայ ընդ Ջէջ Խաղասէր և Կալ Լէսի , ի Հ . Սկոտիա . Ցառաջ քան զերկրակալու-Թիւն Նորմանացւոց (1066) յիսնին Թագաւորու-Թիւնս բաժանէր Անգղիա . և զարդիս ի 40 գաւա-ռս , և իշխանութիւնն Կալլէս ունի առանձին 12 գաւառս : Ըստ երկուց այսոցիկ որոշմանց կարգեցք զտեղագրական ծանօթութիւնն ի հետեւոյ ընդ հա-րաւ դնալով, թէպէտ և հին բաժանումք ըստ Թա-գաւորութեանց՝ միայն յիմացումն սլատմութեանց սատարիցէ :

Գ Ա Խ Ա Ս Ի Ա

ԱՆԳՂԻՈՑ ԵՒ ԿԱԼԼԷՍԻ

Ա . Թագաւորութիւն Նորտումբրլանդայ .

Ա . Նորտումբրլանդ (1) . Դ . Տըրըմ .
Բ . Գըմպըրլանդ . Ե . Լէնքէսթըր .
Գ . Ուէսթմըրլանդ . Զ . Եօրք .

Բ . Թագաւորութիւն Մերսիայ .

Է . Լէնկըն . ԺԳ . Մոնմըտհ .
Ը . Նօթինկհեմ . ԺԴ . Սթէֆըրտ .
Թ . Տըրպի . ԺԵ . Լէսթըր .
Ժ . Ջէսթըր . ԺԶ . Ուըրչէսթըր .
ԺԱ . Շրօփշըր . ԺԷ . Նորտհէմփթըն .
ԺԲ . Հերէֆըրտ . ԺԸ . Ռաթլընտ .

ԺԹ . Ռաթլընտ . ԻԳ . Հարթֆըրտ .
Ի . Կրմսթըր . ԻԴ . Պէտֆըրտ .
ԻԱ . Օքսֆըրտ . ԻԵ . Հընթինկտըն .
ԻԲ . Պըքինկհեմ .

Գ . Թագաւորութիւն Իսթհինկլիայ .

ԻԶ . Քէյմպրիճ . ԻԸ . Սըֆֆոլք .
ԻԹ . Նորֆոլք .

Դ . Թագաւորութիւն Լասէքսայ .

ԻԹ . Է՛սսէքս . Լ . Միտլսէքս .

Ե . Թագաւորութիւն Քնինդայ .

ԼԱ . Քէնթ .

Զ . Թագաւորութիւն Սրսէքսայ .

ԼԲ . Սըսէքս . ԼԳ . Սըրրէյ .

Է . Թագաւորութիւն Հէսէքսայ .

ԼԴ . Հէմփշըր . ԼԸ . Սըմըրսըթ .
ԼԵ . Պըրքշըր . ԼԹ . Տէվըն .
ԼԶ . Ուիլթշըր . Խ . Գոռնուըլ .
ԼԷ . Տորսէթ .

Ի Խաւսոտրիս կալլէսի .

ԽԱ . Ֆլինթ . ԽԷ . Բէնպրը .
ԽԲ . Տէնպի . ԽԸ . Քարմարթընշըր .
ԽԳ . Գըրնարվընշըր . ԽԹ . Բէմպրոք .
ԽԴ . Է՛նիըսլի . Ծ . Գըրմարտընշըր .
ԽԵ . Մէրիընիդշըր . ԾԱ . Պրէքնոք .
ԽԶ . Մոնկոմէրիշըր . ԾԲ . Կլէմոռկըն .

Կղզիք Անգղիոյ .

Ա . Մէն . Գ . Նորմանեան կղզիք .
Բ . Սիլէ .

(1) Ասկ համառօտութեան ի բաց Թողաք ուրեք ուրեք զգաւառանուէ յորըրդումդ ՚ (shire) ի վերջս անուանց գաւառացդ , զոյն և յանգղիարէն գրուածն յառաջկայդ ի կարգին :

Ա· ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՆՈՐԹՀԸՆՊԸՐԼԸՆՏԱՑ

184· Ա· ՀՈՐԹՀԸՆՊԸՐԼԸՆՏ (Northumberland)· — Նորթումբերլեա ըստ Հնոց· սահմանակից է Սկոտիոյ, և անընդհատ ընդ նա ունի զգետն Դուտա· երկիրն ոչ է արգաւանդացող զի բրլաւէա է· ունի ածուխ հանքային առատ· Ի սմա քաղաքք անուանեալք են·

ՆԻՒՔԱՍԼ (Newcastle)· — Գ·· Ր· վաղեմի և ընդարձակ, Գաբրոսենտն կոչեցեալ առ Նամինս· գեղեցկայարդար են փողոցք նորաչէն մասին քաղաքին, այլ Հնոյն գեռեւ է տեսիլ· Նշանաւոր է ի նմանօ սորա աշտարակ եկեղեցւոյ Ս· Նիկողայոսի Ճարտարագործ գոթացի ոճով· և կամուրջն հոյակապ ևօթնաձիք ձուաձև կամարօք ի վերայ Դայն (Tyne) գետոյ· յորում ունի և նաւահանգիստ, ընդ որ ամի ամի հանեն 400 նաւս և 42.000.000 կենդանեաց ածխոյ հանքաց, զի առաւօտեամբ լինի ածուխն ի դաւառին և յորում բիւրք գործաւորաց են ի բռնի· հանեն ասի և երկաթ և կապար· ընդ ամենայն իրս 200.000 տակառաչափս բեռանց առաքէ նիւթապատ աքսոր, վասն որոյ երկրորդ նաւահանգիստ համարի սա յԱնգղիա· Աքսուարձան նիւթապատ հաստատեալ է ԿԷյտհէա (Gateshead) յայգամ Դայնոյ գետոյ ի դաւառին Տըրըմոյ· ընդ մէջ սորին և քաղաքիս նշմարին ահաւորագործ Քեթհասուոլ կոչեցեալ տրմոյ, զոր Հռովմայեցիքն կանգնեցին ընդդէմ խաժաքարոյ հինից Ժողովրդեանն Պիկտք կոչեցելոյ· Թիւս բնակչաց նիւթապատ և ԿԷյտհէասյ 75.000·

185· ՈՒՈ՛ԼՋԷՆՏ (Walsend), ՆՈՐՋՀԻԼՏՍ (North-Shields), ՍՈՒՋՀԻԼՏՍ (South-Shields), Բնակիչք 30.000· և ԴԱՒՄՈՒԶ (Tynemouth), Բն· 25.000· — Ի գետեզերս Դայնոյ, քաղաքք մանուկք նշանաւորք են վասն առաւաւթոց հանքաց ածխոյ· ի Դարնմըտայ մինչև ի նիւթապատ խառնել է գետն ածխակիր նաւակօք, և Ժողովուրդ վայրացն պարապեալ է ի գործս յայս·

ՊԵՐՒԻՔ (Berwick)· — Քաղաք փոքրիկ ի հիւսիսակողմն նիւթապատ՝ անուանի վասն պատերազմացն Անգղիացւոց ընդ Սկովտիացիս· զարգացեալ է վաճառականութեամբ, և առաւել ձուկն սալմոն ի Լուն. սորա բազում յոյժ· Ցիշատակաց արժանի է ի սմա շղթայակապ կամուրջն ի վերայ Դաւհասյ (Tweed), որ սահի ի Սկոտիա· Բն· 16.000·

186· Բ· Գ՚ՄՊԸՐԼԸՆՏ (Cumberland)· — Կապ յարևմտից վերնոյ գաւառին, լեռնային է և հաբուտ ի բերս բոլորշ· սակ գոհարի մասին ընտիր· գեղեցկանիւթք և զարմանալիք են գիւղերքն Նորա խիտ ընդ խիտ հովսոյց և ընդակայ ընդ մէջ անկաձևովք· բայց երկիրն անպտուղ է և անմշակ· Խոշոր տեսակ ծուլ յարևմտից և ի հիւսիսոյ պատեալ զովաւ գործէ զծոյն Սոլուէյ (Solway), ընդ մէջ Անգղոյ և Սկոտիոյ· Գաղաքք երևելիք ի սմա·

ՔԱՐԼԱՅԼ (Carlisle)· — Գ·· Ր· Գեղեցկի և հին, ունի գործարանս բամբակի յոլովս· Բաց ի Պիկտեան պարսպացն զոր արդ ևս յիշեցաք, կան ի սմա բաղում և այլ մնացուածք հռովմայեցի շինուածոց, և կոթող Դրուիդաց կոչեցեալ Մէյ Ն դ-ոբէր Խ-ր (long Meg and her daughters), որ ի կարկառ բոլորակցոյս աւերակ վիմաց· Բն· 36.000·

ՈՒՕՓՀԷՒՕՎՆ (Whitehaven)· — Քաղաք զուարճագեղ ձոխ ի բովս ածխոյ, յորոց չաւք ձգեն 160 գիրկս ի խոր, և 2.400–3.000 ամանաչափս աւորև քան զբերսս ծովու· Բն· 30.000·

ՓՈՐՐՈՒՆԴԷԼ (Borrowdale)· — Լճան հռչակեալ, վասն ընծիր մատոյին, զոր հանեն յերկրէ, և գործեն ի Քեզուիք (Keswick) քաղաք մատակայ, որոյ Բն· 3.000·

187· Գ· ՈՒԷՍԹՄՈՐԼԱՆՏ (Westmorland)· — Ի հարաւոյ Գումբրլընտայ առ ծովեզն Իռլանտայ, որ գործէ աստանօր զդոն Մ՚ոբէմ (Morecambe)· Երկիր լեռնային է և են ի նմա լիճք գեղանկար տեսարանաւք, յորս նշանաւոր է Ուինդըրմիր (Winandermeere)·

Ե՚ՓԼԱՊԻ (Appleby)· — Գ·· Ր· առ եզր խոշն (Eden) գետակի· Բն· 3.000·

ՔԵՆՏԷԼ (Kendal)· — Աքաղաքն է վասն գործարանաց չուխայի որ ի նմա· Բն· 35.000·

188· Գ· ՏԸՐԲԸՄ (Durham)· — Գաւառս այս յարևմտից կողմանէ ունի զլերինն և ի հիւսիսոյ բլոր-տրաշխարհիկն· և ծովիս հիւսիսոյ պատի զնովաւ յարևելից կոսկ·

ՏԸՐԲԸՄ· — Գ·· Ր· գեղեցկի կառուցեալ ի բլրի ընդ որ անցանէ Ուէր (Wear), է ի սմա եպիսկոպոսական եկեղեցի մեծ, և եպիսկոպոս քաղաքիս հարստացոյն համարի քան զամենայն եպիսկոպոսունս Անգղոյ· գեղեցիկ է և բանտ քաղաքին (country gaol)· Բն· 40.000·

ՍԸՆԴԸՐԼԱՆՏ (Sunderland), և ՈՒՕՐՄՈՒԶՏ (Wearmouth)· — Առ ամին Ուէրայ, երկու քաղաքք ի մի հաւելեալք երկաթի կամրջաւ, որոյ է բաժանրուեալին 100 ոտնաչափ· սոսա են մեծ երեքսանեակ ածխոյն զոր ի սահմանաց գետոյն հանեն ամի ամի իբր 30.000.000 կենդիներ ի ձեռն 30.000 գործաւորաց· Բն· 58.000·

189· Ե· Լ՚ԱՆՔԱՍԻՐ (Lancaster)· — Ի հիւս. սահ ունի զԱՀԱՎՈՐԵԱՆ և յարևելից գծոյն Իռլանտայ· Երկիր լեռնային է և անպտուղ, այլ բովս երկաթի և ածխոյ ունի բազումս, և յատաչագիւտ է ի վաճառականութեան և ի ձարտարութեան, և բազում ջրագործք անցանեն ընդ սա, յորս նշանաւորք են Պրիճուոթըր, ունի զդոն Մըրքըմըվ և նաւահանգիստս ի բերան Բիվըլ և Մըրզէյ (Ribble, Mersey), գետոց· Ի գաւառի սոսո բնակեն աւելի քան զտասն բիւր կաթոլիկեայ քրիստոնէից·

ԼԻՆՔՈԼՆՔՐ· — Գ·· Ր· չահաստան մեծ էր

երբեմն. արժանի յիշատակաց են՝ի սմին ջրանցքն և ագուցեալք՝ի վերոյ Լոյնայ (Loyne), և բանտն մեծ: Բն. 35,000:

ՐՈՒՏՈՆ (Preston). — Բազում գործարանս ունի բամբակի: Բն. 78,000:

190. ԼԻՎԼԸՐԲՈՒԼ (Liverpool). — Քաղաք մեծ, անուանի և հռչակաւոր՝ի բերան Մըրզըվյայ, ուր և ունի նաւահանգիստ ընդարձակ, որ երբորդ համար ըստ ընդ համարին Անգղիա բաղմութեամբ վաճառականը նաւուց. են նորա 25 ծովակք կամ աւազանք՝ի սէաս նաւաց կառուցման և կայից. Ծովային վաճառականութիւն է նորա ընդ Ամերիկայ և ընդ արեւմտեան Հնդկաց, և գլխաւորք՝ի վաճառս բերեալք՝ի Լիվըրբուլ, են ծխախոտ և բամբակ զոր առաքին՝ի Մինջսթըր, զի սորա նաւահանգիստ համարի Լիվըրբուլ. և առ՝ի համառօտել զմանաւանդն որ ընդ կրկին քաղաքս այսոսիկ, ծանր աշխատութեամբ յօրինեցին շաւիղ երկաթի ընդ վայր գետնատրամ, ըզձոր և զձայնիմ հողաբլրովք հաւասարեալ և զլերինս պատառեալ և անցեալ. գարձեալ բացին և ճանապարհ սոսրերկրեայ (tunnel) իոր ոտնաչափս 6,700՝ի գոգ բլրին՝ յորոյ վերայ կառուցեալ է քաղաքն Լիվըրբուլ, առ՝ի ստանել զվաճառս գէպ ուղիղ՝ի նաւս հանդիման որ՝ի սորա, և վաթսերեայս գործս այս մեծ յամս վեց (1825–1830): Նշանաւորք՝ի լինուածս Լիվըրբուլայ են եկեղեցիք Ս. Պօղոսի և Ս. Գեորգայ, վաճառափողոցն զորոյ գրասենս բառնան 120 մոյթք ձուլածոյք, Թէատրոնն, հաւաքակաց ժողովարանն (town-hall), հրապարակն վաճառականաց կառուցեալ ըստ ձևոյ հրապարակին Ս. Մարկոսայ որ՝ի Վենետիկ, և է՝ի նմա կանգնեալ երկաթեայ յիշատակարան մեծ Նելսընի Ծովակապետի, բանտ քաղաքին (borough-gaol), նոր մաքսատուն, անկեալ նոցն, լուկեռնն, աթենէոնն, Լիվըպիք չոգեկառաց, լապտեր նաւահանգստին, և բազմիք յարմարս Մըրզէյայ: Են և բամբակապահիկ ուսումնարանք՝ի Լիվըրբուլ, և պարտէզն անկաքանուածոյն անուանի է ընդ ամենայն Անգղիա: Ի վաճառս քաղաքիս սոքոնանի են քան զայլն կատար և քարմարցանկ: Բն. 300,000:

191. ՄԱՆՉԷՍԹԸՐ (Manchester. Մանգուեսսըռ). — Գետն Իրուէյայ (Irwell). կենդրոն վաճառականութեան և մարգաշատ քան զամենայն քաղաքս Անգղիոյ յԼօնդոնայ, և մի յայնոցանէ որ՝ի սահմանի բարգաւաճեալ անուանի յայժ կղզեն. առ այս օժանդակեաց քաղաքիս ջրագործելն յոլովութեամբ, և առատ բովք ածխոյ և գործարանք ամենազգիք, զի՝ի բազմութեան գործարանց նոց առաքին քաղաքս Ամանչի սա յաչխարհ. գլամբաղն զոր՝ի Լիվըրբուլայ ածէն՝ փոխեալ ասատիոր յազգս ազգս պատուական կերպասուց՝ գործուածս. նէն գաղեալ՝ի Լիվըրբուլ և անտի սփռի ընդ ամենայն աշխարհ. առ որ ամ յամէ 12,000 նաւակք բեռնաւորք տարեալ լինին: Բազմութիւն գործարանաց գաղաքաւն տարածեալ է, սակաւ՝ի միջին գոլով. են անդ 350 մեքենայք չոգեշարժք և 30,000 թակէ՝ի թելարանս: Նշանաւորք՝ի չէնսն են հասարակաց ժողովարանն (town-hall), հրապարակն վաճառականաց, վաճառանոցն մեծ, երաժշտատունն, կաքաւաւանդն, անկեւտնոցն, բանտն և վարժարանք: Ունի և ընկերութիւնս բանասիրականս, յորս նշանաւորք է Հնախուզիցն Լիվըրպըրայ և Բըժէյայի Մենչըսթըրայ: Բն. 320,000, յորոց 58,000՝ի մեծ ատան Սալֆըրտ:

192. ՊՈՒԼԹՈՆ (Bolton). — Քաղաք մեծ այլ ոչ բարեչէն, և նշանաւոր վասն ընդարձակ գործարանաց բամբակեղինի: Ատ զառաջին մեքենայն հիւսուածոց հնարեաց Ըրքրայթ (Arkwright): Բն. 100,000:

ՊԼԷՔԲԸՐՆ (Blackburn). — Եւս սա մեծամեծ գործարանս ունի բամբակի: Բն. 75,000:

ՊԷՐԻ (Bury). — Հռչակեալ քաղաք վասն ատուեայ և բամբակի կտաւոցն: Բն. 78,000:

ՕԼՏԷԼԻ (Oldham). — Վաճառաշատ քաղաք գործարանօք ատուս, բամբակի, գլխարկի, և այլն. ունի ծովահագին բովս ածխոյ՝ի սահմանս իւր և քարահատս արգելանի քարէ: Բն. 68,000:

ՌՈՉԴԷԼ (Rochdale). — Գեղեցիկ քաղաք, յորում են գործարանք բրդեղից (ֆլանէլ) յոլովք, և բաւականք առ՝ի սէաս տանիցն Անգղիոյ: Բն. 60,000:

Սաֆաէ ինչ հեռագոյն՝ի Պլէքբըռնայ կայ Սթոնիհըրսթ (Stonyhurst), նշանաւոր վարժարան Ցիսուսեանց, մեծագոյն՝ի կրթարանս ուղղափառաց Անգղիոյ:

193. Զ. ԵՕՒՐ (York). — Ընդարձակագոյն՝ի գաւառս Անգղիոյ, յարմանից սահման ունի ըզԼիվըրբուլ և՝ի հիւսիսոյ զԸրըմ, ՝ի հիւսիսակողման անդ գաւառին են վայելչանիստ հովիտք և լերինք, յորս բարձրագունք են քան զամենայն լերինս աշխարհին Ուառնեայտ (Wharnside), Ինգլբուրըը (Ingleborrough) և Բէնինկենգ (Penigant), երբև 4,000 ոտս՝ի բարձրութիւն. այլ ներքին կողմն գաւառին գաղտ է արձակածաւալ, և հարաւակողմն ձախնայեն և մերձաւ, և ծովափունք ապալերք. և գետ մեծ՝ի սմա է Հիլբը: Յերկու վիճակս բաժանի այս գաւառս, և քաղաքք՝ի նմա երեւելք այսոքիկ են.

Կամարջն Ալրճատից


կաթի շղթայից, կամուրջն Նոր՝ լայն և երկայն որոյ
յատուրս Գ. Ներիկոսի սկսաւ շինուիլն և աւարտեցաւ ի 1674. է առ Նովաս արձան Դ Ներիկոսի,
պատկեր հիծելոյ, կամուրջն Արհեստից (Pont des
Arts), վան հետևակաց երկաթածոյլ, կամուրջն
Ս. Հարց, (Pont de Saints-Pères), Աքքոշի կա-
մուրջն, կամուրջն Միհայաւոտեան ասացեալ,
(Pont de la Concorde), կամուրջ Ընկերանոցին (Pont
des Invalides), և այլն:

Ի հոյակապ շինուածս Քարիզու գլխաւորք են ար-
քունի գղեակքն Դիւլիրեան (Tuileries) և Լուվրը
(Louvre) կառուցեալ դէմ յանդիման իրերաց և
Թեա ձգեալ երկուսակք. զԼուվրը առ Փրանկիսկոսիս
Ա. սկսան կառուցանել յամին 1528, Լուդովիկոս ԺԴ.



Դղեակն Դիւլիրեան

և առաւել ևս ԺԴ-ին զարգարեաց զայն յոյժ վայել-չապէս, յօրինելով զսիւնազարդ դասիճան Ճարտարապետութեամբ Ռերոյալ։ Իսկ Դիւիլըրէասյ չինուիլն սկսեալ առ Կատարինէայ Մեդիկեանց յամին 1563, յերկարաձգեցաւ առ Դ. Ներիկոսիս և ԺԴ. Լուդովիկոսիս։ Ի կողմանէ Թէ մի զուգահեռական Սենայ գետոյ կառուցաւ Տաղտրգէլ ընդ Լուվրայ, և Կաբուչէան սկսաւ միւս Թէ ի Հանգիստոյ կառուցանել նման նմին։ Կցեալ ընդ նմա զԼուվրը և գործել պալատ մեծ և երեսելի ընդ ամենայն Եւրոպա, կոչելով




Դղեակն Լուվր

զայն Պալատ Գառուղէլայ։ Յանուն յաղթական կամարին զոր կառոյց անդէն։ արքունական բնակութիւնն Տաստառեցաւ ի Դիւիլըրէն, իսկ ի Լուվրը Թանգարանք Գաղղիացւոց, յորս են բազում հնութիւնք և նկարք, որովնետ չէք այլ Թանգարան յաշխարհի, Թէպէտ բազում ինչ որ առ Նաբուլէոնիս Տասաքեայն անդրէն առաքեան յաշխարհս ուսան բարձեալ էին. անդ ի հերուն յաւելեալ և Թանգարանն կիմուէական վան արձանացն զոր յաւելուկաց Աստիւսաանի բերին։ — Ձմին Լուվրայ և Դիւիլըրէայ անուանի են պալատքն Ռոքոնի (Palais-Royal) և Լիւսանպուրգի (Luxembourg). առաջինն հուպ ի Լուվրը նշանաւոր է վան ընդարձակութեանն և փառացն և յաւէտ վան պատմական անցիցն որ ի նմա. զան կառոյց Ռիշըլիէօ, վան որոյ զառաջինն Պալատ Ծիրանաւորի կոչէր. այլ ապա առեւալ զայն ի Թագաւորէն արքունի եղև բնակութիւն. առ Կաթոլիկեանս կոչեցաւ պալատ Տրիբունիկ. չինուած պալատանն պարզունակ է և վայելուչ. յերկուս ապարանս բաժանի յորս են յարկածածուկ դասիճք և ի նոսա խանութք ամենայն կարևոր սպասից և զուարճութեան. ի միջի կրկին ապարանիցն ձգի վայր զուգահեռագիծ յորում են պարտէզ և ճեմելիք զբօսանաց աղնուականաց։ Լիւսանպուրգ կառուցեալ ի 1612, առ Խոսովութեամբն եղև բնակութիւն գործակալացն, և յետ Կաթոլէոնի առն աստենն գաղերգ առնակալացն։ Նշանաւոր են մեծ անդուղիք պալատանս գեղեցկաշէնք յոյժ. կրկին գասիճանք Թևոց նորա նկարօք քաջաց պատկերաց Հանից Դաղղիոյ զարգարեալ. պարտէզ պալատանն հասարակաց համարի և ունի հովանաւոր ճեմելիս որ առանի հանէ ի գիւտանոցն։

374. Բայց յայսցանէ անուանիք ի գեղեցիկ շինուածան այսոքիկ են. յաշեակ գեղարուեստ Սենայ, մեծ պարտէզն անկոց (Jardin des plantes) ընդ ականաւորան որ ի Եւրոպա յաւէտ հռչակեալ վան փակարանին կենդանեաց և Թանգարանի բնական պատմութեան. հուպ ի սա առ առուակին Պիեվայ կայ երեսելի գործատունն գործոց Կոպլէն անուն, զոր քառնուԹեամբ սուռ և մետաքսի հիւսեն գեղեցիկ նկարապատ ծոյտ. գործարանս այս է ընդ ճեռամբ Կոպլէն ասմին այլ ծախք յարքունուստ լինին։ — Դիտանոցն

(Observatoire) նորոգեալ ի մեծ. — Գերեզմանք տորերկրեայ՝ որ յառաջն քարահատք էին. — Տուն ուսումնարանին որ յառաջն կոչէր վարժարան չորից ազգաց. — Տուն դրամոց, որոց չքնաղ է Նարտարպէտ-


տուԹիւն. — Պալատն Պուբլոն որ առեան կալ-գեցաւ Նուիրակաց. — Մեծ զինուորական Անկեա-նոցն Հիւանդաց (Hôtel des Invalides) կառուցեալ առ ԺԴ Լուդովիկոսիւ, որոյ գմբեԹ եկեղեցոյն Նար-



Զինուորական անկեանոցն Հիւանդաց

տարաշէն է և զարդարեալ նկարուք. առա գարմանին հիւանդ զրակաք Թուով իբրև 2000. այլը յա-մին 1840 փոխեցին զմարմին Նաբոլէոնի ածեալ՝ի Ս. Հեղինեայ կղզւոյ: Ճեմելիք զուարճալի և անդուլիք

հոյակապ անտի Հանեն յեզր Սենայ. — Զինուորա-կան գոլորցն (École militaire) հուպ Անկեանոցն՝ի ծագ քաղաքին Հանդէպ հրապարակին Արեսի՝ (Champ de Mars), ուր ընդն Հանդէպք մեծի զրա-




Զինուորական դպրոցն

ժողովոյ և Ճեմելիք. շուրջ զսովաւ պատեն բլրակք և Ճեմելիք:


Խակ յաջորմն Սենայ, Ժողովարան Հասարակաց (Hôtel de ville) զինուած վաղեմի՝ի հրապարակին Գրեւայ, որ էր տեղի կառափման. — Հրապարակ վա-

Ճառականաց (Bourse) հոյակապ զինուած գեղեցիկ քան զամենայն Ժողովեալ վաՃառականաց՝ Լեզրա-պա, կառուցեալ ըստ տարազու քառակուսի տանն Նխմեայ Նուրբ քանդակօք և նկարուք գրուագեալ. — Պահարան զգեստուց (Garde-meuble) Թագաւոր-



Սպարանք դատաւորին


Թեան. — Ապարանք համարակալին (Hôtel du ministère des finances), *ուր են դահնէք հասարակաց և անհատուԹիւն հարկաց, և այլն.* — *Ի բուն քաղաքին՝* Ապարանք դատաւորին (Palais de Justice), *յո-*



Հրապարակ Վաճառականաց

բում է վերին տեսանն և տեսանն բազրքոյ · ի սմա յառաջն բնակէին Թագաւորք Գալղիոյ : — Մատուռն սուրբ (Sainte-Chapelle) Ննարտարաշէն է · կից է պալատանն՝ Գոնսիէրժըրի (Conciergerie) տուն բանտի :

375 · Ի Հրապարակս Բարիզու անուանի են, վան-



Հրապարակն Վանտոմ

տոմ՝ (Vendome) գեղեցիկ քան զայլն զարգարեալ շուրջանակի հոյակապ շինուածովք բան այժմու ոճոյ · Հրապարակ Յաղթութեանց՝ (Place des Victoires) յո-


րում կայ պղնձաձոյլ անգրի ԺԴ Լուդովիկոսի · Արքունի հրապարակն յորում կանգնեալ է անգրի ԺԴ Լուդովիկոսի · Հրապարակն ԺԵ Լուդովիկոսի



Մոբատեան Վարժարան

որ այժմ կոչի Միաբանութիւն (La concorde)՝ գե-
ղեցկաչէն և ընդարձակ, յորում է կօթռոն Լուքսո-
բայ, Պաստիլ (Bastille)՝ յանուն միջնաբերդին քան-
գելոյ առ խռովութեամբն, ի սմա կանգնեցաւ սիւն
ի յիշատակ խռովութեան 1830 ամին. ՛քեղաղ հրա-
պարակն Ժողովատեղ վաճառականաց. հրապարակ
Պանթէոնին և Շադըլէ (Châtelet) յորում է աղբիւր
և առ նովաւ սիւն Նշանաւոր Յաղթութեան։


Ի Հասարակաց յիշատակարանս և չինուածս՝ նշա-
նաւորք են՝ սիւն Կաթոլիկոնի ի հրապարակին Վան-
տոմայ ի յիշատակ պատերազմաց 1805 ամին, զոր
ձեոյ կօթռոնին Տրայանոսի որ ի Հռոմ, բարձրու-
թիւն նորա ի խարսխէն մինչև ցծագ անգրսոյն ունի
138 ոտնաչափ, յամենայն երեսս նորին քանդակեալ
են նշանաւորք արարք Գաղղեացւոց ի պատերազմունս
ժամանակին, և սղնձէ նորին է ձոյլ հրանօթիցն զոր
ի պատերազմունս կողոպտեցին ի Թշնամեաց անտի.
ի գլուխ սեանն կանգնեալ է արձան Կաթոլիկոսի. —
Յաղթական կամարն Գարուզէլ՝ զոր նմանութեան
կամարին Կոստանդիանոս որ ի Հռոմ. — Կամարն
Ատեղ (Arc de l'Étoile) կոչեցեալ զոր սկսաւ շի-



Կամարն Ատեղ


նել Նաբոլէոն և աւարտեցաւ յետ նորա՝ հոյակապ
և աշխիւ Ճարտարապետութեամբ, 137 ոտնաչափ է
բարձրութիւնն, մի միայն է կամար Ճակատուն 87
ոտնաչափ բարձր և 47 լայն։ — Դուռն Ս. Դիոնէ-
սիոս՝ որ է յաղթական կամար կառուցեալ ի 1672
ի պատիւ ԺԴ. Լուդովիկոսի. — կօթռոն Լուքսոր
կամ Կղեոպատրայ՝ (Aiguille de Cléopâtre) զոր ի
Թեբեայ ածին՝ ընկալեալ ի փոխարքայէն Եգիպ-
տոսի։

376. Եկեղեցիս Քարիզու ի բուն քաղաքին Նշա-
նաւոր է մեծի եկեղեցին Տիրուհւոյն Կոդրը-Տամ
(Notre-Dame) հնագոյն քան զամենայն եկեղեցիս
քաղաքին և ի գոհացի Ճարտարապետութեան երկ-
ելի գեղեցկութեամբ, կառուցեալ յԺԲ դարուս. ան-
դրիք բազումք և զարգք 48 մատրանց և սեղանոց էին
ի նմա՝ այլ առ խռովութեամբ ապականեալ կայտե-
ցան. կից էր ատաճարիս պալատ արքեպիսկոպոսին՝




Եկեղեցին Նոդրը-Տամ

որ աւերեցաւ յամին 1830։ Ի ձախմէ Սենայ եկե-
ղեցին Ժընըվիեւ կամ Պանթէոնն (Geneviève, Pan-
théon) Նմանեալ ամենասրբոց տաճարին Հռոմայ,
տաճար մեծագործ զոր Նուիրէ Ազգս ականաւորաց
հայրենիք երախտագէտ, զի այսպէս գրուածեալ է ի
Ճակատուն (Aux grands hommes la patrie reconnaissante). առ խռովութեամբն տաճարս այս կոր-
ծեցաւ ի տուն դամբանաց արի արանց, յետ խռո-
վութեանն անդրէն փոխեցաւ յեկեղեցի. և յեսոյ
միւսանգամ առաքինի մարգկանն Նուիրեցաւ տուն
յիշատակաց. իակ ի հերուն Լ. Նաբոլէոն հրամայ-
եաց անդրէն յեկեղեցի Նուիրել։ Ի 1764 սկիզբն
եղև չինուածեան սորին օրձաքար վիմօք և կորնթացի
սեամբք զարդարեալ, ի գմբէթին փորագրեալ են
գեղեցիկ արուեստ սրբուհւոյն Ժընըվիեւայ. քառա-
թեւ է յատակն ըստ ձեոյ յատենական խաչի։ Ի միջ-



Եկեղեցի Սրբոյն Ստեփանոսի




Պանթէոն այսպէս Սրբոյն Ժընեվիեւ

կին ամբաւնայ գմբէթին. ի սորբկրկեայ դահլիճս նորա թաղեալ են նշանաւք Վոլդեռի, Իւսոյսի և զօրավարաց ոմանց Նաբոլէոնի։ — Մերձ է ի պանթէոնն եկեղեցի Ս. Սուլփանոսի (Saint-Étienne-du-Mont) մաբիսանացի Ճարտարապետութեամբ. — Ս. Գերմանիս (S.t Germain-des-Près) հին եկեղեցի։ Յաջորմ Սինայ, Մադդաղինացին (La Madeleine) հոյակապ եկեղեցի նոր քան յունական ոճոյ, գեղեցիկ յոյժ. — Ս. Հաւքաս, որ է Ժողովրդապետական եկեղեցի Դեկրիզեանց. — Ս. Եւստաքիոս խառն Ճարտարապետութեամբ և Ս. Գերմանիս միւս (S.t Germain l'Auxerrois) առ երի Լուվրայ գոթացի ոճով. — Ասառատածին-Լաբրեաճի զարդարեալ խառացի ճոխութեամբ։

Ընկերանոցք քաղաքացեաց են 12, զինուորաց 5, և հիւրանոցք 13. յորս գլխաւորք, մեծագոյն քան զամենեսին Օգէլ-Տիէս (Hôtel-Dieu) անուանեալ յորում 1,500 մահիճք են հիւանդաց. և անկեանոցքն որ ազգի ազգի անուանս ունին քան ազգս ազգս հիւանդաց և կարօտելոց բնակելոց ի նոսա, ընդ որս են և անկեանոցքն կոյրաց, համրոց և խլից, և այլն։ Վասն ջրաբաշխութեան 86 աղբերք են հասարակաց ի Բարիզ և 500 առանձնաւորաց. բարեհամ է ջուր ջրմղին Ուրքայ (Ourcq) քան զայլսն։


377. Ի հաւաքածոյ նիւթս ուսումնական իրաց և արուեստից նշանաւորք են քան զամենայն նախայիւսանակեաքդ Լուվրը, Լիւսանպուրկ և պարտէզն որոց յատկութիւն նշանաւոր են Թանգարան նկարաց քաջ պատկերահանից, Թանգարան հնութեանն՝ Եգիպտական և Ասորեստանեայ հնութեամբք, մնացեալն նաւաց։ Բայց ի սոցունց անուանի են առն հրաշինուց, պահարան պատերազմական կահուց, պահարան արուեստից, տուն անդամահատութեան, բժշկութեան, դահլիճ պատկերաց դքսին Օռլէանայ յարքունի պալատին, դահլիճ հանքարանութեան, Ճարտարապետութեան, և այլն։

Ընկերութիւնք և շինուածք ուսումնական ամենան են ի Բարիզ, յամենեսին ի նոսա գերագոյն է



Եկեղեցին Մագդալենացի

Ակադեմիան (Académie) կամ Իւսումնարանն ազգային զոր հիմնեաց Ռիշելիէօյմին 1663, որոյ չորս մասունք եին յառաջին, այս է՝ Ակադեմիան Գաղղիոյ, Ակադեմիան արձանագրութեանց և քանաստիրութեան, Ակադեմիան մաթեմատիկայ և Ակադեմիան գեղարուեստից. և յետ փոփոխութեանց մինչ ի 1832 յաւելուած և հինգերորդ Ակադեմիան բարոյական և քաղաքական ուսմանց. — Համալարան արքունի և ազգային՝ ընդ կառավարութեամբ մեծի հոգաբարձուին ուսմանց և արքունի խորհրդարանին. — Ակադեմիան Բարիզու յաճախեալ քան զամէն, յորում 8.000 համարակք եին ի 1836, բաժանի ի հինգ բաժանս, այսինքն՝ սուրպոնեան աստուածա-



Վարժարան Դեղարուեստից

բանութեան, իրաւանց, բժշկութեան, գիտութեանց, բնական ուսմանց. — Մուսէոն բնական պատմութեան. — Դպրոց համաբուեստից՝ որոյ վինուած օրինակ եղև ի գլխաւոր քաղաքս Եւրոպայ, ի սմա ուսուցանեն բնաբանութիւն, բնաքանդագութիւն, տարրաբուժութիւն և որ մինչ միանգամ կարեւոր եղէ ի գիտութիւն շար-

ժառաքեաց վինուորական և քաղաքական. — Մարզարան վարժարեաց՝ ուր կրթին գաստուերք ի սէաս համալարանին Գաղղիոյ. — Վարժարան գեղարուեստից նորոգ կառուցեալ յաւուրս նկարչութեան, արձանագործութեան և ճարտարապետութեան, վինուած վայելչագեղ, ուսի սրահաց ուր ժողովին հանդիսա-

տեսք կամ դնին ի տեսութիւն հարտար գործածք քաջաց համբակացն. ի վարժարանի ատս նշանաւոր է Հարտարարուեստից Դուռանն կէյլըն (Gaillon) գղեկին. Ըզպարտք գեղարուեստից, երաժշտութեան, վառնականութեան, արեւելեան լեզուաց, արձանի Թըղթոց. Բաց յայսցանէ են և այլ եօթն ականաւոր վարժարանք և բաղում գպրոցք ի պէտս մանկանց և աղջկանց. Ընդ օրս արժան է յիշատակել և զվարժարանս օտարազգեաց ի Բարիզ, որպիսի էր Եգիպտականն և Օսմանեան, և Հայկական վարժարանն Մուրատեան հաստատեալ անդ յամին 1846, որիւք Սամուէլի Մուրատեան վաճառականի Հայկազնոյ, ընդ տեսչութեամբ Մխիթարեան Հարց Վենետկոյ Վանից։

Ի Մասնիզդարանս անուանի է Ազգուեհարանն, Ճոխագոյն քան զամենայն գրատունս աշխարհի, զի են ի նմա իբր 1,000,000 տպագիր մատեանք ընդ մեծ և փոքր, 80,000 ձեռագիր և 20,000 բաղմալեզուեան գիրք, յորս նշանաւոր են հնդամատեանն յունական գրեալ ի Դ դարու, և Փառնակեսլատցի գրուած ե դարու։ Թանգարան հին գրամոյ 1,510,000 ազ, յորս 80,000 հնոց ազանց, պատկերք տպագրեալք իբրև 1,400,000. այսոքիկ ամենայն ի մատենադարանի անդ են։ Նշանաւոր են և մատենադարանք Ձիերաբանին, Քաղաքին, Լուսնայ, և այլն։

378. Թատերք 24 են ի Բարիզ յաճախեալք, յորս երեւելիք են Թատրն Գաղղիացւոց (Théâtre français), Թատերգրաբան մեծ (Grand-Opéra), կամ արքունի Ակադեմեան Դուռանգածուեան, Ոտեան (Odéon) Թատերգրաբան Խաւսացի, Կրկէս Ոլիմպիական (Cirque Olympique), Թատր գրան Ս. Մարգիտոսի։ Ի գրասցանս Բարիզու որ ասին են Թուղ այլ գեղեցիկք՝ ականաւոր է յոյժ պարտէզն Դիւելըզ-ռեայ, որում կից են Էղիւսեան գրասքաղն Ծառանոխիտ (Champs-Élysées), անուանն Պուլոնիէ՝ ուր Ձիերն կառաք և երիվարք. պարտէզն Լիւսանպուրկեայ զարգարեալ մարմնոյիւք և անդրէքք, պարտէզն անկոց, պատուարքն քաղաքին (Boulevards), և այլն։

Ի կենդանագուռս շինուածոն յիշատակաց արժանի են վաճառանոցքն Վալէ, Ս. Ղերմանոս, Ս. Ոնորիւրիս, շուկայքն պահեստի, վաճառատեղիք, որպէս ցորենոյ՝ որ է բոլորովի շինուած մեծագործ գրմէ բեմաս, գինետուն մեծ, մեքենագործ փայտի, և գամ բանարանին յորս նշանաւոր է Թէր լա Շէզդոյ յարեւելից մէջ կոչած քաղաքին ի ծագուածս և ի Թիւռս ԲԸԼ-ՐԻ, յորում չերեք գեղեցկաչէն բաղատ են և իրրև 30,000 տապանք և արձանագիրք խնամալից։ Յայս ամենայն հասարակաց շինուածս Հրի և մարգասրուեամբ մուտս շնորհեալ է չքնել օտարականաց։

Ի վաճառանուածութեան մի ի յաւէտ ծայրագնեաց և շահասան քաղաքաց աշխարհի է Բարիզ. ամի ամի գործեն տեսանօթ ցնծուի 15 միլիոն արժէից, ժամացոյց 6 միլիոն, և հանեն ի քաղաքէն կազմած 50 միլիոն արժէից. ամենայն ազգք գործարանաց գոյանին ի նմա, տարեկան կազմուած քաղաքին առաւել է քան զ50,000,000։ Ընդ աշխարհ է յաշխարհի Բարիզ ի գրաւճառուեան, 80 տպարանք են ի նմա, յորս տպագրեանն և մեծ առաջին է ընդ ամենայն աշխարհ, 600 գրավաճառք, առաւել քան զ300 օրագիրք և գրագիրք։

Ըստ քաղաքական վարչութեան յերկուասան շրջանս նման բաժանի Բարիզ և ի 46 Թաղս։ Բնակիչք մարդաքաղաքին են իբրև 1,100,000։ — Շրջակայքք Բարիզու ի հասարակի դաշտայինք են բարեբեր և գեղեցիկք։

379. Յահենկուստ Սենայ նշանաւոր տեղիք են.

Շուա-լը-Ռուա (Choisy-le-Roi). — Ընտանի գիւղ, զի են ի նմա գործարանք նաւոբ յախճապոս կուոյ ըստ անգլիացի տարազու, աշտաի և սեկի այծից։ Բն. 2,000։

Պիւէթրը (Bicêtre). — Դղեակ հին, որոյ կէս՝ բընակութիւն է անմանկաց ծերոց և յիմարաց, և կէս՝ բնակութիւն բանտագտ գործաւորաց, որոց այժմ միաշամուռ Թիւ է 6,600։

Սօ (Sceaux). — Քաղաք փոքրիկ, յորում կան մեզնացորդք պալատան և պարտիզից գքսին Բանթիեվայ, ունի ժամավաճառ արքատոց ի պէտս Բարիզու։ Բընակիչք 2,000։

Վաղիրար (Vaugirard). — Աւան մեծ որմնակից պատուաց Բարիզու, ունի գործարանս տարբրաշուածական նիւթոց և զտարանս շաքարի և վարժարան մեծ։ Բն. 10,000։

380. Յայնկի Սենի գեղոյ գլխաւոր տեղիքն են.

Շարանթօն (Charenton). — Ի գեղախառնուածս Մատնայ և Սենայ գեղս մեծ, անուանի վանն յիմարանոցին և ձուլարանաց շրգեշարժ գործուց։ Բն. 3,000։

Ալֆոր (Alfort). — Իշխանիք մեծ որ ունի գպարոց բժշկութեան անասնոց։

Վէնսէնն (Vincennes). — Կշռանաւոր է ի սմա գըղեակն յորում նստան Թագաւորք Գաղղիոյ, ունի որարան որմնափակ, վարժարան հրաղնեութեան, դաշնիՀ զինուաց, և դամասն գբոն Էնիկիէնի որ սպանաւ ի խորխորատս գղեկին ի 1804։ Բն. 6,000։

Պէրսի (Bercy). — Գեղ մեծ, շտեմարան գինւոյ և ցքաղ ի պէտս Բարիզու։ Բն. 7,000։

Շարոնն (Charonne). — Գեղ, յորում է գպրոց վաճառականութեան և արուեստից։ Բն. 4,700։

Պելէվիլ (Belleville). — Կառուցեալ ի բարձրատակի, են ի նմա տունք գբաւանաց, քարաչհաւք և ծառաստան նորատունկ ծառոց։ Բն. 19,000։

Մոնմարթրէզ (Montmartre). — Ի վերայ բարձրադունին ի բերբո Գաղղիոյ, տեղի մարտիրոսութեան Ս. Դիոնեսիոսի պաշտպանին Գաղղիոյ, կամ տեղի մեհենին Արեհի. ի բարձրեալ նոցա երեի գեղազարշ տեսարան մարքաքաղաքին և ափանց Սենայ։ Բնակիչք 6,800։

Սէնթ-Ուէն (Saint-Ouen). — Ունի ամրոց գեղեցիկ յորում Լուգդվիկոս ԺԸ. հրատարակեաց գյայտարարութիւնն անուանեալ Սէնթ-Ուէն, են ի գեղ սոա գործարանք բաղում, համբարանոց ընգերնոց և բուժանդին ոչնչ գեպիեան։

Սէնթ-Տընի (Saint-Denis, որ է Ս. Դիոնեսիոս). — Քաղաք անուանի վանն հին մենաստանին յորոյ ի գոմացի եկեղեցւոջն էին գամբանք Թագաւորացն Գաղղիոյ, ընդ որոց և մերոյ վերջնոյ Թագաւորին Ռոբերտեանց Լուսին, որք առ խաղաղութեամբն քահգեցան։



Եկեղեցին Սեն-Տրեի


Նաթոլէոն վերանորոգեալ զայնս ի 1806. և այժմ ի վանս աթոյիցն հատատեցաւ գոլոց օրիորդաց գասեղ. ապետացն Լեգէոնի պատուոյ: Բն. 14,000:

Նէոյլլի (Neuilly). — Ոչնի կամուրջ ի վերայ Սենայ 780 ոտնաչափ յերկայնութիւն. նշանաւոր է գեղեցիկ սորա, ուր Լուգ. Փիլիպպոս վերջին Թագաւոր Դաղղիոյ զման մի ամարայնի անցուցանէր. Բն. 8,000:

Պ–է (Passy). — Լման սահմանակից Բարիզու, ուրի հանքային ապրեալ ցուրտ ջրոյ: Բն. 17,000:

381. Ջ. Սեն-եւ-Ուազ (Seine-et-Oise). — Ջի Սեն գետ անցանէ ընդ սա և Ուազ Թափի ի նա. ման Լշտ-Ֆռանսայ և Օռլէանայ. ունի արտիս, նաւելի ընթեր, մատաղատունկս ծառոց, անտառս, մարմանդ, երկ, ձոռին, պտուղ, ոչխար Գէրս, երկանագար, վերմիտրուքեան, կեչ, հող յախճապակւոյ, ապակի, գինի, և այլն:

Վերսայլ (Versailles). — Գլ. Ք. ի մէջ գաւառին, ջրիւք փարահաս և կիսով հեռի ի Բա-



Արքունի պալատն Վերսալլեայ

բիղէ, անուանի դէղեցկութեամբ և հարստութեամբ։ Լուդովիկոս ԺԴ՝ կառոյց ի սմա պալատ հոյակապ քանակաւ պղտղեաւի ամրոյն փոքրիկ։ առ խառնվուբեամբն անհնամ հնոց, այլ յեկեղ թագաւորն Լուդ։ Փիլիպպոս արաք ի նմին նորոգութեամբս ոչ սակաւ, հաստատեալ և գահլճաս հնութեանց և նոր կարուց և արձանս հարտարացն Գաղղիացւոց, յորս մարթ է գտանել զդրօնս նախնեացն և զարդեաց, որով և անուանի եղև ընդ ամենայն աշխարհ։ յաւէտ հնանաւոր են ի նմա երեք նորին որ հայրն ի պարտեզն կոյս, պանդելի նկարք Լամբէնայ ի գահլճին Հերակլեայ, գահլճին Բրիսի, գահլճին Հեփեստեայ, գահլճին մեծ՝ յորում Լըպրեան նկարեաց զմեծապանծ արարս Լուդովիկոսի ԺԴ, յորկ Թագաւորէն, մատուռն դէղեցկաչէն զարդարեալ պատկերօք և անդրեօք, գրասեղ նաղնքի կամ լեմնի, զոր յօրինեաց Մանսար, և են անդ ծառք երկու մին ձեռաստնի Փրանկիսկոսի Ա. և միւսն Դ Ենրիկոսի, պարտէզն մեծ զոր զարդարեաց Լընոդրը արձանօք պղնձեօք և հճեխօք։ բազում են անուանք դէղեցկի ասաղանք և շատրուանք, յորս նշանաւոր է Լատոնայ՝ յոր գայ ջուր ի Վերսալլեայ ի ձեռն Մառլի ջրանցեղի 645 չափս երկայն։ ի ծագ պարտիզին կան մեծն և փոքր անուանեալ Տրիանոն, չինուածք կառուցեալ ի ԺԴ և ի ԺԵ Լուդովիկոսէ։ այժմ անընդհատ են յոյժ փառք Վերսալլեայ զի ոչ ևս նոսին անդ Թագաւորք։ Ի քաղաքի սոս ծնան Լուդովիկեանք ԺԵ, ԺԶ, ԺԷ, ԺԸ, արքայն Էրէ, Տիւսի, և այլն։ Բն. 35,000։

382. ԿՐԻՆՈՆ (Grignon). — Հուսկ ի Վերսալլ, կայ ի նմա արքունի ուսուցչարան հաստատեալ վասն բարգաւանելոյ վերկրագործութիւն։

ՍԵՆ-ՍԻՐ (Saint-Cyr). — Ուխի զինուորական վարդոց 300 մանկանց ի հին մենաստանի, զոր Մենդենն տիկին կարգեալ էր ի բնակութիւն անանկ աղջկանց։ Բն. 1,700։

ԺՈՒՅ (Jouy). — Ուխի մեծ ձեռագործ նկարէն կատարուց։

ՄՍԻՍՈՆ (Malmaison). — Ամրոց անուանի վասն բնակելոյ ի նմա կայսրուհւոյն Յովսեփինայ, ինչ կաբուլեանի, որ և ինքն յամին 1815 սոս եկաց զաւուրս ինչ հրաժարեալ ի Թագաւորութենէ Գաղղիոյ։

ՍԵՆ-ԺԵՐՄԵՆ-ԱՆ-ԼԱԵ (Saint-Germain-en-Laye). — կայ ի սմա գղեակ կառուցեալ ի փրանկիսկոսէ Ա. ի գլաակ վայրի, և անուանւ մի գեղեցիկ շուրջ պատեալ որմով։ Ցակոբոս Բ. արքայ Անգղիոյ ի քաղաքի սոս մեռաւ։ Աստ ծնան Ենրիկոս Բ, Կարոլոս Թ, Լուդովիկոս ԺԴ։ Բն. 13,000։

ՊՈՒԱՍՍՈՒ (Poissy). — Ի ձախմէ Սենայ, ունի մեծ ամասվաճառ արքաւոց, ի պէտս Բարիզու, ամի ամի 1,400.000 ֆրանգաց չահ ի նմանէ։ Բն. 3,800։

ՍԷՒՐ (Sèvres). — Աստ փոքրիկ չահնկուժ Սենայ, ունի արքունի գործարան չախճապակեայ անուանի ընդ ամենայն Եւրոպէ, գեղեցիկ են անօթք նորա։ Բն. 4,000։

383. ՍԵՆ-ԳԼՈՒ (Saint-Cloud). — Ի վերայ բլրոյ ի հիւսիսակողմն Սեվրայ. անուանի է գղեակ սորին գեղեցիկ զոր նորոգեալ վարիչացոյց Նաբոլէոն ի բերնակութիւն իւր, զի սիրէր զաս քան զայլ ամենայն արքունիս ապարանս. պարտէզ նորա Հարտարութեամբ յարդարեալ ի Լընոդրայ անուանի եղև յոյժ։ Ի քաղաքի սոս ապրեալ Ենրիկոս Գ ի 1589. և գործեալ ի սմա յաւուրս խռովութեան ցրուեցաւ ժո-

ղով Հինգ Հարիւրոց ղոր խմբեալ էր Նաբոլէոնի։ Բնակիչք 3,400։

Մէօտօն (Meudon). — Ի հարաւոյ Սեվռայ, աւան գեղեցիկ կառուցեալ ի բարձրաւանդակի, յորում է պալատ արքունի՝ ուր բնակեցաւ Մարիամ Լուիզա կին Նաբոլէոնի և որդի նորա ի ժամանակի զի կայ բոլորն մարտ մղէր ի Ռուսաստան։ Բն. 3,200։

Գ Ո Ր Պ Ե Ի Լ (Corbeil). — Աւա Սենայ ի խառնուրդս Լուանայ՝ որ Հոլովէ անդաստր ջրաղացս առաւել քան զքառասուն. են ի քաղաքի սոա մեծամեծ չուեմարիք ալեր և ցորենոյ ի պէտս Բարիզու։ Բնակիչք 4,000։

Ռ Ի Ս (Ris). — Գեօղ ընդ մէջ Բարիզու և Գորպէյլոյ, յորում է ուսումնարան պարտիզագործութեան Գրոմոն անուն, և դասին անդ ազգի ազգի տունկիք։

Մ Ո Ն Լ Ի Ե Ր Ի (Montlhéry). — Ի զառ ի վայրի բլրի միոջ, յորում են միացորդք և աշտարակ գղեկի կառուցեալ ի 1015. սոա Լուդովիկոս ԺԱ. մեծաց ի 1465 պատերազմին մեծ ընդդէմ եղբօր իւրոյ դքսին Պեռեայ։

384. Է Ք Տ Ա Մ Բ (Étampes, Ստամպէս). — Ի վերայ ժիժինայ (Juine), ունի բազում ջրաղացս։ Բնակիչք 8,000։

Մ Ա Ն Տ (Mantes). — Ի ձախմէ Սենայ ի զուարճագեղ դաշտի վասն որոյ և քաղաքն Գեղեցիկ մականի։ ի չքնաղական նորա դասանին հնուքիներք կնիք ասց և Հռովմեցեացդ։ Փիլիպպոս Օգոստոս մեռաւ ի Մանդ ի 1223։ Բն. 5,000։

Ռ Ո Զ Ն Ի (Rosny). — Ընտանի է ամենց նորա յոբուսմ ծնաւ Սիւլլի, և վճռաւոր բարեփարտութեան ղոր ի կալուածս իւր կառոյց գքսուհին Պեռեայ։

Բ Ո Ն Տ Ո Ի Ս Ա Զ (Pontoise). — Ի խառնուրդս Վիոզնայ (Viosne) և Ուազայ, ունի ցորեան, ալիւր և աղբիս, և գրասս։ Ասա ծնաւ Փիլիպպոս Ճաղոգաւն։ Բն. 5,800։

Ա Ն Գ Ի Ե Ն (Enghien). — Ի գեղեցիկ դաշտին Մոնմորանսի, անուանի գեօղ, զի ունի բաղնիս ծծմբային ջուց։

Ռ Ա Ն Պ Ո Ւ Ի Լ Ե Ի (Rambouillet). — Կայ ի սմա գբշնակ արքունի՝ յորում մեռաւ փրանկիսկոս Ա. ի 1547. սոա և կարդացս ի Տրաճարեաց ի Թագաւորաբերնին յամին 1830. Նշանաւոր է պարտէզ սորա անգլիացի տարազս, յորում են ազգերք և գիտակ տեղք, և անտառն մեծակաց։ Լուդովիկոս ԺԶ. ի 1786 եա բերել այսր հօրան մի ճերմակ այծէկ, յորմէ ապա մեծ շահ եղև ձարտարացն։ Բն. 3,000։

385. Ի. Ս Ի Ն Ե Ի Մ Ա Ռ Ն Ի (Seine-et-Marne). — Ցանուն գեօղն երկոցուն. մասն Իլ-սը-Ֆրանսայ և Շանբանեայ. գաշտս բարեբեր ունի և անտառս գեղեցիկս՝ յորս անուանի է Ֆոնդէնբլոյ, և մարմանդս գեղեցիկ յարօտ հօսից յորոց կաթանէ գործեն զանուանի պանիրն Պրէ. ունի ցորեան բազմամ, միրգ, գինի, պտուղ ջաբակի, խաղող սպիտակ, երկանաքար ընտիր, կիմ յատակի, մասաղատունկ ծառատան, կաս նկարէն, երկաթեղէն և պողովատիկ, բուրդ, բամբակ, մոլթ, յախճապակ, և այլն։

Մ Ը Լ Ք Օ Ն (Melun, Մելւտնեան). — Գ. Ք. ի վերայ Սենայ յորմէ յերկուս մասունս բաժանի. Բնակիչք 9,000։

Գ Ո Ւ Լ Ո Մ Մ Ի Ե Ր (Coulommiers). — Ի Պրէ, ունի խազոխս, և ցորեան և ալիւր վասն Բարիզու։ Բնակիչք 3,600։

Պ Ր Ի - Գ Ո Մ Տ - Ռ Ո Պ Ե Ր (Brie-Comte-Robert). — Մայրաքաղաք հնոյն Պրիայ, ունի ամուսնացաւ ցորենոյ. են ի նմա աւերակք համանուն աշտարակին։ Բն. 4,000։

386. Ֆ Ո Ն Թ Ե Ն Բ Լ Ո (Fontainebleau, որ Թաղգմանի կայսրատակ ազրիւր). — Ի հարաւոյ Մըլէնսայ գեղեցիկ քաղաք փոքր, յորում է արքունի գղեակն կառուցեալ մեծաւ մասամբ ի Փրանկիսկոսէ Ա։ Գրիմանինէ գրեալ Սուէտիոյ անդ բնակեցաւ առ ժ. Լուդովիկոսիւ և եա սպանանել զՄոնթալաբերի։ Աւա կարդեցոնիւ Պիոս Ը քահանայապետ ամ մի և կես եկաց ի նմա. և անդ զառաջինն հրաժարեաց Նաբոլէոն ի գահէն ի 1814. զքաղաքաւս կայ անտառ մեծ յորս բազում մեծերք են կրղ ի պէտս յատակաց Բարիզու, և ի զբօսանենէ նոցին քաջ հասունաց. նայ անուանի խաղողն Ֆոնդէնբլոյնի։ Բն. 9,000։

Մ Ո Ն Տ Ե Ր Ո Ւ (Montereau). — Ի խառնուրդս Սենայ ընդ Լոննայ, սոա մեռաւ գոբսն Պուրկունեայ Անէրիւզն անուանեալ, խորհրդալ ի վերայ կամքին ի 1419. սոասնոր և ի 1814 Գաղղիացիք յաղթեցին Ռուսաց։ Բն. 5,000։

Ն ը ք տ ո ւ ր (Nemours). — Քաղաք գեղեցիկ ի հարաւոյ Ֆոնդէնբլոյնի։ Բն. 4,000։

Մ Օ (Meaux). — Ի վերայ Մառնայ, մայրաքաղաք Շանբանեան Պրիոյ, կարի գեղեցիկ, յաթոռ եպիսկոպոսութեան նորին ամարձակ մեծն Պոսիւէ. մայր եկեղեցի նորա գոհացի՝ անուանի է գեղեցկութեամբ. մեծ է տուրևառ արմանաց քաղաքիս որ ծաղկեն ի Բարիզ. ի սահմանս նորա կալմն և զանուանի պանիրն Պրէ։ Բն. 10,000։

Լ Ը Ֆ Է Ր Ո Ւ Ե - Ս Ո Ւ Ր - Ժ Ո Ւ Ա Ռ (La Ferté-sous-Jouarre). — Քաղաք գեղեցիկ առ Մառնայ. ունի վաճառս երկանի։ Բն. 4,000։

Բ Ր Ո Վ Ե Ն (Provins). — Ի վերայ Վ ը ւ ա լ ե ա յ քաղաք վաղնճի. անուանի են վաճառք ցորենոյն և ալերն. որպես յառաջն վարգի և մանուշակի. ունի հանքային ջուր և վարգ ի պէտս գեղոյ։ Բն. 7,000։

Բ. ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՐԵՒԵԼԱՆ ԳԱՒԱՌԻ

387. Ը. Լ Ա Ն Ը (Aisne). — Ցամռան գետայն որ ընդ նա անցանէ առնու զկոչումիդ, և է ման նահանգացն Շամբանեայ, Իլիկարտեայ և Իլ-ը-Ֆրանսեայ. ունի բերս ընդգղնաց և ձիթոյ, հունդսլոն, վուշ, կանեփ, անասուն, երկ և ձուկն, քարհատաս և գործարանս բիւրեղի, խեցւոյ բռնելոյ, կաւոյ բամբակի, անկուանդոյ դիպակաց:

ԼԱՆ (Laon). — Գլխաւոր քաղաք կառուցեալ ի մենաւոր լերին. նշանաւոր են ի նմա միացուածք մայր եկեղեցւոյն զոր վերնեայ Լուդովիկոս Նուամնեին կոչեցեալ: Ասա ծնան Լակէյըր և ասոնց նորա հակառակորդ Գուլիելմոս Շամբոյ, և նաւուղին ցակոթ Մարքերդոր որ եգիս զԻիսիսերի. ի չորեսասս սորա գահանի սառնորակ վանականին յորմէ վերնի բիւրեղն Սէնկոպէն: Բն. 19,000:

388. Շ Ա Տ Ո-Թ Ի Ե Ր Ի (Château-Thierry). — Որ լսի Բանակեալ Թէոդորիկեայ ի վերայ Մառնայ. յորում են վրատակք ամրոցին. վերնին սատ ամնաւ վաճառաք գեղջեաւոր խաչանց զոր ուսուկք ուսուկք ի գաւառացն բերեն: Ասա ծնաւ մեծ առակիսաս քերդոն Լաֆոնտէն: Բն. 5,000.

Լ Ա Ֆ Ե Ր Տ Է - Մ Ի Լ Օ Ն (Laferté-Milon). — Ասան փոքրիկ յորում ծնաւ մեծ քերդոն Ռասին: Բն. 2,000:

Սէն-Ք Ո Ա Ն Տ Է Ն (Saint-Quentin). — Ի վերայ Սոմ գետոյ առ Համեմոն ջրանցքին, ունի գործարանս ցքոյ, դոֆէոք կաւոյ, ապրնագործից, բամբակ կերկեն հիւսուածոց, սեաւ ածառի և արքասպային Թեթուտաի. ի չէնսըն նշանաւոր են հասարակաց ժողովարանն և կամարք ջրանցքին. ունի գպրոց վաճառականութեան և բանասիրական ուսմանց և արուեստից: Ասա ծնաւ իմաստասէրն Գոնտոսէտ: Բնա. կիչք. 21,000:

389. Ս Ո Յ Ս Ո Ն Ս (Soissons, Նովիոդունում). — Քաղաք վաղեմի առ ափն գետոյն Էյնեայ, երբեմն Թագաւորական քաղաք, որոյ եպիսկոպոս ունէր իշխանութիւն օծելոյ զթագաւորն ի չժամանել արքեպիսկոպոսին Ռէմսոյ. անդ էր և հռչակաւոր վանասանն Սէն-Մէտար (Saint-Médard) կառուցեալ յամին 843, ուր արքեալ Լուդովիկոս Տէպոնէր. մայր եկեղեցի քաղաքին կանգնեալ ի ժԱ դարու անանի է վասն ոճոյ Ճարտարապետութեան և հնութեանն: Պետինոս ի նմա օծաւ արքայ Գաղղիոյ: Բն. 9,000:

Վ Ե Ր Վ Ի Ն Ս (Vervins). — Քաղաք փոքրիկ անուանի վասն դաշնագրութեան Եվրիկոսի Գ. ընդ Փիլիպպոսի Բ. արքային Սպանիոյ յամին 1598: Բնա. կիչք 2,500:

Լ Ա Ֆ Է Ր (La Fère). — Քաղաք փոքրիկ, ունի զինարան և գպրոց հրաձիգ զինուորութեան: Բնա. կիչք 3,000:

Սէն-Կ Ո Պ Է Ն (Saint-Gobin). — Ցամռան գուսեայ (Coucy), ի սմա է մեծ և գեղեցիկ հալոց ապակեաց գաղղիոյ: Բն. 2,400:


390. Մ Ա Ռ Ն Ը (Marne). — Անուանակիր գետոյն որ ընդ նա անցանէ. ման Շամբանեայ. առաւելագոյն մասամբ գաշտային է երկիրն այլ անբեր, բայց անկեն այժմ ի նմա նոճաս Սկոտիոյ բազում, ունի արմտիս, և գինի ազնիս, եղն Դիպերեանն, երեսիս բաղում, և երկնաքար, կիր, կաս, հողս կոշտ վառելի, ևս չուեայ կաղին, ցիսի, սիսեռ բրդեղէն, Թել, ապակի և չախճապակի անօթք:

Շ Ա Լ Ո Ն Ս առ Մառնայ (Châlons-sur-Marne, կամպալանում). — Գլխաւոր քաղաք առ եզը Մառնայ ուսոի և զանուն առնու. ի չինուածան նշանաւոր են մայր եկեղեցին խաչն Ջարապետութեամբ յուն. նահան և գոթացի. մենաստան Ս. Պետրոսի որ այժմ զրանիսա է, ապարանք պետին ժողովարան հասարակաց գեղեցկաչէն: Կայ ի Շալոն մեծահռչակ կրթանոց արուեստից երեսից քան զայլսն, Թանգարան բնական պատմութեան, մատենադարան հասարակաց 20,000 գրեհով, պարտէզ մանկաբանութեան. և արուսաբ քաղաքի են զուարճալի Ջեմպիզը զբօսանոց: Ասա ի մեծի գաշտին որ կայ ի հարաւոյ Շալոնայ հարեալ խորտակեալ Աւտիլասայ յամին 451 ի Հռոմայեցւոց և ի Վիսիգոթաց՝ որոց զօրավարքին Ա. էետիոս և Թէոդորիկոս՝ փախստական դնաց: Բն. 14,000:


Է Փ Ե Ռ Ն Է (Épernay, Խրեռնիա). — Ի վերայ Մառնայ գեղեցիկ քաղաք փոքր, ունի գինի ազնիս: Բն. 6,000:

Լ Ե (Aï). — Քաղաք փոքրիկ առ ափն Մառնայ հանդիպակաց Էպըռնէյայ. անուանի են և սորա ազնիս սպիտակ փրփրագէզ գինիք: Բն. 2,800:

391. Ռ Ե Ի Մ Ս (Reims, Ռեմի, Տուբակտոսրան). — Ի հիսիսակողմն, ի վերայ Վեզլայ (Vesle), քաղաք վաղեմի յոյժ. բաղում են ի սմա նշանաւոր եկեղեցիք, բայց մայր եկեղեցին անուանի է



Մայր եկեղեցի Սուասոնայ



Մայր եկեղեցի Ռէյմսայ

քան զամենայն, գեղեցիկ գոթացի Ճարտարապետութեամբ կառուցեալ յԺԳ դարու, զնկարս Ճակատուս տաճարին որ ի 600 ամաց հետէ յապշեցութիւն կրեթէ զամենայն քաղաքակից հովիւս մի չանգանայի: Թագաւորք Գաղղիոյ ի Կլովիսայ մինչև ցԿարլոս Ը. ի քաղաքի սոսո օծեալ պսակեին, և սրբաւան Ըֆէ իւղոյն (Sainte-Ampoule) զոր ի ձեռն հրեշտակի սանեն բերեալ առ Ս· Հռեմիկիոս յօծման Կլովիսայ՝ մատակարարեր չիմն ինչ իւղոյ յօծումն ամենայն Թագաւորացն: Բայ ի սմանէ նշանաւոր է ի Ռէյմս ձիավարեալ տաճարապահկերն Լուգովիկոսի ԺԵ յաղթունի հրապարակին, ժողովարանն հասարակաց, և խոր գինետունքն ի նկուղս կրոց, անկաթանութեան պարտէզն, հասարակաց գրատունն յորում 25,000 մատեանք են և ընտիր ձեռագիրք, և գեղեցիկ զբօսարանքն: Ի Ռէյմս գտանին միացորդք հռոմէական չինուածոց ոչ սակաւք, որպէս յաղթական կամարաց, տաճարաց և այլն· վաճառականութիւն քաղաքին բարգաւաճ է, ունի ձեռագործս չուխայի և բրդեղէն կտաւոց· գինի որ ի մատաւոր սահմանն լինի անուանի է յոյժ: Ատ ծնաւ մեծն Գոլպէր: Բն· 43,000:

392· ՍԷՆԻ–ՄԵՆՇՈՒԼ (Sainte–Menehould)· — Ջատ ի 1652 ինքնին Լուգովիկոս ԺԳ պաշարեաց և խրամատ գործեալ եմուտ ի նմանէ, ունի գործնոցս և ապիկի անօթս: Բն· 4,200:

ՎԻԻՐԻ-ԼԸ-ՖՐԱՆՍՈՒԱ (Vitry-le-Français) . — Ա. Մառնայ կառուցեալ ի փրանկիսկոսէ առաջնոյ յամին 1548 . երկու փողոցք են քաղաքին որ հատանեն զիրեարս ուղղակի, և ամենայն չինուածք ի վերայ կրկին փողոցացն են : Բն . 7,000 :

ՇԱՒՓ-ՈՒԲԷՐ (Champ-Aubert) . — Գիւղ փոքրիկ ուր ի 1814 Գաղղիացիք յաղթեցին Ռուսաց , նոյն և ի Մոնմիրայլ (Montmirail) մերձաւոր ասանի յերբ կրօրգուզին ասուբ : Բն . 200 :

393· ԱՐԴԵՆ (Ardennes) . — Անուանակից անտառին որ ի հիւսիսոյ նորա . սահմանակից է Պելճիոյ , մասն էր Շամբանեայ . ընդ սա անցանէ գետն Մեզ : Ունի ցորեան բաւական վասն ընակչաց իւրոց , գինի սակաւ , կիտրոն , կանեփ , սեզ , երկիմայ պատրաստիկ և գրաստ , ոչխար , այծ գիսպեզեան և երէ , փայտ բազում , քարահատս մարմարիոնի , արդեհանոն քար , յախճապակի , երկաթ . և գործարանս զինուց , բարակ չուխայից , կաղմերայ և ցխեաց , դարբնոցս և ձուլարանս :

ՄԷԶԻԷՐ (Mézières) . — Գլխաւոր քաղաք ամուր , որում յամին 1521 ասպետն պայտա պաշտպանեաց յերկեսաց կարելոսի Ե : Մոնժ երկրաչափ ծնաւ ի քաղաքիս : Բն . 5,000 :

394· ՇԱՐԼԷՎԻԼ (Charleville) . — (կարոլոսի քաղաք) , զի կառոյց զա յԿզը Մեզոյ կարելոս Գոնզակեան դուքս Մանգուայ ի 1606 . ունի գործարանս հրացան զինուց , և չքեղ սպառազինութենից : Բն . 9,000 :

ՌԷԹԷԼ (Réthel) . — Ի վերայ Էշմոյ . սա բազում անգամ ի Սպանիացւոց գրաւեցաւ , և ապա ի 1663 ծերպանտուին Մազարէն կացոյց նմին իշխան դուքս մի : Բն . 9,000 :

ՌՈԳՐՈՒԱ (Rocroi) . — Քաղաք ամուր , ուր յաղթեցաւ մեծ կանգնեաց մեծ իշխանն Կոնտէ ի վերայ Սպանիացւոց յամին 1648 : Բն . 4,000 :

ԺԻՎԷ (Givet) . — Քաղաք ամուր ի սահմանս Պելճիոյ , հայրենիք Մէհիէլ նուագածուի : Բն . 5,700 :

ՍԸՍԱՆ (Sedan) . — Ամուր քաղաք , որ երբեմն գլխաւոր քաղաք էր Պուլիոնայ , և հայրենիք քաջին Դիւռէնայ . ունի գործարանս սեաւ չուխայի , կաղմիայ , կաուչուց : Առընթեր քաղաքիս են ձուլարանք մեծ հրանօթից և հաւոյգք : Բն . 15,000 :

ՎՈՒԶԻԷՐ (Vouziers) . — Ունի գործարանս չուխայի . Բն . 2,500 .

395· ԺՄ· ՄԵՈՋ (Meuse) . — Անուանակից գետոյն որ անցանէ ընդ նա . մասն Լոռենայ . ունի արմտիս , գինի ամենևին յայգեսեանս Օռլենայ (Orlenain) . ձէթ , հաղարջ և պաՏար բազում և երէ . երկաթ , քարահատս , և բամբակ , կաուչուկ , քաղցուկնիկ , անուշահոտ , չիչք ապտկեայ , դարբնոցք , հնոցք , պղղոմատիկ , երկաթ կառնեալ :

ՊԱՐ-ԼԸ-ՏՈՒՔ (Bar-le-Duc, Պարուճ-Տուքս) . — Ա. ամէն Օռլենայ գլխաւոր քաղաք գեղեցիկ , որ կանխաւ մայրաքաղաք էր Պարայ . անուանի են քաղցուկնիկք որ ի սմա գործին , սաս ծնաւ դուքսն Կիզ : Բն . 13,000 :

ԳՈՄԵՐՍԻ (Commercy) . — Ի վերայ Մեզոյ , ի չքեղանկս սորա կան բազում դարբնոցք և հնոցք : Բն . 4,000 :

ՍԷՆ-ՄԻՀԻԷԼ (St. Mihiel) . — Ի վերայ Մեզոյ , ունի գործատունս սինդոնի և ասպեգործաց . ի ժողովգապետական եկեղեցւոջն կայ հաչակաւոր դամբան Ս . Միհիելի անուանեալ . զոր գործեաց Լէժէ-Ռիշիէ արձանագործն : Բն . 6,000 :

ՄՈՄԷՏԻ (Montmédy) . — Ի վերայ Շիէրայ (Chiers) քաղաք ամուր : Բն . 2,500 :

ՎԷՐԴԻՕՆ (Verdun) . — Յամին Մէօզ գետոյ՝ յորմէ և յերկուս բաժանի . քաղաք հնադէն , յորում նստէր մի յերից եպիսկոպոսաց Լոռենայ . ունի գործարանս քաղցուճնեայց և չաքարեղինաց , ուսոի բազում չահ կը են : Բն , 15,000 :

ՎԱՐԻՆ (Varennes) . — Ի վերայ Էրայ , քաղաք փոքրիկ յորում արգելաւ ի դիպաՏոջ Լուդովիկոս ԺԶ . ի 1791 : Բն . 1,800 :

396· ԺՈ· ՄՈ ԶԷԼ (Moselle) . — Անուանիկեր գետոյն , մասն Լոռենայ և գերմանական երկրին : Լռենային է ի հասարակի , և ունի գեղեցիկ այգեստանս , անտառախիտ ծառաստանս ի բարձունս և զափաղբ Մոզելայ բարեբեր դաշտս . բերք նորա են արմտիք առատ , միրգ և պտղատու ծառ բազում , ընդհեղեն ազնիւ , կաղամբ վայրի , կանեփ , հուպլոն , կաղամբ ազնիւ , երկաթ բազում , գետնաձուխս , հանքային ջուրք , ալի ազբերք : Իսկ ի գործածան անուանի են չուխայ հասարակ ի ոչխոց զգեստիկին , կտաւ , Թուղթ գունաւոր , կաղմածք և կաշ երկաթի , կօշիկ , զէնք և զրահք , ձուլարանք հրանօթից , ապակի , յախճապակի , դարբնոցք , հնոցք , գարոլի , և այլն .

ՄԷՏ (Metz , Դիվոտորսն) . — Գլխաւոր քաղաք ի վերայ Մոզելայ 80 վարսախաւ տարածեալ ի Բարիզայ , ի յերից եպիսկոպոսանիստ քաղաքաց Լռենայ . ի Ց դարուս մայրաքաղաք էր Մեհոմոգրիկ անուանեալ կէտսայ . իսկ այժմ անուանի է ըստ ճարտարութեան , վաճառականութեան և ամբոխման . ունի արքունի ՀՒմարան գարուեհանց , մանգաստեհանց , արՀեստից և երկրագործութեան , ընկերութիւն բժշկութեան , տուն կաթսայարաց ըստ նիւթոյ արՀեստից , վարժարան զինուորական ճարտարութեան և հրանկնութեան , պարտէզ պտղաբանութեան , Թանգարան բնական պատմութեան , հասարակաց դրատուն 60,000 մատենից , յորս են և ձեռագիրք պատուականք : Իսկ ի չէնսն անուանի են զբանիսքն , զինարան , ապարանք գաստատրին , Գուասլէն (Coislin) հրապարակն , տեալբանն , ապարանք պետին , եկեղեցի Ս . Վիկենտիոսի և մայր եկեղեցին գեղեցիկ յօրինուած գոթացի զարմանագործ և ճարտարաչէն : Աստ ծնաւ մարքիսեան գիտակը : Բն . 40,000 : — Ի սահմանս Մէտսոյ կան ՀնացորդՔ հռովմայեցի ջրմղի որ բերբեր ջուր ի քաղաքն ի ոչխս բաղանեաց և ի Տանգէս նաւազմարսի :

ԼՈՆԳՈՒԻ , ՍԱՐԳԵՄԻՆԵՍ , ՊԻՉ (Longwy, Sarreguemines, Bitche) . — Քաղաք ամանաք , կարևորք վասն ամրութեանցն զի ի սահմանագլուխս կառուց-

ցեալն յարևելից Գաղղիոյ։ Բնակիչք միոյն 3,000, միւսոյն 4,500 և երրորդին 3,500։

ԹԻՈՒՎԻԼ, (Thionville), ՏԻԵՏԵՆՀՈՖԵՆ ըստ Գերմանացւոց, (Diedenhofen). — Ի վերայ Մոզելլայ գետոյ ամուր։ Բն. 6,000։ — Ասոի երկու փարախս Ճանապարհն է մինչև ի Հայանճ (Hayange) ուր են հալոցք գեղեցիկք երկաթի և կապմանք զսակից։

397· ԺՈ· Մ ԷՕ Ր Թ (Meurthe). — Ածանաձիրը գետոյն որ ընդ նա անցանէ որպէս և Մոզել գետոյն է Լոռենայ· ունի ընդգետնա, վուշ կանեփ, հուալդն, գետաձկնձոր, կաղամբ վայրի, միրգ ընտիր, մասմանդ գեղեցիկ, հանքային աղ, երկաթ, վէմ փորագրութեան, աղբիւր ապի, ջուխայ, կաուճ, Թուղթի գուշաւոր, խուզ. Ճանդեղ չաքարատու, ապակի և բիւրեղ։

ՆԱՆՍԻ (Nancy ըստ բնակիչն կանցիկ կոչէ). — Գլխաւոր քաղաք յարևմտակողմն գաւառին, առ ի Մէօրթիայ 85 փարսախ հեռ ի Բարիզայ և Հաղորդեալ ընդ նմա երկաթուղեաւ, մայրաքաղաք Հնոյն Լոռենայ· գեղեցկութեամբ վիճակածոյն ընդ գլխաւոր քաղաքս Գաղղիոյ գասի· գլխովս յայնցանէ կառոյց Սամիսլաւոս արքայ Լեհաց որ ասասնաւր օթագայեալ և մեռաւ (1766)· անուանի է արքունի հրապարակն՝ յորում է Ժողովարանն հասարակաց ի կինս երկուց փողոցաց որ ձգին ուղղակի յերկուս գրունս քաղաքին, ապարանք պետին, թէատրոնն, զբաղնիսքն, անկիանոցքն, հասարակաց աղբիւրք, Ճեմարանն Համալսարանի, գպրոց անասնակութեան որ միակ է ի Գաղղիա, մասնաճադարան, պարտէզ անկարատութեան, Թանգարան բնական պատմութեան· ունի և տունն գործս ամենազգի, զոզովաւորի գնաւոյս, ըմպելիս, և անթիւ յերկաթոյ, ի պղնձոյ և յանագէ։ Հայրենիք է քերդողին ՍԷՆ-ԼԱՆպԷռԱՅ, և Գալոգայ փիլիսոփային։ Բն. 40,000։ — Առ երի կանգնեալ են փորձառու վարժարանք երկրագործութեան։

398· ԲՈՒՆ-Ա-ՄՈՒՍՈՆ (Pont-à-Mousson). — Ի վերայ Մոզելլայ։ Բն. 7,000։

ՇԱՏՈ-ՍԱԼԻՆ (Château-Salins). — Այս է ևս բոց աղի, զի ունի աղահանս մեծ։ Բն. 3,800։

ՎԻԿ (Vic). — Ունի գեղեցիկ աղահանս և սա։ Բն. 3,000։

ԼԻՒՆԷՎԻԼ (Lunéville). — Գեղեցիկ քաղաք ուր Նաեղեն գոքաք Լոռենայ· բարեչէն են զբանիսաքն հեծելոց· սաս հզան գաղիք խաղաղութեան ընդ Աւստրիա և Գաղղիա յամին 1801։ Բն. 13,000։


ՊԱՔԱՐԱ (Baccarat). — Քաղաք փոքրիկ անուանի վասն գործարանացն բիւրոյ։ Բն. 6,000։

ՖԱԼՍՊՈՒՐԳ (Phalsbourg). — Ամուր քաղաք, ուր նի գործարանս նուրբ հեղանիւթոց։ Բն. 4,000։

ԹՈՒԼ (Toul). — Ի վերայ Մոզելլայ, ի հնումն Տուլլիոն, և մայրաքաղաք Լեհիի Ժողովրդեան, մասն Լոռենայ· գեղեցիկ է մայր եկեղեցի նորա գոթացի Հարատապետութեամբ։ Բն. 8,000։


399· ԺՈ· ՀՈՒՆՆՈՍ ՍՏՈՐԻՆ (Bas-Rhin). — Ցանուն գետոյն որ անցանէ յարևելից կուսէ գաւառին· մասն է Լոռենայ և սահմանի Ալսասիոյ, երկիր բարեբեր· ունի արմտիս ազգի ազգի, ընդեղէն, կանեփ, վուշ, ձիթապտուղ, սեզ, ծխախոտ, տորմն, գինի սպիտակ, կապար, երկաթ, հանքային ջուր, գործարան զինւոց, կառաց, ջուխայի, կաուճ, գարձոցս և ձուլարանս։

ՍԻՐԱՍՊՈՒՐԿ (Strasbourg, Ագրաաս-Պուրգաս, Արքենաորաասն). — Դէ· Ռ· ի բարեբեր գաշտի առ Իլ (Ill) գետով, 120 փարսախ հեռ ի Բարիզայ երկաթուղեաւ Հաղորդեալ ընդ նմա· յառաջագոյն ազատ քաղաք էր Գերմանիոյ, Լուգովիկոս ԺԴ· գրաւեաց զսոյն ի 1681, և է այժմ քաղաք ամուր ի սահմանա-



Սիրասպուրկ

գլուխս. վաճառականութիւն նորա և ճարտարութիւն բազմաւաստն յոյժ, գործարանս բազում ունի կառոյց, գինուց, ծխախոտոյ, մետղոյ: Ի գպրութեան մասին ընդ առաջին քաղաքս գաղղիոյ գասէ. է ի նմա ճեմարան մի յորում են լսարանք գպրութեան, մանկացութեանց, աստուածաբանութեան նորաղանդից,



Մայր եկեղեցի Սդրազպուրկայ

օրէնսգիտութեան և բժշկութեան. գպրոց գեղակազմութեան, պարտէզ բուսաբանութեան. գիսարան, գպրոց խառն ուղղափառաց և նորաղանդից, եսիս կոպտական վարժարան կղերաց, մանկնագարան հասարակաց, մանկնագարան նորաղանդ կղերաց, որոց միոյ միոյ 60,000 մանկունք են. ի չինան նշանաւոր են մայր եկեղեցին հռչակեալ ընդ ամենայն եւրոպէ. եկեղեցի Ս. Թովմայի յորում է հոյակապ շիրիմ Մաքս մարշալիսի քանդակեալ ի Բիկալլայ, պալատն եպիսկոպոսական, տեղապահն, տպագրանք գաւառին, զինագունք, համբարանոցք ցորենոյ: Մայր եկեղեցին որ Սիւնագէր անուանի և եկեղեցին Կոլմիոյ քաղաքի գեղեցկագոյնք և մեծագունք են ի գաղեղացի չինուածս տաճարաց. անուանի է զանգակաիկր աշտարակ Սիւնագերայ բարձրութեամբն 437 և կէս ոտնաչափ, որոյ չինութեան ի 1278 սկսեալ աւարտեցաւ ի 1438, իսկ եկեղեցւոյն կառուցումն ի 1050 սկզբ. բնաւորեալ վերջացաւ ի 1273: Արուարձք քաղաքին են գլխաւորապէս երկու գեղեցիկք, որ կանգնեցին արձան Գլէկերայ և Տրեքի զօրավարաց ծնելոց ի քաղաքի սոս, և անուանի եղելոց ի պատերազմունս Եգիպտոսի առ Նաբալէոնիս. միւս այլ ի պատիւ Կուգդմիկերկայ որ ի քաղաքի սոս յայսմիկ հնարեաց զտպագրութեան արուեստս: Բազում և այլ սքանչելագործ ծնան ի քաղաքի սոս գերմանացիք և գաղղիացիք: Նաւահամարջ մի ի քաղաքի սոսկ հանէ ի գետոյն Պաուենայ ի Քնէկ յայնկոյս Հռենոսի: Բն. 75,000:

400. Հագուենօ (Haguenau). — Անուանի վասն մշակութեան տորձի և հռաւղանի և վասն վարժարանին եւրոյ: Բն. 10,000:

Պիշհուիլլէր (Bischwiller). — Ունի գործարանս չուխայի և ազդի ազդի կերպասուց: Բն. 6,000:

Սաւերնօ (Saverne). — Մերձ ի համանուն ջուռ ի վերայն հռչակաւոր: Բն. 5,700:

Շելէշդատ (Schelestadt). — Ունի Իլլ, երբեմն ազատ քաղաք յորում կարծի հնարեալ արուեստ բանից գրախնամսակի, ունի անուանի գործարան մետղի Թերթից. Բն. 10,000:

Ուիսսեմպուրկ (Wissembourg). — Ունի Լաւգեյ (Lauter), քաղաք սահմանագլուխ. յամին 1793 և 1794 բազում պատերազմունք մղեցան ի նմա: Բնակիչք 9,000:

Սուլց-սուր-Ֆորէ (Soultz-sous-Forêts). — Ունուն վան հանգոյ տպի և ածխոյ: Բն. 2,000:

Նիդերբրոն (Niederbronn). — Ունի բժշկական ջերմուկս ուր գայ ամբոխ բազում: Բն. 3,000:

Ֆորթ-Լուի (Fort-Louis). — Գետոյ յեզր Հռենոսի յորում էին ամրոցք զոր ի սկզբան խռովութեանն կործանեցին Ասարիացիք, և յետ այնորիկ ոչ ևս կանգնեցան:



Գ· ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԳԱՒԱՌՔ


401· ԺԵ· **Ս**ԵՆ ՍՕՐԻՆ (Seine–Inférieure)· — Ի գաւառի սոս սպառի գետն և Թաւխի ի Մանչ· ման է վերին Նորմանդիոյ, զամենայն ազգ բերոց ունի վճռակս բաց ի դինւոյ· արմաւս, Հուալդն, վուշ, կանեփ, մարմանդ, արջառ, երիվար ընտիր, կով և պանիր, տաւձ և ինձոր վան օշարակի, ձուկն Ծովու և գետոց· անուանի են ձեռագործք նորա և վաճառականութիւն ընդ արտաքինս·

ՌՈՒԱՆ (Rouen, Ռադոմակոս)· — ԳԼ· Ջ· ի հարաւակողմն գաւառին առ եզր Սենոյ, 30 վարսախ



Ռուան

հեռի ի Բարիզոյ, յառաջն մայրաքաղաք Նորմանդիոյ· մի ի մարդաշատ և բարգաւած քաղաքաց Գաղղիոյ· ունի նաւահանգիստ ի վերայ Սենոյ յոր գան և նաւք մեծամեծք՝ վասն որոյ յայնոցիկ վաճառաշահութեան· Հանէն ասի ի վաճառ պտուղս, մրգ· ազի· յախճապակ, կտաւ, կերպաս, երկաթի կաղս· Երկաթի շահագոյն հաղորդի ընդ Բարիզոյ և ընդ Տիեբայ և ընդ Հաւրայ· Բազում են ի քաղաքի սոս գործատունք հեռնարուեստից և ի սահմանակից տանս և քաղաքացւոցս, վասն որոյ և Ճարտարութիւն նոցա Ռուանեան կոչի· Ի չինուածան նշանաւոր է մայր եկեղեցին գոթացի, որոյ են երկուստեք մեծ մի աշտարակք, այսինքն են Սէն–Ռոմէն երեսի վասն հին քանդակացն, և Գէորգ Անուանաղոյ յորում էր զանգակ մի մեծ, չանթաշար եղեալ յամս յայսմ սիկ և վերսին կանգնեալ· Եկեղեցին Սէնգ–Ուան (Տ· Ouen), որ էր ի համանուն վանսոյն հնագոյն քան զամենայն վանս Նորմանդիոյ, Ճարտարապետութիւն նորա գեղեցիկ և Ճարտարաշէն է գործ միջին դարու, նշանաւոր է բարձրութիւն նորա և պատուհանքն· Վաճառատեղի կատուց, անկիւնոց 650 հիւանդաց, Ժողովարան Հասարակաց որ մասն էր մենաստանին, Թատրոն Արհեստից, նոր կամարջի քաղաքին· Կայ ի Ռուան Ճեմարան համալսական, Գիշերոց բժշկութեան երկրորդական, լսարան աստուածբանութեան, գրատուն, սպարեզ բուսաբանութեան և մանկանց· Ի քաղաքի սոս Անգլիացիք ի



Մայր եկեղեցի Ռուանայ

հուր արիւն զբիտրդն Յոհաննա Արգեան։ Ասա ծնան Գոռնիլլեանք և Ֆոնդընէլ։ Բն. 100,000։

ՍԱ-ՍԷՒԷՐ (Saint-Sever)։ — Արուարձան մի քաղաքին յայն կոյս Սենայ։

Տ=ԱՐՆԷԹ=ԻԼ և Մ=Ր=Մ (Darnetal, Maromme)։ — Ասանք մերձաւորք Ռուանայ անուանիք ի Ճարտարութեան։ Բնակիչք առաջնոյն 6,000, երկրորդին 3,000։

ԷԼԲԵՈՒՖ (Elbeuf)։ — Ունի գործարանս նուրբ գործ գոց որպիսի է և Լուվիերայն, և ջուխայն, և չիք իրիւ զոցայն ազուռագոյն և մեծ գործարան ի գաղղիա։ Բն. 14,000։

402. ՏԻԷՊ (Dieppe)։ — Ի հիւսիսոյ Ռուանայ, քաղաք վաղեմի գեղեցկաչէն, շահաստան, նաւահանգիստ անուանի ի Մանչ. ասալ նաւերին ծովայուքն որ գոն զկուխնիա և ածին Ժանիս փղոց, վասն ոլոյ և ցարդ բազում ճարտարք են ի Տիէպ, որ գործեն զիպտակիեայս. ունի ջրմուղ մի և ալրիւրս. անուանի է խաղեսայս և նոր զբօսարանաց տեղիք, և բազանիքն ծովու յաճախեալ լեկոյ։ Բն. 18,000։

ԱՐՔ (Arques)։ — Ասա յաղթեայ Ենրիկոս Դ. դքսին Մայենոյ որ առաջնորդէր Դաշնակցացն։

ԷՕ (Eu)։ — Քաղաք փոքրիկ վաղեմի, ունի գեղեցիկ և անուտա մերձաւոր, Ժառանգաւորաց Թիւն առհմին Օռլէանայ։ Բն. 4,000։

403. ԼԸ ՀԱՒՐ (Le Havre)։ — Ցարևմտակողմն Ռուանայ յաջմէ Սենայ հուսկ ի բերան նորա, քաղաք ամուր, և վաճառաշատ յոյժ, երևելի է նաւահանգիստն ուստի նաւեն յամենաւոր նաւահանգիստս



ԼԸ ՀԱՒՐ

Եւրոպայ և Ամերիկոյ, նաւք նորա ամենին ջուխայ, կաւս, գլեարկ, արձանէզնս, գինի Շամբանեայ և Պուրկունեայ, ցից, ուսելիս, և այլն. չգենաւք նորա նաւեն ընդ Սեն ի Բարիզ. նշանաւոր են ի չէնսն կառուցմունք նորոյ Թաղին, խաղեսին, հրապարակ վենուց, այլոցն հանդերձ. երեք աւազանք են առ նաւահանգստին որ տանին 300 նաւս. — փարոսիսս հետ ի նաւահանգստեն ի հրուանգանին Հեվայ (Hève) են կանթեղակիր աշտարակք երիս։ Բնակիչք 30,000։

ԷՏՐԷԹ= (Étretat)։ — Գեղ անուանի վասն որսոյ ձկանն գաղտակրօրէց։ Բն. 1,600։

ՖԵԿԱՆ (Fécamp)։ — Ունի նաւահանգիստ ի Մանչ նշանաւոր է եկեղեցին հին Մինաստանին Բենեդիկտեանց։ Բն. 9,400։

404. ՊՈՒԼՊԷՔ (Bolbec)։ — Ցարևելս Հաւրայ, քաղաք փարթամ և շահաստան, ունի գործարանս բամբակի և ածխոյ զոր ի Ֆէքանայ հանեն. գործաւորքն գիշերեն ի մեռոսկայ գեօղս։ Բն. 10,000։

Լիլբոնն (Lillebonne)։ — Քաղաք վաղեմի, յոյսուամ գոան Թատրոն մի, բազանիք, անդրիք սլիձիք և մարմարիոնեայք, արձանագիրք, գրամք և այլ իշատակարանք Հռովմայեցւոց. ունի գործարանս ձեռակերտաց։ Բն. 4,000։

ՆՒՇԱՏԷՒԷԼ (Neufchâtel)։ — Ի վերայ Պէթիւնայ (Béthune), քաղաք փոքրիկ, անուանի է պանիրն որ ի միջաւուր գաշտավայրսն յորինի։ Բն. 4,000։

Օ=ՄԱԼ (Aumale)։ — Ասա ի մեռոսկ ուրեք վերաւորեցաւ Ենրիկոս Դ. ունի գործարանս ասուէ իրիք։ Բն. 2,000։


ՖՈՐԺ (Forges)։ — Հռչակեալ վասն հանքային ազբերացն։

ԻՎԸՏՈ (Yvetot)։ — Քաղաք անուանի վասն գործարանացն բամբակի կերպասուց։ Բն. 10,000։

405. ԺՕ. Դ ԱՒԼՎԱՏՈՍ (Calvados)։ — Ցանուն ազատագիտի որ հուսկ ի Մանչ, և ազբս աւրին զայս անուն ի հաւէ անտի ասրմինն Սպանիոյ զոր փիլիպպոս Բ առաքեր յԱնգղիա, և հարեալ ընդ

պարեհան խորտակեցաւ. մաճն է Նորմանական. ունի արմտիս առատ, պտուղս օշարակի, վուշ, կանեփ, ընդեղէն, կոգի և պանիր ամենից, ձի և արջառ բազմաթիւ, հաւ, էրէկ, ձուկն, գաղտակուղբ, արիեկա. և վաճառս գլխաւորի, ապրեցուցիչ, բրդեղինաց, չոր հացի, կաւառաց, և այլն:

ԳԱՆ (Caen). — Գ. Ր. առ Օռնայ (Orne) մերձ ի Տուվիլն 55 վարսախառ տարակաց ի բարիզայ, ի հնումն մայրաքաղաք սաորին Նորմանական. անուանի է վասն բարեկարգ շինուածեանն, մեծի վաճառականութեան, և իմաստուն ընկերութեանց. յորս նշանաւոր է Լսարան մանկացուածեանց և գպրոցեանց,



Մայր եկեղեցի Գանայ

լսարան երաւանց, վարժարանն, հասարակաց Ժողովքարան, գրատուն 40.000 մատենիւք, Ռեմպրան համալսական, սպարանք գաւազորեան, Ս. Պետրոս մայր եկեղեցին ամենայնէն ազգի ազգի ոճով գոմացի Յարմարութեան և հոյակապ յօրինուածով, արքունի պալատն, և զբօսարանք Ռեմպիւայ Թագուհւոյն. Լսա ծնան Մալերպ քերթողն (1555), Սըկուտ, Մալհիւերդը և Հիւե. Բն. 45.000:

Պեյեօ (Bayeux, Բայոկեա). — Լա գեառիլ Օռնայ. անուանի է հոյակապ մայր եկեղեցին և աւերակք գղեկի միոջ: Լսա ծնաւ ս՝Ալէն Շարթիէ: Բնակիք 10.000:

406· Ֆալէյզ (Falaise). — Լա գեառկին Ընդայ (Ante) ի բարերաբ գաշտի որ ունի մարմանդս և պրոսքաբեր ծառս: Լսա ծնաւ Գուլիէլմոս Ցաղթողն Նահապետ Բաղդաժընի տոհմի Թագաւորացն Անգղիացւոց: Տճաւալճառ սորա պիսպէ (Guibrai) ասացեալ յամենեան օգաստառի հռչակեալ է յոյժ: Բն. 10.000:

Լիզիէօ (Lisieux, Լիկսովիան). — Քաղաք հին կառուցեալ ի միջի սիզաւէտ մարգաց ի գետահատ. ծնաւն Որվեքայ (Orbec) և Դուբայ (Touques). ունի կուսս սպիտակ: Բն. 12.400:

Բօն-Լիվեք (Pont-l'Évêque). — Ա յս ինքն կամուրջ Եպիսկոպոսի. ունի գործարանս կաւաւոց: Բն. 2.500:

Հոնֆլէօր (Honfleur). — Ցահկում Սենայ հուսի ի բերան նորա որ ի Մանշ. ունի նաւահանգիստ գիսան և յամախեալ: Բն. 10.000:

Վիր (Vire). — Լա համանուն վտակին, ունի գործարանս հասարակ կտաւի. յատուկ փիլիպպոսի Օգոստեայ դղեակ մի ևեթ եր քաղաքս այս գեղեցիկ: Բն. 9.000:

407· Ժ. Ի. Մ ԱՆ Շ (Manche). — Ցանուանի ծովն որ պատէ զնովաս յամենուստ բաց ի հիւսիսոյ. մաճն սաորին Նորմանական: Երիկրն բերէ ցորեան, կանեփ, վուշ, սեզ յուռեթի, լեմոն, տորան, ընդեղէն քաղցր. ձի ընտիր, եզն, ոչխար, հաւ. հրաներա, արգելեան քար, գեանձաւս, հող վառելի. ունի և հիւթ նաւակաշինութեան, անօթս ձկնորսութեան և նաւարկութեան առ ծովեզերբք, կտաւ, ասղնագործք, բրւրեղ:

Սէն-Լոճ (Saint-Lô, Պրիովէրա կամ քաղաք Ս. Լաւրենտ). — Ի վերայ Վիրայ. անուանիք ի շինուածս սորա են մայր եկեղեցին գոմացի, Ռոխաֆորտա և գեղեցիկ, Ս. Խաչ որ լատգոյն է ի շինուածս սաքսոնացի Յարատարագեսութեան. ունի գործարանս Ժապաւենից, դանակի, նուրբ ասուի: Բն. 10.000:

Ավրանշ (Avranches). — Նշանաւոր է մայր եկեղեցի սորա հնաչէն: Բն. 3.000:

Կրանվիլ (Granville). — Ցեզր Մանչայ, բազում են ծովային վաճառք նորա, և կամուրջք ի սէտս գալեթականաց և ձկնորսաց, և մեծերանոցք վաճառականաց, նաւահանգիստ նորա կառուցեալ ի 1784 բարւոք է և անբոյժ. անուանի է օրսորդութեան գաղտակիրցն Գանգալ անուանելոց: Բն. 7.500:

Մոռ-Սէն-Միշէլ, այս է լեառն Ս. Միքայելի. — Ի հնումն ամենասան աբբայից և ապա ամրոց և բանտ կարգեալ. մաճն մի սորա հրկէզ եղև յամին 1834:


408· Շէրպուրկ (Cherbourg, Կարլեպոլն). — Ի հիւսիսակողմն գաւառին յատուկս Մանչայ. քաղաք ամուր և կարեւոր սակս վինուորական նաւահանգստին յորում կազմ կան մինչ 50 նաւք մեծամեծք, ուր ևն Թումբ ի ծովուն 1933 յոգնաչափ երկայն. իսկ ի նաւահանգստի նորա յատուկ անօթ ի՝ Լուգովիկոսի միւնէ. յայժմ կառուցանեն պետանացուս ընտուածք. և ի սմա գործոց նաւարկութեան, ընկերութիւն ձեմական, մանկան, գրատուն հասարակաց և մատենագրան ծովային արուեստից: Բն. 23.000:

Գուռնանս (Coutances, Կոստանդիա). — Մերձ ի Սուլ. մայր եկեղեցի նորա գոմացի անուանի է վասն տարաղոս շինուածոյն: Բն. 10.000:

Մորթէն (Mortain). — Ունի գործարանս անօթոց խեցւոյ և կճոյ: Բն. 3.000:

Վալուրնէ (Valognes). — Ի սմա բազում արուեստարանք ևն ձեռակերտից: Բն. 7.000:

409· ԺԸ. Է Օ Ռ (Eure). — Ընդ սա անցանէ Էօռ գետ և ի սահմանս նորա ընթանան Սէն և Ռիլլ (Rille). մաճն է Նորմանական, և երկիր գաշտային. բերէ ցորեան և մրգոյն. ունի երկիմբ և սպա-



Մայր եկեղեցի Լիմոժոյ

Ցորեն, երէկ և ձուկն, երկաթ, կէտ, ջերմուկ, ջուխայ նուրբ, կաղմիր, կտաւ, ասպնեզօրծեալս, գլխարկ, թել երկաթէ, և այլն։

ԷՒՐԷՕ (Évreux, Մեգիոլանում Եպրոիկեան)։ — ԳԼ։ Ր։ ի վերայ Իթռնայ (Iton)։ յորում են ձեռագործք լինչ հռովմէական թատեր և ջրանցից, նշանաւոր է մայր եկեղեցին կառուցեալ ԱՅգեղացւոց ի 1417 ըստ գոթացի և հռովմէական ոճոյ, ապարանք պեսքոպոսին և վարժարանն։ ունի գործարանս ստուէղնոց և խոշոր կերպասուց։ — Ազնիւեր քաղաքիս է մեծահռչակ ամրոցն Նաւառա (Navarre), որ էր ղեքսեցի Պուրպոնայ։ Բն։ 13,000։

410։ ԱՆԴԼԻ (Andelys)։ — Ունի գործարանս չուխայի և կաղմիրայ։ ի շրջանակի քաղաքիս է ձուլարանն պղնձոյ Ռոմիլլի (Romilly) անուանի ընդ ամենայն Գաղղիա։ Ի քաղաքի աստ ծնաւ Բուաէն նկարիչ և Պրիւնէ որ կառոյցն զասրերիրեայ անցս Դամիզոյ։ Բնակիչք 6,000։ — Աստ ի Սէն գետոյ օրսան ղեզէր ձուկն, որոյ թեփովք գործեն զուտս մարգարիտս։

ՊԷՌՆԷ (Bernay)։ — Փաղաքք վաղեմի ի վերայ Շարանտոնոյ (Charentonne)։ Բն։ 8,000։

ԼՈՒՎՐԷ (Louviers)։ — Որոյ գործատունք չուխայի անուանի են քան զամենայն գործատունս Գաղղիոյ։ Բն։ 12,000։

ԲՈՒՐ-ՕՏԷՄԷՐ (Pont-Audemer)։ — Մերձ ի բերան Սէնայ առ Ռիւլլ։ ունի գործանոցս կաւի և խալախս։ Բն։ 6,000։


ԻՒՐ (Ivry)։ — Ազան, յորում յայտնեցաւ մեծ կանգնեցայ Ենրիկոս Դ ի վերայ Պալանիացւոց եկեղ. յօդնութիւն Թշնամեայ իւրոց յամին 1590։

Դ։ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԳԱՒԱՌԻ

411։ ԱՒ։ ԷՒՕՒ-ԵՒ-ԼՈՒԱՐ (Eure-et-Loir)։ — Ման Օռլէանեայ նահանգի։ դաշտային և բարերեր երկիր։ ունի ցորեան առատ և ընտիր, արմտիս և մրգոյն, վուշ, կանեփ, ընդեղէնս, երկաթ, կէտ յատակաց, կաւ, փլմնել, կաւոս ազգի ազգի։ — Ի գաւառի աստ գտանին հնութիւնք Դրուիդաց։

ՇԱՐԴՐԻՆ (Chartres, կառնուտարում)։ — ԳԼ։ Ր։ ի միջակի վիճակին ի վերայ լերին կառուցեալ, առ որոյ ստորոտովք գնայ Լօռ. գետ։ սա էր մայրաքաղաք Պոատայ։ անուանի է յոյժ մայր եկեղեցին գոթացի ճարտարութեամբ գեղեցկաշէն և անաղաւաղ, մանաւանդ զանգակատունն։ Ընդ աստիճանօք քաղաքիս տարածին հայաւէտս գաղտք Պոատայ։ Հայրենիք է քաղաքս քերդողին Ռէնիէ, նկարչայ և Վոլնեայ Հաղթաբնոյ։ Բնակիչք 20,000։

412։ ՄԱՆԹԷՆՈՆ (Maintenon)։ — Առ Լօռ. գետով անուանի վան գղեկին և ջրանցիցն որոյ անկատար ձեայ չինութիւն։ — Մերձ ի սա ի գաշտի ուրեք կան քիւշատակարանք Դրուիդաց՝ որք անգանօր կարկանդակս քարինս անուանեն։ Բն։ 1,800։



Մայր եկեղեցի Շարտրայ

ՇԱՏՈՒՏՕՆ (Châteaudun). — Ցորեաւ՝ի բարձր ժայռի կառուցեալ կայ բերդն զոր կանգնեաց կոմսն Տիւնուայ։ Բն. 8,000։

ՏՐԷՕ (Dreux). — Առ Պլէզայ (Blaise), ունի գործարանս կաւոյ և նրբաթել սաւառ։ Բն. 7,000։ — Առ երի քաղաքիս յամին 1562 պատերազմեաց մեծ հաւուն ուղղափառք և նորադաւանք ընդ միմեանս, և գերեզման զօրաւորք երկոցուն ևս կողմանց։

ԱՒԷ (Auet). — Գեղ փոքրիկ ուր կառոյց գղեակ մի ներկիսս Բ. վասն Դալանայ հոմանուայ իւրոյ, որ և անդ մեռաւ ի 1566. այժմ սակաւ ինչ մնացուածք նորին երևին։

ՆՈԳԱՆ-ԼԷ-ՌՈՏՐՈՒ (Nogent-le-Rotrou). — Կառուցեալ ի միջի զուարճալի մարմանդից ոստիկանէ՝ի Հիւիլնայ (Huisne), ունի գործարանս նրբաթել սաւառ և խաբզան։ Բն. 8,000։

413. Ի-Օ ՕՒՆ Ն Ը (Orne). — Յանուն գետոյ որ բղխէ՝ի գաւառիս յայսմիկ. մասն Կողմանայ և Մենոյ. երկիր զնասագոյն և գիշին. ունի յատուկ արտս և ձի ընտիր նորմանեան, արջառ մեծ, երէ, ընդեղէն, վուշ, կանեփ, բանջար, գեանասնոյս, ինձորոյն, երկաթ, բիւրեղ, և ասղնեգործ, կաւ, ժայռ. ՀԷն, յախճապակ, հալոցք երկաթի, պղղավասիկ, բեւեռ, Թէլ, և այլն։

ԱԼԱՆՍՈՆ (Alençon, Ալէնսոնի)։ — Գլխաւոր քաղաք առ ամն Սարթայ, կառուցեալ վայելուչ գրիւք յարգաւանգահող գաղղի. ունի գործառուն կաւոյ և ասղնեգործս։ Ի սահմանս նորս կան քարաւհաք վիմաց որ յղկեալ վայելուչ յոյժ երևին։ Բնակիչք իբր 6,000։

ՍԷՋ (Séez, Սագէրայ քաղաք). — Ի հիւսիսի Ալանսոնայ։ Բն. 6,000։

ԱՐՃԱՆԹԱՆ (Argentan). — Ունի ասղնեգործ անուանի. երեք վարսաւոք հեռի են ասոնի արգունի հովուսվանցն Տիւ-Ռէնայ։ Բն. 7,000։

ՏՈՄՖՐՈՆ (Domfront). — Ի վերայ Վարէնայ (Varenne). քաղաքմ պաշարմանց Ժոճհալէնայց քաղաքս։ Բն. 3,000։

ՄՈՐԹԱՆԵԸ (Mortagne). — Ուխ ինչ կալի հեռի է ի սմանէ մեծահռչակ մինուասանն Պրաւ։ Բն. 6,000։

ԷՒԼԸ (L'Aigle). — Որ Արժուէլ Թարգմանի, յիւղ Ռիշլայ, ունի գործարանս ասպան և գնասպան։ Բնակիչք 6,000։

414. ԻԱ. Ս ԱՐ Թ (Sarthe). — Անուանակիր գետոյն որ անցանէ ընդ նա, որպէս և Լուառ՝ի հարաւ. ևս սորին ընդհանայ. մասն է Մենոյ և Անժուի. դաշտք որս բարեբերս և այգիս մեծամեծս ունի վիճակս այս, անտառս և ջրաբեր հովիտս և անբեր աւազուտս առ Սարթ, Լուառ, Պրէյ և Հէրիկը (Braye, Huisne) գետոցք, մարմանգք սակաւք են՝ի հնոս այլ արջառք չատ. ունի պատուս օշարակի, մամ ապխտակ, ցորեան, երկաթ, ածուխ, կաւ, քարինս։

ԼԸ-ՄԱՆ (Le-mans, կէնոմանի)։ — Գլխաւոր քաղաք՝ի վերայ Սարթայ, ի հնոսն մայրաքաղաք Մենոյ, ունի գործարանս խարբալի, և վաճառ մոմոյ և հաւուց։ Բն. 28,000։

ԼԸ-ՖԼԷՇԸ (La Flèche). — Առ Լուառայ. ևս ի նմա գպրոց զինուորական՝ի կրթութիւն որգաւոց անանկ ապահոյ և որոց իբրև յորիքեարիւրոց։ Են. բիկոս Դ. կառոյց զսա, և կարգեսիոս ուսաւ՝ի նմա։ Բն. 7,000։

ՄԱՄԷՐ (Mamers, Մամերսա)։ — Մերձ յԱլանսոն։ Բն. 6,000։

ՍԷՆ-ԳԱԼԷ (Saint-Calais). — Ի վերայ Անիլլոյ (Anille)։ Բն. 4,000։

413. ԻՒ. Մ Ե Յ Ն (Mayenne). — Անուանակից գետոյն որ անցանէ ընդ սա, մասն Մենոյ և Անժուի, արգաւանգահող է երկիրն, ունի ցորեան սահաւ, հաճար ածիւս, գարի, վարսակ, կանեփ, վուշ, գեասս, ոչխար մերինոսի, մեղս, լեմնն, երկաթ, արգելեանս քար, կաւոյ կռելեանս Լաւալ և Մէյէն, Թաւիլեայ, գաբելոց, Թուղթ։

ԼԱՒԱԼ (Laval). — Գլխաւոր քաղաք՝ի վերայ Մէյէնայ. ունի փողոց մի գեղեցիկ՝ի հանդիպոյ կամերջին և ապարանից պետին. անդ է և հին ամրոցն զբսից Լաւալայ՝ որ այժմս փոխակ է՝ի բանտ։ Գործարանք Լաւալ կաւոյ բազում են՝ի նմա։ Բն. 20,000։

ՇԱՏՈ-կՈՆԹԻԷ (Château-Gontier). — Ի վերայ Մէյէնայ, ունի գործարանս և Թաւիլս կաւոյ։ Բնակիչք 7,000։

ՄԵՅԷՆ (Mayenne). — Ի վերայ համանուն գետոյն, երբեմն քաղաք քաջամարտ, զոր յամին 1424 առին Անգղիացիք յետ եռամսեայ պաշարման՝ի նմա և հին գղեակ գբսից քաղաքին. ունի գործարանս կաւոյ։ Բն. 10,000։

731. Առ ամառս Մէքլեմպուրկայ յորում կրկին մեծ դքսուհիք են Շուէրնի և Ագրևլից, են Բոմերա նիա, Պրանտէպուրկ, Հանովր, Հոլշտայն և Պալդհա կանն. երկոցուն ևս գաւառացն դաշտային է երկիր, կաւուտ և աւազուտառատ. ունի լիճս բազումս, զոր օրինակ Շուէրնի, Բլաւէն և Մոէրից. գետ նաւարկելի՝ ի մէջ նաշխարհին վառնով ևեթ է, Էլպա հոսէ ի սահմանս Հանովայ և գքսուհեանցս ընդ որ գընան և դնելով և Բէքնից. օդն մառախլամած է և շըրջապէս, բայց ոչինչ չիապէ ցորենոյ և չոգեմսի և վշոյ և ծխախոտոյ նորա. ընդ արգասաբեր գաւառս հիւսիսային գերմանիոյ համարեալ է Մէքլենպուրկ, մշա կութիւն և խաշնարդմանութիւն բարգաւաճեն ի նմա. անուանի են երիվարք նորա մեծամեծք ընդ ամենայն Եւրոպա. և յարգաւեաց գործարանացն ընծայի պատուական կաւճ՝ի վաճառականութիւն ընդ ծով քաղաքքն Ռոշտոք և Վիսմար նշանաւորք են:

732. Ժողովուրդն յոպտոբիսեան ցեղէ վանգաց սերեալ և գերմանացի բարբառ ընտելացեալ, խօսին զատարինն գերմանական բարբառ և առ հասարակ լուծելականք են. գլխաւորք ի կրթարանս նոցա են հայմայտարանն Ռոշտոքայ և ին վարժարանք: Մի ևեթ առեան է երկոցունց տերութեանցս հասատեալ ի վաղ ժամանակաց՝ նուիրակաք ի քաղաքաց. վիճակիք ցարդ ևս ի տարութեան են ատագաց: Աքքունի առ՝ նոյն սերեալ է ուղղակի յԱ Բրիպոլսեաց որ վերջին եկաց ի Թադաւորս Պոտոբրսեանց և առաջին իշխան հարկատու Մէքլեմպուրկայ ի 1167 ընկալեալ զքրիստոնէական հաւատս. առ յաջորդաք նորա բաժանեցաւ աշխարհն պէսպէս բաժանմամբ և այժմ յերկուս տրտնեալ է անգամին ի 1701 ամէն. ի ըստ պատկ առ՝ին տերութենէն ըստ պայմանին եղելոյ ի 1442, մնայ անցանել ի տուն Պրանտէպուրկայ:

Ա. ՄԷՔԼԵՄՊՈՒՐԿ ՇՈՒԷՐԻՆ

733. Տարածութիւն 633 փարսախ քառակուսի. բն. 536,000. բոլանգակէ սա զքսուհիանս Շուէրինայ և Պլեադրովայ և զնշանաւորիսնս Ռոշտոքայ և Վիսմարայ: Հաւք պետութեանն են իբր 12 միլիոն ֆր. Նոյնքան և ծախք. Զօրք 3,560: Նաւք վաճառաբերք ընդ բնաւ 760:

ՇՈՒԷՐԻՆ կամ ՇՈՒԵՐՈՆ (Schwérin). — Մայրաքաղաք, կաուցեալ մասամբ յակառնս լճին Շուէրինայ և մասամբ ի կղզւոջ միւսմ նորա. ունի անուանի Թանգարան պատկերաց, մեծ գրնակ գքսի, հոյակապ մայր եկեղեցի, յիսմարանոց, ուսումնարան բժշկութեան անանց: բն. 18,000:

ԼՈՒՏՈՒԻԳՍ–ԼՈՒՏՈՒ կամ ԼՈՒՏՎԻԳՍՈՒՏ (Ludwigs–Lust). — Քաղաք փոքրիկ կառուցեալ իբր 80 տարի յառաջ՝ի մէջ պարտէզաց անուանաց և գաղատանաց որ սերեցն զնշանակութիւն նորա, վասն որոյ և գոքսն առա նասի: բն. 6,000: — Նշանաւոր է Թանգարանն Սլաւեան հնութեանց, զոր ժողովեցին յատեղական առաջարին Հաբեպոյ:

ՌՈՇՏՈՔ կամ ՌՈՍՏՈՔ (Rostock). — ԵՒս վառնով գետով որ գործէ ստամոքր ծոց, բազմամարդ քան զամենայն քաղաքս Մէքլենպուրկայ և անուանի վաճառաշահութեամբ և արտաքսութեամբ. ունի զնաւահանգիստ վառնեմիւնտէ ի ծոցին վառնովայ որ յաջոզէ զերծեալն ընդ հեռաւոր քաղաքս: Ասա ծնաւ Պլիւխէր զօրավար որ մարեաւան ի Ուատերլոս ընդ Նաբոլէոնի, և անդրէն նորին կանդնեցաւ ի համանուն հրապարակին. իսկ յեկեղեցւոջն Ս. Մարիամ կայ գերեզման Ուկոսի Գրոտիոսի մեծի բանասերի. ի համալսարանին հիմնեալ ի 1419 կայ գրատուն 80,000 մատենից, և աշակերտի ի նմա 150 ուսանողք: բն. 22,000:

ՎԻՍՄԱՐ (Wismar). — Երկրորդ նաւահանգիստ Մէքլենպուրկայ, սա վճռով դաշնագրութեանն Վեզֆալիոյ տուաւ Սուէտացւ յորմէ միւսանգամ գնաց գրկեն ի 1803: բն. 12,000:

Տոդեբան (Dobberan). — Փարախաւ հեռի ի պաղգիականէն, առան անուանի վասն բաղանեացն ծովու ի գնդեցիկ տեղւոջ զրկեն ունելով: բն. 2,400:

ԿՒՍՏՐՈՎ (Güstrow). — Երբեմն աթոռ անուանեալ կը գքսին: բն. 9,000:

Ա՛Լ քաղաքք Շուէրինայ, Բարչիմ. բն. 6,000: — Վարէն 5,000: — Կրապով 3,500: — Սիւզ 2,300 ունի ազատանս, և այլն:

Բ. ՄԻՒԼԵՄՊՈՒՐԿ ՕԴԲԵԼԻՑ կամ ՇԴԲԵԼԻՑ


734. Տարածութիւն 145 փարսախ քառ. և իբր 98,000 բնակիչք։

ՍԴՐԵԼԻՑ կամ ՆՈՐ-ՇԴՐԵԼԻՑ (Neu-Strelitz). — Մայրաքաղաք և իշխանանիստ կառուցեալ աստղաձև ուրվանկիւնի յամին 1740 յափունս լճացն Տիրքայ և Կլանպէքայ, ի պալատան գքսին կան հատաքածոյ հնութեանց և արգասեաց արուեստից. ունի մատեանդարան մի 50,000 մասեներէք։ Բն. 13,000։ — Մասն համարի Նորա և Հինն Սդրելից։

ՆՈՐ-ՊՐԱՆԴԷՆՊՈՒՐԿ (Neu-Brandebourg). — Ա. Նուանի վան Ճարտարութեան և ձիւնթայից հանդիսի։ Բն. 8,000։

ՖՐԻՏԼԱՆԴ (Fridland). — Ունի ծխախոտ։ Բնակիչք 4,500։





Դ. ՀԱՆՈՎԷՐ

ԿԱՄ

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ՀԱՆՈՎՐԱՅ

Տարածութիւն 1,930 *փարասախ* □. *Բնակիչք* 1,800,000:

735· Տէրութիւնս այս կանգնեցաւ յամին 1814 միւռթեամբ բաղում զաւառաց· որպիսիք են հին կայսրընտրութիւնն Պրունզուիք, Լիւնեպուրգ և արև. ելեան Փրիզ, Հիլտեշհայմ, այլովք հանդերձ· սահմանակից աշխարհք նմին են Հոլշտայն, Մէքլենպուրգ, Բրունսուա, Պրունզուիք, Հես-Կայսրընտր, Հոլանտա, Օլտենպուրգ և Տոյնը Հիւսիսոյ: Տարածութիւն երկրին է 1,930 փարասխ քառ., ղոր Պրունզուիքեր կուս բաժանեն, ի հիւսիսային մասն՝ ընդարձակ և դաշտային, և ի հարաւային լեռնային և ի սմա են Հարց Լերինք յորս դուն բովք բաղուածք· և արուեստաւորաց անդ Ճարտարութիւն մեծ է· ամ ամ հանէն 4 կամ 5 լիար ոսկւոյ, 25,000 լիար արծաթոյ, 80,000 կենդիներ ելրամեղ, 100,000 կենդիներ կապար և քարմարգանկ: Գլխաւոր գետք հաւարկելիք ի Հանովրեր են Իլմա՝ յոր մտանէ Լիմհնաւ· Վէզեր բղխեալ ի խառնիդոց Վէրրայ և Ֆուլդայ, յոր թափի Ասէր հանդերձ Լէյնաւ· Եմս որ գործէ զծոյն Տոլարայ· յարևելեան Փրիզ և ի Պրեմ կան ջաղարթք, և ի ծովախուռն ամբարտակք ի խորտակել զզբուրթիւն ծովուն: Երկիրն քաջ մշակեալ բերրի է ի սահմանս Հարցայ և յեղերս գետոցն և ծովուն, այլ մեծաւ մասամբն աւազուտ է և խոպան մանաւանդ ի Լիւնեպուրգ, ուր անուանի են գառնիքն հաչագեղս ասացեալ և մեղրք, յորմէ չահավաճառ մեծ է բնակչացն· կան և ջրերջք ի կոմսին կողմանս և հոզակոչոյք վառելի: Բերս ունի ցորենոյ, վերց· չոզդամի, և այլն· արջառ և երիվար ընթեր ի Լիւնեպուրգ, ի Հոյա, յարևելեան Փրիզ, և այլն:

736· ԺՈՂՈՎՈՒՐԴ· — *Ժողովուրդ* Հանովրայ իբր 1,800,000· Աւաջանացիք են ազգաւ, սակաւուք հանդերձ ի Փրիզոնաց և ի Վանդաց· քաղաքացիք խասին զբարձր գերմանացի· չինականք զտորինն· լուծերականք են կրծիւք, բայց միայն 215,000 կաթուղիկոսաք են ի նոսա, 12,000 հրեայք, և իբր 90,000 կալվինականք· Ճարտարութիւն և վաճառականութիւն Հանովերայ չև եա ի քաջ բարգաւաճել· Հասարակաց արհեստ է ոստայնանկութիւն և վառտակ բովուց· Ձուսուցիական մասին ունի Հանովեր զանուանի համալսարանն Կէօդինկենայ, վար

ժարանա ուսուցչաց. 20 գպրոցս բարձր ուսմանց, և այլն։

737. ՎԱՐՁՈՒԹԻՒՆ. — Աբբայական տունն Հաննովերայ սերեալ է Լիւներկոսէ Ադէձեն կոչեցեալ որ էր գոքս Պաւիերայ և Սաքսոնիոյ և նահապետ տունը նոցա մինչև ցայսօր, մեռեալ ի 1198. առ յաջորդեաց սորա բաղում փոփոխմանէք և բաժանմանէք եղեն ի տէրութեանն, մինչև ի Ֆ. Ջ. գարս յերկուս ամիրութիւնս ի Պրունզուիկ և ի Պրունզուիկ Վոլֆենպիւտդէլ որ այժմ մասն է Պրունզուիկայ. ի 1692 առաջինն եղև կայսրութիւր և ի 1714 ի նմանէ եկաց Թագաւոր Ջորջ Դ. յորմէ և յաջորդեաց նորա, և կայսրութիւնը կամ Թագաւորը Հաննովերայ մինչև ի 1837. յորում ամի մեռաւ Գուլիելմոս Դ և գոքան Գուիլիելմոսայ Թագաւորեաց ի Հաննովեր. առ Կաթոլիկներէ Գաղղիացիք սերեցին Հաննովերայ: Միասեռական է տէրութիւնն, այլ ունի առեանս պատուհիկ և խորհրդարան պետութեան: Թիւ զբաց Հաննովերայ իբր 22,000, էր յամին 1848: Հաւք իբր 20 միլիոն ֆր. ծախք՝ սուղ ինչ պակաս. և պարտք առաւել քան 270 միլիոն։

738. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆ. — Ի վեց գաւառս կամ ի կուսակալութիւնս բաժանի Հաննովեր (Landdrosteien), որոց կուսակալք կոչին Տրոսարդ (Drossart). և յոսոկականութիւնն մի Բոլուց երկրին կամ Գլաւշթալայ. և են այսոքիկ գաւառքն և բնակիչք նոցա ըստ մարդահաւի 1848 ամին (յուլիս ամսեան)։

Գաւառք	Տար. Մղ. □.	Բնակիչք
Ա. Հաննովեր	1,760	340,000
Բ. Հիլտեսայմ	1,294	360,000
Գ. Լիւնեպուրկ	3,262	327,000
Դ. Շթատ	1,966	266,000
Ե. Օլնապրիւք	1,822	258,000
Զ. Աւրիխ	840	175,000
Է. Գլաւշթալ	184	34,000
	11,128	1,760,000

739. Ա. ՀԱՆՆՈՎԵՐ. Յորում

ՀԱՆՆՈՎԵՐ կամ ՀԱՆՈՎԸՐ (Hanovre). — Մայրաքաղաք բարեշէն յատազուտ գաւառի միւռ՝ ի խառնուրդս գետոյն Ինն և Լայն՝ (Ihn, Leine) որ հնաբերելի է ասասնոյ. շինուածք անուանիք ի սմա են արքունի պալատն, և պալատն Ռէյմպրիհտ, խաղասրահ, վենուարան, մատենագարան, և այլն. ի հրապարակի մատենագարանին կայ արձան Լայպնիցայ և արձան յիշատակաց Ռազելրւոյ. Ճակատամարտն կոթող 162 ոտնաչափ բարձրութեամբ. անուանի են կրճեպուրքն և մարգարէրեան տունք, որպէս, լիճկէն, գպրոց վիրաբուժութեան և բժշկութեան անանոյց, արուեստարան, վարժարան վենուրութեան. և յարուեստս անուանի են գործածք ոսկւոյ և արծաթի: Ասո ծնաւ աստղաբաշիճն Հերշել ի 1738: Բն. 42,000. — Ի սահմանս սորա կան պալատք գլուխանաց Մոն–Պրիլյան (Mont–Brillant) և Հերբենհաւզէն՝ յորում նշանաւոր են գարաստանք նարդեն ջինեաց և մատաղատունկք ծառոց և շուրջանն որ ոտնաչափս 185 բարձրացուածէ գլուխ: Բաղում էր կաճուռեաց կենդրոն է Հաննովէր։

Համելն (Hameln). — Ի վերայ Վէզերայ, ունի մեծ արգելանոց բանագատ գործաւորաց: Բն. 6,000։

Սալցհեմենտորֆ (Saltzhemendorf). — Ունի աղա հանս: Բն. 1,000։

740. Բ. ՀԻԼՏԵՀԵԱՅՄ. Յորում

ՀԻԼՏԵՀԵԱՅՄ կամ ՀԻԼՏԵՀԵՍԻՄ (Hildesheim). — Գլխաւոր քաղաքն հին եպիսկոպոսութեան, նշանաւոր է եկեղեցի նորա յորում կայ և գրչեալ մի նախնի Աւետարանաց Խրիստոսէլէ ասացեալ. ունի կրճարան խլից – հանքից, յիմարանոց, վաճառս կատեաց, և այլն: Բն. 18,000։

741. ԿՈՒԴԻՆԳԵՆ կամ ԿԷՕԹԻՆԳԷՆ (Goettingen). — Քաղաք հին ի գեղեցիկ դաշտի առ Լայնայ. անուանի է համալսարան նորա հիմնեալ ի 1734 ի Գէորգեայ Բ կայսրեսարէ, երբեմն լիրաւազանական և ի պատմական ուսմանս առաւելն ի բոլոր Գերմանիա. 900 ուսանողք են նորա. մատենագարան նորա բաբէ կարգ ունի ընծիր մատեանս 300,000 տպագիրս և 5,000 ձեռագիրք, ունի և հաւաքածոյս ուսումնական նիւթոց: Դիտարանն, պարտէզն տնկաբանութեան, մուսէում, Թանգարան բնական պատմութեան Պրոֆեսիորսայ՝ կարեւորք են վասն ուսուցչաց, ընծերգաստան օրագրաց, ընկերութիւնն արքունի գիտութեանց՝ զոր կարգեաց Հալլէր ի 1751՝ հրատարակէ զգեստարան և զուսումնական ծանօթութիւնս կէօթինկէնայ: Ի չէնս նշանաւոր են մատենագարանն, դիտանոցն, անկեղծոցն կանանց, տպարանք քաղուածարերն, տուն անդամահատութեան, և հոյակապ համալսարանն. է ի քաղաքիս և վարժարան մի, և գպրոց բժշկութեան անանոյց, և գպրոց արուեստից: Վաճառականութիւնն և Ճարտարութիւն քաղաքիս կարի բազմաւաճ են: Բն. 14,000։

Մյունդեն (Münden). — Քաղաք վաճառաշէն և անուանի ի Ճարտարութեան. նստեալ ի խառնուրդս Ֆուլդայ և Վերրայ ի գեղեցկագիր տեղւոջ: Բնակիչք 5,000։

Գոսլար (Goslar). — Յոռոմ Հարեայ, քաղաք ամուր երբեմն ազատ և կայսերանիստ. ունի հնութիւնս ինչ միջին գարու և բուռ երկաթոյ, պղնձոյ և արծաթոյ: Բն. 8,000։

Օսթերոդ (Osterode). — Ձեռագործք սորա ասուի, բամպակի կերպասուց երեսիլն են ի տէրութեան Հանովերայ: Ունի մեծ հաճարանոց ցորենոյ ի պէտս գործաւորացն Հարցայ՝ առ որոյ սուգուտուիլ կայ: Բն. 5,500։

742. Գ. ԼԻՒՆԵԲՈՒՐԿ.

ԼԻՒՆԵԲՈՒՐԿ (Luneburg). — Գ. Ք. առ Լյունեաւայ, ի խոպան գաշտի. ունի վարժարան ազնուականաց (Ritterakademie), և մեծ աղբիւր աղի, յորմէ շահ մեծ է պետութեան: Բն. 14,000։

Ցելլէ կամ Սելլ (Zelle, Selle). — Առ Ալլերայ. աճառ տաւնի բանագատ գործաւորաց: Բն. 12,000։ Առաջ սկսեալ խոպանել Լիւնեպուրկայ ձգի 17 վարսահ յերկայնութիւն մինչև ի Լիւնեպուրկ։

743· Դ· ՇԴԱՏ·

ՇԴԱՏ (Stade)· — Քաղաք ամուր· Բն· 6,000· Հաբերդություն (Haarbourg) 5,000· Երկոքին ևս ի բե-րան Էլպայ անուանի ի փոխանցիկ վաճառականու-թեան· — Ընդհակ բերանոյն Էլպայ և Վէզերայ ան-կանի հին դքսութիւնն Պրեմայ, երկիրը տափարակ որ ունի հողակոյտս վառելիս·

744· Ե· ՕՋՆԱԳՐՈՒԿ·

ՕՋՆԱԳՐՈՒԿ (Osnabrück)· — Գլ· Ք· Եպիս-կոպոսանիստ· Երբեմն մանր էր շրջանակին Վեսգ-ֆալիոյ· ունի գործարանս կտաւուց· ի հաստատուց Ժողովարանին կինգտաւ դաշնադրութիւն Վեսգֆա-լիոյ ի 1648· Բն· 14,000·

745· Զ· ԱՒՐԻԽ·

ԱՒՐԻԽ (Aurich)· — Գլ· Ք· ունի լիկէոն, և վաճառս երկիրացս· Բն· 4,000·

ԷՄՏԷՆ (Emden)· — Ի Ֆրիզ արևելեան, յերկիրը մերում և գնաւոյն նման Հոլանտայ· ի վաճառա-կանութեան առաջին քաղաք է սա ի Հանովերը, զի ունի նաւահանգիստ յինս գՏոլաբր· բայց ոչ որպէս զառաջինն բարգաւաճ· կայ ի քաղաքի աստ և դարտց նաւարկութեան· Բն· 14,000·

ՆՈՐԷՆ (Norden)· — Ունի նաւահանգիստ և մեծ բանոցս փայտի· Բն· 6,000·

ԼԷՐ (Leer)· — Անուանի է և սորա վաճառակա-նութիւնն ի ծովս և մեծ բանոցքն· Բն· 7,000·

ՊԱՊԷՆԲՈՒՐԳ (Papenbourg)· — Ունի և սա մեծ բանոցս, և հող վառելի ի մերում դաշտի· Բնակ-իչք 4,000·

746· Ե· ԳԼԱՒՍԹԱԼ կամ ՈՍՏՈՒԱՆՈՒԹԻՒՆ ԼՈՒՆԱՆՑԻՒՆ (Clausthal)· — Որ է վիճակ լեռնային Հարց լերանց, ուր բազում բուք են·

ԳԼԱՒՍԹԱԼ (Clausthal)· — Գլ· Ք· ունի վար-ժարան գիտութեան բուժուց և անուանաց, գրամա-տուն, և Հարտարարքին ջրմուղ վան բուղուցն Դորո-թեա առաքինեաց· Բն· 9,000·

ԱՆԴՐԷԱՍԲԵՐԳ և ԱԼԹԷՆԱՆ (Andreasberg, Altenau)· — Ունին բուս արծաթոյ և կապարի·

ՔԷՆԻԳՍՀՅՈՒԹԷ (Koenigshütte)· — Ունի գաբբ-նոց մեծ·

Ե· ԴՔՍՈՒԹԻՒՆ ՊՐՈՒՆԶՈՒԻՔԱՅ

747· Դքսութիւն Պրունզուիքայ որ և Պրաունշ-վայկ ըստ Գերմանացւոց, ժողով է մանուկ գաւա-ռաց, ձգեալ զՀիւսիսային կողմէ Հարցայ ընդ մէջ Բրուսիոյ և Հանովրայ 203 վարսախ քառակուսի· ժողովրդք երկրին իբր 276,000 ի Աաքսոնաց սե-բեալ է և խօսի զասորին գերմանական, և կրօնիւք լուտերականք են, իբր 2,800 կամուրիկեայք միայն գոն ի նոսա և 1,600 Հրեայք, գործօնք և Հարաւոք, և բազում ի նոցանէ ոսկերչականք են արուեստիս· Հանիք և քարինք և փայտ առատ են ի Պրունզուիք· երկաթ 120,000 կինդինար ի տարւոջ· Երկիրն բերէ ազգիազգի ընդեղէնս և իւղային բոյսս որպէս վուշ և այլն, և հունալսն ընծոր· Կան մանր նորին պար-ոնիքք և անդրանիք մշակեալ է, և այլ կէսն անտա-ռային է և Հարալ անգէտից· Պրունզուիք ի սկզբան դարուս մանր Վեսգֆալիոյ Համարեալ էր, յամին 1814 տուաւ ոտՀին Պրունզուիքի Վրիդերիդդեայ որ ի տանէն Հանովրէրայ·

Հասք պետութեանն և ծախք են իբր 5 միլիոն ֆր· պարտք իբր 22,000,000· Զօրք, 2,476 այր, իսկ ի պատերազմի իբր 5,000·

Ի վեց շրջանակս կամ դքսութիւնս բաժանի Պրուն-զուիք, որ են

Գաւառք	Բնակիչք
Պրունզուիք	67,000
Վոլֆենպիւթդել	54,000
Հելմշտէտ	44,000
Հոյզմինդէն	46,000
Կանտէրհայմ	43,000
Պլանքենպուրկ	22,000
	276,000

748· ՊՐՈՒՆԶՈՒԻՔ կամ ՊՐԱՒՆՇՎԱՅԳ (Brunswich կամ Braunschweig)· — Ցեղը Աքերայ, մայրաքա-ղաք գեղեցկաձիսա· Երբեմն մեծագոր յոյժ վան դաշնա-կից վաճառականութեան, անուանի է և այժմ ի Ճոխ-քան զքաղաքս քաղաքս հիւսիսային Գերմանիոյ· Ի չինուածսն գեղցիկք են պալատ գքսին որ հրդե-հեալ մասամբ ի խուովութեան 1830 ամին՝ նորոգե-ցաւ նոյնհետայն վայելչագոյն ևս· պալատ սերու-թեանն· հին պալատ գքսին յորում կայ առիւծ վիճ-ակի պղնձակոյտ յիշատակ Առիւծն վերաձայնեալ Ենրիկոսի, Թատերգարանն, զինարան, մուսեոն· Ունի և ուսումնարանս անգամսհատութեան և վիրա-բուժութեան, և դպրատունս, յորս նշանաւոր է

Կարողներեան և գալրոյն Ճարտարութեան. անկեալ նոց աղբատաց և այլ ևս տուիք մարդասիրութեան։ Ընտանի են տանալաճառք քաղաքին Երկիցս ի տարւոջ։ Բն. 40.000։

749. ՎՈԼՖԵՆՊՈՒԹԵԼ (Wolfenbüttel). — Ա. Օ. քերայ աթոռ վերին առևին բովղոյ, քաղաք գեղեցիկ, յորում անուանի է գրատունն 200.000 մատենիքը և 10.000 ձեռագրովք. անդ կանգնեալ կայ անգրի բանասիրին Լէսսինկայ (մեռեալ ի 1781) գեղանապետի մատենադարանին։ Տուն բանագատ գործաւորաց։ Բն. 9.000։

ՀԵԼՄՇԹԷԴ (Helmstaedt). — Երբեմն անուանի վան համալսարանին հիմնելոյ ի 1576 որ բարձաւ յաւուրս Թագաւորութեան Վեսդֆալիոյ յամին 1809։ Բն. 6.000։

ՊԼԱՆԿԷՆՊՈՒՐԿ (Blankenbourg). — Գոհին Հաղցայունի մարզպատուն, վարժարան անգրիագործութեան. Բն. 3.600։ — Ա. Երի քաղաքիս ի քարաժԼեալ որոյ 1038 ոտնաչափ բարձրութեան է՝ կայ զբօսանոց պատեան Լուվիզնպուրկ։

Դքսին Պրունզուիքայ կալուած է իշխանուհիւնին Էօլսայ (Oels) ի Պրեզլաւ Շլեզիոյ և սերուհիւնին Մէձիպոր (Medzibor), յորս 325 գեօղք են և 8 քաղաքք, ընդ իշխանական իրաւունս արքային Բրուսիոյ. Նոյնպես և Լուսալիցիոյ և Կուդէնգակ յՕբբէնը գաւառի։

Ը. ՄԵԾ ԴՔՍՈՒՀԻՆ

ՕԼՏԵՆՊՈՒՐԿԱՑ

750. Լ՚ԻՐԵՔ մասունք են սերուհիանոս անհատապաք և անջատեալք. — Ա. Դքսուհիւնին Օլտենպուրկայ. — Բ. Իշխանուհիւնին Լիւսէք՚ի Հոլշտայն. — Գ. Իշխանուհիւնին Պիրքէնֆէլտ՚ի Ձախակ Հռենոսի ընդ միջ Մոզէլայ և Սարբոյ. որոց միաշամուռ 324 փարսախ քառ. է տարածութեան։ Օլտենպուրկ կայ ի բերան Վէզերայ ընդ միջ Հանովերայ և Հիւսիսոյ Ծովուն, գնատագոյն և գաշտային, վասն որոյ ամբարտակք ամրացեալ է յերելսաց ովկիանոս. մշակութիւն յաջողի ի կաւուտ ծովափանս և ի գետեղերս, բայց առաւելագոյն մասն երկրին թափուր, աւազուտ և ձախձախուտ է և երկիր հողոյ վառելոյ. բնակիչքն պարապին ի դարմանի արջառոց և մեղու. Վէզերը և Հունդ գետ գիւրին ի վաճառակութիւն, և վաճառք գլխաւորք են՝ արջառ, փայտ, ցորեան, կտաւիք։ Թիւ ժողովրդեան է 280.000, որք լուտերականք են կրօնիւք, բայց իբրև 66.000 կաթոլիկկայք գոն ի Նոսա, և Հրեայք 700։

751. Ջարմ գքսին Օլտենպուրկայ սերեալ է ի նահնոյ ցեղէ Սաքսոնաց. և ըստ ոմանց ի Վիտգէքինոյ. ի ԺԵ դարու մի ոմն ի գքսից Օլտենպուրկայ եկաց Թագաւոր Դանեայ և ի սերնդոյ նորին ցարդ կան Թագաւորք աշխարհին. ի 1667 ի պատկասէլ արեւել յաջորդի գահոյն Օլտենպուրկայ՝ վճռակեցաւ Երկիրն արքային Դանեայ, որ ի 1773 ետ զայն ի Պօղոս կայսր Ռուսաց առեալ ի նմանէ զՀոլշտայն, և Պօղոս ետ ցեպհակոպան Եկաթինայ ցիւր ազգականն, և յայնմ հետէ ազգակիցք նորա վարեն զսերուհիւնն անուամբ մեծի գքսութեան։ Նաթոլէոն յամին 1810 զքոյնն Օլտենպուրկ ման Գաղղիոյ կարգեալ էր։ Ի սկիզբն 1849 ամին նորոգ յերիւրեցան օրէնք սկաուհեանն՝ որ միապետական իմն է։ — Հասք պետութեանն են 6 միլիոն ֆր. ոզրականք 4.084։

752. Դքսուհիւն Օլտենպուրկայ բաժանի ի վեց շրջանակս կամ գաւառս և ի սերուհիւն մի. յերիս պայազատուհիւնս որոհեալ է և Պիրքէնֆէլտ։

Գաւառք	Բնակիչք
Ա. Օլտենպուրկ	40.000
Բ. Կայէնպուրկ	35.000
Գ. Օլդենպուրկ	29.000
Դ. Տէլմենհորտ	34.000
Ե. Վէխտա կամ Ֆէհդա	34.000
Զ. Քլոբբենպուրկ	33.000
Տէրութիւն Եէվէր.	20.000
Իշխանուհիւնն Լիւսէք.	22.000
Իշխանուհիւնն Պիրքէնֆէլտ.	
Ա. Պիրքէնֆէլտ	10.000
Բ. Օսերբրգային	13.000
Գ. Նօհֆիելտեն	8.550
	278.550

753. ՕԼՏԵՆԲՈՒՐԳ (Oldenbourg). — Մայրաքաղաք առ Հունդայ. ունի գեղեցիկ գղեակ արքունի, որաբան, զինուորանոց, Թանգարան հնութեանց: Բն. 9,000:

ՎԻԼՏԵՀԱԶԷՆ (Wildeshausen). — Ունի կրթարան խլից-համրոց: Բն. 2,000:

ՎԷԽԱ (Wechta). — Ունի մարզաւոյն ուղղափառաց: Բն. 2,000:

ԵՒՎԼԻ (Jever). — Գ. Ք. համանուն տիրապետեանն, կարի քաջ բարգաւաճեալ է: Բնակ. 3,600:

ԱՒԳՒՍ կամ ԵՒԴԱ (Eutin). — Գ. Ք. Լիւսէքաղ: Բն. 2,800: Բնակուիչն եղև Վլադ և այլոց խմաստնոց:

ՊԻՐԿԷՆՖԷԼՏ (Birkenfeld). — Գ. Ք. համանուն նահանգ իշխանութեանն. ունի դպրոց լատին լեզուի: Բն. 1,700:

754. Ընդ միջ գաւառաց Օլէնպուրկայ ի հարաւոյ Եմվերայ առ Եահդ (Iahde) գեաւղ, կայ փոքրիկ վիճակն Քնիփհաուզէն (Kniphausen) յամին 1826 անկաւեալ յՕլէնպուրկայ և անկախ տիրապետութիւն լեալ. որոյ տիրէ կոմսն Պենդինքայ. իբրև փարատիս մի քառ. է վիճակն, և բնակիչք ի նմա 3,100. և գիւղաւոր տեղի գղեակն Քնիփհաուզէն 50 բնակչօք. բայց կոմսն նատ ի Վարէլ կամ Ջարէլ կալուածս իւր յՕլէնպուրկ: — Սա է փոքրագոյն քան զամենայն պետութիւնս Եւրոպիոյ. վասն այնորիկ և ի բաղմաց ընդ դբսուհեանն Օլէնպուրկայ ի մի համարեցաւ:

Լ. Բ. ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՔ ԼԻԲԲԷ

755. Արդ իշխանութիւնք են Լիբբէայ. Լիբբէ Տեգմոլտ և Շաումպուրկ Լիբբէ:

Ընդ միջ Հանովէայ, Բրաւնշէյ և Հէս Կասսըլընթրի է երկիր հրկին իշխանութեանցս, և ունի հովիտս բազմերես անտառախիտ բլուրք. երկիրն ընկոյզ ի մացառս Տեգմոլտայ, վաճառ կատուց. կարի քաջ բարգաւաճեալ է կրթութիւն իշխանութեանցս: Վերջին բոլոր տասնի տուս վճռի յատեան Վըշիֆենպիւդէլայ ի Պրանդոնբուրգ: Տեգմոլտայ 820 արք են զօրու, Շաումպուրկայ 432. Հասք տուաջնոյն են իբր 1,100,000 ֆր. երկրորդին՝ իբրև 580,000 ֆր:

Ա. ԼԻԲԲԷ ՏԵԳՄՈԼՏ

756. Տարածութիւն իշխանութեանս 54 փարսախ քառակուսի: Բն. 106,000, որք միաֆանաւ կալչնականք են:

ՏԵԳՄՈԼՏ (Detmold). — Ի աթոռ իշխանին: Բն. 2,600: — Ընդ միջ Տեգմոլտայ և Բասէրսոռնայ յանտառին Տեւտոպուրկայ կարծի պարտեալ Վարոսի ի Գերմանացւոց, ընդ ամս յաւաջ քան զՔրիստոս:

Ընդ համբրն 145 գիւղք են իշխանութեանս, ազանք 5 և քաղաքք 6 և կէս, քանզի կէս Լիբշտատ (Lippstadt) քաղաքի վաճառեցաւ Բրաւնշ. յ'17 մայիսի 1850 ամին, 9,000 դաչէռ հասոյթ առեալ ընդ այն:

Բ. ՇԱՒՄՊՈՒՐԿ կամ ՇԱՒԵՄՊՈՒՐԿ ԼԻԲԲԷ

757. Շաումպուրկայ կամ Շաւեմպուրկայ տարածութիւնն է 23 փարսախ քառակուսի. Բն. 29,000, որք լուսերակաւք են ազանդով:

ՊԻՒՔԷՔՊՈՒՐԳ (Bückeburg). — Գ. Ք. և իշխանանիստ 2,300 բնակչօք:

Վիլհելմշտայն (Wilhelmstein). — Ամրոց փոքրիկ Տարատարաշէն ի լճի միում կառուցեալ ի Գուլիելմոյ միջնեան դքսէն, որ և զբաղար եկաց Լյուսթատանացւոց, (մեռեալ ի 1777):

ԹԻ. ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՎԱԼՏԷՔԱՅ


738. Իրաւ մասունք են իշխանութեանս, վալէ տէք՝ ընդ մէջ Բրուսիոյ և Հէսայ, և Բիրմոնդ՝ ընդ մէջ Հանովէայ, Պրունզուիքայ և Տեգմոլտայ. որոց ընդ քնաւ 60 վարսախ է տարածութեան: Լեռնային է երկիրն մանաւանդ վալտէք, ունի անտառս և երէ, բովս երկաթի և պղնձոյ: Բիրմոնդ դաշտ է զուարճալի ընդ որ գնայ Էմմեր, ունի և ջերմուկս. վերին տեսեան սորա է՛ Ըրլիֆենպլուդել: Բն. 58,500, դաւանութեամբ՝ աւետարանականք:

Ի վեց պալատութիւնս բաժանի վալտէք, որ կոչին Դուփհագէ (Twiste), Տիմէլ (Diemel), Իտէր, Վէրքէ, Ադղէնպէրկ և Բիրմոնդ (Pyrmont): Հասք պետութեան են իբրև 800,000 ֆրանգք:

ԱՐՈԼՍԷՆ (Arolsen). — Գլ. Ք. իշխանանիստ, ունի գրատուն դէղեցիկ, թանգարան հնութեանց պոմպէյայ և դրամոց: Բն. 2,200:

ԲԻՐՄՈՆԴ (Pyrmont). — Աւ. Էմմերայ, անուանի ւան հանքային ջրոցն, ուր գան բազմութիւն մարդկան. դէղեցիկ են սահմանք նորա շուրջանակի: Բնակիչք 3,000:





ՀՈՒ ՍԱՓՍՈՆԻԱ

ԿԱՄ

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ՍԱՓՍՈՆԻՈՅ

Տարահոսքիւն 973 փարսախ □. Բնակիչք 1,900,000:

759· Սահմանք պետութեանս այսօրիկ են Բրուսիա, Աւստրիա, Պաւիերա և գետութիւնք Սաքսոնիոյ· որոյ տարածութիւն է 973 փարսախ քառ: Հարաւային մասն երկրին լեռնային է և մայրեղը· գլխաւորք ի լերինն են Էրծկէսիրկ լերանց պարք, 3,800 ոտնաչափ բարձր որ զՍաքսոնիա ի Պոհեմիոյ բաժանեն և յարևելից կուսէ յանգին ի լերինն Կոչիցեալս Հերուսիա Սաքսոնիոյ յորս տարածանին հովիտք վայելուչք· հիւսիսակողմն զետատափն է և ջրիր մասն երկրին անտառային· գետ մեծ յաշխարհի սոսկ գնայ էլբա, և ի նա խառնին ամենայն գետակք որ յերկրին Սաքսոնիոյ· Էլգեր, Շբրէ, Մուլդա և Բլայս, բայ ի Նայսայ որ մտանէ յՕտեր: — Ընդատաբեր գաւառք տերութեանս հատան ի հնձանէ ի 1815, վասն որոյ բերք երկրին մեծագնէլոյ չեն բաւական և ժողովրդեանն, թէպէտ և մշակութիւն ծաղկեալ է անգ, մանաւանգ ի հիւսիսային կողմանս ուր առատ է պտուղ և վուշ· բայց շահ մեծ է ի հանքացն յորս 12,000 գործաւորայ վաստակին· տարեկան արծաթոյ հանեալ լինի 32,500 լիտր, երկաթ՝ 80,000 հինդնարք, գոպալ՝ 5,600, անագ՝ 3,000, և հող ընդեր յահռչակ, որոյ միայն համուռն գին է 6 միլիոն ֆր· ընդեր են և արջառք և ոչխարք Սաքսոնիոյ, և գերգին գաւառացն անուանի է որպէս զոպանիոյ: Անուանի է Սաքսոնիա և ի ճարտարութիւն· յամենայն քաղաքս նորա գտանին գործարանք ասուի, կըտաւի, բամբակի, մետաքսի, ասղնեգործոց, յահճապակւոյ, մետաղի անօթոց, և այլն:

760· Բնակչաց թիւ հաշուի 1,900,000· որք գերմանացի են ազգաւ, բայց միայն 50,000 վանդիք են ի սահմանս Շլեզուոյ յարևելից կուսէ էլբայ: Ըստ դաւանութեան՝ աւետարանական լուսերականք են· 34,000 կաթոլղիկեայք միայն են ի նոսա և 1,000 հրեայք: — Մինչև յժ դար Սորպք որ ի վանդայ՝

տիրին Երկրին Սաքսոնիոյ. Հենրիկոս Ա հալածեալ զնոսա ի սահմանացն որ ընդ մէջ Էլպայ և Սաալայ՝ հաստատեաց զՄարկգրաւ Իլանուռեիւն Մինիոյ. որ վոխանդեալ ի ձեռս բազմաց, ապա ձագ ի ատենն Վէտդինայ յորմէ սերեալ են ամենայն իշխանք Սաքսոնիոյ որք և տիրեն ի վերնոյ Իւրեանց. յԻՒ դարս ի Նուռանէլ Առիւծն Ներիկոսի զդքսութիւնն Սաքսոնիոյ Բեռնարդոս Ասկանիոս կամ Ածկեղ. Ժառանգ այնը զքսութեանն ոչ կարելով Թագիլ զայնոսն Նորին կոչեաց զհւր զԱգաւորութիւնն՝ զԱքսոնիա Բրուսաց այլովք հանգերձ. ի զաւել տոհմին Վէտդինայ, Փրեաերիկոս–Մարտին Լանդգրաւ Թուրինկիոյ տիրեաց կալուածոց Նորին և ի Նմանէ այժմեան իշխանք սերունդք են. յամին 1483 յերկուս ցեղս բաժանեցաւ զարմ Նորա. անդրանկանն՝ որ կոչի Երնեստ վիճակեցաւ Թուրինկիա և կայսրընտրութիւն. կրտերդն՝ որ Ալպերդ՝ անկաւ բաժին Մերնիա և զքսութիւն. ի սմանէ ոտին ըզ Ծագումն Թագաւորք Սաքսոնիոյ, իսկ իշխանքն յանգրանկանէն, որոյ տոհմ յառնութեամբ Կարոլոսի Ե ի Միւհլպերգ (1547) վառնարանալ յաւել զիւառս միւսոյն: Թագաւորական տոհմին ուղղափառ են կրօնք ի 1697 ամ անտի: Յամին 1806, Կայսրընթերն Սաքսոնիոյ յետ պատերազմին Ենէնայ Թագաւոր եկաց ի ձեռն Նաբոլէոնի և դուքս Վարսաւիոյ, բայց ի 1815 և զքսութիւն և զկէս երկրի Նորա բարձին ի Նմանէ:

761. Հասք տերութեանն են 30,000,000 ֆիորնգք: Նախք ևս Նոյնչափ. իսկ պարտք 90,000,000: Զօրք 26,283:

Ի չորս շրջանակս կամ գաւառս բաժանի ազգ Սաքսոնիա.

	Գաւառք	Բնակիչք
Ա.	Տրէզդա	482,000
Բ.	Լայբսկ	430,000
Գ.	Զուէքաու	695,000
Դ.	Պաուտիսին	290,000
		1,897,000

762. Ա. ՏՐԵԶԴԱՆ. Յորում

ՏՐԵԶԴԱ (Dresda) • — Մայրաքաղաք գեղեցիկ առ լեռնոտամբ, յափունս Էլպայ, կամարձ մեծ



Տրէզդա

1,400 ոանաչափ արկեալ ի վերայ Նորա կցորդէ ըզ կրկին մասունս քաղաքին. ամրութիւնք Նորա քանդեաք փոխեցան ի պարտէզս. Երկուս հրապարակս ունի գեղեցիկս և շինուածս հոյակապս ոչ սակաւ. Նըշանաւոր է ի Նոսա եկեղեցին ուղղափառաց, եկեղեցի Տիրուհւոյն, որքունի գղեակն՝ ուր կայ պահն Կանաչ կուչեցեալ. Թանգարան քարանց և արուեստա. կերտ Նիւթոց. պալատն Պրիւլ և գեղեցիկ պարտէզ Նորա առ Էլպայ, պիտանեան, Թատրերգարան, տուն պատկերաց առաւել քան զՀազար հինգհարիւրից պարծանք քաղաքին, զի չկը Նմին հաւասար ի բովանդակ Գերմանիա, և գտանին անդ բազում երեսիք Նարատարաց նկարք. ի տարին յարկի Նորին կան 800 պատկերք գառնեալք երեսիք անգրեայց հին Նարատարաց: Ի Յաբտնեան պալատան՝ որ Օգոստէոն կոչի այժմ՝ կայ մատենադարան 250,000 հատոր գրովք, հաւաքուեալ հին ու նորագոյն. ի Զուէնկեր 200,000 պատկեր փորագրեալ, Թանգարան բնական պատմութեան, և այլն: Են ի Տրէզդա և Նմանեան նկարչութեան, փորագրութեան և արձանագործութեան, ուր ուսակերտին բազմութիւն ուսանողաց. անուանի են և կրթարանքն և տունք բարերարութեան, և գործարանքն ուսուցիչական անօթոց և զարգուզ. և վան հաւարման արգաւաց արուեստից և գեղեցիկ Նմանեացն և զուարճագեղ վայրան և վան մերձաւորութեան Համբաւեալ բաղանեացն Պոհեմիոյ և դիւրին Ճանապարհաց, քանզի կենդրոն երկաթուղեաց է Տրէզդա, ամի ամի բազմութիւն օտարական Նոց գան ի Տրէզդա: Նշանաւոր եղև յաղթութիւն Գաղղիացւոց առ ի 1813: Բն. 91,000:

763. Գեղեցիկք Էլպայ՝ մանաւանդ աքահղին պարտիզք և տունք զբաղարեալք են. յորս մերձ կայ հովիտն Բլաէն, և չորիւք փարախաք Հեռի Սաքսոնեան Հելուետից լերինք, յորս կան Ժայռք և վէմք անճոռնի տեսլեամբ, և ամայիք և խորագորք ընդ մէջ Նոցա. ի Ճանապարհի անդ կայ գղեակն արքունի Բիլնից յաջմէ գետոյն, անուանի վան գաղնագրութեամն եղելոյ ընդ Բրուսիա և ընդ Աւստրիա ի 1791 վան զդէմ ունելոյ Գաղղիացւոց: — Ա. Բեռնա քաղաքաւ. (Բն. 5,000). ի Ճախմէ Էլպայ, կայ ամրոցն Սաննէնշտայն և ի Նմա յիմարանոց մեծ. իսկ խոնարհագոյն ի Նարաւակողմն կայս կայ զարմանագործ բերդն Քէօնիկշտայն կառուցեալ ի վերայ ժայռի 1,400 ոանաչափ բարձր, կիսով փարախաւ շրջապատուելիւն Նորա. ունի անդաստանս և չորհոյս 1,000 ոանաչափ խորութեամբ. և ե սա միակ բերդ ի Սաքսոնիա, չընդալայրք Նորա գեղագիտակ գիրս ընծայեն մանաւանդ ի հանդիսակոլին ի լերինս Սաքսոնեան Հելուետից, որպէս և յամենայն իսկ պարու լերանցս է տեսանել զայն:

Մ՚ԱՒՍԷՆ (Meissen) • — Քեզք Էլպայ հուպ ի Տրէզդա, անուանի վասն սաքսոնեան չախմայական ձեռագործոց, 600 գործաւորք են ի գործարանին զոր Պեօդիքէր գտիչ ապակւոյն այնորիկ արքունի ծախիւք կառոյց ի 1740. արգելուլ խափել ի սերուցեան անդ մի ոսկիք յայտնել զարուեստն, բայց յետ սակաւ ամաց չհնեցան գործարանք նման նմին և յայլ սերուցեան Գերմանիոյ և ապա ի Գաղղիա և յԱնգղիա. Նեպէա ոչ ուրեք գտաւ հասատար ապահոյն Մայսէնայ. զնան սպիտակ յորմէ գործի չախմայական՝

հանէն յԵրծկէպիրկէ վերանց։ — Ընդ մէջ Տրէզտայ և Մայսէնայ կան ոչ սակաւ այգիք։ Բն. 8,500։

764. Բ. ԼԱՑԲՈՒՒԿ։ — Ցորեամ գիւաւոր քաղաք

ԼԱՑԲՈՒՒԿ կամ ԼԻԲՈՒԱ, ԼԻԲՈՍՈՒԱ կամ ԼԱՑԲՈՒՒԿ



Ժողովարան հասարակաց ի Լայպցիկ

thaus). Օդոստէոն համալսարանն, վարժարան փորձառու հմտութեան և կրկին հրատարակչ վաճառականաց։ Անուանի են երեք ամսավաճառք քաղաքիս և սկիսանացուք դաշնակցութեանն, վաճառականք ի զանազան աշխարհաց գան անդր՝ ի Պոլենիոյ, ի Ռուսաց, ի Ցուծաց, ի Հայոց և յայլոց կողմանց ապրանիւք, և համարի գին վաճառացն ածելոց անդր 250 միլիոն վր։ Լայպցիկ նշանաւոր է և իբրև կնիք գրոց գրոց Գերմանիոյ, են ի նմա 120 գրանոցք և 220 մամուլք տպագրութեան. համալսարանն՝ հիմ. Նեալ ի 1409՝ ունի ընդարձակ շինուածս ի սիտս զանազան ուսմանց, համակաք 1,000 ուսանիւն անդ, և ի գրատան նորա 400,000 մատենից են. անուանի են երկու վարժարանքն, Ջեմարանն արուեստից, որ պրոց փորձառու գիտութեանց, դպրոց վաճառականութեան, և կինգասդուտա ընկերութիւնք. գործարանք մետղոյ և զարդուց։ Ցամին 1850 ի Լայպցկի կարգեցաւ մեծ հանգիսարան Հարտարութեան ամենայն Գերմանիոյ։ Սա ծնան Լայպնից, Վեբոդներ և այլք ոմանք արք անուանիք. սա կուտգառա Ատոլիոս յաղթեաց Դիվլեայ ի 1631, և սա պարտեցան Գաղղիացիք ի 1813 ի մեծի պատերազմին զատուրս երկու քաղաքիս կռուելով, զոր Պատերազմն ազգաց կոչեն անդ (Völkerschlacht), խոյ վիճակարի կանգնեալ կայ ի Հակառատեղւոյն. և յսոն Էլզոէրայ կանգնեցաւ ի զուարճալի պարտիզի արձան քաջի արքայազնին Լ. Հայոյ Բանեագովքեայ։ Բարգաւաճանք Տրէզտայ յահսկեցին երկաթուղեաք նորա որ ընդ Մակաեպուրկ, Գեռլին, Գասսէլ, Նորնմպերկ, և այլն։ Բն. 60,000։

765. Գ. ԾՈՒԻՒԱՒ։ — Որոյ գիւաւոր քաղաք

(Leipzig)։ — Ի համօտուրս Էլզոէրայ, Բլայսայ և Բարտայ մի լերդարձակ և ի վաճառաշահ քաղաքաց Գերմանիոյ. անուանի է ի շինուածս նորա Եկեղեցին Ս. Նիկոդայոս, գիւղն Բլայսենպուրկ դիտատեղի Նոցան Հանդերձ, Հասարակաց Ժողովարանն (Rathaus). Օդոստէոն համալսարանն, վարժարան փորձառու հմտութեան և կրկին հրատարակչ վաճառականաց։ Անուանի են երեք ամսավաճառք քաղաքիս և սկիսանացուք դաշնակցութեանն, վաճառականք ի զանազան աշխարհաց գան անդր՝ ի Պոլենիոյ, ի Ռուսաց, ի Ցուծաց, ի Հայոց և յայլոց կողմանց ապրանիւք, և համարի գին վաճառացն ածելոց անդր 250 միլիոն վր։ Լայպցիկ նշանաւոր է և իբրև կնիք գրոց գրոց Գերմանիոյ, են ի նմա 120 գրանոցք և 220 մամուլք տպագրութեան. համալսարանն՝ հիմ. Նեալ ի 1409՝ ունի ընդարձակ շինուածս ի սիտս զանազան ուսմանց, համակաք 1,000 ուսանիւն անդ, և ի գրատան նորա 400,000 մատենից են. անուանի են երկու վարժարանքն, Ջեմարանն արուեստից, որ պրոց փորձառու գիտութեանց, դպրոց վաճառականութեան, և կինգասդուտա ընկերութիւնք. գործարանք մետղոյ և զարդուց։ Ցամին 1850 ի Լայպցկի կարգեցաւ մեծ հանգիսարան Հարտարութեան ամենայն Գերմանիոյ։ Սա ծնան Լայպնից, Վեբոդներ և այլք ոմանք արք անուանիք. սա կուտգառա Ատոլիոս յաղթեաց Դիվլեայ ի 1631, և սա պարտեցան Գաղղիացիք ի 1813 ի մեծի պատերազմին զատուրս երկու քաղաքիս կռուելով, զոր Պատերազմն ազգաց կոչեն անդ (Völkerschlacht), խոյ վիճակարի կանգնեալ կայ ի Հակառատեղւոյն. և յսոն Էլզոէրայ կանգնեցաւ ի զուարճալի պարտիզի արձան քաջի արքայազնին Լ. Հայոյ Բանեագովքեայ։ Բարգաւաճանք Տրէզտայ յահսկեցին երկաթուղեաք նորա որ ընդ Մակաեպուրկ, Գեռլին, Գասսէլ, Նորնմպերկ, և այլն։ Բն. 60,000։

765. Գ. ԾՈՒԻՒԱՒ։ — Որոյ գիւաւոր քաղաք

ԾՈՒԻՒԱՒ (Zwickau)։ — Որ ունի լիկան և մատենագարան մեծ։ Բն. 18,000։

ՀԷՄՏՈՒ (Chemnitz)։ — Ցերծկէպիրկէ, կենդրոն բամբակեղէն կերպասուց ի սկիս Սաքսոնիոյ, գործատղոք և մեքենայք հիւսից բազմաթիւք են ի նմա, և տարեկան չաշ բամբակին 8 միլիոն։ Սատ ծնաւ Հայն բանասեր մեռեալ ի 1809։ Բն. 10,000։

ՖՐԱՑԳՊԵՐԿ (Freiberg)։ — Եւ սա յԵրծկէպիրկէ, աթոռ հոգաբարձուին հանքից. ունի ձեմարան հանքարանութեան զոր պայծառացուցին վ. Հռնէր (մեռեալ ի 1817) և այլ վարժապետք ձեմարանին. ի սահմանից նորա ելանէ արծաթ առատ։ Բն. 12,000։

766. Դ. ՊԱՒԱՑԻՆ կամ ՊՈՒՏԻՍԻՆ։ — ՊԱՒԱՑԻՆ (Bautzen)։ — Քաղաք վաճառաշահ ի վերին Լուսատիա. ունի գործարանս չուխայի, բամբակի և կտաւուց։ Գաղղիացիք ի 1813 սատ յաղթեցին Ռուսաց և Բրուսաց։ Բն. 12,000։

ԶՒԳԱՒ (Zittau)։ — ԵՒս Նայայ. Բն. 10,000. ի վերին Լուսատիա։ — Բլաէն, 10,000, ի Վայկլատ, վաճառաշահ յոյժ։ — Շնէպէրկ, 8,000։ — Ալնապէրկ, 7,000։ — Զոբաս, 5,500. սոքա յԵրծկէպիրկէ. և այլ ևս քաղաք մանուկք որ նշանաւոր են վասն ձեռագործոց։

ՀԵՐՆՀՈՒԹ (Herrnhuters)։ — Քաղաք փոքրիկ, առաջին աթոռ է Մորաւեան կամ աւետարանական եղբարց, զոր հաստատեաց ի 1722 Ձինզենդորֆ կոմս, 200 քարողիչք են նորա որ գնան աշակերտել զՀեթանոս, և ազանդաւորք ընդ ամենայն 65,000։

ԿԱՄՏՆ (Kamenz)։ — Հայրենիք Լեսսինգայ, առ Սեաւ Էլզոէրաս։ Բն. 4,000։

Նշանաւոր են բազում դաշք ի Սաքսոնիա վասն չզոր Ճակատամարտից ի նոսա տղերց։

ԺԱ–ԺԲ· ԴՔՍՈՒԹԻՒՆՔ ՍԱՔՍՈՆԻՈՅ

ՎԱՅՄԱՐ, ԿՈԹԱ, ՄԱՅՆԻՆԿԷՆ, ԱԼԴԵՆՊՈՒՐԿ

767· Դքսութեանցն այսոցիկ սահմանք են Բրունսուիկ, Թագաւորութիւն Սաքսոնիոյ, Պաւիերա, Իտալիա, և այլն. և են ի Թուրինկեան անտառին և ի սահմանս նորա, հովտային և ըլլագեղ և բարեբեր է երկիր նոցին, բերէ ճարակ առատ ի անուռնգ պահանց· ունի անտառս մեծամեծս ի կոթա, ի Հիլդպուրկհաւզէն, Ա՛ալդենախ· և բարեբեր վիճակս Ա՛ենպուրկ, ի Գոտուրկ և յախճունս Սաալըֆ· գետս այս և Սալտաֆն էլզդեր, Վերրա, Իլմ և Իգ (Ilz) առուգանն զերկիրն· Ժողովուրդն բարեկիրթ է և գործօն, լուսեթերական աղանդով, բնակիչք Ալգենպուրկայ զվաճսի սովորութիւնս իւրեանց անփոփոխ պահեն ցայժմ, և են սերեալք ի Վանդաց, Եվենայ համալսարանն և տաճանն վերին բազըրց՝ հասարակ է ջրիցն ևս պետութեանց։

Ա· ՄԵՆ ԴՔՍՈՒԹԻՒՆ ՍԱՔՍ-ՎԱՅՄԱՐ-ԱՁԷՆԱԽ

768· Տարածութիւն երկրին է 186 փարսախ քառակուսի· Բն· 262,000· յորս 10,600 ուղղափառք, և 1,500 Հրեայք· Երկու գլխաւոր մասունք են սորա, Վայմար՝ յանտառն Թուրինկայ ի հիւսիսի արեւելից բաժանեալ ի 16 պայրութիւնս, և Ա՛ղլենախ՝ ի հիւսիսի արեւմտից ի 10 պայրութիւն· Մեծ գործքն որ զայս անուն հառ ի 1815 գլուխ է Երիսեատեան ժողովն· Հաւք պետութեան իւր 6 միլիոն ֆիրանգք, նոյնչափ և ծախք· պարտք 15 միլիոն· զորք 5,150·

ՎԱՅՄԱՐ (Weimar)· — Ա՛ռ Իլմայ ի գեղազարդ հովտի, մայրաքաղաք իշխանանիստ, ունի գեղեցիկ վէմնաշէն և տունս ոսմանց և արհեստից, և կուեցյաւ Ա՛ֆնիք Գերմանիոյ զի ի սկիզբն գարուս անգ նահանին խմաստուին Կէօթէ, Շիլլեր, Հէրտեր և Վիլանտ այլովք հանդերձ, յորոց հին Ամէնայ գըշխոյն· Կէօթէ եկաց առաջին պաշտօնեայ տէրութեան ցմահ իւր, և փառաւորեաց յոյժ զվաստն Վայմարայ· Ունի անուանի ուսումնարան աշխարհագրութեան, բնիկերութիւն ճարտարութեան, մատենագրան 130,000 գրովք· Բն· 12,000· — Օսմանչէտ գեօղ, յորում չերիմ Վիլանտայ·

769· Եէնա (Jéna)· — Ա՛ռ եզր Սաալայ անուանի վան համալսարանին հիմնելոյ ի 1548, ի սկզբան գարուս երեսելի եղև յոյժ ի մասին փիլիսոփայութեան, 4 կամ 500 ուսանողք յաշխատն անդր, և նորա մատենադարան մի 100,000 գրոց, պարտէզ բուսաբանութեան, դիտանոց և այլ ուսուհական վնոտաձք· Դպրոցք բժշկութեան անանոց, գեղաբանութեան, և օտարականաց· Ատեան վերին բազըրց դքսութեանցս և իշխանութեանցն Ռոյսայ ի քաղաքի աստ է· Պշանաւոր է պատերազմն զոր աստ մղեաց Նապոլէոն ի 1806 և նկուն արար զՊրուսիա· Բն· 7,600·

Աձէնախ (Eisenach)· — Ա՛ռ եզր Նեսայ, հայրենիք Մեքսասիանոսի Պախայ մատենագրի· Բնակիչք 10,000· — Ի սահմանս նորա ի վիմի բարձու կայ հին դղեակն Վարդպուրկ աճուռ մարդկութեան կամ Լանակրաւացն Թուրինկիոյ, ուր նստաւ Լուտեր զամս 10 յեա գաւտպզտութեանն, և աստ սկսաւ նա վերադմանութեան աստուածաշունչ գրոց·

Բ· ԴՔՍՈՒԹԻՒՆ ԳՈՊՈՒՐԿ-ԿՈԹԱ

770· Տարածութիւն սորա 97 փարսախ քառակուսի· Բն· 150,000· Ի գլուխ նոցա են բարձրացեալ գագաթունք Թուրինկեան անտառին· Լերկուսս լճանանեալիցս բաժանի ի Գոտուրկ և ի Կոթա՝ որ մեծագոյն է քան զմիւսն· Հաւք պետութեանն 3,800,000 ֆր· ծախք նոյնչափ· պարտք 11,000,000· զորք 2,200·

ԿՈԹԱ (Gotha)· — Մերձ ի Լայն գետ· Գ· Ռ· ունի մատեան անուանի յորում կայ մատենադարան 150,000 գրոց և հաւաքումն 75,000 գլամոց և այլ

Թանգարանք։ Նշանաւոր է՝ գրաւոր արգասիք՝ Տաբեգրութիւն կամ Վիճակագրութիւն կոթայ՝ որ՝ ի 1764 ամէ և այսր հրատարակի (Almanach de Gotha)։ Բն. 14,000։ — Իբրև մընաւ հեռւ՝ ի քաղաքէս՝ ի Սէհայկրկ լերին կայ դիւանոց՝ ընդդ միջօրէ լմաստունք Գերմանիոյ յաճախակի առաջին հաշուէն։ Մերձ՝ ի գեօղն Ազհենպէրկայ կան՝ ի բլրի ուրեք աւերակք հնագունի եկեղեցեացն Սաքսոնիոյ, զոր կառոյց Ս. Վոնիփակիոս աւետարանիչ Գերմանիոյ՝ ի Թուին 724։

ԳՈՊՈՒՐԳ (Cobourg)։ — Մայրաքաղաք Լանանահատ՝ ի դիպան գաշի։ Ամրոցն որ՝ ի մերձակայ բլրին՝ քանդեալ փոխեցաւ՝ ի տուն զբօսանաց։ Բն. 9,000։

Գ. ԴՔՍՈՒԹԻՒՆ ՍԱՔՍ-ՄԱՑՆԻՆԿԷՆ-ՀԻԼԴՊՈՒՐԳՀԱՒԶԷՆ

771. Տարածութիւն երկրին 120 փարսախ քառակուսի։ Բն. 164,000։ Հասք տերութեանն 3,200,000 ֆր. պարտք իւր 10,000,000. զորք 2,400։

ՄԱՑՆԻՆԿԷՆ (Meiningen)։ — Մայրաքաղաք առ Վարրայ որ անցանէ ընդ գաւառն ոզջոյն. ունի Թանգարանս գրամոյ և տպագիր պատկերաց. մերձ՝ ի նա անառանի է Ռեմարանի գիտութեան անատաց։ Բնակիչք 5,600։

ՍԱԼՏՈՒՆԿԷՆ (Salzungen)։ — Ունի աղահանս։ Բնակիչք 3,300։

ԼԻՊԵՆՇՏԱՑՆ կամ ՍԱՒՏՐՈՒՒՆ (Liebenstein, Saverbrun)։ — Ի զուարճալի տեղւոջ, ունի բաղանիս հանքային ջրոց։

ԱԼՏԷՆՇՏԱՅՆ (Altenstein)։ — Ամրոց գեղեցիկ յապառաժի ամարաստան դքսից։

ՀԻԼԴՊՈՒՐԳՀԱՒԶԷՆ (Hildburghausen)։ — Ի վերայ Վարրայ. ունի տորա կրթարանք, և գպրոց արուեստից։ Բն. 4,000։


ՍԱԱԼՖԷԼԴ (Saalfeld)։ — Ընտանի վանս պատերազմին՝ ի 1806։ Բն. 4,000։

Դ. ԴՔՍՈՒԹԻՒՆ ՍԱՔՍ-ԱԼԴԵՆՊՈՒՐԿ

772. Տարածութիւն երկրին 69 փարսախ քառակուսի։ Բն. 132,000։ Հասք տերութեանն 2,100,000. գրեաթէ հաւասար է ծախք. պարտք 5,000,000։ — Գաւառ բարեբեր է ոռոդևալ՝ ի Սաալայ և՝ ի Ըլսայ. բարեկեցիկք են բնակիչքն նորա։

ԱԼԴԵՆՊՈՒՐԿ կամ ԱԼՏՆՊՈՒՐԳ (Altenbourg)։ — Նա Իւայսայ մայրաքաղաք. անուանի՝ ի սմա են կրթարանքն և Ճարտարութիւն արուեստից։ Բնակիչք 15,000։

ՇՄԵԼԼա կամ ՇՄԷԼՆ. Բն. 3,000։ — Լուգքա 1,300։ — Ալվենպէրկ 1,300։ — Ռոննեպուրկ 1,700, ամենքին տգա բարգաւաճք են՝ ի Ճարտարութեան։



ԺԱ· ԺՉ· ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՔ ՌԱՅՍԱՅ

773· ՕՂՈՒՔՈՒՄ Ռայսայ, որոց միահամուռ տա-
րածութիւն է 78 վարսախ քառ· մեծ դքսութիւնն
վայմարայ հատանէ յերկուս անհաւասար մասունս,
որոց սահմանք են Բրուսիա, Սաքսոնիա և Պաւիե-
րա· անասուն թուրինկայ անցեալ ընդ նոսա կոչի
անուամբ Ֆրանգոնիոյ· ունի գետս զԱալ և զԼէդեր
Սպիտակ· են ի նմա հովիտք բարեբերք, անուամբ
և հանդք երկրագոյ· բնակիչքն պարապին ի մշակու-
թիւն, ի գործն անանոց և ի գործել զազգ ազդ
կերպասուց· Լուսերակունք են կրծիւք· երկու սե-
տուերիանք և ցեղք են ոմանք Ռայսայ, անդրանիկն կոչի
Կրայց, կրսերն Շլայց՝ որ և բաժանի ի Շլայց Լը-
սէնդայն և յԱլտենբուրգի տոհմս· իշխանքն տանս
այսորիկ ամենեքին Էնրիկոս կոչին և առանձին նշա-
նեքն ի միմեանց ընտրին· ցեղին Կրայայ իշխանք
կարգաւ անուանին ցՀարիւրորդ և ապա անդրէն հա-
շուի առաջին, և այլն· իսկ Շլայցայ ի սկզբան նո-
րոյ դարուս սկսանէն նոր ազգ·

Ա· ՌԱՑՍ-ԿՐԱՑՑ

774· Սորա համարէն բնակիչքն են 36,500·
ԿՐԱՑՑ (Greiz)· — Ի վերայ Սպիտակի Էլսդե-
րայ, քաղաք իշխանանիստ· ունի վարժարանս և գոր-
ծարան կերպասուց· Բն· 7,000·

Բ· ՌԱՑՍ-ՇԼԱՑՑ

775· Ընդարձակագոյն է գաւառ կրաերոյ տոհ-
մին, և բաժանի յերիս վիճակս, որոց միահամուռ
80,000 բնակիչք են· — Հապաք պետութեանն 400,000
ֆր· Իսկ կրայցայ կիսով չափ նորին·

Ա· ՇԼԱՑՑ· Ցորտմ է

ՇԼԱՑՑ (Schleiz)· — Քաղաք իշխանանիստ, որ ունի
վարժարանս և ձեռագործս կերպասու· Բն· 5,000·


Բ· ՌԱՑՍ-ԼՈՊԷՆ ՇԴԱՑՆ-ԷՊԷՐՍ-
ՏՈՐՖ· Սորա է

ԼՈՊԷՆՇԴԱՑՆ (Lobenstein)· — Քաղաք իշխա-
նական եւ անուանի ի ճարտարութեան· Բն· 3,000·

Գ· ՏԷՐՈՒԹԻՒՆ ԿԷՐԱՑ ԵԻ ՍԱՆԱՎ-
ՊՈՒՐԿԱՑ· Այս մասն վիճակեալ է երկուց զար-
մից ցեղին Շլայցայ· և է ի նմա

ԿԷՐԱ (Gera)· — Աս Սպիտակ Էլսդերայ, երևելի
քան զամենայն քաղաքս Ռայսայ, ունի վարժարան մի
և ձեռագործս· Բն· 9,000·

ՔԷՍՏՐԻՑ (Koestritz)· — Քաղաքաւան որ կա-
լուած է այլոց իշխանի տոհմին Ռայսայ, ընդ պաշտ-
պանութեամբ երկոցուն տոհմիցն·



ԺԱ· ԺԱ· ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

ՇՈՒԱՐՅՊՈՒՐԿԱՅ

ՍՈՆՏԷՐՍՀԱՒՋԷՆ ԵՒ ՌՈՒԻՏՈԼՇԴԱՏ

776· Իրարու իշխանութիւնք են երկրին Շուարցպուրկայ, մին կոչի Վէրին և է՛ի հիւսիսակողմն անտառին Թուրինկայ, միւսն՝ Սոոլրին՝ ի հարաւոյ հարցայ, որ պատէալ է՛ի Սաքսոնիոյ Իրուսաց, և է բարբեր յոյժ, վասն որոյ և մասն մի նորա Դաշտ Ոսկւոյ կոչեցաւ. իսկ Վէրինն պատէն դքսութիւնք Սաքսոնիոյ, և են՛ի նմա հովիւք զուարճալիք։ Երկոցուն միանգամայն 98 վաթսուն է երկրին։ Ի ԺԶ դարու հաստատեցան իշխանութիւնքս բաժանեալ զերկիրն հաւասար ընդ նոսա։ Առեան Վէրին բողոքոյ կրկին իշխանութեանցս է՛ի Ներուդէ որ՛ի դքսութեան Տհսսաւոյ։

Ա· ՇՈՒԱՐՅՊՈՒՐԿ-ՍՈՆՏԷՐՍՀԱՒՋԷՆ

777· Մ՛իահամուռ բնակիչք գաւառիս հաշուին իբր 61,000, որք լութերականք են աղանդով։ Հասք պետութեան իբր 600,000 ֆր· Ծախք սուղ ինչ նուազ, եւս պարտք՝ 850,000։ — Ցերկուս տերութիւնս բաժանի՝

Ա· ՍՈՆՏԷՐՍՀԱՒՋԷՆ· Որոյ է ՍՈՆՏԷՐՍՀԱՒՋԷՆ (Sondershausen)· — ԳՂ· Ք· և իշխանանիստ, մերձ՛ի խառնուրդս Վիբրեբայ և Պէպէրայ։ Բն· 4.000։

Բ· ԿՈՄՍՈՒԹԻՒՆ ԱՌՆՇԴԱՏԱՑ· Ցորում

ԱՌՆՇԴԱՏ (Arnstadt)· — Ամրոցանիստ կոմսին, ունի հոյակապ եկեղեցի մի և մարզատուն· սորա վաճառականութիւն մեծ է ցորենոյ։ Բն· 5.000։

Պրայթենպախ (Breitenbach)· — Ընտանի են սորա գործարանք յախճապակւոյ և երաժշտական գործեաց։ Բն· 2,600։

Բ· ՇՈՒԱՐՅՊՈՒՐԿ-ՌՈՒԻՏՈԼՇԴԱՏ

778· Բնակիչք սորա լութերականք են աղանդով և հաշուին իբր 72,000։ Հասք պետութեանն իբր 600,000 ֆրանգք, ծախք 550,000, պարտք 250,000· զորք 809։ — Ցերկուս տերութիւնս բաժանի և սա՝

Ա· ՎԷՐԻՆ ՏԷՐՈՒԹԻՒՆ կամ ՌՈՒԻՏՈԼՇԴԱՏ· Ցորում է քաղաքն համանուն

ՌՈՒԻՏՈԼՇԴԱՏ (Rudolstadt)· — Որ ունի տուն պատկերաց և անդրեաց, Թանգարան բնական պատմութեան, և այլն։ Բն· 5,000։

Բ· ՍՏՈՐԻՆ ՏԷՐՈՒԹԻՒՆ կամ ՖՐԱՆԿՆՀԱՒՋԷՆ· Ցորում է

ՖՐԱՆԿՆՀԱՒՋԷՆ (Frankenhausen)· — Ի վերոյ Վիբրեբայ· մերձ՛ի սա են հանքք ածխոյ։ Բնակիչք 5.000։

ԺԱԹ. Ի. ԻԿ. ԴԻՍՈՒԹԻՒՆԻՔ ԱՆՀԱԼԴԱՅ

779. Լիովին ազատ դիսուրթիւնք են Անհալդ. Տէսսաւ, Պէռնպուրկ և Գւոթլէն, շրջափակեալք ի գաւառաց Բրունսիոյ. գէպքն էլպա, Սաալ և Մուլտա անցանէն ընդ նա. մի միայն բարձրաւանդակ է նորա ի Հարց, այլն ամենայն գաշտայինն է և բարեբեր, մանաւանդ ափունք էլպայ յահեկէ, զի յայնկոյսն աւազախառն է երկիրն և երիզուտ. ի մասին անդ Հարցայ գտանի երկաթ և կապար և արծաթ. — Տուն Անհալտայ մի ի հնագոյն իշխանութեանցն է Գերմանիոյ, որ յԱԲ դարու անուամբ տան Ասկանիոյ՝ տիրեր և դքսութեան Սաքսոնիոյ և Պրանտենպուրգայ. յորում ժամանակի երկաթ և բաժանուին տանին Սաքսոնիոյ ի տանէն Անհալտայ։

Ա. ԱՆՀԱԼԴ ՏԷՍՍԱՒ

780. Որոյ տարածութիւն է 46 փարսախ քառ. երկիրն անտառային է. բն. 65,000, յառաջագէմք ի քաղաքավարութեան. Հասք պետութեանն իբր 2,200,000 ֆր. Նոյնչափ և ծախք. պարտք 3,000,000։

ՏԷՍՍԱՒ (Dessau). — Ի վերայ Մուլտայ, փարսախաւ հեռի ի ձախմէ էլպայ, գլխաւոր քաղաք իշխանութեան, ունի բարեկարգ շինուածս ի միջի և ի սահմանս իւր, կրթարանս և տունս մարգասիրութեան։ Ասա ծնաւ Մենտելսոն հրեայ իմաստասէր և գերմանացի մատենագիր։ Բն. 13,000։

ՎԷՕՐԼԻՑ (Woerlitz). — Երիւք փարսախաւք հեռի ի Տէսսաւայ, ունի պարտէզ մի անուանի գեղեցկութեամբ. բն. 2,000։

ԶԵՐԲՏ (Zerbst). — Յայնմէ էլպայ, ունի վարժարան մեծ և զաւեան վերին բողոքից տերութեանցն Շուարցպուրգիայ և Անհալտայ։ Այս քաղաք երբեմն որիշ դքսութիւն էր Անհալդ Զերբսդի անուն. ասոտի էր կատարեալ Բ կայսրուհի Ռուսաց։ Բնակիչք 10,000։

Բ. ԱՆՀԱԼԴ ՊԷՌՆՊՈՒՐԿ

781. Տարածութիւն 45 փարսախ քառ. Բնակիչք 51,000։ Այս գաւառ կայ ի կիրճս անդ Հարցայ ուր բնակեն 20,000 մարդկան. ունի հանքս և փայտ անտառաւ։ Հասք պետութեանն իբր 2 միլիոն ֆր. Նոյնչափ և ծախք. իսկ պարտք իբրև 5 միլիոն։

ՊԷՌՆՊՈՒՐԿ (Bernbourg). — Առ եզր Սաալայ, գլխաւոր քաղաք։ Բն. 5,000։

ՊԱԼԼԱՆՏԱԷԴԹ (Ballenstaedt). — Ի Հարց, իշխանական։ Բն. 4,500։

Գ. ԱՆՀԱԼԴ ԳՒՈԹԷՆ

782. Տարածութիւն 43 փարսախ քառ. Բնակիչք 44,000։ Հասք պետութեանն իբրև 1 միլիոն ֆրանգք։

ԳՒՈԹԷՆ (Koethen). — Գլ. ր. առ Նիթայ (Ziethe)։ Բն. 6,500։

Դքսիցն Տէսսաւայ և Գւոթլէնայ են կալուածք ի Շլեզուա Բրունսիոյ, ընդ իւրաքանչիւրում թագաւորին։ Բնակիչք երեցուն ևս դքսութեանցս նորազանգք են. 2,500 հրեայք գոն ի նոսա, և իբր 2,000 կաթոլիկկեայք։

ԻՆ· ՀԷՍՍԷ ԳԱՍՍԷԼ

ԿԱՄ

ԿԱՅՍՐԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՀԷՍՍԵԱՅ

783· Սահմանք Հէսսէ Գասսէլայ, որ և Ասսիա ըստ իւսլականին՝ ի Բրուսիա, Հաննովէր, դքսու. Թիւնք Սաքսոնիոյ, Նասսաու, և այլն։ Փոքրագոյն 577 են տարածութեանն երկրին· բազմութիւնն անուանի թուբինկայ և Վեսթերվալտայ տարածեալ յաշխարհի սուտ գանազան անուամբք՝ լերանցին յարգարեն գնա· ուն դեսս ի հիւսիսոյ զՀեսէր, զԲուլտա՝ յոր խառնի Էսթեր, և զՀերթա· կակ ի հարաւոյ զՄայն։ Պլմանն ցերմին է և երկիրն քարուտ, բարւոք ի մնուդ պահանջոց այլ ոչ ի մշակութիւն· սակայն լինի անդ ցորեան բաւական ի պէտս բնակչացն, վուշ, կանեփ, ծխախոտ, պտուղ և գինի ի Հանաու· անասուս մեծամեծս ունի, բուն երկամեղ, գոռ, արծաթ, և առատ քան զսուսս գեանձուխ թիանեղոյ, որբէք ևս ազահանք· վաճառաշահք են քաղաքքն Գասսէլ և Հանաու· ոսոպնակութիւն հասարակ է ամենայն քաղաքաց։

784· Ի բնակիչն որք են առաւել քան զ760,000 իւր 460,000 կաթլիականք են, լութերականք 180,000, կամուսղիկեաք 110,000 և 10,000 Հրեայք· ամենքին գերմանացի ազգաւ, միայն 3,000 գաղղիացիք դոն ի Նոսա ի վաթսունդ և ևս ԺԴ· Լուգովիկոսիս· ի հրամանագ կրթութեան հաւասար է սահմանակից պետութեանցն· Հզօրք և կորովիք են Հէսսացիք սեբեամբք ի Կադուս ազգէ, զորոց զօրաց առնեն Հռոմ մայելեք· երկիր նոցա երբեմն մասն գաղութեան Ֆրանգոնիոյ, ապա Թուրինկիոյ, վոխնեցաւ յիշխանութիւն մարզպետութեան կամ Լանտկրաւի յԱԳ դարս· ի ձեռն Էնրիկոսի Պրապանդայ, որ և արմատ առնին Հէսսայ· Ֆիլիպպոս Վեհանձն ի տանէ առ ոտ շառաւեղալ ի ԺՉ դարս պաշտպան եկաց Ռոբաղանգին և ի կատարս արկաւ ի Ե Կարոլոսէ, նա հիմնեաց զհամալսարանն Մարպուրկիոյ· առ որդւոջ նորա եղեն բաժանմունք սերունդեանն և որոշեցան երեքին սերունդքն որք և ցարդ տիրեն ի Հեսսէ· Մարզկեան Գասսէլայ կոչեցաւ Կայսրընտիր ի 1803 և հաստատեցաւ ի Նմին պատուի ի 1813, յորժամ անդրէն ի ձեռս երէց զաւակաց տերութեանն զանկեալն յայլոց ձեռս առ Կարոլէնեան։ Յամին 1850 իսկ ուժգնացաւ աշխարհն ի հակառակութենէ ժողովրդեան ընդ պաշտօնեայսն՝ վասն ծանրութեան հարկաց· և միջնորդութեամբ Աւստրիացոց հանդարտեցաւ։

Վարչութիւն է միապետական սպայնաւոր, միավառնէին։ Հաւք պետութեան են իբր 44 միլիոն ֆր· պարտք երկր մասամբ նուազ։ Ի չորս գաւառս բաժանի ըստ վարչութեան, որք են Հէսսէ Նասրեան և Շաումպուրկ, Հէսսէ Վերին, Ֆուլտա և Հանաու։

785· ԳԱՍՍԷԼ (Cassel)· — Մայրաքաղաք ի Նասրին Հէսսէ, առ Ֆուլտայ, երեւելի վանդեղկեան գրիւն ի բարձրաբլակի, և վանն հայկապ շինուածովն և հրապարակաց, յորս անուանի է հրապարակն Ֆրեդերիքեան 3,000 ոտնաչափ չուրջանակաւ, յորոյ ի միջի կայ անդրի մարզկեան, և ձեմելիք ասսի և անտի, և գնովաւ պալատ կայսրընտրին, եկեղեցին ուղղափառաց· մուսեան Հոմ՝ յորում և մատենադարան 70,000 գրոց, երբեմն ընդ ձեռամբ Եոհաննու Միւլլէրոյ· Գադդենպուրգի պարտիք իշխանազանց՝ որոյ չէ ևս աւարտեալ է շինութիւն· տուն պատկերաց իբրև 1,200 նկարուց, զինարանն, տուն տաճնից, դիսանոցն և անկիլանոյն մեծ· կան և այլ բազում պալատք ի Գասսէլ տունք զբօսանաց և գրասէրք նարնջենեաց և պարտիզք յամենայն կողմանս քաղաքին· կամարքէն քարաշէն՝ որ զերկոսին մասունս քաղաքին՝ զՀինն և զՆորն միակէզ· անուանի են և կրճպարանքն և տունք մարդասիրութեան, որպէս Նեմարանն արուեստից, լինկան և գպրոց հասարակ արուեստից· Ճարտար են արուեստաւորք Գասսէլայ ի յօրինուածս զգեստից և պատճանաց· Բն· 40,000։

786· Փարսախաս հեռի ի մայրաքաղաքէն առ ոտամբ լերին միոյ կայ Վ իչելըս-հէօհէ (Wilhelms-hoche) ա· մարասուն իշխանացն, որ ունի պարտէզ հրաշակերտ յարդարեալ ջրվիժիւք և շարժուածոք գեղեցիկ քան զվերոյլ ի տնպարանս բնականին, վանն որոյ յանուն իւր կոչեաց զայն Կարոլեան առ Թագաւորութենէն Վեսթֆալիոյ· սահմանք ջուրցն ձգին 3,900 ոտնաչափ, ի 40 ոտնաչափ լայնութեան ի զառ ի վայր լերինն, և չուրեան մի բարձրացուցանէ զջուրն 190 ոտնաչափ· կայ անդ և հայկապ բուրգն, զոր պյշտիքն ամենքեանցմէ սկսաւ շինել Մարզկեան Կարոլոս ի սկիզբն ԺԸ դարու։

787· ՄԱՐԳՈՒՐԳ (Marbourg)· ԳԼ· Բ· Վերին


Հէսսեայ առ Լահնայ՝ի գետ՝ի կող. լերին. համալսարանն հիմնեալ՝ի 1527 ունի մատենադարան 100,000 մատենից և ուսումնարանս երեսելիս, յորս նշանաւոր են բժշկարանքն. յեկեղեցւոջ Ս. եղիսաբեթայ՝ ընդ մարզպետին Թուրինգիոյ՝ նշանաւոր է գամարն նորին. Լուտեր և Զուինգղիոս՝ի քաղաքի աստ խոսեցան վասն բանի խորհրդոյն Տեղագրութեան: Բնակ. կիւք 8,000:

Հանաու (Hanau). — Գ. Ռ. համանուն գաւառին՝ի խառնուրդս Գինդիկայ և Մայնայ՝ի բարերիս վճռակի, անուանի քան զամենայն քաղաքս պետութեանն՝ի ձեռարուեստս. ունի գործարանս ատուէղէն, բամբակի և մետաքսեայ կերպասեաց, յախճապակի, գործածս ոսկերչի և արծաթի, և այլն: Ասա՝ի 1813 նաբոլէոն յաղթեաց Պաւարացւ: Բն. 18,000:

Կելնհաուսեն (Gelnhausen). — Քաղաք փոքրիկ ոչ ինչ կարի հեռի՝ի Նամանէ՝ի կղզւոջ միում Գինդիկայ՝ կան աւերակք պալատան Կարմրամօրուսն Փռեթերիկոսի. Բն. 4,000:

Ֆուլտա (Fulda). — Կա ամէն անուանակիր գեղատեսիլ, երբեմն աթոռ իշխանազուսն աբբայի, գլխաւոր քաղաք է մեծի գքսութեան Գուլտայ. յեպիսկոպոսանիստ եկեղեցւոջ անդ նորին կայ գերեզման Ս. Վոնիֆակիոսի աւետարանչին Գերմանիոյ ըզր Գրիգորիոս պապին յամին 755: Բն. 10,000:

Շմալկալդեն (Schmalkalden). — Ցանուսաին թուրինկայ ընդ մէջ կոթայ և Մայնինկիայ. աստ էր քանք Գերմանիոյ գաղն կաւեցին՝ի 1531 զդէմ ունելոյ կարոլոսի Ե: — Ի սահմանս սորա կան հանգք երկաթոյ և գարբնոցք: Բն. 6,000:



ԻԹ. ՄԵԾ ԴԵՍՈՒԹԻՒՆ

ՀԷՍՍԷ ՏԱՐՄՇԴԱՏԱՑ

782. Այսոքա մեծի գքսութեան Տարմշդատայ ընդարձակեցաւ՝ի 1803, և բաժանի յերկուս մասունս, այս է՝ի Հէսսէ վերին որ՝ի հիւսիսի, և՝ի Սգարքէնսլուրի հանգերձ Հաւնոսեանն Հէսսէ որ՝ի հարաւակողմն, որոց միահամուռ տարածութիւն է 425 վարս. քառ: Առաջինն որոյ սահմանակից են Հէսսէ կասլըլնաիը, Նասսաւ և Վեդֆալիա՝ ունի զքաղաքս մասունս լերանցն Գոհլեսպէրկ (Թաշնոյ լեռան), Դաւնոս և Վեգբրվալտ, առագեալ՝ի Լահնայ և Գուլտայ. կլիմայն ցրտին և հող քարուտ, բայց միայն Վեգեբաւիս բարերիք է՝ի նմա: Երկրորդն Հաւնոս գեռով յերկուս բաժանեալ՝ սահմանս ունի զնասաւ, զՀէսսէ Գասսէլ և զմիջակից նոցին պետութիւնս. կլիմայ նորս ոչ յոյժ ցրտին է, և հողն բուսաբեր որպէս զնասաւական Գերմանիոյ. յաջմէ գետոյն կան ծառք պտղաբերք և՝ի ձախմէ այրեք որ բերին զՀաւնոսեանն գինի. և ունին ԲՄՀԵՐ ոչ սակաւ. յարեւելից գաւառին Սգարքէն պտղաբեր ձգին Օանենվալտ շարք լերանց, յորս մի միայն գտանի գազաքն բարձրացայր 2,000 ոտնաչափ. Մայն և նէքար անցանեն զսահմանք գաւառիս:

Ի բարգաւաճութեան գալոյ[ե]նց Տարմշդատ զուգահաւասար է մերձաւոր պետութեանցն. մշակութիւն, գարման պատճառաց և ճարտարութիւն ոչ սակաւ զարգանան՝ի նմա:

789. Ժողովուրդն ազգաւ Գերմանացի 860,000 մարդկան, հիմն լուսերականք, 220,000 կաթոլիկ կեսք, և իբր 170,000 այլ նորաղանդք և 30,000 Հրեայք: Պետութիւնն պայմանաւոր միապետական է, և կրկին ատեանս ունի: Հաւք պետութեանն են իբր 18 միլիոն ֆիորնգք:

Յերիս գաւառս բաժանի և ըստ վարչութեան ըստ վերոյիշեալ կերպիւ, ՝ի Սգարքէնպուրկ, ՝ի Հէսսէ Հաւնոսեան և՝ի Հէսսէ Վերին:

790. Ա. ՍԳԱՐՔԷՆՊՈՒՐԿ. Որ Թարգմանի՝ Քաղաք քաղաք:

ՏԱՐՄՇԴԱՏ (Darmstadt). — Մայրաքաղաք գեղեցիկ նորաշէն յատակատ գաշտի, ունի հրապարակս և տունս վայելուչս, փողոցս նորաշէնս և ուղղաձիգս, գրատուն 120,000 մատենից. Թատերգարան ազնուական, վաճառատուն և գպրոց գործնական գիտութեանց. և շուրջ երկաթի մինչև՝ի Հեբրենհայմ: Բն. 30,000:

Օֆֆենպուրգ (Offenbach). — Ի վերայ Մայնայ, ազնուանի՝ի ճարտարութեան և՝ի վաճառաշահութեան, որք օրըստօրէ բարգաւանձն՝ի նուսալել Քրիստիոնեայ յորմէ փարախատ ևեթ կայ հեռի. անուանի են՝ի սմա գործարանքն ծխախոտի, կառաց, զարգուց, խաղալկաց և որ այլ այսոսիսիք: Բն. 12,000:

Վիմրհեն (Wimpfen). — Կա նէքարայ՝ի սմա

գաւառ ազահանք մի՛ ի 1818, յորմէ հանեն՛ ի տարւոջ 130,000 կենդինար աղի։ Բն. 2,600։

Էրպախ (Erbach)։ — Ունի դղեակ մի յորում պահին զինք և զգահէ ականաւոր արանց ոմանց միջին դարու։ Բն. 2,000։

791. Բ. ՀԷՍՍԷ ՀՈՒԵՆՈՍԵԱՆ. Յորում նշանաւոր է

ՄԱՑԵՆՑԱ կամ Մայնց (Mainz, Մոգունտիա կոն)։ — Գլխաւոր յարմրութիւնս Գերմանական Դաշնակցութեան, յաին Հաւնոսի գէմ յանդիման խառ-



Մայնցա

նման նորա ընդ Մայնայ, քաղաք հին և նրբափողոց չնեալ՛ ի Դրուսոսէ, որ էր եղբայր Տիբերեայ կայսեր, սա ընծայեն և զհռովմայեցի ջրանցան, որ աւերակք ևեթ մնան՛ ի նմա. վաճառականութիւն նորա բազագաճեալ յաւուրս Հաւնոսեան դաշնակցութեանն՝ նուաղեցաւ առ խռովութեամբ Գաղղից, սակայն և այժմ երևելի է յետ Գոլոնեայ՛ ի սահմանս Հաւնոսի։ Ի չինուածս քաղաքիս անուանի են մայր եկեղեցին, մի՛ ի վեցից աշտարակաց նորա բարձր է ոտնաչափս 390, եկեղեցի Ս. Խդնատիոսի, ապարանք մեծի դքսին առ եզերբ Հաւնոսի երբեմն աթոռ Տեւտոնեան կարգին, զինարանն, և այլն. հրաշարան զինուց, հրացարան Կուդենմպերկ. հաստատուն քաղաքիս հիմնեալ՛ ի 1477՝ բարձաւ՛ ի 1802. ՛ի գրատանն բաց՛ ի 20,000 մատենից կան հաւաքմունք հռովմայեցի հնութենից. արքեպիսկոպոս կայսրընտիր նստէր աստ, այլ՛ ի սկզբան դարուս եպիսկոպոս հաստատեցաւ ընդ նորա, ընդ որով է ուսումնարան կղերաց և վարժարան մի։ Ազան հոյակապ կանգնեալ է աստ Կուդենմպերկայ, որ ծնաւ՛ ի սմին, և հնարեաց զտպագրութիւն՛ ի 1440 ի Սգերազուբկ քաղաքի։ Բն. 35,000։

792. Գասսել (Cassel)։ — Դէմ յանդիման Մայննայ փոքրիկ բերդաքաղաք հզօր որ՛ ի կարգս ամրութեանց Մայնցայ գասի. ՛ի սմա՛ ի վերայ Հաւնոսի կայ նաւահամուրջ երկայն 1,800 ոտս։ Բնակիք 2,500։

791. Բ. ՀԷՍՍԷ ՀՈՒԵՆՈՍԵԱՆ. Յորում նշանաւոր է

ՄԱՑԵՆՑԱ կամ Մայնց (Mainz, Մոգունտիա կոն)։ — Գլխաւոր յարմրութիւնս Գերմանական Դաշնակցութեան, յաին Հաւնոսի գէմ յանդիման խառնակ ընդ Մայնայ, քաղաք հին և նրբափողոց չնեալ՛ ի Դրուսոսէ, որ էր եղբայր Տիբերեայ կայսեր, սա ընծայեն և զհռովմայեցի ջրանցան, որ աւերակք ևեթ մնան՛ ի նմա. վաճառականութիւն նորա բազագաճեալ յաւուրս Հաւնոսեան դաշնակցութեանն՝ նուաղեցաւ առ խռովութեամբ Գաղղից, սակայն և այժմ երևելի է յետ Գոլոնեայ՛ ի սահմանս Հաւնոսի։ Ի չինուածս քաղաքիս անուանի են մայր եկեղեցին, մի՛ ի վեցից աշտարակաց նորա բարձր է ոտնաչափս 390, եկեղեցի Ս. Խդնատիոսի, ապարանք մեծի դքսին առ եզերբ Հաւնոսի երբեմն աթոռ Տեւտոնեան կարգին, զինարանն, և այլն. հրաշարան զինուց, հրացարան Կուդենմպերկ. հաստատուն քաղաքիս հիմնեալ՛ ի 1477՝ բարձաւ՛ ի 1802. ՛ի գրատանն բաց՛ ի 20,000 մատենից կան հաւաքմունք հռովմայեցի հնութենից. արքեպիսկոպոս կայսրընտիր նստէր աստ, այլ՛ ի սկզբան դարուս եպիսկոպոս հաստատեցաւ ընդ նորա, ընդ որով է ուսումնարան կղերաց և վարժարան մի։ Ազան հոյակապ կանգնեալ է աստ Կուդենմպերկայ, որ ծնաւ՛ ի սմին, և հնարեաց զտպագրութիւն՛ ի 1440 ի Սգերազուբկ քաղաքի։ Բն. 35,000։

792. Գասսել (Cassel)։ — Դէմ յանդիման Մայննայ փոքրիկ բերդաքաղաք հզօր որ՛ ի կարգս ամրութեանց Մայնցայ գասի. ՛ի սմա՛ ի վերայ Հաւնոսի կայ նաւահամուրջ երկայն 1,800 ոտս։ Բնակիք 2,500։

ՊԻՆԿԷՆ (Bingen)։ — Առ սուլա ձգի Ռայնկաւ հովտ զուարճալի փարոսաս վեց յերկայնութիւն, յորում կան աւերակք հին գղեկաց, և այգիք պտուղաբեր կանք։ Բն. 5,000։ — Պինկեր-լոխ (Binger-loch) կերդ գոգաձեալ լերամբք Պինկերայ՝ արգել վիներ նաւարկութեան անտանելիս յառաջ քան զերեսուն ամ, վասն որոյ խլեցին բարձին զայն։

ՎՈՐՄՍ (Worms)։ — Ի սահմանս իշխանութեան Պալատինայ կառուցեալ՛ ի Հռովմայեցւոց, անուանի՛ ի միջին դարս և ազատ քաղաք, յորում ժամանակի վեց բիւր բնակչաց կէին՛ ի նմա. գեղեցիկ է մայր եկեղեցին հիմնեալ յԸ դարու։ Ասա եղև ժողովն Վորմայ՛ ի 1521, որ վտարեաց զԼութեր՛ ի 1689՛ ի պատերազմին հրկէզ եղև քաղաքս՛ ի Գաղղիացւոց։ Բնակիք 9,000։

793. Գ. ՀԷՍՍԷ-ՎԵՐԻՆ.

ԿԻՍՍԷՆ (Giessen)։ — Առ լայնայ, ունի հաստատուն հիմնեալ՛ ի 1607, յոր համարեակք 300 պատրաստին, և այլ վարժարանս։ Բն. 8,000։

Կրոս-Լինտեն (Gros-Linden)։ — Ասան՛ ի տեղւոջ համանուն քաղաքի կործանելոյ յամին 1248։ Բնակիք 1,000։

ՊԻՏԵՆՏՈՖ (Biedenkoff)։ — Առ ոտս լերին, յորում ունի երկաթահանս, և ոստայնանկս։ Բն. 4,000։

ՊԻՒՏԻՆԳԷՆ (Büdingen)։ — Վաճառաշատ և բարգաւաճ քաղաք փոքր։ Բն. 3,000։

ԻԹ. ՄԱՐԶՊԵՏՈՒԹԻՒՆ

ՀԷՍՍԷ—ՀՈՄՊՈՒՐԿ

794. Ի ՏԱՐՄՇՏԱՏ հաստատեալ այս տոհմին Հէսսեայ՝ ի 1817 եմուտ ի Դաշնակցութիւնն. և պատուանուն իշխանութեանն կոչի Լանտգրաւ, այն է Մարզպետութիւն։ Կրկին մասունք են երկրին, իշխանութիւնն Հոմպուրկ՝ գետառ փոքրիկ ընդ մէջ Հէսսեայ և Կասսաւայ, և իշխանութիւնն Մայսէն-Հայմ՝ ընդ մէջ Հռենոսեան գետառայ Բրուսիոյ և Պաւիերայ, ընդ որ անցանէ Հոմպսբիւք լեառն, և անդ վիհին գետնածուխ, երկաթ և գինի. միաշտ. մուտ. փարս. քառ. 24, և բնակիչք 25,000 նորաշէնդք, 3,000 միայն կաթոլիկեայք։ Պետութիւնն միապետական է, այլ ունի տաճան նուիրակաց հաստատեալ ի 1850։ Հասք երր 650,000 ֆրանգք. զորք 488։

ՀՈՄՊՈՒՐԿ (Hombourg). — Գլ. Ք. իշխանական. անուանի է ի նմա աշտարակն Սպիտակ Ձայն՝ նեալ ի գղեկին. և ճեմարուածք վիհուածոց Դրուսոսի և Գերմանիկոսի։ Բն. 3,800։

ՄԵՍՍԷՆՀԵՄ (Meissenheim). — Ձ.ԼՂ. Կանտոն. Բն. 1,800։

Մարզպետին Հոմպուրկայ են կալուածք 22 գիւղորիից ի Սաքսոնեան գետառս Բրուսիոյ։

ԻԲ. ԴՔՍՈՒԹԻՒՆ ՆԱՍՍԱՒԱՅ

795. ԱՌԱՄԱՆՔ կասսաւայ են Բրուսիա Հռենոսեան, Հէսսէ և Ֆրանքֆորդ-Մայնայ, 250 փարսախ է տարածութիւն երկրին, որ լեռնային է. ի հիւսիսակողմն ունի զՎէսթերվալս լերինս, ի հարաւոյ զԴասնոս 2,600 ոտնաչափ բարձր, և ի սմա է հովիտն Ռայնկաւոյ մերձ ի Հռենոս. յարևմտից և ի հարաւոյ սահմանեն Հռենոս և Մայն, դարձեալ և Լահն որ ունի դաշտ գեղջկիկ յոյժ։ Թէպէտ և հիւսիսային գերմանիոյ մասն է կասսաւ, բայց կլիմայն՝ մանաւանդ յահուսնս գեառցն՝ բարեխառն է որպէս զհարաւային մասանցն. ունի գինի Հռենոսի ամենից և պտուղ շատ. ի լեռնակողմանն կան անասունք մեծամեծք, ունին բուս արծաթոյ, երկաթոյ, կապարի, ածխոյ և ագռի ազգի քարանց. և ջերմուկս երբէք քան անուանիս քան զամենայն տեղս Լեռնոյ։

796. Ի բնակիչսն՝ որ են իբր 430,000, գոն 225,000 նորաշէնդք աւետարանականք, 198,000 ուղղափառք, և 7,000 հրեայք։ Հրամանատրութիւն կրթութեան ծաւալեալ է ընդ ամենայն պետութիւնն։ — Զարմ գլխոյն շահաւիղեալ է ի հին տոհմէ Ֆրանգոնեան տան, որ յԱԳ. դարու յերկուս զատաւ. ի կրսերոյն շառաւիղեցան Թագաւորք Հոլանտայ, և յերիցուն դուքս Նասսաւայ։ Վարչութիւնն միապետական է պայմանաւոր կրկին խորհրդարանաւք։ Հասք պետութեանն 7 միլիոն ֆր. Ծախք առաւել քան զայն. զորք 7,317։ — Ըստ քաղաքականին ի 28 վիճակս կամ Պայուրթիւնս բաժանի Կասսաւ, որք են. Պրաւսպահ, Տից, Տիլենպուրկ, Իլդվիլլէ, Հախենպուրկ, Հասսմար, Հերսրոտն, Հոհհայմ, Հէխոզ, Խոշտայն, Քէմնիից, Դայն, Լանկենշվալպահ, Լիմպուրկ, Մարբնպուրկ, Մոնդապոր, Նասսաւ, Նասսէդգէն, Ոայհելշտայմ, Ռհենհերտոս, Ռուտեշտայմ, Րուէքհել, Ս. Կոաբհաուզէն, Սէլտէբս, Ուզինկհէն, Վալքրոտ, Վէհհէն, Վայպուրկ, Վիլպպահէն։

797. ՎԻՍՊԱՆԷՆ (Wiesbaden). — Մայրաքա-

ղաք, ի գեղեցիկ վիճակի, փարախաւոր երկու հեռախ ի Մայենցայ. անուանի ընդ բոլոր Եւրոպա վասն ծծմբային ախտահալած ջրոյն, ուր յաճախէ գալ բազմութիւն մարդկան ի բաղանիս բժշկութեան, որ Քուր-Սաալ կոչի. հոյակապ են պանդոկն Զօրից Հզանակաց, Թէատրոն, ամրոցն, մատենադարանն, և պալատք որ ի նմա: Բն. 14,000: — Արժանի են յիշատակաց և հռովմէական հնութիւնքն որ ի սահմանս քաղաքիս. որոյ գերեզմանաց նորա որ յարեւելից կողմ կուսէ 650 ոտք յերկայնութիւն, 20 ի բարձրութիւն և 10 ի Թանձրութիւն հայկեհնաւէր (հեթանոսաց որոյն) կոչեցեալ, մասն է ամրոցին զոր կանգնեաց Դրուսոս. Ֆահլիրապէն՝ որ է պատուէշ և խրամ գործեալ ի Հռովմէացւոց, որ ի Գերմանիայ յափանց Դանուբայ ձգի մինչև ի Վիք և Տուրդետ որ ի Հոլանտա. հոլադամբանք՝ յորս դառնին սա-

փոքք, անօթք արտաստաց, նիզակք, կանթեղք, դրոմք, և այլն, ոչ Հռովմայեցւոց և Գերմանացւոց միայն, այլ և անծանօթ ժողովգեան. և աւերակք բազում ամրոցաց և գղեկաց:

798. ՊԻՊԵՐԻՒ կամ ՊԻՊՐԻՒ (Biberich). — Ի Հռհենոսի, ի սմա է գղեակ գքոին: Բն. 3,500:

Ընտանի են և ջուրք Փաշինկենայ, Սէլցերսայ, Շալպախայ, Շանկենպատայ, Խմայ, Կայլնաւայ, Վայլպախայ. Սելցերս կամ Սելց ամի ամի 200,000 ֆր. շահ բերէ, զի ի ջուր նորա առաքին մինչև ի Հնդկաստան: Հռենոսեանին գինի ընծիր լինի ի Յովհաննիսպերկ գեղջ, որ ունի այգեստան շատ և գեղական մի. նոյնպես և ի Ռիւեհեաչայ. Բն. 2,500: Կայսերհայր, 2,500. Մարքեպուրգ, Հռքայր. ամենքեքն սոքա բաց ի Հռքհայրայ են ի հովնին Հայնկաս:

ԻՕ—ԻԹ. ԶՈՐԵՔԻՆ ԱԶԱՏ ԿԱՂԱՔՔ

799. Ա ԽԶԵՒ ցամն 1803 ի Գերմանիա կային 51 աղատ քաղաքք սեփական օրինօք քաղաքավարեալք որք միայն վճռոյ դաշնակցութեանն անապէն. որք և բաղում անգամ դաշնադիր եղեալ ընդ միմեանս ի միջին դարս գործեցին բազում ինչ ի նպաստ ազատութեան հնդկոց, և ի բարգաւաճութիւն արհեստից և ուսման. այժմ չորք ևեթ մնացին յաղագս քաղքացի, այսինքն են Ֆրանկֆորդ-Մայնայ, Բրեմա, Համպուրգ և Լիւպեք, երեքին յետինքս վաճառակից կոչին:

Ս. Ֆրանկֆորդ

800. Ֆրանկֆորդայ երկրին 7 փարախ տարածութիւն է և 71,000 բնակիչք, յորս 7,000 ուղղափառք, նոյնչափ և Հրեայք. անկանի սա ընդ մէջ հեսեայ և Նասսաւայ. վարչութիւնն խառն է սակաւ. պետական և ռամկավարական, սահմանադրութիւնն նոր հաստատել կամեցան ի հերուն, հապ պետութեանն են այժմ իբր 5 միլիոն ֆր. ծախք աւելն ևս. պարտք իբր 14 միլիոն. ղրքք 1024 այր: Գաղափ մի և 8 գեօղք են պետութեանն:

ՖՐԱՆԿՖՈՐԴ-ՍԱՅՆԱՅ (Frankfurt-am-Main). — Օքի կայ յաջում գեօղս՝ մի է ի հնագոյն քաղաքացն Գերմանիոյ, մասն մի նորա մեծին և անհուվի փղոցաք, և մասն մի նորագէն գեղեցիկ, շուրջ պատեալ պարսպիւքք. ի չինուածան գվեստրք են՝ հաստարակաց ժողովարանն Ռեմեր, յորում կան կենդանագիրք ամենայն կայսերաց Գերմանիոյ և բնա-

գերն Ռոկի անուանեալ հրովարտակին Կարոլոսի Դ 1356. մայր եկեղեցին ուր օծանէին կայսերք, պալատ իշխանին Թուր և Դաքսիսայ. ժողովեալ Գերմանական Դաշնակցութեան, ուր և յամին 1848 ժողով գումարեցաւ նախագահութեամբ Արքիդքսոյն Յովհաննու եղբօր Հաւոյն կայսերն Աւստրիոյ՝ զոր ՏեղակալՀ անուանեցին ինքնակալութեան. մատենադարան 100,000 գրոք, խաղեաղ, անկէլանօցի Սենքենպերկեայ հանգերձ պարսպիւք անկաքանութեան և գաղձաւ անդամահատութեան. ուսուցիարան Մգհաէլյ՝ ուր կան հատաքանդաք ձեռագործոց, գպրոց գեղարուեստից: Կրթանոցք և մարքասրութեան տունք բազում են ի Ֆրանկֆորդ. զոր օրինակ՝ գպրոցն բժշկութեան, Թանգարան բնական պատմութեան, գպրոց և վարժարան գործնական գիտութեանց, կրճարան ինչ և համերց, և կենդան-

օդուստ ընկերութիւնք ոչ սակաւ։ Ի վաճառականութեան երևելի է յոյժ ի Գերմանիա, անուանի են և ծանուածառքն վերացամնեայք թէպետ ոչ որպէս յառաջն. այլ վաճառք փոխանակագրոց լինին մինչև ցարգ ամ ամի իբր 140 միլիոն ֆիորինաց։ Ասա ժողով արար բաղում ազգաց մեծն Կարոլոս յամին 794. հայրենիք է քաղաքս կնէքեի որ ծնաւ ի 1749. Նապոլէոն ի 1806 կարգեաց գիմրանքիարդ ի մեծ գերմանութիւն։ — Ընչական վայրք քաղաքին բարեբերք և զուարճալիք են և ճանապարհք յարգաբերալք ձգին ի բազում քաղաքս. նշանաւոր են երկաճանուին որ տանի ի Վիզպատեն և ի Մայենցա. և այլք ձգեալք ի Գասսել, Մանհայմ, և այլն։

Բ. Պրեմա

801. Պրեմա հասարակապետութիւն է ընդ մէջ Հանովեր և Օլտենպուրկայ, 10 փարսախ քառակուսի իբր 78,000 լուսերական բնակչօք, յորս իբր 2,000 կաթոլիկկնեայք. յամին 1850 հաստատեցաւ նոր սահմանագրութիւն և առաքեալ երկու, ծերակուտին՝ 16 անդամ և ներկայաց 300ոց. Հասք պետութեանն իբր 3 միլիոն ֆր. Ծախք աւելի կա։ Ցամին 1850՝ էին Պրեմայ 236 նաւք վաճառաբերք։

802. ՊՐԵՄԱՆ կամ Պրեմ (Brema). — Քաղաք կառուցեալ առ կղզի Վէսերայ 25 փարսախաս հեռի ի Հիւսիսոյ Ծովուն. չէ բարեչէն այլ վայելչացեալ գեղեցիկ ձեմելիօք և անուանի վասն վաճառականութեան. զսա մեծն Կարոլոս կառոյց և կարգեաց ի թեմ եպիսկոպոսի յամին 788. ի չինուածան երևելի է մայր եկեղեցին, ընդ որով անապական պահին գիւտուքը ի կապարեայ անուանեալ դամբարանս։ Ի կրօնքս թաղանան գլխաւորք են վարժարանն, գպրոց Ծովային վաճառականութեան, դիտարանն՝ զոր վայելացոյց Օլպերս աստղաբաշխ ի սկիզբն դարուս. ունի գոր. Ծարանս շաքարի, Ծխամաքսի, սալամակագործի։ Կաւք մեծամեծք գան ի Նաւահանգիստն Պրեմք–Հաֆէն, որ 12 փարսախաս հեռի է ի Պրեմայ, ի վիճակի անդ փոքրք զոր տերութիւնն Հանովերայ ի 1827 եա ի Պրեմա. յամին իբր 1000–1200 նաւք վաճառաբերք գան բերելով վաճառս 45–50 միլիոն ֆր. և տանին վաճառս 30 միլիոն ֆր. տուրհատ վաճառականութիւն Պրեմայ է ընդ Անգլոյ և ընդ Հնդկաց։ Բնակիչք 55,000։ Երկաճուղի ձգի ի Պրեմայ ցՀանովեր և Մինտէն։

Պրեմեր–Հաֆէն (Bremer–hafen). — Գեղեցիկ նաւահանգիստ։ Բն. 2,500։

Գ. Համպուրկ

803. Համպուրկ հասարակապետութիւն ընդ մէջ Հանովեր, Հոլշտայնայ և Ծովուն Հիւսիսոյ, 10 փարսախ քառակուսի, 190,000 լուսերական բնակչօք, 4,000 կաթոլիկկնեայք միայն և 8,000 Հրեայք. յորոց 150,000 ի քաղաքին և յերկոսին արուարձանս նորա, և 50,000 ի վիճակին։ Վարչութիւնն քան օրինաց հաստատից ի հերուն՝ ազատպետութիւն է 15 ծերոս. նեաց և 192 ատենաբանից, որք ընտրեն երիս ատենապետս ի գլուխ իշխանութեանն։ Հասք պետութեան 13 միլիոն ֆր. Ծախք աւելի քան զայն. պարտք իբր 60 միլիոն։

804. ՀԱՄՊՈՒՐԿ կամ Ամպուրկ (Hambourg). — Քաղաքն հեռի է ի Ծովէն Հիւսիսոյ 30 փարսախաս, յաջմէ Էլբայ և առաջին շահատան ի Գերմանիա, երեւելի և յայնոյն Եւրոպա։ Կարծի ի միջին կարգի հիմնեալ. յամին 1814 ի պատերազմն Գաղղիացւոց արեցաւ մասն մի քաղաքին, նոաղեցին բնակիչք և վաճառականութիւն, բայց միւսանգամ զարգացան յետ այնորիկ. կրկին հրաձարակ լեալ գրեամբ երիւք մասամբք յամին 1842, Յարաբերեալ թէպետ բնակչացն և օժանդակութեամբ Գերմանացւոց ի սակաւ ամս վերսին զարգարեցաւ. չինեցաւ և երկաճուղի ընդ Պերկորֆ՝ որ է վիճակ հասարապահուին Լիւբեքայ և Համպուրկայ յորմէ ձգի շոգեկառ մինչ ի Պերլին։ Քաղաքիք բաղկանի և գեղական Ալքեր գնան ընդ քաղաքն ունելով 80 կամ մոբրքս. Նորակերտ մասն քաղաքին բարեչէն է, և բարձրաբերձ տամբք. գլխաւորք ի չինուածան են և կեղեցի Ս. Միքայելի, որոյ է աշտարակ 402 ոտնաչափ բարձր, անկեալնացն ուր ամի ամի 4 կամ 5,000 ախտաժէտք մեռանին, որոնոց իբր 600 մանկանց. հրատարակն և Ժողովատեղի վաճառականաց, Թատրոն, կրճեարանք անուանիք, երկու վարժարանքն, գպրոցքն վիրաբուժութեան և անդամահատութեան, դեղատանութեան, ձեմարան վաճառականութեան, վարժարան գիտնոյութեան, կրճեարան խրից և համերգ. գիտարան, եօթն մատենագրանք հասարակաց. յորոց ի միում կան 200,000 հատորք գրոց, Ծոն պարտեզ բուսաբանութեան, հատաքիւնք ուսումնական նիւթոց, ընկերութիւն սուրբ գրոց, ընկերութիւն քա-

րոզաց և այլ մարդասիրական ընկերութիւնք։ Երկու նաւահանգիստք են Համպուրկայ յոր ի մակընթացութեան ծովուն գան և նաւք մեծամեծք անվնաս անդք ի բարձրակուտակ ալաղայն էլլայ, յորս գան ամի ամի բիւրք նաւուց. յամին 1850՝ նաւք վաճառաբաձք 4,050 մտին ի Համպուրկ, և ելին 4,120· ի ձեռն չգնեցուց լինի երթևեկ ի Լընդոն, Հուլ, Ամստերտամ, Հաւրը, Հասրպուրկ։ Տալու գաղղիացի զբաւալ ի 1814 կառուցեալ էր կամուրջ փայտեղէն ընդ Համպուրկ և ընդ Հասրպուրկ քաղաք Հանովրայ 14,394 ոտնաչափ երկայն, որ եկաց ցամին 1818։

Սահմանք Համպուրկայ ի հասարակի բարեբերք են. ի բերան Էլպայ ի ձախմէ կայ Գուքսհաֆիէն նաւահանգիստ և լապտեր, և բաղանիք ծովու, և բնակիչք 1,000։

803· Ցելերս Շէզվիկայ հանգէպ բերանոյ Էլպա, վէղեր և Ա յտեր գետոց, կայ Հելիոլանտ կղզի, որ է պարբեր 200 ոտնաչափ բարձր և է ի ձեռս Անգղիացոց· ունի աշտարակ կանթեղակիր, նաւահանգիստս երկուս և ամրութիւնս։ Բնակիչքն 4,200 հոսին գերիզմանց բարբառ և ունին օրէնս սեպհականս· սոքա առաջնորդեն նաւուց ընդ գժուարին անցս էլպայ։

Դ. Լիւպէք

806· Լիւպէք, ընդ մէջ Հոլշտայայ, Մէքլեմպուրկայ և Պալդիականին, 19 վարսախ քառակուսի, 55,000 լուծեբերական բնակչօք, ընդ որս խմս և զմանպերկոտիպայ· վարչութիւն սորա հասարակապետական է, 20 ատենակաք են ծերակուտին և 120 նուխ. բակք արուարձանեայց· հաւք պետութեանն են 1,600,000 ֆրանգք, նոյնքան և ծախք, իսկ պարտք զարգիս 25 միլիոն· զբօք 940 այր։

807· Լիւպէքի կամ Լիւպեկկէ (Lübeck)· — Վեց վարսախաւ հեռի ի Պալդիկ ծովէ առ ափն Դրաւայ նաւարկելի գետոյ, բարեշէն և երեսելի վան ծովային վաճառականութեան, երբեմն մայրաքաղաք վաճառականց դաշնագրութեանն, կառուցեալ ի բլրի, որոյ ստորեցին Գաղղիացիք յամին 1806· ի չինուածս նըշանաւոր են, մայր եկեղեցին և եկեղեցին Աստուածածնայ յորս կան յիշատակարանք ոչ սակաւ, ժողովարան հասարակաց, ուր պահին գիւանք վաճառականից գաշնագրութեանն· ունի վարժարան մի, գրատուն, յիմարանոց, ընկերութիւն մարդասիրական, գպրոցս նաւարկութեան, արհեստից, ուսուցչաց, դանձարան իմայութեան, հանգիստարան ճարտարութեան արհեստից։ Առևտուր վաճառականութեան քաղաքիս է ընդ պալդիական դաւառաց· բաղում նաւք են նորա, և ի նաւահանգիստն Դրաւ–Միւնտայ յաճախեն նաւք· չգնեաքն գնան ի Գոբենհակ և ի Բեգերսպուրկ, բն· 30.000։

Դրաւ–միւնդէ (Trave–münde)· — Ա՛ն Դրաւայ, ունի լապտեր և բաղանիս ծովու։ Բն· 2,000։



Լ. ՄԵԾ ԴՔՄՈՒԹԻՒՆ

ՊԱՏԷՆԱՅ

808. Պատմութիւն այս մեծ ձգի ընդ երկայնութեան 100 վարսախ ի հարաւոյ ընդ հիւսիս, ընդ միջ գաղղիոյ, Պաւիերայ, Վիւրդեմպէրկայ և Հեսլոհէյնոյ. գետն Հռենոս գնայ ի սահմանս արեւմտից և հարաւոյ. ի հանգիստոյ նորին և ալ ժամանց յաբեւելից կուսէ ձգին լերինք Սեաւ անուանեն, յորս բարձրագոյն է Ֆելտպէրկ 4,700 ոտնաչափ, և յայն կոյս նէկարայ ի սահմանս Վիւրդեմպէրկայ կոչին ազգս Օռենվալտ. 765 վարսախ է տարածութեան երկրին: Ամենայն գետք և առուք ի Պատէն Թափին ի Հռենոս, որպէս Մուրկ, Բիւնկիկ, Նէքար. Մայն ուռգանէ զհիւսիսակողմն, և դանոնք բղխեալ առատաւոր հասոյ ի Վիւրդեմպէրկ. լճէն կոստանցայ սահմանակից է հարաւակողման արեւելից: Ի հասարակի լեռնային է Պատէն, և գաշտավայրք սակաւք են յահուսնս Հռենոսի, բայց հովիւք վայելուչք բազմք ի գետափունս նէքարայ, Մուրկայ և Բինկիկայ: Բարեբեր է երկիր Պատէնայ և ազգ քաղցրաշունչք. այլ միայն ի բարձունս Սեաւ լերին տիրէ ցրտաբեխութ, և երկրագործութիւն անդ ոչ յաջողի. ի գետեզերկ անտառաց նորին վայս հասեալ չինեն ճօճանակս ժամացուցի և յարուեստ անսի շունչ մեծ են: Վիճակք Հռենոսի ասի առաւ և ընտիր ցորեան, կանեփ, վուշ, ծխախոտ, սորուն, պտուղս, և գինի. իսկ անտառքն անուցանեն երէ բազում, և ձուկն շատ ելանէ ի լճէն կոստանցայ և ի Հռենոսէ. են և հանքք երկաթի, պղինձոյ, արծաթի և ոսպ, և ջուրք ախտահալածք: Երկրագործութիւն, ոստայնանկութիւն, և գործք անասից ազգերք են շահից Պատէնայ. այլ ձեռագիտայ ճարտարութիւն չե ևս ի քաջ ծաղկեալ անդ: Ի պէտս հրահանգութեան ունի համալարանս երկու, վարժարանս և բազում գպրոցս:

809. Թիւ ժողովրդեանն 1,370,000· յորս 908,000 կաթոլիկեկեաք, 24,000 Հրեայք, և այլք նօթասդանք: Ազգութիւն տոհմին սերեալ է ի մարզպետաց Պրիսկասայ ի Դէհրինկէն կոմսէ· ոմք ի ծն գարս կոչեցան Մարկրաւք Պատէնայ: Յետ բաղում բաժանմանց և անցից յամին 1527 կացին երկու ցեղք Պատէ-Պատէ և Պատէ-Տուրլսախ, և ապա յամին 1771 միացան ա միանայն կալուածք նոցա ընդ միով տէրամբ. յետ այնորիկ ի սկիզբն ժե դարուս յաւելան ի Դոսա և այլ գաւառք, որով ոչ սակաւ ընդարձակեցաւ տէրութիւնն: Կարօտս փեսերիկոս ի 1806 զառաջինն կոչեցաւ Մեծ դուքս, որպէս և յաջորդք նորա այժմ, որոց պարտականք միպետական է իշխանութիւնն երկու խորհրդարանք: Հասք պետութեան են 43 միլիոն ֆր. Ծախք աւելի կամ հաւասար. պարտք այժմ առաւել քան զ120 միլիոն. զօրք 27,350:

810. Ի չորս գաւառս կամ շրջանակս բաժանի Պատէն՝ ի Հռենոս վերին, Հռենոս միջին, Հռենոս ստորին, և ի Լճէն. կամ այլազգ՝ յերիս ևեթ մասունս, ի Մերկին, ի Հարաւային և ի Հիւսիսային:

Ա. Ի միջնումն կայ մայրաքաղաքն

ԳԱՐԼՍՐՈՒՀԷ (Carlsruhe, Կարոլոսի Հանգիստք). — Վեղեցկաչէն և պարթիզք պահակաւ. մեծ փողոցքն յանգին ի պալատ գթոյն, զոր հիմնեաց Կարոլոս. բաց ի պալատանէն երեսիւք ի չէնս են՝ նէկ. ի վեցին նորաշինգից և նիկոլեցին ուղղափառաց. ի կրթարանս՝ գպրոցն բազմարուեստից, վարժարան ղնուագրութեան, կրթարան խղից և Համերց, մանուածագործին, պարտէզ բուսաբանութեան: Բն. 28,000:

— Շրջակայիք քաղաքին աւազուտք են: Երկաթուղեաւ հաղորդի ընդ Մայնհայմայ, Հայտելբերկայ և Պազելեայ:

Տուրլախ (Durlach). — Փարախաւ հեռի ի մայրաքաղաքէն, ի հնումն սա էր իշխանանիստն. ունի գպրոց մի և ուսեր գրամոց: Բն. 6,000:

811. Փհորզհեյմ (Phorzheim). — Ի Ձարտարութեան անուանի քան զամենայն քաղաքս Պատէնայ. ասա ծնաւ Բոյխլին իմաստասէր անուանի, մեռեալ ի 1522: Բն. 8.000:

Պրուհսալ (Bruchsal). — Ունի բերդ ընդարձակ: Բն. 5,000:

Ռաստատ (Rastadt). — ԵՒս եզր Մուրկայ քաղաք

փոքր, անուանի վան գաշնագրութեան Եւգինէոսի իշխանի ընդ Վիլլարայ յամին 1814. և վան Ժողովոյ Եւրոպական իշխանացն յաւարտ ԺԵ դարուն: Բն. 6,000:

ՊԱՏԷՆ (Baden). — Ջոր Հռոմայեցիք Աբելվա Ադուենսիս կոչէին. քաղաք վայելչանիստ, անուանի է այժմ վան ծծմբային ջերմային և զուարճագեղ վայրացն, յոր սակս ամի ամի առաւել քան զբիւր մի օտարականաց գան այսր: Բն. 4,800:

ԼԱՀՐ (Lahr). — Անուանի՛ ճարտարութեան ձեռագործուածից: Բն. 8,000:

812. Ռ. Ի հարաւային մասին,

ՖՐԻՊՈՒՐԿ կամ ՖՐԻԶԳՈՒՐԿ (Freiburg). — Կառուցեալ ի գեղեցիկ սահմանի, երևելի է վան կըթարանացն և հոյակապ գոթացի մայր եկեղեցւոյն, որոյ աշտարակ բարձր է 356 ոտնաչափ և սքանչայր, կաթուղիկէ նորա լուսամուխք զարգարեալ: Համալսարանն ուղղափառաց՝ ուր իբր 450 համբակք ուսանին՝ նին կան 100,000 մատենից, նշանաւորք են և կրթարանն արուեստից, մուսէոնն նոր, թատր, մարզատուն, պարտէզ անկաթնութեան, և այլն: Ասի նաև արքեպիսկոպոս մի: Բնակիչք 16,000: — Ազնիւք քաղաքիս կան աւերակք Ռէհրինկեն գըղեկի:

ՀԻՆ-ԲՐԵԶԱՒ (Alt-Breisach). — Ցառաջն ա նուանի էր վան ամրութեանցն որ քանդեցան առ խաղաղութեամբ Գաղղիացւոց: Բն. 4,000:


ԼԷՕՐԱՒ (Loerrach). — Քաղաք փոքրիկ և գեղեցիկ մերձ ի Պազէլ. ի սահմանս սորա Մորոյ զբաւալար գաղղիացի արար զմեծահռչակ նահանջ գնդին Իւրոյ, յամին 1796: Բն. 2,500:

ՏՈՆԱՒ-ԷՇԻՆԳԷՆ (Donau-eschingen). — Ի վեա անառուին՝ ի պալատանէ գղեկին Նորա տեսանին առ կոմսք Ֆաւնուբայ: Բն. 4,000:

813. ԿՈՍՏՆԱ որ և ԳՈՍՏՆԻՑ (Costnitz). — Ցափըն հարաւակողմեան համանուն լճին. երևելի է մայր եկեղեցին և ապարանքն ուր Ժողովեցան կարդինալք վան մեծի Ժողովոյն կոստանդեայ՝ ի 1414–1418, և բանան մենաստանին Գոմինիկեանց, յոր արգելաւ Հուս զամիս ԼՕՇՆ և ապա արկաւ՝ ի հուր. լնկեռնն և նահանջեան՝ ի վերայ լճին: Բն. 6,000:

814. Գ. Ի հիւսիսային մասին,

ՄԱՆՀԱՅՄ (Mannheim). — Ի խառնուրդս Հաբնոսի և Նէքարայ, հրկէզ ապարեալ՝ ի հրամանէն Լուդովայ՝ վերսին կառուցաւ վայելչագոյն ևս՝ ի 1689. երկրորդ անգամ է գրկեցն, որպէս յառաջն մայրաքաղաք էր Բալագին կայսրընտրաց: Անուանիք՝ ի բազմաթիւ չինուածան են ամրոցն և եկեղեցին ՅԻսուսեանց. ի տեղւոջ ամրութեանց նորա՝ ի 1806 անկեցան ծառայութեանք և պարտէզք. Նաւահամբոյք և սահմանս քաղաքիս կան՝ ի վերայ Նէքարայ և Հաբնոսի. վաճառականութիւն և ճարտարութիւն Մանհայմայ կարի բարգաւաճեալ է. աստ գործեն ղէֆնդան անուանեալ բաղադրութիւն հրահալելեաց: Ունի վարժարանս, դիւարան, մատենադարան, պարտէզ բուսաբանութեան, Թանգարանս, գինարան, էբաժշտարան, մաքսատուն, գպրոց վաճառականութեան. ունի երկամեայ ընդ Պազիլէա: Բնակիչք 30,000:



Հայտէլպէրկ


815. ՀԱՅՏԷԼԳԷՐԳ (Heidelberg). — Ան ամն Նէքարայ, կայ սորա գղեակ մի մեծ աւերեալ յաւգնի Թէրակայ հովտին. Համալսարանն կառուցեալ՝ ի 1386 անուանի է ևս վան հնութեանն, ուսանին՝ ի նմա համբակք 600–1000. ի մատենադարանին բաց ի 100,000 գրոցն, կային և ձեռագիրք պատուականք, զոր ի ժամանակս երեսնամեայ պատերազմացն բարձեալ Մաքսիմիլիանոսի Պաւիերայ ընծայեաց սրբա-

զան հայրապետին · յորոց մնան մի դարձուցաւ յետս ի 1816 · Հայտնվելերկ և դղեակ իւր հրկէզ եղեն ընդ Մանհայմայ ; — ի միում յարուարձանաց քաղաքիս կայ տակաւ մի մեծ որ տանի 450,000 լտեբս , զսա յաձախս արկին բանաստեղծք և վիպասանք Գերմանիոյ ի սկիզբն դարուս · բն · 15,000 ։

Շ-ուէյնհէն (Schwetzingen) · — Աւան մեծ երկու փարսախաւ հեռի ի Մանհայմայ , անուանի է ի սմա զբօսանաց պալատն և պարտէզն անգլիացի , ուր գտանին ամենայն ազգք Ասպետ անկոց ։ Բնակիչք 2,500 ։

ՓԻԼԻՓՍԳՈՒՐԳ (Philipsbourg) · — Ան հռենոսիւ , յառաջն ամրոց էր սա Գերմանիոյ կայսերն , անուանեալ եղև վասն մարտից ԺԴ և ԺԵ Լուդովիկոսի · ամբողջքն կործանեցան ի 1800 ։





ԼՂ. ՎԻՒՐԳԵՄՊԷՐԿ

ԿԱՄ

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ՎՈՒՐԳԵՄՊԷՐԿԱՅ

Տարահոտբիւն 1,600 *փարսախ* □. *Բնակիչք* 1,810,000։

816. Վ ՒՒՐԳԵՄՊԷՐԿ կայ ընդ ամէն պատկանեայ, Պաւիերայ, Հոհէնցոլլէռնայ և Լիճին կոտանդեայ, 1,600 փար. ի տարածութիւն է, երկիր լեռնային է, ոչնի հովիտս գեղեցիկս. յարևմտից կողմանէ ձգին լերինք Սեաւ անտառին ի միջնագետնան. ի հարաւոյ. Սուսալ լերինք՝ որ միանգ ի պաւիերա երկայնակաղ գնան։ նեքար գետ բղխեալ ի Սեաւ անտառին հոսի ի Ջանդաւա նաւարկելի է. իսկ Դանուբ ի սահմանս անգ աշխարհին միայն նաւարկելի լինի մերձ Ուլմ, և ի նա խառնի լճէը իջեալ ի Գիրզլեան Ալպեայց։ Բաբերեր է երկիրն մանաւանդ ի հովիտս Դանուբայ և Նէքարայ. գլխաւոր բերք նորին են պտուղ, ցորեան և գինի. և ի լերինս անտառք բազումք յորոց առաքի ի Հոլանտա վասն ոչ սակաւ. գոմանի անգ և երէ շատ, և ուրեք սերեք լինի վաճ և կանեփ։ Ունի և բոլս երկաթոյ և աղի և ջերմուկս։ Արուեստք և Տարտարութիւն բարգաւաճեն հասատար Պատկեայ, վաճառք ըստ հանեն ի վիւրդեմպերկայ են՝ բերք երկրին, և արջառ և կաւ ի վերչ, չուխայ և կաշի։

817. Վիւրդեմպերկայ մասն է նահանի գքսութիւնն Սուապ՝ յորմէ Հոհէնցոլլէռնի ցեղ կայսերական. կոմսքն Վուրդեմպերկայ էին ընդ իշխանութեամբ նոքին, միանգ ի վախճան ԺԵ գարու, յորում նպերհարտ Երևելին անուանեալ՝ կռնչցաւ գոքս, և կալուածք նորա սեփականեցան օրգոց նորին միանգ յաւարտ ԺԸ գարուն, յորում ժամանակի յաւելան ի նոսին և այլ ընդարձակ գաւառք. և կայսրընտրին փեսերիկոս Թագաւորութեան անուամբ եմուտ ի դաշնակցութիւն Հռենոսի. և այժմեան վարչութիւնն է միաղեսութիւն պայմանաւոր, կրկին ունելով աթեառս։

818. Ժողովրդեանն Թիւ է իբրև 1,810,000, որք առաւելագոյն մասամբ լուտերականք են կրօնիւք, ընդ որս և տուն արքունի, Թիւ կաթուղիկեայց

53,000 . և իբրև 12,000 Հրեայք : Հասք պետու-
թեան 26 միլիոն ֆր . Ծախք հաւասար կամ աւելի,
պարագ իբր 118 միլիոն . զորք 8,020 , իսկ ի զօրա-
ժողովս մարտի 19,170 : — Երեք պատուհասնեք են
Վիւրթեմպերկայ՝ Հինաւրեայնին , Աբբայնեանն և
Ֆրեսեօրիքեայն , երեքին ևս այծաւենիք :

819 . Հոգը հոչակաւոր կամ գաւառք են Վիւրթեմ-
պերկայ ,

Գաւառք	Բնակիչք
Նէքար	508,000
Սեաւ անտառ	490,000
Դանուբ	413,000
Եաքագ	400,000
	1,811,000

ՇՏՈՒՏԳԱՐՏ կամ **ՍԹՈՒԹԿԱՐՏԱՆ** (Stuttgard). — Մայրաքաղաք ի գեղազուարճ հովտի , բազում են ի նմա հինգ հոյակապք , յորս գլխաւորք է աքբունի դը-
ղեակն կառուցեալ կրանիտ քարամբք և պարտիզք
հոջակաւոր , մայր եկեղեցին , Թաւրերգարանն , ա-
պարանք սեբուհեան . և ի կրթարանն՝ վարժարանն
և գպրոց գործնական գիտութեանց , գպրոց ա-
րուեստից և Ճարտարութեան , գպրոց բժշկութեան ա-
նասնոց , կառարիներան ուսումնարանն օրիորդաց , մա-
ծենադարան հաւարակաց 200,000 գրովք , ընդ որս
են և 8,300 աստուածաշունչ մատեանք յեօթանա-
սուն լեզուս , որպիսի ոչ գտանի այլուր . գիւանոց ,
պարտէզ բուսաբանութեան , Թանգարան բնական
պատմութեան և հանգիսարան արուեստից , հանդերձ
մարգասիրական ընկերութեամբք . բարգաւաճ է և
վաճառականութիւն քաղաքիս և Ճարտարութիւն ի
յորինուածս զարգուց և պահանջանաց : — Ի շրջակայս
քաղաքիս կան ամարաստանք և պարտէզք և գրախք
և ծառաստանք մատղաստունկք , որպէս Ռոզինշ-
գարն և Հոհէնհայմ , յորում կայ և գպրոց մեծ ի գի-
տութիւն պետական և անտեսութեան : Բն . 48,000 :
Շաբիղ երկաթի ձգի ի մայրաքաղաքիս գիւտիսային
սահմանիք :

820 . Լուդվիգսպուրգ (Ludwigsbourg) . — Եր-
կրորդ քաղաք իշխանութիւն վայելուչ , ի բարերար
դաշտի յափուռնս Նէքարայ , կառուցեալ ի 1718 , ունի
պալատս և պարտէզս . վարժարան մի , զինարան , գըր-
պոց զինուորութեան , ձուլարան տրանօթից : Բնա-
կիչք 12,000 :

ՔԱՆՇՏԱԹ (Kannstadt) . — Նա նէքարայ , հռչակ ի
Հռուգկարտ . երևելի է վան վաճառականութեան
և վան հանքային ջրոցն . գտանին և ի սահմանս նո-
րա աւերակք հռովմայեցի շինուածոց , և բրածոյ ոս-
կերք մեմուռ գաղանի մեծի : Բն . 6,500 :

ՀԱՅԼԲՐՈՆ (Heilbronn) . — Ի վերայ նէքարայ , վա-
ճառաշահ և անուանի ի Ճարտարութեան . ունի քա-
րահատս և գամ : Բն . 10,000 :

ՀԱԼ–ՍՈՒԱՊԱՆ (Hall en Souabe) . — Քաղաք վա-
ղեմի . ունի պատուական աղհանս : Բն . 8,000 :

821 . Ի հարաւակողման աշխարհին կան

ԹՈՒԲԻՆԳԱՆ (Tübingen) . — Նա նէքարայ , քաղաք
անուանի վան կրթարանացն . համալսարանն՝ կառու-
ցեալ ի 1477՝ ունի համրակս 7 կամ 800 . կրկին ա-
թոռք աստուածաբանութեան են ի նմա , ուղղա-
փառաց և նորաղանդից : Բն . 10,000 :

ՎԻԼԴԱՍ (Wildbad) . — Ի սեաւ անտառին , ունի
բաղանիս յաշխատեալ յեկաց : Բն . 2,000 :

ՌԱՏԼԻՆԳԱՆ (Reutlingen) . — Ցառս Սուապ լե-
բանից , հռչակեալ վան գործարանաց խարգաս տպա-
գրութեանց : Բն . 12,000 :


ՈՒԼՄ (Ulm) . — Ի ձախմէ Դանուբայ հանգէպ
սահմանաց Պաւիերայ . երևելի էր յառաջնումն և
բազմամարդ . և զարգիս անուանի է վաճառականու-
թիւն նորա և Ճարտարութիւն արուեստից . և ի



Մայր եկեղեցի Ուլմայ

չէնան նշանաւոր է մայր եկեղեցին գոթացի որպ ձե-
ղուն ընդարձակ և բարձր է քան զամենայն եկեղե-
ցեաց գերմանիոյ : Բն . 16,500 : Շաբիղ երկաթի ձգի
յԱլմայ ի Ֆրիտրիխսհաւէն :

ԿԷՕՊՐՈՒՆԳԷՆ (Geoppingen) . — Բն . 6,000 : — Նա
եբլի քաղաքիս ի լերին կան աւերակք Հոհէնշտաֆէն
դղեկին քանդելոյ ի 1525 , ի ժամանակս քաղաքական
մարտից :



ԼՐ. ՊԱՒԱՐԻԱ

ԿԱՄ

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ՊԱՒԻԵՐԱՅ

Տարածութիւն 3,860 փարսախ □. Բնակիչք 4,550,000:

822. Երկոյ անհաւասար մասունք են Թագաւորութեանս. մին ընդ միջ Ալսաթիոյ, Սաքսոնիոյ, Հեսսեայ, Պատէնի, Վիւրդեմպէրկիոյ, որ և մասն է հին չորանականացն Պաւիերայ և Ֆրանգոնիոյ և Սուապայ. միւսն՝ ի ձախմէ Հաւնաոսի ընդ միջ Գաղղիոյ, Բրուսիոյ, Հեսսեայ և Պատէնայ, և է երկիր Տէօ–Բան գրքոսուԹեան, մասն Ալսաքիոյ, և կալուածք Սիրիայ և Սպիսկոպոսին: Ի 60 ամաց հետէ ընդարձակեցաւ տերութիւն Պաւիերայ, մանաւանդ յետ մտնելոյ ի դաշնակցութիւնն Հաւնոսի յամին 1806 Թագաւորութեան անուամբ. և յետ դաշնադրութեանցն ընդ Աւստրիոյ ի 1809 և ի 1815. և ունի այժմ 3,860 փարսախ քառ.:

823. Հանդամանք երկրին. — Կիսով չափ լեռնային է երկիրն. ի հարաւոյ ձգին Ալպեայք Տիրոլոյ, Սալցպուրգիայ և Ավստրայ ձիւնախառնցք՝ որք մանեալ լերանց Հելուետիոյ. բարձրագոյնք ի նոսին են Ցուկերբից, Վացման, Վէդդելշտայն խրև 10,000 ոտնաչափ. յարևելից կողմանէ կան լերինք Աստահին Պոհեմիոյ ուրեք ուրեք 4–5,000 ոտնաչափ բարձրութեամբ. իսկ ի հիւսիսի՝ Ֆիխտելկեպիրկէ, Սբէսսարդ, Ռհէն և Դժուարուտ Անտկայքն: Յարևմտից ընդ արևելս տարածեալ ձգի մեծ դաշտն Դանուբայ, հարաւակողմն գետոյս երկիր բարձր, անպտուղ և ձահճային է. հիւսիսակողմն քաղցր օդով, բարեբեր բլրոք և դաշտովք զարդարեալ. այլ գետափունք Մայնայ պտղաբեր են քան զամենայն Դանուբայ: Ի դաւառս Հաւնոսի ձգին վեց և հուինսբիք լերինք, ունին դաշտս և հովիտս քաղաքեալս:

Ի բնակին Պաւիերայ երկու ևեթ կան գետք գլխաւորք, Դանուբ որ գնայ ընդ ամենայն աշխարհն և ընդունի յայնմ ոմանս, Լէխ, Իսար, Ինն. և յահեկէ ընդ միւս, Կայ, և Ռհէնէ. երկրորդ գետ մեծ է Մայնն որ բղխէ ի Ֆիխտելկեպիրկէ և յարևելից յարևմտեան ընթանայ, յահեկէ առեալ զԼիմենից և յայնմ զկնաւ: Հաւնոս գետ պատէ զդաւառան որ կոչին յանուն,

և յորդէ զքուրս Լաւգերայ և Գուալթայ։ — Լիմք են ի լերինս որ ի հարաւոյ Դանուբայ, որպէս Գիմ սեէ, Վոյմմեէ, Իւրաքանչիւր Յ փարս. քառ. Քեսնիկսեէ՝ երեք փարսախ երկայնութեամբ. սահմանակից է և կոստանդպոլ լճին։

824. ԲԵՐՐ. ՅԱՐՏՈՒԹԻՒՆՆ։ — Պաւիերա մշակեալ քաջ բերէ ցորեան և ընդեղէն, հունդս, ծխախոտ, վուշ, պտուղ և արտս անասնոց, և գինի ի գաւառս Հաէնոսի և Ֆրանգոնիոյ, փայտ անտառի շատ, և երէ. երկաթ, աղ, ածուխ Հանքային, և անդրկ։ Ի Նարտարութեան տակաւին ոչ հասասարի Բրունսէոյ, Աւսբուրգ, Սաքսոնիոյ, Մորաւիոյ և Պոհեմիոյ. վաճառք նորա անուանի՝ մրգողն, ապակի, մետալ Թիղոյնք, բիւրեղ, գործեալ սեաւութեան, և այլն. առ ի բարգաւաճանս վաճառականութեան ձեռն արկաւ ընդ դասուսը և ընդ Հանեայս հաղորդութիւնն գործել ի ձեռն Ալգմիւլայ, Ռեգինիցայ և Մաչաայ, յոր ձեռն արկեալ էր կարդալսի մեծ։ Ընդ նիւրեմբէրկ և ընդ Ֆիւրթ կայ շաւիղ երկաթի վրաւոն յոյժ. դարձեալ ընդ Մունհագ և Աւկուստա, և յԱվգուսթայէ ի Հոֆ և ի Լինտաւ և ի Տոնաւերթ, ի Պամբերկայ ի Ֆրանքֆորդ Մայնայ, և այլն։

825. ԿՐԹՈՒԹԻՒՆՆ. ԿՈՒՆՔ. — Թիւ ժողովրդեան Պաւիերայ համարի 4,350.000, քանզի յաշխարհագրի 1849 ամին գոաւ 4,520.000։

Դպրութիւն ուսմանց անագան սկսաւ ծաղկել ի Պաւիերա, Թէպէտ էին նորա համալսարանք երեք և վարժարանք 60. դպրոցք Ֆրանգոնիոյ բարեկարգք են քան զՀարաւային Պաւիերայ։ — Ընդ ամենայն երբէ 4,600 դպրոց են ի Պաւիերա։ Ըստ կրօնից 3,200.000 ուղղափառք կաթուղիկեայք, 1,280.000 նորաղանդք, և 70.000 Հրեայք. ուղղափառաց երկու են արքեպիսկոպոսք և վեց եպիսկոպոսունք. առաւել ի բնիկ Պաւիերա ծառայեալ են ուղղափառ կրօնք, ի Ֆրանգոնիա՝ նորաղանդն, որպէս և ի Հաէնեան գաւառին։

826. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՔ. — Պաւիերա գրեա թէ բոլոր գաւառ էր Հռոմէական պետութեանն վիճդելիկա կոչեցեալ. և զի բնակեցան անդ Պոյեան կամ Բոյեան ժողովուրդք հալածեալք ի Պոհեմիոյ, երկիրն Պոյոարիա և ապա Պաւարիա կամ Պաւիերա ևս և Պայեան կոչեցաւ. ի բառնալ ընդհակառութեանն՝ Ոսգրոգոնքք և ապա Փռանկք տիրեցին գաւառին. բայց Պաւիերա ունէր սեփական գոբս և տոհմ ազնուական Ագիլոֆինկեր անուն. սահմանք նորա ձգեցին մինչև յԱնհալթիա պարփակեալ զամենայն Աւստրիա։ Յետին իշխան ազնուական զարմին պատսպան կացեալ Տաթիբոյ էր իւրում Լոմպարտացւոյն արքայի մարթիւ պարտեալ ի մեծէն Կարոլոսէ արգելաւ ի ձեռնասանել. և յայնմ հետէ իշխան կացին Պաւիերայ կոմք և գոբքք, յորս անուանի եղև տոհմն Վիտգելսպախ. այլ յԻ գարու ընդրկեցին Դ կապտեալ զդքսուԹիւնն ի Նեմոէ ևս Կուելֆեայ կոմսին։ Ի տանէ նորա ելին արք անուանիք (որպէս ընդրկոս Ռուբէն) որք ընդարձակեցին զսահմանս տերութեանն. բայց փեսերիկոս Ա անդրէն գաղթոյց զվերաւԹիւնն ի տուն վիտգելսպախայ յԻԲ գարս. և ի յաւելուլ ի նա գաւառին Բալադինայ յերկուս ցեղս զաւառ առնեն ի Պաւարացի և ի Բալադին. առաջինն երեկիլ եղև յամս երեսնամեայ պատերազմացն և վիճի գաղնակից գաղղիոյ լինելով ընդդէմ Գերմանիոյ, և սպառեցաւ ի 1777. յայնժամ օգնեցեալ Բրունսիոյ յաջորդեաց նմին առ մին Բալադինեան։

827. ԱՌԱՋԻՆՈՒԹԻՒՆ. — Մխալեռական է վարչութիւնն, և առանձ տերութեանն յաղթայաղանց և ի պաշտպանալաց գումարի։ Հասք պետութեանն են իբր 40 միլիոն Ֆր. Ծախք սուղ ինչ աւելի. պարտք զարգիս առաւել քան զ200 միլիոն. զորք 57.839։ Ուրի կարգք կամ ասպետութիւնք են Պաւիերայ, Հուսկերդեանն (1444), Ս. Գեորգեան (1729), Մաքս-Յոզեֆեան (1806), Ռաւռաքեան արդեանց (1808), Լուգովիկեան՝ յիւնամեայ վաստակոց վարձ (1827), Ս. Միքայէլեան (1693), Թերեզեան՝ վասն սիրեայց (1827), Եղիսաբեթեան՝ վասն սիրեայց (1766)։


828. ԲԱԺԱՆՈՒՄՆ. — ՅուԹ չորեսակս կամ ի գաւառս բաժանի Պաւիերա, որք և այսքիկ են բոլ. նակաքն իւրեանց։

Նոր բաժանումն		Հին բաժանումն
Ա. Վերին Պաւիերա	Բն. 720.000	Իզար
Բ. Սաոքին Պաւիերա	550.000	Սաոքին Դանուբ և մասն Իզարայ
Գ. Բալադինա	620.000	Հաէնոս
Դ. Վերին Բալադինա և Ռատիզպոնա	470.000	Ռեկեն
Ե. Վերին Ֆրանգոնիա	500.000	Վերին Մայն
Զ. Միջին Ֆրանգոնիա	830.000	Ռեզատ
Է. Սաոքին Ֆրանգոնիա և Աշաֆենպուրգ	590.000	Սաոքին Մայն
Ը. Սուապ և Նյայպուրգ	364.000	Վերին Դանուբ

Ի տեղագրութեան սաս ունիմք զկորգ հին բաժանման Պաւիերայ, ոչ ունելով առաՀեան Ձչգիւ զասհանս նորոց գաւառաց։

829. Ա. ԻՉԱՐ.

Մ ի ւ ն ի ւ ի ք կամ Մ ի ւ ն ի ւ խ է ն, որ և Մ ա ն ա հ ո ե ն ըստ իտալականին (Munich, München). — Մայրաքաղաք ի ձախմէ Իզարայ. ընդարձակ գաշտի. ունի գեղեցիկ շինուածս, հրապարակս և լայն փողոցս, զորոց գլխովս կառոյց հրաժարեալն Հայր այժմեան Թագաւորին որ էր յոյժ սիրող գեղարուեստից. Նշանաւոր են հրապարակքն Մաքսիմիլեանոս, Վիկտուալիաց, Գարոլին, Արքունական, և Մաքսիմի-



Արքունի Պալատն Միւնիքայ

լեանս-Յովնէից · ի չինուածսն՝ արքունի պալատն՝ մի յերեսելեաց յԵւրոպա, գոլատուն ցիսատեանց՝ որ այժմ Ձեմարան է ուսմանց և արուեստից, գրատուն 500,000 մատենիւք, յորոյ ի գրացիրս կայ և աւետարան մի գրեալ ձեռամբ Յովհաննու արքեպիսկոպոսի եղբօր Ա հերձմոյ Հայոց Թադեաւորի · համալսարան, տուն քանդակաց կառուցեալ ի 1816, գերզեցիկ յօրինուածով 22 մարմարիոնեայ յունական սեաւքք, ուր պահին ընտիր ընտիր արձանք և քանդակք հին և նոր անդրիադործ քաջաց · տուն նը. կարուց կառուցեալ ի 1826, և ի նմա կան նկարք ձարտարաց Գերմանիոյ · ցեկեղեցիս անուանի են պալատանն, Ս · Պետրոսին, և կաթուղիկէն · հանդերձ այսոքիւք՝ Ձեմարան ուսմանց հաստատեալ ի 1759, պարտէզ բուսաբանութեան, դիտանոց, ուսումնարան անդամահատութեան և տարրալուծութեան, Ձեմարան արուեստից և թանգարանք պէս. պէսք · ի համալսարանին ուսանին 1,300 համբակք · Պատկերահանք Միւնիքայ երեւելի են զարգես, յաչէս վան նկարուցն ի վերայ ապակւոյ · Սենեկիցեր տեր հնարեաց անդ զվիմագրութիւն ի վախճան անցելոյ դարուն · Գործիք աեսուղեան չինեալ ի Միւնիք ընտիրք են · բն · 110.000 ։

830 · ՆԻՄՓԷՆԲՈՒՐԳ (Nymphenbourg) · — Աստ է ամարաստուն Թագաւորին, ուրոյ որսարան մեծ, և գործարան յախճապակւոյ · փարսախաւ հեռի ի Միւնիքայ · բն · 1,300 ։

Շլայսհայմ (Schleissheim) · — Երիւք փարսախօք հեռի ի մայրաքաղաքէն, դղեակ երեւելի, յորում պահին նկարք հին պատկերահանից Գերմանիոյ, որ կոչի Հաւաքումն Պռուսերեան եղուարց · բն · 500 ։


Լանտսհուտ (Landshut) · — Քաղաք գեղեցիկ առ Իզարայ և այժմ դիւաւոր քաղաք Սորբին Պաւարիոյ · ի սմա հաստատեալ էր համալսարանն Միւնիքայ յառաջ քան զ1826 · Նշանաւոր է եկեղեցի սորա՝ 454 ոտք բարձր աշտարակաւ · ունի ուսուցմարան ուղղափառ կղերաց և գոլոյց վերաբուժութեան · բն · 11,000 ։ — Ի սահմանս Աւստրիոյ ի վայելչագեղ գաւառի կան փոքրիկ քաղաքքն Պէրխդէսկաեէն, կամ Պէրխդոլսկաեէն և Ռայխէնհալ, որք ունին ազատանս, ուսոցի ամի ամի ելանէ 700.000 կենդինար աղի ։

831 · Բ · ՍՏՈՐԻՆ ԴԱՆՈՒԲ ·

ՊԱՍՍԱՒ (Passau) · — Ի խառնուրդս Իննայ և Դանուբայ շահաստան քաղաք ամուր, երեւելի է մայր եկեղեցին և դղեակն, եպիսկոպոսական եկեղեցին, և կամուրջքն · առ եղև ի 1552 դաշնադրութիւն կայրոլոսի Ե ընդ Մորիկայ Սաքսոնիոյ վասն ազատութեան կրօնից · բն · 13,000 ։

832 · Գ · ՌԷԿԷՆ ·

ՌԱՏԻՒՕՊՈՆ (Ratisbonne, Ռէկէնսպուրկ ըստ Գերմ.) · — Ի ձախմէ Դանուբայ երթեալ ազատ քաղաք, յորում էր աթոռ գերմանական Ժողովոյն ի 1662 ամէ ցամին 1806 · Նշանաւոր է մայր եկեղեցին



Մայր եկեղեցի Ռատիզպոնայ

և գամբան Ջէփլէրայ որ մեռաւ ի 1630 · այս քաղաք առաւ ի Գաղղիացւոց ի 1809 · բն · 28,000 ։ — Փարսախաւ հեռի ի Ռատիզպոնայ ի Սալվադոր լերին հնին արի Թագաւորն Հոյակապ տաճարի Վալ-

հալա կոչեցեալ, նաեւ բերեալ ականաւոր արանց գերեզմանիոյ։

ԱՄԳԵՐԳ (Amberg). — Ունի գործարան զինուց։ Բն. 8,000։

ԻՆԳՈԼՇՏԱԴ (Ingolstadt). — Ամուր քաղաք ի վերոյ Դանուբայ, յառաջնումն աստ էր համալսարանն Լանտհուտայ։ Բն. 7,000։

833. Դ. ՎԵՐԻՆ ԴԱՆՈՒԲ.

ԱՒԿՍՊՈՒՐԳ (Augsbourg, Օգոստէ Վինգելիկաց). — Քաղաք հին և ի ԺԶ դարու Հռոմայոյն ամենայն



Աւկսպուրգ

քաղաքաց Գերմանիոյ, կառուցեալ ի զուարճալի դաշտի ընդ մէջ Լէխայ և Վերդախայ. բազում են հոյակապ շէնք և տունք ի սմա. յորս նշանաւոր է հասարակաց ժողովարանն կառուցեալ ՌԻ դարու. մանեներդարանն՝ ուր կան ոչ սակաւ յուշական գրչագրեք. մայր եկեղեցին, եկեղեցիքն Ս. Ուլրիկ և Ս. Մորիկ. տուն նկարուց իբրև հազար պատկերաց. ապարանքն եպիսկոպոսին յորում մատուցին կարգս լսի և զբան հաւատոյ զկոչեցեալն Դաւանութիւն Աւկսպուրգայ՝ շարադրեալ ի Լուտերէ և ի Մելանքթոնայ։ Մարդասիրական տունք բազումք են ի քաղաքի աստ, և գլխաւոր ի նոսա՝ Փուկկերայ տասցեալ Թաղն՝ որ է 106 տուն տուեալ աղքատաց սակաւ վարձու, չինեցին զայս վաճառականք Փուկկեր տոհմին որք ի ԺԶ դարու ունէին զկոմսութեան պատիւ։ Վաճառականութիւն և ձարտարութիւն Աւկսպուրգայ բազմաւաճ է և զարգիս. երեւելի են գործարանք ժամացուցի, արծաթի և ոսկեղէն գործուածոց, ագամանդի և տպազարդ բամբակոց. ի վերայ այսր ամենայնի յոյժ տարբ է քան զյաջողուածս ԺԵ, ԺԶ և ԺԷ դարուց, յորժամ ընդ արուեստից տուրեաւ մեծ վաճառականութեան ունէր ընդ Խաղիոյ և Արեւելից. գիւտ Ամերիկայ և Նորոյ Ճանապարհի Արեւելեան Հնդկիա՝ նուազեցին զփառս Աւկսպուրգայ։ Բն. 40,000։

ԼԻՏԱՒ (Lindau). — Փոքր քաղաք վաճառաշահ լերզ Լճին կոստանդայ։ Բն. 3,000։

834. Ե. ՈՒՉԱՊ.

ԱՆՍՊԱԽ (Ansbach). — Անուանի ի ձարտարութեան, ունի գղեակ մի, վարժարան, մատենադարան, դահլիճ նկարուց. յառաջն աստ նստէին մարկրաւք Անսպախայ և Պայրայթայ։ Բն. 16,000։

ԷՐԼԱՆԳԷՆ (Erlangen). — Ունի համալսարան հաստատեալ ի 1743, և գրատուն 100,000 մատենից։ Բնակիչք 14,000։

ՖԻՒՐԹ (Fürth). — Երկու փարախաձ հեռի ի նիւրեմպէրգայ ի ձարտարութեան նման նմին, և երկաթի շուքաձ հաղորդեալ ընդ նմա. կայ ի սմա ուսումնարան Հրեից։ Բն. 18,000։

ՇՈՒԱԲԱԽ (Schwabach). — Եւ սա երեւելի ի ձարտարութեան մասին։ Բն. 8,000։

835. ՆՒՒՐԵՄԲԵՐԳ կամ ՆՈՒՐՆԲԵՐԳ (Nüremberg).



Տան Ալբրեհտ Տիւրերայ ի Նիւրեմպերգ

— Ա՛ր Բէկնէյայ (Նօրիկեան բերդ), ի ԺԲ դարու բազմամարդաբոյն էր և ազատ և բարգաւաճեալ որպէս զԱվկսպուրկ։ Ի Ճարտարութեան և յարուեստս յառաջագէմ դտաւ յոյժ, որպէս քաջայայտ երևի յեկեղեցեացդ և ի շինուածոց հասարակաց. այսպէս են եկեղեցիքն՝ Ս. Սեբաստ., Ս. Լաւրենտիոս, Ս. Եգիտիոս. նշանաւոր է յառաջնումն մահարձան Ս. Սեբաստեայ զոր գործեցին Վիչէր Պէհորս և Հենէքէն որդիք նորա ղամս հնգետասան. Երեսէն է և հասարակ ժողովարանն և դղեակն ի վերայ լերին շինեալ՝ ուր նստէին քաղաքապետք (պիւրկրաբք) նէրեմպէրկայ՝ նախնիք Թագաւորացն Բրունսէյ։ Ի քաղաքի աստ ծնան Հանս Սախս քերթող, Ալպրեհտ Տիւրեր ականաւոր նկարիչ՝ որոյ տուն կանգնուն կայ մինչև ցայսօր, Վիչէր անդրէանտագործն, Պէհայմ նաւուղղող Ճանապարհորդ, ամենեքին սոքա յաւուրս Ծագմանն Նորաղանդին, այլովք հանդերձ։ Ի քաղաքի աստ հնարեցաւ Ժամացոյց՝ որ կոչէր ի սկզբան Ձու Նիւրեմպէրկայ, արդր, գալարափող գործիք երաժշտական և այլն։ Կան ի Նիւրեմպէրկ ընկերութիւնք մարդասիրական, ուսումնական և կրթասնորական. և հին ընկերութիւնն երգահանից. մատենադարան մի 80,000 մատենից. ի վաճառան անուանի են զարդք և խաղալիկք, և վաճառականութիւն յաջող։ Վալ. լենշդայն պաշարեաց զայս քաղաք ի 1632։ Բնակ. 46,000։

836· Զ· Վ Ե Բ Ի Ն Մ Ա Ց Ն ·

ՊԱՅՐԱՑԹ (Baireuth)· — Գ· Ք· ուր նստէին մարկրաբք Պայրայեայ· աստ բնակէր բանաստեղծն Ռիչհեր։ Բն· 18,000։

ՊԱՄԲԵՐԳ (Bamberg)· — Ա՛ր Բէկնէյայ ի գեղատ. զարշ դաշտ ընդ գեղեցիկ քաղաքս Պաւէերայ գաւառ· յառաջնումն կայր ի սմա եպիսկոպոսարան մի և համալսարան։ Բն· 22,000։

ՀՈՖ (Hof)· — Ի Ճարտարութեան նշանաւոր։ Բնակ. 8,000։

837· Ի· Ս Տ Ո Ր Ի Ն Մ Ա Ց Ն ·

ՎԻՒՐՑՊՈՒՐԿ (Würtzbourg)· — Ի կրկին ափունս Մայնայ յայգեաւէտ դաշտի· ի սմա Ս· Վենիփակիոս առաքեալ Գերմանիոյ հաստատեալ էր եպիսկոպոսարան ի Թուխն 741· ի համալարանին որ հիմնեցաւ ի 1403՝ ուր 400 համալիք ուսանին՝ անուանի է լաւարանն բժշկութեան· ի չէնսն նշանաւոր են հին ապարանք եպիսկոպոսացն և հոյակապ անկեալնոց մի։ Բն· 28,000։

ԱՇԱՖՖԵՆՊՈՒՐԳ (Aschaffenbourg)· — Ցեզը Մայնայ· ունի գեղեցիկ դղեակ մի։ Բն· 8,000։

838· Ը· Հ Ո Ւ Ն Ո Ս ·


ՍՊԻՐ կամ Սբեյեր (Speier, Օգոստ. Նեմետց)· Ա՛ր Հռենոսիս, կայր սա և առ Հռոմայեցւոցք, և յաւուրս եղև ազատ քաղաք, զոր Լուդուա եւս հրձիգ առնել մայր եկեղեցեաւն Հանգերձ զոր ի ԺԱ դարու կառուցեալ էր Կոնրադոսի Սալիենոսի, աւերացան յայնժամ և գամբարանք ուր կայսերաց և երից կայսրուհեաց որ էին ի նմին։ Ասա եղև Ժողովն ի 1529, որում ընդգէմ կացեալ նորաղանդքն՝ կոչեցան Բողոքարկոսք (Բրոդէսդանդ)։ Բն· 10,000։

ՖՐԱՆԿԵՆԹԱԼ (Frankenthal)· — Ի ԺԴ դարու վաճառանդիք Սպորին Նահանգաց վան կրօնից՝ կառուցին զքաղաքս զայս անուանի ի Ճարտարութեան· Բն· 6,000։

ՔԱՅԶԷՐՍԼԱՒՏԷՐՆ և ՔԻՐՄԱՍԷՆՍ (Kaiserslautern, Pirmasens)· — Փոքրիկ քաղաքք, ուր մարտեան Բրուաք ընդ Գաղղիացիս սաստիկ պատերազմաւ ի 1793 և ի 1794։

ՏԷՕ–ՒՈՆՍ որ և ՑՈՒԱԻ–ՊՐՒՒԿԷՆ ըստ Գերմ. (Deux-Ponts, Zwei–Brücken, այն է՝ երկու–կամուրջք)· — Անուանի եղև վան դեղեցիկ տպագրութեանց գրոց Ցոյն և Լատին մատենագրաց։ Բն· 8,000։

ԼԱՆԴԱՈՒ (Landau)· — Բերդ ամուր Գերմանական գաշնակցութեան 7,000 բնակչօք· ղամս 100 ետկայ սա ընդ իշխանութեամբ Գաղղիացւոց։



ԼՒԹԴԷՆՇԴԱՅՆԱՅ

839. Փոթրագոցն՝ ի պետութիւնս Գերմանիոյ՝ յետ Քնիբշաւզինայ. Լիխդէնշդայն կայ ընդ մէջ Սէնդ-կալչէն գաւառի Հելուետիոյ և Տիրոլոյ. Լեռնային վիճակ է իբր 40 մղոն քառ. ղորով փարի Հռէնոս գետ։ Թիւ ժողովրդեանն իբր 6,500, որք կաթուղիկէ ուղղադաւանք են։ Վարչութիւնն միապետական է պայմանաւոր։ Ջօրական 55 այր։ — ԳըԼ

խաւորը չէն է վաւուց կամ Լիխդէնշդայն ասան յեզր Հռէնոսի իբր 1,500 բնակչօք։

Շէլէնպէրկ դղեակ, և այլ երկու գեօղք միայն են Լիխդէնշդայնայ. բայց իշխանն ունի մեծամեծ կալուածս ի Մորաւիա և ի Շլեզիա Աստրիոյ. և ինքն յաշախ ի Վէննա բնակէ։ Հասք իշխանութեանն են 60,000 ֆր։





ԼՂ· Ա Ի Ս Տ Ր Ի Ա

ԿԱՄ

Կ Ա Յ Ս Ե Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա.ԻՍՏՐԻՈՅ

Տարածութիւն 34,000 *փարսախ* □. *Բնակիչք* 38,000,000:

840· Կայսերական պետութիւն Աւստրիոյ ընդարձակութեամբն երկրին երրորդ է՛ի պետութիւնս Եւրոպայ, և բազմամարդութեամբն երկրորդ· իբրև 34,000 փարս· քառ· են տարածութեան նորա, և սահմանք նորա՛ի 49° և 51° հիւսիսային լայնութեան, և՛ի 6° և՛ի 24° արեւելեան երկայնութեան: Սահմանք նորա՛ի Հ· Ջուխերբի, Սաքսոնիա, Շլեզիա· յՀ· Լեհաք, Մորաւիա, և այլն· ի Հար· Տաճկաստան, Վալաքիա, Սերվիա, և այլն· ի Մ· Սարդինիա, Պաւիերա, Ջուխերբի: Երկայնութիւն երկրին՛ի խառնիւրդոց Բոտորձայ ընդ Տներեսդերայ՛ի կալնցիա մինչև՛ի Սենդոյ Լամպարտիոյ-Վենետիոյ՝ 750 մղոն է, և լայնութիւն՛ի Դրաւայ Դաղմատական սահմանց մինչև՛ի Սաաց Պոհեմիոյ՝ 442·

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

841· ԼԵՐԻՆՔ·— Ցոլովք՛ի գաւառաց Աւստրիոյ լեռնայինք են· գաշտք լայնածաւալք կան միայն՛ի կալնցիա հիւսիսային, և՛ի Լամպարտիա և յՍենիկարիա· երիք գլխաւոր գօտիք լերանց անցանեն ընդ աշխարհն· — 1· Ալպեսեայք՛ի հարաւոյ Դանուբայ որ ձգին՛ի Դիրոլ, յԱւստրիա, և՛ի Լիւբինիկ մինչև յՍենիկարիա, և անտուստ մինչև՛ի սահմանս Տաճկաց· — 2· Կարպաթեանք՛ի հիւսիսի Դանուբայ որ գնան ընդ հիւսիսակողմն Ցենիկարիոյ· — 3· Սիւտեդ՛ի հիւսիսի Դանուբայ որ միացեալ ընդ Կարպաթեանց պատն զԳոհեմիա և զՄորաւեաւս· Ի լերինս յայսոսիկ բարձրադոյնք են Օրդլեր, Սրիճ և Կրոս-Վլքեր՛ի սահմանս Դիրոլայ 12,000 ոտնաչափ·

842· ԳԵՏՔ·— Գետ մեծ Աւստրիոյ և գլխաւոր՛ի բովանդակ Եւրոպա է Դանուբ, որ ընթացեալ

ի Բասսաւայ մինչև Յորսովա՝ անցեալ զառաջեաւ 12 մեծամեծ քաղաքաց յերկուս հատանէ զաշխարհն և Թափէ ի Պոնտոս. խառնին ի նա յօշմէ ինն, Դրաձն, Էնս, Ռատպ, Տքուա, Սաս, և ի Ֆախէ Մորաւա, Թասյս և այլք. Բոլ որ է Պագտս, Աղի. ձէ, Պրնդաս, Բհալէ, Դալքամնդոյ սոքա ամենեքին յԱսալիա. Քէքքաս, Ռաբենդաս՝ ի Դալմատիա. Էլէյա ընդ Մոլոսաս՝ ի Պոհեմիա. Տիհեսդէր՝ ի Կալիցիա. Օաեր և Վիսդուլ՝ ի Մորաւիա. Կաւարքկելքեն՝ ի գետոցս և Ադրիականն ծով օժանդակեն վաճառականութեան Ասորւոց. Ի Լոմպարտիա, յԱսաորիս և յՈմնկարիա գտանին լինջ ընդարձակք և ձկնաբերք, զորոց զնին յիւրաքանչիւր գասառս լիցին բանք.

843. ԿԱՒՈՒԱՑ ԹԵՐՔ. ՁԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ. — Ոչ մի կրնայ է հաւասար մեծասպրած պետութեանս, այլ ի հարաւակողմն՝ որ է մասն ընդարձակագոյն՝ բարեխառն և ջերմին, իսկ ի հիւսիսի հովասուն: Երկիրն բարեբեր է ամենայն ուրեք և մեուշանէ անաս սուն շատ. գլխաւոր բերք նորա են ընդեղինք, գինի, պտուղ, փայտ, վուշ, կանեփ, հունդն, ծխախոտ, ներկ, և այլն. երկիմար ընտիր, արջառ և ոչխար բազում: Ի բոլոր ոսկի տարեկան 2,000 լիտր, արծաթ 50,000 լիտր, մեղկ 1,500 կենդինար, ալդնձ 60,000 կենդինար, երկաթ 1,300,000 կենդինար, աղ 6 միլիոն, և այլն. Հանքային աղբերք Քուրց կան ի Պոհեմիա, յՈմնկարիա և ի Լոմպարտիա:

Ձարտարուեստիք արուեստից ծաղկեցաւ յԱսորիս յատուցը Ցովսեփոյ Ք և իտալական գաւառացքն նախնդրէ է երևելի տերութեանց Եւրոպայ. անուանի են ձեռագործք կտաւոց, ասու, մետաքսի, երկաթեղինաց, ապակեաց, և այլն. Աբզիգքսուրիւն Ասորւոց և Պոհեմիա և Լոմպարտիա առաւելուն ի ձարտարութեան, Ոմնկարիա ի բնական բերս երկրի. ի ցամաքէ չահաստանք են վէնետ, Բրապա, Բենդ, Ջեմդին, Պրոտի, Լինդ, Կրաց, Միլան, Էաէնպուրկ, Քաուչքատա, Պրիւն, Օլմից, և այլն. ի Ծովու Դրիևտա, վէնետիկ, Ֆիրուզէ, Ռակուզա, Ռագվինիոյ, և այլն:

844. Ծովընաբ բազումք գնան ընդ Դանուբ, ընդ Բոյ. և յԱդրիական ծովուն: Ցերկաթի շահիւք նըշանաւորք են Կիմնասիոյ 45 փարատս երկայն, ի Պուռվայսայ մինչև ի Կիմնասէն որ գՂանուբ ընդ Մոլսաւայ հաղորդէ ի ձեռն Լինցայ. հիւսիսայինն ի վէննայ մինչև ի Պոհեմս քաղաք կալցիոյ անցեալ ընդ բազում այլ քաղաքս: Ագև երկաթուղիք ի վէննայ ցՈրաայ, ի վէննայ ցՆայշդաու. մեծ շահիւն ընդ Մելան և ընդ վէնետիկ որ չև ևս է ապատեալ, նոյնպես և շահիւն ընդ վէննա և Պրեհտա, վէննա և Տրեզտա, և այլն: Ի ջուրեան նշանաւորք են Ֆրանց ընդ Դանուբ և ընդ Թայս, ջրանցքն վէննայ ընդ Նայշդաու, Պելայ ընդ Դեմնս Դանդաբայ. իսկ յԱսալիա բազմաթիւ են ջրանցք:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

845. ԲՆԱԿԻՉՔ. ԿՐՕՆՔ. ԿՐԹՈՒԹԻՒՆ. — Ի տերութեան Ասորւոյ բնակին առաւել քան զ38,000,000 ոգիք պյալեզուք. յորս Պաւանք յօլովագոյն են քան զայլս և առաւել քան զ15,500,000. Գերմանացիք 8,000,000. Մաճառք 5,500,000. Խաւլացիք և Ֆրուալք 5,500,000. Վալաշք, Մոլոսաք և Ցոյնք են 2,800,000. Հրեայք 750,000. Գնչուք 100,000. Հայք 17,400: Գերմանական լեզուս ծաւալեալ է ընդհանուրս, միայն ի Լոմպարտիա խաւլացին լսի և լատին յԻնկարիա. հինգ բարբառք են պյաւեան լեզուին, և լեզուս Վալաշաց խառն է ի լատինէն և ի Տաճկաց: Կաթուղիկէ ուղղափառ են կրօնք տերութեանն, և ի Ժողովոքեանն իբր 31 միլիոն ուղղափառաց են, որոց գոն 15 արքեպիսկոպոսք և 82 եպիսկոպոսք և 41,400 Ժողովրգապետութիւնք. 3,500,000 նորադաւանք, և 3,200,000 յուդայադաւանք:

846. Կրթութիւն և ուսումնք չև ևս որպէս յայլ տերութիւնս Գերմանիոյ բարգաւաճեալ են յԱսորիս, սակայն ջան մեծ է ինամ տանելոյ հրահանգութեան ոմանից, և առաւել փոյթ տանին բարեկեցիկս լինելոյ քան ուսուցմացքեաք: Ընդ ամենայն ինն համալսարանք են, հինգ ի մասին Գաղղիացւոյ Գերմանիոյ և չորք արտաքոյ:

847. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ. — Կայսերութիւն Ասորւոյ այժմ պայմանաւոր միապետութիւն է ըստ օրինադրութեանն հրատարակելոյ ի 4 մարտի 1849 ամին, յորում ուշ եգեալ է ի միութիւն ինն ազգաբնակ մասունս պետութեանն պահելով և զանձինս իւրաքանչիւր միոյ միոյ ի զանազան աշխարհացն, որոց վասն և առանձինն օրինադրութիւնք սահմանեալ ունին, և ոմանք սահմանեացն իսկ:

Կայսերութեանն ժառանգութիւն անցանէ և ի գերս տէրս ի պակասել արու զառակի. կայսեր պատուոյ վերաբաշխութեամբ կոչի Առաքելական Վեհափառութիւն, որպէս կոչեին Թագաւորք Ունկարիոյ. եղբարք և եղբօրորդիք կայսեր կոչին ազգ գուբարք կամ արշիդուքք և արշիդքսուհիք. իսկ յատուկ մականիք չքոյ անուան կայսերին են Ինքնակալ Ասորւոյ և Թագաւոր Ունկարիոյ, Պոհեմիոյ, Լոմպարտիոյ-Վենետկոյ, Դալմատիոյ, Խաուսգաց, Սկլաւոնիոյ, Կալիցիոյ, Լոդոմերիոյ և Լիւբլիոյ, արշիդուքք Ասորւոյ, գուքս Սալցպուրկայ, Մգիբրիոյ, Կարինթիոյ և Գառնիոլայ, մեծ իշխան Դրանսիլվանիոյ, մեծ Վոյվոտս Սերբիոյ, մարկուս Մորաւիոյ, գուքս Ճլեզիոյ, Աւշվից և Զագրայ, Դեզվնայ, Ֆրիուլիոյ, Ռագուզայ և Զարայ. կոմս Հապսպուրկայ, Դիրոլայ, Ֆիկտարկայ, Կեդցայ, Կրատիքայ. իշխան Դրնեգայ և Պրիքսենայ. մարկրաս Լուսատայ և Խարիոյ, կոմս Հոհենեմսայ, Ֆելտքիրխայ, և այլն, և տէր Դրիեստայ, Գաղարոյ և Վնդաց: Ժառանգ նորս կոչի իշխան Կայսերական և Թագաւորական: Ցառաջ քան զնահատութիւն 1848 ամին, ի վերայ յոգունց նահան-

գաց պետութեանն վարիչք կայնի ի կայսերական տա-
նէ, իսկ այժմ տակաւին զինուորական օրինաք վարին։

Ազգութիւնք կամ պատուհասիչք Աւստրիոյ են՝
կարգ Ոսկի գեղման հաստատեալ ի 1430· Եղիսա-
բեթ Թերեզեան (1750), Ս· Մաքսիմոսեան կարգ
Ընծկարաց (1764), Լէոբոլտեան կարգ հաստատեալ
ի փրանկիսկոսէ Ա (1808), և Արդեանց կարգ հաս-
տատեալ յայժմու կայսերէն (1848)։ Են և ասպե-
տութիւնք կրծնականք, որպէս Գերմանական ասպե-
տացն (1840), Մալթայ կամ Ս· Յովհաննու Ասպե-
տաց, Կարմրատաղ խաչի կարգ, և այլն։

848· ՀԱՒԱՔ· ԶՕՐՔ· և այլն· — Ցայս վերջին
խոտորութեանցն երկրաւոր հարկի պետութեանն տա-
կաւին ոչ ուղղեալ· հասք ի յեսին ամբո հաշուե-
ցան ց'380 միլիոն ֆր· բայց ծախք 160 միլիոն և ա-
ւելի եւս քան զմուտսն, որով և պարտք տէրութեանն
յաւելցան ց'2,500 միլիոն։

Զօրաց կրկին գասք են ի կայսերութեան Աւս-
տրիոյ, մի վիճակագրութեամբ ժողովելոցն, և միւս՝
ծնելոցն ի զինուորութիւն, որպէս ի սահմանս խո-
ռասղաց, և այլն· որք միւս կազմեն բանակ 100,000
և աւելի եւս արանց։ Ի խաղաղութեան ժամանակի
երբէ 420,000 զօրաց են Աւստրիոյ, իսկ այժմ 492,000·
բայց ի պատերազմի ժամանակս 630,000 զօրս խմբէ,
և աւելի եւս։ Ամբոխ քաղաքաց Աւստրիոյ են թերելի-
ենդատ, Բեզդելպրաուի, Գոմոռն, Գադդարոյ,
Գառլսպուրկ, Լէոբոլդգատ, Մանդռա, Վերոնա,
և այլն։ Ամբոխ նահանգիստք՝ Ծարա, Վենետիկ,
Սբալագրոյ, Ռակուզա, Բոլա, և այլն։ — Նաւա-
խումբն Աւստրիոյ ունի 40 նաւս և չոգենաւս մեծա-
մեծս և միջակս, և 115 նաւս մանուսս։

849· ԴՐԱՄՔ· ՉԱՓՔ· և այլն· — Միութիւն
դրամոյ ԱՒստրիա՝ ֆիւրինն է որ արժէ 2։59 ֆր·
Գաղղոյ· ֆիւրինն բաժանի ի 20 կրուս կամ ի 60
գրուչէս· Կրկնաֆիւրինն կոչի ռիսդալ կամ դուկա-
տ· յոր ծամբի գրամս բաց ի յիւբերդտ վարի և ոսկեայ
քանսնակ, զի արժէ 20 քրայցեր, գոյ և գուկատ և
հինգ արծաթի· իսկ պղնձէք են գրայցեր· Յատուկ
կան գասուս քանսնային բաժանի ի 100 հարիւրեակս
(լէնդէնի) պղնձիս· Ոսկի գրամ վարի ուէնտն որ է
14 ֆիւրին, և կիսասովրան· Յունկարիա՝ ոսկին ուն-
իր որ արժէ 4 ֆիւրին և 20 քրայցեր· Վարի ու-
րիք և գուկատ ոսկի որ արժէ երբէ 12 ֆր։ — Ի չափս
վարի Ռոն (Գռաս) որ է 0.316103 մէդրի· մղոնն
ծովային՝ 1,851851 քիլոմէդր, մղոն հասարակ
7,586456 քիլոմէդր· Կշռոց միութիւն է Մարկ
Վենետ որ է 0,280 քիլոկրամ, և բաժանի յոտի
ոնկ· Քառք որ է կրկին մարք։

850· ԲԱԺԱՆՈՒՄՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ· — Աւս-
տրիա ի գասուս գասուս մեծամեծս կամ յաշխարհս
առանձնակս բաժանի, յորոց կէսք ի Գերմանական
Դաշնակցութեան հասարի են, և այլք ոչ, և են սոքա
բոլ հին բաժանմանն

Ա՛ռնուաս ի Դաշնակց. Գերման.

	ԳԱՒԱՌՔ	ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆ ՔԱՌ. □.
Ա·	Գասուք Լինաց	
	Կալիցիա, Լոտոմերիա, Պուքովինա, Գրաքովիա·	4,360
Բ·	Գասուք Ունկարիոյ	
	Ունկարիա, Խռուադք և Սկլաւոնիա	11,600
	Դրանսիլվանիա	2,380
	Զինուորական սահմանք	2,360
	Դալմատիա	640
Գ·	Լոմպարտոյ–Վենետիկ	2,370
		23,710

Մասն Դաշնակց. Գերման.

	ԳԱՒԱՌՔ	ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆ ՔԱՌ. □.
Ա·	Աւստրիա և Սալցպուրկ	1,950
Բ·	Սգիրիա	1,110
Գ·	Լիւբլիկ, Խաթիա, Գառնիոլա, Գարինթիա	1,500
Դ·	Դիրոլ	1,465
Ե·	Պոհեմիա	2,655
Զ·	Մորաւիա և Շլեզիա	1,400
		10,080

Իսկ բոլ նոր բաժանման որ չև ևս յարդարեալ է
դիմովին, ի բազմագոյն ևս նահանգս զատացաւ պե-
տութիւնն, և ի բացառիկսիբ նահանգք ի շրջանակս
կամ ի գաւառս, և գաւառքն ի գնդագետութիւնս
կամ ի վիճակս· Խոռուադք և Սկլաւոնք զատան յՈՒն-
կարիոյ, Սալցպուրկ յԱւստրիոյ, այսպէս և այլք ո-
մանք յուրոյն կուսակալութիւնս հաստատեցան· Եր-
կոտասան նահանգաց ծանօթք են մեզ բաժանմունք,
և վերջինն՝ անխախտ պահէ, զոր և ի նկարագրու-
թեան խօսելոյ սեացոյք· իսկ չորիցն՝ չև ևս է կա-
տեալ զի ևս կամ ի մեր դիտութիւն հասեալ։

	ՆԱՀԱՆԳԸ	ԲՆԱԿՈՒԶԸ	ԳԱՒԱՌԸ		ՎԻՃԱԿԸ ԳԱՐ ԳԴՈՒԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ
Ա.	*Աւստրիա ստորին*	1,500,000		17	Հիցինկ, Գլոյդեռնայպուրկ, Պրուք Լայթայ, Քռոնայպուրկ, Ինցերստորֆ, Բոհատորֆ, Հոլէսպրունն Վերին, Վիեն Կայղատ, Կայնֆիրխեն, Քրէմս, Ցուէդլ Հոռն, Վայտհոֆէն առ Թայայ, Ս. Բէօլդէն, Շէյպս, Վայտհոֆէն Ի՛ասայ, Ամպէդդէն։
Բ.	*Աւստրիա վերին*	710,000		12	Լինց, Կրայն, Ֆրայդատ, Բորսպահ, Վէլս, Ֆեզքլապրուք, Կիրխտէն, Բիա, Շէրտինկ, Պրաւնաու, Սդէյէր, Քիրխտորֆ։
Գ.	*Սալցպուրկ*	160,000		3	Սալցպուրկ, Տէլլ, Վերֆէն։
Դ.	*Սդիրիա*	1,000,000	Կրաց	7	Կրաց, Հարդպէրկ, Ֆէլտպահ, Ռաթքէրսպուրկ, Լայսինց, Սդէնց, Վայց։
			Պրուք	6	Լէօպէն, Պրուք, Եուտէնպուրկ, Մուրաու, Լիցէն, Իրտինկ։
			Մարպուրկ	6	Զիլլի, Մարպուրկ, Վինտիշ-Կրէց, Լոէդդէնպէրկ, Բէդաու, Ռան։
Ե.	*Լիւրիկիա*	1,300,000	Կարինթիա	7	Գլահֆէնֆուրդ, Ֆեօլքերմարքդ, Վոլֆսպէրկ, Ս. Ֆայթ, Սբիդալ, Ֆիլլախ, Հերմակոր։
			Գառնիոլա	10	Լայպախ, Ըգայն, Քրայնպուրկ, Ռատմաննստորֆ, Առեւլապէրկ, Վիքթախ, Կարդէտ, Դրէֆֆէն, Կոդչէէ, Զէրնեմպլէ։
			Կորիցիա և Կրառոիսկա	3	Դոլմայն, Կորիցիա, Կրառիսկա, Սեսսանա։
			Դրիեստ		
			Իսդրիա	7	Գառց ա՛Խագրիա, Վոլոսքա, Մոնդանա, Բիչինոյ, Րովինեոյ, Տիննեանոյ, Լուսին։
Զ.	*Տիրոլոյ և Ֆորարլպէրկ*	900,000	Ինսպրուք	6	Ինսպրուքը, Շուաց, Քուֆշտայն, Քիցպուհել, Լանտէք, Խմդ։
			Պրիքսհեմ	5	Պոցէն, Մերան, Պրունեքէն, Լինց, Պրիքսէն։
			Դրինեղ	6	Դրինեղ, Պորկոյ, Գաուլհեզ, Գլէս, Րովերեատոյ, Դիմոէ։
			Ֆորարլպէրկ	3	Ֆելտքիրխ, Պրեկենց, Պլուտենց։
	ԳՈՒՄԱՐ	5,570,000			

	ՆԱՀԱՆԳՔ	ԲՆԱԿՉՔ	ԳԱՒԱՌՔ		ՎԻՃԱԿՔ ԳԱՄ ԳՆԴԱՊԵՏՈՒԹԻՒՆՔ
	ՆԱԽԸՆԹԱՑ ԳՈՒՄԱՐՔ	5,570,000			
Է.	*Պոռնտիա*	4,700,000	*Բրակա*	8	Սմիռով, Ալլէ, Քարտիճէնթալ, Ռաքռնից, Շէլն, Մէչնիք, Բրցեպրամ, Հորցովից։
			Պոռտվայս	9	Պուռվայս, Քրուժաս, Քաբլից, Նայհաւս, Դասլոր, Մուռհաուզէն, Բիլքրամ, Պէնեչաս, Վոդդից։
			Բաբտոռպից	11	Քոլլէն, Շուարցդոռդէլից, Քուգդենպէրկ, Լէաեչ, Տայչպրուս, Գռդիսլորթ, Բաբտուպից, Գրուտեմ, Հոհէնմաւթ, Լայդոմիշ, Լանտաքրան։
			Կիլյին	16	Քէռնիկկրեց, Քէռնիկկինհոֆ, Դրաւդենաս, Պրաշնաս, Ռայխէնաս, Սէնֆդէնպէրկ, Նայչդաս, Կլէյն, Հորդից, Հոհէնէլպէ, Բռոխպրաս, Նայպկոլտով, Դուռնաս, Սէմիլ, Եուշկպուռնցաս, Նէմպուրկ։
			Պէռհմիշ–Լայբա	10	Ռայխէնպէրկ, Ֆրիտլանտ, Կասկէս Դէդշէն, Ալասկ, Շլուքէնաս, Ռուռմպուրկ, Պէօհմիշ–Լայբա, Տաւպա, Լայդմիրից։
			Լիկեր	12	Դեբլից, Պրուքս, Սաաց, Քաաաէն, Գառլսպաա, Կրապլից, Լուաից, Եօաքիմսթալ, Լիկեր, Ֆալքենաս, Դոխաս, Բլան։
			Բիլսեն	13	Բիլսէն, Ռոթիցան, Քրալովից, Քլադդաս, Բրցեսդից, Պիշչֆդայնից, Դաւս, Շուդդենհոֆնէն, Վինդերպէրկ, Բրսխադից, Բիլզէք, Շաբաքռնից, Պրծեցնից։
Ը.	*Մորաւիա*	1,850,000	*Պրուն*	12	Պրուն, Դրուսպաս, Պասքովից, Վլչաս, Կայա, Ասբից, Խլաս, Տագչից, Նայդգաստ, Զնայմ, Քրոմմաս, Նիկոլսպուրկ։
			Օլմից	13	Օլմից, Սգհռնպէրկ, Շէօնպէրկ, Հոհէնզգաս, Լիդգաս, Նայդիգչայն, Վայսքերխէն, Մխոգք, Վալը–Մէսերից, Հրաուիշ, Քրեմզիր, Հոլնէշաս, Ոչնկարիշ–Պրոտ։
Թ.	*Շլեզիա*	500,000		7	Դրոբքաս, Քրայվալտաս, Նեկկռնտորֆ, Քրայսէնթալ, Դեչէն, Ցրիսեկք, Պլից։
	ԳՈՒՄԱՐ	12,620,000			

	ՆԱՀԱՆԳԱՐ	ԲՆԱԿՈՒԶԱՐ	ԳԱՒԱՌՆԵՐ		ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԳԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆՔ
	ՆԱԽԸՆԹԱՑ ԳՈՒՄԱՐՆ	12,620,000			
Ա.	Յոռուստանց և Սկլաւոնաց Երկիր	950.000	Յոռուստք	4	Ակրամ, Վարազտին, Բրայց, Գիրուէ։
			Սկլաւոնիա	2	Էսեէք (Յորոսմ Գեղեցց և Սիրմիա), Բոզնկա։
ԺԱ.	Սերուիա և Գլոնկ	1.460,000	Պագա–Պոտրոկ Թոտոնթալ Դրմնդ Գրաասոյ		
ԺԲ.	Գրաւնսիլվանիա	2,000,000	Գաազդպատրկ	5	Տեւա, Հացէկ, Քէօրէօշպանեայ, Քաուշպուրկ, Պոլաշֆելվէյ։
			Գրատզենպատրկ	4	Թորթաա, Քոլոշվար, Զիլըյ, Տեէժ։
			Ոէդդէկ	4	Լօրաս, Ռէդդէկ, Զեկէ, Կէօրկէնը։
			Ոտմարնէյ	4	Վաշարհէյ, Ուաշվորհէյ, Զիքսեբէնտոր, Ս. Կէօրճ։
			Գիմրտոյ	3	Գոկորոշ, Ուադա, Բէրշան։
			Հերմաննշդատ	12	Պոռոշ, Միւլդախ, Ռայսմարք, Հերմաննշդատ, Մէտիաշ, Շէղպուրկ, Ռէբա, Կրոշչէք, Լէշքիրլեէն, Քրոնշդատ, Պիսդրից և Եվզաչէնշդատ։
ԺԳ.	Կալիցիա, Պոքովինա, Գրագովիա	5,400,000			
ԺԴ.	Դալմատիա	430.000			
ԺԵ.	Ռաձկարիա	8.300,000			
ԺԶ.	Զինուորական Սահմանք	1.230,000			
ԺԷ.	Լոմպարտիա և Վենետիկ	5,960,000			
	ՀԱՄԱԳՈՒՄԱՐ	38,350,000			
	Զօրականք	492,000			

Արդ Թէպէտ աստանօր կարգեցաք զդաւառագրացն ըստ Նորոյ բաժանման աշխարհի պետութեանն Աւստրիոյ, սակայն առ չգիտելոյ Ձեզիւ զսահմանս գաւառացն և վիճակացն զատուցելոյց, տեսլիք բաղում ուրեք Հնոյն վարիլ բաժանմամբ, և զանց զդաւառացն արտրեալ դքաղաքանուն տալ Ծանօթութիւն։

Ա. Բ. ԱՐՇԻԴՍՈՒԹԻՒՆ Ա. ԻՍՏՐԻՈՑ

ԿԱՄ

ՍՏՈՐԻՆ ԵՒ ՎԵՐԻՆ ԱԻՍՏՐԻԱ.

851. Ինչպէս գաւառք պէսպէսներեան Ասորիոյ են երկրքին այս նահանգք, յորոց մին կոչի Արեւելեան Ինդայ կամ Մոորին Ասորիա, և միւսն Արեւմտեան Ինդայ կամ Բարթը Ասորիա, և է յընդարձակ գաշտին Դանուբայ, զոր ի հիւսիսոյ պատան Լերինք Պոհեմիոյ և Մորաւիոյ, և ի հարաւոյ՝ Թիզ Ալպեան Լերանց։ Հարաւային կողմն երկրին լեռնային է և բազում ուրեք ձիւնապատ, ունելով և դեղեցիկ հովիտս. անդ է Կրոս-Կլոքներ լեառն 12,000 ոտնաչափ բարձրութեամբ, և Վիսպախեռն 11,000. արեւելեան կողմանք հարթաճաւալ են և քաջ մշակեալ, թէպէտ ոչ յոյժ բարեբերք։ Մերձաւորագոյն ի մայրաքաղաքն Վիէննայ է Էբօրլոսսդերկ լեառն Վիէնբվալոայ որ մասն է Նորիկեան Ալպեացց։ Ի Դանուբ Թաւիին Էնս, Սալցախ, Էնն և Դրաւն՝ որ անցանէ ընդ Հալշդատ և ընդ Դրաւնսեէ լիճս, և ունի ջրվէժ 60 ոտնաչափ բարձրութեամբ առ Լամպախայ։ Կլիմայ փոփոխական է յարեւելակողմանս, ցուրտ յարեւմտեան։


852. Ա. ՍՏՈՐԻՆ ԱԻՍՏՐԻԱ. **Վիէննա**, կամ Վիեն և Վիէննա (Wien, Վիէնաւոնա). — Մայրաքաղաք ինքնակալութեան Ասորիոյ առ աջին Դանուբայ ի ձախմէ, ուր ի բազում առաջս բաժանի, և դեռևին Վիէն խառնի ի Նա. չէ հաւասի ժամանակ չինութեան քաղաքիս, զի և անուանն յոյժ յԱ-ին դարու յաւուրս Պապէնպերկայ դբսէյն սկսաւ պայծառանալ, մինչև Մաքսիմիլիանոս Ա հաստատեաց անդ զԹոռ տերութեանն. երկիցս պաշարեալ յՕսմանեանց, յառաջնումն կարծիս ե ազատեաց զայն, յերկրորդումն (1683) Ցոլհանէս Սոպիեսքի պոլսոյ Լէհաց. ամրութիւնքն որ առ երեսնամեայ մարտիւքն չինեցան՝ յետ 1810 ամին փոխեցան ի պարտէզս. երկիցս էառ գթացաքս և Նաբոլէոն. իսկ յամին 1848 խռովիւք Ասորիոյ կալան զայն ի Մինիչ ինքնակալին, և պատրամամբ և ոխրահաւրութեամբ տիրեցին նմա գործեալ զբիք կայսերն։ Փոքրիկ է միջնաքաղաքն, և են նորա 34 աբուարձանք բաժանեալ Վիէնն գետով. որպէս և առաջք մի Դանուբայ զատուցանեն զնա ի Էբօրլոշդատայ, ընդ բուն քաղաքն և ընդ արուարձանս նորա ձգի ծառասանն կլասս։ Ի միջնաքաղաքին 60,000 անձն բնակիչք են, փողոցք նորա անձուկք, հրապարակք փոքրունք և տունք բարձունք մինչև չեօրէնսպերկս. ի միջնոյր քաղաքին կայ հրապարանն կրապէն, և ի նմա անուանի սիւն Երրորդութեան. յիշատակելի են և հրապարակքն Ամֆոֆ, Նայմարքդ և հրապարանն Ցովսեֆայ Ա՝ ուր կանգնեցաւ նմա անդրի հինգերորդ ի 1806. հրապարակն Չհնուց 400 ոտնաչափ երկայն, որ յանգի որպէս հրապարանն Ցովսեֆայ ի պալատն ազգունի որոյ է անդաստակ լայն 228 ոտնաչափ, երկուսակք Ֆեմիլք և գրասոք են հրապարակին։ Երեւելի է Պուրկ պալատ կայսերն, յորում կան ազգի



Պուրկ, պալատ կայսերական

ազգի Թանդարանք, և նշանաւոր է ի նոսա յոյժ գրամոն, որում արդեօք չիք հաւասար ի Հռոմէական յամենայն Եւրոպա. Թեակից են պալատանն ապարանք քարտուղարին, Թատրն Մեծ, ձիարձակարանն, կաքաւարանն, մասնադարանն՝ յորում կան 360,000 հատոր գրոց, 12,000 ձեռագիրք, 300,000 պատկերք ապագրեալք, ամենեքեան որքա չինուածք հոյակապք։ Ոչ ինչ կարի հեռի ի պալատանէն կայ դղեակն դբսէն Սաքս-Դէչէնայ, և Թատրն՝ Մեծ քան զարքունականն Թատր. նշանաւոր են և ապարանք անուանեալ՝ քարտուղարին Ռընկորիդ, տունն գրամոց՝ որ յառաջն բնակութիւն էր Եւգինէսոի իշխանին, հասարակաց ժողովարանն, զինարանն կայսերական, զինարան քաղաքին, և գարպատք իշխանացն Լոպքովից, Շուարցենպերգ, Ֆէրդինանդ, Ֆրանից, Լուդերյաղի, և մանաւանդ Լիխտենշդայն իշխանին ընծեր գրատանք։ Ընդ հասցէին 123 պալատք են ի Վիէննա բաց յայսպանիկ պետութեան, 60 եկեղեցիք և մատուռք, 15 մենաստանք, 2 եկեղեցիք նորաշաղկից, 2 Ճեմնոց, 2 սինակոկայք, 370 ըզօսատունք խաղոյ և գաւիթք, 1,300 պանդոկք, կապելզք, 5 Թատերք, և այլն։

853. Մայր եկեղեցին Ս. Ստեփանոս հռչակեալ է ընդ ամենայն աշխարհ, յԱ-ին դարու սկզբնաւորեալ՝ ի ԺԵ աւարտեցաւ չինութիւն նորա, աշտարակ զանգակաց



Մայր եկեղեցի Ս · Յոհաննու

նորին գեղեցիկ և ճարտարարուեստ, 420 ոտնաչափ բարձր։ Նշանաւոր են և եկեղեցի Ս · Լաւրենտիոսի չքնաղ գոթացի ճարտարապետութեամբ։ Եկեղեցի Օգոստինեանց, յորում կայ մահարձան Փրիտերիկոս արքունի քանդակեալ՝ ի Գանովայ։ Եկեղեցի վերարաւորացն ուր են գերեզմանք կայսերական տոհմին։



Եկեղեցի Ս · Լաւրենտիոսի


— Ի համալսարանին՝ որ հաստատեցաւ ի 1365՝ նշանաւոր է գրատունն 90,000 մատենից, գիւանացն, պարտէզ բուսաբանութեան, և լսարան բժշկութեան։ Ի 1821 յաւելաւ ի նա ուսուցմարան աստուածաբանութեան նորաշինից։ 2,300 համարակք են համալսարանիս։ Աշնուանի է ի Վիեննա ուսուցմարանն բազմարուեստից, ձեմարանն արուեստից լեզուաց, ձեմարան գեղարուեստից, պահպարան երաժշտութեան, վարժարան բժշկութեան անասնոց, ձեմարան ազնուականաց, Թանգարան մեծ բնական պատմութեան, մատենադարանք բազումք։ բաց ի սոցանէ անկիլանոցն Ցովսեփայ ԲՌ 2,000 հիւանդաց, ուր ամի ամի մտանեն 15–17,000 ախտաճէպք, վերնորոյց անկիլանոցն 800 անձանց, որբանոցն մեծ։

Նշանաւոր ի մերազնեայ յիշատակարանս՝ մենատանն Մխիթարեան Հարց Ս · Պաշտպան Աստուածածնի կոչեցեալ՝ գեղեցիկ և ճոխ տպագրատամբ և Թանգարանք։

854· Արուարձանք քաղաքին բարեշէնք և ղուարճալիք ևս են. ընդարձակագոյն ի սոսա է Լէոբոլդսդատ ի հիւսիսակողմն ի կղզեկի ղոր Թէա մի Դանուբ այ չքնաղատէ, և յափունս նորա կան բազանիք յորս գլուաղրն յանուն Անահտայ վերամբոյն, նշանաւոր ի կղզեայ անդ է մարմանդն Բրադէր զարգարեալ հոյակապաւ ձեմիւքեք և կրպակօք և պանդոկաւ, այս է զբօսանաց տեղի ժողովրդեանն։ և միւս պարտէզն Ակարդէն՝ վայելուչ ևս զբօսարան առաւօտին ձեմից· յարձականդ է և Թաար ժողովրդեանն։ Յաբուարձանսն Էրապէրգ, Վայսկերպէր, Լանաշգրաբէ, ղոր բաժանեն ի քաղաքէն Վիեն, Պլասս և Ջուանգբէն, կան անկիլանոցն զինուորաց, վայելչագիտակ սալարանք զբօսանաց կայսերի՝ յորում կան պահարանք հաւաքածոյ զինուց և կերտուածոց, պալատն և պարտէզ հաւաբակաց Ըուարցենպէրգայ, պարտէզ բուսաբանութեան, գեղեցկաչէն եկեղեցին Ս · Կարոլոսի Պոռոմէոսի կառուցեալ ի 1716 ըստ ձևոյ Ս · Պետրոսի որ ի Հռոմ, և Թատրն մեծ քան զամենայն Թատերս Վիեննայ։ Ի Մարիահիլֆ արուարձանի կայ պարտէզն Էմպէրհաղէ, ի Կայսրաս և ի Ըոդգէնֆիելտ՝ գործարանք կարևորք, յԱլբէր և ի Վէհրինգէր են անկիլանոցն Ցովսեփայ Բ, որբանոցն և մանկանց բացընկեցիկ տղայոց, և տունք բժշկութեան. ի Ռուսաս՝ պալատն և պարտէզ Լիխտենշտայն իշխանին, և գործատուն յախճապակւոյ։ Ի գործարանս և ի տունս ձեռարուեստից ընդ ամենայն 80,000 արուեստաւորք են, գլխաւոր գործ է նոցա յորինուած զարգուց, և բամպակի, ասու, պղնձոյ և մետաղից տարբեր։

855· Անուանի է և վաճառականութիւն Վիեննայ ընդ Տաճկաստանի, Խաղիոյ և Ռուսիոյ· քան յամենայն քաղաքս Գերմանիոյ ի սմա հնարին զբօսանաց նիւթք· ի գեղարուեստս անուանի է երաժշտութիւն նորա և սիրելի Ժողովրդեան· Հայան, Պարոյր և ՊէէԹովէնն երգահանք հռչակեալք զամս յորովս կեցին ի Վիեննա։ — Կլիմայ քաղաքին բարւոք է, այլ օդք փոփոխակաք ի սակս մերձաւորութեան կաթսպաթեան լերանց՝ յորոց սաստկ հողմունք հնչեն· երբեմն և ցրտիք յամառնամուխ։ ոչ ինչ կարի հեռի է ի քաղաքէն Քահլենպէրգ այգեւէտ լեառն Վիէննայ։ Բնակիչք առաւել քան զ'420,000։

856· Նշանաւոր տեղիք ի շրջակայսս մայրաքաղաքին են Շէօնպրուն (Schœnbrunn)՝ արքունի սպասրանք զբօսանաց՝ փարախաւ հեռի ի Վիեննայ, որ ոմնի գեղեցիկ պարտէզ բուսաբանութեան և փանարան երեից· և ամարատունն Լաքսենպուրի փարախաւ և կիսով անջատ ի քաղաքէն ի վայելուչ գաշտի, քնքաղաքրդ է պարտէզ նորա, յորում կայ շինուած նորաձև Փրանցէն-Պուրի անուն գոթացի ոճով, և ի նմա հաւաքուն ընծայը կահուց և զինուց, նկարուց և ազգի ազգի անօթոց ոմանց գարու, և որմանք իսկ շինուածոյն և գրուագք առեալ են յաւերակաց և ի քարանց հին գղեկաց։ Ընդ ՄՀ կրկին կայսերական գղեկացն կայ Պրուհլ գեղ զուարճալի



Շհեօնպրան

'ի գԼղեցիկ հովիտ՝ ուր յաճախէ Ժողովուրդն յատուկ տանից։ — Մերձ է 'ի Վիէննա և Պատէն քաղաք վաղբիկ, 2,000 բնակչօք, որ ունի բաղում ջերմուկս և զբօսալից վայրս շուրջանակի։ — Լոպաւ կղզի և գեօղն Վակրամ անուանի եղեն վասն պատերազմից 1809 ամին, որպէս և Էսլինգէն։

857· Ընդ նահանգ Համբրէն անուանի է յամենայն Գերմանիա՝ 'ի Տարտարութեան ձեռարուեստից. առ ի բի Հէմպուրկայ (Haimbourg) կայ գործարան մեծ ծխախոտի։ — Ի Կայշդատ. Բն. 18,000· գործատուն ատուաղեղոյ, յախճապակւոյ, զտարանք շաքարի, և այլն։ — Ի Քլըդէր-Նայպուրկ· Բն. 4,000· մեներանոց 'ի պէտս կառուցման նաւից և գործարան անկուածոյ կաւուց։ — Ի Կայֆատ մեծ գործարան բերբերի։ — Ի Կլաւտորֆ, գործարանք գործեաց տարրալուծութեան։ — Ի Բոդկհտորֆ, գործատունք Հիւսուածոց բամբակի, այսպէս և կտոր գեօղս և յատանս. ձեռագործքն բամբակի երևելի են քան զամենայն զգեստս գաւառաց տէրութեանն։

858· Բ· ԲԱՐՁՐ ԱՒՍՏՐԻԱ· Ի սմա գԼեխաւոր քաղաք է

Լինց (Lintz)· — Յայնմ Դանուբայ, ունի կամուրջ մեծ, գործատունս բամբակի և ասուեղէն կերպասուց, և շուրջ զերբեւս աշտարակաձև ամրութիւնս 'ի պաշտպանութիւն բանակի միոյ· ունի մարզատուն, լիկէոն, ընկերութիւն երաժշտաց։ Ընդ Լինց և ընդ Պուտվայս ձգեալ է շուխլ երկաթի որ գնայ մինչև 'ի Կմիւնտէն 'ի հարաւակողմն Դանուբայ, ուր կայ շտեմարան մեծ ազի։ Բն· 30,000։

Շդեցէր (Steyer)· — Ունի հռչակաւոր գործարանս երկաթեղէն անօթոց։ Բն· 10,000։

Կմիւնտէն կամ Միւնտէն (Gmünden, Münden)· — Անուանի վասն ազահանկին և երկաթի շաւղին։ Բն· 1,000։

Քրեմսմիւնսդէր (Kremsmünster)· — Ցորում նշանաւոր է միաստանն հին, դիտանոցն և մատենադարանն։ Բն· 1,000։

Գ· ՍԱԼՅՊՈՒՐԿ

859· Այսանգամ այս բնական հանգամանքին նման է հարաւային Աւստրիոյ, և մասն իսկ նորա ձանաձիւր, և լեռնային քան զնա։

Ի խորս գաւառին ի լերանցամէջս, և ի սահմանս Դրաւնաեկ և Ադդերսեկ լճից կայ Սալց–Քամմէր–Կուդ վիճակ ուր բազում աղսհանք են· և բնակիչքն 30,000 մարդիկ ի գարմանոյ պաճարաց և ի հանքաց ալի հայթհայթին զապրուստս կենաց· իսկ աղն զոի ի Հալեգատ առ համանուն լճաւն։

ՍԱԼՑՊՈՒՐԿ կամ ՍԱԼԻԶՊՈՒՐԳ (Salzbourg, այն է Քաղաք աղի)· — Գլ· Ք· կայ ի մէջ լերանց 1,394 ոտնաչափ բարձր յԱրեւսց ծովէ, գուռն մի քաղաքին հատեալ է ի ժայռին՝ որ պարսպէ զքաղաքն ընդ 420 ոտնաչափս ձանապարհի· Ս· Հոբերտ հիմնեաց առ Լսպիկոպոսարան յ'716 Թուին· յամին 1732 հալածելոյն սասի Նորաղանդք պանդխտել սկսան։ Գեղեցիկ են մայր եկեղեցին, պալեսպիսկոպոսին սպարանք, և արտաքոյ քաղաքին ամարաստունք Լէոբոլդսբրոն, Հելլբրուն, և այլք։ Հայրենիք է քաղաքս Մոզարտ քաջի երգահանի։ Բն· 18,000։



Սալցպուրկ

ՀԱԼԼԵՑ (Hallein)· — Ցեղր Սալցախայ որպէս և Սալցպուրկ, լերինք փարախոք հետի ի նմանէ, ունի աղահանս մեծամեծս, որ ընդ Սալց–Քամմէր–Կուդայ տան ամի ամի 1,200,000 կենդինար աղի։

Դ· ԴՐՄՈՒԹԻՒՆ ՍԱՒՐԻՈՑ

860· Սգիրիա և ըստ գերմանացւոց Շդայէրմարք (Stayermark), երկիր լեռնային է, և բաղուկք Ալպեսեայ երկայնին ի հիւսիսոյ կողմանէ, որոց բարձրութիւն չանցանէ զ'9,000 ոտնաչափաւ· հարաւակողմն մեմ օգով, ունի բլուրս պտղաբերս և արգեւէաս· Բերք Սգիրիոյ են երկաթ ընդհէ, աղ և գեանածուխ· Մուր և Տրաւ գետք անցանեն ընդ Սգիրիա, և յՈՒնկարիա խառնին ի մի· Սաւ անցանէ ի հարաւային սահմանս, և Ռաւսպ գնայ յՈՒնկարիա· Արուեստաւորք գաւառիս պարապին ի շինել հրացանս, հրանօթս և երախակալս երկաթիս և այլս այսպիսիս։

861· ԿՐԷՑ կամ ԿՐՕՑ (Graetz)· — Մայրաքաղաք Սգիրիոյ տարածեալ ի կրկին ափունս Մուրայ յորոյ վերայ արկեալ կան կրկին կամուրջք· ի բազում հեղուկսկայ շինուածսն երևելիք են դղեակն ի վերայ լերին, եկեղեցին Ս· Կաթարինեայ յորում կայ մարմարեայ գերեզմանոցն Բ, և անկեղանցն Բ ծովսեփայ կանգնեալ ի 1787· համալսարանն հիմնեալ ի 1586 և կրկին հաստատեալ ի 1827· գրատունն 100,000 մատենից, և Թանգարանք մեծամեծք· ունի և գործարանս ոչ սակաւս, և ոտնավաճառս երկիցս ի տարւոջ· Բն· 52,000։

ԼԷՕԳՆ (Leoben)· — Քաղաք փոքրիկ· աստ եղև դաշնագրութիւնն պոնապարտեի ընդ Աւստրիոյ ի 1797· Բն· 3,500։

ԱՁԷՆԵՐՋ կամ ԻՆՆԵՌՆԳԵՐԳ (Eisenerz, Innernberg)· — Ունի երկաթահանս մեծ և անուանի ի 1000 ամաց հետէ· յորոց ամի ամի հանեն 280,000 կենդինար երկաթոյ· Բն· 1,900։

Մ–ՐԷԼ–ՅԷԼ (Maria–Zell)· — Գեօղ յամայի և ի խրթին տեղւոջ, ունի եկեղեցի գեղեցիկ՝ մեծարգոյ ուխտաւորի, ուր մինչև 100,000 անձինք գան ի տարւոջ· պատկեր Տիրամօր փայտեղէն է, յորմէ նշանք և յաջողութեամբ մատան· կայ անդ և լքեալ աբբայարան Բենեդիկտեանց, որ ունի բնակարան 1,200 անձանց· Բն· 1,100։

Ե. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԼԻՒԲԼԻԿԻՈՅ

862. Կամ Կաթոլիկական գաւառք հարաւակողման Սաւայ կոչեցան միով անուամբ Լիւբլիկ. այլ յետ 1814 ամին միւսանգամ վիճակեալ Աւստրիոյ կոչեցաւ Թագաւորութիւն Լիւբլիկիոյ յաբելեալածով գաւառաց կաթոլիկոց, Գառնիոլայ, Ֆրիուլայ, Խդրիոյ և Դրիեստայ: Լեռնային է երկիրն, ունի և գաշտս բարեբեր. Սաւցպուրկայ և Գառնիոլայ լերինք տարածանին ի բազում կողմանս գաւառին, յորս Դերկլոս ի Գառնիոլ բարձր է 10.000 ոտս. Գարագ կրաքեր լեառն տարածանի զծովեզերբն. ի լերինս անդ գտանին անմաաք քարացեալ ջրոց, յամենս պատահէն անդանօր սասանութիւնք, և առուակք մերթ հետս խաղալ ծածկին և մերթ յերևան գան: Տրաւ, Սաւ և Իզոնցոյ գլխաւոր գետք են Լիւբլիկոյ. և ի վերնն նշանաւոր է Ձիրքնից հանապաղագնաց ջրովք: Ի ծովեզերս Լիւբլիկոյ յԱդրիականին կրկին ծոցք են ընդարձակք, մին Դրիեստայ յարեմուտս, և գառներոյ յարևելս կոյս, և յերկուցն միջի կայ լեռնայայզ Թերակղզին Խդրիոյ: — Հովիտք գետեւէտք բազում են ընդ բարւոք կլիմայիւ, ծովախանդ օդ ևնդհան է խոալիոյ: Բերք նորա՝ գայտ անհատի, արմատք, պտուղ, գինի, պղինձ, կապար և անդիկ: Ժողովուրդն խառնուրդ ինն է բազում ազգաց, որպէս խոռուագք, Վլինք, Ռայգք, և այլն:

863. Ի գառնիոլա գաւառի գլխաւոր քաղաք է ԼԱՅԳՈՒԱԽ կամ ԼՈՒԲՈՒՃՆ (Laybach). — ԵՒս Սաւա գետով. մայրաքաղաք Լիւբլիկոյ և շահատան, գեղեցիկ է մայր եկեղեցին: Ունի լիկեան, մարզատուն, ընկերութիւն երաժշտասիրաց, ընկերութիւն երկրագործութեան և արուեստից Գառնիոլայ: Բնակիչք 20,000:

ՔԼԱԳԵՆՖՈՒՐԹ (Klagenfurt). — Գլ. Ք. կարին Թիոյ բաղնէն. ունի գրատուն 40,000 մատենից. լիկեան, մարզատուն, վարժարան օրիորդաց. և այլն: Բն. 16,000: — Փարաքաս հեռի ի քաղաքէս պահի մարմարիոնեայ նստարանն ուր գուքաք կարինթիոյ զգեցեալ զգեստ հնութեան երդնուին հաւատարմութեամբ հակել ի վերայ իրաւանց ազգին:

ՎԻԼԼԱԽ (Villach). — Քաղաք փոքրիկ առ Տրաւայ, ի սահմանս նորա կան հանքք կապարի և հանգուստանգիի և մարմարիոն պատուական: Բն. 5,000:

ԻՏՐԻԱ (Idria). — Ի մէջ լերանց, ունի հանք սնդիկի անուանի ընդ ամենայն Եւրոպա վասն առատութեան, Թէպէտ և այժմ նուազեալ է և տայ ի տարւոջ 1,500 կենդանեաւ: Բն. 5,000:

864. Ի գաւառին Դրիեստոյ

ԴՐԻԵՍՏ (Trieste, Տերգեստ). — Ի խորշ համանուն ծովածոցին ի հիւսիսի Ադրիական ծովու, առաջին վաճառաշատ ծովեզերեայ քաղաք յԱւստրիա, պայծառացաւ նա յաչս յանչքանալ վենետկոյ: Ի չինուածս նորա քաց լեկեղեցեաց նշանաւոր են ժողովեալ վաճառականաց, մաքրարան, Թէատրոն, կամերզակիր ազատարակ երկու, գործարանք մետաքսի, զտարան շաքարի, սասոնի, և այլն. գպրոց ծովագրութեան, գպրոց օրիորդաց, Թանգարան վերծանութեան Մրնեղէն Հայեալ, հրապարակն վաճառականաց ապակաթելոյ ձեղունաձ: Իբր 10,000 նաւք մտանեն ի տարւոջ ի նաւահանգիստ Դրեստոյ, յորոց շատք յարեւելից եկեալ: Ատ ի 1768 սպանաւ հետևողն Վինկելմանն և յիշատակարան նորա կանգնեցաւ անդ. ջրմղալորք քաղաքին լեռնային են և բարեբեր: Բն. 76,000:

865. ԿՈՐՈՑԻՈՒ կամ ԿՏՕՐՑ (Goertz). — Ի Ֆրիուլ առ Իզոնցոյ գետով, ունի գործատունս ձեռագործ ոգ կտաւոց և մետաքսի. սատ նոսի արքեպիսկոպոսն Լիւբլիկոյ և Դալմատիոյ: Կարոլոս Ե արքայ Գաղղիոյ մեռաւ ի Կորիցիա և անդ ընակեր երբեմն Թոռն նորա Ենրիկոս Ե: Ֆրիուլացւոց բարբառ նմանագոյն է լատին լեզուի քան իտալականին: Բնակիչք 10.000: — Անուանի է առ սովաս Մոնդէ Սանդոյ բլուր գինեաձոյ:

ԱՔՈՒԻԼԷԱ որ և ԱԿԼԵՐ (Aquileia, Aglar, Ակուիլէա). — Գետոյ ի սահմանս Խաւիոյ կիսով փարսախաս հեռի ի ծովէ, ի հնումն քաղաք եր անուանի ի վաճառականութեան և յամրութեան և երկրորդ Հռոմ անուաներ. Առաջին հին ի վեր կործանեաց գթացաքս ի Թռուին 452, և վերծանքն անտի կառուցին զվենետիկ քաղաք ի ծովակոյս Ադրիականին: Բն. 1,500: Ըստ սակաւ հնութիւնք ի փլատակաց նորա երևին:

ԿՐԱՏՈ (Grado). — Նաւահանգիստ համարեր Աքուիլէայ, և անդ նստեր պատրիարքն վենետկոյ ցկէս ԺԷ դարու:

866. ԳՈՓՈ Տ'ԻՍՏՐԻԱ (Capo d'Istria, այս է Գլուխ Խդրիոյ). — Ի ցամաքակղզւոյն, ունի նաւահանգիստ, անդ պատրաստեն զալ ծովային: Բնակիչք 7,000:

ՐՈՎԻՆՈ (Rovigno). — Ունի կրկին նաւահանգիստս, վաճառականութիւն յաջող. Բն. 12,000:

ՊՈԼԱ (Pola). — Ընտանի առ կայսերաք Հռոմայեցն ի նմա մեհեանք երկու, ամփիթէատրոն Հռոմայեցի և յաղիական համար. նշանաւոր է և մայր եկեղեցին զարդարեալ սեամբք. ունի նաւահանգիստ զինուորական:

Զ· ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ԴԻՐՈՂԱՑ

867· Վերպարանք նմանագոյն է Դիրոլ Հուիցերլանդ, վասն որոյ և մարդ է մասն ասել զսա աշխարհին. բարձրաբերձ և ձիւնախառնաց սառնապատ լերինք Ալպեսյ տարածեալ են ի նմա. կլիմայ, բերք և բարք ընակչացն նոյն ընդ Հուիցերլանդ։ Հռաքինական Ազգաց որ ձգին ի Կրնձիսն գաւառէ յարևմտից ընդ արևելս՝ երկայնեալ ի Դիրոլ հատանեն զնա ի հիւսիսային և ի հարաւային մասունս. բազուկք նոցա սփռեալ ընդ ամենայն կողմանս հովիտս մարգաստս 29 Թուով յարգարեն ի սիրեւս. բարձրադոյնք լերանցն են Օրզլեր 12.000 ոտք. Ջեմիկվալտ հաւասար նմին։ Գետք գլխաւորք Ինն՝ որ գայ Լինդադինայ, Իլ, Աարձ և Ալլոյք։ երիք են ճանապարհք որ ի Դիրոլայ տանին Լիտալիա, մին Վերմայրէ, միւսն Ամբեզցոյն (որ ի Բուռդեր-Թալայ տանի ի Վենեսիկ), երրորդն Մծագոյն և զարմանալի հատաւ Նեղով զլերինս Սգելլեայ՝ ի Մբենդեր-Թալայ հանէ ի Գորմիոյ։ Ալիմայ Դիրոլայ օդ է միօրինակ ամենայն ուրեք, հիւանդութիւն անբեր է, հարաւակողմն հովիտք բերեն գինի և պտուղ և նարինջ խոտ. բայց երկիրն ինամով մշակեալ է, մինչև յամայիս և ի ժայռս խոտ արկեալ է հոդ բուսական. չոհաբեր են Դիրոլայ անասունքն, պահանդք և հանդէպ արծաթոյ, սրը ղինոյ, կապարի, ազի· բայց գործածողք միայն ի սահմանս իշխելոյ գտանին։ Ազգ ի վերայ այսր ամենայնի չեն բաւական արգասիք երկրին ի սնունդ բնակչացն, վասն որոյ ամ ամի երիք կամ չորք բիւրք մարդկան ելանեն գնան յտասր աշխարհս ի գործ վաստակոյ, կամ ի վաճառականութիւն և յարուեստս, որպես ի հիւսնութիւն, ի հովուութիւն, և այլն. և ապա գառնան ի հայրենիս իւրեանց։

868· Բազմութիւն ժողովրդեանն Գերմանացի է, կան և 250.000 Իտալացիք ի հարաւակողմն. բարբք պարկեշտք և հաւատարիմք են, գործոնք, հայրենասէրք, ազատասէրք. գործեն զվաշ և զբուրդ, գորգս և կապերտս, և փայտեղէն անօթս. Ճարտարք են ի կրծել զքեղանիկ թռչունս, անվրդովք ի հարուած հրացան զինուք, յաջողակ որսորդք այնմանց, և սխրող երջոց և պարուց։ Եւ զգեստք են նոցա պատմուճան գոնեագոյն ժայռաւինեալ, վարտիք սեաւ և նեղ, գլխարկ թաղեալ լայն ժայռաւինեք և փետրազարդ, և կօշիկ նեղակռուց։

869· Դիրոլ յաւուրս Օգոստեայ կայսեր միացեալ էր ընդ Հռոմեան, վինդելիկեան և Նորիկեան հանգաց. յանցանել Հաննիպալ ուրեքն և յետ ընդ ձեռամբ բարբարոսաց անկանելոյ՝ ի Գաւղոմինեան պետութիւն խառնեցաւ. ի միջին դարս բազում տեղաք ինքնիշխանք մարտնչէին ի վերայ նորին, մինչև յաւարտ ԺԻ դարու բոլորովին տիրեաց Մէնհարտ, և Թոռն նորա յանձնեաց զայն ի տուն Աւստրիոյ, որ ընդհանուր ազատութիւնս զի մի ապստամբեսցին. արուեստիւն քաջութեան նոցա քաջ հանդիսացաւ ի 1809 ի պատերազմին ընդդէմ Գաղղիացւոց և փառաւորեաց յոյժ Անդրէաս Հոֆէր։

870· ԻՆՆՍՊՐՈՒՔ կամ ԻՆՍԲՐՈՒՔ (Insbruck).



Ինսպրուք

— Մայրաքաղաք առ Ինայ, պատեալ լամայի և ի բարձր լերանց. ունի կամուրջ գեղջիկ, համալսարան հիմնեալ ի 1672 և հաստատեալ վերստին ի 1826. յորում կան լսարանք բժշկութեան, փիլիսոփայութեան, իրաւաբանութեան և Թանգարան բնական պատմութեան. յարբունական եկեղեցւոյն Նշանաւոր է մահարձան Մաքսիմիլիանոսի Ա, շիրմէն և անդրի Անդրէասայ Հոֆէրայ։ Գործարանք սակաւք գտնի ի սմա, այլ առաքսառք վաճառուց բարւոք ընդ Իտալիոյ։ Բն. 15.000։ — Ամրոցս գղեակ գեղեցիկ հեռի է ի քաղաքէս փարսախաւ Ճանապարհի։

Հօլ (Hall)։ — Կաւուցեալ կայ ի սեղանոյ ուսի սկաւառի Ինն հաւարկելի գոլ։ Բն. 5.000։

Պրիքսէն (Brixen)։ — Ի վերայ Ալլախ գեղոյ քաղաք ամուր։ Բն. 4.000։

871· Պոդզէն կամ Պոլցանոյ (Bolzen)։ — Եւ սա ի վերայ Ալլախայ, ունի գործարանս միապաւի· տնձաղաճանաք լորիցս վերին առ ի տարւոջ։ — Հուսկ ի սա կան քարահանք սպիտակ մարմարիոնի։ Բնակիչք 9.000։

Դրէնդ կամ Դրէնդո կամ Դրէնդոյ (Trient, Տրիտենդոն)։ — Քեզը Աոիճէ գեղոյ· անուանի եղև

վան վերջին ինկզիսյան ժողովոյն որ խոհեցաւ ի Ս. Մարիամ Մէծն Եկեղեցւոջ (1545–1563)։ Նշանաւոր է չհնաւած եկեղեցւոյն այնորիկ, հրատարակին, պալատ եպիսկոպոսին, գործարանք մետաքսի, և այլք ի շրջակայս. ունի և վաճառականութիւն։ Բնակիչք 15,000։

ՐՈՎԵՐԵՏՈ (Roveredo). — Ուր Ադիճէի, ունի մետաքսի գործարանս։ Բն. 8,000։

872. Ի Ֆորարլպէրգ (Vorarlberg) նահանգին որ է մասն Դիւրոլայ (123 փարս. տարածութիւնամբ) բնակեն 110,000 մարդկան, և գլխաւոր քաղաք ի նմա

ՊՐԷԿԵՆՑ (Bregenz). — Ցածին Հնին կոստանդպոլ. ուր յեսնեալ ի Տարասարութենէ։ Բն. 2,500։

Տ-ՈՒՆԲԻՐՆ (Dornbirn). — Ասան մեծ և արուեստաւորս։ Բն. 3,000։

Ե. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՊՈՀԵՄԻՈՑ

873. Պոհեմիա կամ Պէօհմ, այս է Պոյաց տուն (Bojheim, Böhem, Bohemia), ի վերանց բարձանց պատեալ, ի խորոյ նսեմ. ի հիւսիսոյ պարսպին զնա Սլաւէդ և Երծկէպիրկէ Լերինք, ի հարաւոյ Մօրաւեանք և Պոհեմեանք. բարձրագոյնն ի սոցանէ չանցանէ քան 4,300 ոտս. Երկիրն հասարակ զառ ի Թաքի խոնարհեալ է ի գետն Էլպայ, բերդաձև ըլլաջ։ Գետ մեծ ի Պոհեմիա է Էլպա որ ի խառնուրդ մեծասան վտակաց ի Ռիվենկէպիրկէ Լերինն, ի նա մըտանեն Լվէր, Մոլտաւ և Էկեր։ Կլիմայ միջնաշխարհն լաւագոյն է, եղերացն ցրտին, և այգի գետնի միայն ի Մէլնիք. արգասաբեր է հող երկրին, բերբ առատ ընդհղնաս, և պտուղ, հուսկն պատուական քան զամենայն երկրի. անտառս երեց և լեռն ունի ձկնաբեր. բայց քան զոտս չահաբեր են հանքքն արծաթոյ, կապարի, պղնձոյ, երկաթի, ածխոյ, աղագի, մասիս քարի և քարանց շաքիւղայ, տպալիս, յակինթի, և այլն. որք ի լերինս և ի գետս գըտանին ի սահմանս Շէլեզիոյ, այլ ոչ որպէս զչերնոջ կան պատուականք են. գոն և աղբերք հանքային ջուրց ոչ սակաւ։

874. Զգան մի Ժողովրդեանն ի Սլաւեանց շահաւելեալ Լեզուէ նոցին, և բնակեն ի գաշտաւայրս և ունին լեզու սեփական, են ընդ նոսս և 70,000 Նորպաղպագք և 70,000 Հրեայք. կրիստոնէին Ժողովրդեանն ի ձեռն խնամոց Գերմանացւոց յաջողի, զի Ճարտարամիտք են և երաժշտութեան սիրողք. արուեստս հիւսուածոյ և մանածոյ վայ զարգացաւ յամս յայսոսիկ ի Պոհեմիա մինչև հաւատարել ընդ Շէլեզիոյ. ունի և գործարանս առատ, բամբակի, սաղնեգործոց, գլխարկի, և զտարանս շքաջորոյ Ճանդեղի, գարձակ և գաբէջուր ապրեալ, և ապակի ընտիր ոչ ինչ շատ տարբ քան զՇէլեզիոյ։

875. Նախնի բնակիչք աշխարհս կոչէին Պոյի կամ Բոյք յորոց աշխարհն Պոհեմիա, որք և յԱ դարու Թուին Քրիստոսի հաւանեցան անուն. ի Ը դարուն Շէնք տիրեցին նմա, և գոգաբք յորոց Բրցեսլէ Լեռ խանին Լուբանց կալան զերկիրն մինչև ՅԱՒ դար, գրաւեալ և ղՇէլեզիա և զՄորաւիա և առեալ Թագաւորական պատիւ։ Ընտանի գոտւ ի Նոսա արուեստից ոգգաբար որ յամբոխ խռովութեան Գերմանոյ տիրեաց Աւստրիոյ, Կարինթիոյ և Սդիրիոյ, այլ ապա պարտեալ ի Ռուդոլփոսէ Հեռաւ յետոյ ի մարտ։ Ի սպառել արուեստական տանիմս ընտրեցաւ Թագաւոր Յոհաննէս Լուբանեմուրկոյ քեռայր վերջ Նոյ Թագաւորին. սորա որդի Կարոլոս Դ Ինքնակալ պայծառացոյց զՊոհեմիա և կանդնեաց զհամալսարանն Բրակայ։ Ընդ որդւոջ նորա բազում աղմուկք եղեն ի տակս հերետիկոսացոյ. քանզի Սիգիսմունդ կայսր ետ կենդանւոյն արել զՀուս Յոհաննէս, և կռուիկոք ազանդապետին զանն ուխտաւորն գունդ կազմեալ խռովէին զաշխարհն, մինչև կորեան։ Ալբ ի յառնել նորազանդին ի ձեռն Լուբերի՝ գարձեալ ծագեցան չնորհքն և ամենայն աշխարհն աշակերտեցաւ նմա։ Աւստրիա հակառակեալ ընդ Նոսա՝ պատճառ եղև ծագման երեսնամեայ մարտիցն, Պոհեմիացիք ոչ կամէին հնազանդիլ Փերտինանտոսի Բ Աւստրիացւոյ, զկայսրընտրին Բալտգին ընտրեալ իւրեանց ի Թագաւոր, այլ պատերազմին Բրակայ ի 1620 ի գերև եղան զՀնգին նոցա, և բազում ազնուականք գործք գործեցան ի հակառակութենէն անտ, շատք ի բնակչացն պանդխտեցան ի Սաքսոնիա և այլուր, և շատք ևս նուաճեցան ընդ ձեռամբ Աւստրիացւոց մինչև ցայսօր. Թէպէտ և ի խռովութեան Աւստրիոյ յամին 1848 վերսաներ ի նմանէ փորձեաց և ման մի Պոհեմիոյ, և ոչ յաջողեաց։ Գլխաւոր տեղիք են.



Բրահա

876. ԲՐԱՀԱ կամ ԲՐՈՒՀԱ կամ ԲՐՈՒԳ (Prague). — Մայրաքաղաք յանձնակ Հովիտ յափունս Մոլտաւայ զրոս ի մի կզե կամուրջ 1,790 ոանաչափ երկայն.

յերկու բաժանի քաղաքն, և արուարձանները հանդերձ ունի 120,000 բնակիչս. զարմանալի ինի է ի հեռուստ տեսիլ Նորա Նստեալ ի բլուրս և աշտարակս ունելով բարձրաբերձս. նշանաւոր յամենայն չինուածս քաղաքիս է պալատն Հրաշալին ի հոմանուն լերին, յորում են 400 սենեակք կամ յարկք և դահլիճք մեծամեծք, 22 աշտարակք էին Նորա յորոց այժմ չորք Լեռ կան. ասա բնակեցաւ Ժամանակս ինչ Կարոլոս Ե. Ընդ երի ամրոցիս կայ մայր եկեղեցին. և ի նմա հոյակապ մատուռն Վինկելաւայ արքայի, հանգուցարան Ս. Ղեփոմուկինայ, և գամբանք իշխանաց. զայս տաճար չինեաց Յոհաննէս Լուքսեմպուրկայ ի ԺԻ դարու. 157 ոտք են երկայնութեան Նորա, 144 լայնութեան և 116 բարձրութեան: Բազում և այլ պալատք դոն Մերձ ի Հրաշալին զարգարեալ պարտիզօք, յորս երևելի է Վալենշտայնայ: Ի հարաւոյ փղոյս մասին քաղաքին կայ գեղադիտակ լեառն Ս. Լաւրենտիոս ծառօք, ծաղկոցօք և այգեօք զարգարեալ, որ հայի ի քաղաքն և ի հովիտս Մոլտաւայ: Ի հասարակաց չէնս յիշատակելի են եկեղեցի ժողովրդապետական, խաղատուն, հասարակաց ժողովարան, համալսարանն՝ կառուցեալ ի 1348 անուանի ի Գերմանիա 3,000 ուսանողք, դիտնոցաւ և կայսերական գրատամբ, յորում 130,000 մատեանք գոն, Ճեմարանք գիտութեանց և արուեստից, ուսումնարան բանմարուեստից, Թանգարան Պոհեմիոյ, պահարան նուագածուներան, և տուն բարեբարութեան. գործարանք նկարագ ոսկւոյ և արծաթի, վշոյ, ասու, կտաւի, ապակեաց, և ծխախոտ: Բրա կա կենդրան է վաճառաշահութեան Պոհեմիոյ. շաՓղ երկաթի ձգի ասի մինչ ի Բիլսէն: Յամին 1848 ապստամբեալ Լաւարիոյ՝ ռմբահարութեամբ նուաՃեցաւ Բրակա: — Փարատեալ անկնա ի քաղաքէս կայ Սպիտակ լեառն, ուր պատեցաւ Փրեոեռիկ Ե Բայաց գին Լաւարիացւոց, և ի հանդիպոյ յայնմ գեառնի՝ բանակեցան ուր Բրուպք յաղթանակ կանգնեցին ի 1757, ուր և անկաւ զօրավար Նոցա մեծ Շուեբերն:

877. Սահմանք Շլեզիոյ և Սաքսոնիոյ անուանի են ի գեղեցկութեան, ի մարգաշատութեան և ի ձորութեան. են և բազում բանք յոտս էրծկեսիրիկ լեռանց յԷլբէ գաւառս, անդ են և համբաւաւոր բաղանիքն Գաուշլպատաց, յանձուկ հովտի ի կիրճս քարուտ լերանց. 3,800 բնակիչս ունի քաղաքն. ուր ընդարձակութեամբ են, յորս ամ ամ 4,000 և առաւել ճկք գնմեն. անուանի են և վաՃառք երկաթոյ ի գառըզատս, շրջակայքն Նորին ամպիք և ասպառաժուռք են:

Էգեր (Eger). — Կա անուանակիր գետոյնէ, ունի ամրաւթիւնս վաղնմի բերդի. առընթերը վաՃառանոցին կայ տուն քաղաքապետին ուր ապանաւ Վալենշտայն: Բն. 11,000:

Ֆրանցենսբրուն կամ Ֆրանցենսպատ (Franzensbrunn). — Որ է աղբիւր Թթուաշահ ջրոյ մերձ Յէգեր, ուր գոանին և այլ հանքային ջուրք, որպէս և Մարիենպատ:

Դեպլից կամ Դեպլիցե (Toeplitz). — Ի զուարՃալի հովտի առ սահմանաք Սաքսոնիոյ, ունի բաղանիս հանքային ջրոյ և պարտէզ գեղեցիկ Բլորի էջ խանին: Բն. 3,600:

878. Ռեյխենպերգ (Reichenberg). — Ի սահմանս Շլեզիոյ ի Ճարտարութեան երկրորդ է մայրաքաղաքին, ունի գործարանս հիւսուածոյ և Թելից բամբակի, բրդոյ, վշոյ և յուխտի, և անգլիացի գործ ծեաց, յորոց տարեկան շահ 20 միլիոն ֆլորինք: Բն. 13,000:

Պրաւնաու (Braunau). — Եւ սա հուսկ Շլեզիոյ սահմանին, ունի գործարանս. սաս կորձանմամբ եկեղեցւոյն զոր կանգնեալ էր Նորոգանդիոյ՝ Ծագեցաւ երեսնամեայ պատերազմին: Բն. 3,500:

Բիլսէն (Pilsen). — Կա Պերաձայ, քաղաք վաՃառաշահ և ի Ճարտարութեան յառաջադէմ: Բնակիչք 10,000:

Պուտվեյս (Budweis). — Կա Մոլտաւայ. ունի գործարանս յուխտի: Բն. 10,000:

Ամրութիւնք պոհեմիոյ ի կողմանէ Շլեզիոյ են Բրակա, Թէզնիկ-Կրաց, 8,000 բնակչաք, և Եոզեֆ-Էգատ: Ի Սաքսոնիոյ կողմանէ Թերեզիեն-Էգատ: Բազում ասանք և գետոյք կողմանցս այսոցիկ անուանի եղեն յանցս պատերազմաց, մանաւանդ առ Բ Փետերիկոսիս:



Ը. ՄԱՐԿՐԱՒՈՒԹԻՒՆ ՄՈՐԱՒԻՈՑ

879. Ի Մորաւ գետոյ առնու զանունն գաւառս այս որ ի Գերմանացւոց Մէհրէն կոչի (Maehren), յերից կողմանց լերամբք պարփակեալ, որք են Սիւաեդ, Մորաւեանք Պոհեմիոյ և Կարպաթեանք, որոց բազուկք տարածանին ի խորս գաւառին, որպէս զի ի հարաւակողման միայն գոնին գաշտավայրք. Օաեր և Վիսդուլ գետք բղխեն ի սմա և ելանեն արտաքս հասեալ դոցին ինչ սահմանս ի նմա. բերք և հանդամանք երկրին նման են Պոհեմիոյ, այլ բովս ոչ ունի բայց միայն երկաթոյ և ածխոյ, սակայն գործածեալք առաւելուն ի սմա մանաւանդ յօսիայէ և կաւուց: Կլիմայ բարեխառն է ի միջոցս գաւառին և ի կողմանս հարաւոյ, ուր լինի պտուղ առատ, ևս և այգիք:

880. Ձորք ցեղք են Սլաւեան ժողովրդեանս, Հաւնաք, Սլովաք, Քրովաք և Բոծուլաք. ընդ որս և 40,000 Հրեայք, և Նորազանգք 80,000: Աշակերտեալքն Հուսայ Տալծեալ ի Մորաւոյ չգան ի Լուսաւորիա և անդ հաստատեցին միաբանութիւն ինչ, որ կոչեցաւ Մորաւեան եղբարցն: Մորաւիա յառաջ նուճն ինքնակալութեան մեծ էր, և ի ժ դարու պատառեցաւ ի բազում պետութիւնս, և ապա միացաւ ընդ Պոհեմիոյ:

881. ՊՐՒԻՆ կամ ՊՐՈՒՆՕ ըստ Սլաւեանց (Brünn, Brno). — Ի գետախառնուն Շուարցայ և Զուիդդաւայ մայրաքաղաք Մորաւոյ. ունի բարձր կրթարանս և տունս մարգասիրութեան, գործարանս ասուի, սապոնի, ծխախոտի, չուխայի և բամբակի. և է կենդրոն վաճառականութեան գաւառին, ուր լինի չորիցս ամենավաճառ, յոր գան բազուկք ի Լեհաց աշխարհէ: Բն. 43.000: — Յարևմտակողմն քաղաքիս կայ Սբիլպերկ ամրոց, բանս արգելանաց, յոր արգելուաւ և խաւարտի հեղինակն Սիլվիոյ Բելվեդոյ:

Աւսթերլից (Austerlitz). — Գեղ համբաւեալ վասն մեծի յաղթութեանն զոր տարաւ Նաբոլէոն անդ ի 1805 ի վերայ Աւստրիացւոց և Ռուսաց. և կոչեցաւ Ճակատամարտ երից Ինքնակալաց: Բն. 3.300:

882. ՕԼՄՈՒԾ, ըստ Սլաւեանց՝ ՀՈԼՈՄՈՒԿ (Olmütz Holomauc). — Վաղաք ամուր առ ափն Մարքայ. ունի համալսարան, մատենադարան, Թատր, զինարան, գործարան կաւուց, և վաճառս արջառոյ զոր տայ Ռուսաց և Մոլտաւիոյ: Բն. 19.000: — Աքքեպիս. կոպոս Օլմիցայ Նոսի ի Քրէմզիր գեղեցիկ քաղաք վաքրկի, որ ունի գղեակ մի և 6,500 բնակիչս:

ԻՎԼԱՒ (Iglau). — Աս անուանակիր գետոյն յամայն և ի լեռնայայս սահմանս Պոհեմիոյ. ունի գործատունս ձեռագործ չուխայից և վաճառս ընդհանուց: Բն. 18,000:

Թ. ԴՔՍՈՒԹԻՒՆ ՇԼԵԶԻՈՑ

883. Ի Շլեզիա Աւստրիոյ են կոմսութիւնքն Դէչէն, Դրոբբաւ, Նեյկէնտորֆ և այլ մանր տէրութիւնք: Լեռնային է երկիրն. բնակիչքն Ճարտարք են ի գործուածս չուխայից և յոստայնանկութեան:

ԴՐՈՒԲԲԱՒ (Troppau). — Գլ. Ք. ի վերայ Օբա գետոյ, քաղաք վաճառաշատ, 15,000 բնակչաք:

Դէշէն (Teschen). — Ընտանի ի վաճառականութեան, 7,600 բնակչաք: — Աստ եղև դաշնագրութիւն ի 1779, որ վախճան արար կռուոյն վասն տէրութեան Պաւիերայ:

884. Դքսութիւնն Աւշուից և Զադոր որ ի կալիցիա՝ մասն են դաշնակցութեան Գերմանիոյ, և սահմանակիցք Շլեզիոյ, վասն որոյ և այսր նշանագիր քաղաքական մասունք համարին: Գլխաւոր քաղաք է Նոյին

ԱՒՇՈՒԻՑ (Auschwitz, Օսվիցիմ). — Աս վայրկեան: Բն. 2.500:

ԱՆԴՐԻՒՇՈՎ կամ ԱՆԴՐԻՒՈՎ (Andrichau). — Ունի գղեակ ամուր, և ոստայնանկս: Բն. 3.000:

Ժ• ԳԱԻԱՌՔ ՊՈԼՈՆԻՈՑ ԿԱՄ ԼԵՀԱՑ

885• Ի նահանգիս այսմիկ որ է մասն Լեհաց աշխարհի՝ այլ և այլ գաւառք են, կալիցիա, Լոդոմերիա, Գրադովիա և Պուքովինի՝ որ և ուրոյն նահանգ համարի• ոտք յառաջագոյն կոչէին և կարմիր Ռուսք• Կալիցիա և Լոդոմերիա հատան ի Պոլոնիոյ ի 1772 և ի 1795, և համանուանաբար կալիցիա կոչեցան, յաւելաւ ի նոսին ի 1777 և Պուքովին զոր ածին ի Տաճկաց• ոտք և յետ պատերազմին Վակրամսյ անկեալ ընդ փոփոխութեամբ՝ յամին 1815 դարձան անդրէն առ Աւստրիացիս• Իսկ Գրագովիա նշխար թագաւորութեան Լեհաց ի 1815 ամէ ցամին 1846 առաս հասարակապետութեամբ քաղաքավարեալ, այնուհետև մարդ եկաց Աւստրիոյ•

886• Թիվունք կարգագրեան ըերանց ի հիւսիսոյ ձգին ընդ աշխարհս այս, յարևմտից Ծանկէն զՊուքովին, և յարևելս կոյս խոնարհեալ դաշտանան և պատուրին ի Պալտիկ Ծովէ• Երկիրն բերրի է Թէպէտ ոչ քաջ մշակեալ և բազում ուրեք աւազուտ• Գետք մեծամեծք վխտալ և Տնիեսթեր ընդ որս և Սան ռուգանեն զնա• իսկ Բրուէ և Մոլտաւա հոսեն ի սահմանս Տաճկաստանի• Կլիմայն ցրտին է ի հասարակի, վասն որոյ երկիրն չքերէ պտուղ, բայց միայն ընդհակին, ինչպես և այլ սակաւ հանքք• ընծայ երկիրս Պուքովինայ, արջառ և երէ, արջ և գայլ բազում և ցուլ վայրի•

887• Ժողովուրդն սերեալ է ի Սլաւեանց և երկու ցեղք են նորին, Պոլոնիացիք կամ Լեհք և Ռուսնեակք, հանդերձ սոքօք 320,000 Հրեայք, 70,000 Գերմանացիք, և 160,000 Վլաշք ի Պուքովին• Բազումք ի սոցանէ յաշխատասէրք են, և ուղղափառք ոչ սակաւք, յորս են և Հայք գաղթեալք անդր ի ժամ գաղթ• Ի կրթութենէ յետնեալ է ժողովուրդ գաւառիս, բայց ոչ որչափ Պոլոնիացիս Ռուսաստանի• Հրեայք և Հայք վաճառականութեան միա գնեն յապրուստեանէ•

878• ԼԷՄՊԵՐԿ, ԼՎՈՎ, ԻԼՎՈՎ որ և ԼԷՈՑՈՒՍ (Lemberg, Lwow)• — Մայրաքաղաք վաճառաշահ, երբեմն մայրաքաղաք Կարմիր Ռուսիոյ, ունի հազարան կանդնեալ ի 1816, ուր ուսանին 1,300 հաստիկք• ասա Նաճն եպիսկոպոսք երեք Լատինացոց, Հայոց և Ցունաց, նշանաւոր է եկեղեցին Դոմինիկանց, եպիսկոպոսարանն Հայոց, ազգային մուսեան• Մերին և անձուկ է քաղաքաձիչն այլ արուաձաքն գեղեցիկք• Բն• 76,000• Ցամին 1848 և Էմ պերլ գրգռեցաւ ի խռովութեան ժանն Աւստրիոյ, և նկուն եղև•

ՊՐՈՏԻ (Brody)• — Ի վաճառականութեան երեւելի է ի քաղաքս գաւառիս, չինութեամբ վաճառք• ի 25,000 բնակիչս սորա՝ 20,000 Հրեայք են, որոց տուրկառ է ընդ Տաճկաց, ընդ Ռուսաց և ընդ Գերմանացոց•

889• ՎԻԵԼԻՉԿԱ (Wieliczka)• — Ունի աղ հանքային առատ քան զամենայն հանքս աղի որ յընդհանուրս, և յԻՒդ դարէ անտի ցարդ ամի ամի հանեն 700,000 կենդինար և ոչ պակասի• Մեծագոյն աղահանքն համարին 8,000 ոտնաչափ խոր և 4,000 լայն, մարդ ի իջանել ց'700 ոտնաչափ ի խորութիւն, ուր յայն հատեալ է յարկս և մատրունս ուր և պատարագք մատչին, չտեմարանս, կաքաւարանս, ախոռ, և այլն• որոց ի լուսաւորիչն տեսարան հանդի ընծայի աչաց• 1,000 ասահինաք իջուցանեն անդր, և 900 գործաւորք կան ի գործ• Բն• 7,000• Շաբաթ երկաթի ի վաճառս ձգի ասա անցեալ ընդ Գրագովիա•

ՊՕՉՒՒՏ (Bochnia)• — Եւ սա անուանի է վասն հանքացն աղի, եւթն վարասիաւ հեռի ի միմեանց ի սմանէ հանեն 230,000 կենդինար ի տարւոջ• Բնակիչք 6,500•

890• Պուքովինն անագան ուրեմն սկսաւ գալ յօրինս բարւոք քաղաքավարութեան, գլխաւոր քաղաք ի նմա է

ՉԷՌՆՈՎԻՑ (Czernowitz)• — Աս Բրուէթայ, վաճառաշահ• է ի սմա վարժարան մի փիլիսոփայութեան և աթոռ յոյն եպիսկոպոսի• Բն• 12,000•

891• Ի Գրագովիա գլխաւոր քաղաք է

ԳՐԱԿՈՎԻԱ կամ ԿՐՈՒԱՏԱ (Cracovia, Krakau)• — Ի ձախմէ վխտալայ, որ և մայրաքաղաք էր Լեհաց ցՅԺԴ դար, և ապա ազատ քաղաք ցամին 1846• Շինութիւն քաղաքին մեծին է, այլ բազում են ի նմա հոյակապ շինուածք և եկեղեցիք առաւել քան զԵռնաւուն• յորս նշանաւոր է մայր եկեղեցին, յորում տապանք Ս• Սամիսլաւոսի, Քոշիուշքոյ, Բոլեսլաւովքեայ, Յովհաննու Սոպիեսքոյ և այլոց թագաւորաց բազմաց• եկեղեցւոջ Ս• Պնին կայ մարգեան կոպեռնիկոսի• Նշանաւոր է և համալսարանն կանգնեալ ի 1343, և կրկին հաստատեալ ի 1833• Մասնաւորարան, պարտէզ տնկաբանութեան, և այլն• Բն• 45,000•

Ի սահմանս Գրագովիոյ կան բովք գեանածխոյ, զինկի և երկաթոյ• Ի բովի ուրեմն կանգնեալ կայ գեղեցիկ մահարձան Քոշիուշքոյ•

ԺԱ. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԿԱՐԻՈՑ

892. Ունգարիա կամ Ունկարիա և Հունգարիա, որ է Պանոնիա ըստ Հնոց, պատեալ է Կարպաթեան լերամբք՝ ի բազում կողմանց. բարձրագոյնք՝ ի նոսա են Քրիսան և Աչմեաղ և այլք, իբր 8,000 ոտնաչափ. յարևմտից կուսէ Ձգին և Ալպեայք Մեհրիոյ և կոյն՝ ի սմա Վետառք Պաբոնեայ. ընդ մէջ առցա՝ ի հարաւ և՝ ի միջնադաւառս տարածանին դաշտք լայնածաւալք, են որ արգաւանդք և են որ մերձաւ և աւազախառն. Գլխաւոր գետ Ունկարիոյ է Դանուբ որ առ ակամբք Մոթաւայ կամ Մարբ գետոյ բաժանեալ՝ ի բաղումս առաջս գործէ զկղզին Շիւտ, զոր վասն պղտգեբուեան սովորեցան կոչել Դրախտ ոսկեբեր. անտի ընթացեալ յարևելս կոյս գառնայ և հասեալ ընդ հարաւ ընդ վարսախս 60 և միւսանդամ ընդ աբևելս խաղացեալ կայ անջրպետս ընդ Տաճկաստան. ՚ի նա Թաւին գրեաթէ այլ ամենայն գետք Ունկարիոյ, որք են Լէյթա, Ռաապ, Սարվից, Տրաւ, Սաւ, որք գան ՚ի Ալպեացցն յաջակողմեան ասին գետոյն. ՚ի ձախ մէ՝ ինձեն ՚ի կարպաթեանց՝ վ.ագակ, Կրան, Թեպս։ Ջորք ջուրք են ՚ի Ունկարիա՝ Պեկա, Սարվից, Պերծաւա և Փրանկիկոսի ջուրք. Նաւարկութիւն յաձախեալ է ընդ Դանուբ և վաճառականութիւն ծաղկեալ, գետն այն համարի գեղեցկագոյն Ճանապարհ հասարակաց եղելալ Եւրոպա։ — Ի վհան անուանի են և ընդարձակք Բլադենսեէ կամ Պալատն 66 վարս. քառ., և Կայսրալբեսէէ կամ Ֆեյբր-Դոյ, որոյ աղի է ջուր, և Հրկոքին ևս ընդ մէջ ոստոյ Ա.Լպեան լերանց։ Ցամուտս Թեպսայ գոն ջրերք և Ճախ. Ճախուաք խիտ առ խիտ պուրակաք եղեգամբք և ջրային բուսովք, որք՝ ի սոքոյ ամարայնի նեխեալ ապակաք նեն զօգս։ — Կլիմայ Թէպսա ոչ միօրինակ յամենայն կողմանս՝ բարեխառն է և Քնքոյշ՝ ի հասարակի. ՚ի Լերինս հիւանդ չյաճախ երկրագործութիւն, այլ առ սաղրոսով նոցին պղտգեբելն և այգիք. Հարաւ.ակողմն տասպագին է յամարայնի, արևելայինն ջերմին ՚ի ձմերայնի, և օդ անառողջ վասն ջրլճջիլց. գաւառք լեռնոտանց և զառ ՚ի վայրըն լաւագոյնք են և օգով և արգասաբերութեամբ. բայց ՚ի մարախոյ և ՚ի սասանութեանց ոչ սակաւ չեան հասանէ յՈՒնգարիա։

893. Հողն արգաւանդ է յոյժ, և Թէ յուզութիւն բնակչացն չյաճախէր զարգաւաձանս մշակութեան՝ ընդ յոյժ բերրի գաւառս աչխարհն մաքոթ եր դասել և զոս. չաշ մեծ է նորա յընակ երկնից, արշաւոց և ոչխարաց. և և ՚ի բերդն երկրի, զոր օրինակ են ցորեան առատ, մանր, որիզ, և և հեղեղն չաքարի և բամբակենի, և ազգ ազգ պտղոց. բաղումք ՚ի լերանցն անառաձխիք են, Թէպես դաշտասէրք մերկ ՚ի վայելչութենէ ծառոց. վաճառք անուանիք են վուշ, կանեփ և ծխախոտ ընտիր քան զամենայն Եւրոպիոյ, գինի աչխ՝ զի մեաղրութեամբ հնամ տանին այգեաց. անուանի է գինի Դոբչայի և Դարբջալայ, և և Մեհնեայ, Հանգերձ այլոքն։ Ա.ուատ են և բուք և Հանքային ջուրք Ունկարիոյ. ոսկի տարեկան ելանէ անտի ոչ միով կենդինար, արծաթ 500, պղինձ, կապար, երկաթ, աղ և ածուխ շատ. լինի անդ և ակն ոմանք։

894. Բնիկ Ունկարացիք կոչեն զանձարչ Իւրեանց Մաձառս Օրցակ, որ է ՚ի երեսութիւն Մաձառաց, և են անձինք իբր 5,500,000, բաբեկաղմիք մարմնով, ա.ատրատհասակք և եռանդուն. ընդ սոսս համարին և Կումանացիք 75,000 և Կալնկք 48,000։ Երկրորդ ազգ Ունկարիա է Սլաւեանցն իբր 4 միլիոն, որք չինական կենաց պատպոլին, և բաժանին յերկուս ցեղս ՚ի Սլաւաք և ՚ի Խոռուաց։ Կան և գաղղիական Գերմանացիք Թուով 500,000 եկեալք ի ժ և յԺԲ դարս, որ ՚ի հիւսիսային գաւառս բնակեալ պատպոլին ՚ի բուս և յարուեստս, ուսին և ազատութիւնս։ Բայ ՚ի սոցունց յայսցանէ կան յՈՒնկարիա և Վլահք առաւել քան զ600,000, որ Թուին սերեալ ՚ի նախնի Դակաց ինամութեամբ Հռովմայեցւոց, բազումք ՚ի սոցանէ հովիք խաշանց են և սպյըրդք. Հրեայք 150,000, Պոհեմք կամ Գնչուաք 30,000. ազգս յեմինչս չունին բնակութիւն կայուն, վրանք չըքին, կեան ՚ի վաճառուց ձիոց և մեատի անօթոց, և են հնարագէտ գոլք. ՚ի ԺԴ դարս երեւեցան ազգս Ասրատա և Տաճկաս սոսա հանեալ որպէս Թէ քրիստոնեայք լցեն հալածեալք Աեգիպտոսէ՝ հիւրընկալութիւն գտին յամենայն ազգաց, այլ իբրև յայտնի եղև վաստութիւն նոցա և խաբէութիւն՝ հալածեցան ՚ի բարեկիրթ ժողովրդոց. Թուին ազգս սերեալ ՚ի Սուարա ազգէ արեւելեան Հնդկաց. զանազան անուանիք կոչին ըստ գաւառաց գաւառաց յորս բնակեն, ՚ի Սպանիա՝ Խիդանոս, ՚ի Գերմանիա՝ Ձիկայներ, յԱնգղիա՝ Ձիբսին որ է Եգիպտացիք, յԻտալիա՝ Ծրինկարի, ՚ի Տաճկաստան՝ Ձինկեանէ։

895. Թէպէս և ուրոյն լեզուս ազգացս այսոցիկ, Մաձառացն լեզուս և լսանին հասարակաց են. մեծ Ճառն ազգակից է Ֆինլանդացւոց բարբառոյն, և երկոցունս ևս Թուի Ծագումն ՚ի Մոզղաց՝ ՚ի բազմութեան ազգացս իբր 4,500,000 ուղղափառք կան, 3 միլիոն յունադաւանք, 600,000 ուղղակաս. Ցղիք, և Նորադարք իբր 3 միլիոն։ Հրամանագրութիւն նոցա տակաւին չեսեալ է յոյժ, Գերմանացիք աւեի կիրթք են յամենայնի։ — Գործառուեք բազմագիւ Ունկարիոյ Նուազ են քան զԱ.ենայի միայնոյ, այլ զարարիք շաքարի ՚ի Ճակղեդէ տակաւ բազմանան, զի ՚ի 1838 էին իբրև 900. Տպարաններ՝ ՚ի Ճեռս Գերմանացւոց վաթր, վաճառականութիւն ՚ի Հրեից, Հայոց և Սլաւեանց. վաճառք նորին են բերք երկրին։

896. Տէրութիւն Ունկարիոյ ցամեն 1848 էր միապետութիւն սահմանաւոր, որ ժառանգութեամբ

իշխանէր յաթուս և յեկս. ի սպառիլ արքունի զաւրմին, նոր Թագաւոր ընտրէին գաւք Ժողովրդեանն բաժանեալ յԱաեան վերին, (ռուղսպահս և յոյն կըղէրք), յԱաեան ներքնալայց, որք էին սաորին աղնուականք և կղէրք հանդերձ նուիրակօք 49 սգաւ քաղաքաց։ Երեսփոխան կայսերն կոչէր Բալադին արքայական որ նախագահ էր առաջնոյ առեղին։ Ժողովրդն բաժանէր յաղնուականս, ի քաղաքացիս և ի չինականս։ ամենայն իշխանութիւն առեալ էր աղնուականաց, որք ոչ հատուցանէին հարկս։ և չինականաց չէր իշխանութիւն գան վարելոյ ընդ նոսա, այլ իբրև սորուկք սպաս հարկանէին ազատաց, և ծառայէին նոցա աւուրս 104 ի տարւոջ։ և հասարական քաղաքացւոց տալին զսակ հարկին։ գործեալ և պարտականք էին մտանել ի զինուորութիւն, զի ազնուականք ի կարևոր հարկի անէծ զինուորելին, վասն այսորիկ և ճարտարութիւն և կրթութիւն ոչ ծաղկէր ի նոսա։

897։ Ընկերքիս ընդ տերութեամբ Հռովմայեցւոց Պանոնիա կոչեցեալ, և յասպատակէն Հունաց ի ե դարուս՝ Հունգարիա, ի քառասուն ինքնակալութեանն անկաւ ընդ բռամբ Կելտից և Աւարաց բարբարոս ազանց։ որոց յաղթեալ մեծն Կարոլոս և գործեալ ի հասատս Քրիստոսի կալաւ զաշխարհն մինչև ի Ուսաւ։ Յաւարտ ե դարուն Մահմադ առաջ. Նորգուներեանք Արաբացոյ ուրուն զամս տասն աշխատս լեալ կալան զաշխարհն և բաժանեցին իւրեանս՝ ի սարկութիւն վարեալ զընակիչսն։ Մոքս Ժամանակս բաղումս ի պատերազմի կենն վանականեալք գործոյ, մինչև ընկալան զքրիստոնէութիւն և զքաղաքակրթութիւն, և ուսան գործել զերկիր յելս ի դարուն, յորում Ժամանակի առաքեցաք նոցա Կէյսս, ուրոյ որդի Ս։ Սաեփանոս օծաւ Թագաւոր և ընկալաւ ի Քեռանէ Սեղբեսպրոսի Բ զՔաղն, որ մինչև ցամն 1849 պահէր առ նոսա։ սա բազում չինութիւնս արար ի տերութեան իւրում, հաստատեաց կոմս և օրէնս եդ, և ած գաղթականս ի Գերմանիոյ։ ի մեռանել նորա ցամս 80 կռնիք եղեն վասն յաջորդութեան, մինչև ի 1085 ամբարձաւ ի գահ Լասիսլաւս։ և սոպս Կելտս ի գարման տարաւ ինքսոյն եղելոյ ի պատերազմաց և յերթեւեկիկ խաչակիր զօրացն, ածեալ նոր գաղթականս ի Սորին Նահանգաց։ Այլ ընդ հուսպ ամենայն վայելչութիւն տերութեանն խանգարեցաւ՝ յասպատակել Մողոլաց ի 1241–1243, որ ի հուր և ի սուր գատեալ սպանեցին զընակարիս։ յամայեցեալ գաւառս նորա եկին բնակել այլ գաղթականք ի Գերմանիոյ և Լեհաստից, որք և զգեմ կալան երկրորդ անգամ արշաւանաց բարբարոսացն ի 1285։ Անգրեաս Գ մեռեալ ի 1301 վերջին եկաց ի տոհմէ Արպադոց։ Ի լինել շփոթութեանց վասն յաջորդութեան զի կային գեռ ևս սերունդք ի գաւելոց նորա, և ի ձեռն ամբառնալ բազմաց՝ զրպացեալ կալաւ զաշխարհն քաջութեամբ Կարլոս Ռոպերդ մինչև ի 1342։ որդի նորա Լուդովիկոս Մեծն անուանեալ վերադրեն և գահակալացաւ, ի 1370 եգաւ զՈպոլնիոյ և փառաւորեաց զերութերութիւն իւր։ եմոյ նա գաւերս երկուս, յորոց զերբեցն հաս Սիգիսմունդ կայսր ի հնութիւն և Թագաւորեաց, այլ յաւարտ նորա զրպացեալ Տաճկաց հասին բազում գաւառս զընկարիս։ Ցետ բազմամեայ պատերազմաց ընդ Տաճկաց, էր որ յաջողութեամբ և էր որ յանդարձ, կացուցին իւրեանց Թագաւոր զորդի քաջին Ցովհաննու Ընձիասայ զկորվին Մաթեաս Կորվինոս, որ Թագաւորեաց ցամ տեառն 1490, եհար խորասկաց զրպերութիւն Տաճկաց, տիրեաց և Ըշեղոյ, Մորաւիոյ, Լուսատիոյ, Վիեննայի և այլոց գաւառաց։ սա և ուսումնասէր գոլով կանգնեաց զՀամալսարանն Օֆենայ։ բայց յաջորդ նորա Վլատիսլաւ պոհեմիացի կորոյս զԱաստիա և զամենայն գաւառս որ առաջեալ էր Նախորդ իւր, և Վիեննակիցք տերեցին մեծի մասին Դաղմատիոյ, այսպես և առ որդւոյ նորա Բ Լուդովիկոսիս, որ գնաց ցեալ ընդդէմ Տաճկաց անկաւ։ ի մարտի (1526) ի Մոհաչ։ Ի լինել երկպառակութեան յաւագանիցն կէաք Ցովհաննէս Չապոլիա կամէին Թագաւորեցուցանել, և այլք զՖերդինանտոս և զԱաստրիոյ, որ և կալաւ տերութիւն Ընձկարիոյ և զՊոհեմիոյ։ բայց Նեղեալ ի Տաճկաց Եմոյ ի Չաթիա զնաւն մի երկրին, բայց ի 1687 անդրէն գարձաւ այն յԱաստրիա։ Ի ծագել Նորասանդին բազումք աշակերտեցան Թէպետ և չատ Ջանացին Ասաստրացիք յետս կացուցանել զնոսա, մինչև Բ Ցովսէփ ազատութիւն կրթից չնորհեաց ի 1781։ Ցայնմ հետէ միացեալ ընդ տանն Ասաստրիոյ՝ ի նմանէ ընդունելով զիսորհրդոյ իւր՝ քաղաքացւոցն սեփական օրինօք ցամն 1848, յորում՝ ի վերդովել ասաստրական ինքնակալութեան, և ի չհամանել ինդրոց ինչ առեին Ընձկարիոյ՝ նշմարեցաց աշխարհն և յարոյց զպատերազմն արիւնռուայ և զաշխարհամոեռի, և բեկեալ զզերութիւն ինքնակալութեանն՝ ընկճեցաւ օժանդակութեամբ ռուսական զինուոց, կարուսեալ և զիսախին ազատութիւնն։

898։ Ընկարիս յերկուս բաժանէր երբեմն ի Բարձր և ի Սորին, և յետ այնորիկ մինչև ցվերջին խառնութիւնն՝ ի չորս չրջանակս, որք են Ըրջանակ յայսկոյս Դանուբոյ (ի հիւսիսի և յարևելս կոյս) 13 կուսակալութեամբք։ Ցայնկոյս Դանուբոյ (ի հարաւ և յարևմուտս) 11 կուսակալութեամբ։ Ցայսկոյս Թայսոյ (ի հիւսիսի) 10 կուսակալութեամբք, Ցայնկոյս Թայսոյ (ի հարաւ և յարևելս կողմն) 12 կուսակալութեամբք։ բայ ի սոցանէ և չորք ազատ վիճակք էին Ընձկարիոյ առանձնակ, և վեց կոմսութիւնք խոռհադաց և Սկլաւոնիոյ, որք յետ պատերազմացն և նուաճելոյ աշխարհին՝ զատան ի նմանէ յատանձին նահանգս. և չորք չև է նորոգ քաղաքական զործանութեն տրատարակեալ։ վասն որոյ ընդգրկաւոր քաղաքն միայն յիշատակեցցուք։

899։ Բրեսպուրկ կամ Բռաչն (Presbourg, Պոսոնիոն)։ — Ի ձախակ Դանուբոյ քաղաք գեղեցիկ, կամարէլ շարժուն արկեալ կայ ի վերայ գետոյն։ մինչև ի 1784 մայրաքաղաք էր Թագաւորութեանն։ Ի չնուածս նորա նշանաւոր է պալատ արքեպիսկոպոսին Կրանայ՝ որ բազմեր նախագահ Թագաւորութեանն։ տուն առեին Ժողովոյն, եկեղեցին Ս։ Մարտինոս, Թատրն։ կան ի նմա և ուսումնարանք ինչ չճեմարան

սասցեալ միով անուամբ, մեծ մարզատուն, լիկեան աւետարանական, գրատուն, և այլն. վաճառակա- նութիւն ցորենոյ և գինւոյ նորա շահաբեր է նմա քան զշրջապատութիւն արուեստից. հեռի է ի վիճնէ նոյ 18 վարսախոք: Բն. 46,000:

900. Օֆէն որ և Պուտա կամ Պուտին (Ofen, Buda). — Ցայգմէ Դանուբայ վերջին մայրաքաղաք Ունգարիոյ, յորում նստէր Բալագինն իշխան նախագահ, և ի գղեակն նորա պահէր պահն որով պահակեցաւ Ս. Սաւափանոս առաջին քրիստոնեայ թագաւոր Ունգարիոյ, զոր Քրոյտէ ի փախստեան իւրում անցեալ արար: Ի վերայ Պէշտպէրկի վերին կոյ դիտանոց մի. ունի մեծ մարզատուն և գարոյս երկուս և բաղանիս. համեաւեալ է կարմիր գինին զոր տան ջրկակոյ այգիքն: Օֆէն ի 1541 ամէ ցամի 1686 եկաց ի ձեռս Տաճկաց: Բն. 50,000, մեծաւ մասամբ Գերմանացիք, որպէս և Բոզինոյ:

901. ԲէշԸթ (Pesth). — Դէմ յանդիման Օֆէնոյ յայնկոյս գետոյն և նաւահանգստիկ կղզոյդ ընդ նմա բազմամարդ և ծխագոյն ի քաղաքս Ունգարիոյ, վաճառականութեամբ և գործարանօք մեծաքոյ առաւելեալ. ի համալսարանի սորա որ յՕֆէնոյ փոխադրեցաւ ի 1784 երթևեկէն 1700 համրակք, և իբրև 700.000 ֆիորնգաց հասք են նորա: կայ ի ԲէշԸ և ձեմարան ունկարացի, մուտիան մեծ ազգային մատենադարանաւ հանգերձ. գոյզոյ բժշկութեան անուանց, մեծ անկէլանոց զինուորականաց, զրարիստ մեծ, Թատր մեծ, գեղեցկաշէն են և եկեղեցիք նորա. ըստ եւամանայ ժամանակի լինի անդ ամսավաճառ մեծ. 85.000 բնակիք են քաղաքիս ի զանազան ազգաց:

902. Տեբրէցին (Debreczin). — Ցայնկոյս Թայսոյ ի սահմանս Դրանսիլվանիոյ երեվելի է վաճառականութեան և ձարտարութեան արուեստից քան զամենայն քաղաքս Ունգարիոյ ի յիւսուն ամաց հետէ. ունի գործարանս չուխայի, սաւանի, խաղտոցդս, և այլն: Զայս Խոսք նուաստեցին յամին 1849: Բն. 55,000:

Ի հիւսիսի գաւառին բնակէն Գերմանացիք պարապեալք ի մեսալը. անդ կան

ՇԸմնէց, Մաձ. ՇԸլմեց-Պռնեռո (Schemnitz, Selmecz-Banya). — Գ. Ր. որ ունի ձեմարան հանքաբանութեան, և բոլո ոսկւոյ: Բն. 20,000:

Քրեմնէց, Քէօրմօց (Kremnitz, Körmocz). — Ա. նուաճի վան բոլոյն ոսկւոյ և արծաթոյ և վան գրամուց: Բնակիք 12,000:



Քրեմնիցի

ՆԸզոհլ, ՊէսդերցԸ-Պռնեռո (Neusohl, Besterncze-Banya). — Ունի առատ հանքս պղնձոյ: Բն. 11.000:

ՔոշՓ, Քօշ (Kaschau, Kasse). — Քաղաք ամուր և վաճառաշատ: Բն. 10.000:

903. Էփերիես (Eperies). — Ցայս կոյս Թայսոյ, յոտս Դապլոր լերին. ունի գործարանս կաւեայ և չուխայի: Բն. 9,000:

ԷրլՓ կամ ԷգԷր (Eger, Ակրիա). — Ունի ազնիւ գինի, կրթարանս, և բաղանիս, մեծ մայր եկեղեցի, արքեպիսկոպոսարան, համալսարան կքեալ, և այլն: Բն. 20,000:

Էդենպուրկ (Edenburg). — Ա. Նայոհեալ Լճաւ, ունի գործարանս չուխայի և բաճկաի: Բն. 12,000:

Ռաապ (Rãab). — Ա. Համանուն գետոյնէ. ունի կրթարանս. աստ մարտ մեծ մղեցաւ ի 1809, և ի յետին խառնուածեանն. ունի երկաթուղիս հաղորդութեան ընդ այլոց քաղաքաց: Բն. 18,000:

Կրան (Grann). — Հանդէպ խառնման կրանայ ի Դանուբ. աստ նստի նախագահն արքեպիսկոպոս. գեղեցիկ է մայր եկեղեցին: Բն. 12.000:

Պոռզց (Tokay). — Ընտանի գինեաւն: Բն. 4.000:

Միշ՛՛ց կամ Մի՛՛ց (Miskolz). — Ազան մեծ, ունի մարզատուն, և վաճառ գինւոյ, ցորենոյ, և այլն: Բն. 28,000:

Պէրկ (Berg). — Ազան. ի սահմանս նորա աշեն ծառք հսկայակերպք, կաղնիք 110 ոտնաչափ բարձրութեամբ և երկինք 210, և 6 ոտնաչափ շրջաբերութեամբ:

904. ՇԸուհլ-Վեսսենպուրկ կամ Աւգոս Բեռնէ (Stuhl-Weissembourg, Ազգս Թագաւորական). — Ի վերայ վտակի մոյ Դանուբայ. էր երբեմն ոմն աստ օծանձին և բնակիչն Թագաւորք: Բն. 20,000:

Նոմոպոր (Zombor). — Ընդ ամբ Դանուբայ և Թայսոյ յարգաւանդահողի վճակի որ բերէ գինի աղիւս, և ցորեան և սեխ: Բն. 20,000:

Նեզսէց, Նեզոլոգդ (Neusatz, որ է Նորատունկ). — Ցեզք Դանուբայ, վաճառականութիւն մեծ էր սորա ընդ Տաճկասանի: Բն. 20,000: — Ի պատերազմին 1849 ամի գրեաթէ խսպառ հրոյ ձարակ եղև. — Ի Տեմիշվարայ գեղջ կայ քարայր մեծ ի ոսկերատուի վիճակի գաղանաց:

ԴԻՈՆԱՅ կամ ԿԱՅԻ-ԴՈՄՊԱՅ (Tirnau, Tyrnau, Nagy-Szombat) · — Ցայս կոյս Դանուբայ · ունի վիճուրա-նոց մեծ, և վաճառս գինւոյ · է ի նմա տակառ մի ահեղ մեծութեամբ կրկին առաւել քան զչափեալ պէրկայն: Բն · 7,000 ։

ԹԵՐԵԶԻՒՆԿԴԱՏ կամ ԴԱՊՈՍՏԻ (Theresienstadt, Szabadka) · — Քաղաք մեծ և բարգաւաճ յարուեստս · Բն · 42,000 ։

ԾՈՄՈՐՈՒՆ, Մաճ · ԿՈՄԱՐՈՄ (Komorn) · — Ցայնկոյս Դանուբայ, ամուր և անառիկ բերդաքաղաք ի Շիւդ կղզւոջ է բերան Վագուայ որ հոսէ ի Դա-նուբ · ասա ի յեանում պատերազմին ամրացեալ կա-ցին Ռուկարացիք, և չկո նուաձելոյ այլոց ամենայն քաղաքաց, և անագան ուրեմն ի 27 մեպ · 1849 ամին, պայմանագրութեամբ ելլին յամրոցէն, մղեալ առ նուազ ահաւոր պատերազմունս յամենայն յուլի-սի · Բն · 18.000 · — Մերձ է ի նա և վայելչն, ուր պատերազմ սաստիկ մղեաց կէօրկէյ զքաւալր Ռու-կարացւոց ի 15 և 16 յուլիսի ընդդէմ Ռուսաց և սեպ. ետ, և քաղաքն նուաճեցաւ ի ձեռս բաքեւե-չայ ի միւսում աւուր ։

ԿՐՈՍՎԱՐԴԱՑ (Gross-Wardein) · — Գեղեցիկ քա-ղաք առ Քրորոյ · ունի բաղանիս · Բն · 18.000 ։

ՍԷԿԷՏՒՆ (Szegedin) · — Ի բերան Մորոշայ ի Թայս, շահաստան քաղաք · Բն · 33.000 ։

ԱՐԱՏ ՀՒ և ՆՈՐ (Arad) · — Հուսկ առ իրեարս և մի համարեալ քաղաք փոքր, ունի մեծ ամրավաճառ անառնոց · անուանի եղև սա ի վերջս ապստամբու-Թեան Ռնկարացւոց, քանզի սոտ Քոշուտ իշխանա-պետ զինւորութեան իւր յանձնեաց ի կէօրկէյ զօ-բավար (11 օգոստ · 1849), և նա յետ երկուց աւուրց անձնատուր եղև ի Ռուսս · Բն · 6.000 ։

ԺԴ· ԳՐՄՐՇ ԵՒ ՄԱՍՆ ՍԵՐՈՒԻՈՑ

906 · Ա՛յս նահանգ փոքր՝ զատուցաւ յետ պատե-րազմացն Ռնկարիոյ՝ ման գոլով շրջանակին կամ գա-ւառին որ յայնկոյս Թայսայ, յաւելմամբ մասին իշ-խանութեանն Սերուիոյ · Դրմրշ գետ ոռոգանէ զնո-կերն, որ և ընդ ջերմագոյն կլիմայիւ արգասաբեր է յոյժ, բերէ և որիզ և Թուէ և բամբակ · Քաղաք գլխաւոր յայսմ նահանգի է

ԴՐՄՐՇՎԱՐ (Temdeswar) · — Առ Դրմրշ կամ Դեմէս գետով · յեզր ջրանցից պէկայ, ի հարաւային վայրէ · անուանի են մեր ևկեղեցին և ամրութիւնն · Զայ Աւստրիացիք, յամին 1662 · կռնեցին գաշինս ընդ Տաճկաց, և առ սոսկ Տէմիսնօքի քաջ զքաւալրն Ռնկարացւոց պարտեցաւ յ'9 օգոստ 1849 · Բնակիչք 16.000 ։

ԺԳ· ԽՈՒՆԱԴՈՒԹԻՒՆ ԵՒ ՍԼԱՒՈՆԻԱ

907 · Ի հարաւոյ արեմտից Թագաւորութեանն Ռնկ-կարիոյ կան Լիբուռնիա կամ Խռուատագ երկիր, և Սկլաւոնիա կամ Սլաւոնիա, որոյ մասն մի գրաւեալ է ի վիճուրական սահմանին · բարեբեր է հոյ գետաւին, այլ բնակիչք բիրոք, հէնք յոտնագաւանք և այլք կա-Թոլիկեայք · կան անդ և գաղԹականք Գերմանիոյ և Մաճառաց · յատաջագոյն մասն էր և սա Թագա-ւորութեանն Մաճառաց ։

ԱԿՐԱՄ կամ ԶԱԿՐԱՑ (Agram, Zagrab) · — Գե-Ք · Խռուատագ առ Սաւա գետով, և աԹոռ փոխ-արքայի գաւառացն երկոցուն որ պան կոչի · այժ-մեան պանն Ելլաչիչ անուանի եղև ի վերջին պատե-ռազմունս · ունի կրԹարանս, ընկերութիւն երաժըշ-տաց, և վաճառականութիւն բարւոք · Բն · 17.000 ։

908 · ՖԻՈՒՄԵ (Fiume) · — Ազատ նաւահանգիստ, ի խորն Քուառներոյ կամ Գառներոյ Ադրիականին, և վաճառաշատ · ունի գործարանս ծխախոտի, շա-քարի և բամբիւ քաղցր օղոյ · Բն · 12.000 ։ — Երեք ճանապարհք նշանաւորք են ի լերինս անդ որ զծով բաժանեն ի ներքին գաւառէն, բազում ծա-խուս յարգարեալ ։

ԷՍՍԼԻՔ կամ ԷՍՏԵԿ (Eszek) · — ԳԼ · Ք · Սլա-ւոնիոյ և ամրոց հզօր ի վերայ Տրաւոյ · ունի զբաս-նիստ ընդարձակ յոյժ · Բն · 12.000 ։

ԺԴ. ՄԵՆ ԴՐՍՈՒԹԻՒՆ ԴՐԱՆՍԻԼՎԱՆԻՈՑ

909. Գրանսիլվանիա, որոյ անուն նշանակէ զԸ բաղմանթիւն անտառացն ի կարպատեանս՝ մանր եր ընկարիոյ ի 1526 ամէ ցամն 1849։ Մասնագ կազմեն զինս Հունգարիոյ-Օրցակ (Աստառային իշխանութիւն) և Գերմանացիք Սիկէն-Պիւրկէն (Եղեռնատեղ)։ Ամենատ լերինք պատեն զերկիրն հովիտս սակաւ ուրեք գործելով. ցրտագոյն է և կլիմայն, բայց եր կիրն ոչ անմատ ի կարևոր արգասեաց. ունի և բոլս ոսկւոյ, երկաթի, սնդ, և այլն. ի լերինս անդ որոց մինչև 8.000 ոտնաչափ է բարձրութեան՝ գոն ձմեռսարշէք, որ տաճին ի շրջակայ գաւառս. ունի գետս գՄորոշ, Ծամոս և Ալտգա։ Բնակիչքն են Մասնագ, Ռումէլի ազգ՝ որ ի Հունաց Թուի ծագեալ, և Սաքսոնք գերմանացիք. ընդ որս և Վլահք, Հայք, Ցոյնք, և այլն։ Ի ձմերարութեան յեանեալ ի հրա. Հանգութեան թերևս առաւելուլն քան զընակարացիս՝ մարդեալ ի Գերմանացւոց. ուղղափառք յամենայն ազգաց հաշուին 800.000, յունադաւանք 700.000, Լուտերք և Ջուինգլեոսի աշակերտք և Սոկինեանք 600.000։

910. Ի գաւառին Մասնագ գլխաւոր քաղաք է ԿԼԱՒՍԷՆԳՈՒՐԳ կամ ԳԼՈՒԺ կամ ԿՈԼՈՀՎԱՐ (Klausenburg, Koloswar)։ — Իշխանանիստ մայրաքաղաք Գրանսիլվանիոյ. ունի լնկէն ուղղափառաց, մարդասուն, գպրոց սքնոսականաց։ Բն. 25.000։

ՔԱՐԼՍԳՈՒՐԳ կամ ՎԱՅՍՍԵՆԳՈՒՐԳ (Kárlsburg, Weissenburg, Ակտա Յուլիա)։ — Մեր քաղաք առ Մորոշ. ունի տուն գրամց, գիւարան, ամրութիւնս և բոլս ոսկւոյ։ Բն. 7,000։

Վէրհէյ (Warbely)։ — Գեղ ի սեզւոջ Ջարիզիք. կերուսա մայրաքաղաքի Դակաց զոր Հռովմայեցւոց կործանեալ կանգնեցին զՈւլպիա-Տրայիանու, և գբաանին անդ գրամք և հնութիւնք հռովմկանք։

Ի հոյս մանուց քաղաքաց յիշատակելիք են հայաբնակքն Ճուռճով, Կերլա, Եղիսաբեթապոլիս կամ Իպաշպոլոց, յառաջադէպ ի ձեռագործս և ի վաճառականութեան. առանձին ազատութեամբ սեպհականն իշխանաց վարելին քաղաքս մինչև զչեխին խառնուածութիւն ընկարացուց։ — Ծամոս-Ուժվար կամ Արմենիստան, զոր 100.000 ոսկւոյ գնեալ Հայոց, յարքադրելին քաղաք վայելուչ։

911. Ի գաւառս Գերմանացւոց կամ Սաքսոնաց գլխաւոր քաղաք

ՀԵՐՄԱՆՆՇԹԱՏ կամ ՆԱԳ ՍԵԳԻՆ (Hermannstadt, Nagy-Szeben)։ — Ճարտար յարուեստս, ունի լնկէն և Թանգարան ազգային։ ԵՒս սոլաս պէմ զբաղար Ռնկարացւոց բաղնեցաս ընդ Ռուսաց (6 օգոստոս 1849)։ Բն. 22,000։

ԲՐՈՒՆԳՈՍ կամ ՊՐԱՍՈՒ (Kronstadt, Brassow)։ — Սահմանակից վալաքիոյ, կենդրոն վաճառականութեան Դրանսիլվանիոյ։ ԵՒս ուժգին բաղնեցաս պէմ ընդ Ռուսիացւոց որ պաշտպանէին զքաղաքն (25 յուլ. 1849)։ Բն. 30.000։

Գաւառին Սեքլեաց գլխաւոր քաղաք է

ՆԱՍ-ՄԱՐԻՈՇ կամ ՄԱՐՈՇ-ՎԱՍԱՐՀԷԼԻ (Neu-Markt, Maros-Varsahely)։ — Ի վերոյ Մարոշ, ունի գրամուն 60.000 մատենից, մարդասուն ուղղափառաց և գբարոց մի նորաշնորհից։ Բն. 13,000։

ԺԵ. ՉԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՔ

912. Յայս անուն կոչին գաւառք վերոյգրեալ Նահանգաց սահմանակիցք Տաճկաստանի յահագ Ռումելական ծովու մինչև ի Մոլտաւիա։ Բնակիչքն խառնագոյ են և Լիւրիկեցիք, Մաշտաց, Վլահք, և այլն, յունադաւան կրօնիւք. ամենայն չինական զինուոր հասարի և պարտական զգուշանալոյ սահմանաց երկրին, ունի կալուածս երկրի, յորոց հարկին բաժ ինչ սակաւ, զՀանգերձ և զղէնս յարքունուստ ընդունին, այլ հնդաս միայն ի ժամանակս մարտի, ի խաղաղութեան ժամանակի երկու 45.000 զօրականք երկրին ի նոսա, ի պատերազմի գունդ կազմին առնուել քան զ100,000 պարագ։ Ի ԺԲ. գարուս հասատացան այս օրէնք զինուորութեան։ Բայց յուսամանց և ի հրահանգութենէ վերջացեալք են գԸնխովին։

913. Ի Լիւրիոնուս. Բն. 510.000։

ՉԵՆԿ (Zengh)։ — Գլ. Ք. և սալատ, որ ունի նաւահանգիստ Ադրիականին։ Բն. 5.000։

Ի ՍԼԱՒՈՒԻՍ ՉՈՒՐՈՒՐԱՑԱՍ. Բն. 268.000։

ՉԵՄԼԻՆ (Zemlin)։ — Գլխաւոր և մանր քաղաք, Հանգեալ Պելգրատոյ ի հարևուրգս Սաւոյ ընդ Դանաւր գետոյ. ասա նասի մեծ արքեպիսկոպոսի Ցուհաց, անուանի է վաճառականութեամբ ընդ Տաճկաստանի։ Բն. 11.000։

ՊԵՏԵՐՎԱՐԱՏԻՆ կամ ՊԵՏԵՐՎԱՐԱՑԻՆ (Peterwardein, Peterwaradin)։ — Քաղաք ամուր յաջմէ Դա-

նուբայ՝ ի մէջ քարաժեռից, հանդէպ Կայսրայ. ասո նասին իշխանք զինուորական սահմանին։ Ի 1716 Աւստրիացիք յաղթութիւն մեծ տարան ընդդէմ Տաճ կաց օգնականութեամբ Վենեակեցոց, որպես և ի վերջին մարտս Ռնկարիոյ բազում անգամ պաշարե ցան քաղաքս, և ի վերջոյ ասո ամրացան Ռնկարացիք և Եռուն յԱւստրիացիս ի 6 սեպտ. 1849։ Բն. 4.500։

ՑՈՒՆԿԱՐԻՈՒ ՀԻՆՈՒՐԱՑԱՆ որ և Պանդո. Բնակ. 260.000։

ՊԱՆՉՈՎԱ (Pancsova). — Գ. Ր. ուր Թամիշ Դրմբէ կամ ԴէմՖ ի Դանուբ։ Բն. 13.000։ — Մեհեանաւ աւան նշանաւոր է վան բաղանեացն։

Ի ԴՐՈՒԱՅԼԱՆԻՆ ՀԻՆՈՒՐԱՑԱՆ. Բն. 180.000։ Զկայ քաղաք նշանաւոր։

ՀՋ. Դ Ա Ղ Մ Ա Տ Ի Ա.

914. Պաղմատիա կայ յարեմտեան Տաճկաստանի, հանգերձ մատակայ կղզեաքն. կլիմայ չերմ է նոքա, վասն որոյ բերէ երկիրն գինի, ձիթապտուղ, Թուզ և ազգս ազգս ընկոյզ պտղոց. բայց ցորեան ոչ ունի զի կաւոտ է հողն և երիզուտ և անջրդի։ Բազմութիւն Ալպկայց ձգին ի Դաղմատիա ձիւնէն ի ծովեզերս, կապտաւէլ ի զարգուց անտառաց. յետին ի նոսա ի հարաւակողմն կոյս կայ Սեաւ լեառնն՝ (Մոնդէ–Նէկրոյ) անջրդիս Տաճկաստանի. Ձմեռապարհ պահեստք ոչ գոն ի նոսա, բայց միայն վասն գրաստուց գնալոյ։ Գետք մանուքք և սակաւք են ի գաւառի աստ, գլխաւոր ի նոսա Բերքաս անուանի վասն ջրվէժ սահանացն։

915. Բնակիչքն անկիրթք են բարուք, և չատք ի Սլաւեանց սերեալք. Մորլաքք որ ի Վլահաց՝ ընակեն յեզերս ծովուն. Հայտուք երբեմն համառաւք յաւազակութեան՝ կան ի լերինս, Սեաւլեռնցիք ի սահմանս հարաւոյ, և ի քաղաքս՝ ոչ սակաւ խռաչեցիք։ Վաճառք Դաղմատացւոց են ձէթ ընծոր, գինի և ձուկն, ի ձկնորսութիւն և ի տուրևառիկ վաճառս պարապի ժողովրդն, յարուեստից Ճարտարութենէն ամենեցին զուարկ գոլով. կրծնիք՝ չատք կաթուղիկեայք են, և սակաւք յունադաւանք։ — Ըստ Հռովմայեցւոյ գեղեցիկ բարգաւաճեր և Դաղմաթա. Յէ գարու գրաւեցին զայն հինք Սլաւեանք և ի ԺՀ գարու Վենեակեցիք բռնացան ի վերայ նոցա. յետ այնորիկ տիրեցին և Ռնկարացիք և Տաճիկք, և ապա ի Վենեակեցւոց բարձեալ վիճակեցաւ Աւստրիոյ, անցեալ և ի ձեռս Գաղղիացւոց յաւուրս Նապոլէոնի։

916. Քաղաքք գլխաւորք Դաղմատիոյ այսքիկ են՝ ի հիւսիսոյ ընդ հարաւ գիմելով։

ԾԱՐԱ (Zara). — Մայրաքաղաք ամբոր, ծովասպեաց, աճուռ իշխանի գաւառին. ունի ուսուցչարանս, և վաճառաշահութիւն։ Բն. 8.000։

Ոբրովացցո (Obrovazzo). — Գիւղ, առ որով ընդ ափսիպ և անգնդաձոր լեռնավայրս ճանապարհ մեծ յարգարեն՝ ի հաղորդութիւն Դաղմատիոյ ընդ Օլիներուական սահմանս։

ՍԵՊԵՆԻԳՈ (Sebenico). — Քաղաք փոքր ամրացեալ՝ ի շրջապատ ժայռից. անուանի են ձկնավաճառք նորա, և հուպ ի սա գեղեցիկ ջրվէժն Բերքաս։ Բն. 6.000։

ՍՊԱԼԱԴՐՈՒՈ (Spalatro). — Շահաստան ծովափնեայ. մեծ մասն քաղաքին շինեալ է կրնգարձակ ապառանս Դիոկղետիանոս կայսեր, որոյ կան ցարդ գահլիճք



Սրահ պղծոյ

ի կրանիտ քարանց և տաճար մի որ այժմ մայր եկեղեցի է։ Բն. 9.000։ — Փարոսախառ հեռի է գհուն Սալոն, ի հնումն Մարտիս–Յուլիս քաղաք, ուր անկագործութեան պարսպեր Դիոկղետիանոս կայսր հրաժարեալ յիշխանականութենէ, և անդ մեռաւ ի Թուին 313։ Յաւերակս Սալոնայ գտանին գրամբ հինք և կաֆ ոսկեդէզք և արծաթիք, հայելիք, չխչխ, անգրիք, մանեակք, և այլն։

917. ՌԱԳՈՒԶԱ կամ ՏՈՒԲՐՈՎՆԻԿ (Ragusa). — Ամուր քաղաք, ունի նաւահանգիստ բարի. յարևմտեան Սլաւեանց բնակիչք Սալոնայ և Եպիտաւրոսի կառուցին զքաղաքս զայս յԺ գարու, որ յաւգտից պայծառացաւ յոյժ. մինչև անկեալ ընդ ձեռամբ Աւստրիացւոց՝ ազատ քաղաք էր կամ հասարակապետութեան փոքր. անուանի է վաճառականութեամբ, և վաճառք սաղմնի նորա։ Բն. 6.000։

Գաթթարոյ (Cattaro). — Ի մասին Ալպանիոյ, ունի նաւահանգիստ անքրմի և ամուր, և վաճառականութիւն յաջող։ Բն. 3.000։ — Առ սովաւ վտակք Թամին ի գագ ծովու, վասն որոյ և քաղաքն կոչի Բերքանք Գաթթարոյն (Bocca di Cattaro)։

Խակ կղզիք որ յեզերս Դաղմատիոյ լեռնավայրք են առ հասարակ, բերրի միայն են Ուրկ, Պրացցա, Գորցոլա, Լեզինա և Բակոյ՝ որ ունի ազահանս և քաղաք համանուն։

ԿԱԼՈՒԱԾՔ ԱՀՍՏՐԻՈՑ

918. Ձեք ուրեք Աստրիոյ կալուած արտաքոյ, բայց միայն Լոմպարտիա և Վենետիկ, բայց ի սահմանէ Նորա իշխանք կան մանուանց պետութեանց Իտալիոյ. և ի քաղաքս ինչ ուրեք Նոցա ունի իրաւունս կարգելոց պահպանութեան, որպէս ի Ֆեռրարա Հռոմայ, և այլն։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՔ ԳԵՐՄԱՆԻՈՑ

919. Յապատակող ազանց արևելից Թուին եկեք Նախահարք Գերմանացւոց, որք Տևտոնք կամ Տայչք կոչէին զանձինս յանուն Դուխդայ աստուածոյն իւրեանց, կոչեին և Գերմանք՝ իբր Վեհր-ման՝ որ է Ճշմարիտ մարդիկ, և Ալամանք՝ իբրու Համագունդ ազգ, որք յափանց Հաինոսի և Դանուբայ՝ մինչև ի Սարմատաց սահմանս բնակէին՝ իբրև միով գաղթս յաղագս քան զԲրիտաս՝ Տևտոնք և կիմբրացիք բաղխեցան ընդ Հռոմայեցիս՝ որոց առաջնորդէր Մարիոս. և յետ Նորա հարեալք ի մեծէն Կեսարէ՝ Նիզակակցութեամբ հաստատեցին առ ի ղեմ ունել Հռոմէական զինուց. Հերման կամ Արմինիոս զօրավար Նոցա առ Օգոստոսիս յոյժ ազգասիրացեալ զնոսա և ՀԲ գաղթս Բրիտասի զօրացան Սաքսոնք, Սուեվք, Փռանկք, Լանկոպարտք և այլք և կալան զանազան կողմանս Եւրոպայ, քաջագոյն մասն հասեն ընդ Հռոմայեցս և կործանեցին զինքնակալութիւնն Արևմտից։ Ոգեւորք իշխան Հերուլաց՝ ի վերէ քննու Հայրենեացն՝ արշաւեալ սիրեաց և Թագաւորեաց յԻտալիա ի Թուին 476։ սուղ ինչ յետոյ կլովիս փռանկ ազգաս սիրեաց Գաղղիոյ և միոյ մասին այժմեան Գերմանիոյ, ընկալաւ զքրիստոնէութիւն ի 496 և եթող զինի իւր զՄերովինկեան Թագաւորութիւն, որոյ յաջորդեաց Գաւոլովինկեանն յ752։ կարօտս մեծս յայնեալ Աթոռոյն և ծեալ ինքնակալ Արևմտից ի սկիզբն Թ դարուն, ընդարձակեաց զսահմանս իւր Լիպար գետոյ մինչև ցՕտեր և Լոտարիոյ մինչև ցՎլտաէր։ Թոռունք Նորա բաժանեցին յիւրեանս զընդարձակածաւալ տերութիւնն ի հնգասակօր դասընդրութեանն Վերտենից։ Լրթարիոս կալաւ Լոտարիա և Վերինս կամ Զլոթարինկիա։ Կարօտս Կռնատ՝ զԹագուիս, և Գերմանիա վիճակեցաւ Լուդովիկոսի պատարագոյ, Ցառաջ քան զնոսա Ս։ Վենիփակիոս սկսաւ զԳերմանացիս կրթել ի քրիստոնէութիւն։

920. Ի սպառել Գաւոլովինկեան առհմին (911) Գերմանիա անկաւ ընդ բռնակալութեամբ գքսից Սաքսոնիոյ, Պաւարիոյ, Սուաւսայ, Փռանկոնիոյ, և առնակոս եղև ի բարբարոս ազանց։ Նորմանեացիք ընդ հիւսիսի ասպատակէցին, Վանդք արևելից սպառնային, և Ունկարացիք խաղային հասն մինչև ի Հռենոս։ Յայնմ ժամանակի Կոնրադ Սալիենոս ամբարձաւ ի Թագաւորութիւն, այլ ոչ կարաց զաղմուկսն հանդարտեել. մինչև առհասն Սաքսոնիոյ էառ զԳերման (919)։ Երիկոս Հաւորան ասացեալ՝ վանեաց զՆորմանացիս, զՎանդս, և զՈունկարացիս խորտակեաց առ Մերսպուրգ (933)։ կառոյց բերդս բարս և ամրոցս յոլովս ի քաղաքս քաղաքս, կարգեաց զկրքթութիւն հեթենոսութեան, և յաւել զՔրիստոս ի Գերմանիս։ Նմանող եղեալ նմին Մեծին Ոթոն որդւոյ Նորա՝ հնար զՈունկարացիս և տարածեաց զիշխանութիւն իւր մինչև ցգետն Օտեր։ ընդդէմ Վանգաց հաստատեաց զեպիսկոպոսական Թեմս Պրանանբուրգայ և Հաւելսպերգայ, Նուսհենաց զԱսպալիա, և կոչեցաւ կայսր Հռոմայ (962)։ յետ Նորա և եւս պայծառացոյցին զսահմանս իւրեանց յաջորդք Նորին Ոթոն Բ, Ոթոն Գ, Երիկոս Բ։ Սոցին յաջորդ եկաց Գրիգոր Նիոյ առհն (1024–1125)։ յորմէ նախ Թագաւորեաց Կոնրադ Բ, և ապա Երիկոս Գ որք ինքնիշխան պերճութեամբ հանեին հրաման ընդ բովանդակ Գերմանիա և Իտալիա։ պատկառ կային Նոցա և եկեղեցականք։ Բայց Երիկոս Գ ոնաչնացաւ ի յաջողութեանց աստ։ Գրիգոր ի Տալրապետ Հռոմայ ընդդէմ կայր Նմա որ մի լեզի ձեռներէց ըստ կամի բաշխել եպիսկոպոսութիւնս, և յանապատէն ընդ բաներ գառնայր յաթոռն անհնալ ի ձեռս հակառակորդաց, և մեռաւ Նա ի Լիեժ (1106) կրկին բանագրեալ, և Նեղեալ յորդւոյ իւրմէ Երիկոսէ Ե։

Սա յետ սակաւ ինչ ընդդիմութեանն հրաժարեցաւ յիշխանութենէն բաշխելոյ ակնդեցականաց զնաւ և զթեմ եպիսկոպոսութեան (1122)։ բայց վասն այսր կռուոյ երկպառակեալ էր աշխարհն ամենայն, յոր յաւելուաւ և նոր հակառակութիւն կուսիւթենոց և կիպե-լինաց, զի Վայոյվնկիզ տոհմն Սուսաղոյ տայր պատեզաղմ ընդ Վեչիեան գթոյց Պաւարիոյ ի վերայ ինքնակալութեանն, ի սպառել անդ տոհմին Փրանգիպանոյ։ Յետաքին կուսակից էին Պապին կուսիւթենից, և կայսերացն՝ կիպելինք։ Լոթարիոս Բ Սաքսոնացի յաջորդեաց Ենրիկոսի Ե, և յետ նորա (1137) ամբարձաւ ի տոհմէն Վայոյվնկից կամ Հոհենշտաւֆենի՝ Կոնրադոս Գ։ Փեսաներկոս Ա (1152–1190) եղբօրորդի նորա յաղթեաց Ալեածն Ենրիկոսի տաճիորդի կուսիւթենից, նուաճեաց զպատասխս Խաղիոյ, և ինքն մեռաւ յարեւելս երթեալ ընդ խաչակիրսն. սա է Փեսաերկոսն Շիլհամբրուս (Պարպա-րոսսա)։ Ենրիկոս Զ որդի նորա զնեալսլիա յաեղ յիշխանութիւն իւր, որդի նորա Փեսաերկոս Բ (1197–1250) կրնաց զանց Ենրիկոսի Գ։ կոնրադոս Գ որդի և յաջորդ փեսաերկոսի մեռաւ դեղեալ, և կոնրադին նորին որդի կառափնաւեալ ի կարմրուսկ Ընծաս՝ չինաս ճրագ-ատեան Հոհենշտաֆինաց, և մինչև ի Համբաւնալ Ռուդոլփոսի Հապսպուրկայ՝ անիշխանութիւն զբաս-ցաւ յաշխարհին (1268–1272)։

921. Յետ բառնալոյ Գաւրվիլհելմ ցեղին՝ Թա-գաւորութիւնն ընթացութեամբ անցանէր ի յաջորդս, և որք որդի ի հօրէ առնուին զիագն բաղում ան-գամ այլոց պաշտպանութեան և ապահանոց կաթո-ւածին. իսկ ի չիոնա Գ Ենրիկոսի և ի հակառա-կութեան Կուելփենից և Կիպելինաց, տեսոյր վէճա-կաց որ ընդ նոքօք՝ ժողովոյ թագաւորի Ֆրանգ-ռեին զկաղուածս իւրեանց և տակաւ ինքնիշխան տրա-մադիր ի տերութեան իւրեանց, մինչ Թագաւորացն երթալով կարճէր իշխանութիւն. սակաւուց ոմանց միայ իշխանութիւն ընթերկոյր զնագաւոր և չետ ժա-մանակաց ամբոխիցաւ չեսնին իշխանս ևեթ։ Եւ ի յառնել աղետալի պատերազմացն Կիւսք ի Ժողովրդե-նէն յամրոցս գիւնալ յաճախեցին հաւաքանալ երերո-քայս ի վերին և ստորս, և այլք զքաղաքս ամրացու-ցանէին և զինեին զինակիսն. ասպին և ի չարուհա-տից և ի տուրևաւիկ չահավճահաւոնեներն ոչ չետ-նեցան. բայց քանզի ի յաճախս մարտիցն վատնց դա-րանէր յարքունի ձանապարհս՝ գլխաւոր քաղաքացն հնաբեր զանձին ապահովութիւն, ասսի սկիզբն եղև յ'ԺԻ դարս հաստատութեան Դաշնակցութեանն Հանեաոսի ընդ քաղաքսն Սդրազպուրկ, Սբեր, Մա-կոնցա և Գոլոնիա, յորս յաճախն զինի և այլք բա-զումք, այսպէս և Դաշնակցութիւն վաճառականաց ի հիւսիսի Գերմանիոյ, նախ քաղաքացն Լիւպկէ, Համպուրգ և Պրեմա, որոց յաջողեալ էր վաճառա-կանութիւն, և ընդ հուպ բարգաւաճեալ ընկերու-թեամբ 80 քաղաքաց որ ի Գերմանիա և արտաքոյ, նաւ-նողին գնային յԱնգղիա, ի Գաղղիա և յսփոփս Ռուսաստանի և Սկանդինաւիոյ, մինչ զի ի ԺԵ դա-րս՝ մարտիկ նաւուքն ծածկել և զպաշտիկ ծուլ, այլ յետ գիւտի Ամերիկոյ և զրանալոյ Ընդգնոյ և Սաորին կանգնաց անչքացաւ գաշնակցութիւնս և միացին միայն երեք քաղաքքն միաբանք։

922. Յետ անիշխանութեանն Գերմանիոյ ընտրե-ցաւ Ռուոոլփոս նախայոյր այժմու ինքնակալացս Աս-պրուց, որ էր ասպետ սոսկական և ունէր կալուածս ի Սուսաղ և ի Հելուետիա, վասն որոյ ոչ որ ընդ-դիմացաւ նմա. բայց միայն Ոդոգարար արքայ Պոհե-միոյ արհամարհեալ գնաված ոչ հնազանդէր. և Ռո-ոոլփոս մարտեալ Հարեալ գնա զերկիր նորա ընդ որ-դեան բաժանեցաւ (1278). և ապա հնարեալս խաղա-ղել զանձարն, քանեալ զամարս բազումս պատու-հասեալ զանհնազանդսն։ Բայց իշխանացն Նասաան-ձեալ ընդ փառս նորա, յաջորդ կարգելն նմա (1291) զՎոոոլփոս ի կասուսաց. իսկ Ալպրեհտ (Ալբրեխտ) որդի Ռուոոլփոսի արարեալ կուսակից իւր զամենս յիշ-խանաց՝ տիրեաց գահոյն և Վոոոլփոս մեռաւ ի մարտի ի Վորմս (1298)։ սակայն Ալպրեհտ վասն անյագ ագահութեանն առելի լեալ ազանաս յեղբօրորդ-դոյն ի 1308։ Ընտրեցաւ ընդ նորա Ենրիկոս Է լուքսեմպուրկեան, ազգաս չգոր զօրութեամբ այլ առքսաս յընչից, առ որով Թագ Պոհեմիոյ վճռակիցաս որգուոյ իւրում. մեռաւ նա Թագաւորեալ գամս հինգ ի զոր չանացեալ յԻտալիա հաշտեցուցանել զվուէզ-վենս և զվիսկելինս։ Յայնժամ Ալսաթրացիք ըն-տրեցին ընդ նորա զԻեոեոբրիկոս, և տուն Լուքսեմ-պուրկոյ գլուխ Պաւարիոյ. և ի լինել պա-տերազմաց հակառակութեանն յաղթեաց Լուդովիկոս և հաշտեալ ընդ Փեսաերկոսի հաղորդ պարս զիա իշ-խանութեան իւրում. բայց իբրև զորդի իւր կացոյց տասնամեայտ իշխան պրանդենպուրգոյ՝ զարեալ իշ-խանաց Գերմանիոյ ընդ չուք տանն Պաւարիոյ խոռվե-ցին գլուդովիկոս, և կէսք զարքայն Պոհեմիոյ կոչէին Թագաւորել ի վերայ իւրեանց, այլք գԻհաՀեր ոմն ի Շվարցպուրկայ ընտրեցին ի մահն Լուդովիկոսի, որ և պատգամաւորս բարձեալ, տիրեաց Համբսկ Գերմանիոյ կարգոյս Դ (1347–1378)։ սա լուեցոյց զամբոխս Պոհեմիոյ և ծաղկեցոյց անդ զարուեստ հը-րաշանգս, հիմնեաց զՀամբսպարանն Բրասլոյ (1347) որ եղև առաջին ի Գերմանիա. կարգեաց և առանձ-նագրութիւն բաժանգակ աշխարհին. ի Նաբրեմբերգի հրատարակեաց գԻսկի կոնգան ի 1355, յորում օրինագրէր յայնմհետէ եօթն ևեթ լինել ընտ-րողաց Գերմանիոյ. այսոքիկ են Եպիս-կոպոսք Մայնցոյ, Դրեւսոյ և Գոլոնիոյ, և իշխանք Պոհեմիոյ, Բաւարիոյ, Սաքսոնիոյ և Պրանտե-պուրգոյ։ Վերնեչ որգի նորա անստամբ չեղև Տե-ոեսոզ Ջանիցն հայրենականաց, եթեզ անփութա-թեամբ զիշխանն Բաւարիոյ կարգել ընդ իւր հո-գաւարձս Թագաւորութեանն, զոր և փոխանակեաց Թագաւորն Ալնհարիոյ Սիգիսմունդ։ Սիգիսմունդ ոչ կարացեալ տիրել խաղաղութեամբ Պոհեմիոյ մե-ռաւ ի 1437. և իշխանութիւնն գարձաւ ի տուն Ասարիոյ։ Ալպրեհտ Բ տիրեալ սմա երկուս չիարոց ուղեալ, զոր միանգամ կամեցն վասն խաղաղութեան աշխարհին և ընթութեան պապին։ Փեսաերկոս Գ (1439–1493) արհամարհ եղև յաչս հպատակացն և որ չուրջ զնովաս պետութիւնքն։ մարթ իշխանաց ընդ

իշխանս յաշխատեցին յոյժ առ նուաս։ Բոսիսպրատ ամպատմբեցոյց զՊոռնեմիա և Մատթեոս Կորվինոս զՈՒնկարիա։ որոց ոչ համբաւակեր փեսեբրիկոս զգեմ ունել։

923. Որդի նորա Հզօրն Մաքսիմիլիանոս Ա՝որ Թագաւոր Հռոմայ կարգեալ էր ի 1486, վայելուչ յարգարեաց զաներութիւն. առեալ ի կնութիւն զՄարիամ զԹագաւոր Բուրգունդոյ յաւել զայն յիւր աշխարհն որպես և զՊոռնեմիա և զՈՒնկարիա. կարգեաց իմաստուն օրինս Գերմանիոյ և գագաթեցոյց զպատերազմսն իշխանաց. ա և ըստ խորհրդեան Ալբրեհտ Դայ Բ բաժանեաց զՕերմանիա նախ ի վեց և ապա ի տասն չրջանակս, հաստատեաց զՆաեան տէրութեանն առ ի կարճել զբռնութիւն ազատաց և ի պաշտպանութիւն Ժողովրդեան. թնամ կալաւ և զարքայն Նաղն դարձութեանց, և յորոց եղև Մելգոնայ Ֆին ցինկայ հետեր գթերգուածն այլաբանական թագաւոր, յորում պատմէ զանցս և զարուեհնիս Մաքսիմիլիանոսի ի սիս պատանեկութեանն մինչև յառնուել նորին ի կին զՄարիամ։ Ա՛ս սուաս ծագեաց նորա զանգն Լուձեերի, Թէպէտ և յառաջ քան զնա կացեալ էին աղանդաւորք Ալբիկենք և Վաճեցիք ի Գաղղիա, Ուիքլէֆ՝ Անգղիա, և Հուս՝ ի Գերմանիա. էին էին նոցա և այլոք որք իբրեւ իսկ յաճագովել զնոսա, վասն այնորիկ և ի Ժողովս որ ի գաբս անդ եղեն՝ փոյթ եր ըմբեռանելոյ զնոսա, միանգամայն և ուսմանց տարաձելոյ և խափանելոյ զչեշտուսն վարուց եկեղեցականաց զոր ծաղրելին ազանդաւորքն։

924. Ի հրատարակել Լէոնի ժ հայրապետի Հռովմայ ըներողութիւն սակս չինութեան մեծի եկեղեցւոյն Ս. Պետրոսի՝ ծրարաւոր եպիսկոպոսն Մոգոնտինոյ յանձնեաց Դոմինիկեան քահանայի Ցովհաննու Դեչելլոյ յերկրում Թիմին հրատարակել զըներողութիւն, որ և առեալ զայն պաշտօն անցեալ զքաղաք քաղաքաք եհաս ի Վիդենպերգ քաղաք Սաքսոնիոյ. ուր ուսուցիչ աստուածաբանութեան եր յայնժամ Լուձեր Մարտինոս հայր նորազան. գից. սա ծնեալ ի 1483 յաղթաս և ի բարեկրօն ծնողաց ԱՒղլենկեն, անուցեալ թնամով առաքեցաս յուսուսն ի Մանեեպուրկ, և անտի գնացեալ ԱՒղլենախ զաւուրն պարէն գաւառիր երգելով տաղ. ժոս ի գրուն տանց. մտեալ ի համալսարան Էրֆուրդոյ եգիտ զաստուածաշունչ գիրս և վառեալ յընթերցուսն սուրբ գրոց եմուտ ի կրօնս Օգոստ. նեանց ի 1505, ուսանեալ զաստուածաբանութիւն. յետ երից ամաց կոչեցաս ի Վիդենպերգ, և անդ դաս ասէր աստուածաբանութեան և քարոզէր, մինչ ցուցեալ Քաղաքով Պապին. իբրև եհաս անդ Դեչել ի հրատարակել ըներողութեանն, զրպերաս Լուձերի զի ոչ ինքեան յանձնեցաս մատակարարել զայն, ընդգէմ դարձաւ նմին և խոտեաց զնորհաւրդս քրիստոնէութեան, և հաստատեաց ի մտի գնալ ընդ նոր շուտ, զի բուռն և յանդուգն եր բարուք, չկրմ յաշխոյժ, ճարտարաբան և պերձախօս, և յամառ ի կարծիս։ Ի վերջնում աւուր Հոկտեմբերի 1517 ամին, կախեաց զդրանն եկեղեցւոյն Վիդենպերգիայ զռումբս 95 առաջարկութեանցն զոր գրեաց ի վերայ ներողութեան. և ի չանալ նորա ուղղափառ վարդապետաց որ կշտամբեին զմոլորութիւն նորա՝ գրեան նորա արևան ի հոր ի Գողտիա, և ինքն ընդ բանիւ եղև. յայնժամ և նա ժպրհեցաւ զկնդակ բանագրանաց իւրոց պրել և անջատել զանձն յեկեղեցւոյ։ Մաքսիմիլիանոս զգաստին ոչ ինչ ընդդիմացոյց Լուձերի, և ոչ փեսեբրիկոս խնամատուն իշխանն Սաքսոնիոյ որ կալաս զանձս Մաքսիմիլիանոսի, որով ոչ սակաս յաջողէր առնել. յաբեան ոմանք պաշտպան իսկ կալ նմա, յորս Ուլրիք Հուդդենեան և Ջուինգլիոս գրիցին ըստ մտաց նորին։ Բայց իբրև կարծոյս եր Թոռն Մաքսիմիլիանոսի ամբարձաւ յիշխանութիւն, արար Ժողով ի Վորմս (1521) և եա անել տիգր զՄարտեր, որ ձն. ռամբանութեամբն որպացաս զանձս յիշխանաց. և փեսեբրիկոսի կայսրընտրին Սաքսոնիոյ երկուցեալ զի մի գնասս ինչ հասցե Լուձերի՝ որում համահաւն եր, դարս հած զնա ի գղեակն Վարդպուրի հռով ԱՅՀզենախ. անդ ձեռն արկ ազանդաւորն յերգով զսուրբ գիրս ի գերմաներէն բարբառ, և անուտաս չոգաս ի Վիդենպերգ և ծաւալեր զաղանդ իւր. Համարձակութիւն գտեալ յատուրս պատերազմաց կարգոյսի եր ընդ Փրանկիսկոսի Ա։ Բրուտիա, Սաւեզք և Դանիք, Ցովհաննէս կայսրընտիր Սաքսոնիոյ, Փիլիպպոս մարգ պես Հեսսոյ աշակերտեցան մոլորութեանն. և ձեռն արկին ուղղել կրծոս ըստ մտաց իւրեանց, փակեցին զմենաստանս, և Լուձեր ինքն Ցողեալ զձև Օգոստինեանց, կին հած զկատարինէ զոմն հաւաստաւոր։ Իսկ ուղղափառք զպրեալ Ժողովով եատուն զնահան ուղիղ հաստատ հաւանել այնմ ամենեցուն. այս եղև ի Սրբիտ ի 1529. և որք ոչ անացին այնմ՝ կոչեցան Բրոտեստանդ այն է Բողոքարկութք կամ Ընդդիմադողք, իբրև հակառակողք գաւանութեանն. որք ի Ժողովն Աչխպուրկոյ (1530) և առաւ գիւաւանութիւնն Ասկսպուրկոյ անուանեալ զորք յորինեալ էր Մելանքդոնի մանրիմ բարեկամին Լուձերի, որ մերժեաց կայսրն կարգոյս և ընդ նմա ա. մինայն ուղղափառք. յայնժամ դաշնագիր եղեն նորազանդք (1536) օգնական լինել պաշտպանել զինքեանս ի ծագել Ընձսմանութեան, որպես և եղև իսկ զինի մահտան Լուձերի (1546). Կարգոյս պատեհ առեալ զազանգանաս նորազանդից զրաժողով եղև, դիմեաց եհար զնավմանենս ի Մուրվպերկ և արկ զնա ի բանս, ապա և Փիլիպպոս գաւաձանութեամբ անկաս ի ձեռս նորա, և լուծաս միաբանութիւն նորազանդ իշխանացն։ Գաւն գործեր Կարգոյս բարեկարգել զկնդակսն և միայն աւազատան Ժողովրդեան Տրիսենդոյ։ Մինչդեռ նորազանդք տարակուսեալ կային, Մորիկ գոչաս Սաքսոնիոյ որ նիզակակից եր Կարգոյսի ձեռն ետ ի նմա. և մինչ Կարգոյս յինդրոյք եր վասն ռահատութեանն՝ Մորիկ պաշարեաց ի նեզ արկ զնա, և սոխսեցաս Կարգոյս դաշնագրութեամբն Բասասաց Թոզոյ նորազանդից համաձակ պաշտել զդեն իւրեանց, որ և հաստատեցաս ի Ժողովն Ասկսպուրկոյ ի 1555, յորում ամի հրաժարեցաս Կարգոյս յիշխանութենէ և առանձնացաս ի Ս. Ցուստինոս վանատան յԻսպրկմատրոյ։ Իսկ

'ի Ժողովն Տրիանդրոյ' որ վճարեցաւ 'ի 1653՝ հերքեցան ամենայն մոլար վարդապետութիւնք նորադանդից։

925. Հակառակութիւնս այս ոչղղակառաջ և նորադանդից ոչ նուրբ Գերմանիոյ վայելել 'ի խաղաղութենէն. ընդ հնոյ բացաւ դուռն պատերազմի և բեւռուն ամաց (1618-1648), և խռովութենացն սկիզբն եղև 'ի Պոհեմիա. զի նորադանդք նեղեալ յոչղղակառաջ իշխանաց քողքեցին յատեան կայսերն 'ի Բրահա, և բազում անգամ մերձեալ անսի' Ծանրացաւսուն և զև կոմսն Թուռնայ և ամենն պարեալ զպազումն 'ի խորհրդականաց առեներն ետ ընկերանալ ընդ պատուհասն։ Ի ժամանակի առաջ մեռաւ Մատթիաս կայսր (1619) և յաջորդեաց զնա Գերդինանտոս Բ, որ բորբոքեաց զչորեքն առելութենէն, որոյ ոչ ևս հանդուրժեալ Պոհեմիոյ Թագաւոր իւրեանց կացուցին զՖրեդերիկոս Է զՀալցին իշխան, յայժմայ և Շվեզիա միաբանեաց ընդ Պոհեմիոյ, և բազմաց 'ի պատուհասից Գերմանիոյ սպառնալին 'ի կայսերէ. սակայն նա զուրեմբ զորավարսյ իւրոյ և խոհական խորհրդովին յաղթական գնաւ և զՖրեդերիկոս վտարեաց զնա 'ի Պոհեմիոյ. սպան զգլխաւորս ոմանս 'ի նորադանդից և հալածեաց 'ի հայրենեաց իւրեանց 30.000 գերդաստանս։ Ցանհնարս մտաւ նորադանդից աղերս արկին Քրիստիանոս արքային Դանեաց, որոյ յաջոգեալ գալ 'ի Թիկունս օգնականութեան, հարաւ 'ի զբաղարաց կայսերն 'ի Վալենշտայնայ և 'ի Դիլլեայ և չաղձական Նշանագնաց յաչխարհ իւր։ Վալենշտայն զնայ հան առ Ագրպլատեան ամրոցաւ, Գերմանիացոյս կարգեաց զնա Ծոմկաղ Պագշխանին և նուռմա զնալոցածս դքսին Մեքլեմպուրկայ որ գաղնակիցքն էին Քրիստիանոսի, չեգնալ ունին հայցուածոց Կուստաւսոփ Ադոլփոսի Սուեհայց Թագաւորի որ կարկոր ազգական էր զքսին. ապա 'ի 1629 Հնան զմեծ հրոմոյ. ապին Հաւոցգնան' որով հրամայեր Նորադանդից հաստացանել ևկեղեցւոյն Հռոմայ զամենայն հարկ խափանեալ 'ի 1617 ամէ. յորմէ և ուղղափառ իշխանք սկան ինեալ վասն ազատութեան իւրեանց, և բազում բարձին առ կայսրն. նա նա արգել միայն զնարտասհարութեան զրոյց Վալենշտայնայ. Յայնժամ մերձեալ չեալ ցասմամբ Կուստաւսոփ ընդ անարգանս հանգիպեալ նիցն Նորադանդից յամին 1630, հանց 'ի Ռուհկեն կղզի 14.000 մարդկաք և նուաստնաց զՀռոմբարնիա, բայց ոչ գտեալ օգնութիւնն յորոց կարծէր՝ բռնադատեցաւ տալ զՔրիստերն և զԱրնտաւսն 'ի Յոհաննէս Գուլիսեան, այլ գնաց յայրդեղին նմա մտանել 'ի Վիդենպերկ. Դիլլի պարապ գտեալ հան զՄակսենպուրկի յատուրց բազմաց և 'ի հոր բանեցաւ զնա առ քինու. յայնժամ Սաքսոնիա ձեռն ետ 'ի Կուստաւոս, որ և 'ի Նմին ամի (1631) ևհար զՏիլսպպրնեն Դիլլի 'ի Լայբցիկ և Հալածական տարաւ մինչև 'ի Լէխ, ուր և սպանան։ Յայնժամ կայսեր միաբանեալ փառաւորեալ զՎալենշտայն առաքեաց զորու Ծանոս, որ և զառաջս առեալ Կուստաւսոփ ասպատակ սփռեաց 'ի Սաքսոնիս, և 'ի 6 Նոյեմբերի 1632 ամին մղեաց զմեծ պատերազմն Լիւցենայ՝ յորում Կուստաւոս անկաւ քաջութեամբ և պատեցաւ Վալենշտայն։ Զօրավարք արքային Սուեհացոց, չկային յետս 'ի մարտ. իսկ Վալենշտայն առելի եղեալ սպանաւ յիւրոցն 'ի 1634. և 'ի Նմին ամի որդի կայսերն' այն է Ֆերդինանտոս Գ կարգեալ սպարապետ, տարաւ յաղթանակ մեծ 'ի Նէորլինկէն 'ի վերայ Սուեհացոց։ Յետ այսորիկ Սաքսոնիա գարձեալ Հաշտութիւն արար ընդ կայսերն, յորմէ ոչ ինչ զանգիտեալ Սուեհացոց' արիւգրոյն և մեծացան 'ի մարտ, զի և ձեռն Ռիշելիոյ Թուէր ընդ նոսա լինել։ Վասն որոյ և յաղթութիւն մերձ առ նուսա և մերձ առ սուա խոնարհեր, բայց խռովութիւն հաստատակ էր ընդ Գերմանիա։ Ջպյնոս ժամանակաւ Ֆերդինանտոս Գ ամբարձաւ փոխանակ հօր իւրոյ (1637–1657)։ զնուռոյեցան առ նովաս բազմութիւն մարդկան ոչ ասեն տրութեան և կրանից ինդրոյ ևեթ, այլ 'ի հարկէ և 'ի չքաւորութենէ տասկանք. Բեռնաւոռս Վայմարայ զորսվար Սուեհացոց' մեռաւ գերեալ 'ի 1639. Դորգենհան և Վաննկէ և Ռեհնիկսմարք բազում չաղնութենաւ օգնութենաւ Գաղղեացոց' փուռացուցին զհաշտութիւնն ցանկալի, յոյր սակս լինէին տասկ հրեշտակութիւնք մինչև հինգեաւ այն 'ի 1648 'ի 24 հոկտեմբերի և կոչեցաւ խաղաղութիւն Վեսդֆալիոյ։ Ասատրիա տուժեցաւ և 'ի պատերազմն և 'ի հաշտութենէն, զի բարձան 'ի Նմանէ Ալսատիա և Թեզե Գուբայ, Մետս և Վերտենայ, և տուան Գաղղիոյ վասն ձեռնտուութեանն 'ի Սուեհաս։ Սուեհք իսպառ բաժանեալ 'ի միաբանութենէ ինքնակալն տաճն գմասն մի Բոռիքանիոյ, զՎիլմար քաղաք, և զԹեմս Պրեմոյ և Վերտենայ և արտաքս բազում։ Պրանտենպուրկայ' տուաւ միայն Մակտեպուրկ և Հալպերշտատ. Հալտնաս Թոմասիեաց գլուխ Սպանիոյ. և 'ի Գերմանիա շնորհեցաւ ազատութիւն լուսերականաց և կալվինականաց. տկարացաւ զորութիւն իշխանութեան կայսերն, և պետութիւնք որ ընդ Նովաս բաժանեին 'ի միմեանց, և ամենեքին զնաքանչիւր զինուորութիւնս զրացուցանէին։ Բայց սակս բազմամեայ պատերազմին անապատական բազումք 'ի գաւառաց, գաղրութիւն և արհեստք անչքացան, վաճառականութիւն և զրութիւն բարձաւ 'ի Գերմանիոյ. Գաղղիա, Անգղիա և Հոլանտա գլեցին զնովաս. բազումք 'ի համայնապնաց և 'ի վարժարանս նոց կործան անհետ բարձան, որպէս և ուսումնասիրութիւնն ի.Ջ գարուն, և յԱյժ չեկաց ոք երևելի մատենագիր 'ի Գերմանիա։

926. Գերմանիոյտոսի յաջորդեաց Լէոպոլդ Ա (1657–1705)։ Լուգովիկոս ԺԴ, եհաս 'ի Նմանէ զՀրենա և զաւանս Հաւնոսի որպէս մատուցաս երբ կրկին որ տուեալն էր Գաղղիոյ 'ի Տաշտատն Վեսդֆալիոյ. ապա գրաւեաց և զՎերտզպուրկ ապա քաղաք։ Լէոպոլդ պատազեալ էր 'ի հոգս մարտի ընդ Տաճկաց և օգնութեամբ Սոպիեսկի Յովհաննու Լեհաց արքայի վերծոյց զմայրաքաղաք իւր 'ի վտանգէ մեծէ (1683)։ Բայց Լուգովիկոս ԺԴ իրրև ձեռն ձգելը և յիշխանութիւն Բանգիոյ պաշտպանելով ետն յանուն գքսուհւոյն Օռլէանայ' ընդդէմ եկաց կայսրն. յայնժամ Լուգովա պատճառակալ Գաղղիոյ յաեր և յաւար մատնեաց 40 քաղաքս և 130 աւանս և գեղս

ի Բալագին։ ի 1697 եղև խաղաղութիւն Ռայսվիքայ ընդ Գաղղիացիս. և յայնժամ ևս ոչինչ շահեալ Աւստրիոյ, Ծագեցաւ ապա և այլ պատերազմ մեծ, զի Կարլոս Բ արքայ Սպանիոյ կամէր զըրդէ կայսերն կարգել ժառանգ Թագաւորութեան Իւրոյ, իսկ Լուդովիկոս Քահանիար ընծէր ի Գաղղիայի որ հանել զժառանգութիւնն, և Եւրոպայ բովանդակ եմուտ ի մարտ սակս Յաջորդութեան ամուսնոյն Սպանիոյ. Եւ գինեալս իշխան զբաւական կացեալ Աւստրիոյ և Մարլբորուս Ընդդիմացաւոյ հարին բազում անգամ զԴաղղիացիսա. բայց իբրև մեռաւ կայսրն, և յաջորդ նորա Յովսէփ Ա (1711), աներեւութիւնն վիճակեցաւ Կարոլոսի Բ, այն որ ընտրեալն էր ի Թագաւորութիւն Սպանիոյ. խելացեալ Անդրնդացոց և Հոլանտացոց մի գուցէ միասնագամ հանդիպեսցին գէպք ընդառաջակծաւալ պետութեամբն կարոլոսի և հովացան յԱւստրիացոց. և յետ յաղթութեան Վէյլպարայ ի վերայ Եւգինէոսի ի 1713, յամին Երկրորդին արա-բին հաշտութիւն ի Ռաշդատ և ի Պաատն, յորում հաստատեցաւ ունել Գաղղիոյ զոր ունեցեալ էր ի Դեբմաներոյ, բայց Աւստրիոյ տուաւ Պելգիա։

927. Կարոլոս Բ յաջողութեամբ վճարեաց զմարմնոյն ընդ Տաճկաց, ի խաղաղութեան կալաւ զԳերմանիա, և չանացեալ կարգեաց յաջորդ իւր զՄարիամ Թերեզիա զդուստր իւր, և ինքն մեռաւ ի 1740։ Սակայն բազումք համարձան թիկնակրօք ինքնանալութեան, և հզօրագոյն ի նոսա գտաւ Փեռերիոս Գ արքայ Բրուսիոյ, որոյ վայելեալ յարգասիս բարեյաջողութեան աշխարհին իւրոյ, զոր հանդերձեցին նմա Փեռերիկոս Ա և Գուլիելմոս Ա նախորդք իւր, և ունելով ընդ ձեռամբ ութ բիւրս քսակիրճ զորաց որպէս թէ ոչ այլ ուրեք լինել նոցին հաւասար ի ժամանակին յայնմիկ, որիւաքն ոգւոյն և խորագիտութեամբ կանգնաւ գործուածոցն ի Բրուսիա զանձատեաւն ի նմանէ մանն Շարլոյ. ի 1740 վիճամուխ եղև ի գաւառն այն, յայթեաց երկկոյս ի Մոլվից և ի Յաղաւ, և պարտիլ հաշտութիւն ի Պրեսլաւ (1742) տրեւոց մեծի մասին Շլեզիոյ. և յերկրորդում նուագի պատերազմացն (1744–1745) կալաւ զբոլոն։ Փրեսերիկոս Գուլիելմոս էր ի պրանտենպուրգիոյ ընտրեալ էր կայսր Աւստրիոյ, որ և իմասուութեամբ վարեալ մեռաւ ի 1745. և ընդ նորա կոչեցաւ կայսր Փռանկիկոս գուգս Տոսկանայ ի տանէն Լորենայ, այրն Մարիամայ Թերեզիայ։ Գաղղիա և Իտալիա և ապա Սուէտք և Գերմանիա ոչինչ միաբանեցին ընդդէմ Բրուսիոյ վասն գրաւման Շլեզիոյ. որում յառաջանալով գոլով Փեռերիկոսի՝ յանկարծակի պահուն խաղաց ի Սաքսոնիա և զինակապուռ արար զամենայն զբօս որ ի նմա (1756). և այս եղև ի սկիզբն եօթնամեայ պատերազմին, յորում ինքնին զբալաքեր Փեռերիկոս, մարեւաւ սակաւուք ընդ բաղմաց, քաջութեամբ և ձարտարամտութեամբ զբմաղցդ վնասուցս, վերադարձ եւ հանդիսացեալ ի ձախողակ բաղդի փառաւորեցաւ յոյժ ի 1757, վասն բազմագէմ անցից մարտին. յաղթական գտեալ ի մեծ պատերազմին ի Բրահա, և զինի ամոլ բռնագաւեցաւ մեկնել ի Պահեմիոյ. Ռոսբաք և Աւստրիացիք մեծացան յաշխարհս նորա, ութերեքն Շլեզիոյ, փոխանցաւ նա և նմա զԴաղղիացիս ի Ռոսպախ, ապա զԱւստրիացիս ի Լոյթեն և ութեաց անգրկէն ամենայն սահմանաց իւրոց, բայց ի սակաւուց. և յամին որ զինի թէպետ և ոչ նոյնպէս յաջողեաց նմա, և Անգլիա դադարեալ յառաջելոյ նմա պարենս և զրկեն խոնջեալ ևս էին, սակայն և Թշնամիքն նորա տաղտկացեալ Թուլոյսան, և եղև խաղաղութիւն ի Հուպերդսպուրգ, ոչինչ կորուսեալ փեռերկոսէ։

928. Յովսէփ Բ փոխանակեալ զհայր իւր ի 1765, սիրեաց զրպէս զինաերկիրս առնել իւր անուն և զերերութիւնն փառասիրէ, բայց մայր նորա Մարիամ Թերեզիա նմա զլարչութիւն պետութեանն մինչև ի մահ իւր (1780)։ Յետ այնորիկ ձեռն էարկ Յովսէփ սեփ բարեկարգել զպետութիւն, այլ վայրկենից ի վայր պեաց յերս յերս. առեցաւ յեկեղեցական գասուէն զի երբէք զբազում միաբանութիւնս միանձանց, և նոր սովորութիւնս եմոյծ, յորմէ ըմբռնացան ունել կարապետ և պելգիացիք, որք չկամէին ընդ փոփոխութիւն օրինաց իւրեանց. Եթող նա զերերութիւնն ազգ մահուամբն ի 1790, եղբօր իւրոյ Լէոպոլդի Բ, մինչև վճարեալ զպատերազմն Տաճկաց և բարեկարգեալ զաշխարհն. ամենայն գաւառք ամբոխեալ էին և ամոլ չիեղիք խռովութեանն Գաղղիոյ հասեալ կայր ի վերայ։

929. Դաշնագիր եղև Աւստրիա ընդ ռանն Բրուսիոյ ի Բիլնից ի 1791 ընդդէմ Գաղղիոյ. ի ժամանակին յայնմիկ մեռաւ Լէոպոլդ և կալաւ զաթոռն Փռանկիկոս Բ։ Ի հրատարակել մարտին գուգսն Պրուգոլէյքայ ատաղիացի և բրուսացի գնգաս խաղաց ի Շամպանիա, և ոչ անագանեաց յետս գառնալ առ կարօտութեան պարենի և պահից Ձարակելոց ի զօրուն. ի Սաորին Կաշանդս եղեն պատերազմունք՝ որոյ կատարածն յաջողէր Գաղղիացոց, և ի յառնել ապատամբութեան Լէհաց ի Բրուսիա՝ խոսեցան ի խաղաղութիւն ի Պազել (1795). բայց Աւստրիացիք ապաւէն մարտնչէին, մինչև Պոնապարդէ գրաւեալ զՀիսպանիոյն մասն խաղաղ մեծացաւ ի սահմանս Աւստրիացոց, որք և խոսեցան ի հաշտութիւն ի գամբոյ-Փորմիոյ ի 1797. և ապագնք Հանիռոսի առան Գաղղիոյ։ Յամին 1790 Աւստրիա ձեռն ոգնականս Թեան գառել ի Ռուսաց միասնագամ խրախուսեաց ի մարս։ Սուվարով զբաղար ռուս Թաթեաց վտանգեալ ի Գաղղիացոց, այլ ի Նեղլ չերեսաց Մասեաց Նայ Գաղղիացոց զբարեկամ Ռոսբաք մեկնեցան յաշխարհս իւրեանց, և Աւստրիա անօգնական մնացեալ ոչ կարաց՝ զդէմ ունել Թշնամեացն. Պոնապարտէ յաղթութեամբն մեծաւ ի Մարենկոյ անգրկէն հռոմ-Ձեաց գնացաւ, և Մորոյ յաղթական գառել ի Հոհենլինտեն, բռնան արարին Աւստրիոյ զինեալ ի հաշտութիւն Լիւնեվիլեայ, յորում տուաւ ի հռ Վենետիկ, և Գաղղիոյ հաստատեալ Հելուետիոյն խոսեցոյ։ Գարձեալ մերձեցին Ռոսբաք ընդ Աւստրիոյ ի 1805 ընդդէմ Գաղղիոյ, Աւստրիացիք նախ միայնակ հարեալ ի Թշնամեաց, ապա և ընդ Ռուսաց

Աւագերիից, հաշուռԹեամբն Բրեզլաւրիայ լռեցուցին զմարտն, հանեալ ի ձեռաց իբրեւ ոչ ինչ. տիկ, զՆիլոսն և զամենայն երկիրն որ ի Սուսայ։ Բրուսիա հարկեալ տալ քաղաքս ինչ ի Գաղղիացիս, հանգերձեր ի մարտ ընդդեմ նոցին. բայց բաղումք ի պետուԹեանց Գերմանիոյ ի Գաղղիացիս ձեռն ուուեալ էին. և հաստատեալ էր դաշնակցուԹիւնն Հռենոսի, վասն որոյ լուծաւ գերմանականն, և Փրանչկիական կայսերացաւ (1806) ի կայսերական Թագէն Գերմանիոյ. Բրուսիք և Ռուսք հարեալ պարտեալ ի Նաբոլէոնէ՝ խաղեցան ի հաշուռԹիւն ի Դիւլիդ (1807), որով հասան բազում գաւառք Բրուսիոյ։ Բայց Աւստրիա պատեհ առեալ զպատերազմն Սպանիոյ յոր ուշ եղեալ էր գաղղիացւոց՝ վերստին գործ ձեալ մտաներ ի մարտ. սակայն և յայսմ յաղՁէր Նաբոլէոնէի. բարձաւ և յոյս յաղողուԹեանց Կարոլոսի եղբօր կայսերի, և Հոֆբէոյ ի Դիւլդ, և Շիլլոյ ի Բրուսիա. հաստատեցան պայմանք հաշտուԹեանն ի Վիէննա (1809), և զայս ևս նուազ ի տոյժ Աւստրիոյ, և յայնժամ ի Մարիա Լուիզա դուստր Փրանչիսկոսի փեսայացաւ յաղթողն։

Ի մեծ արշաւանս Նաբոլէոնի ի Ռուսաստան՝ նեզականիկ էին նմա Աւստրիացիք և Բրուսիացիք, այլ իբրև ցուրտ ձմերայնոյն կասեցոյց զընԹացս գաղղացւոց խորակեալ զբանակ նոցա, նախ Բրուսիացիք Թիկունս գործուցին ի նոցանէ, և ապա Աւստրիա. որք զառաջինն հարեալ և բաղում ուրևք ի պարտուԹիւն մատնեալ, յետ վերադարձ առնելոյ (1813) զամիս Երկուս՝ ձեռն արկին ընդ Ռուսաց ի մարտ՝ որ տակաւ յաջողեալ նոցա քակեաց զդաշ նակցուԹիւնն Հռենոսի ի միաբանուԹենէ Գաղղիացւոց և զինքնակալ նոցա մինչև ի Հռենոս սահմանս ընկրկել. և իբրև չէառ նա յամն ընդունել զպայմանս հաշուռԹեան, յառաջեցին դաշնակիցքն, և Բաբրիզ անձնատուր եղև ի Նոսս յ'30 մարտի ի 1814. այլ առ ի բաբևկաւրել զերս Եւրոպայ ժողով եղև դաշնակցացն ի Վիէննա, և անդ հաստատեցաւ լինել Գերմանիոյ միաբանուԹիւն պետուԹեանց, այս եղև սկիզբն այժմու դաշնակցուԹեանս յոր յոբնիսի ի 1815։ Աջգիացիք և Բրուսիացիք կանխեցին զառաջս առնուել Նորոյ հաւուրուԹեանց ի սմին ամի ի զերծանել Նաբոլէոնի յԻլլոյայ. և Գերմանիա հանդարտեաց ի բաղում պատերազմաց։

930. Յամին 1835 մեռաւ Փրանչիսկոս Ա, և յաջորդեաց որդի նորին Ֆերդինանտոս Ա, որ ի յոյս վերջնոյ խաղուԹեան աշխարհին՝ հրաժարեաց յաԹոռոյն, և կացուցաւ փոխանակ Նորա եղբօրորդի նորա Փրանչիսկոս Յովսեփ Ա, յԼԻ 1848 ամին, մինչդեռ խաղաղ և ընդկալիս ընդվզին յաւարիս կան պետուԹենէ. զորս և նուաճեալ օճախգակոչ Թեամբ Ռուսաց, փոյթ և չան ի կիր արկեալ է այժմ հաստատել նոր օրէնս և վարչուԹիւն հանդերձ պետուԹեանն և Գերմանական ԴաշնակցուԹեանն, քանզի բազումք ի դաշնակցացն անձամբ վարկան վրէԺել օրինաք կարգելոցք յամին 1815 յետ միանգամ խղճելոյ աշխարհին. այլ քանզի յերկուս հերձեալ է պետուԹեանցն՝ կիսոց ընդ Բրուսաց ձեռներիցս Թիւն հանձելով, և այլոց ընդ աւագուԹիւնն Աւստրիոյ, ոչ ուղղին իրք աշխարհին, Թէպէտև և ջրք ամք են ղի ժողովք լինին վասն այսոցիկ ի Ֆրանքֆորտ, որպէս և յայլ քաղաքս։

ԴՊՐՈՒԹԻՒՆ

931. Նագռուն գպրուԹեան ի Գերմանիա կանուխ է քան զբազում ազգաց, զի անգամին ի Դ դարէ Ուլֆիլաս եպիսկոպոս զսուրբ գիրս էյեզ ի բարբառ արևմտեան ԳոԹաց, յորմէ աւետարանքն չորեքին պահին և ցարդ. բայց քերդուածք որ ի ժամանակի անդ հիւանցան և որ ի մեծէն կարողուԹենէ հաւաքեցան՝ այժմ չկան ի միջի. հաւանած մի միայն կայ ի հնոց անտի բանահիւսուԹեանց, այն է՝ մեհամառուԹիւնն Հիլդեբրանտայ ընդ Հաւտուբրանտայ։ Ի գրուածոց որ ՂԹ և ի ԺԱ դարս՝ չորք ևեթ պահին, այս է Աւետարանն տաղաչափեալ ի գերմանացի ԱԳափրիտայ վայէնպուրեայ (840–870). Երգն ի յաղԹութիւն Լուդովիկոսի Գ ի վերայ Նորմանացւոց (879). ԹարգմանուԹիւնն Սաղմոսաց զոր արար Նոքերէ՝ որ մեռաւ ի 1022. և Կերդով Ս. Ան նանի եպիսկոպոսի Գոլնիոյ (մեռաւ ի 1075)։

932. ԵՒս ԹագաւորուԹեամբ ոտնիցն Սուսայ և Հռենդգաւիֆէն յաՀախեցին բանասեղծք. որ երգեին ի սուսայ լեզու և կոչին քերդողք Սուսայք կամ Սիրերգակք (Միննեզինկեր). յաւուրս խաչակրաց և պատերազմաց Սպանիացւոց ընդ Արաբացիս՝ ի հնարել ասպետական երգոց հանգեան ընդ այն և գերմանացիք և նմանող եղեն երգահանին Բրունան այ Դրեսպատուր կոչեցելոց, ամենայն իշխանք պատուէին զբանաստեղծս և ինքեանք յարուեստ նոցին պարապէին. անուանի գոան ի նոսա Վոլֆրամ Էշենպախայ, Հարդման ֆոն աուե (գաղտպային), Ուալթ Վիհելհզդայիայ, Գոտրատ Վիրցպուրգայ, Եոհրկոս Մայսէն, Բրիհոսը, և այլն։ Քնարերգակ քերԹուԹիւնքն սոցա քաղցր են և յարգասիրք, զոր միաՀամուռ ի միտ արձանացոյց զառաջինն Պոտմէր ի 1758. Սորա և զհնոց երգահանից գիւցազներգուԹիւնս ոճով հիւսեցին, որպիսի է անուանի գիւցազներգուԹիւնն Հիպելունկին և Մաուեանն Դիւցազանց, որ են պատմուԹիւնք և անգք քաջազանց և չաՀասակաց և անցից անցելոց յաւուրս Աստիղասայ և ԱարոգոԹայ, որոց քերԹողոց անճանօԹ մնաց անուն։ ԹարգմանուԹիւնք որ առ նոքօք եղեն՝ գնդն ազատ ոՀ գիեցեալ են. այսպիսի են Ենէականն, Պատերազմն Տրոյից, Ովիդիոս, և այլն. որոց ծանօԹ են և Թարգմանիչք։ Կացին ի դարս սուս և վիպասանք, զուարճաՀռչակ պատմաբանք. իսկ ի ժամանակագրուԹիւնս առաջաւորեալս անուանի են Կայսերական գրեալ յԺԻ դարս, և Աւստրիական ի ԺԻ դարս։

933. Իբրև խաղուԹիւն քաղաքական վեր ի վայր

յուզէր զԻբերմանիա, ընդ նմին անչքացաւ և գաղուռ Թիւն և լռեաց լեզու և ոգի բանաստեղծութեան ընդ երկար ժամանակս. մինչև Կարոլոս Ե հիմնեաց զՀա մալսարանն Բռնակ և ըստ նմանէ կանգնեցան այլք ի Վեննա, ի Հայտելբերգ, ի Գոլոնիա, ի Բերլին, ի Լայբցիկ, և այլն: Ի ժամանակին յայնմիկ (ԺԸ դար) ընդհակառակ ի Թեան եկեղեցականաց բա զմահիւղ գրեցան, յորս գլխաւորէ վիպասանութիւնն Աղուիսաւ, որ Թէպէտ ՅԱՒ դարու ի գաղղիացի բար բառ շարադրեալ էր, այլ Ներիկոս Ալբմար Նորդ յարգարեալ գրեաց ի գերմաներէն. Նոյնպէս և բա նահիւսութիւնն Նարբերնէիի (Հաւ յիմարաց) զոր շա րագրեաց Սեբաստիանոս Պրանտ, և կայսէր 110 խոս արար զայնմէ ի Մգրամպուրկ: Հանս-Սաչս անուանի գտաւ ի քերթողութեան և ի քարոզու Թեան:

934. Ի ԺԶ դարու խմասուածք Ցունց եկեալ յԻտալիա յետ առման Կոստանդնուպօլսոյ անդին ընդ իւրեանս ձեռագիրս և զանթրժակ ուսմանց. որով վառեալ և գերմանացւոց հետաքրքրեցան ընդերը ցուածոյ նախնեաց օրինակագրաց. Ռոյխլին (ծն. ի 1455. մեռ. ի 1522) արար անուն մեծ խմասուա Թեամբ և առացաւ աշակերտս յոլով. Էրազմոս հրմ տութեամբ գերազանցեաց զյոգուածսքը և ապա նովին զառածաւ. Ուրիք Հուտդենայ ևԹող ոչ սակաւ Ճառս հանճարեղս: Բայց օժանդակ մեծ եղև ի բարգա ւանման գալուածոյ Թեանց արուեստ տպագրութեան զոր Հնարեաց ի ԺԵ դարու Ցովհաննէս Կուտգեմբերգ (ծ. 1400. մ. 1468) և զարգացուցին զայն Ցով հաննէս Ֆուստ և ՀԷՖֆիքեր Պեարս:

935. Ց'ԺԷ դարու անուանի մասնաւորիքը կացին Ցաջորդս Պեօհմ և Ցովհաննէս Ա.անա երկցադրիք ժա մանակաւ. Ցովհաննէս ՔՒՓլէր աստեղաբաշխ մե ծանուն (ծ. 1571, մ. 1630) որ եգիտ զբերնս ըն Թացից մոլորակաց. Մարտին Օբից և Պօղոս Փլէմ միով քերդողասիրը կացին շնչեանն բանաստեղծից. Ցետ այսոցիկ ական ծառայաբար գաղղիացի մա ռնաւորաց հետևող լինել. ապա կացին Սքիւնէր (1635–1705). ՀԷրման Ֆրանք (1663–1727) որ կանգ նեաց զառնիս մատենագրութեան ի Հալլէ, և Նրին ծնողաբիկ իշան (1700–1760), Նահապիկրէն Մօրա. ւեան ընկերութեան, որոց գրուածք կրծնակարիք են ի հասարակի: Մոռհայմ (1694–1755) պերձախօ. սութեամբ երևելի, որալ իւր անուն եկեղեցական պատմութեամբն. Լայպնից (1646–1716) մտեներագիր բազմահմուտ որպիսի ականաբ ոմանք երևեցան յաշ խարհի, յամենայնի յառաջադէմ ծառա առ իւրոքեան, առաւելեալ ի փիլոսոփայութեան և ի տափաերու Թեան, զորս ի լուսին լեզու կամ ի գաղղիացի. Վոլֆի Բրլեասնանս (1679–1754) որ բացատանդյ ըզ գիւտս Լայպնիցայ:

936. Բանասաեղծութիւնն պայծառացաւ ՅԱՒ դա րու և քերթողք հմտասէրք, Հալեռտուն, Նէսլերդ Հալլէր (1708–1777), որ և բնակ է. Գոտմէր որ հրատարակեաց զՄիննեզինկերաց երգս առաջնոց երբ գաղանիկ. Կէսներդ առալսեաս (1715–1769). Կլայմ (1719–1803). Բլեյսդ, որ երգեաց զգարուն. Ռամլէր քնարերգակ: Բլոըշտոք 1724–1803 գերա զանցեաց զամբօք Մեսիական սրբազան երգովքն, և ընդ Վսայ համարեցաւ Հայր քաջաց տաղաչափից: Բան սոցանէ բազում և այլ բանաստեղծք և մա ռնաւորիքք կացին յատարա գարուն այնմիկ, յորս երևելի են, Լէսսինկ (1729–1781) որ զաղգասիրու Թեան ախորժակ վառեաց ի գերմանիա. Վին քէլման (1717–1768) անուանի ընդ ամենայն նէ րոսկ, զի արար պատմութիւն զարուեստից հը նուԹեան. Համանն խմասուածք նրբախոս (1730–1788), յորս սակս կոչեցաւ Մոգ հիւսիսոյ. Էմմա նուէլ Քանդ փիլիսոփայ (1724–1804) որ եմոյծ նոր ոՀ յիմաստասիրականս. Ֆիխտ, Շէլլինկ, Հէկել (մ. 1831). Շելյեգրմախեր (մ. 1834). Շգեյլլէնս, և այլ խմասուածք որ աշակերտեցան ուսմանց Քան դայ: Հէրսեր (1744–1803) աստուածաբան փիլիսո փայ և բանաստեղծ, գրեաց խորհրդածութիւնս ի վերայ պատմութեան մարգասիրական. Շեյլլինկ (մ. 1804). Լաւաթեր գիմխայլ (մ. 1801). Եա գոպի (1743–1819), և Կլաւգիոս (մ. 1815), սոքա ընդդէմ զինեցան փիլիսոփայիցն որ հակառակէին խոր հրդոց կրօնիցս սրբոցեան: ԵՒս սոքօք եղև ոսկի գար բանաստեղծութեան Գերմանիոյ. Վիլանս (1733–1813) ի հետևոցս անտի Գաղղիացւոց. Պիւրկեր (մ. 1794) գրեաց Թատերգութիւնս. Հէյնէ (մ. 1776) քնարերգակ քաղցրախօս. Վոս (մ. 1826) բա նաստ և քաջ Թարգմանիչ Հոմերի. Փրեաերիկ Շգոլ պերկայ (մ. 1809), Մարիսսոն (մ. 1830), Սաչիս, Կո վալիս (1772–1801) բարեպաշտիչս քերթող քաջախոհ. Դիւք և երկոքին եղբարքն Շէլհկէլ ուղղեցին զոՀ գարութեան անուանեալ յԻլին գարու:

Բայց Համբաւ ձգան ի վեր քան զսոսա ի յեսին ժամանակս Կեհէթ Վոլֆկանկ (1749–1832) և Փրե աերիկ Շիլլեր (1759–1805) բանաստեղծք անուանիք ընդ Համերն ազգս, յորոց երգուածոցն Հռչակեցան յոյժ երգերքն ևս. Հետևող Նոցին գան Վերներ (մ. 1823), Միւլլեր (մ. 1829), Ռքօռներ, որ մե ռաւ ի մայիս յամին 1813 ամաց գոլով 22 ի սէր Հայրենեաց տարապայման բարերքեալ. Միւլլեր (1752–1809) կոչեցաւ Հայր գերմանացի վիպագրաց, որոց զպատմութիւն Հելուետիոյ և այլ բազում գիրս. Ա տելչնիկ լեզուագէտ:

937. ԵՒս մեջ անուանի կացին ի քերԹութեան, Դիւք (ծ. 1773) Հմուտ և վիպասան: Ռեհլնաս (ծ. 1787), Շվոպ և Համիսսոյ քնարերգակք: Ցի մատասէրս երևելի են Շէլլինկ (ծ. 1775), ՇԹէֆ ֆէնս (ծ. 1773). Ֆիխտ հրատէր, Հելսպորգ, և այլք, յորոց շատք վարժապետք են և ուսուցք ուսմանց ի քաղաքս քաղաքս: Պատմաբանք, Հէերէն՝ որ գրեաց զլաՀատականութեանէ և զքաղաքականութիւնէ հնոց, Ռանկէր, Լէյդ, Ռանք՝ որ գրեաց զպատկան պատ մութիւն, Օդիքիս Միւլլեր որ գրեաց զհելից Ցոն նաց, Վառնհակեն՝ գրիչ վարուց Նշանաւոր արանց, Նեանդր տրեաց զաշատ ասատուածաբանութե Թան ի Պեռլին, գրեաց եկեղեցական պատմութիւն: Ամման, Տրեսեքէ, Թուլուք, և այլն, անուանիք ի սրբազան պերձախոսութեան: Համեմբ մեծահռչակ

բանասէր արևելեան, որ գրեաց զընդարձակ պատմութիւն Օսմանեան պետութեան։ Հռոմպոյդ մեծ երկրաբան և բնապատում, Ռիդգեր մեծ աշխարհագիր բանասէր։ Ի վերջին ամբս՝ լեզուաց քննութիւն և մանաւանդ արևելեայցն՝ բարգաւաճեաց յոյժ ի Գերմանիա. անուանի գան ի լեզուագէտ բանասերս՝ Աուէլունկ, Պոփ, Բեդգերման, և այլն. հաստատեցան Ճեմարանք և օրագիրք արևելեայ գիտութեանց, յաճախեցին և աշխարհալնին Ճանապարհորդք, և մտեանք բազմահմուտք հրատարակեցան. Պեռլին, Միւնիք, Վայմար, Նյոյթինկ, Հալլէ, Հանդերձ այլոք, առաւելեան քան զայլ քաղաքս ի մասին յառաջաման ուսմանց։



Շիլլէր

Ի Բ Ե Ր Ի Ա

ԿԱՄ

ԹԵՐԱԿՂԶԻ ՍՊԱՆԻԱԿԱՆ

Տարածութիւն 29,251 *փարսախ* □ . *Բնակիչք* 18,500,000 :


938 · Կ՚ընդգրկէ Թերակղզին ի սպառուած եւ բոպով ի ծագ արեմտից և հարաւոյ, տարածեալ ընդ մէջ 36°–44° լայնութեան հիւսիսոյ և ընդ 1° ա. րեւելեան և 12° արեմտեան երկայնութեան Խերիս կո չէր առ հինան, և և Սպանիա . գծաւորիւն ժողո վրդեանն յերկուս բաժանեալ գաշխարհն, յորոց ոմն Լուսիտանիա և ոմն Սպանիա կոչեցաւ, Թագաւո րութիւնք նախանձընդդէմք · այլ զի երկրին նոյն հան դամանք են՝ ի մի բոլանդակեմք զնկարագիրն :

Սահմանք Խերիոյ, ի հիւսիսոյ՝ Պիւրենեան լե ռինքն են, որով ի Գաղղիոյ անջրպետի, և Առլան դականն՝ որ ի սահմանս աշխարհին այնօրիկ կոչի Ծոց Պիսգայայ , յայլոց կողմանց շրջապատեն զնա նոյն ովկիանոս և միջերկրական ծով: Զեի ընդ եր կայն · 580 մղոն, և ընդ լայն · 502 մղոն :

939 · Լերինք · — Պիւրենեան լերինք յարևելից ձգին ընդ արևմուտս 90 փարսախ յերկայնութիւն և 20–25 փարսախ ի լայնութիւն, Թէպէտ յոլովք յայն ցանէ ձիւնապատք են՝ այլ Հանապարհք ապահեաք գոն ի Յուս ի հաղորդութիւն ընդ Գաղղիոյ · այս պիսի են, Ս · Յովհաննէս առ Լուչայ, և Ս · Յով հաննէս միւս՝ ի Ռոնսըվոյ · բարձրագոյր գագա թուէք ի Պիւրենեանս , կէթու կամ Մարաուեդա (Ասիծիկ լեառն), Կօրուեալ լեառն (Mont-Perdu) և Սար Հարաւոյ (Pic-du-Midi) ամենեքեան 9.000–10,700 ոտնաչափ բարձունք : Ի հիւսիսակողմն Թերակղզւոյն տարածանին լերինք Աստուրիոյ և Կա լիցիոյ , ուք ի սահմանս Լուսիտանիոյ կոչին Սերրա (պար) կերէսայ , ի միջնաշխարհին Սոմոյ Սիերրա (ւ) կամ Սիերրա-Էագրելեայ , և Սիերրա-Կադայ և Սիեր րա-Ջինդրոյ · ի հարաւակողմն՝ Սիերրա-Մորէնա կամ Սիերրա-Մօրէնք , Սիերրա-Կնատա կամ Սիերրա-Ռոնտա , և Սիերրա-տէ-լաս-Ալբուհարրաս · այս ամենայն լերինք կալեալ են ղերեսս աշխարհին, ի նեղքինս գետառոյն միայն Թողետ դաշտս տակաւս. բայց զտապ օդոյն բարեխառնէ հովուերիւն լերանցն :

940 · Գետք · — Խոշոր կամ Էալը (Տերրոս) գըլ խաւոր գետ է , յԱստուրիոյ բղխեալ Թափի ի Մի ջերկրականն · ջուր սորա ընդունի ջրանցքն Ալարկո նոյ գործեալ ի Կարլոսէ Ե , որ ի Դուռեէյայ մին չև ի Սարակոսա ձգի ընդ 30 փարսախ , բաժանեալ ի վտակս և յառուցս յարբուցումն անդոց : Այլ ամենայն գետք Թերակղզւոյս ընթանան յարևմտակող մըն · Մինհոյ կամ Մինեօ , Տուերոյ կամ Տոլոյ (Տուրիոն), Մոնտեհոյ, Դասիոյ կամ Դէյոյ և կամ Դա կոյ , որ է Տակոս գետ՝ յորում ոսկւոյ փշուրք լինին , Սաասոյ կամ Սաասոյ , Կուատիանա որ բղխէ ի Ջըր չերքէից ուստեք և հոսեալ ասպարէզս ինչ հետասա ղաղ ծածկի և ապա վերստին երևի ի Լճին որ կոչի Կուատիանայ ակունք, Դինդոյ որոյ գեղեցգոյն է ջուր և բերէ պղինձ մահացու ձևոց, Կուատալքի վիր (Բետիս) և Խենիլ որ հառնի ընդ Նմա : Լիճ երեևի չիք յաշխարհի աստ : Ի ջրանցս յետ Ալարկո նոյ կամ Կայսերական ջրանցից՝ անուանի են ջրանցք Հնոյն Կասթիլոյ որոյ մասն մի կոչի Հիւսիսային Ջը րանցք , որ և ընձկովիա հալորդել ասնի ընդ գոգն Պիսգայայ :

(ւ) Բառս Սիերրա՝ ի բարբառ Սպանիացւոց , հաւասար է առնելին ընդ Սերրա Լուսիտանաց , որ գոսիք լերանց Թարգմանին ըստ մեզ :



ԼՈՒՍԻՏԱՆԻԱ

կամ

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ԲՈՐԴՈԳԱԼԱՅ

Տարածութիւն 5,250 փարսախ □. Բնակիչք 4,000,000:

941. ԱՒՏՏԱԼՈՒՈՒՆ աշխարհն որ յանուն Բորդոգալ քաղաքի՝ Բորդոգալիա կոչեցաւ՝ ի նորումս, աբեմտեան մասն է Թերակղզւոյն, 5,250 փարսախ □ տարածութեամբ. հանդերձ Ասորեան և Մատերեան կղզեաք. ի հիւսիսոյ և յարեւելից՝ Սպանիա, ի հարաւոյ և յարեմտից՝ ովկիանոս Ծով պատին զնովաւ, և կայ ընդ 8°–11° մ. երկ. և 36°–42° լայն:

942. ԵՐԿԻՐ. ԲԵՐԴ. ԿԼԻՄԱՅ. — Ջերմին և երբեմն տապագին յամարայնի՝ բարեխառնեալ ամբք ի Ծովային առգիւից և ի հովոյ լերանց. ի ձմեռայնի անձրեւք յորդագոյն, այլ ձիւն ի գագաթունս ևեթ ուրեք լերանց նսեմ զամիսս ինչ. վասն որոյ չեք առ բաղումս ի բնակեալս կիրառութիւն վառարանի կամ մուշտակի, կամ ապակեւոր պատուհանաց: Գեաք բաղումք են Բորդոգալաց աշխարհն, որք Թագին Լասլանդականն, Մինհոյ, Լիմա, Տովրոյ, Վուկա, Մոնտեկոյ, Դուէյրա, և այլն: Պաղաքեր է երկիրն, Թէպէտ և ոչ բարւոք մշակեալ, և ուրեք յերաշտէ խոպանացեալ. ունի ցորեան և միրգս և գինի ազնիւ, որպէս Բորդոյին. և գրեաթէ հանդերձ ամենայն բերովք զոր բերէ Եւրոպա ունի և արմաւ, նարինջ, Թուզ և ձիթենի, և այլն. անկենի, կաղնի, հալուբ, կանեփ և Թզենի հնդկային, յորոց ցանկ գործեն պարսիկք, իսկ ի կանեփոյ անտի հնդկայ Թելս և ջուան հիւսեն: Բայց բաղում են և անգործ վիճակք մանաւանդ յԱլենտեյոյ դաշտաւին, ուր անտառախիտք

և ծաղկաձև կողմանք երփն երփն գունով հարեալ ի կարմիր, ի գեղին և ի մանուշակ և յաւէտ ի ձմեռային՝ քաղաղ ընծայն տեսանին։

943. Երիվար սակաւ է յաշխարհն սոա, ջորի և էշ շատ, և երէ վայրի, և ասրագելդ գաւառիք ընծիւք որ զաման արածին ի վերինս և գձմեռն յանմշակ վիճակս անգ. ճագար և կաքաւ կարմիր և նապատակ բազում գտանի անդ, և այծեամն վայրի մեծ ի Սերբա-կերէս։ Ձուկին առատ հանին յովկիանոսէ, առաւելապէս սաղոլն և գոն, ի նմանէ կերակուր աղքատաց ժողովրդեան։ Են յաշխարհն անդ և բուք երկաթի և կապարի և այլոց հրաշալիւնից, բայց անգործ Թուրաց. միայն հանեն զնգիվին, և զալ ի ծովէ։

ԲԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

944. ԲՆԱԿԻՉՔ. — Բնակիչք որոց Թիւ համարի երբ 4 միլիոն, Իբերացիք են ազգաւ, խառնեալ ընդ Հռովմացիս, գերմանացիս և Արաբացիս. առ հասարակ կարճահասակք են և ուժիգք, Թխադէմք դիմօք զի ի բացի և յարևուտ չորին յոլովակի. ի Ճարտարութենէն և յարուեստից գիտութենէն յեռնեալք են. կլիմային ջերմագեղութեամբ զառձևն հայհոյեալ Թեալ պարէնս պիտոյիցն՝ ի գաստարկութիւն հատանին, վասն այնորիկ և անանկք և մուրացիկք բազում են ի նոսա. հիւանդանոցին լաւագոյն է ի մասին, զի ուսանին ՀՒԱդղացւոց զՃարտարութիւն և պարապել ի գործ։ Ճանապարհք անյարդարք են, ըզ-վաճառս ջրոյովք և բեռնակրօք տանին ընդ քաղաքս. վաճառականութիւն ի ծովս յաջող է, այլ Անգղացիք և Ամերիկացիք յաւէտ պարապին յայն. բարուք ազգասէրք են որպէս պիտանացիս, և հիւրասէրք. և մոլեալք որպէս զնոսա ի խաղս ցլամարտութեան։

945. ԿՐՕՆՔ. — Ըստ կրօնիդ կաթուղիկէ ուղղափառք են Լատինականացիք, այլ ընդհակառակ է և ազատութիւն կրօնից. 4 արքեպիսկոպոսք և 15 եպիսկոպոսունք և 6 աթոռակալք են նոցա. որոց Թուրկ են յարքունուստ իրրև միլիոն մի ֆրանգ։ Ի քաղաքական հատուցութիւնս անցելոց ամաց խափանեալ էր հաղորդութիւն Բորգոգալաց ընդ Հռովմայ, այլ յամաց հեաէ կրկին հաստատեցաւ։

946. ԿՐԹՈՒԹԻՒՆ. — Լեզու Բորգոգալաց բարբառ մի է սպանիական լեզուէն, այլ անմշակ մասց, զի ուսուցիչատեաց է ժողովրդոյն. Թէպէտ և կարգեալ կայ պաշտօնեայ ուսմանց և ամի ամի 2,200,000 ֆր. ծախին ի Թուրկ վարժապետաց. մի միայն համալսարան է Լուսիտանիոյ ի Գոյիմպրա, 21 լսիկոնք են, 5 կամ 6 ձմեռամուք, 27 կղերիկոսապուք, վարժարանք և գպրոցք իրրև 1,150. վարժապետք 1,220. որք ի պէտս կրթութեան 4 միլիոն ժողովրդեան նուազ են յոյժ։

947. ՎԱՐՁՈՒԹԻՒՆՔ. — Պայմանաւոր միապետական է վարչութիւն Բորգոգալաց՝ հաստատեալ ի Դաշնից մասնաւն՝ յորմէ ետ յամին 1826 ի Տան Բեդրոյ և հաստատեալ ի 1834 և 1838. կրկին ատենապետ են պետութեանն, վերին տանէն տանեալք ի Թագաւորէն ընտրին և ժառանգաւորք են, տասրին տեսանն՝ նուիրեալց է ի ժողովրդենէն ընտրելոց. վեհ Թագաւորին հաստատ զառաջարկութիւնս տանէնցն. նա ինքն անուանէ և զեպիսկոպոսունս, այլ երդմամբ պարտաւորեալ է պահել զկանոնս կրօնս։ Թագաւորն կոչի Թագաւոր Բորգոգալաց և Ալկարուց, յայսկոյս և յայնկոյս Ծովոց Ատլանտեան, տէր Գուինէոյ և այլն. և Ամենահաստատ ըրիմ վեհութիւն։

948. ՀԱՄՔ. ՋՕՐՔ. և այլն. — Հասք պետութեանն են 80 միլիոն ֆր. Ծախք առատ և, իսկ պարտք 500 միլիոն։ Թիւ զօրացն համարի 28,500 ի Բորգոգալ. և 9,000 ի գաղթականս։ Նաւահասմբն, ոնձի ընդ ամին 36 նաւս, և 2,400 նաւասարտիկս։

Կարգք ասպետութեանց կամ պատուանշանք Բորգոգալաց են, կարգ Ս. Բենեդիկտոսի Աւիսյ (1162), կարգ Ս. Յակովբայ (1288), Յովհաննեան կարգ, Քրիստոսեան կարգ, Աշտարակի և Սուսերի կարգ (1459), Ընտրեալ Ցլութեան կարգ Վիլլայ Վիցոզայ (1819)։

949. ԴՐԱՄՔ. ՉԱՓՔ. և այլն. — Միութիւն դրամոց կամ հաշուեդրամ ի Բորգոգալս է ըէյ կամ ըէյս անուն, որոյ միլիոն մի առնէ մի ֆունտս. իրրև 166 ըէյս արժէ ի ֆրանկս. և գինգուն իրրև 6,000 ֆր։ Ցիրեան դրամս վարի արծաթեն ւէյնօզոտ որ է իրր 3 ֆր. և տեսդոն իրր 61 հարիւրեակ. ոսկի ֆոդրոս որ է 12,800 ըէյս, և կէս նորա որ կոչի ԷՒՈ. և քառորդքն։ Ի չափս երկայնութեան վարի փարասան որ է 18 ման աստիձանի միոյ, փարասան ծովային որ է $\frac{1}{20}$ աստիձանի, և մղոնն ծովային որ է երիր ման նորին. ի մարդ չափս Թիզն՝ Բալմ ֆրօ-Էյերս որ է 0,21859 մեդրի։ Ի կշիռս՝ ուրոբէ որ է լիարա և պակաս է քան զկէս քիլոգրամ. ֆանեղ՝ որ է 54 լիտր գաղղ. և ալ-ֆոդ կշիռ հեղանիւթոյ՝ 16 լիտր։

950. ԲԱԺԱՆՈՒՄՆ. — Բորգոգալ բաժանի ի գաւառս ոմն և կղզիք նորա յերկու գաւառ, և միաժամուռ ի 21 վիճակս, որ են այսոքիկ, հանգերձ Թուով բնակչացն յամին 1841։

	ԳԱՒԱՌԻ	ՎԻՃԱԿԻ	ԹՈՒԱԿԱՆ Ի 1841
Ա·	Էսթրէմատուրա	Լէյրիա	132.895
		Լիսպոա	496.990
		Սանթարէմ	152.990
Բ·	Պէյրա Վերին	Վիզէյ	289.038
Գ·	Պէյրա Սորիին	Կոնարա	197.470
		Գասդելլոյ պրանգոյ	128.730
Դ·	Մինհոյ	Վիանա	182.015
		Պրակա	284.705
Ե·	Տուէրոյ	Բորգոյ	361.660
		Վէկրոյ	233.945
		Դուիմորա	244.303
Զ·	Դրաս–լոս–Մոնդէս	Վիլլարէալ	182.382
		Պուկանսա	118.458
Է·	Ալէմթէյոյ	Բորգալլէկրէ	86.071
		Եւորա	85.079
		Պէյա ,	105.440
Ը·	Ալկարվա	Ֆարրոյ	130.329
Թ·	Ասորեան կղզիք	Ասոր Արեւելեան	64.000
		Ասոր Միջին	88.600
		Ասոր Արեւմտեան	61.700
Ժ·	Մասէյրա և Բորգոյ Սանդոյ		116.200
			3.743.000

951· Ա· ԻՍՊԵՐԻՄԱՏՈՒՐԱ·— կայ ընդ ամէն գաւառացն Դրաս–լոս–Մոնդէս և Ալէմթէյոյ, ի սմա է

Լիզպոնն, որ և ԼԻՍՊՈՆԱ և ԼԻՍՊՈՒԱ (Lisboa)· — Մայրաքաղաք, յայնմ Դէյոյ կամ Դակոյ գետոյ, նաւարկ ի վերոյ ըստոյ սղպհս ամիսիթէաստրն գեղեցիկ, գեան տարածեալ կայ ի նմին երկու փալասախ լայնութեամբ, նաւուցն տորմիղ ամբոխեալ, ամրարատուիք և պատրաստ յահեկնած գետոյն· գրախաք նաւինջևնաց և ձիճենեաց, և ամայի և անհեգնգ տաքք Սերրա–Շինդրա լերանց նկարելոյց յատպարէզ ծովածաւալ Դակոյ չքնաղ և զուարճալի տարգարեն զտեսիլ քաղաքին, որ երեսաց ի ընդարձակի, զի պատրիպք կամ պատուարք ոչ գոն նորա, և գեղք և ամրատարձք ընդ նմա խառնին· բայց վասն անհարթութեան դժուարաշարժելի է գեսինն, մանաւանդ յանձրևու և ի փոթորկի· երեք գլխաւոր ըստոյք են քաղաքին· մին՝ յարևմտակողմն, հռետ ի կամարըն Ավգանդարայ, ուր բնակին եկք վասն քաղցր օգոյն և գրիչ պատեհութեան ի բարձրաւանդակի, միւսն՝ ի միջահին, բազմամարդագոյն այլ ոչ բարեչէն· երրորդն՝ յարեւելս կոյս, յորում կայ քաղաքն հին նրբաշաւիղ և նեհամփոփոց, անդ է միջնաբերդն՝ Մաւրիտանացւոց անուանեալ դղեակ· ընդ միջ սորա և երկրորդին իջանէ ձորակ որոյ տուիք հիմնայատակ եղեն ի միջի սասանութեանն եղելոյ յամին 1755· որ հկին կառուցեալ յարդարեցաւ, չքնաղ քան զամենայն մասունս քաղաքին· անդ է մեծ հրապարակն վաճառուց (Բրասա ուց գումբոյց) յորում կայ անդրի ցովանփայ և Ռոսիոյ, յոր հայի մեծաչէն պալատն արքայանուէնեան· Ընդ քան զբնակեալս կան արուարձանքն, յորս առաջին է յարևելից կուսէ Ալկանգարա, ապա Ճիւնքէյրա (Junqueira) և ապա Պելէմ, որ ի հնումն աւան էր Թագաւորանիստ, գերեզմանք Թագաւորաց կան ի մենաստանին անդ Պելէմոյ ըստ հիմնեաց Էմմանուէլ արքայն ի 1498, ի յիշատակ ծո վաշուէին Վասգոյ–տէ–Կամոյ ընդ գլուխն Բարեյոյսոյ· խակ այժմ Թագաւորն բնակէ ի Քվէլուզ (Queluz) գեղ մեծ յանշէն հովիտ հեռի ի Պելէմոյ երիւք վարսախք, և ունի ամրոց և պալատեզս· Ընդ նաւահանգստին որ ի բերան Դակոյի ի կայս ամրոց կառուցեալ կայ ամրոցն Պուգէրոյ և յայնմ գեամոյն ամուրքն Ս· Ճիւլիաս (S. Juliao) և Սանդոյ Անդոնիոյ· ի չինուածս քաղաքին սակաւ են նշանաւորք· մասնաւորապէս, յորում 300.000 մատնանք կան հանդերձ ձեռագրօքն և ժամանակագրութիւնք, ժողովեալ վաճառականաց գէմ յանդիման գրատանն, մաքսատուն յարի գետոյն· եկեղեցիք բազումք են և հարուստ զարդուք, այլ ճարտարաշէն և ոչ մի· Օգ բարեխառն և առողջարար է Լիզպոնայ, ցուրտ ի յոմնուարի միայն լինի, սասանութիւն յաճախ լինի անդ այլ ոչ սասուիկ· բայց ի 1755 մեռան անձինք 24.000 ընդ միասակաց· առ ի ջգոյէ ջրհորոյ ի քաղաքին՝ զնուրն ածէն ընդ ապուգայս, որոց երկք փալասախ երկայնութիւն է 35 կամարօք, որոց բարձրագոհնին 230 ոտնաչափ բացուած, բառնան զայն յԱլկանգարայ մինչև ի Լիզպոնա, ուր հասի յայրիբս, յորմէ հանեալ ջրակրաց վաճառէն ի տունս որպէս



Լիզպոնա


ի Կոստանդնուպոլիս. բայց զբաւն ցրտացուցանէն կամ ի տարին կամ ի թակոյկս կաւելցնս զոր դո-ւրս կոչեն: Զեն ի նշանաւորագ տակի ձեմարանին մակացութեանց, պարտէզն անկարանութեան, և ուսումնարանք նաւավարութեան, ծովային ճարտարապետութեան, և այլն: Տուն գիւանաց միայն անզուգական է յամենայն Եւրոպիա: Ժողովարանն անփոյթ է գիտութեանց և արուեստից այլ և զբօսանաց և խաղուց, մի կամ երկու թատերք են ի Լիզպոնա՝ և մի թատերգարան, զուարճութիւն միակ է նոցա տեսարան ցլուց ոգորելոյ, և այն ոչ հանդիսաւոր որպէս ի Սպանիա. սիրեն առաւել զկնճռեցական հանդէսս և թափօրս. ընդհակառակ է և ազատութիւն կրծից, և այն թերևս ի յաճախ ընտանութենէ Անգղիացւոց, որք ունին ի քաղաքի աստ տունս վաճառականութեան յատուկս, նոյնպէս և գիշերանոցիք. բազմութիւն գողոց և ստէպ արիւնահեղութիւնք Լիսաբոնայ խիթալի առնեն զինակութիւն: Ազատացն զբօսարուքք են գերգաստանք իւրեանց որ ի գեօղս, սակայն և անդ սիրեն զմիաւորս կենալս, պարտէզք նոցա և վիճակք բարձրաբերձ օրմովք պատեալ են. այլ ձեմելիք և զբօսանք նաց գրեթէ նոցա բարեկարգք և զարգարուն: Գիշերկեն են տեսարանք Ձիւգբա լերին, և ի գեղն որ գնորին կրկ անուն, գայ յամարայնի բազմութիւն եւ կաց և Ծնթեց Լիզպոնայ. ունի անդ և ապարանս Թագաւորն, և ի վերայ լերինն գտանին աւերակք, անդ և և մենաստան Մնկոյ անուանեալ, զի օրմունք նորա պատեալ են մնկով. որ խափանէ զնամաւորութիւն, հասեալ ի ժայռ: Բնակիչք Լիզպոնայ և արուարձանացն 300,000:

Մ-ֆ:- (Mafra). — Ւշան է յարեմտեան Ձինգբայ, յորում Ցովհաննէս Ե կառոյց պալատ մեծ հատասարել ինն ձգնելով Էդուարդայի որ ի Պատրիա. և կնճռեցի ի հոյակապ ի նմա և վանք ընդարձակք, և յ1866 մասունս բաժանին ապարանքն, որոյ են 5,200 պատուհանք. իսկ բնակեալց գեղջն հինգ հարիւր են և անկունք սիրաեալ իբրև միացուածք աւերակաց: — Ի հիւսիսի Մաֆրայ կան բաղանիքն Գալատա տա Ռայնեա (Rainha) ի գաշտի բարձր մշակելոյ այլ սահաբեր. ի մայիսի և ի սեպտեմբերի յաճախեն ի բաղանին: — Հեռի ի Լիզպոնայ 25 վարսախաչ կայ մենաստանն Ալգոստաս ի միջին ըլտոց զոր հիմնեաց ի 1184 Ալֆոնսոս Հինգերորդ առաջին Թագաւոր Բորտոգալաց. ի 1811 ի ժամանակի պատերազմացն այրեցաւ մեծաւ մասամբ և կորեաւ վաթսուն գլուխ գրոց մենաստան գեղեցկակերտ գոթացի ճարտարապետութեամբ, զոր կառոյց Ցովհաննէս Ա, վասն յաղթութեանն զոր տարաւ ի վերայ Սպանիացւոց ի Նմին տեղւոջէն և գերծոյց զաղաւրն ի հարատահարութենէ նոցա:

Սետուպալ կամ Ս-ուպես (Setubal, St. Ubes). — Գ. Ֆ-յեա Լիզպոնայ, ունի նաւահանգիստ ի վերայ Սաւալ գետոյ, տունք և փողոցք նորա անձուկք և աղտեղիք, բայց վաճառականութիւն գործոյ և աղի մեծ է անդ. առ նաւահանգստին գործեալ է աւազանս և ընդունարանս ջրոյ, զորս ընդ ծովը ի բարձրանալն, և ջուրն քամեալ յարևուտ մեայ ապի ևեթ զոր հանեն: Բն. 15,000:

951 · Բ· Գ· Վ Ե Բ Ի Ն Ե Ւ Ս Տ Ո Ր Ի Ն Պ Ե Ց Ր Ա·

Գ Ո Յ Ի Մ Պ Ր Ա (Coimbra). — Ւշաքին քաղաք է գտեաւոս, և իբրև ամիսիմեսարան կառուցեալ ի բլուրս յարեն Մանուելոյ գետոյ. ի սմա է համալսարանն Լուսիտանիոյ և ուսանող գիտութիւն առաւելուս աստ քան ի Սպանիա. ունի մատենադարան մի, պարտէզ բուսաբանութեան, և գաշնիճ գործեալոց բնագիտութեան, ուսանողք և ուսուիչք որ ի նմա զգեն նուն պատուհասն երկայն սևագոյն, համակեալ գլխոցաց չքնին ևս և յամարայնի, իսկ ուսուցչաց և խոյր



Գոյիմպրա

Նոյնպէս ի գրոյն սեաւ· Տան Տիեզ արքայ հիմնեաց ի 1291 զայս հանդերսարան, յորում աշակերտին 800–2000 համբակք· Բարբոք է և Ճարտարութիւն քաղաքիս· ի շինուածան գեղեցիկ է եկեղեցի Ս· Դեմբայ, յորում կայ տապան Ալփոնսոսի հիներկուքսեայ առաջնոյ Թագաւորի Լուսիտանիոյ· Բն· 18.000։

953· Ի ճահճ Մոնտեկոյ յանգիման քաղաքիս կայ Պարտէզն արտասուաց (Quinta das lagrimas) ասացեալ, ուր բղխէ ջուր կենդանի Ագրիւր արտասուաց անուն· ասա ասի բնակեալ Ինեզայ տէ Գաստրոյ սիրուհւոյ Տան Բեատրոսի որգւոյ Ալփոնսոսի Դ· որ եան սպանանել զնա· Ալ յետ մահուն Ալփոնսոյ Թագաւորեալ Տան Բեատրոս եւս հանել ի տապանէն զդիակն Ինեզայ և Թագիս պահակալ հրամայեր առաջնոյն իբրև զիւրեանցն Թագուհի զնա ոչնչնել։

ՎԻՍԷՈՒ (Viseu)· — Փոքրիկ այլ գեղաւէտ քաղաք վերին Պէյրայ, ունի ամենավաճառ անուանի ընդ ամենայն Լուսիտանիա· Բն· 9.000։ — Լամեկոյ (8.000), ասա հաստատեցան ի 1143 օրէնք Թագաւորութեանն և ընտրութիւն Ալփոնսոսի· — Օվար, ի ծովակողմն· Բն· 11.000։

954· Դ· ՄԻՆՀՈՑ· — Գրաչ մշակեալ է և բարգաւաճ, և բնակիչքն ժրագոյնք, որք գնան և յայլ գաւառս ի վաճառս։

ՊՐԱԳԱ (Braga)· — Ծ· Ս· հին, այլ աննշան· ասա նոյն արքեպիսկոպոսն· Բն· 16.000։

955· Ե· ՏՈՎՐՈՑ· — Յորում

ԲՈՐԴՈՑ կամ Օփորտոս (Porto, Oporto, Բորդեա գալէ կոչեցեալ առ Հռոմէացիս, յորմէ և աշխարհն Պորտոկալ կամ Բորդոգալ)· — Կաառւցեալ յանուն· ասա ասի բնակեալ Ինեզայ տէ Գաստրոյ սիրուհւոյ Տան Բեատրոսի որգւոյ Ալփոնսոսի Դ· որ եան սպանանել զնա· Ալ յետ մահուն Ալփոնսոյ Թագաւորեալ Տան Բեատրոս եւս հանել ի տապանէն զդիակն Ինեզայ և Թագիս պահակալ հրամայեր առաջնոյն իբրև զիւրեանցն Թագուհի զնա ոչնչնել։



Բորդոյ

ՊՐԱԳԱՆՍԱ կամ Պրագանսա (Bragansa)· — Եպիսկոպոսանիստ քաղաք Նշանաւոր, յորմէ սերեալ է արքունի տունն· Բն· 6.000։ — Միրանտա տէ Տուրոյ ամուր քաղաք· — Բերայ տա Ռեինոյ, մեծ աւան, յոյսամբ լինին ծաղաղաւոք գինւոյ։

957· Ե· ԱԼԵՄԴԵՑՈՑ կամ ԱԼՔՆԴԵՑՈՑ· — ԵՒյս գաւառ ընդարձակ և սակաւամարդ քան զայլս, զի ծառախիտ են վիճակք նորա որ մնուցանեն արջառս և այծս· գեղք անմշակք և գրեթէ անբնակք են։

ԵՒՈՐԱ (Evora)· Գ· Ս· հին, յորում նախ արքեպիսկոպոսն· Սերաորիոսի Հռոմէացւոցն ասի վիճեալ զքրանցս նորա երկայն եօթն փարսախ զոր նորա ցՈվիանոս Գ· կան և այլ հնութիւնք Հռոմէացոց շինուածոց, ընդ որս և տաճար մի Աստուծոյ որոյ գեղեցիկ սիւնք անվնաս մնացեալ են, բայց տաճարն սպանգանոց է այժմ· Բն· 15.000։

ԷՒԱՍ (Elvas)· — Ամուր քան զամենայն քաղաքս

Լուսիտանիոյ չորիք փարատիք հեռի՛ի պատայիսոզ. ամրոցէ Սպանիոյ՝ բն. 16,000։ — Ուրիք քաղաքագլուխ է, ուր Աքհոնսոս յաղթեաց Մաւրիտանացոց՝ի 1139 և հաստատեաց զթագաւորութիւն իւր։

958. Ը. ԱԼԿԱՐՎԱ. — Լճառն Մոնիք բաժանէ զայն յԱլեմդեյոյ, և յայլոց կողմանց Աալանդեան ովկիանոս պատէ. անթերք ամայի է երկիրն, պարէն և վաճառ բնակչաց է ձուկն ---ղին և թուղ, ի նաւարկութեան ձարտարք են նոքա։ Նշանաւոր է Ս. Վինկինտիոս հրուանդան, զի առ նովաւ յաղթեցին Անգղիացիք Սպանիացոց՝ի 1797։ — Լակոս, Ֆարոյ և Դաւիդ քաղաքք ունին ԻԲարքանչիւր 9.000 բնակիչս. յիշատակաց արժանի ինչ չիք՝ի նոսին, բայց ձկնորսութիւնն։

959. Թ. ԱՍՈՐԵԱՆ ԿՂԶԻՔ. — Սոքա ինն են Թուով ընդ միշ Եւրոպիոյ և Ափրիկոյ, որոյ և մասն համարեցան ոմանք. միաշամուռ 145 փարսախ քառակուսի. ոչ անծանօթ ինացեալ առ կարքերնայիս՝ յետ բազում դարուց կոնսալոս Վելոյ յամին 1432 գարձեալ ծանոթացոյց, և կոչեաց Ասոր (Asore) վասն բազմութեան բազիկ՝ի նոսա, զի ---ր կոչեն Լուսիտանացիք զՀաւն զայն. Թուի՛ի հրաբղխիկ վերապատահմանէ արտակիտեալ կրզգեացս։ Կլիմայ չերիկ և բարեխառն է, ի ձմերայնի ևեթ նստի ձիւն՝ի կատարս լերանցն. բերք երկիրն ցորեան, գինի ածիւղ, միրգ առատ. և ծուխ ոսոխէ և կայ և ձուխն շատ։ — Բնակիչքն իբր 220.000 սերունդք են Բորդոգալաց և սորուկք ազատագլուխք, բարեմարդիկ բարուք։

ԴԵՐՉԵՐՈՒ (Terceira). — Կղզի 30 փարսախ տարածութեամբ, և իբր 35.000 բնակչօք, ունի զՆկոյս գլխաւոր քաղաք և նաւահանգիստ, աթոռ կուսակալի և եպիսկոպոսի՝ բն. 16,000։

ՍԱՆ-ՄԻԳԷԼ (San-Miguel). — Կղզի, 45 փարս. քառ. իբր 80.000 բնակչօք. ունի ԼՀրմաղբերս և Նարինջ ածիւս. ի սմա է գլխաւոր քաղաք արևելեան Ասորեաց՝ Բոնդա Տելկատա, որոյ է նաւահանգիստ, և 15.000 բնակիչք։

ՖԱՅԱԼ (Fayal). — Կղզի լեռնալայր, 8 փարս. յերկայնութիւն և 3՝ի լայն. ունի զՕրդա կամ Հորդա գլխաւոր քաղաք միջին Ասորեաց. որոյ է բերդ ամուր, նաւահանգիստ շահաստան, վաճառիք և եկեղեցիք հոյակապք՝ բն. 6.000։

ՓԻՓՈ (Pico). — Կղզի, յորում կայ կոնաձև լեռն հրաբուխ չիշեալ, 7–8,000 ոտս՝ի բարձրութիւն։


Իսկ այլ կղզիք են Գոռէրվս և Ֆլորէս, Կրացիոզա, Ս. Մարիամ և Ս. Գէորգ։


960. Ա. ՄԱՏԻՑԱ կամ ՄԱՏԵՐԵԱՆ ԿՂԶԻՔ. — Կրկին են սոքա, միմ՝ բուն Մատէյրա. 40 փարսախ տարածութեամբ և իբր 120.000 բնակիչք. զոս Լուսիտանացիք բնակեցուցին, քանզի անտառամոյ անապատ էր, թնամիք նոցին մշակեալ բերէ չարաչար և ազիւս գինի և ազգս ազգս մրգից։ Գլխաւոր քաղաքք է Նորա Ֆունշալ, ամրացեալ բերդօրէիւք. Նաև արևելեան Հնգկայ առ սովաս վեպ առնուն. ունի եկեղեցիս և մենաստան՝ բն. 22,000։ Երկրորդ կղզին է՝ Բորդոյ-Սանդոյ, փոքր, այլ քաղ. գիւղերբ. և բնակիչք՝ի նմա իբր 2,000։

Կան զոգիք և այլ կղզիք մանուք, այլ անբնակք. վասն որոյ և Ամայի կղզիք կոչին։

ԿԱԼՈՒԱԾՔ ԲՈՐԴՈԳԱԼԱՑ

961. ՅԱՓրիկէ. Դալարի գլուխ և Ս. Թովմաս. և Եղերք կուինեոյ. գաւառքն Գոնկոյ, Անկոլա, Պենկիլա, յարևմտեայսմին Ափրիկոյ՝ի Ծովեզերին, և Մոսանդիք յատկաւն արևելից։ ՅԱնթա, կամ գաւառ յարևելեան Հնգկիս, Մագայ կղզի յատկաւն Ձվենց, և մասն մի Դիմորայ և Սոլորայ։ Ունի և յովկիանիա գաւառս ինչ։ Որոց միաշամուռ 400.000 մղոն քառ. է տարածութեան, իսկ բնակիչք իբրև 2 միլիոն։





ՍՊԱՆԻԱ

ԿԱՄ

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ՍՊԱՆԻՈՅ

Տարահոսութիւն 24,000 *փարս.* □. *Բնակիչք* 14,500,000:

963. Սպանիա աշխարհին սահմանք են ի հիւսիսոյ կողմանէ՝ Ծոցն Կասքոնիոյ և Պիւրենեան լերինք, յարևելից՝ միջերկրական ծով, ի հարաւոյ՝ նեղուցն Ճիպրալտար որով յԱֆրիկոյ բաժանի Մերկուրական և Ովվիանոս և Բորգոգալ, և կայ ընդ միջ 36°–44° հիւսիսային լայնութեան, և 1°–12 արևմտեան երկայնութեան. տարածութիւն 24,000 փարսաք □ որով իններորդ է ի կարգի ընդարձակութեան ի տերութիւնս Եւրոպայ: Երկայնութիւն նորա ի Լէանցա Կադալոնիոյ մինչև ցԱյամոնդէ ի բերան Կաւախանայ՝ 580 մղոն. լայնութիւնն ի Բրիարէ գլխոյ Կալիցիոյ ցԿադա գլուխ Ալմերիոյ՝ 502 մղոն:

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

963. ԿԼԻՄԱՑ. ԲԵՐՔ. — Սպանիոյ բարեխառն է կլիմայ և քաղցր հաւասար խառնոյ և ցուրտ և տաքութեան, բայց ոչ միօրինակ ամենուրեք. զի ի հիւսիսի ցրտագոյն է, ի միջնաշարհս տապագին և ցամաք, հնձաւ և ջերմ ի հարաւ ի ծովեզերսն:

Երկիրն բերրի է այլ անհնամ չանփութութենէ երկրագործութեան: Երկվարք Սպանիոյ չամենայն գարս ընտիր ծանուցան, մի Ընտալուսիոյ գեղեցկագոյն է, աշխոյժ և համբոյր. բայց ի լերինս չորեք չքնին. հոյակապ և ոչխարքն նրբագեղին, որք Թէքսէս կոչին, որք Թէպկա և շահ մեծ բերեն տեարց իւրեանց ապագայ ազնուականաց և եկեղեցականաց, այլ բովանդակ աշ-

խարհին միասուռ պատճառք են . քանզի զամեն պա-
ծին ի լերինս, և զձմեռն ի դաշտս որ վասն նոցա պա-
տրաստեալ է , և այնու խափանին զբարգաւաճման
երկրագործութեան , զլաւագոյն մասն գաւառացն
յորոսս գրաւելով : Ընտանի են և բարկ գինեք Պա-
նիոյ , որպէս խոսքբեա ասէ լա Գրոնդերա (Xérès de la
Frontera) , Մալագա , Ալիգանդէ , և այլն , յորոց և
վաճառականութեան նպաստս մեծ է . ի հիւսիսակող-
մանս աշխարհին լինի ցորեան , սոխ , կանեփ , վուշ
ի Տարտ՝ նարինջ , Թուզ , հինենի , արմաս , և և
շաքարի եղեգն և բամբակենի : Բովք Սպանիոյ հրա-
կաեալ ի ժամանակս կարգեցութեացդ և Հռոմայե-
ցւոց և անգործ մնացեալ յետ գիւտին Ամերիկոյ ,
այժմ գարձեալ բացան և ասն անդիկ Ալմաստեն , որ-
ծած և սղոնձ ի նոյն ի Մորենեան լերինս , կապա՝
ՍԱլբուկարրաս , մինչև 800,000 կինգինար ի տարւոջ.
երևան՝ ի գաւառս պասքաց , անագ՝ ի կալիցիա ,
ածուխ՝ ՍԱստուրիա , աղ հանքային՝ ի գագաղներս ,
Թուղ զարն ծովու . մարմարիոն և ալաբաստր . բայց
քանզի վայս սակաւ է յաշխարհին՝ անմարթ է յեր-
կար վաստակել ի մեռաղս :

ԲԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՏՈՒԹԻՒՆ

964 . ԲՆԱԿԻՉՔ . — Սպանիացիք , որոց Թիւ ժա-
մանէ ց՝14,500,000 , սերունդք են Իբերացւոց , յորս
խառնեցան կելտ , Փիւնիկեցիք , Կարքեդոնացիք ,
Հռոմայեցիք , Գերմանացիք և Արաբացիք . ազգա-
սեր բարս ունին որպէս Թէ ոչ ազ՝ի ժողովրդոց նէ-
րոպոյ հաւասար նոցա . հանճարեղք և ծանրաբա-
րոյք են . սակայն խոիր մեծ է ընդ բնակիչս գաւա-
ռաց և գաւառաց աշխարհին , քանզի հին կաղնիացիք
ամբարտաւանք ձանաչին բնաւորութեամբ , գործա-
սեացք , աւանդասէրք հնութեան , նոր կազդուրիչք՝
ճարտարք . բնակիչք Վալենցայ ժրաքրտիք և մեր-
ձաղնոք և խելացնորք , Մուրկիոյ՝ յամառք՝ ի սովո-
րութիւնս իւրեանց , Անդալուսիոյ՝ թեթևամիտք , ա-
րագահայի և աղնուաբարոյ ախորժակք . Գադալաներոյ՝
գործասէրք , խոչըտակեացք , խստակրօնք . Աթականցիք՝
ջարտՃՃիկք , Պասքք անձնասպարէզ և գործօնք , Նա-
ւարրացիք՝ գործնկ և ամարդիք . Աստուրիացիք՝ հա-
ւասարիսք , ոչք և գնան վասնակէ՝ ի վճռակս այլոց
որպէս Վնասղասցես . բնակիչն Կալիցիոյ՝ հարսակ և
կոպտաբանն է , և Նաւարեհասարբայն՝ վերկ՝ի ձար-
ատրութենէ և ոչրսմելի կենաց :

Ամենս սոսկական ժողովրդեանն ոչ աձեաց՝ի գա-
լուց հետէ վասն գաղթականացն որ ՍԱմերիկա գնա-
ցին , և յառաջ քան զնոսա վաղարդի հրեից և Մա-
րիսկացւոց . աղնուականք միջակութիք Հիսպանս կո-
չին , որովհետ են ամենայն այր պատ և Նաւարրա-
ցի , յորոց մին հարաստատ սերունդ Կանաթրիացւոց
Նահին բնակչաց Թերակղզւոյն Ճանապ և միան՝ի
Գեթաց սերեալ և ազատ կոչեալ՝ի տիրապետու-
թենան Արաբացւոց . ազնուականքն վերին բաժանին
յերկուս դասս՝ի Դիպղուատոս՝ այս է որք ունին պա-
տառնուանս . և ՍԱգագրեալք՝ որոց՝ի հանգէս ինչ
իշխանութիւն է ծածկեալ պլնով կալ առաջի Թագա-
ւորին . վերին ազնուականքն միայն կոչին Տուն որ է
Տան՝ ըստ Լատինաց , և ըստ մեր՝ Տէր . կայ և այլ խը-
տիր՝ի Սպանիացիս , հին և նոր քրիստոնէից , քանզի
հինքն պարծին որպէս Թէ հրեի կամ մահմետականի
չիցէ խառնեալ՝ի ցեղն Իւրեանց , այսպիսիք են Ա-
ստուրիացիք :

965 . ԼԵԶՈՒ . — Լեզու սպանիացւոց՝ որպէս և
Լուսիտանացւոցն ծագեալ՝ի լատինականէն՝ առեալ
է զոմ արաբացւոյն և գերմանականին : Կան և այլ
բարբառք որ ուրեք ուրեք լսին անդ , որպէս պաս՝
բնակացն յոտս Պիւրենեան լերանց , և լեզու Կա-
գալոնիոյ և Արահանայ և Վալենցայ գաւառաց՝ որ
յաւել զՀարաւային Գաղղիոյ բարբառոյն նմանու-
թիւն ունին : ՅԱբբուկարրաս բնակէն տասաւեին իբրև
40,000 Մաուրիտանացիք , և ի լերինս Մորենայ գաղ-
թականք գերմանացիք , սեպհական լեզուաս վարեալք
մինչև ցարդ :

966 . ԿՐՕՆԻՔ . — Սպանիացիք ուղղափառ կաթո-
ղիկեայք են կրօնիւք և պաշտօնատեղք յոյժ . 10 ար-
քեպիսկոպոսք են նոցա , յորոց երկուս՝ի գաղթականն
և 59 եպիսկոպոսունք և իբրև 25,000 քահանայք .
մենաստանք սրանց կրօնաւորաց յետ խռովութեանցն
յարբունիս գրաւեցան և իբրև 15,000 միանձունք ար-
ձակեցան՝ի նոցունէ . միայն մանկավարժ ընկերութիւն
մի միայ (Escolapios) և հիւանդապատիճ եղբարք Ս .
Յովհաննու . բայց կոստնորոյ են տասաւեին 660 վա-
նորայք և իբր 12,000 կուսանք : Թուրկ եկեղեցակա-
նաց և ծախք՝ի սակս կրօնից լինին ամի ամի իբրև
35 միլիոն ֆրանգաց :

967 . ԿՐԹՈՒԹԻՒՆ . — Ի հրատնէշս ուսմանց
յեռանեալ են Սպանիացիք՝ վասն կանխակալ կարծեաց
որ կալեալ է զմիտս նոցա հրաժարելով՝ի նոր գիւ-
տից . համահաւասիկ ամենեին ոտիւ ի յուսմանց Թէ-
պէտ և են՝ի Սպանիս 10 համալսարանք , 10 մեծ ձեմարանք , 87 արքունի վարժարանք , 33 մասնա-
ւոնք և իբրև 16,000 գպրոցք և 52 մանկանոցք կամ
ապաւէնք ազգաց . որոց վասն չպրեհնուսաս ծախք
լինին 4 միլիոն ֆրանգաց :

968 . ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ . — Ի ճարտարութեան
գաւառն կագալոնիա , Պիսգայա , Վալենցա , Ան-
դալուսիա և Նաւարհասիա միայն յատակագիծք են , ու-
նին գործարանս կատարեալ ասուեղինաց և կերպա-
սաց և բամբակղինաց : Վաճառականութիւն ծո-
վային՝ի ձեռս օտարականաց վճարի , և ցամաքային
ոչ զարգանայ առ նուազութեան բարեաց ճանապար-
հաց , Թէպէտ և այժմ քան եգեալ է յարգարել հա-
սարակաց ճանապարհս բազում ուրեք , յորս գլխաւորք
են այն որ՝ի Պայոնայ՝ի Մարրիս և որ՝ի Մարրիտ
՝ի Գաճիսն և՝ի Պասապիսս : Ցամին 1849 մուծան
՝ի Սպանիս և՝ի կալուածս նորա վաճառք իբրև 150
միլիոն ֆրանգաց և հանան 120 միլիոն ֆրանգք :

969 . ՎԱՃԱՌՈՒԹԻՒՆ . — Ցառաջնումն Թագա-
ւորք Սպանիոյ չկարեին ինչ վճարել առանց ազգային

Ժողովը որ Գորդէան կոչէր, այն է գումար աղատաց և նուիրակաց հեղինէական և քաղաքացի գասուց, այլ առ սակաւ սակաւ համաձայնութիւն առին Թագաւորը և՛ 1713 վերջին եղև Ժողով Գորդեայց. բայց յարդ պահէն գասագէ ինչ ընտանի սովորութիւնս իւրեանց. առ մեք յընդգէմ կալ ֆերմինանոսի էր միասնագամ զօրանալոյ Գորդէսից՝ բազում վէրք և յոյզք յարեան յետ նորա մինչև՛ 1834, յորում հաստատեցան երկու առեանք, այս ինքն են Բրոսպրէս, որ է ասագանի Թագաւորութեանն, և Բրոդուրատորէս՝ նուիրակք սահմանադրութեանս ամբոխագնաց բռնագատեցին հատանել վարչութեանն հաստատուոյ՛ի 1812, որոյ մի ևեթ էր առեան. յերկուստան բաժինս արտևեալ էր աշխարհն և իւրաքանչիւրոցն մի մի վարիչք էին. Թագաւորին պատուանուն առաջ վերհափառութիւն ուղղութիւն, Ժառանգին Նորա՝ Աստուրիոյ իշխան, և ազգականաց նոցին՝ Ինֆանդ։ Յետ նորոց ևս խռովութեանց և բազմամեայ մարտից՝ սուղ ինչ այլայլութեամբ գարձեալ հաստատեցաւ պայմանաւոր միապետութիւնն՝ վարեալ առենիւ պատուանակալաց։ Կրկին խորհրդարանք, Ծերակուտին՝ զոր Թագաւորն ընտրէ կենաց նոցին, և Նուիրակաց՝ որ Ժողովրդեանն ընտրութեամբ լինի, մի յ՝35ից, և են այժմ 350 նուիրակք։ — Թագաւորն կոչի Թագաւոր Լէոնայ, Կաստիլիոյ, Արագոնայ, և այլն, և պատուոյ վերադասութեամբ՝ Ուղղափառ Վեհութիւն։

Աստիճանութիւնք կամ պատուոյ կարգք են՝ Ոսկի գեղմանն, կարզոսեանն (1771), Լուիզեան կամ Տիկնոյց կարգ (1792), Խաչելեանն՝ վասն Ամերիկոյ (1815), և զինուորական կարգք Ս. Ֆերմինանեայ և Ս. Հերմենեկիլտոյ։

970. ՀԱՍՈՒ. ԶՕՐՈՒ. և այլն. — Հասք պետութեանն են առաւել քան ք՝300,000,000 ֆր. Ծախք՝ սուղ ինչ պակաս. իսկ պարտք՝ վասն բազում պատերազմանց ծանրացեալք՝ են այժմ իբրև 8,000 միլիոն ֆրանգք։

Ըստ զինուորութեան՝ Սպանիա բաժանի՛ի 14 վճռակ կամ գնդապետութիւնս, և բանակն ունի 6 սպարապետս, 80 զբաղարս, 220 սեղակալս, 260 ջնդապետս, 80,000 հետեւակաց են, 10,000 հեծելոց և 8,000 հրաձիգ զինուորաց. որոց վասն տարեկան ծախք լինին 80,000,000 ֆր։ Նաւազորութ գըլխաւոր իշխան է ծովապետ մի և 5 սեղակալք, 8 գնդապետք, 14 ջնդապետք, 67 նաւաստիք, 142 սեղակալք նոցա, մարտիկք 15,000, և նաւազն 10,000։ Նաւք ընդ ամէն 57։

971. ԴՐԱՄՐ. ՉԱՓՔ. — Դրամք Սպանիոյ հաշուին բնաւիւ, որ արժէ 27 Հարիւրեակ գաղղ. երկու բեալ է մի բնաւ ֆ բնաւ. 20 բեալ՝ դահեկան մի որ բնաւորութ կոչի. և արժէ 5 ֆրանգ և 50 հարիւրեակ. նոյնպէս և ոսկի. 5 ֆրանգ և 46 հարիւրեակ։

Աստիճան մի հատարակածին $17\frac{1}{2}$ փարատս է Սպանիոյ և $26\frac{1}{2}$ փարատս կագիլիոյ. ամենայն գաւառի է սեփական փարատս նոյնպես ասացեալ։ Ի փոքր չափս վարի նորս որ է ոան 0,835908 մեգրի։ Ֆունտ՝ արտաքսի է 64 լիտավար գաղղ։ Ի հնուառ վարի՝ լիտրայն 16 ունկեայ 0.460096 քիլոգրամ. Ֆունտ որ է 55 լիտր։

972. ԲԱԺԱՆՈՒՄՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ. — Սպանիա առ հինն ի չորս յառանձին տերութիւնս բաժաներ, այս է՛ի Թագաւորութիւն կագիլիոյ, յորում էին նահանգք ինն, ի Թագաւորութիւն Արագոնիոյ, յորում նահանգք չորս. ի Թագաւորութիւն Նաւարրայ, և՛ի գաւառս Պասքաց, որք են նահանգք երեք։ Յամին 1833 վճռեցաւ յ12 կուսակալութիւնս բաժանել զսոսա և գարձեալ հատանել՛ի 48 գաւառս՝ և կոչել յանուն գլխաւոր քաղաքացն. բայց մինչև զյետին ամբս վասն անգադար քաղաքական խռովութեանց խափանեցաւ վճիռն, վասն որոյ և մեք ըստ հին բաժանմանն տեղագրեմք զաշխարհն նախագրելով ասատոր և զյուշակ նորոյ բաժանմանն հանդերձ Թուով բնակչաց նոցա որ յամին 1849։



	ԳԱՒԱՌՒՔ ՍՊԱՆՒՈՑ		ԹԻՒ ԲՆԱԿՉԱՑ ՑԱՄՍ 1849
	ՀԱՅԵՐԷՆ	Ի ԼԵԶՈՒ ՍՊԱՆԻԱՑՈՑ	
	Ա. Անտալուսիա		
1	Գուրտուվա	Cordova	348.956
2	Խաէն	Jaen	307.410
3	Կրանատա	Granada	427.250
4	Ալմերիա	Almeria	292.334
5	Մալագա	Malaga	438.000
6	Սեւիլիա	Sevilla	420.000
7	Գատիս	Cadiz	358.446
8	Հուելվա	Huelva	153.462
	Բ. Արագոնիա		
9	Սարակոսա	Zaragoza	350.000
10	Հուեսքա	Huesca	247.105
11	Տերուել	Teruel	250.000
	Գ. Աստուրիա		
12	Ովիեդոյ	Oviedo	510.000
	Դ. Նոր Կաստիլիա		
13	Մատրիտ	Madrid	405.737
14	Տոլետոյ	Toledo	330.000
15	Սիուտատ-Րէալ	Ciudad-Real	302.594
16	Կուենկա	Cuenca	252.723
17	Կուատալախարա	Gualdalaxara	199.746
	Ե. Հին Կաստիլիա		
18	Պուրկոս	Burgos	234.022
19	Լոկրոնեոյ	Logroño	185.519
20	Սանդանտէր	Santander	190.000
21	Աւիլա	Avila	132.936
22	Սեկովիա	Segovia	155.000
23	Սորիա	Soria	140.000
24	Պալեատոլիտ	Valladolid	210.000
25	Բալենցիա	Palencia	180.000
	Զ. Էսթրեմատուրա		
26	Պատախոս	Badajoz	336.136
27	Գաճերէս	Caceres	264.988
		ԳՈՒՄԱՐ	7.622.364

	ԳԱՒԱՌՒՔ ՍՊԱՆՒՈՑ		ԹԻՒ ԲՆԱԿՉԱՑ ՑԱՄՍ 1849
	ՀԱՅԵՐԷՆ	Ի ԼԵԶՈՒ ՍՊԱՆԻԱՑՈՑ	
	ՆԱԽԸՆԹԱՑ ԳՈՒՄԱՐՆ		7.622.364
	Լ. Կաթալոնիա		
28	Պարսկելոնա	Barcellona	533.695
29	Դարրագոնա	Tarragona	290.000
30	Լէրիտա	Lerida	197.445
31	Խերոնա	Gerona	262.594
	Ը. Կալիցիա		
32	Գորունեա	Coruña	511.492
33	Լուկոյ	Lugo	419.437
34	Որենսէ	Orense	380.000
35	Բոնդեվեդրա	Pontevedra	420.000
	Թ. Լէոն		
36	Լէոն	Leon	288.833
37	Սալամանկա	Salamanca	240.000
38	Սհամորա	Zamora	180.000
	Ժ. Մուրսիա		
39	Մուրսիա	Murcia	400.000
40	Ալպասեթէ	Albacete	195.531
	ԺԱ. Վալենցա		
41	Պալենցիա	Valencia	500.000
42	Ալիկանդէ	Alicante	363.219
43	Գաստելլոնա-տէ-լա-Պլանա	Castellona-de-la-Plana	247.741
	ԺԲ. Նաւարրա եւ Պիսգայա		
44	Բամպլոնա կամ Նաւարրա	Pamplona, Navarra	280.000
45	Վիտորիա կամ Ալաւա	Vitoria, Alava	81.397
46	Պիլպաոյ կամ Պիսգայա	Bilbao, Vizcaya	150.000
47	Ս. Սեբաստիանոս կամ Կիպուսգոա	Guipuzcoa	141.752
	ԺԳ. Պալէարեանք		
48	Պալէարեանք	Baleares	253.000
			13.958.500

Չհետ 48 գաւառացս յաւելուն միւս եւս գիանալ եան կղզիս, բայց քանզի Ափրիկոյ մասն համարեալ է նոցա, և մեք յայնմ մասին Թողաքե տեղագրել զնոսին: Ի կարգի տեղագրութեան Սպանիոյ յիշեմք և զՊիտիսզոզաս, զոր Անգղիացիք ունին:

Ա. ՀԻՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԿԱՍՏԻԼԻՈՑ

973. **Ի՝ՈՐ ԿԱՍՏԻԼԻԱ** (Castilla-Nueva, Գաստիլիա-Նոռվա). — Հինդ գաւառք են սորա. և կայ նահանգս ի միջակի Թերակղզւոյն ընդ մէջ կուսաստանի և Մորիճնա լերանց լընդարձակ գաշտի, այլ առ պակասութեան ջուրց անպտղաբեր է. յամառ բայնի ոտն սառուկ լինի, և ցուրտ՝ ի ձմերային. բնակիչքն ծանրաբարոյք և լուրջք, են սղղորդք այլ հաւատարմք և հանճարեղք. ի նահանգի սոսո լսի ընտիր բարբառն սպանիայի, զի և ի սմին ե մայրաքաղաքն։

ՄԱՏՐԻՏ (Madrid, Մանդռա կարպէտանացւոց կամ Մայթրիտն). — Ի ձախմէ Մանզանարէս գետոյ յամայի և յաւազուտ գաշտի, պատեալ բարձրաբերձ պատուարօք այլ զուրկ յանպարանից, ի գեօղից և ի պարտիզաց. Թուխ եին յանապատի սնկեալ դրախտ վայելուչ, զի արգասւոյ ընդ գեղեցկագունն ի քաղաքաց Եւրոպիոյ գասի. փողոցք նորա ընդարձակք են և քարայատակք, քաղ լուսաւորեալք ի գիշերի՝ յորս գլխաւոր է Ալքալա որ ծայր ի ծայր անցանէ ընդ քաղաքն, Դոլետ, Ֆուէնգարրալ, և այլն։ Իակ




Մատրիտ

ի հրապարակս՝ Բլացգա-Մայոր (մեծ հրապարակ), Բուէրգա-սեէ-սոլ (գուռն արեւու). Բլացգա-սեէ-լա ցչէւառա (հրապարակ ընդեղինաց). յատկանուշին կան հոյակապ շէնք, և յերկրորդն յանգին ծայրք փողոցաց բազմաց, և անդ ժողովին ելք և գործատկք և հասարակաց կառք։ Երեսիվ են վնուէֆեաձբ իշէսանք Թղեաատրաց, մաքսատունն, և Թագադարանն բնական պատմութեան. եկեղեցիք ուշադիր ջուր զարգարեալ են նկարօք ևեթ. պալատք Թագաւորին արտաքոյ կան բուն քաղաքին. երեք Թատերք են ի Մադրիտ. ձեմարանք 13, մեծ պարտէզ բուսաբանութեան, պահարան արուեստից, ուսումնարանք, և մատենադարան արքունի յորում կան 150,000 միատոք և 200,000 հասորք գրոց։ Ամենայն ինչ Թանկագին է ի Մադրիտ, քանզի Կադիսեցիք յերկրագործ ծուխ ոչ պարապին, և զծառայական գործս Թողուն այլոց ոք ի գաւառաց ուսանք գան. բնակիչքք, ջուկիք, սպառաւորք, պանդոկապետք և այլն, ամենեքեան յայնմ նահանգս գան ի ծառայութիւն։ Ան քաղաքաւն կան տեղիք զբօսանաց զուարճալիք, որպիսի է Բրադոյ անուանեալ Թաղն ծառաստանօք և ճեմելիօք զարգարեալ, ուր ընդ երեկս գնան ճեմին գունդագունդ հեսի և հետեալ, ի սպառուած նորին կառուցեալ է պալատն հին Պուէն-Ռետիրոյ որ և սա ունի պարտէզս և ճեմելիս, ևս և գրասէր մի անկաբանութեան. գանձիճ նկարուց. գործատուն յախճապակւոյ, և մերձ է ի նա կրկէս ցլամարտի։

ՄԱՏՐԻՏ (Madrid, Մանդռա կարպէտանացւոց կամ Մայթրիտն). — Ի ձախմէ Մանզանարէս գետոյ յամայի և յաւազուտ գաշտի, պատեալ բարձրաբերձ պատուարօք այլ զուրկ յանպարանից, ի գեօղից և ի պարտիզաց. Թուխ եին յանապատի սնկեալ դրախտ վայելուչ, զի արգասւոյ ընդ գեղեցկագունն ի քաղաքաց Եւրոպիոյ գասի. փողոցք նորա ընդարձակք են և քարայատակք, քաղ լուսաւորեալք ի գիշերի՝ յորս գլխաւոր է Ալքալա որ ծայր ի ծայր անցանէ ընդ քաղաքն, Դոլետ, Ֆուէնգարրալ, և այլն։ Իակ


974. Քանզի զբօսանք Սպանիացւոց ցլամարտքն են, զոր և առնեն այսպէս. Ի լերանց կալեալ ցօվլ վայրենիս զհետ ձգելով ընդոց ցլուց ածեն ի քաղաքս ի կռիւ. ի Մադրիտ կրկէս ցլուցն կայ ի մէջ մեծի ամփիթէատրոնի, ուր վարձուք ունին զնստեանս հանդիսատեսք. մրցողքն ի հասարակի ճեմարանք Դոբէադորս կամ Դոբերոս կոչին, և են սեփական անուանք որոց հետի կամ երիվարած կռուիցին. ի ժողովել ամբոխն կռուողքն զգեցեալ զգեստ առաւօտեայ և յանդիման լինին ժողովրդեանն իբրև ի մեծարանս. ապա ոմն ի պաշտօնէից տերութեան տայ նշան և անգէն բանի գուռանն արձակարարինն և ցուլն դիմէ յասպարէզ. ի ծափահարութենէ և յաղաղակէ ամբոխին շուարեալ կառաւղ, մինչդեռ ժողովրդն անգուլ ազաղակէ առ շունս ԲՀԷՐՐՈ, ԲՀԷՐՐՈ, և ահա սկսանին ոգորիլ շունք ընդ ցլանս, և բազում այն է զի պատառեն զնա. մանկ յայնժամ և հեծեալ որ ի կռիւ և դէտ այն կայ պատեհ ժամանակ յորում ցուլն խոնարհեցուցանիցէ գլուխն եղ. ջերմեալ ընդդիմամարտն, և նոյնժամայն հարկանէ զնա նիզակաւ. է ուրեք զի վառեալ ցլոյն ի մէջ գին տաղերեթիւն առաջեալ տապատ արկանէ զերիվարն, և ի վերայս վտանգի անդ ժամանեն ոտանաւորքն շառաղոյն գրօշոք, յորմէ գրգռեալ ցլուն Թոզու-



Ցամարտ

գՀեՒեՆաՆ և գԻՒՆ՝ Ի վերայ Նոցին, իսկ Նոցա Թոդեալ զՊոչն փախչին, և զՀետ Նոցա գան այլ հետևակք պանտերիլեերս ձայնելաք որք ուՆին Նետս փայտեայ կարիթր ժապաւինօք փաթՈՒԹԵալս, են որք՝ Ի խուրջ Նետին գՆեն և լուցին դԻւրաքանչիւր չառաւել զպրօցացուՆին ցուցին, որք՝ Ի տես Նոցին ևս քան զևս կատղեալք հրացեալք փրփրացեալ չարձակին՝ Ի վերայ չայնժամ գՒՒաչսրն՝ Ի Նոսա որ Մադաւոր կոչի՝ պարզեալ զՒՒաքանայ գբօշն սուսերամբով չառաջ և հանէ զԻրկաԹԵն ընդ փող ցլուն, և ԵԹԵ անգԷն և անդ տապատա անկցի գազանն՝ Մադաւորն գոՒՒաանՈՒԹԻՒն լսէ՝ որպես գԻւացաքանչիւր ցուցեալ գործ, և չորրք պահապարզգք բառնան՝ Ի կրկնէն զաղիլ ցլուն, և գարձեալ սկսանի հանգԷան։ ԵրկիցյԻԹԵՆԷ լինին խաղք յամարտին, 18 ցուք կատրին առ Նուագ մի, վեց չառաւոտ և 12 չԻրէկոյ։ Սկրեն Սպանիացիք և վճաքաւ և զԻրաժշուՒԹիւն և ուՆին Ժողովս զոր ԴԷՐՔՆ անուանեն, ուր գումարին ընդ երեկս Ի կայԹըս և Ի պարէրտս։ չաՀաՆէն և Ի Թատերս։ Պալատք Թագաւորին որ՝ Ի չըՀնչոյրս Մադրիտոյ, էՒ Բարսոյ, Լա Գալա տէՒ Գամբոյ (Տուն Դաչտական), Ֆլորիտա (Ծաղկաձեմ), չեն ինչ Նշանաւորք, և գուն ուրէք բնակէ Ի Նոսա Թագաւորն։ Նոր պալատն զոր կառոյց Փիլիպպոս Ե՝ Ի 1713 չարեմուտս կոյս քաղաքին հանգԷպ Բրատոյի մեծագոյն է քան զամենայն ապարանս քաղաքին, և պահին՝ Ի Նմա պատկերք և ձեռագործք Ճարտարաց։ Ս։ Լյուեփոնս կամ Կրանիա (Granja) չոյն կոստատամա լերանց 20 փարասաս հեռի՝ Ի Մադրիտոյ է գղեակ արքունի ընդարձակ, ուՆի պարտէզս չարուստաք և զբօսանք չուրց զարգարեալ։

973։ ՒՒնուտնի է քան զրնաւս Խագորիան (Escorial) 10 փարասաս տարակաց՝ Ի քաղաքէն ապարանք ընդարձակ իբրև գղեակ և վանք, զոր չինեաց Փիլիպպոս Բ՝ Ի պատիւ Ս։ Լաւրենտիոսի, վասն որոյ և ձև իՒն կասկարայի չանագաւ տալ չինուածոյն (զի սուրբն՝ Ի կասկարայի տապակեալ վկայեաց)։ չորք Թևք են որ փակեն զքառանկիւն վայր, յորում կան երեք չԷք զուգահեռականք։ չորք ալաարակք՝ Ի ծայրս անկեանցն կերպարանեն զտաս տապակին և Թևն Նշանակի այլով չինուածով որ կայ չատաչին՝ միով՝ Ի կողմանց քառանկեանն։ չեկեղեցւոյն կան Նկարք Ճարտար պատկերահանից, և չերիմք կարելիս Ե, Փիլիպպոսի Բ։ ՄԷծ գուռն եկեղեցւոյն վանն Թագաւորաց ևԷՒ բանի և այն երկիցս, մի չաւուր միրուՒԹեան Նոցին, և միւս չաւուր յուշարկաւորուԹեան մահուան։ բայց տեսիլ Խագորիալայ և սահմանաց Նորա՝ տիրապետիք են քան ԹԷ զբօսեցուցիչք։ Ջուարձանի է քան զտաս Ապրանուէզ պալատ զոր հիմնեաց կարլոս Ե և վայելչացուցին յաջորդք Նո-



Էսկորիալ

րա, կառուցեալ յաչին Դակոյի ի գեղազարմ դաշ. ի ՝ի մէջ պարսպոյց։ Բնակիչք Մատրիտայ 210,000։

976. ԴՈՒԼԵ՛ՏՈ (Toledo, Տոլէտոն)։ — Ցեզր Դակոյի յանձուկ հովտի զոր պարսպին ժայռք և ապառաժն գործեն յամարան զոգ քաղաքին, որոյ և փողոցք անձուկք և խոտորք են. յառաջնումն նրատեին և աստ Թագաւորք Սպանիոյ, ի միջին գարու երևելի էր ամենայն քաղաքաց աշխարհին, որում վըկային և հղյակ շէնք նորին, որպիսի է մայր եկեղեցին՝ որ յառաջն ժամիի էր, գոթացի ոճով, և կան ի նմա գամբարք առաջին Թագաւորաց. ապըստիսկոպոսն Դուլետոյ նախագահ Սպանիոյ կոչի։ Բնակիչք 20,000, ուր ի ԺԴ գարու 200,000 բնակիչք էին։

ԱԼԿԱԼԱ՛ ՏԷ ՀԵՆԱՐԷՍ (Alcala de Henarez)։ — Համալսարանն զոր հիմնեաց ի սմա Ծերանաւորն Խիմինէս ի 1490, անուանի էր ընդ ամենայն Սպանիա. ի քաղաքի աստ ունաւ Սկերվանդէս որ գրեաց զքաջ Նահիտալիշն Տոն Գիխոդէ։ Բն. 6,000։

ԿՈՒԱՏԱԼԱ՛ԽԱՐԱ (Guadalajara)։ — Ուխ գործանոցս չուխայի։ Բն. 10,000։

977. Բ. ՀԻՆ ԿԱՍՏԻԼԻԱ (Գաւգիլիա լա Վիէխա, Castilla la Vieja)։ — Ի հիւսիսի Նորոյն, երկիր լեռնային և անիւթ, անմշակ և յեռնեալ յարուեստից Հարաւրուելնէ։ Բնակիչք նորա ծանրաբարոյք և աշխուժակիք են։

ՊՈՒՐԿՈՍ (Burgos)։ — Երևելին ընդ մայրաքաղաք համարեալ, այժմ ամայացեալ և խրթին. մայր եկեղեցին հղյակ է, և կան ի նմա նկարք Հարաւարաց և գամբարք Թագաւորաց Սպանիոյ։ Աստ ծնաւ Սիտ (Cid) կամ Տոն Րոդրիկ Տիաս տէ Վիվար քաջ ասպետ Սպանիացւոց ահարկուն Մաւրիտանացւոց, յիշատակարան արձանացեալ ցուցանէ զնի տան նորա, և մարին նորա հանգուցաւ ի Սան Բէտրոյ տէ Գարտէնա վենտասանի երկու փարսախաւ հեռի ի քաղաքէն։ Կայ և ի Պուրկոս համալսարան մի։ Բն. 15,000։

978. ՍԵԿՈ՛ՎԻԱ (Segovia)։ — Եւ սա երբեմն բարգաւաճ էր. ի վաղնի չինուածս նորա նշանաւորք են Ալքազարայ պալատ Մաւրիտանացի արքայից, որ այժմ վարժարան է Հարտարապետաց, մայր եկեղեցին և ջրմուղն ի վերայ երկկարդ կամարաց ածէ զջուրն ի բլոյ առ այլ բլուր, յորոց վերայ կառուցեալ է քաղաքն, ջրանցքս այս առ Տրայիանոսէ կայսերէ չինեալ են. բայց տունք քաղաքին և փողոցք մանունք նեալ են և ոչ բարեչէն։ Բն. 15,000։

ՍԱՆԴԱՍՏԷ՛Ր (Santander)։ — Ի ծոցն կասգոնիոյ. ունի նաւահանգիստ վաճառաշահ վասն հաղորդութեան ընդ Պուրկոս յայլոյ Ճանապարհաւ։ Բնակիչք 20,000։

979. Գ. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԼԷՈՆԻ (Լէոն, Leon)։ — Ցարևմտից հին կասգիլիոյ, չէ լեռնային որպէս զաս, վասն որոյ և բարւոք մշակեալ և ծառաւէտ, բայց օդ ի ձմեռն ցրտին և խոնաւ է. բնակչացն բարք նման են հին կասգիլացւոց։ Բազում քաղաքք երևելիք են ի նահանգիս, որպէս Լէոն (8,000), Աստորիկա (4,000), այժմ կիսակործանք են։

ՍԱԼԱՄԱՆԳԱ (Salamanca)։ — Ցափուն Պորտիայ. ի հղյակայ շէնս նորա նշանաւորք են համալսարանն, և գեղեցիկ մայր եկեղեցին. ի համալսարան այն, կառուցեալ յամին 1239, յամենայն ազգաց Եւրոպայ գային ուսանել, վասն համբաւոյ իմաստութեանն, այժմ ուսանին անդ 400–500 համրակք։ Բն. 15,000։

980. ՓԱԼԱԴՈ՛ՏՈՂ (Valladolid)։ — Առ Բիսու-

երկայ, երևելի քաղաք որպէս և ի հնումն, ունի համալսարան, վարժարան հրաշինութեան, գեղեցկաշէն եկեղեցիս, գործարանս չուխայի, տուրի, մեսուրի. ի համալսարանն գնան 1,200 համրակ. ատ մեռաւ Կոլոմպոս ի 1506: Բն. 25,000:

ՄԵՏՐՆԱՆ ՏԵՂ ԻՒՈՑ ՍԵԿՈՑ (Medina del Rio Secco). — Ունի անուանի ռազմանոցս: Բնակիչք 8,000:

ՈՒՏՐՏՏՏ ՌՈՏՐԻԳՈՑ (Ciudad Rodrigo). — Քաղաք ամուր ի սահմանագրեալս, ընդ որ բազում անգ ան առ Նարոլէոնիէ: Բն. 8,000:

981. Դ. ԱՍՏՈՒՐԵԱՆՆ ՆԱՀԱՆԳԻ (Asturias). — ՕՎԻՏՈՑ և ՄԱՏՐԻԼՈՑ. — Լեռնալերք են, բնակիչքն արք քաջք են ի մարտի և գործասէրք. բարի է մշակութիւնն երկրին, որ բերէ պտուղ, ածուս և անասուն. օգք խոնաւ են և մահասպառ: Գլխաւոր քաղաք նահանգիս

ՕՎԻՏՈՑ (Oviedo). — Ունի համալսարան մի և մայր եկեղեցի գեղեցիկ: Բն. 10,000:

982. Ե. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԿԱԼԻՑԻՈՑ (Galicia). — Ի հիւսիսակողմն Սպանիոյ, երկիր լեռնային բարեբեր մշակեալ. բնակիչքն ժուժկալք են բարեբաղձ, գործունէապէս և քաջք ի պատերազմի. մշակութիւնն և հովուագործութիւն միա գնեն ի հայրենիս իւրեանց, և ամի ամի երբեմն մի մարդկան պանդխտին յայլ նահանգս Սպանիոյ և ի Բարգոգալս և ծառայեն օտարաց. և գրամքն որ ընդ նոսին գնեն կալուածս կամ վաճառս ի հայրենիս իւրեանց:

ՍԱՆ ԽԱԳՈՑ կամ ՍԱՆ ԵՒԿՈՑ ՏԷ ԿՈՄՊՈՍՏԷԼԼԱ (San Jago de Compostella, Ս. Յակոբ Կոմպոստելլայ). — Մեծ և անուանի ուխտատեղի. զի ի մարսրան մայր եկեղեցւոյն կան նշխարք Ս. Յակովբայ առաքելոյ որ նախ քարոզեաց ի Սպանիա, ուր և յաքսենչից գային բազում ուխտաւորք. յերկուս բաժանեալ է տաճարն, վերինն նոսիրեալ է Ս. Յակովբայ Մեծին, տաորինն Փոքուն: Ի համալսարանին որ հիմնեցաւ ի 1531 ուսանին 1,000 աշակերտք: Բնակիչք 30,000:

983. ԳՈՐՈՒՆԵԱ (Coruna). — Քաղաք ամուր և նաւահանգիստ մարսիկ նաւուց, կայ ի նմա աշտարակ կանթելապիր որ բազուկք ի հեագիտայ համարձակ ընծուած փխիիկեցւոց. ունի քաղաքս գործարանս կտաւուց: Բն. 15,000:

ՖԵՐՐՈԼ (Ferrol). — Լաւագոյն նաւահանգիստ պատերազմական նաւուց, ունի ամրութիւնս, զինուռ բանոցս, շարող նաւաշինութեան, և ծովակ գեղեցիկ վասն նորոգութեան նաւուց: Բն. 16,000:

ՎԻԳՈՑ (Vigo). — Նաւահանգիստ վաճառաշահ: Բն. 6,000:

ՕՐՆՍՍԷ (Orense). — Ի վերայ Մինհոյ, ունի գիւղս նեբեր անգաստանս ի սահմանս իւր: Բն. 6,000:

984. Զ. ԷՍՏՐԻՄԱՏՈՒՐԱ (Estremadura). — Ի հարաւոյ Լէոնայ, նահանգ ընդարձակ և սակաւամարդ, և անմշակ վասն ցամաքութեան երկրին և բազմութեան ջոտից ոչխարաց որ արածին ի դաշտս նորս. բնակիչքն ծանրաբարոյք և ժուժկալք, քաջք են ի մարտի:

ՊԱՏԱՒՈՍՀ (Badajoz). — Աա կուսաժանայ, գիւղաքաղաք ամուր, երկու փարսախաւ հեռի ի սահմանաց Բորդոգալոյ. բնակիչքն համբաւեալ են ի նենգս մարտից և նոքին Ռոմացիալ. Բն. 14,000: Ընգգրկացիք սիրելցին սմա ի 1812:

ՄԵՐԻՏՏ (Merida). — Աա կուսաժանայ, ատ ի հնումն նոտեր գաղղիական հեռվմայեցի բարեբաստիկ, գոսանին ի նմա բազում հնութիւնք հռոմայեցի ազնութենից. չթ գարուս 3 փարսախ էր չրջապատի քաղաքիս: Բն. 9,000.

ԱԼՔԱՆԱՏՐՈՒ (Alcantara). — Ամրոց սահմանադրեալ, անուանի է կամուրջն բարձր 200 ոտնաչափ ընդ հեռվմայեցիք կառուցին ի վերայ Դաւոյի: Բնակիչք 3,000:

ՐԼԱՍԵՆԻԱ (Plasencia). — Քաղաք փոքրիկ և գեղեցկաշինատ ի լերինս կուսարտայս, փարսախաք մի հեռի է ի սահմանէ Լեռնատանն Ս. Յակոբոս, ուր ա ռանձնացեալ կաթոլտսի Ե, մեռաւ ի 1558, կենդանեաւն առեալ ինքեան պաշտօն մեռելոյ: Բնակիչք 7,000:

985. Է. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԲՆԻԿ ԱՆ ՏԱԼՈՒՍԻՈՑ (Andalusia). — Ջայս անուն էառ նահանգս ի վանդալացւոց որք տիրեցին նմա ժամանակս բազումս. կուսաստլքիվիր գետ ծայր ի ծայրէ գնայ ընդ նահանգս և զուարթացուցանէ գրաստրեալիւն նորս, որպ բարի է և կիմայ. սիերրաս Մորենաս լերինք անջրպետեն ընդ նա և ընդ Լուսրեմատուրա և Նոր կաստիլիա ի հիւսիսոյ, ի Տպանոյ սիերրաս Նեւատաս բաժանէ զայն ի կրանադայ. կան ի նոսա բազք անգորձք ոսկւոյ, արծաթոյ, կապարի և սղնձոյ. բնակիչք սերտնդք Պհգաց և Մաւրիտանացւոց՝ քաղցրաբարոյք, եռանդունք և մեծամտիք են: Համալսարան են երկուքք երկրիս:

986. ԳԱՏԻՍ կամ ԳԱԴԻՒԷ (Cadiz, կադիս).



Գատիսի

— Քաղաք անուանի և առ հինան, գեղեցիկ ունի գիպս ճեռնատ վաճառականութեան. Հոխոտութիւն քաղաքացւոց մերձակայից և կրթուածիւն քնակչացն զարգացուածոյց ազանց բերին երկրիս: Կառուցեալ է քաղաքս ի սպառուած կղզւոյն Լէոնայ. ընդ կղզին և ընդ ցամաքն հաւասարեալ ինն է ծովիս բաւական ի տանել և նաւս մեծամեծս, մտանողաց ի ցամաքին և ի կղզւոջն ամրացուածոնէն զայն, որ և կիրկաւս տրոհի, ի գոգ գաստհեալ և ի գոգ բոնի գալէայ. յամրոցն նշանաւոր են Պրոգատէրդ՝ զրամ տիրացան Գաղղիացիք ի 1823, և Բուրբոգի Ռեալ որ ունի մեծատոհոս ապի. նաւարանն և զինաւորանոցն և մեծագոյն նաւուց են ի կղզեկին գտան

քայ. Զուար ըմպելոյ ածէն ի գեղջկի գեղջէն Բօ-ւերդոյ տէ Սանդա Մարիա (16.000 բն.)։ Վաճա-ռառականութիւն քաղաքիս ընդ Ամերիկոյ մեծ էր յառաջնումն, զորդիս կարևոր և վան գաղթակա-նացն Սպանիոյ. կան ի նմա վաճառականք ի բա-զում ազգաց եւրոպայ. ունի ձեմարան գեղարուես-տից, գրոց նաւարկութեան. փողոցք նորա թէ-սիս և անձուկք այլ գեղեցկիք են և սուենք բարե-շէնք։ Գաղղիացիք զամս երկուս պաշարեալ ոչ կա-րացին առնուել զքաղաքս զոյս առ Նեպոլէոնիս. 150.000 բնակիչք էին ի նմա յայնժամ, այժմ 72.000։

ԻՍԼԱ ՏԷ ԼԷՈՆ կամ ՍԱՆ ՖԷՐՆԱՆԴՈ (Isla de Leon, San Fernando)։ — Ի կղզւոջն Լէոնի, քաղաք վաճա-ռաշահ։ Բն. 17.000։

987. ԽՍԷՐԷՍ ՏԷ ԼԱ ՖՐՈՆՏԷՐԱ (Xeres de la Frontera)։ — Հեռի տասն փարսախս ի գաւխահեայ ամուրի վան գինւոյն որ ի սահմանս նորա լինի։ Մերձ է ի քաղաքս բանակատն ուր Իտոլիկոս արքայ Գեթաց պարտեալ՝ յամին 712. եթեղ զպատիս ի ձեռս Մաւրիտանացւոց։ Բն. 40.000։

ՍԷՒԻԼԻԱ (Sevilla)։ — Քահկէ կռատաւքիվրայ, քաղաք երևելի և վաղեմի, կառուցեալ մաւրի-տանացի ոճով. Նշանաւոր է մայր եկեղեցին յորում 82 սեղանք են, արձանք և պատկերք Նաւարա-գործք բազում, ամք կայ և յիշատակարան Քրիս-տոփորի Կոլոմպեայ այսու վերադառնելոյ ընդ

Աքահնի՛ւ, և կասգիլեայ	A Castilla y Aragon
Կոլոմպոս՝ աշխարհ նոր ապա։	Otro mondo dio Colon.

Նշանաւոր են և խիրալաս աշտարակն 364 ոտնաչափ բարձր, յորում կան սանդուխք ոլորտապտոյտ մինչև ի կատար նորին, և հրապարակ վաճառականաց, գարպաս մի մաւրիտանացի, թէատրոնն, զուարճու-թիւնք, և գործարան ծխախոտի յորում 1700 գործաւորք են. Ջրանցք մաւրիտանացի 400 կամ-րջք. պարիսպք քաղաքին հռովմէական շինուածք համարին. ի Սեւիլիա կայ ձեմարան հաստատեալ ի 1504, ձեմարան գեղեցիկ զարուեստից և մասնա-գարանք. վաճառականութիւն քաղաքիս բարգաւա-ձեալ էր յոյժ ցորչափ վաճառքն ոչ ժողովէին ի Գա-ձիսէ. և այժմ կրկին արծարծի ընկերութեամբ մի շոգենաւորաց։ — Փարսախաւ հեռի է ի քաղաքէս գեօղն Սանդի Բոնդէ, յորում կան աւերակք խոս-լեկայ՝ ուր ծնան կայսերքն Տրայեանոս, Ադրիանոս և Թէոդոս։ Բնակիչք 120.000. էր երբեմն զի 400.000 անձինք բնակէին ի սմա։

988. ԳՈՐՏՈՎԱ (Cordova, Կորդուբա)։ — Քաջաքն



Գետտոմա

կռատաւքիվրայ, անուանի առ Հռոմայեցսվք, յորում ծնան Սենեկա և Լուկիանոս. յիշատակութեան Մաւրիտանացւոց մզկիթաքաղաք էր նոցին, յորոց ի չինուածոց կայ մնայ ցայժմ մզկիթն որ յա-ռաջն մզկիթ էր, ըստ որում և չորք Ա-ֆէ-թէ կո-չի, ուղղութիւն նմին է Մեքա, 19 խորանայարկք են նորա, 850 սիւնք կռնապք և 100 մատուռք։ Բնա-կիչք 50.000. իսկ երբեմն էին 300.000։

Ի սահմանս Գորտուվայ բնակեալ են զաղթականք Գերմանիոյ, զորս պանդխտեցոյց անգր Օլավիէս ի 1767, նոքա զամայն վերնկրէն յարգասաբերութիւն ա-ձէին, և կոչին առանք նոցա Գաղղիա, Գառլոդա, Լուիզիանա։

ԷՏՋԻՈՍ (Ecija)։ — Քաղք խէնիլայ, նշանաւոր է վան բուսոցն բամբակի։ Բն. 56.000։

ՍԱՆ ԼՈՒՔԱՐ ՏԷ ՊԱՐՐԱՄԷՏՈՒ (San Lucar de Barrameda)։ — Ի բերան կռատաւքիվրայ, համարի Նաւահանգիստ Սեւիլեայ։ Բն. 20.000։

ԳԱՐՄՈՒՆԱ, ՕՍՍՈՒՆԱ, ԱՐԿՈՍ ՏԷ ԼԱ ՖՐՈՆՏԷՐԱ (Carmona, Ossuna, Arcos de la Frontera)։ — Որոց էն 13.000 բնակիչք։

ԽԱՆ Է (Jaen)։ — Քաղաքն Սիերրա Կէւատա լերանց, որոյ է հոյակապ մայր եկեղեցի։ Բն. 20.000։


ԱՆԴՈՒՀԱՐ (Andujar)։ — Քայգէպէս և ձիթապէս գաշտի լեզու կռատաւքիվրայ, ունի գործարանս ա-նօթոց բրան որ առաքին ընդ ամենայն աշխարհն։ Բն. 13.000։

ՄԱՐԹՈՍ (Martos)։ — Ի սմա կան ճեպոտածք հը-նուելեանց։ Բն. 15.000։

ՊԱԷՍԱ և ՈՒՒԵՏԱ (Baeza, Ubeda)։ — Ունին վա-ճառս ձիոց։ Բն. 13.000։

ԱԼՃԷՍԻՐԱՍ (Algeciras)։ — Նաւահանգիստ առ ձիպրայդար։ Բն. 5.000։

989. ՁԻՒԳՐԱԼԹԱՐ կամ ՁԻՒՐԱԼԹԱՐ (Gibraltar, աղաւաղեալ ի Ջեպէլ-Թարիֆ անուանէ)։ — Ամուր



Ձիւրալդար

քաղաք ընդ իշխանութեամբ Անգղիացւոց ի 1704 ամ և այսր, առ նեղացեալ՝ որով Ափրիկէ բաժանի Լեւրո-պայ. բերդ նորին կառուցեալ է ի վերայ 1.400 ոտ-նաչափ ժայռի բարձու ի սեպագնեայ ծովու յորում չեք կառուսն ոտիւ, վան որոյ և անառիկ է. այս է կալ-պէ՝ մի յԵրեակղեան արձանացն Համբաւելոյ առ Ջբլթս-քաղաքն կառուցեալ ընդ նովաս ունի նաւահանգիստ բարի. պատսարքն Ս. Հռոքոսի բաժանեն զնա ի ցամաքակղզւոյն։ Անուանի եղև յոյժ պաշարումն քա-ղաքիս ի 1781 և 1782։ Բազում աչխատութեամբ

հաստեալ է յատակեր ժայռին՝ ձանապարհս հեռաւոր կաց և ձիոց և կառաց, կամարս և անձաւս, և մարտկոցս յարդարեալ յամենայն կողմանս. այլ և հողով ծածկեալ ուրեք ուրեք զերեսս վիմայն և պատուհասս յօրինեալ: Մաւրիտանացիք տիրեալ Նմին յամին 711 եգին զանուանդ, իսկ Սպանիացիք կոչեն Խոպալդար: ԲՆ. 20,000:


990. Ը. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԿՐԱՆՆԱՏԱՑ. — Որ է հարաւային կամ վերինն Սպանիա, զորով վարի Միջերկրական, և լերինքըն Նեւատա և Ալբուխառաս ձգին ի Նմա. կլիմայ ամանց նահանգիս յար և նման է Ափրիկէոյ. լինի անդ բամբակ, շաքար, արմաւ, և այլ բոյսք Ջերմին աշխարհաց. ըստ որում և հողին տատպահան ընչից անդ Սոլանոյ կոչեցեալ. Ալբուխառաս լերինս բնակեն 40,000 Մօրիսքոսք, սերունդք Մաւրիտանացւոց. են անդ և կաղարաշատք:

ԿՐԱՆՆԱՏԱ (Granada). — Քաղաքն Սիերրա Նեւատայ, ի վերայ բլրոյ ոտից ծառագանն Խնիվէ և Տարըյ, երեսին եր յոյժ ի ժամանակս Մաւրիտանացւոց և 400,000 բնակիչք էին ի Նմա. մարթ է բաժանել զայն ի յորիս մասունս՝ ի բուն քաղաք յորում կան գեղեցիկ շէնք, հրապարակք և աղբիւրք, յամրոցն Ալհամպրա ի բլրի, և յերկու արուարձանն Ալբայիցէին և Ընդհեքեր՝ յոր բնակեն մեսաքսագործք և նմանիք նոցին. յամենայն տունս դվնաւորաց ըստ սովորութեան Մաւրիտանացւոց կան աղբիւրք և վանք կտաւիք: Նշանաւոր տեղի քաղաքին է բլուրն Ալհամպրա կամ



Ալհամպրա


Ալհամպրա, ուր է դղեակն կառուցեալ ի Կարոլոսէ Ե այժմ կիսաւեր. անդ է Ալհամպրա պալատն մանրանաչի Թագաւորաց, զորմանալի վիճակաւ մանրանաչի, զորոյ քանդակաց կարելոս եմ զնան մի ի Նիւթ վիճակութեան խրոյ դղեկին, արտաքուստ ընդերի նշանաւոր ինչ ի Նմա բաց ի Թանձրութենէ օրմոցն




Դահլիճ Աթիծոց

և ստուար աշտարակաց, բայց ի ներքուստ ճոխութեամբ արուեստին հրաշալի է. են ի Նմա ընդարձակ դահլիճք երկու կճասաւք, զարդարեալ սեամբք և առաղաստք. անպարտ մնացեալ են և բաղանիքն և

գահլիճն Ամբասհախարհանց



Դահլիճն Ախենհահախանց



Դռնան պահարանի Կորանիհե

րոց վերին կողմն է գեղեցկաչէն մայր եկեղեցւոյն. համալսարան քաղաքս հաստատեալ է ի 1531, ուր ուսանին 800 հաճախակ. բն. 85,000։

991. ՄԱԼԱԳԱ (Malaga). — Ցեղը կոստալմեհոնայ է գեղեցիկ վճաւկի. աստ նաեի վարիչ նահանգին. ունի նաեահանգիստ ուսոի առաքելն զանուանի գինին Մալակայ և զիրգա ջերմին գաւառաց. բոլք կապարոյ Մալակայ ղոր սկսան



Մալակա

գործել ի 1823 ամէ և այսր, տան ամի ամի միլիոն մի կենդհնար։ բն. 52,000։

ՎԷԼԷՍ–ՄԱԼԱԳԱ (Velez–Malaga). — Եւ սա նահանգհիստ վաճառուց պաղղ։ բն. 15,000։

ՌՈՆՏԱ (Ronda). — Քաղաք կառուցեալ ի լերան ցամքիս ի վերայ երկուց քարաժեռից կամրջաձ միացելոց, ընդ որով չ'270 ոտնաչափ խորոշ անցանէ կուռատպրա գետ։ բն. 19,000։

ՄՈՏՐԻԼ (Motril). — Ունի ի սահմանս իւր եղեգնուտս չաքարի։ բն. 12,000։

ԱԼՄԵՐԻԱ (Almeria). — Նաեահանգիստ առ Մաեբիտանացւովք, վաճառաշատ չորք։ բն. 26,000։

ՊԵՐՃԱ (Berja). — Քաղաք փոքրիկ յոսին Սիերրա Կառոլոյ, առ մեք պայծառացաւ վան բովուց հապարոյ որ ի նմա։

ԱՆԴԷՔԷՏԱ (Antequera). — Ազատաշնորհ երկիր զատուցեալ ի նահանգին ընդ ամէն կրանատոյ և Սեւիլեայ · 40.000 մարդիկ են ի նմա, գլխաւոր քաղաք նորին Անդէքէտա 20,000 բնակչօք։

992 · Թ · ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՄՈՒՐՍԻԱՅ

ՀԻՈՑ. — Ի հիւսիսոյ արեւելից կրանատոյ, լեռնավայր է և անմշակ, հիմամբ նման է Անտալուսիոյ · արգաւանդ հող և բարեբեր է, հովիտն Սեկուրոյ բերէ ընդեղէնս և մեսաքս։

ՄՈՒՐՍԻԱ (Murcia). — Մաբրիտանացի ոճով շինեալ, անուանի է վասն գործարանացն մետաքսի, սանուիմիսն մեծ եղև ի սմա ի 1829։ բն. 38.000։

ԼՈՐՔԱ (Lorca). — Ունի կապարի և պղնձոյ բովս ի սահմանս իւր։ բն. 42,000։

ԱԼՄԱՆՍԱ (Almanza). — Քաղաք փոքրիկ, յորում



Ալմանսա

նշանաւոր են համանուն գղեկին աւերակք. Գաղղիացիք ի 1707 ասո յաղթանակ տարեալ, հասատեցին զայնքորդուհիւն Թագաւորութեան Սպանիոյ ի զարմ Պուրպոնեան: Բն. 6,000:

ԳԱՐԴԱԽԵՆԱ (Cartagena, Կարթեդոն Նոր անուանեալ). — Շինեալ ի Կարթեդոնացւոց. շահաստան նաւահանգիստ ի Միջերկրականի, երկրորդ նաւահանգիստ Սպանիոյ, ունի վարժարան նաւարկութեան. մեծ սասանութիւն եղև և ի սմա յամին 1829: Բնակիչք 38,000:

Բ. ՀԻՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԱՐԱԳՈՆԱՑ

993. ԺԴ. Ի բնիկ Թագաւորութեան Արագոնայ որ զտամբ Պիւրենեանց, են բազում լերինք յորոց միջի Էսար գետ գործէ հովիտ լայն, ի հիւսիսակողմն ան, կանի հրուանդանն Հարաւային կոչեցեալ լեառն 9,000 ոտնաչափ, և Լեառնն Կորուսեալ 11,000 ոտն. ի գուռնէյայ միոյնէ ի Սարակոսա ձգին ջրանցքն կայսերական զոր ետ գործել Կարլոս Ե, որ ոչ միայն Նաւարկութեան նպաստ, այլ և յոռգուծն անդաստանաց. կլիմայ երկրին ցրտագոյն է քան զկաստիլիոյ, բայց լինի անդ ցուրեան և ձէգ առաւ: Ցառաջնումն Թագաւորութիւն Արագոնայ ժառանգեցաւ իշխանէ, բայց Թագաւորին պարտք էին անտալ աղուսականաց և եկեղեցական գաւառ. առ այս և պաշտպանակալ ոմն կարգէր առ արքայի յուշաբար ազատութեանց հպատակացն, և յընտրութեան նորոյ Թագաւորի ասէր ցնա. "Մեք հաւասարքս քո՝ ,, ընտրեցաք զքէզ ի Թագաւոր մեր, դուն մեր է ,, դեալ, զի պատուռ կացցես և պաշտպան օրինացս ,, և իրաւանց մերոց. ապա թէ ոչ ,,: Եւ ցորդ ազատասերութեան բարս ցուցանէն Արագոնացիք, խրոխտք են և ի մարտի, և սոքա և կալվածագիք քաղաքդիք համարին քան զամենայն Սպանիացիս:


994. ՍԱՐԱԿՈՍԱՆ (Zaragoza). — Յաջմէ Էսար գետոյ, արքեպիսկոպոսանիստ քաղաք գղեաւոր, անուանի եղև վասն պաշարմանն զոր տարաւ ի զրոյց Նապոլէոնի. Բալաթիքա զբոլոր սակաւուք պահպանեաց պաշտպանէր քաղաքին. ի կործանել ամրոցն և պարսպաց նորին, յեկեղեցեաց և ի տանց կառուցին մարդիկն, յորս անուանի գոյն և աշխատանք ոմանք ի կառուցէ. մինչև Ճարակիալ տոլոյ և անկեալ մարտիկ զբոլորանին, ի սպառ աւերեալ անկաւ քաղաքն ի ձեռս Լանայ գաղղիացւոյ զբոլորի: Բայց յեղերսին անդ վերջին ամիս պատերազմին անկան 54,000 անձինք աստ և անտ: Կայ ի քաղաքին համալսարան հիմնեալ ի 1472 ուր ուսանին 1,000 հմտարուք, անդաման գեղարուեստից, գործարան կերպասի և կըտաւուց, պատկեր Առաւածածնայ հրաշագործ ի հոյակապ մայր եկեղեցւոյնէն. յաջոյ է ե վաճառականութիւն ի վերայ Էսպայ: Բն. 48,000:

ՀՈՒՍԿԱ (Huesca). — Ունի համալսարան մի 500 ուսանողաց հիմնեալ ի 1354: Բն. 10,000:

995. ԺԱ. ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ԿԱԴԱԼՈՆԻՈՅ (Cataluna, Կագալոնիա). — Յարեւելս Արագոնայ առ ոտամբ Պիւրենեան լերանց. ցրտին և փոփոխական կլիմայիւ. երկիրն բարւոք մշակեալ և ոռոգեալ ի բազմապատիկ ջրանցից բերէ ընդելգնս, վուշ, կանեփ, պտուղ, և այլն. արուեստից Յարատուութիւն մանաւանդ կատուեց ի Թղթոյ յատաջացեալ ե ի Նահանգի ատ քան յայլսն, և բնակիչքն գործունք են, քաջարիք, անխոնջք ի մարտ, սիրողք Հայրենատուր ատանդից և ազատութեանց, և անհաշտք Թշնամութեամբ ընդ կասկիլացիս:

ՊԱՐՑԵԼՈՆԱ (Barcelona). — Մի ի Գ. Ք. Սպանիոյ և ի վաճառաշահութեան երկրորդ, գիւղ Նորին և տահմանք իւր գեղեցկիք են. ունի միջնաբերդ և ապառն Մոնթ-Ժուի անուն, Նաւահանգիստ ազատ այլ ծանծաղ. Պարսկեղեցիք է արուարձան ծովափնեայ, բնակութիւն Նաւագին և ձկնորսաց. Նշանաւոր են ի քաղաքիս պալատն Նահին կոմսից Պարցելոնայ, ժողովատն վաճառականաց, Թէատրոնն, մայր եկեղեցին. ունի և վարժարանս բժշկութեան և ծովային Հարուստարուեստութեան, գործարան մետաքսի, բամբակի և ատուռ, ձուլարան հրացէնից. Բն. 150,000:

ՄՈՆ-ՍԵՐՐԱՏ (Mont-Serrat). — Լեառն ամայի



Մոն-Սերրատ

ապառաժոտ 7 կամ 8 փարսախաւ հեռի է ի քաղաքէ ատտ. են ի նմա իբր 12 Մենաստանք, յորոց մի է և ոսկետաղի հրաշագործ պատկերի Ս. Աստուածածնայ, յորմէ եւ Ս. Խաչատիս Լոյսլոյ հիմնագիր Յիսուսեան ընկերութեան յամին 1522: Ա նՆաբոլէոնիս Գաղղիացիք և Սպանիացիք կանգնեցին անդ ամրոցս:

996. ԴԱՐՐԱԳՈՆԱ (Tarragona, Տարրագոն). — Քաղաք ամուր ի քարուտ լերին առ ծովեզն, արքեպիսկոպոսանիստ. գաւանին ի սմա նշխարք Հռոմոյեցի քննասածոց. Բն. 12,000:



Պարցհլոնա

ՌԷՈՒՍ (Reus). — Քաղաք չինեալ արդեսեք Ճարտարութեանն, երկու վարսախաւ և կիսով հեռի ի ծովէ, ասան մի սոսկ էր սա 50 ամք յառաջ: Բնակիչք 30.000:

ԻԳՈՒԱԼԱՏԱ (Igualada). — Ունի գործարանս զինուց: Բն. 14,000:

ԴՈՐԹՈՋԱ (Tortosa). — Քաղաք ամուր և վաճառաշատ առ Էպրայ: Բն. 18.000:

ԼՒՐԻՏԱ (Lérida). — Ամուր քաղաք որոյ է բերդ յանմատոյց ժայռի: Բն. 16,000:

ՄԱՏԱՐՈՑ, ՕԼՈՒ, ՄԱՆՐԷՍԱ (Mataro, Olot, Manresa). — Քաղաքք նորաչէնք Ճոխացեալք ի շահս վաճառականէնէ մեռաքսի, բամբակի և կտաւուց: Բն. 25,000, 16,000, 10,000:


ԽԵՐՈՒԱ, ի վերայ Դևբայ, ՖԻԳՈՐԱՍ, ՌՈՍԱՍ (Gerona, Figueras, Rosas). — Ամրութիւնք կարևորք ի գլուխս սահմանաց աշխարհին: Բն. 15,000, 5,000, 1,800:

ՈՒՐԴԷԼ (Urgel). — Ունի ամուր բերդ ի պաշտպանութիւն անցից Բիւրենեայց ի վերայ Ճանապարհին որ ի Պիւրենեանս:

ԳԱՐԴՈՒԱ (Cardona). — Քաղաք փոքրիկ, անուանի վասն աղի բլրոյն որ ի սահմանս նորա 550 ոտնաչափ բարձրութեամբ և վարսախաւ շրջապատ նորա, բազմացունի է աղն և կարծր յոյժ, մինչև գործել անոր անօթս:

997. ԺԲ. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՎԱԼԵՆՑԱՑ. — Ի հարաւոյ կաղաղնիոյ, անձուկ սահմանս ծովու, յորում չիք նաւահանգիստ անբոյթ. կլիմայ նորին բարեխառն է, մեղ և սառոյգք ոչ լինին անդ, բնակիչքն զուարթունք են, ժիրք, Ճարտարք, որք և զնահանդն ամենայն իբրև դրախտ յարգարեցին ի լբրնս ապաղբս տանելով հող բուսաքեր, իսկ դաշտք՝ մանաւանդ որ Հուերդաս կոչին պարուրեալք՝ բարեբերք են յոյժ ուռոգեալ ջրագարշիւք: Բաղում ազգք աղ նիւ գինեաց լինին աստ, յորս ընտիր է «Խ-ՀԵՐԷՍ գինի, նոյնպէս և չամիչ նորին. բերէ երկիրն ընդեղէնս, ձեթ առատ, որիզ, արմաւ, Թուզ, և մեռաքս բաղում:

ՊԱԼԵՆՍԻԱՒՆ (Valencia, Վալենցիա, Վաղենսիա). — Ցաջորմ կուսատալվիրայ ի դեղեցիկ դաշտս. փողոցք նորին նրբինք և խոտորք այլ մաքուրք են. ի շէնսն նշանաւոր է մայր եկեղեցին և Էլ Լեալ պալատ հին. գաւառան որ Ալամեստա անուանի տնկեալ նռնենեօք, նարնջօք և ազգի ազգի պտղաբեր ծառովք՝ զուարճագեղ է քան զամենայն արքունի Ճեմելիս Սպանիոյ. զբօսանք բնակչաց են հանդեսք եկեղեցւոյ, այլ ոչ անխառն ի Թաւեբական պատկերաց: Ի համալսարանին կառուցեալ ի 1404 և բարեկարգեալ ի յետին ժամանակս ուսանին իբրև 1500 հոգիք. ի գործարանս մե-



Պալենահիա

տաքսի 25,000 գործաւորք են։ Կաւահանգիստ Պալենսիոյ է ի խորը Կրաոյ գնաք, ուստի բառնան վառ Ճառակարք զգինի և զգբի։ Բն. 70,000։

998. ԱԼԻՓԱՆԴԷ (Alicante). — Ի ծովեզերին ուր կայ անբոյթ կայան նաւուց. յետ Պարցելընայ և Գատիսհեայ սա բարգաւաճ է ի վաճառականութեան, վաճառք նորին են չամիչ, գինի, ցգբ, մետաքս, սար նուրբ, գեղեցիկ են ջրջակայքը Ալիգանդայ, ուսումնարանքն ընտիր։ Բն. 26,000։

ՄՈՒՐՎԻԷԴՐՈ (Murviedro). — Գաղաք ծովեզերեայ, յորում աւերակք բազումք են. անգ էր Սագունտոն քաղաք բարեկեցիկ, զոր Անիբաղ աւերեաց, քաղաքացիքն ինքեանք յանհնարս մահու հաւր հարին և կամովին հրկեզ եղեն ի նմին. Հաւմայեցիք վերականգնեալ զքաղաքն առաւել ևս վայելչացուցին. ի միացորդս չինութենեանց նոցա նշանաւոր է Թէատրոնն, ուր հանդէս Թատերական արարին Սպանիացիք և յանցեալ դարու. ի բլուրս մերձակայս կան աւերակք եօթն ամրոցաց Արաբացւոց, սահմանքս այսքիկ բարք մշակեալ են։ Բն. 8,000։

ՍԱՆ-ՖԷԼԻՊԷ (San-Felipe). — Աւերեալ ի մարտիյամին 1707, և վերստին կանգնեցաւ։ Բն. 16,000։

ԱԼՔՈՅ (Alcoy). — Ունի գործարանս Թղթոյ կարեւորս։ Բն. 18,000,

ԴՈՐՐԷ ՎԻԷՅՈ (Torre Viejo, որ Թաղամանի՛ հին աշտարակ). — Գաղաք փոքր կործանեալ ի սաստնութեան երկրի 1829 ամին։

ԷԼՉԷ (Elche). — Ջոր պատեն արմաւենիք, նշենիք, Թզենիք և նարնջենիք։ Բն. 21,000։

ԳԱՍՏԵԼԼՈՒ ՏԷ ԼԱ ՊԼԱՆԱ (Castellon de la Plana). — Մերձ ի ծով ի բարեբեր վճակի, ուր լինի կանեփ ընտիր։ Բն. 16,000։

999. ԺԳ. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՄԱԼԵՈՐԳԱՑ. — Որ է ժողով կղզեաց, որոց վանդաք տիրեցին յամին 426, Մաւրիտանացիք յ'798, Սպանիացիք ի 1229, Նստան անգ և ինքն իշխան Թագաւորք առանձին. ի հնումն Հռովմայեցիք ընդ կարեքեղնացւոց կագեին ի վերայ Մալեորգայ և ի նորումն Անգղիացիք ընդ Սպանիացւոց։ Պալէարեան կղզին կղզեքն, Գիմենեսիա առ հինն կոչեցեալք, այն է Մալեորգա և Մենորգա, որոց բնակիչք ճարտար պարսաւորք կեին ի հնումն. Բիզիուսեան անուանին Իվիսա և Ֆորմենտերա։ Լեռնային արգաւանգաձոյղ են կղզեքս, մանաւանդ Մալեորգա. կլիմայ նոցին որպէս զվալենցիոյ։ Ժողովուրդն երկրագործութեան, ձկնորսութեան, խաչնագարմանութեան և վաճառականութեան պարապէ։

ՄԱԼԵՈՐԳԱ կամ ՄԱՅՈՐԳԱ (Mallorca, Մեծն Փալէարիս). — Գլխաւոր քաղաք կղզւոյս է Բալմա ամբոր, և վաճառաշատ ի ծովեզերին, ունի ուսումնարանս. զվաճառս սորա հանեն ի գաղարեաս (կապարիս) կղզեակ։ Բն. 33,000։

ՄԵՆՈՐԳԱ կամ ՄԱՅՈՐԳԱ (Menorca, Փոքր Փալէարիս). — Ոչ քաջ մշակեալ. գլխաւոր քաղաք սորին Բորդ-Մահոն (Մագոն), անուանի է ամրութեամբ և նաւահանգստիւ։ Բն. 19,000։

ԻՒԻՑԱ (Ibiza, Եբուսոս). — Ցորում գլխաւոր քաղաք համանուն։

ՖՈՐՄԵՆՏԵՐԱ (Formentera, Ոխիաս). — Ի կղզւոյս են գերդաստանք միայն անձինք։

Գ. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՆԱԻԱՐՐԱՑ

1000. ԺԴ. Թագաւորութիւն Նաւարրայ ձգէր առ ոտսմբ արևմտեան Պիւրենեայց, 330 փարսախս քառակուսի. կլիմայ երկրին ցրտին է վան լերանցն, այլք ի լերանցամէջս ուրէք ևեթ կան. նշանաւոր է հովիտն Ռոնսըվլ (Ռոնցէս-Վալլէս), ղի ասս ասի ի գառնալ Մեծին կարոլոսի յաղթութեամբ ի մարտսէն Արաբացւոց, բնակչաց պիւրենեայց յանդգնասիրց յարձակեալ ի վերայ նորա և սպանեալ զարէ զաշտսային Ռոլան, զորմէ շատ ինչ պատմին երգագանք միջին դարուս: Թագաւորութիւն Նաւարրայ ձգէր յայսկոյս և յայնկոյս պիւրենեան լերանց, և վասն մասինն որ ի հիմն Գաղղիոյ՝ Թագաւորք Գաղղիոյ կոչեցան և Թագաւորք Նաւարրայ. միւսոյ մասինն ուրեակ ուղղափառն Ֆերդինանտոսի Թագաւորի Արագոնայ հաստատեաց զայն յայտնի Թագաւորութիւն Նաւարրայիկ ի Պասքաց սերեալ և զնոցին լեզու խօսին, կրօնվքե են և հանճարեկք. զբաղում ինչ ի նախնի ազատութենից պահեալ ունին ցարդ: Գլխաւոր քաղաք Նաւարրայ է

ԲԱՄՊԵԼՈՆԱ (Bampelona, Պամպելոն). — Աթ գեռոմէն Արկայ ունի կրկին ամուր բերդս: Բն. 16,000:

ԴՈՒՏԵԼԱ (Tudela). — Աթ Իպրայ ի Ծայր կայսերական ջրանցին: Բն. 8,500:

ԳՈՐԵԼԵՍ (Corella). — Ունի այգեստանս, ձիթենիս և անդաստանս կանեփոյ յափունս Էպրայ: Բնակիչք 4,000:

Ի Նաւարրայ ձգին ճանապարհք որ ի Պիւրենեանս անդ է և Պասգան հովիտ զուարճալի:

Դ. ՎԻՍԳԱՑԱ

1001. ԺԵ. Վիսգայա կամ Պասք երիք գաւառք են ի հիւսիսային սահմանս Սպանիոյ, Վիսգայա, Կիբուզգոա և Ալաւա, 390 փարս. քառ., Պիւրենեան լերանց ոստք սփռին ի նոսա, և Նաւարգական ովկիանոս պատ զհիւսիսիս. երկրագործութիւն և հովուութիւն յԱլաւա միայն յաջողեալ են, բնակիչքն Թուին որպիք կանդարթացող որ առ հառաւմայեցւովք ցուցին քաջութիւն մեծ, ուժիւք և ազատասէրք և եռանդուն են. գեղ ոչ գոյ ի սահմանս նոցա, այլ ի գերդաստանս նախնիս անջատ բնակեն. ամենայն այր Վիսգայացի կամ Պիսգայացի ազնուական համարեալ է. ազատութիւն նոցա յիրս երս և արուեստից բարգաւաճանք պատճառս եղեն զարգանալոյ նոցա. ունին և բովս և հալոցս մետաղաց, և բարւոք նաւահանգիստս վաճառուց:

ՎԻԼՊԱՈՑ (Bilbao, Փլարիսպրիգա). — Հնդիկ փարսախաւ հեռի յովկիանոսէ, ի վաճառաշուք Թեան անուանի է ի Սպանիա, ղի սա է կենդրոն ազնիւ զոր առաքէն յայլ աշխարհս: — Բորդովկէէդ նաւահանգիստ է քաղաքիս յԻվայշայվալ (Ibaichaval) գէտ առ որում կառուցեալ է քաղաքն: Բն. 16,000:

Ս. ՍԵԲԱՍՏԻԱՆՈՍ (S.t Sebastiano). — Ի ցամաքս կղզւոջ, նաւահանգիստ նորա չէ բարի, այլ ի Լոս Բասանկես փարսախաս հեռի ի քաղաքէն կայ նաւահանգիստ անձեռագործ պարսպակալ լերամբք և ժայռիւք անբոյժ գան գյուղս ի նաւահանգստաց: Բնակիչք 15,000:

ՖՈՆՏԱՐԱԲԻԱ (Fontarabia). — Ի բերան Պիտասաոյ. ամուր քաղաք ի սահմանին Գաղղիոյ, ունի նաւահանգիստ անբոյժ: Բն. 2,000:

ՎԻՏՏՈՐԻԱ (Vittoria, Վիկտորիա Յուլիոպրիգեան). — Քաղաք ամուր, ունի գործարանս երկաթի, և եբախակաք սրոյ որ գործին ի նմա անուանի են յոյժ լաւութեամբ: Բն. 8,000: Ասա մէնջաւ մարտն (1813) որ զԴաղղիացիս ստիպեաց էլանել ի Սպանիոյ:

ԿԱԼՈՒԱԾՔ ՍՊԱՆԻԱՑԻՈՑ

1002. ՅԱփրիկէ, Սեգտ, Մելիլեա, Բէնոն ոտ Վէլէզ և Ալուահեմոս քաղաքք գեմ յանդիման ափանց Աֆռաչուսիոյ, Գանարեան կղզեաց, Անապան, Իչմանի կղզի, Ֆերնանոսոյ ոտ Բոյ:

ՅԱֆռիկէ, Մանիլեան կամ Փիլիպպեան կղզիք, Մարիանեանք, Կարոլինեանք, Պաշէա, և Մինտանոյ:

Յամերիկա, կղզիքն Գուպա և Բուէրտոյ Ռիկոյ, և կղզիքն Աստուածածնայ որ ի փոքր Անտիլեանս. ի սոսա յամենեսին իբր 5,500,000 մարդիկ կան ընդ իշխանութեամբ Սպանիացւոց. յառաջն նահանգս ընդարձակագոյնս ևս ունէին նոքա և ժողովուրդ բազում:

ին Թուէին զնոսին յորդորելով անաչառս լինել յաւետնին արքայնութեան։ Այս առեան հաստատեալ էր ի 1230 ուան Ալբիգեանց գաղղիոյ։ Վերջապան առեանք էին արքայնութեանն ի Սպանիս և առեանքն նախանձայոյզք քան զամենայն ազգաց, քանի նէին ոչ միայն զամբաստանելոյն՝ այլ և զմեղաւորը ազգականս նոցին, և զսպասաւորս մահու պարտաւորը գրելին, ոչ առանց անգթութեան։ այս առեանք Սպանիոյ կացին մինչեւ ցամն 1808, յորում ժամանակի Յովսէփ եղբայր Նաբոլէոնի եբարձ զայն։ Վերջինեանս է վերստին հաստատեաց, բայց ի 1820 անգրէն բարձին զայն Գորդէսքի՝ այս է առաջորեարն։

1007։ Փերտինանտոս Ուղղափառ յետ առեան կրանադայ սիրեաց և Կեսպոլոյոյ հանգերձ Սիկիլեաւ (1503) և մեռաւ ի 1516։ Թոռն նորա Կարոլոս Ա, որ և Ե՝ ժառանգեաց ընդ Սպանիոյ և Սիկիլեայ զնոցորն Կաստիզա և ապա զԳերմանիա և եղև հզօրագոյն Թագաւորացն Եւրոպայ։ ած զինուց նորա տարածեցաւ մինչև յԱմերիկէ, Փրանկիսկոս Ա արքայ Գաղղիոյ գերի վարեցաւ ի Նամանէ, նոյնպես և բազումք ի նոսանք Գերմանիոյ։ յաւուրց անտի մեծին Կարոլոսի Իսբոլոսի չեկայ Թագաւոր փառաւորեալ իբրև զաս։ այլ ամենայն մեծութիւն նորին չեղև նման ի միմեանս, հրաժարեցաւ ի բոլորէն և եմուտ ի վանս Ս։ Ցուստոսի ուր կացեալ զամս ինչ ի սերութեանն մեռաւ ի 1558։ Առ որմէով սորին Բ փիլիպպոսիս կային տասուկին զօրավարք անուանիք, գոլքան Ալպայ և Ցոն խոսան անհաղթատ որդի Կարոլոսի Ե։ բոլք Ամերիկոյ հարկէին Սպանիոյ և փառք սորին հռչակեալ էր առ ամենայն ազինս, սակայն առ սակաւ սակաւ բնակիչք աշխարհին նուազեցան, Թուլացաւ զինուորութիւն, նաւատորմին խորտակեցաւ և պարծանք տերութեանն աղօտանայր։ և այս ամենայն չարեաց պատճառք բռնաւոր բազք փիլիպպոսի հայմարին, զոր և առ կինդանեան իսկ կոչեին Այս հաբասոյ։ գեռ ևս Թագաւորեալ Չանացաւ բառնալ զազատութիւնս Սորին Կահանգաց և հաստատել զաւետան արքայնութիւնն։ և ոչ միայն ոչ զիջանէր յայազանս և ի պատասխան Նեղելոցն՝ այլ և զօրու ծանոնս առաքեր ի վերայ նոցա զդուքսն Ալպայ զայր արեանաթոբոս, որ առ ի Նուազել զազգն՝ ընդ սուր եհան աւս 18,000 զնաղկեալ Տասակ մարդկութեան աշխարհին, որով չարագոյն ևս գինեցոյց զսիրտ հանցաւորացոց, որք առաջնորդութեամբ Գուլիելմոսի Օրանծացւոյ ի որդւոց նորին Մաւրիկեայ, քաջութեամբ զդէմ կացան և զբօին Ալպայ և Ռեգեսէնսայ և զքաջսին Բաքսոյ, անուանի զօրավարացն Սպանիացւոց։ ոչ ժամանեաց Փիլիպպոս հանանել որում ցանկայն, զի ի հաշուութեանն Վեսդֆալիոյ չամին 1648 ազատ ապրութիւն հաստատեցաւ Հոլանտա։ Սպանիս ընդ փառաց կորոյս և զսպասաւորութիւն մեռանդականութեան իւրոյ և զնոյնպէս արուեստին։ քանզի Թշնամիք նորին յորդորեալք ԱՆեհաբեԹոյ դշխոյէն Բրիանտիոյ զնաւատորն Փիլիպպոսի հարին չարաչար։ ընդ որ ցասուցեալ նորա կրկին կառոյց նաւս 150 ընդդէմ Անգղիացոց, բայց և սոքին ի հարտար ծովակալացն Հոլանտացւոց մասամբ խորտակեալ, մասամբ ծովակոր լեալ (1588) ոչ հասին խմբովին յԱնգղիա։ Իսկ Անգղիացիք ի քէն և յարհամարհանս նոցին ի գալ ամին միւսոյ Եկին մինչև ի Գատիսէ, հարին զնաւս Սպանիացւոց և յաւարի առեալ զգալացն գարձան։ այս ամենայն չեղև բաւական ի մեղմել ըզխստասրտութիւն փիլիպպոսի, այլ զառելըՔիւնն որ ընդ Հոլանտացիս ի սկիզբն Թագաւորութեանն, ի կատարած նորին գարձոյց ընդդէմ Մաւրիտանացւոց բնակելոց ի Սպանիա, կամելով իմն գարձուցանել զնոսա ի կրօնս իւր, և ի խլտել նոցին զնուազ նուաճեալ գյարուցեալան, վասն որոյ էլին գաղթեցան յայն ամ (1570) յաչխարհէ անտի երկք իրիւ 100,000։ Ի զարեալ արքունի տունին Բուրգունդացոց փիլիպպոս ի ձեռն գթին Ալբայ կալաւ զնաւատորութիւնն գայն, այլ գառնացոյց սմարդի բարուքն և զնոր չպասական։ կալուածք Լուսիտանացւոց յօտար աշխարհս անկան ի ձեռս Հոլանտացւոց։ մեռաւ փիլիպպոս ի 1598։ և պետութիւն նորա և ևս անչքացաւ առ յաջորդսն։ փիլիպպոս Գ յարուցեալ հալածանս ի վերայ Մաւրիտանացւոց առաւել ևս նուազեցոյց զԱրքանակութիւն աշխարհին գաղթականաքն ի 1609։ Առ Դ փիլիպպոսիս Բորդոգալ զամս 60 նեղեալ ի ւծոյ Սպանիացւոց Թեմատիաց գայն ի 1640 և հիմնեաց զպետութիւն իւր առաջին Թագաւոր յետ ազատութեանն կացուցեալ զդուքսն Պրականցայ որ կոչեցաւ Ցովհաննէս Դ։ Կարոլոս Գ մեռեալ անորդի յաջորգեաց գեղին իւրոյ սպառէր, որում փոխանակել կամելով Պուբպոնեանցն Գաղղիոյ և Աւսարիացոցդ յաբրուցին զմեծ պատերազմին որ վասն ժառանգութեան աթոռոյն Սպանիոյ անուանեցաւ։ Անգղիացիք և Հոլանտացիք ձեռն յԱւստրիացիս եռան, Կարոլոս որդի Լէոբոլտի որում անկ էր Թագաւորել Սպանիոյ ի յաջորդել մարմին երկիցս եմուտ ի Մատրիս և երկիցս հալածեցաւ ի Վանտոմայ դքսէն, և զնոի ամբարձեալ յաՔոռ Տօր իւրոյ տրաժարեցաւ ի գահէն Սպանիոյ։ Ի հաշտութեան Ուտրեխտայ ի 1713, հաստատեցան Պուրպոնեանք ի ժառանգութեան աթոռոյն Սպանիոյ ընդ Աւստրիոյ վերհանեցաւ Պելճիա և Նէապոլիս, և Անգղիացոյ՝ Ճիպրալթար։

1008։ Առ Թագաւորք Պուրպոնեան զարմին Սպանիա առաւել ևս վասնզարեալ իսպառ խրճեցաւ ի Նախնին փառացն և ի մեծութենէն մինչև ի ժամանակս խռովութեան Գաղղիոյ։ Ցամին 1792 միաբանեաց նա ընդ Թշնամիս Գաղղիոյ, և յետ պատերազմի ինչ ձեռն ետ ի նոյն իսկ ի Գաղղիա, յորժամ Բորդոգալք միաբանեին ընդ Անգղիոյ։ Նաբոլէոն կամեցաւ ընդ Սպանիա անցուցանել զզօրս իւր ի Լուսիտանիա, ընդ որ զարեաց ժողովուրդն զի ձկամէր ընդ տաղրի Թշնամութեան տալ ցոյս, և զինան զայն արկ զԱնտոնիս, որ էր պաշտպանեալ հաշտութեան և մանրիմ արքային Կարոլոսի Դ և Թագուհւոյն, որպէս Թէ ի ձեռն նորա յայն խորհուրդ եկեալ էին Թագաւորն, և ի լինել խռովութեան (1808) կարոլոս ե-Թող զԹագն որդւոյ իւրում Փերտինանտոսի Է, այլ յետ սակաւուց հաճաւեալ բռնաբարութեամբ իմն վերնել զերաժարումն գայն չոգաս ի Պայոն յասեան

ԲԱՒԻԱ (Pavia)· — Գ.· Ք· վաղեմի, երբեմն մայրաքաղաք Թագաւորաց Լոմպարտից, յահեկէ Դիվինոյ, նշանաւոր է կամուրջ սորա յարկածածուկ և համալսարանն հիմնեալ՝ի ԺԻ դարս, ուր ուսանին երբէք 1,300 հմտակք· ունի և պարտէզ բուսաբանութեան, դիտանոց, Թանգարան բնաբանութեան, Թանգարան բնական պատմութեան, հաւաքումն՝ի պէտս անգամահատութեան· հոյակապ եկեղեցիք՝ Բն· 26,000։ Ընտանի է պատերազմն 1525 ամին, յորում փրանկիսկոս Թագաւոր Գաղղիոյ գերի անկաւ՝ի ձեռս կարլոսի Ե։

Չերթոզա (Certosa)· — Գեղ հեռի երկու վաթսնհատ՝ի Բաւիոյ, անուանի մենաստան կարթուսեանց, յեկեղեցւոջ նորին կան դամբարք դքսից Միլանու և վիսկոնտեան տոհմին։

1063· Ի· Գ· ԳԱԻԱՒՆ ԼՈՏԻ·— Ցարևելս Միլանու և Բաւիոյ·

ԼՈՏԻ (Lodi)· — Ան եղբ Աստայ, գլխաւոր քաղաք, ունի լիկէոն, մարզատունն, գործարան չախճապակւոյ և հիւսուքի, պանիր աղեր Բն· 20,000։

1064· Ը· Գ· ԳԱԻԱՒՆ ԳՐԵՄՈՆԱ·— Ցարևելից Լոտեայ·

ԳՐԵՄՈՆԱ (Cremona)· — Գ.· Ք· մեծ, ՝ի ժամանակս Պաղոսի, անուանի վասն աղբեսի նուագարանաց որ՝ի նմա գործին· Նշանաւոր են եկեղեցիքն և յատկեա մայր եկեղեցին գոթացի, տարածութեամբն և աշխարհական և քանդակօք ճաշատուն, որ կերպարանեն զզօգիակոս եգիպտացի· Բն· 30,000։

Դոռրի (Torri)· — Գեղ փոքր, յորում Ծոմին ամբարատուն զնարձակի գեղոյնորէն պատրաստեալ և ՀՆմիկեօք։

1065· Թ· Գ· ԳԱԻԱՒՆ ՄԱՆԴՈՒԱ·— Ցարևելս Գրեմոնայ·

ՄԱՆԴՈՒԱ (Mantova)· — Գ.· Ք· և յատկաչն մայրաքաղաք գքուէթեանն, ՝ի գանգակեան տոհմէն կառուցեալ՝ի լճին Մինչոյ՝ի ԺԲ դարու· Աւտրիացիք սիրեցին սմա յԻՀ դարու, և նաթոլէոն էառ՝ի ձեռաց նոցա, այլ ընդ հուպ գարձուցաւ առ նոսին· անուանի է Մանդուա ամրութեամբ, բայց օդ նորին ապականի՝ի մերուս ջրեղջից անսի գետոյն· Նշանաւոր են պալատքն Տրոյեան և Դէ կառուցեալ՝ի ԺՋ դարու՝ ի Ցուլիոյ Բոմանոյէ Ճարտարապետէ, և նկարուք զարգարեալ՝ի Նմանէ և յաշակերտաց նորին· մայր եկեղեցին ընդ գեղեցկագոյն եկեղեցիս Իտալիոյ գաւեալ· պալատն ազգային, Թատրոն և հրապարակն Վիրգիլեայ, յորում կայ հիասքանն նորա և սիւն կանգնեալ, ՝ի քերդողն մեծ ծնեալ Ա՝ն՝ն գեղջ քաղաքին որ այժմս Բիեդոլա կոչի· կայ՝ի Մանդուա և լիկէոն մի, մարզատունն, մատենադարան, և Ճեմարան Վիրգիլեան, մուսէոն· բնակիչք 36,000։ — Արտաքոյ քաղաքին յԼճին կայ գեղեցկաշէն եկեղեցի Տիրամօր Շնորհաց, ուխատեղի մեծ·

Գոնզագա (Gonzaga)· — Ան մեծ և մարգաշատ, նոյնպես և Գոռէնէօ Սէրվէնէսս ուր ծնաւ Ս· Ալոյսս Գոնզակեան·

Ս· Բենեդիկտոս (San Benedetto)· — Ան յայնկոյս Պադոսի, ՝ի հոյակապ եկեղեցւոջ նորա հանգուցեալ են նշխարք Ս· Սիմոնիոյ Հայկազնոյ որ՝ի սկիզբն ԺՀ դարու Ճգներ անդ, և պատուի ընդ աքանչելագործ տուրբա·

ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՎԵՆԵՏԿՈՑ

1066. Կ. այս կուսակալութիւն կայ ընդ միջ Մինչ. ջեոյ և Ադրիականին, յարևելս Լոմպարտիոյ. ունի գաւառս են նորին։

Ա. ԳԱՒԱՌ ՎԵՆԵՏԻԿ.—Ի համանուն ծովածոցին.

Վենետիկ (Venezia).—Մայրաքաղաք հասարակապետութեանն որ երբեմն իշխէր ծովուց, կառուցաւ ի Ե դարու. փախստեայքն յերկուց Հռնոց ազգ ազգ ժողովրդոց եկին բնակել ի լճակս Ադրիական ծովու, յորս յաւելան և վաճառդիք յերկուց Լոմպարտաց, և անդ գտեալ առեալ հասատատեցին ընկերութիւնս ոչք ի՛ Ե դարու ի մի հասարակապետութիւն միացան. իշխանութիւն օրէնսդրութեան սուաւ ժողովրդեանն, այլ գբօին կամ Տոժին էր գործադրութիւն. պաշտնակալք ընտրեին յազնականաց, և կոչեցաւ հասարակապետութիւնն յանուն քաղաքին. և վաղ բարգաւաճեալ վաճառականութեամբ անուանի եղև յոյժ յընդհանուրս ի ձեռն դաշնագրութեանց ընդ ինքնակալս Հռոմայ և Բիւզանդիոնի և կիւլիկեցւոց Հայոց. եկաց նա Թագուհի ծովու տարածեալ զնաւս իւր յԱդրիական և ի Միջերկրական, հովանացեալ և ի վերայ Խորիոյ և Դալմատիոյ. յայնմ ժամանակի վաճառականութիւն արևելից և հնդկաստանի և Եգիպտոսի էր ի ձեռս Վենետկոյ և գնեալ. տիրեցին Վենետկեցիք կիպրոսի և Ցռնիական կղզեաց և Մոռեայ և մեծի մասին Լոմպարտիոյ. Այլ ի ԺԲ գարու սկսաւ տկարանալ տերութիւնն վասն հակառակութեան աղնուաց և ռամկին, գբօին և պատճառականաց. ազատացան հզօր գտեալ զիշխանութիւն վարչութեանն սեպհականեցին սակաւուց ոմանց ցեղից և կացուցին սակաւապետութիւն իւրն, զանգանս տոհ միջն այնոցիկ գրոշմեալ ի մատեան մի որ կոչէր Ոսկի մատեան. որով ծառայեալ սիրտ ժողովրդեանն յիշխանաց և հնարեր խռովութիւնս բազում անգամ և ի մայրաքաղաքին իակ. գաւառք յարեալք ի նա գլուխ ամբառնային. հանդերձ այսոքիւք և վաճառականութեան անկումն եղև ի գտանել նորոց ուխարհաց և նորոց ճանապարհաց. և ի նմին ժամանակի աղէտք դառնագինք ևս ի վերայ հասին յամբառնալ տերութեան Օսմանեանց, զի կորուսին մի ըստ միոջէ զնաւսպանիա և զկղզիս Մեծամեծս. յարշաւանս իւրեանց Գաղղիացիք անաչխատ սիրեցին Վենետկոյ յամին 1796, պատեհ առեալ առ այս և զանմիաբանութիւնն ազգօրէնին։ Ցետ բազում փոփոխութեանց ի 1814 վերակեցաւ Վենետիկ և ամենայն գաւառք իւր տանն Աւստրիոյ։

1067. Վենետիկ քաղաքն զարմանալի և աննման չինութեամբ՝ ամբարձեալ է ի վերայ ցցոց ի հարիւր և յաւելի մանր կղզեակս, զորս ջրանցք անձուկք զատանեն յիրերաց և կամուրջք ի մի կցեն. ի ջրանցսն գլխաւոր է Մէծ ջրանցքն (Canal grande) որ յերկուս հատանէ զքաղաքն, և ի կրկին եղերս նորին կառուցեալ են հոյակապ քարաշէն պալատք, և ի կամուրջսն նշանաւոր է ի վերայ Մէծի ջրանցքին




կամուրջն Ռիալտոյ

Ռիալտոյ որ կցորդ կղզիին մասունն. մի միայն է կամար նորին 90 ոտնաչափ բացուածով, 24 կրպակք են ի վերայ նորա կէսք յայս կողմն և կէս յայն. իակ մանր կամուրջք համարին իբրև 500. ի ջրանցսն զմանր կամուրջսն կառուցանեալ անուանեալք ի



կոնտոլա

պէտս անցուդարձի։ Ցանձկուձեան անդ քաղաքին, են ոչ սակաւ հրապարակք, յորս Ս· Մարկոսին հոյակապ և հրաշալի զառաջին տեղին ունի, յորին ծռվուձն, պատեալ մեծագործ քարաքանդակ չինուածովք· կից է նմին և փոքր հրապարակն Բիացեդզա անուանեալ· նշանաւոր են և հրապարակքն Ս· Սամֆռնոս, Ս· Յովհաննէս-Պօլոս, և այլն։ Ի չինուածս երեսին է մայր եկեղեցին Ս· Մարկոս չինեալ՝ի ժ դարս բիւզանդեան ոճով, գրուագք և քանդակք, սիմք առաւել քան զինիզ հարիւր վիմաց, միւսին նկարք և ոսկեձեղուն գեղեցք՝ի ներքուստ և արտաքոյ պճնեն զնա· ճոխ է և գանձատուն· հինգ գրունք են եկեղեցւոյն, ի վերայ միջնոյն կան յորք պընձաձոյլ երիվարքն յունականք զորս Տիրեթայ Հայոց Թագաւորի ասեն ընծայ բերեալ առ Ներոն, և կոստանգիանոսի փոխադրեալ՝ի Բիւզանդիոն, ուստի բերին Վենետկեցիք· առաջի գրանցն՝ի հրապարակին կոթողեալ կան՝ի վերայ պղնձեայ պատուանդանոց երեք կայմք բարձրաբերք, որք յառաջն կրեին դրօշս Թագաւորութեանց Մոռայի, Կրետեայ և Կիպրոսի· աշտարակն կամ զանգակատուն եկեղեցւոյն անջատ՝ի նմանէ նշանաւոր է 325 ոտնաչափ բարձրութեամբն· հանդէպ նորին՝ի վերայ կամարակալ մակ շուքային կայ ժամացոյց զորոյ զժամս հնչեցուցանեն պղնձեայ հսկայք երկու աստի և անտի բախելով զնոսա· Ի հոյսս գեղեցիկ եկեղեցեաց գըլխաւորք են Ցիսուսեանցն· Ս· Փրկին վերջաւորիմիանձից, Ս· Թեղեղիա, Ս· Գէորգ մեծն, Սալուձէ, Գողընդինեանց եկեղեցի, Ս· Մարիամ Ֆրարի՝ յորում կանգնեալ են մահարձանք Դիցեանու մեծի նկարչի և քանի անդրիադրծին Գանովայ· և այլն։ Կոր և հին անուանեալ Բրոգուբադիայքն ապարանք էին նահանի էնձանց դէմ ընդ դէմ՝ի մեծի հրապարակին Ս· Մարկոսի, զոր Կաթղերն միացոյց կառուցեալ պալատ արքունի։ Հին պալատ դբսին արգ գրատուն է հաւաբակաց, ի մուտս Նորին կայ անդրադիք մեծ Հսկայից (Scala dei Giganti) անուանեալ, ի վերայ աստիձանացն կային յառաջն առիւծունք մոլ պղնձեայ· յորոց բերանս արկանէին զմուրհակս վձռոյ առեղծն Տասանց· գահկնիք բաղումք են՝ի պալատանս զարդարեալ գեղեցիկ նկարոք, մանաւանդ գահկնիճ առենին խորհրդոյ, ուր են կենդանագիրք ամենայն դքսից և նկարք յաղթութեանց Վենետկեցւոց· ի պալատան ասա են արգելանք բանից Վենետկեցւոց, կէսք ընդ երդեօք յարկայ՝ որ կասարեալ բանքն կոչին, այլք՝ի ստորերկրեայ նկուղս որ Գուբք (Pozzi) ասին· կայ և այլ բանս տեղուեաց զոր կցէ ընդ պալատանս Կամարջն Հառաչանաց (Ponte dei Sospiri)· Նաւահանն ընդարձակ՝ երբեմն առաջին յաշխարհի, ունի ցամաքայն կալմած՝ի գնել զնաւատորիս, առ գրան Նորա կան առիւծունք մարմարիոնեայք, յորոց մին բերաւ՝ի գրանց Ալէնեայ յամին 1687, պահէ ցարդ՝ի նաւահանգիստն օրինակ Պուենայր հարմանալ՝ի ներքոյ կողմն նաւուս, յոր մշտանէր դուքսն յառաջ Համբարձման տեառն և զբն



Ռափայելեան Վայժարան

հայր Ղևոնդ Ալիշանորդի Մխիթար աբբայ այսր միոխեաց վիարանութիւն իւր՝ի Մուէյ, և հռչակեկեցաւ առ Էլբրոպացիս և յաղդիս Հայոց առաքելական քարոզութեամբք աշակերտացն, հայկական տպարանաւն և ձեմարանաւ. Նշանաւորք են տպարանն, և մատենադարանն ուր կանգնեցաւ յամին 1846 գեղագանգակ արձան Գրիգորի ԺԲ Նուիրեալն՝ի նմանէ, գործեալ՝ի Փապրիսայ անդրիադործէ, որոյ գործէ և կիսանդրի Մխիթարայ աբբայի՝ի նմին սպիտակ կհոյ. և հաւաքածուն հայ գրչագրաց, մումիայ եգիպ-



Ծովրբ Ղազար

տացի և զմռեալ Թագուհիք եգիպտականք, և հեռադիտակ մի մեծ:

1070. Մալամոքքո (Malamocco). — Քաղաք հին՝ի ծայր Լիտոյի, ուր յԺ դարու նստան տոժք.

ունի նաւահանգիստ վաղուն։ — Լաֆայէթէյ Ալֆոյս մերձ ի Ս. Ղազար, ի ԺԹ դարու հաստատեցին անգ. մաքրարանս եկայ յարևելից ի զգուշութիւն սպածուածեան, իսկ արդիս միանգամայն ի զինուորանոց։ — Սէն Սեբէստ, գեղեցիկ կղզեակ և վանք կրօնաւորաց կարգին Ս. Ցովհաննու կոչեցեալ Աստուծոյ ընդ մէջ ալեհնակոյ և Ս. Ղազարու, անկիլանոյ ե հիւանդաց և յիմարանոց, որոց միանձնուհիք սպաս տանին։ — Բէլլէ-էրլ՝, բնակութիւն ձկնորաց, նաւահանգիստ խզեալ, ուր յաղթեցին Անգլեկացիք Փռանկաց Պեպինոսի։ — Մէ՞տէ, ասան մարգարտաց առ որով անցանէ չուէիզի երկաթի և գեղեցիկ Ճանապարհք Դրեէվզայ և Բատոսայ։ — Ֆ՝ոնթէն՝, լեռը լճակին Վենետկոյ գլուխ Ճանապարհի ընդ ցամաք զոփանք Պրէնդայ գետոյ։

Գիոջգիա, (Chioggia, կղաւդեան մոյք)։ — Քաղաք փոքր Եպիսկոպոսանիստ, ունի մատենադարան և ուսումնարան կղերաց և մարզպետուն, դործարան աղի, ձկնորսութիւն և կառոյցս նաւաց։ Բն. 27,000։

1071. Բ. ԳԱՒԱՌՈՒ ԲԱՏՈՒԱ — Յարևմտեան Վենետկոյ.

ԲԱՏՈՒԱ (Padova, Պատաւիոն)։ — Գ. Ք. առ Պադդիլիոն վտակաւ, մի ի հնագոյն քաղաքաց Իտալիոյ, նա և քան զՀռովմ իսկ։ կարի ընդարձակ և յառաջադէմ հաղորդութեամբն ընդ վենետկոյ և ընդ Միլանոյ։ Նշանաւոր է ի նմա համալսարանին զոր կառոյց Պալլադիոն Թանդարանաւ բնական պատմութեան և բնագիտական գործոց, և գիտանոց։ հասարակաց ժողովարան դահլիճ մեծ Թեղաս քան զքնաւս յորում կայ յիշատակաց արձան Տիտոսի Լիվիոսի որ ծնաւ ի Բատուա։ ուխտատեղի եկեղեցի Ս. Անտոնի հոյակապ և ճոխ զարդուք և գանձարանաւ։ եկեղեցի Ս. Ցուստինեայ պանդխտի Ճարտարապետութեամբ, որոյ հանդէպ կայ հրապարակ մեծ իրագոյ տեսլեամբ վաղէն անուանեալ, յորում վտակն Պադդիլիոն մանր առնու և ընդոստ երկուքի անդրկը. կամուրջ մի երկաթի, Բեատրդէլ տուն քաջիւէ, պալատք Ճոխից ոմանց, և այլն։ կայ ի Բատուա ուսուցչարան կղերաց, մատենադարան, մարզպատուն, Ճեմարան գիտութեանց, պրուէստից և դպրութեանց, վարժարան բժշկութեան անանց. պարտէզք բուսաբանութեան և անասնական։ Ոչ է ի վաճառականութենէն և ի Ճարտարութեան չեմնեալ. են նորա ջրանցք որ հաղորդեն զՊադդիլիոն ընդ Աճէձէ և Պրենդայ։ Բն. 45,000։

1072. Նշանաւոր են ի սահմանս Բատուայ Ասպանդ և Պագալիա գեօղք վասն ջերմային և պաղալիա գեօղք վասն ջերմային և բաղնեաց։ — Ազրգուա, յորում գերեզման Բեդրարքայ։ — Գադայոյ, դղեակ փոքրիկ հուսկ ի Պադուա, յորում նշանաւոր է Թանդարանն հնութեանց դբսին Մոտենայ, և այլն։

Էսթէ (Este)։ — Քաղաք վաղեմի, բնակութիւն տոհմին Էսթոյ, յորմէ ծագէցան դուքք Մոտենայ, Ֆերրարայ և Պրունզվիքայ։ Բն. 9,000։

1073. Գ. ԳԱՒԱՌՈՒ ՌՈՎԻԳՈՅ։ — Ի հարաւոյ Պատաւիոնի.

ՌՈՎԻԳՈՅ (Rovigo)։ — Գ. Ք. յափն Ասիձէդդոյ. ունի մատենադարան, մարզպատուն, ձեմարան, և վաճառականութիւն յաջող։ Բն. 9,000։

ԱԻՐԻԱ կամ Աւրիա (Adria)։ — Մի ի վաղեմի եպիսկոպոսանիստ քաղաքաց անտի Եւրոպայ, յորում կան հնութիւնք Ետրուրաց և Հռովմայեցւոց։ յանուն սորա Աէդրիական կոչեցաւ ծոցն որ պատէր զնա, և այժմ փոքրաթեք ջրերք հեռացեալ է ի նմանէ։ Բն. 10,000։

1074. Դ. ԳԱՒԱՌՈՒ ՎԵՐՈՆԱՅ — Ի հիւսիսոյ արևմտից Պատաւիոնի.

ՎԵՐՈՆԱ (Verona)։ — Գ. Ք. առ ափն Ասիձէի. հին, բարեշէն և ամուր, զոր և ևս ամրացուցին Աւստրիացիք յամին 1848 յաստատեալ սկզբ քաղաքաց, և այժմ ի սմա հաստատեալ է սեծոռ սպառազինաց և ընդհանուր տեղակալի Լոմպարտոյ և Վենետկոյ. նշանաւոր է կամուրջն Գադդէլլո-Վեդդիոյ որոյ միջին կամար լայն է յոյժ. և ձեմարանն նուագարկուոյ գեղեցկաշէն. եկեղեցիք քաղաքին ՝ի կարուք Ճարտար պատկերագանից Լոմպարտիոյ զարգարեալ են, յորոց մի է և Պողոս Վերոնացի ծնեալ ի սմին. ի հրապարակս երևելի է Գոթոյ յորում կան հոյակապ շինուածք, հրապարակն Աւագաց յորում կառուցեալ է մեծ ժողովարանն ուր պահին նկարք Ճարտարաց և անդրկք կառուցվոյ, պինիսոի երկոցուս, Վարորւիոսի, Պ. Նեպոսի, որ վերոնացիք են. ատ ծնաւ և Սան Միքելի Ճարտարապետ և զարգարեաց զՎայրենիս իւր։ Պրա՛ ուր կայ ամփիթէատրոն քարաշէն անաղաղաղ Ճեպեալ յաւուրց անտի Դոմիտիանոսի, 24,000 մարդկան կարեն կալ ի նմա. լիրիսի Սպալիէրեաց, և Գաւեայ տոհմին. ձեմարանք և վարժարանք, ճեպեհոն հնութեանց, և այլն։ Ունի վերոնա ձեռագործս և վաճառականութիւն ընդ Գերմանիոյ։ Բն. 52,000։

1075. Աւրճոլի և Ռիվոլի (Arcoli, Rivoli)։ — Գեօղք յորս յաղթութիւն մեծ տարաւ Պոնապարդէ։

Վէսթէնա (Vestena)։ — Աւան փոքր, ուր գտանին քարագեալ ժժմակք և ձկունք հնացուցիչք բնաղինաց։ — Ընդ մէջ Բրուն և Գան գեօղիկ կայ անձեռագործ կամուրջն Վէյա։

Լեննեկոռ (Legnago)։ — Նաւահանգիստ յաջող առ Աթեձէ գետով։ Բն. 10,000։

Ինֆոֆֆի (Incaffi)։ — Գեօղ, ուր նշանաւոր է ուխտատեղի Տիրամօղն Գորոնա անուն յափափայլերին, և տուն Ֆրացասգորոյ քերդողի։

1076. Ե. ԳԱՒԱՌՈՒ ՎԻՉԵՆՑԱ. — Ի հիւսիսոյ Վերոնայ.

ՎԻՉԵՆՑԱ (Vicenza, Վիճենիոա)։ — Գ. Ք. վաղեմի, կարևոր վասն մեսոպաի գործարանացն. բազմաՀ են ի սմա հոյակապ շինուածք Պալլադիոյի որ ասա ծնաւ. զոր օրինակ՝ ապաթանք գատաստրին, Թատրն ոլիմպեան, դուռն մի քաղաքին որ կոչի Ձէմպլին գեղազարդեալ. պրատքոյ քաղաքին կայ մենաստան Տիրամօր ի լերին (Madonna del Monte) ուր հանեն սանդուխք 195 ըստնարձակ աստիճանօք, խորհրդարարի քարաշէն կամարօք, ասա ի 1848 բանեցան Թաւշագիք ընդ Աւստրիացիս. կայ լիճկան մի, երկու մարզանոց և մատենադարան մի ի վերնեցաս. գեղեցիկ է և գործատարան։ Բն. 32,000։

1077. Պասսսանո (Bassano)։ — Գեղեցկագիր քա-

ղաք փոքրիկ առ եզր Պրենտայ, ունի մարզատուն, պարտէզ մնկաբանութեան, Թանգարան հանքաբանութեան · հայրենիք Պասսանոյ քաջի նկարչի : Բնա. կիչք 10.000 :

Ռէֆ՝՝ոյ (Recoaro) · — Աւան մեծ, ունի ջերմաջուրս բժշկական :

Ի գաւառս Վիրոնայ և Վիչենցայ 90,000 Գերմանացիք բնակեն :

1078 · Զ· ԳԱՒԱՌ ԴՐԵԻԶ · — Ցարևելս լակողմն Վիչենցայ :

ԴՐԵԻԶ (Treviso, Տարվիսիոն) · — Գ· Ք· ունի գործարանս չուխայի, կաուշուց, սեկի, Թղթոյ և վաճառականութիւն բարւոք· գրատուն մի և աթենէոն, մարզատուն, ուսուցիչարան հղեղաց : Երկաթուղեաւ յարեալ է քաղաքս ընդ Վենետկոյ : Բն · 19.000 :

Չէննեդա (Ceneda) · — Քաղաք եպիսկոպոսանիստ· ասոի ձգի շաւիղն Նորաչէն հատեալ անցեալ ընդ լերինս և ընդ ձորս : Բն · 5,000 :

Ազոլոց (Azolo) · — Քաղաք փոքրիկ բարեգիր յոյժ, առ որով կայ Պարգոյ գիւղ և ի նմա մասունք ինչ գղեկի Կատարինեայ Գոռնարայ դշխոյին Կիպրոսի : Բն · 4,000 :

Բոսսանէոյ (Possagno) · — Գեօղ անուանի, ղի Գանովա անդրիագործ ծնաւ ի նմա և կառոյց հոյակապ տաճար ըսլորչի :

Գաստելֆրանգոց (Castelfranco) · — Վաճառաշահ քաղաք փոքրիկ, հայրենիք Ճիորձիոնէ նկարչի : Աստ հարին Գաղղիացիք զԱւստրիացիս յամին 1805 : Բնա. կիչք 4,000 :

1079 · Ե· ԳԱՒԱՌ ՊԵԼԼՈՒՆ · — Ի հիւսիսի Դրեւիզայ :

ՊԵԼԼՈՒՆ (Belluno) · — Գ· Ք· որոյ ի սահմանս են հանքք Ակորտոյ· Հայրենիք է քաղաքս քահանայապետին Գրիգորի ԺԳ· : Բն · 11,000 :

Ուրռոյ (Auronzo) · — Աւան · ունի հանք զենկի և անտառ եղևնեայց բարձանց՝ ոտս 150, հնգամեայ չրջաբերութեամբ : Բն · 3,000 :

Ֆելտրէ (Feltre) · — Քաղաք փոքրիկ · յոտս լերանց, ունի ուսուցիչարան եպիսկոպոսական : Բնակիչք 4,000 :

1080 · Ը· ԳԱՒԱՌ ՈՒՏԻՆԷ · — Ցարևելս Պելլունոյ և Դրեւիզոյ :

ՈՒՏԻՆԷ (Udine) · — Գ· Ք· բարեշէն, յառաջ նուին մայրաքաղաք Ֆրիուլոյ· ունի գործարանս կաուշուց, մետաքսի, ձեմարան երկրագործութեան, լիկէոն և այլ խնամատիրական ընկերութիւնս : Բնակիչք 23,000 : Ցամին 1848 նախմիր բաղում գործեցաւ ի սմա յապստամբութենն և յառմանն Աւստրիացւոց :

Գոմբո-Ֆորմիո (Campo-Formio) · — Գեօղ, յորում եգան պայմանք հաշտութեան ընդ Գաղղիա և Աւստրիա յամին 1797 :

Չուդատալէ (Cividale, Ֆորում Իուլիի) · — Գտանին ի նմա հնութիւնք հռովմայեցիք, միւսիոնք և գրամք և զենք և կահ բաղում· Բն · 2,500 :

Ի վիճակին Ուտինէի և Պելլունոյ անձրևէ յաճախ և յորդ, որպէս թէ ոչ ուրեք յԵւրոպա հաւասար նմին :



Դ. ԴՔՍՈՒԹԻՒՆ ԲԱՐՄԱՅ

1081. Աշխարհի դքսութեանս են Պարտենիա, Լումպարթիա և Մոտենա. իբր 250 փարսախ քառակուսի է տարածութեան նորին, և 500.000 բնակիչ. ընդ Բարմայի միացեալ է և դքսութիւն Բիաչենցայ։

Գետք որ անցանեն ընդ Բարմայ են Պադու, Դրեպպիա, Դարոյ և Բարմա. բարեբեր է երկիրն, սակայն մշակութիւն և Ճարտարութիւն ծաղիկ միայն ի գաւառս որ սահմանակից են Աւստրիոյ կալուածոյն։

1082. Բազքք Բարմայ յետ անկման Հռովմայեցւոց պետութեանն երբեմն ի ձեռս Գերմանացւոց, երբեմն յաղատութեան և երբեմն ի ձեռս դքսից Միլանու և Մոտենայ կացեալ, ի ԺԲ. դարու ի ձեռն Ցուլիոսի Գ հաստատեցան ի դքսութիւն մի, որ և տևեաց ՅԾԸ. դար ի տոհմի անդ Ցուլիոյ. ապա ժառանգութեամբ էանց առ Սպանիացիս և յետոյ առ Աւստրիացիս, իսկ ի 1814 Փրանկիսկոս ինքնակալ Աւստրիոյ եա զայն դաեր իւրում Մարիամու Լուիզայ կնոջ նա. բոլէոնի. եդեալ պայման զի ի մեռանել նորին՝ տացի անդրէն առ սպանիացի տոհմն դքսից Լուդդայ և կալուած սոցա անցցէ առ Դոսկանացիս. ի մեռա. նել Մարիամու Լուիզայ յամին 1847 (17 դեկտ.) դուքսն Լուդդայ կարգելոս Լուդովիկոս Բ եա զդքսութիւն իւր ի դուքսն Դոսկանայ և ինքն ստացաւ զԲարմա. այլ յետ ամաց ինչ ի սկիզբն 1848 ամին տոհպեալ ի ժողովրդենէն հրատարակեաց նոր օրէնս սահմանադրականս, ոչ ըստ կամաց նոցա, վասն որոյ և խոյս ետ հրաժարեալ յիշխանութենէն և Թողեալ յորդի իւր Փերդինանտոս կարգելոս Գ, որ և արդ տիրէ։

1083. Հասք պետութեանն են իբր 9 միլիոն ֆր. նոյնչափ և ծախք. պարտք 5 միլիոն. զօրականք 7636։

Ի հինգ դաւառս բաժանի դքսութիւնն, որք են Բարմա, Բիաչենցա, Պորկոյ Սան Տոնինոյ, Վալ տի Դարոյ և Լունիճիանա։

1084. ԲԱՐՄԱ (Parma). — Մայրաքաղաք առ համանուն գետոյնի, ունի համալսարան հիմնեալ ի 1423, վարժարան ազնուականաց, ճեմարան արուեստից, մատենադարան դքսին՝ յորում հաւաքուն հրեական գրոց. եկեղեցիս Ճոխս ընտիր նկարուք ականաւոր պատկերահանից, որպիսի ոք են Դոմրեճիոյ և Մացցուոլոյ. պալատն Ֆառնեզեան տոհմին՝ յորմէ էր Ցուլիոս Գ պապ, և Թէատրոն մի ի նմա մեծ քան զամենայն Թէատրոնս Խալիոյ. ունի ճեռագործս մետաքսի, և գեղեցիկ պարտէզս շուրջանակի. ի Բարմա անուանի է գրանցն Պոտոնի, որ ունի տառս 155 լեզուաց։ Բն. 42,000։

1085. ՊԻՃԶԵՆՑԱ (Piacenza, որ Թարգմանի Հաճուելին). — Կա Պադոսի. քաղաք բարեչէն բայց ամայի. ի միջնաբերդին նստին պահապանք Աւստրիացիք. ունի մատենադարան մի, պարտէզ բուսաբանութեան, լիկէոն, ուսուցիչարան կղերաց։ Բնակիք 32,000։

ՖԻՐԵՆՑՈՒՈԼԱ (Firenzuola). — Քաղաք փոքրիկ առ որով յայտնեցան նշխարք Վէրկէյայ հռովմկական քաղաքի կործանելոյ ի սասանութենէ հրաբղխից։

ՍԱՆ ՏՈՆՈՒՈ (San Donino). — Գիւղաւոր քաղաք համանուն գաւառին։ Բն. 4,000։

ՊՈՆՏՐԵՄՈԼԻ (Pontremoli). — Գիւղաւոր քաղաք Լունիճիանայ, եպիսկոպոսանիստ։ Բն. 3,500։



Ե. ԴՔՍՈՒԹԻՒՆ ՄՈՏԵՆԱՅ

1086. Մոտենա ունի իւր սահմանս զհարաւ, ըզ Լամպարտիա, զվ.ինչա եկեղեցւոյ, և զԻոսկանա. մասունք պետութեանս այսորիկ են և Ռեջճիոյ և Միրանտոլա գքաղաքիկ հանգերձ այլովք փոքր ևս. խանութեամբք. որոց միասին ամբարձութիւն է իբր 300 փարասս □։ Պահս գետ անցանէ ըզ սահմանսք Մոտենայ, իսկ ի գաւառսն հոսեն Գրոս. դոլըց, Սեգդիա և Բանարոյ, ամենեքին ոչքա խառ. նին ի Բոյ՝ որ է Պադոս, կայ և լճակ մի ի Մոտենա Սուրբ (Lago Santo) կոչեցեալ։ Արգասաբեր է հողն. մշակութիւն այգեաց, դարմանն անասնոց և չերմոյ կարի ծաղկեալ. և քարհանք գոն ի սահմանս Մասայ և Գարրարայ։

1087. Չգքաղաքիսս զայս հաստատեցին իշխանք Էգայ առհմին որ յառաջագոյն Մոտենայի լսելոյ տեառք էին. զվերջինն պայազատ նոցին Կարոլոսն մեծ Ժեալ յիշխանութենէ՝ զաշխարհ նորին խառնեաց ի նոր թագաւորութիւնն Իտալիոյ. այլ ի 1814 հասատեցաւ գարձեալ առաջին կարգն, մինչև ցամին 1847, յորում ի հրաժարել գքսին Լուգգայի յիշխանութենէն երկրին իւրոյ Ֆիլիպցանոյ գաւառ յաձեալ ի Մոտենա. և ի միանալ գքաղաքսդ Բարմայ՝ Կոլատալլա գաւառ նորին խառնեցաւ ի Մոտենա, և վճակք սորա Վիլլաֆրանգա, Դրեսդեդգոյ, Գասգեոլդի և Մուլազցա՝ տուան բարմայի. ի սկիզբն 1848 ամին ի խառնիլ Իտալիոյ բաղուածք ի գաւառաց Մոտենայ՝ մեռն Եւտն միանալ ընդ Դոմկանայ, և բնին Մոտենա ընդ Սարտենիոյ. խոյս ետ գոքսն Մոտենայ, այլ օգնութեամբ Աւստրիացւոց նուաճեալ զնովաթարս հաստատուաց զառաջին կարգն, միապետական վարչութեամբ։

1088. Թիւ Ժողովրդեան Մոտենայ համարի 600,000. զբակաւք 3,500, և 14,656 պահապան գունդն։ — Հասք և ծախք իբր 8,500,000 ֆր։

1089. Ցեղերն գաւառս բաժնի Մոտենա, որք են, հանգերձ Թուով բնակչաց յամին 1850.

Գաւառք	Բնակիչք
Մոտենա	204,491
Ռեջճիոյ	161,646
Կոլատալլա	50,859
Ֆրինեսանոյ	57,450
Կարֆանեանա	37,897
Մասսա-Գարրարա	56,867
Լունեձիանա	17,248
	586,458

1090. Մոտենա (Modena). — Մայրաքաղաք ընդ մէջ Սեգդիայ և Բանարոյ, ընդ գեղեցիկ քաղաքս Խաղիոյ գասի. նշանաւոր է պալատ գքսին ընծիր Ճարտարապետութեամբ, յորում կան նկարք Ճարտարաց և պարտէզք բոլորին զնովաւ. մայր եկեղեցին գոթացի և լսմպարտացի ոճով չինեալ ի ԺԱ դարու, ունի աշտարակ մի կիրլանթինա անուանեալ, յորում պահի Դոլըն առեալ ի Պոլոնիացւոց, զորմէ Դասատնի գրեաց գքէրգուասն մեծ Դոլ յափշտակեալ (La secchia rapita). ունի Մոտենա համալսարան, վարժարան ազնուականաց, Ճեմարան գեղարուեստից, գոլոց բժշկութեան անանոց, ընկերութիւն իմաստնոց։ Բն. 30,000։

1091. Ռեջճիոյ (Reggio). — Գլխաւոր քաղաք հին գքսութեան Ռեջճիոյ, բարուք է վաճառականութիւն նորին և Ճարտարութիւն. ասա ծնաւ մեծ բանաստեղծն Արիոստոյ յամին 1474։ Բն. 20,000։

Գառրարա (Carrara). — Գաղաք փոքրիկ, ունի Ճեմարան արձանագործութեան. ի սահմանս սորին կայ անուանի քարահատ սպիտակ մարմարիոնի, յորմէ մեր բան ամէ բանեան նուտ հարիւր։ Բն. 9,000։

Մասսա (Massa). — Հուպ ի ծով, և սա ունի քարահատ մարմարիոնի, Ճեմարան արձանագործութեան և նկարչութեան. Մասսա մայրաքաղաք էր Համանուն գքսութեանն։ Բն. 10,000։

Միրանտոլա (Mirandola). — Ամուր քաղաք և յառաջադէմ ի Ճարտարութեան։ Բն. 6,000։

Գանոսսա (Canossa). — Գեղ փոքրիկ, ուր Լամբերտ գՀոյ և կոմսուհին Մաթիլա ապաստանեցան, Նոյնպէս և Գրիգոր Ե։

Կուաստալլա (Guastalla). — Քաղաք գեղեցիկ։ Բն. 6,000։



ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ

ԴՈՄԿԱՆԱՅ

1093. Հիւսիսոյն և յարևելից սահմանք են մեծի դքսութեանս՝ Մոսկուա և Վլատիմիր, ի հարաւոյ և յարևմտից՝ Ծոլը Մինքրիական. տարածութիւն երկրին է 6,420 մղոն □։ Կլիմային քաղցրութիւն և երկրին արգասաւորութիւն, ընակչացն ժրութիւն բարեբասխիկ գործեն զսերբութիւնս։

1094. Գետք նորին են Ռանոյ և Օմպոն, իսկ Տիեբրիս և Բալիս բղխեն ի սմա. զՌանոյ հաղորդէ ընդ Տիեբրիսի ջրանցքն ի Գիանա գետակէ գործեալ, և հոսէ Ռանոյ և ի Գիւոզի ընդ գնայ ի Բալիս։

Հիւսիսային և արևելեան մասն երկրին վիճակեալ է բազում բարեմասնութեան, արգաւանդաճոյ և լեռնալայր գոլով. արևմտեանն և հարաւային անբեր, և օդք անառողջ վասն բազում մերկութ և աղտաղտին ծովափանց. բերրի վիճակքն ունին զանձնայն ազգ բերոյ խոպչոյ, յերկերս Ռանոյ լինի ցորեանն, որոյ յարդիւ շինեն զկերենսեանն անուանեալ գԼեխարկ։ Գաղղիկոնի լիձն՝ որոյ ափունք ապականեն զդէզ, հինգ փարսախ ունի զերկայնութիւնն. ի 1829 ամ և այսր ձեռն արկեալ է ցամաքեցուցանել զձախին վարան, և ածել զջուր Օմպրոնայ. լիձքն Գիւոզի և Բուզլիանոյ լերին ի մի համարին. բաց յայսցանէ կան և այլ բազում ջրանցք և ագուցաչք։ Մշակութիւն, դարման հաւոյ և չերամոյ և ձեռագործք մեսաքի ծաղկեալ են ի Դոսկանա։

1095. Դոսկանա կամ Տոսկանա ի հնումն Եթրուբիա անուաներ, և ծաղկեր նախ քան զՀռոմ. ընդ որոշ միացեալ՝ ընորին կրեաց և զանց մինչև Լոմպարտացիք տիրեցին նմին, և արարին զայն իւրեանց գաւառ. Տոսկիա անուանեալ։ Կարծեսս Մեծն ընդ Լոմպարտիոյ գրաւեալ ունէր և զսա, և կայսերք Գերմանիոյ կոչեցին ի սմա սահմանակալս և գոքսոս. բայց վերջ ի ժԲ դարուն բարգաւաճեալ քաղաքաց նորին և առաւելապէս Փլորինտիոյ, Բիզայ և Սիենայ, ըստ որինակի լոմպարտեան քաղաքացն ի ձեռս բերին զազատութիւն, և յաղթեալ ամենայն գժուարութեանց որ ի հակառակութենէ քաղաքացեաց, ի կառոյց կիսիշխանաց ընդ կուռչիեանս և ի նահանգուհ ազատ քաղաքաց, պահեցին զազատութիւնն զայն և տիրեցին ևս ի վերայ այլոց քաղաքաց, և ի ԺՃ դարուս հաստատեալ դաշն միաբանութեան ընդ միմեանս՝ նուաճեցին զամենայն երկիր հնոյն Եթրուրիոյ. բայց սակայն ընտանի խառնիք ոչ սակաս արգել լինէին բարգաւաճանաց հասարակապետութեանն. տոհմն Մեդիկեան յղփացեալ վաճառականութեան արգասեաք՝ ձեռնարկեց լինել յիրս վարչութեան, եչանաք նորին կոչեցին պաշտօնակիսք կամ վարիչք տերութեանն, մինչև Կոզմոս և հառ յինքնակալէն զգքսութեան անուն ի 1531. յայնմ հետէ եկաց յիշխանութեան անդ Մեդիկեան կամ Մէմիչի զարմն. ի 1737 ի սպառել արու զաւակի տուաւ պետութիւնս Փրանկիսկոսի գքսին Լորենայ որ ապա կայսր կացեալ Գերմանիոյ՝ խառնեաց ընտրութիւս յԱւստրիա։ Նաբոլէոն Թագաւորութեան չքով ետ զնորութիւս ի տուն Սպանիացւոց որ տիրեին Բարմայ. ի 1807 եղև գաւառ Գաղղիոյ, բայց Նաբոլէոն յետ ամաց երկուց ապատ արար զնա յոտից լծոյ և գքսոյր իւր զնմին կարգեաց գքսուհի։ Իսկ ի 1814 վճռեցաւ զի լինիցի նա ժառանգութիւն այնր արշիգքսի Աւստրիոյ՝ որոյ մայ անցանէ ի գահ ինքնակալին Լեռ անժառանգ մեռանիցի նա։


Ի վերջ կոյս 1847 ամին (11 հոկտ.) գքսութիւնն Լուքգաց ըստ վճռոյ ժողովոյն Վիեննայ (1815) և Բարիզու (1817) խառնեցաւ ընդ Դոսկանայ, և վիճակք ինչ սորա՝ տուան Մոսենայ։ Ի խլրտման խաղից՝ ի միւսում ամին՝ հրատարակեցան և ի Դոսկանա, սահմանագրական օրինք (15 փետր.) կրկին խորհրդարանօք, ծերակուտիւն և 86 նուիրակօք ժողովրդեան. և հաստատ կան այս օրինք այժմ, Թէպէտ ի խառնութենան անդ ձգնեցան սկսաւ պետութիւն հասատարել կամ ընդ Սարտինիոյ միաբանել, և խոյս ետ գոքսն առ վայր մի, և ապա դարձ արար օժանդակեալ յԱւստրիացւոց։

1096. Հասք պետութենան են 26 միլիոն փր. ծախք այժմ առաւել քան զայն։ Զօրականք 12,400 հանգերձ ծովամարտիք։ Նաւք վաճառարարք 780. և չորեներս մի պատերազմական։

Նօթին գաւառք են Դոսկանայ և երկու կուսակալութիւնք · և են այսոքիկ հանդերձ Թուով բնակչաց ի սկիզբն 1852 ամին ։

Գաւառք	Բնակիչք
Ֆիորենցա	594.629
Լուգգա	204.904
Բիզա	224.390
Սիէննա	184.840
Արեզցոյ	216.422
Բիւգոյա	153.331
Լիվոռնոյ	76.697
Էլպա	84.907
Կղզիք	21.020
	1.761.140

1097 · Ա · ԳԱՒԱՌ ՓԼՈՐԵՆՏԻԱ · ՖԻՈՐԵՆՑԻ կամ ՓԼՈՐԵՆՏԻԱ (Fiorenza) · — Ցաւ փուռն Առնոյ · մայրաքաղաք գեղջկի յոյժ , ըստ անուանն՝ որ Ծաղկաքեղ Թարգմանի · հոյակապ շինք յորմէ են ի նմա , և նշանաւորք՝ հին պալատն բնակուԹիւն դքսից , յորոյ ի մուտս կան հսկայանման անդրիք Հերակլէայ և ԴաւԹի , զմին գործեաց Պանտոլինելի , զմիւսն Միքէլանձէլոյ · պալատ պաշտօնակալաց , յորում կան երեւելի Ճարտարաց պատկերք և հնուԹեանց հաւաքուած , Մեդիկեան անուանեալ Աստղիկն , արձանն Վիրգէի՝ զոր յաբբէ յառաչին պալատն՝ կամարակապ սրահակ 600 ոտնաչափ երկայն , պարզունակ և մեծաչէն · սա է բնա-



Ֆիորենցա

կուԹիւն այժմեան դքսին , և նշանաւորն՝ ի նմա պատկերք և արձանք , որպէս և պատկեր Տիրամօրն նկարեալ ի Ռաֆայէլէ · մուԶեան բնական պատմուԹեան · Թատրն Բերկոլա , անկեղանոյն Ս · Մարիամ Նոր , Պանդիֆաչոյ , և այլն : Ի քաղաքս և հոյակապ եկեղեցիս Փլորենտիոյ գլխաւորք են Կաթետրկէն Ս · Մարիամ Ծաղկանց (Santa Maria del Fiore) ասացեալ , չինեալ ղամս 154 , զոր սկսաւ յաւագն ԱԻ դարուն Առնոլֆոս Լաթոյ Ճարտարապետ , հանակ մարմարիոնեայ , գմբեԹն ուԶանկիւնի 400 ոտնաչափ բարձր չինած է Պրունելլեսքեայ , և նոյնքին տաճարին արձանք և նկարուք պճնեալ է , մկրատարան Ճարտարգործ է յոյժ · յանուն այսր տաճարի քաղաքն կոչեցաւ Ֆլորենցա · եկեղեցւոջ Ս · Լաւրենտիոսի կայ գերեզման Կոզմոսի Մեդիկեան որ պայծառացոյցն զառիմ

իւր , կայ և մատուռն մի՝ի սմին՝ յորում են գամբանք այլոց Մեդիկեանց , Ճոխ և Ճարտար արուեստիւ Գերագեալ , վասն որոյ և կոչի Չարմանալիք Դոսկանայ , և յայլում մասին կան ուԶ անդրիք գործեալք ի Միքէլանձէլոյէ · Եկեղեցւոջ Ս · Խաչին , որ գեղով երկրորդ է յետ մայր եկեղեցւոյն , կան հոյակապ շիրիմք Միքէլանձէլոյ , Մագիավելլեայ , Գալիլէոսի , Վիվիանեայ , Ալֆիէրեայ , Տանդէի , Պրունի Արեզնոյ · գեղեցիկ են և եկեղեցիք Ս · Հոգւոյն և Աւետման : Չորք կամարքք են՝ի վերայ Առնոյն որ յերկուս հատանէ զքաղաքն : — Ի հրապարակին նշանաւոր է հրապարակ Դքսին՝ յորում կայ անդրի հեԹենական պատկեր Կոզմոսի Ա , հրապարակն Աւետման զարդարեալ կամարօք և անդրեաւ փերմինանտոսի Ա · հրապարակն Նոր Ս · Մարիամու , յորում կան կոԹողք կրկին , առ որովք ամի ամի առնեն ձիրնԹացս ըստ նախնեաց օրինի : ՀեԹանիք զբօսանաց փլորենտինոյ են՝ պարտէզն Պոպոլոյի գեղեցիկ քան զբազում պարտէզս Խոտոյոյ , գեռատունք Առնոյ , կասինեան ՀեԹանիք , և այլք : — Ի հասարակաց շինուածս երեւելի են համալսարանն՝ ի ԺԸ դարու հիմնեալ , ՀեԹանոսն Գրուագպոյ որ հրատարակեաց զանուանի բառագիրս իտալական լեզուի , գիտանոց , բուսաբանուԹեան պարտէզ , ՀեԹանոսն գեղարուեստից , ընկերուԹիւն տղեւոլոգիական , բարեպաշտիկ գաւրուգք (Scuole pie) , ընկերուԹիւնն Գալլամպրիա , մատենադարանն Մալիապեկգի՝ յորում կան 150.000 հատոր գրոց և 15.000 ձեռագրիք , Լաւրենցիանա գրատուն Մեդիկեանց 120.000 տպեալ , և 9.000 ձեռագիր մատենիք , Թանգարան բնական պատմուԹեան , Թանգարան Փլորենտեան , և այլն : ՎաճառականուԹիւն և ՃարտարուԹիւն մեծ է քաղաքս ի գործուածս մետաքսի : Ասա ծնան Ջանգէ , Մագիավելլի , Էգնատոյ տա Վինչի , Գալիլէոս , Պրունելլեսքի , և այլն · Բն · 115.000 ·

1098 · Շրջակայ վայրք Փլորենտիոյ գեղեցկուԹեամբ անուանի են և յԻտալիա իսկ , գեօղք և պալատք , մինաստանք և ամարաստանք , գրասք և ծաղկոցք , բլուրք և հովիտք զուարճալի յոյժ գործեն տեսարանս ազգիազգիս :

ԲՐԱՏՈԼԻՆՈ (Pratolino) · — Ի սմա է գերահռչակ պարտէզն ուր ամբառնայր ամարանոցն Պանգպայ Գաբելլոյ սինիորք · կայ ի նմա վիԹխարի արձան պատկերեալ վշակնին լերինս :

ՖԻԵԶՈԼԷ (Fiesole) · — Եպիսկոպոսանիստ քաղաք , ունի հնուԹիւնս հռովմայեցիս :

ԲՐԱՏՈ (Prato) · — Անուանի ՃարտարուԹեամբ յարուեստս , վասն որոյ և Մէնչքաթը Դոսկանայ կոչեցաւ · Նշանաւոր է մայր եկեղեցի սորին և ԲեԹգրագիան ՀեԹարանն : Բն · 12.000 ·

1099 · Բ · ԳԱՒԱՌ ԲԻՈՊՈՑԱ · — Ցաւրեայ համանուն քաղաք

ԲԻՈՊՈՑԻ (Pistoja) · — Վաղեմի և բարեշէն առ Օմպրոնայ , ունի մեծաչէն մայր եկեղեցի , գործբան երգեհոնի , յոռվայի , զինուց , և այլն : Բնակիչք 13.000 · ԵրկաԹուղեաւ հաղորդի ընդ մայրաքաղաքին :

ՎՈԼՏԵՐՐԱ (Volterra) · — Քաղաք հին , գառնին ի

Նմա Եարուբացի հնուԹիւնք, ունի քարահատս ալաւ պատգրի, և աղբիւր ասկերպակի, որ միակ է յԵւրոպա։

1100· Գ· ԳԱԻԱՒՈ ԱՐԵՑՑՈՑ· — Ցուրտ է մի ի վաղումի քաղաքաց Եարուբիոյ այժմեանս

ԱՐԵՑՑՈՑ (Arezzo)· — Գ· Ք· առ Գիամայ, Նշանաւոր է մայր եկեղեցին. ասա ծնան Բեդարքա ի 1304, Աբեզցոյ, և Բէսի ի 1626։ Բն· 12,000։

ԳՈՐԴՈՒԱ և ԳԻՈՒԶԻ (Cortona, Chiusi)· — Ք· ղաքաք մանունք յորս գտանին հնուԹիւնք Եարուբաց։ Բն· 5,000 և 3,000։

ՄՈՒԼԻ– ԲՈՒԼՉԻՒՆՈ (Monte–Pulciano)· — Ունի գիՒԷա այգիս։ Բն· 2,000։

1101· Դ· ԳԱԻԱՒ ՍԻԵՆԱ· — Ճախնային և սակաւամարդ։

ՍԻԵՆԱ (Siena)· — Գ· Ք· արքեպիսկոպոսա. Նիսա, ի վերայ երից բլրոց կառուցեալ ի բարւոք և զուարճագեղ վայրի, յառաջնումն մայրաքաղաք էր համանուն հասարակապետութեանն նախամեծարգ փլորենթիոյ, որպէս և հոյակապ չէնք նորին վկայեն. մայր եկեղեցին գոԹացի Ճարտարպետութեամբ. Ճոխ է զարդուք առաւել քան զամենայն եկեղեցիս յետ Մեղանուն. հասարակաց գրադարանն, աղբիւրն Պրանտա, Թատրն և բազում պալատք, և հրապարակն կիսաբոլոր ձեով ըստ նմանութեան գաղտակրի գեղեցկազարդ յոյժ. կայ ի Սիենա համալսարան հին, ձեմարան գիտութեանց, վարժարան աղուեսականաց, ձեմարան գեղարուեստից, մատենագարան, գործարան չուխայի։ Բարբառ Սիենացւոց համարի լաւագոյն քան զամենայն իտալացւոց։ Բնակիչք յառաջն 100.000, այժմ 30.000· բայց վերսոին քարգաւաճէ քաղաքս երկաթի չուղղէն։

1102· Ե· ԳԱԻԱՒՈ ԿՐՈՍՍԵԴՈՑ·

ԿՐՈՍՍԵԴՈՑ (Grossetto)· — Գ· Ք· ունի գիւղիս մերս և ազահանս· աԹոռ է եպիսկոպոսի· Նշանաւոր են մայր եկեղեցին, կղերիկոսարանն։ Բն· 3,500։

1103· Զ· ԳԱԻԱՒՈ ԲԻԶԱ·

ԲԻԶԱ (Pisa)· — Գ· Ք· յարեւմս Ազնոյ ի Ճախնային վայրի· Ի միջին դարու էր սորա ուրոյն հասարակապետութիւն, որ առաքիր և գաղԹականս յԱխա. բայց վասն բազում մարտից ընդ ԿուԷլփեանս և վասն խառնուԹեան իշխանաց իւրեանց՝ անկան ի զորուԹիւնէ և ի ՃԺ դարու ապաւինեցան ի պաշտպանուԹիւն Միլանեայ։ Ի ԺԵ դարու օդնուԹեամբ Կարոլոսի Ը արքային Գաղղիոյ՝ ի ձեռս բերին Բիզայ ձեզ զազատուԹիւն իւրեանց· այլ դարձեալ սակսեցան մարտնչել ընդ Փլորենտացւոց, որոյ ձեռնտու էր և Լուդովիկոս ԺԲ, և զԻնի տանուամբայ մարտին մանեցաւ Բիզա ի ձեռս Թշնամեացն Նեղեալ ի սովոյ· յայնմ հետէ Նուազեցան բնակիչք նորին և ամայացաւ քաղաքն· բնակիչն եղև Նաւահանգիստ նորին, և Ճոպեին յատակեալ գետափունք Ազնոյն հոյակապ պալատաք։ Մայր եկեղեցին բիւզանդացի Ճարտարպետութեամբ չինեալ ի ԺԱ դարու, կամարս և պրոիլիւր սեամբք և գեղեցիկ նկարուք Մարդոյ Ամէնդրեասոյ նկարչի զարգարեալ է, և գեղեցիկ է մկրտարանն, անուանի է յատկեա աշտարակ զանգակացն նորին Ճարտարարուեստ բոլորչի մարմարիոնե վիՒեալ գարեալ եօԹնկարգեան սեամբք, և սանդուխք նորին պաՒնչելարուեստ են, և է նշանաւոր վասն կորուԹեան 15 ոտնաչափ տարակաց գոլով ուղղուԹեան գագաԹանն ի խարխեն· բարձր է 180 ոտնաչափ· ի տեսլենէ սորին իմաստասիրեալ եգիտ Գալիլէոս զՒափ ժամանակի անկման մարմնոց· Նշանաւոր է և ընդարձակ գերեզմանատունն (Campo Santo) և գուռն նորա մարմարիոնեայ զարգարեալ գրուագք Միքելանձէլոյի, Ճիոդոյի, ՊուՃամագոյի և այլոց· Տող գերեզմանացն բերեալ է ի Պաղեստինոյ յամին 1228։ Ընդամէն է և համալսարանն վաղեմի, համալսական Ճեմարանն, յորում վարժարանք, մատենադարան, Թանգարան բնական պատմուԹեան, գիտացողաց, պարտէզ բուսաբանուԹեան, գործարան արուեստաՒէն Ծաղկաց։ Ասա ծնաւ Գալիլէոս ի 1564։ Ի սահմանս Սիենայ յաւուրց անտի խաչակիր զորագ պահէն երամակ մի ուղտուց։ Բն· 25,000։ — Ցոփին Ս· Ցուլիանոս լերին կան ջերմուՒեքն Բիզայի։

1104· Ե· ԳԱԻԱՒՈ ԼՈՒԿԱՑ· — Սա ի հնումն ման էր Եարուբիոյ, ապա կայսերք Գերմանիոյ իբրև զընիկ ժառանգուԹիւն իւրեանց վաՃառեցին զսա բազում անգամ, մինչև ի 1370 բնակիչք նորուն գնեցին զազատուԹիւն իւրեանց ի Ս Կարոլոսէ։ Կաթուղիոն եա զսա ի տոհմակից իւր Պաչչիոդե, այլ յետ ժողովոյն Վիենայի դարձուցաւ յառաջնն տէր նորին որ յաջորդին տանէն Սպանիոյ, և յամին 1847 միացաւ ընդ Դուսկանիայ։

ԼՈՒԿԱՑԻ կամ ԼՈՒԿԱՑ (Lucca)· — Գ· Ք· գաղաք առ Սերքիոյ, ի գաղարագուարճ դաշտի, զուարճագեղ Ներքոյ և արուարձան, աԹոռ արքեպիսկոպոսի· ունի համալսարան հիմնեալ ի 1802, Ճեմարան գիտուԹեանց, լիկէան, պարտէզ անկաբանուԹեան, և այլն· մայր եկեղեցի վաղեմի, ձեռագործս միտաքի, և վաՃառականուԹիւն բարեկամ ձիոյ։ Բն· 28,000։ — Ի միում յեկեղեցւոյ քաղաքիս պատուին նշխարք Տաւինոսի ուրումն հայկազն սրբոյ, որ Թուի Դասիւի կամ Չաւեն։

Մ·ոցցանոյ (Mozzano)· — Գեղ, առ որով ի լերինս, որ ոչ ինչ կարի հեռի են ի Լուգգայ՝ կան բաղանիք, յորս նշանաւոր է Գորսենոս։

ՎԻՈՐԵՑՑՈՑ (Viareggio)· — Քաղաք փոքրիկ ծագկեալ ամենայնիւ վաՃառականուԹեամբ։ Բն· 6,000։

1105· Ը· ԿՈԻՄՈՒԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԼԻՎՈՒՈՆՑՈՑ·

ԼԻՎՈՒՈՆՑՈՑ կամ ԼԻՒՈՒՈՐՆԱ (Livorno)· — Քաղաք նոր և գեղեցիկ ի ծովեզեր Միքելրզականին հանդէպ Մէլորիա կղզեկի ազատ նաւահանգստիս և բարգաւած ի վաՃառականուԹեան քան զամենայն քաղաքս Իտալիոյ· յաղագաւորն գաշտ ուրեք կառուցեալ է և չուխի նշանաւոր ինչ չինուԹիւնս, բայց նաւահանգիստն անբոյժ, որոյ է 600 ոտնաչափ երկայն պատնէշ ամբարտակի, բերդ և կանԹեղակիր ՃրատարակՀ. Թագ մի նորին վասն բազում ջնարչեցն կոչի Նոր վենետիկ· վաՃառականաք չամենայն ազգաց յաՃախեն ի Լիվոռնոյ և ունին իբրեւ ազթեհատեղիս, և և Մահմետականք և Հրեայք՝ որոց սինագոկ

հոյակապ է յոյժ · վաճառականութիւն նորին առաւելապէս ընդ արեւելից յաջողեալ է : բն · 90.000 : Երկաթուղիք առաւել ևս բարգաւաճ կացուցանեն զքաղաքս · ցաշխեղին այսր և վաճառականք Հայոց , և գաղթական իակ հաստատեցին հանդերձ տպագրատամբ , և գեղեցիկ Ս · Գրիգոր եկեղեցեաւ , ուր և ցարդ պաշտեն մատուցանի Աստուածեան Հարց մերոյնոց : — Ցոտս լերին միոյ կայ մենաստան Մանդէ նէրոյ , ուր դնան ուխտաւորք բազումք առ հրաշագործ պատկեր Տիրամօր :


1106 · թ · ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԷԼՊԱՑ ԵՒ ԿՂԶԵԱՑ ·

ԷԼՊԱ (Elba) · — Ընդ մէջ Դոսկանայ և Կորսիկայ կղզի է 20 վարս · տարածութեամբ , 10.000 բնակչօք · անուանի է վասն անսպառ բովուց երկաթոյ , վասն ամրութեանցն , և մանաւանդ անդր բնակութեամբ Նաբոլէոնի իբրև զսաստ ամիս · Հողն ոչ է բերրի , այլ կլիմայն բարի է յոյժ · գործ բնակչացն է ձկնորսութիւն , աղահանութիւն , և բովուց վաստակ · ամի ամի միլիոն մի կենդինար երկաթոյ հանեն : Սորա գլխաւոր քաղաք է

ԲՈՐԴՈ ՖԵՐՐԱՑՈ (Porto Ferrajo) · — Աստ յապարանս կողմնակալին բնակեցաւ Նաբոլէոն : Բնակիչք 5.000 :

Բանդէ , Ճիլիոյ , Կուրսա , և այլ կղզեակք , ձկնորսաց են բնակութիւնք : Ցետինս մասն է կուսակալութեան Լիվոռնոյ :





Ի· ՀՌՈՎՄ

ԿԱՄ

ՎԻՃԱԿԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Տարաճոռթիւն 2,225 *փարս.* □. *Բնակիչք* 3,500,000:

1107· Վիճակի Եկեղեցւոյն կամ Հռովմայ կան՛ի միջնում Խաչիդ, ի հիւսիսոյ՝ զՄոմակարտիա–Վենետիկ ոմն ունելով, ի հարաւոյ և յարեւելից՝ զԸնդրիականն և զնէապոլիս, յարեւմտից՝ զՄիլիջերկրականն· և են գաւառք հնոյն Հռովմայ, և Լատիոն և Ումբրիա և Պիկենոն և մասն մի Հիսրատանա կոչեցեալ Դաղղիոյ: Նպաստեան լերինք անցանեն ընդ աշխարհն տարածեալ յամենայն սահմանս նորին· բարձր են 7,000 ոտնաչափ գագաթունք Սիւբիլլեան լերանց· հովիտքն Նպաստեան բարեբերք են այլ անմշակք· կան և երկու լայնածաւալ գաշտք մերձաւք, մին՛ի բերան Պադոսի միւսն՛ի սահմանս Դոմանայ, յորում են վիճակքն Հռովմայ և մերք պտնտիենան· անդ յառաջուսին ծաղկեին քաղաքք ականաւորք՝ զորս հիմնեալ կործանեաց գոռոզն Հռովմ, մշակութիւն տերի ևս անտի, ընդարձակեցան ջրշեղք և ցուքք վայրենիք առ բաժին՛ի նմա:

1108· Գլխաւոր գետք՛ի տերութեան աստ են, Տիբերիս որ գայ յԵտրուրիոյ· Բալիա և Դեվերոն և Ներա և Դուբանոյ Թափին՛ի նա· Պադոս, Մոնդոն, Սաբիոյ, Ֆրոնդոյ, Մուրգոն: Ի լիճսն գլխաւորք են լիճն Բերուձիայ կամ Տրասիմենեայ, լիճն Պոլսենայ և Պրաչչիանոյ:

Բերք և հանգամանք երկրին նման են Դոսկանայ, բարգաւաճութիւն և մշակութիւն ստորև յոյժ քան զնորայն: Տարածութիւն բոլոր երկրին է 2,225 փարսախ քառակուսի:

1109· Վարչութիւն տերութեանն է միապետական օժանդակութեամբ ատենի խորհրդականաց· Պապն որ է փաստնայապետ ընդհանրական եկեղեցւոյ և գլուխ աչխարհական տերութեան Հռովմայ, ընտրի ցկեանս՛ի ժողովոյ ծերանաւորաց, այս է կարդինալաց, որոց թիւ չանցանէ քան զ70· սոցա մեծ պատիւ և իշխանութիւն է, առաքին՛ի գեսպանութիւն և

խորհրդակիցք են Պապին ի վարչութիւն պետութեանն և ի հնամն սրբոյ Հօսին. յընտրութեան Պապային առանձնանան ի վանս փակարան (Conclave) առնանալ ուսոի չելանեն մինչև ատրեալ գործոյն։

Աշխարհական իշխանութեան Պապին սկիզբն եղև ի Թուին 784 յորժամ Պեպինոս արքայ Գաղղից ետ հայրապետին զգետութիւն Հռոմայ գաւառացն հանդերձ. յետ այնորիկ յաւելան ի նոսին և այլ գաւառք մինչև ի 1631, յորմէ և անդր անփոփոխ եկաց սահման իշխանութեան Պապին, մինչև Գաղղիացիք ի 1797 տիրեցին նմին. և յետ ամաց ազատութիւն ընդհանուր անդրէն դրաւեցին ի 1808, և ի միւսանգամ ազատութեանն ի 1814 հաստի ի նմանէ զՎենետն և զՎընէսէն կոմսութիւնս որ ի Գաղղիա։ Ի սկիզբն քահանայապետութեան Գրիգորի ԺԶ. ազատասեալք խռովել փորձեցին զաշխարհն, այլ նուաճեցան գաղղիական և ապստրիական ձեռնտուութեամբ։ Իակ որ ինչ առ յաջորդաւ նորուն այժմու սրբազան քահանայապետաւս Պիոսիւ Թ գործեցան՝ աշխարհաքարող իրք են։

1110· ԺՈՂՈՎՈՒՐԴ· ԿՐԹՈՒԹԻՒՆ, և այլն·— Թիւ բնակչաց պետութեանն Հռոմայ Թուի լինել իբրև 3,500,000· յորս գոն 10,000 Հրեայք։— Ըստ կրօնից՝ աճառ իակ ուղղափառ գաւանութեանն է Հռոմ, բաժանեալ ի վեց Թեմս արքեպիսկոպոսականս և յ72 եպիսկոպոսութիւնս, և իբր ի 2,100 Ժողովրդապետութիւնս· իբրև 45,000 քահանայք են, և 8,000 միաձոյնք. մենաստանք արանց 1,800, կուսաստնոց 600։— Հրահանգք ուսմանց ոչ են ըստ կարի բաւականին ծաւալեալ ի ժողովրդեանն· բայց ի մայրաքաղաքն Հռոմ բազում են վարժարանք, ընդ ամին առաւել քան զ400· եօթն համալսարանք են ի պետութեանն, և 21 միջ վարժարանք։

Պապետութիւնք կամ պատուոյ կարգք Հռոմայ են՝ Գրիգորեանն հաստատեալ ի 1832· Ցովհաննու Մկրտչին (1319)· Ս· Սեպրեստրեան կարգ (1559)։

1111· ԴՐԱՄՔ· ՁԱՓՔ· և այլն·— Հաշուեբրամ Հռոմայ է վահանագրոշին ոսկւոյ որ արժէ այժմ 5։45 ֆիր· և բաժանի ի 10 բաւէ, բաւի՝ ի 10 պաղ՝ պայոգի՝ ի 6 գ-ոբչէ· բեւեռնէ որ է 30 պայոգ· երկոքին առքս պղնձէք են· իակ ի պղտինս վարի լիրայն՝ որ գրեաթէ հաւասար է ֆրանգի, և վահանեանն պղտինոյ սուղ ինչ առաւել է քան զՀռոմայն։ Ոսկի գրամք են բեւեռնն պիոսեան 17։27 ֆիր· չեխն 11։80 ֆիր։— Ի չափս՝ ոտք Հռոմայ ունին իբրև 30 հարիւրամեհրք· մղոնն 1,4890 քիլոմեհր։

Հաւք տէրութեանն են իբրև 40,000,000 ֆիր· Ծախք այժմ իբրև 50 միլիոն· պարտք առաւել քան զ100 միլիոն· զբաղ ընդ ամին 19,000։

1112· ԲԱԺԱՆՈՒՄՆ ԳԱՂԱՓԱԿԱՆ·— Ցեղ խռովութեանն վիճակք Հռոմայ զատուցան ի չորս կուսակալութիւնս զոր ի Հռոմայ (Legazioni), և կուսակալութիւնքն ի գաւառս կամ ի կոզիսպասութիւնս (Delegazioni), և սոքա ի վիճակս և ի դեղս։ Ցառաջնում կուսակալութեանն են գաւառք Պոլոնիա, Ֆեռրարա, Ֆորլի, Ռաւեննա· յերկրորդումն՝ Ուրպինոյ, Բեզարոյ, Մաչերատա, Լորետոյ, Անկոնա, Ֆերմոյ, Ասկոլի, Գամերինոյ· յերրորդումն՝ Բերուձիա, Սբոլեգոյ, Ռիեգի· ի չորրորդումն՝ Վէլլեգրի, Ֆրոզինոնէ, Պենեւենդ· իակ ի վիճակին Հռոմայ են գաւառք՝ Հռոմ, Վիթերպոյ, Զիվիտա-Վեգգիա և Օրիեգոյ։ Մեք ըստ հին բաժանմանն կարգեմք զտեղագրութիւնս ի 20 գաւառս զատուցեալ, որք են հանդերձ Թուով բնակչաց ի 1843 ամին։

Գաւառք	Բնակիչք
Հռոմ	310,233
Պոլոնիա	348,652
Ֆեռրարա	218,786
Ֆորլի	202,315
Ռաւեննա	168,413
Ուրպինոյ և Բեզարոյ	237,966
Վէլլեգրի	57,517
Անկոնա	166,114
Մաչերատա	225,615
Գամերինոյ	38,415
Ֆերմոյ	104,116
Ասկոլի	84,217
Բերուձիա	210,316
Սբոլեգոյ	121,453
Ռիեգի	67,018
Վիթերպոյ	120,676
Օրվիեգոյ	26,141
Ֆրոզինոնէ	141,930
Զիվիտա Վեգգիա	24,312
Պենեւենդոյ	23,910
	2,898,115
և Հրեայք	10,000

1113· Ա· ԳԱՒԱՌ ՀՌՈՄ·— (Comarca di Roma)·— Ցարևմտակողմն Տիբերեանն Ծովուն, ի սմա են Հռոմ քաղաք և երկիր իւր և վիճակք Դիվոլի և Մուսիագոյ։

ՀՌՈՄ (Roma)·— Մայրաքաղաք աշխարհի ըստ մեծին ուղղափառ Հաւատոց, որպէս և ի հնումն իշխան աշխարհի քաղաքական զօրութեամբ, կառուցեալ ի վերայ եօթանից բլուրց ի կրկին ափունս Տիբերիս գետոյ, որոց անուանք են Կասիտոլինն, Պալատինոն, Կուիրինալ, Ավենտինոն, Կելիոս, Էսկուիլին և Վիմինալ· յետ ժամանակաց ընդարձակեալ նաւաս քաղաքն և ի վերայ այլոց ևս հնգից բլուրց. և կայ ի մեծի յամայի գաւտի· ի սկզբան հաստատութեանն Հռոմայ չկայր ի քաղաքին նշանաւոր չինուած բայ ի 14 բրանցիցն որ ածեին ջուր ի քաղաքն, և յուղղափառ փոզրացեն յորոց ոմանք կան ցայսօր ևս· առ ժամանակաք Սիզղայի և զինի ուրեմն առ Օգոստեաս եմուտ ի Հռոմ Տնօրէնութիւն և արուեստից պերճութիւն· և հրաշալի գործուածք ի քաղաքաց քաղաքաց անդր փոխագրեին, և Տարատաք ազգաց Նուաճելոց սպաս հարկանէին ջոյ նոցին, որով ի սուղ ժամանակի ի վեր երևեցան պաճ-

չէլի Թատերք և կրկէսք, ամփիթէատրոնք, տաճարք, կոթողք, Ծովակք նաւամարտից, աղբերք, կամարք և վաճառանոցք։ Երդևէն որ առ՝ւերոնիս եբարձ զքսել չուրհիւն քաղաքին, այլ կրկին փառաջ Ծխտացաւ նա յետ այնորիկ մինչև ի փոխիլ գահոյն ի Կոստանգինուպոլիս, ապա Նորանոր հրդեհք և աւարառուԹիւն բարբարոսաց խպառ անչքեցին զՀռոմ մինչև յԱՒգ դար. յայնմ հետէ խնամով Հայրապետացն միւսանգամ վերականգնեցաւ հոյակապ չինուԹեամբք քաղաքն անուանի, զոր և Յաւիտենական քաղաքն կոչեն ի մէջ այլոց քաղաքաց։

1114. Բուն քաղաքն Հռոմմայ կայ ի ձախմէ գետոյն, աջակողմեան մասն կոչի Լէոնեան քաղաք. ըղջ գեղեցիկ կամարջք արեւալ են ի վերայ Տիբեբեայ. 19 գրունք են պարսպաց քաղաքին, յորս գեղեցիկ է Ժողովրդեանն անուանեալ դուռն (Porta Popolo), զոր հինք Փլամինեան կոչէին։ Հրապարակք Թէպէտ ոչ յոյժ ընդարձակք վասն անհարթ գեւանոյն են 46 Թուով ի քաղաքին. Սուրբ Պետրոսին գեղեցկագոյն համարի հրապարակաց որ յընդհանուր տեսչեալս. յետ նորին հրապարակքն Կապիտոլիոն, Կուիրինալ, Գամբոյ Վէգիոյ, Տրայիանոսի




Հրապարակ Ժողովրդեան

Նոր հրապարակն ընդարձակ քան զայլսն, հրապարակ Ժողովրդեան՝ յորմէ ձգին ուղղակի Ճանապարհք երեք գեղեցիկ չինուԹեամբ զարգարեալք, մինչեւն առնուանի Գորսոյ (Corso) Ճանապարհ երիվարական և կառաբաշաւ ընԹացից որ դէպ ընդ ամենայն կողմանս քաղաքին. ի նմա լինին ձիընԹացք և հանդէսք բա-



Նաւոնա Հրապարակ

րեկենդանի, աջինն որ Ռիբեդգա ասի՝ հանէ՛ի գուռն մի քաղաքին, ահեկինն Պապուինոյ՝ ի հրապարակն Սպանիոյ · Նաւոնա հրապարակ, յորում գեղեցիկ աղբիւր, և այլն։ Եկեղեցիք 364 հաշուին ի Հռոմ, յորս հրաշալի է գեղով և մեծութեամբ քան զամենայն եկեղեցիս աշխարհի Ս · Պետրոս Վատիկանու ի



Ս · Պետրոս Վատիկանու

մեծի հրապարակին ի կողս բլրի միոջ. զնև սորա հը-
նարեաց Պլամանդ և չինուհիէն սկսաւ ի 1506 և
տևեաց դար մ. Ճարտարապետք անուանիք վաստա-
կեցան ի նմա, Ռաֆայէլ, Բեռուցցի, Միքելանձե-
լը, Վիննեզա, Խորտա. 240 միլիոն ֆիւռանգք եղեն
ծախք չինուհէանն. խաչաձև է տաճարն և ի միջակին
վերամբառնայ գմբէթն երկնանման զոր կառույց քաջա-
բուհան Միքելանձելը. ի վերայ գմբէթին կայ կա-
թուղիկէն կամ լապտերաձև շինուածն, պատուանդան
բրգանի յորոյ ի ծագ կայ գունտ մեծ և ի վերայ նո-
րա խաչն, որոց միասնաւոր բարձրութիւն է ի յա-
ւակէ եկեղեցւոյն 485 ոտնաչափ. Նեըբգին կողմն եկե-
ղեցւոյն, մատուռք, կամարք, խորանք և դրունք, զոր-
գարեալ են սեամբք, միւսոյն նկարուք և քանդակօք
և անդրնջք. աւագ բեմն մեծագործ քան զամենայն մա-
տունս տաճարին կայ ընդ գմբէթատն, ունի հովանո-
ցակ ի վերոյ չորից սլղնձամոլ սեամց 122 ոտնաչափ
բարձրութեամբ, ի սեղանի սոս միայն սրբազան հայ-
րապետն պատարագէ. և ընդ սեղանոյնը կայ մա-
տուռն սուրբերկրեայ խոստովանարան Ս. Պետրոսի
առաքելոյ. անդ պահին նշխարք նորին և Ս. Պօղո-
սի. կան և այլ նմանօրինակ մատուռք կամ այլք դամ-
բարանք սրբոց հայրապետաց Հռոմայ և աւագ իշ-
խանաց. նշանաւոր է յեկեղեցւոյն կղեմէնտեան մա-
տուռն, անդրնջք չորից Հարանց լատին եկեղեցւոյ և
վիրիճք հայրապետաց ոմանց: Հրապարակին որ առա-
ջի մեծի եկեղեցւոյն՝ երկայն է ոտնաչափս 700 և
լայն 550 ոտք. պետնեալ երկրագործ շա-
արուածոք, կոթողաւ մեծաւ զոր Հռոմէացիք յե-
գիպտոսէ բերին. և քառակողմեան վիճակաւ բոլորշի
սեամբք որ կիսաբոլոր իւն անդաստակ գործեն: — Ե-
կեղեցի Ս. Յովհաննու Լատերանու է մոդուլքագործ-
ական եկեղեցեաց որ ի վերոյ երկրի. անդ պը-
ատկի սրբազանն յետ շնորհաբերման Հոգւոյն Պա-
սկից. սկիզբն շինուհէան սորա եղև յաւուրս անդ կոս-
տանդիանոսի մեծին, գեղեցիկ արուեստիւ և ճոխու-
թեամբ պճնեալ. նշանաւոր է աւագ սեղանն յո-
րում պահին գլուխք առաքելոցն Պետրոսի և Պօղոսի,
և չորք ոսկեքանդակ սիւնք վարդիմք զսկզանոյնը, մա-
տուռն Գորգոնի անուան գեղեցկութեամբ, պղնձի
մուտք գրանն շինեալ ի վաղ ժամանակս, միւսոցմանէ
և գմբէթ նորին ի վերայ ուրկից պորփիւրեայ սեանց.
մատուռն Ս. Սակրամենտոյ արտաքոյ եկեղեցւոյն, ընդ
որ ծնդաքրմեցիքն ելանեն, զի է սա սանդուխն
որ հանէր յասպանաս Պիղատոսի, ուր դասեցաւ գա-
ւազան ամենեցուն Քրիստոս: — Ս. Մարիամ Մեծն
(S.ta Maria Maggiore) կոչեցեալ, եկեղեցի հոյակապ ոչ
ինչ կարի հեռի ի Լատերանէ. 36 մարմարիոնեայ
յանիական սիւնք են ի նմա հրաշագեղք, միւսոյն
գրուագք ի ե գարուս գործեցաք. մատուռն Սէքս-
տոսի ե, ուր կայ մարմին նորա. մատուռն Պորկե-
զեայ կամ Պօղոսի ե, ուր են քիտարք ոտկին Պորկե-
կեզեան: — Եկեղեցւոյ Ս. Պետրոսի Կապանաց
(S. Pietro in Vincoli), զի անդ պահին կապանք զոր
ապրաւ առաքելապետն ի բանտի, կայ մահարձան
Յուլիոսի Բ, արարեալ ի Միքելանձելոյէ, և արձան
Նախամարգարէին Մովսէսի, ի նմին Ճարտարէ: —
Ս. Լաբեռնեռու և Ս. Սեբաստիանոս երեքելի են վան-
տորերկրեայ հին գամբարանացն ուր Նահատիքքրիստո-
նեայք կատարէին զպաշտամունս իւրեանց, օրք Դ-
է-ի-դեաք կոչին: — Ս. Մարիամ Մարթիրոսաց կամ




Պանթէոնա

Պանթէոնա, այն է Բոլորակ, զոր Ագրիպպաս կա-
ռույց և նուիրեաց ամենայն դից (Պանթէոն), ի ձև բո-
լորշի, կձեալ քարամբք և պորփիւրիս ի ներքուստ
յարգարեալ. սիւնք բազումք են ի նմա, և գմբէթ
համապարփակ և լուսաճոյղ ի կատար նորին զի ձգ
նորա այլ պատուհան. ի գահէին գրանցն 16 կամ-
նիս ստուար սիւնք կան. յեկեղեցւոյն ստս կանգնեն
մահարձանս երեքելի խաչակրաց որք ի Հռոմ մեռա-
նիցին:

Պալատք Հռոմայ երեքելի են ընդարձակութեամբ
իւրեանց և գեղեցիկ նկարուք, քանդակօք, հնու-
թեամբք, ձեռագործք որ գանձեալ են ի նոսին. գըլ-
խաւորք ի սոսին է վատիկան, ի մասին տաճարին
Ս. Պետրոսի, ոՀ չինուհեանն և ձև չ մթերիակ
յամենայն մասունս նորին: Կալուածս մեծս հնից սկզ
նին և հայրապետք Հռոմայ վայելցուցին. հին ի
նմա երեքեան, որպէս ասի, 11,000 սրահք և սենեակք.
վասն վառառողջ օգոյն ոչ միշտ բնակին ի սմա պապք,
այլ լինին հանդիպք ի նմին. սանդուխք մեծագործ
շինեալ ի պեռնինայ հաղորդէ զաս ընդ մուտս գը-
րանց եկեղեցւոյն Ս. Պետրոսի. չիք երբէ զվատի-
կան տաճար կամ գանձարան հարուստ գոյից և պա-
տուական նիւթոց, որպասեալ արուեստի հնոց և
նորոց Ճարտարաց. ի նմա են հրաշալի նկարք Ռա-
փայելի և այլոց մեծանուն պատկերահանից, հին և հրա-
շարուեստ արձանք Աստիճալեայ, Լաոքոնի, Ապողոնի
որ վերածայնի Պատշգամբին (Apollo del Belvedere)՝
զի յաչսի մասին վատիկանու կանգնեալ կայ, իւրաք
արձանի Ծպրատելոյ զարմանագործ արուեստիւ, և
այլք, և չիրիմ Սկիպիոնի. մատենադարանն Վա-
տիկանու անբաս հարստութեամբ տպեալ և անթիւ
մատենից անուանի է յոյժ. հանդէպ նորին կայ
մատուռն Սէքսեան, յորում ի հոյս հրաշալի նկար-
ուռց կայ և պատկեր յետին գառաստանին նկարեալ
ի Միքելանձելոյէ յորմն մի մատրանն, և այլ նկարք
նորին. առատաձեռ քաղցրալուր ներքաշնակութեամբ
նուագարանաց կատարեն զկարգ աւագ ջաքաճուն-
և յատագ հինգշաբաթի և յուրբաթիս լուսաւորին
զնա և զեկեղեցի Սրբոյն Պետրոսի: — Պապն յա-

Ճախակի քնակէ ՚ի Կուիրինալ պալատան կառուցեալ ՚ի ԺԴ դարու, ուր և լինի ընտրութիւն Պապի. ՚ի հրապարակի նորին կան երիվարք երկու պղնձէք վիթխարիք մեծութեամբ, յորոց սակս և տեղին կոչի Մանդէ Գավալլոյ (Ձիական լեառն), վերլեակք երիվարացս են կայսառ երիտասարդք որ նուաճել Թուին զնոս, մին փիդիասայ գործ է, միւսն Պրաքսիտեղէայ. — Կապիտոլիոն պալատ տաճար հնոյն Հռովմայ այժմ այլափոխեալ է, ՚ի տեղւոջ ուր նա կառուցեալ էր՝ չինեցան պալատք ճարտարապետութեամբ Միքելանձելոյի. ՚ի միջի հրապարակին կայ անդրի հեծելապատկեր Մ. Աւրելիոսի որ համարի գեղեցկագոյն յանդրիս հեծելոց առ ՚ի հնոց ճիւցեալս. ՚ի ստորոտ Կապիտոլիոնին ձգէ հրապարակն գամբոյ վեգդիոյ, երեւելի փորձն Հռովմայեցւոց Ըմբռոյն Սանդ Ընձելոյ (Սուրբ Հրեշտակ) զոր Գրիգոր



Ադրոցն Սանդ Ընձելոյ

նոս չինէր ՚ի գերեզման իւր, է թերդ հզոր բաւական առ զդէմ ունել պաշարման. գնանագաւիթք ծածուկք հաղորդէն զսա ընդ Վատիկանու, յոր ՚ի ժամանակս խռովութեանց ապաստանէին Պապք. ՚ի ծայր աշտարակի նորուն կանդնեալ կայ անդրի հրեշտակի ա. Նարի մեծութեամբ, յորմէ ամրոյն էառ զանուն իւր. ՚ի վերայ վինուածոց որ զաչտարակաւս են երկկոս ՚ի տարւոջ, յաւուր յարութեան զատկի և ՚ի տարեկանի պսակման Պապին, առնեն հանդէս հրարուեստից և լուսատորութիւն, որպիսի ոչ լինի այլ ուրեք յԵւրոպա. — Իսկ յառաջին պալատս մեծատանց նշանաւորք են Ֆառնէզ, Դօրիանա՝ որ ունի պարտէզս զարմանալիս. Տօրիա՝ որ ունի պատկերազարդ գահ ընձս. Պարպերինի՝ պճնեալ Նարարութեամբ գեղազարուեստից. Պորկէզէ՝ գեղեցկաչէն յոյժ, ունի երկ. շար սիւնս: ՚ի պարտիզազարդ պալատս զորս Վիլլա




Վիլլա Պորկեզէ

անուանէն՝ նշանաւոր է Պորկեզէ, զորոյ զարձանս և զնկարս գնաց Նաբոլէոն և ՚ի յեսին խռովութեան եղծաւ. Ալպանի Ճոխ քան զայլս գեղարուեստից

արգասեաք, Մեդիկեան պալատ, որոյ գոյք գեղարուեստից փոխեցան ի Փլորենտիա, աստ ուսանին Գաղղիացիք զգեղարուեստս։

Թէատրոնք Հռոմայ 11 Թուով ի ձմերայի ևեթ բանին, գլխաւորք ի նոսա են Վալէ, Արձենդինա, Ալիպերդի։ Անկլանոցք և հիւրանոցք բազմաթիւ են ի Հռոմ, երևելի է հիւանդանոցն Հոգւոյն Սրբոյ ասացեալ, ընդարձակ և փարթամ, 1000 հիւանդաց ունելով մահիճս։ — Ցիմաստասիրութեան մասին ոչ սակաւ շինուածք են ի Հռոմ. համալսարան մի լինեալ ի 1303 որ կոչի ԽաստուԹիւն (Sapienza) զի գրչմեալ է վերստաւութիւնս այս ի նմա՝ Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն. վարժարան Ցիսուսեանց կամ Հռոմայ (Collegio Romano). ուսուցմունքն գերահռչակ Ծաւալման հաւատոց, այն է Բրոբականտայն, ուր ուսանին կղերկոսք յամենայն ազգաց և հանգերձին քարոզիչք գնալ յօտար ազինս. է ի սմա տպարան և գիր բազում լեզուաց. ուսուցմունքն կղերաց Հռոմայեցի ասացեալ, վարժարանք Կալարենոյ, Անգղիացւոց, Իռլանտացւոց, Սկոտիացւոց, և այլն, և այլն. կրԹարան խլից և համերց, վարժարան արուեստից Ռիբա Կրանտէ կոչեցեալ, Ճեմարան Ս. Ղուկասու վասն գեղարուեստից, Ազգեան Ճեմարան՝ կաՃառ իմաստնոց, Ճեմարան բնական պատմութեան՝ ուր կայ և գիտանոց, Ճեմարան աստուածաբանութեան, Ճեմարան հայրապետական գիւանագրութեան. գարձեալ Ճեմարանք Դիպերինա և Լագինա. մատենադարանն Վատիկանու հնագոյն քան զամենայն գրատունս Եւրոպայ. պարտէզ բուսաբանութեան, Թանգարանք պէսպէսք, գարոջք գեղարուեստից՝ ուր յամենայն ազգաց Եւրոպայ գան յաշակերտութիւն։ — Թէպէտ բազում անգամ յաւար և յաւեր մատնեցաւ Հռոմ այլ ոչ եղեն բնաջինջ յիշատակարանքն վաղեմից. յորս նշանաւոր է պանԹէոնն զոր յիշեցաք. Կոլոսեոն կամ Գոլոսէոյ որ և Վեսպիանեան ամփիթէատր ըն-



Կոլոսեոն

դարձակագոյն քան զամենայն շինուածս Հռոմայեցւոց, զի 80.000 արք կարեն կալ ի նմա. յԺԳ դարէ հետէ հայրապետք Հռոմայ աւերակաք նորա շինեցին զհասարակաց տպարանս, բայց տակաւին երիր մասն նորին կանգուն կայ. սկսան Տրայանոսի յ՝3Ն տուսաւր մարմարիոն արձանաց բարձրացեալ 141 ոտս և գրուագս ունելով շրջելոյ նաև գյաղԹութեանց Տրայանոսի ի վերայ Դակաց, զոր սորին նմանութեան ետ գործել Կաթոլէոն վիոմորոն Վանատոյ. սիւն Անտոնինոսի ի հրապարակին Սեան (Colonna). յաղԹական կամարք Տիտոսի, Կոստանդեայ, Սեպտիմոսի Սեվերոսի, Գալեդա Մաքսիմա, որ է ջրմուղ մեծ և լուսակք ի Տարկուինոսէ Գոռոզէ գործեալ, կամուրջն Եվինոսի

կամ Սանդ Անձելոյի Հրեշտակապետ չկնիալ չքնաղագեղ յոյժ, վերիմ Ադրիանոս՝ այն է Սանդ Անձելոյ,




Ցաղրական կառավար Կոստանդիայ

աւերակք ագուցպիդ, ջերմից, տաճարաց և թատերաց, որպես և ի չորկակ վայրս քաղաքին որ Դաշտ Հռոմայ կոչի՝ կան միացորդք և կիսաւեր տաճարք, և գերեզմանք:

Ի Ճարտարութեան արուեստից և ի վաճառականու-Թեան յետնեալ է այժմիկ Հռոմ. գլխաւոր վաճառք նորին են պատկերք, արձանք և ժամացոյց, քանդակք և միւսոյնք, խաղաթ, հանճունք, և այլն. այլ ժողովուրդն անգործ՝ դարմանի ծախուք անհիւ տապանաց որ գունդագունդ գան տեսանել զչքնաղս. լիս քաղաքին. ի վերայ այսր ամենայնի մուրացկանս նաց բազմութիւն է ի նմա, և խուժանն ի հասարակի գործատեղիք և գինետունք են. միայն բնակիչք աջակողման Տիբերեայ պարսպին ի մշակութիւն և ի տնկագործութիւն. խրոխտք գոլով բարուք և մեծաբան որպես Թէ նահին Հռոմայեցւոց լինէր սերունդս. ասուք բարեկենդանին ի Հռոմ բազում զուարճանք Թեամբ և խաղուք կատարին: Բն. 180.000, իսկ յատուր՝ Օգոստեայ կայսեր իբրև 2,000.000 էին, այժմ երեսայ և նուազ բնակութիւն մարգկան վասն ապականեալ օդոյ ի պտնութենան մերկ, Թէպէս և մասամբ ցամաքեցուցին զնոսա հայրապետքն: — Նաև Թէ են յետին անցք քաղաքիս, խռովութիւնն, և խոյս տալ քահանայապետին, և հաստարակապետութիւն Թիւն ժողովրդեանն, և պաշարումն և առումն քաղաքին ռմրահոծութեամբ ի Գաղղիացւոց (1849, օ. գուստ.) և գարձ Պապին:

1115. ԴԻՎՈՒԻ (Tivoli, Տիբուր). — Առ Դիվոլի.



Դիվոլի

Նիւ, քաղաք փոքրիկ հինգ փարսախաւ հեռի ի Հռոմ մայ ԱԼպենեանս կոյս, զուարճալի գիրս և հնութ Թիւնս ունի նշանաւորս, որպես միացորդ տաճարին Սիբիլլեայ, Միկենեան պարտիզայ, ամարաստանն Ադրիանոս. բազումք յազնականաց ունին առնս ըզ բասանաց ի Դիվոլի, յորս գլխաւոր է պալատն Էսթայ ի կատար բլրոյն յորոյ վերայ կառուցեալ է քաղաքն. Ջրվէժ գեղեցիկ դորձեր Դեվերոն ի Դիվոլի, բայց ի 1835 փոխեցան հոսանք նորին այլուր. և այժմ քարավանք անձուկք մընան: Բն. 7.000:



Նախկին ջրվէժ Դիվոլիտոլի

Ալպանոյ, Փրապագնդի, Գասգէլ Կանտոլֆոյ յոյր յորում կայ ամառաստան Պապին, ա. մենքեան զուարճալիք և զբօսանաց տեղիք են: Գիրապագի է Նախնին Տուսկուլան յորում առած կիկերոնի, որոյ կան միացուածք ինչ:

Ոստիա (Ostia). — Ի բերան Տիբերեայ. անուանի ի հնումն որպես նաւահանգիստ Հռոմայ, այժմ քաքեալ է վասն օդոյն յոտնութեան. և է ընդ ձեռամբ երիցու ծերանաւորի Հռոմայ. 300 բնակիչք հազիւ Եթէ գոցին ի նմա, և նոքին ևս յամարայնի մնկինն անտի:

Դաշտն Հռոմայ (Campagna di Roma) ամայի և անբնակեալ օդով ձգի ի Ձիվիտա Վէգգիոյ մինչև ի Դերբաչինա. մասն մի և եթ նորին մշակեալ բերէ ցորեան, այլն ամենայն արօտ է անասնոց ի ձմերայնի:

1116. Բ. ԳԱՒԱՌ ՎԵԼԼԵԴՐԻ կամ ՇՈՎԵՏԵՐԵՑԻ ԳԱՒԱՌ. — Ի հարաւոյ կուսէ Հռոմայ մերձ ի Ծով. ունի ջրվէժս:

ՎԵԼԼԵԴՐԻ (Velletri). — Քաղկոյս Եպիսկոպոսական լեռնոյ. ի հնումն մայրաքաղաք Վոլսկեանց. ի սմա նշանաւոր են պալատքն Լանչելոտտի և Գրօշիա: Բն. 10.000:

ԴԵՐԲԱՉԻՆԱ (Terracina). — Քանառաջ վիճակի ի հնումն նաւահանգիստ Ծովափնեայ, ի հարաւոյ Պոնտինեան Լճից որոյ Օգոստեայ կայսեր ձեռն արկեալ էր ցամաքեցուցանել. 10 փարսախ է երկայնութեան նոցա. կան ի նմա հռոմայեցի հնութիւնք և մայր եկեղեցին գեղեցիկ է: Բն. 8.000:

1117. Գ. ԳԱՒԱՌՆ ՓՐՈԶԻՆՈՆԻ. — Ցարևելս Վէլլեդրեայ.

ՓՐՈԶԻՆՈՆԻ (Frosinone, Փրոսինոն). — Առ Գոզա գեառվի, գլխաւոր քաղաք. Բն. 8.000:

ԲՈՆՏԻ ԳՈՐՎՈ (Ponte Corvo). — Գ. Ր. Երկիր Գործոյ անուանեալ վիճակին Նէապոլսոյ, յորմէ զատաւ և տուաւ երբեմն Բեռնատոդայ զբաւվարի, այն որ եկաց Թագաւոր Սուեթիոյ: Բն. 7.000:

1118. Դ. ԳԱՒԱՌՆ ՊԵՆԵՒԵՆԴ. — Ի սահմանս Նէապոլսոյ, որոյ իշխան կացուցաւ Դաւիդ. ռան ի 1806–1815:

ՊԵՆԵՒԵՆԴՈՑ (Benevento) · — Գ.· Ռ· արքեպիսկոպոսանիստ · Երևելի է՝ մանաւանդ Ադրիանու և մայր եկեղեցին որոյ հանդէպ կանգնեալ կայ կոթող Եդիպտացի: Բն· 15,000:

1119· Ե· ԳԱՒԱՌ ՉԻՒԻՏԱ-ՎԵՔԳԻՈՒ· — Ցածին Ծովու՝ի հիւսիսի Հռոմայ:

ՉԻՒԻՏԱ-ՎԵՔԳԻՈՒ (Civita–Vecchia) · — Գ.· Ռ· և նաւահանգիստ ամուր՝ի Միջերկրականին ընդ մէջ Կեսպոլսոյ և Լիվոռնոյ, գոն՝ի սմա բազմութիւ, ամրութիւնք և նաւաստորեն Պապին ատ հանդիսանայ: Բն· 10,000: — Ի սահմանի քաղաքիս կայ Դուքս իա հանք պղպեղի:

1120· Զ· ԳԱՒԱՌ ՎԻՏԵՐՊՈՑ· — Ի հիւսիսի արեւելից:

ՎԻՏԵՐՊՈՑ (Viterbo) · — Գ.· Ռ· յոտս սպառած լեռին· ունի զուարճս շաքարոյ, ջերմուկս, պարտէզս, և 18,000 բնակիչ:

ՄՈՆԻԵ ՖԻԱՍՔՈՒԷ (Monte Fiascone) · — Ունի մշակուռ գինեաց այգիս, և զգուշալի Լուկիանոսի եղբօր Կաթոլիկոսի որ կոչեցաւ Լշխան Գանձոյ: Բն· 5,000:

Պ·ՆՆ- (Bolsena) · — Աւան մեծ՝ի գեղեցիկ տեղւոյ յեզր Պոլսենոյ լճի, որոյ տարածութիւն է 12 փարսախ:

1121· Ե· ԳԱՒԱՌ ՕՐՎԻԵԹՈՑ· — Ի սահմանագլուխս հիւսիսոյ:

ՕՐՎԻԵԹՈՑ (Orvieto) · — Գ.· Ռ· բարեչէն՝ի ժայռի ուրեք միւռ՝ի բալիս գետ: Բն· 9,000:

1122· Ը· ԳԱՒԱՌ ՌԻԷԴԻ· — Ի հարաւակողմն՝ի սահմանս կէսալպոյ:

ՌԻԷԴԻ (Rieti) · — Գ.· Ռ· ՝ի վերայ Վէլինոյ, ունի հիւսուածս մետաքսի: Բն· 13,000:

1123· Թ· ԳԱՒԱՌ ՍԲՈԼԵԹՈՑ· — Ի հիւսիսակողմն Ռիէգեայ:

ՍԲՈԼԵԹՈՑ (Spoleto, Սպոլետոն) · — Գլխաւոր քաղաք յեզր Մարեձձիայ, ՝ի սահմանս սորա լինի աղնիւ գինի և ձէթ և բրէ-ՙ: Են անդ հոյակապ ածգոգաւոյք ջրոյ: Բն· 8,000: Ընդ այս քաղաքի հանդ Ընդիքաղ:

1124· Ժ· ԳԱՒԱՌ ԲԵՐՈՒՃԻԱ· — Ի հիւսիսի Սբօլեդոյ:

ԲԵՐՈՒՃԻԱ (Perugia) · — Գ.· Ռ· առ Տիբեր ածս՝ի միջին գարու նախանձորդ Սիենայ և Հռոմոյ· ունի համալսարան հիմնեալ՝ի 1307, Թանգատան հնոտեքանից, եկեղեցիս զարգարեալ նկարուք Բերուճինոյ վարժապետին Ռաֆայելի, գործարանս ձեռագործոց մետաքսի և վաճառականութիւնն յաջողակ: Ի 1822 գոաս՝ի սմա մեծ արձանագրութիւն մի յԵաթուրացի բարբառ: Բն· 26,000:

ՖՈՒԼԻՆՈ (Foligno) · — Ցեզր Պոբինոյ, քաղաք վաճառաշատ, ղի լինին անդ երից տանավաճառք, մեծ մասն սորին կործանեցաւ սաստկութեամբ՝ի 1833: Բն· 16,000:

ԱՍՍԻԶԻ (Assisi) · — Ունի երևելի մայր եկեղեցի և մենաստան մի յորում կայ դամբան Ս· Փրանկիսկոսի՝ որ հաստատեաց կարգս փրանկիսկեան և վեզբաւոր կրնաւորաց, և է այն ուխտաւորի մեծ· Համբաւոր եկեղեցին Ասուածածնին հրեշտակաց ասացեալ կործանեցաւ սաստկութեամբ: Ասա ծնան սուրբն այն· և բանաստեղծն Մեդաստազիոյ: Բնակիչք 16,000:

1125· ԺԱ-ԺԲ· ԳԱՒԱՌԱՔ ԱՄԳՈԼԻ, ՖԵՐՄՈՑ, ԳԱՄԵՐԻՆՈՑ, ՄԱՉԵՐԱԴԱ·— Ի հարաւային սահմանս եկեղեցական վիճակաց, չունին քաղաքս նշանաւորս և բազմաժողովրդս· բայց միայն Մաչերատա քաղաք՝ի բաբեբեր տեղւոջ ունի համալսարան հիմնեալ՝ի 1548, երկու ճեմարանս և վարժարան մի աղուականաց· և 20,000 բնակիչս:

1126· ԺԲ· ԳԱՒԱՌԱՔ ԱՆԳՈՆԱ·— Ի հիւսիսի Մաչերատայ:

ԱՆԳՈՆԱ (Ancona) · — Գ.· Ռ· ամրիվեհատորս նաւսն երևելի քան զամենայն նաւահանգիստս Ադրիատ կանին և շահաստան ամենայն քաղաքաց եկեղեցական վիճակին· բայց բազմութիւն վաճառականաց նորին որպէս և Լիվոռնոյ հրեայք են՝ի միջին դարու բարգաւաճեալ եր յոյժ յոյժ, յամին 1742 սահմանեցաւ լինել ազատ նաւահանգիստ· շրջեմնաք երիվեկ առնեն արդ ընդ ցամաքական կղզիս և ընդ սահյնատակաց արժանի են մաքրարանն, գանձատուն վաճառականաց, յաղթական կամարք Տրայանոսի, և ՃԴ բնենգիկոսի և միացորդ հռովմայեցի ամփիթեատրին· զամբարտակն որ՝ի նաւահանգստէ անտի ձգէ 2.000 ոտնաչափ ընդ երկայնութիւն Տրայանոս կառոյց և բենեդիկտոս ԺԴ նորոգեաց, և այժմ ընդարձակ ևս գործեն· գեղեցիկ է մայր եկեղեցին Ս· կիրակոսի, յորում կայ և մարմին սրբոյ ուրուսն հայկազեան Լիբերիոսի կամ Լևոնի· կայ՝ի քաղաքիս և մենաստան Հայոց միանձնուհեաց Հռիփսիմեանց անուանեալոց·

1127· ԼՈՐԵՏՈՒ կամ ԼՈՐԵԹՈՑ (Loreto)· — Գեղեցիկ քաղաք փարսախաւ և կիսով հեռի՝ի Ծովէ, սիեզերահռչակ ուխտատեղի քրիստոնէից, զի՝ի մայր եկեղեցւոյն նորին պատուի տուն Տիրամօրն զքանէ ի Նազովրէթ՝ի Կաղարեթէ, յամին 1295՝ի սրբազան տաճարին կայ արձան Ս· Աստուածածնայ ոսկեհուռն և ականակապ, և շուրջանակի քան դակաչ՝ի գաղրատեան կճոյ պաշեն զտեղին· զմասն մի գանձուց տաճարին՝ի 1798 բարձին խոռոչեաց գաղղոյ· յառաջն Թէ ուխտաւորաց ժամանէր ց՝100,000 յամին· բնակիչք քաղաքին (8,000) յուխտաւորաց և՝ի վաճառուց սուրբ նշխարաց և վարդարանաց հայթհայթեն զպարկեն իւրեանց:

1128· ԺԶ· ԳԱՒԱՌԱՔ ՈՒՐԲԻՈՒՈՑ ԵՒ ԲՆԱՒԱՐՈՑ·— Ի հիւսիսի Ընդունայ:

ՈՒՐԲԻՈՒՈՑ (Urbino) · — Գ.· Ռ· ՝ի լերինս· արքեպիսկոպոսանիստ, յորում ծնաւ Ռաֆայել գեղարդոյն նկարչաց Իտալիոյ ՝ի 1483· ունի ճեմարան և գպրոց աղուեսականաց: Բն· 15,000:

ՍԻՆԿԱԼԻԱ (Sinigalia) · — Ծովեզերեայ քաղաք, որոյ տանավաճառք անուանի են քան զամենայն քաղաքս Իտալիոյ: Բն· 12,000:

ԲԷՋԱՐՈ (Pesaro) · — Քաղաք վաճառաշատ՝ի բերան Փոլէայ ոգր և նաւահանգիստ ունի· աստ ծնաւ

Ռոսսինի երգահան՝ կարապ ձեռքբերյի ձայնեալ։ Բն. 15,000։

Ֆանո (Fano). — Ունի և սա նաւահանգիստ. Հայրենիք է Գաւազանի երգչի։ Բն. 16,000։

Կոնդոթո (Gubbio). — Քաղաք փոքրիկ Ումպ. նեանս, անուանի վասն զարմանալի հնութեանցն, յորս նշանաւոր են եօթն ասիտաակչի նշագործեալք, լատին և հարուրապետ տառիւք գրոշ. մեալք, որ զնշենների պաշտամանց նորոգութեան ունին բանս։ Բն. 8,000։

1129. Ժ. Գ ԱՒԱՒՈ ՓՈՐԼԻ. — Ի հին. սիսի վերնոյ։

Փորլի (Forlì). — Գ. Ք. ընդ մէջ Ռաւեննայ և Մանդոնայ՝ ի բարեբեր հովիտ. վաճառաշրջոյ քաղաքին նշանաւոր է ընդ ամենայն Իտալիս. ի մէջ եկեղեցւոյն կայ գերեզման Գործիչ Լուսիկ Լուսոյ. են ի սմա համալսարան մի և Ճեմարան մանկաւարժութեանց. բազմութ է և վաճառաշունչ Հոգեթե։ Բն. 17,000։

Ռիմինի (Rimini). — Եպիսկոպոսանիստ քաղաք գեղեցիկ ի բերան Մարեգդինոյ, նաւահանգիստ նոր. ին խցեալ է աւազոյն կուտակմամբ. նշանաւոր է ի սմա յաղթական կամարն և կամուրջն Օգոստեայ և մայր եկեղեցին, և հասարակաց գրատունն։ Բնակիչք 18,000։

Ցեզենա (Cesena). — Գեղեցիկ քաղաք առ Սա. վոյ, ունի Ճեմագործս մեծաքանի։ Բն. 16,000։

1130. Ժ. Գ ԱՒԱՒՈ ՌԱՒԵՆՆԱ. — Ի հիւսիսակողմն Ֆորլեայ։

Ռաւեննա կամ Հռաւեննա (Ravenna). — Գըլ. խաւոր քաղաք արքեպիսկոպոսանիստ առ Մոնդոնայ, ի Ճահճային տեղւոջ. բազում կայսերք Հռոմայեցիք և Թագաւորք Գոթից և փոխարքայք արևելեան կայ. սերայ նստան ի սմա. անուանի էր ի վաճառականս Նաւթեան և առ Հռոմայեցւովք վասն նաւահանգստին, որ այժմ ոչ երեւի վասն ծովուն հեռանալոյ, յորմէ և աղաւաղին ափունք միացին ապա կանչէ օգոց։ Հին և նոր շէնք բազում են ի Ռաւեննա գեղեցիկք, զոր օրինակ ուղղանկիւն եկեղեցի Ս. Վիտալի, յորոյ ի մարբից կայ գամբան քարաքանդակ խառնակ Հայկայն իշխանի զորավարի կայսերաց Բիւզանդիոյ ԺԲ դարու։ Մկրտարան եկեղեցւոյ Ցօհաննու Մկրտչի գործեալ ի Ձ. դարու. բան նմանութեան եկեղեցւոյս կառոյց մեծն կարլոս զՄեծ եկեղեցին Էյ-լա-Շաբէլ. մայր եկեղեցին, բոլորչի տաճար Տիրամօր՝ որ յաւ. ուղն եր շիրմ դասեր Թեոդորիկեայ բան ձևոյ շիրմին Ագրիպանու շինեալ. և մատուռն Տանդէի որ մեռաւ ի քաղաքի աստ ի 1321. մատենադարան հասարակաց, Թանգարան հնութեանց, ձեռագործք մեռաքի։ Անուանի պատերազմն տղեցաւ աստ ի 1512, յորում անկաւ կապտն Ֆուսյ յազգէն Սպանիացւոց։ Բն. 25,000։

Ֆաենցա (Faenza). — Քաղաք բարեշէն առ Ամ. նայ, ունի Ճեմարան նկարչութեան. աստ հնարեցաւ ի Ժ.Ձ դարու յախճապակին, վասն որոյ և յանուն քաղաքին կոչի Ֆայենցա, յորում ևս կան ի նմա գործա. բանք, յորս պատապին յորոյք ի բնակացն. այդիք գինեբերք պատեն զքաղաքաւանն։ Բն. 20,000։

1131. Ժ. Գ ԱՒԱՒՈ ՊՈԼՈՆԵԱ. — Ի սահմանս գբուութեանն Մոտենայ, բարգաւաճագոյն և բազմամարդագոյն քան զամենայն գաւառս պետութեանն. որոյ բնակիչք այժմ առաւել են քան զ550,000։

Պոլոնեա (Bologna). — Գ. Ք. արքեպիսկոպոսանիստ ի զուարճագին վիճակի ընդ մէջ Սաւենայ և Ռենոսի առ ոտամբ այգեւէտ բլրոց Ապենինից. վաճառաշահ, Ճարատար յարուեստս և երևելի ի քաղաքս Հռոմայոյ, երբեմն մայրաքաղաք հասարակապետութեան. նշանաւոր է և վասն անցիցն որ ի միջին դարս. գլխաւորք ի շէնսն են՝ պալատն Հասարակաց, ապարանք գատաւորին, Ս. Պետրոս մայր եկեղեցի, եկեղեցիք կղզեսահնեանց և ուսուցչարանին և Ս. Պետրոնիոս. առն գրամոց, թէատրոն, պատրաստ ատգազ, աշտարակն Ազինելլի և Կարիզենտա, յորոց մին 3½ և միւսն 8 ոտնաչափ կրկայեալ են, և հրկպատ աղբիւրն Պոսիդոնի ի միջի հրապարակին։ Իսկ համալսարանին անուանի կառուցեալ ի 1158 երիցագոյն ի ժամանակս ի համալսարանս Եւրոպայ, և երևելի եղև ընդ երկար յիրաւագիտութեան մասին. պարտեզ բուսաբանութեան, ուսուցիչարան գրատամբ 150,000 մատենից, գիտանոց, Ճեմարան մանկաւարժութեանց, Ճեմարան գեղարուեստից, դասիւնք նկարուեց և անգրեաց, յորս կան զարմանալի պատկերք գլխաւոր նկարչաց Իտալիոյ, օրակս՝ Ս. Կեկիլիա հրաշալի նկար Ռաֆայելի, և Աստուածածին վարգարանի նկար Տամենիկինոյ. Ճեմարան հրաշագիտութեան, լիկէոն նուագարանաց։ Աստ ծնան անուանի պատկերահանքն Տամենիկինոյ, Ռենի կռիսոյ և Ալպերտ Գաւազնոյ. շուրջ գաղաքաւան կան պարիսպք և ծառատունկ Ճեմիք, և գերահզակ գետնամեառուն բազում մարմարիոք։ Բն. 80,000։ — Իբրու փարախաս հեռի ի քաղաքէն ի վերոյ լերին, յոր հանեն մեծագործ եօք 635 կամարք, կոյ ուխտաւորի Աստուածածնին Ս. Ղուկասու ասացեալ, քանզի համարի պատկերն նկարեալ ի Ղուկասյ ասէ. տարանէ։

1132. Ի. Գ ԱՒԱՒՈ Ֆ Ե Ր Ր Ա Ր Ա. — Ի սահմանս Լոմբարտեայ. բազում առաջք պագոսի տարածեալ ի գաւառի աստ Թափին ի Ծով, գործեալ Ճահիճս կամ ղլինն գոմագոյիոյ ձկնաբեր, որոց 12 փարախս երկաթուղեան է, և ապականիչ են օգոց. ի միջին գրոս մինչև ի Ծ.Ձ դար տաճն Էսթեյ տիրական Ալտոնեանց. Ճարատար արուեստ գործեալ ի քերդողք ամենուստ գային այսր. և յարդ ամենայն կահիւքն հանդերձ պահ տուն Արիոստոյին, և հրապարակ մի քաղաքին յանուն նորա կոչի, և ի մատենադարանին կայ արձան կանգնեալ նմա. ի քաղաքի աստ Գասսոյ մեծ բանասէրդ սիրելի և ասելի եղև իշխանացն և զամս եօթն արձկաւ ի խոր բանսին զոր ցուցանեն յարդ յանկեանցոյնն Ս. Աննայ։ Ի

չինուածքն նշանաւոր են մայր եկեղեցին, ապարանք դատաւորին, պալատ դքսին մերձ յաւերել, թատր, և եկեղեցիք որ են Թուով 100, համալսարան հիմ. նեալ ի 1264. մատենադարան՝ ուր պահին ձեռագիրք Դասսոյի, Արիոստոյի, Կռարինեայ և այլոց մեծանուն բանաստեղծից. Թանգարան հնութեան. միջնաբերդ գեղեցիկ և ամուր: Բն. 26,000. յառաջ. նուն 100,000: Ի միջնաբերդի սորա կան պահակապանք Աւստրիացիք: — Ջրանցիք հաղորդի Փերրարա ընդ Բոնդէ տի Լակոյ–Օագուրոյ գեղջ (կամուրջ Մոլոյ լճի) որոյ է նաւահանգիստ ի Բոյ. Նշանաւոր է և գերեզմանատեղի քաղաքիս: Բն. 2,000:

Ը. ՀԱՄԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆ


ՍՈՒՐԲ ՄԱՐԻՆՈՅ

1133. Փոքրիկն և հնագոյն ամենայն պետութիւն Եւրոպայ Սան Մարինոյ, որ է Ս. Մարինոս, կայ ընդ միջ Րիմինի, Չեզենա և Ուրպինոյ գաւառացն Հռովմայ, Ֆ փարսախ տարածութեամբ. յորում քաղաք մի և չորք գեօղք են: Սկիզբն տերութեան եղև ի Ձ դարու, Մարինոսի Ճգնաւորի ուրումն հաստատելով ռամկապետական օրէնս ժողովրդեանն բնակչաց անդր. երկու առաքեալ են տերութեան, մի մեծ 300 արանց և միւս փոքր երկոտասանից, որոց նախագահ կոչի Գլխաւոր. անփոփոխ ունայ տերութիւնս ի բազմադէմ անցս խաղից, և այժմ է ընդ պաշտպանութեամբ Պապին: Ի խառնութեան 1848 ամին՝ հաստատեցան և ի պետութեանս նոր օրէնք ռամկավարականք: — Միակ և գլխաւոր քաղաք նորին

Սան Մարինո (San Marino). — Կառուցեալ ի քարուտ Տիտան լերին. Նշանաւոր է ամրոց նորին ի քարաժեռի, և վիմափոր գերեզման Ս. Մարինոսի: Բնակիչք 600 անձինք. իսկ բովանդակ պետութեանն 6,500 են բնակիչք. և յոլով ժողովրդապետութիւնս բաժանի.



Հռովմ



Թ. ՆԷԱՊՕԼԻՍ

ԿԱՄ

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ԿՐԿՆԱԿ ՍԻԿԻԼԻՈՅ

Տարաճոխութիւն 5,510 *փարս.* □. *Բնակիչք* 9,000,000:

1134. Սահմանք Թագաւորութեանս այսօրիկ են Վիճակք եկեղեցւոյն ի Հռոմայ և յարեմտից, յայլոց կողմանց ծովիս որ կոչի ըստ Երից տեղեաց Ադրիական, Յոնիական, Տիւրենեան. ի Յոնիակաւն հին կայ ծոցն Տարենտայ։ Կրկին Թագաւորութիւնք էին յառաջնումն ի սմա, Նէապօլիս և Սիկիլիա զորս անջրպետեալ Մեսսինայ նեղուցն։ Տարածութիւն երկոցուն միանդամայն 5,510 փարս. □։ Գվնաւոր գետք Նէապօլսոյ են Կարիլիանոյ, Վոլտուռնոյ, և Սելէ որ Թափին ի Մինջերկրականն. Կրագէ, Պրանտանոյ որ ի Յոնիականն. Օֆանգէ, Ֆորտորէ, Բէսպարա, Դրոնտոյ, Ադրիականն, — ի Սիկիլիա՝ Սալսոյ որ հոսի ի Մինջերկրականն. Ակռարդգա ի Յոնիականն։

1135. Միապետական է վարչութիւն Նէապօլսոյ, Թէպէտ յամին 1848 ի 10 փետր. շնորհեցան սահմանադրական օրէնք. հասք պետութեանն Թուին առաւել քան զ'130 միլիոն ֆր. նոյնքան և ծախք. պարտք առաւել քան զ'800 միլիոն ֆր. զօրականք 63,000. նաւազօրն 6,000. նաւք առաւել քան վերեսուն։ Հաշուեգրամ և վարձն գրամ կէապօլսոյ է փոփոխ արծաթեայ որ արժէ 4:25 ֆր. և բաժանի ի 10 փոխ և ի 100 լբա. ոսկի գրամ է եռատուգաման՝ 13 ֆր. — ի հախս վարի Թիլն (0,263670 մէթր), և մղոնն (1,848690 քիլոմէթր)։

1136. Երկու գլխաւոր մասունք են տէրութեանս որպէս տեսաք, Նէապօլիս և Սիկիլիա որք կոչին Տէրութիւն յայսկոյս Պարսոյ և Տէրութիւն յայնկոյս Պարսոյ, կամ արևնակ Սիկիլիա, այսինքն է Երկու Սիկիլիայք. յորս միասամուռ 22 կուսակալութիւնք կամ գաւառք են, որք բաժանին յ'75 վիճակս։

Ա. ՆԷԱՊՕԼԻՍ

1137. Վեսպոլիս տորին ման է Խալիոյ, յոր երկոքին բազուկք Ապենեանց, և հուպ ի վէնոզա բաժանեալ ման մի նոցին՝ աւարտի ի Լևկան սար որ և Սալենտոնն. միւսոյ մասին ձգեալ ընդ հարաւ գործէ գշրուանգանն Սբաղևնեդոյ (Ջեփիւռից սար), որ է ծայր հարաւոյ Խալիոյ. ձգին և յարևմտեան մինչև ի կերձն Մեսսինայ. նաև Սիկիլիոյ լերինք ման են նոցին. բարձրագոյն կատարք նոցին են ի գաւառս Սարուցայ, Կրան Սասսոյք և Վելիգոյ, որոց 8,000–9,000 ոտնաչափ բարձրութիւն է. Կարմնոյ լեառն մեհեան յարեալս կոյս ոտին սարանդ որ հայի ԱԳրիասկանն, և բարձր է 8,000 ոտնաչափս յերեսաց Նորուն. Վեսաւլ հրաբուխ նոյնպես անջատ հուպ ի Նէապոլիս քաղաք 3,648 ոտնաչափ. կողք Ապենեան լերանց ամենից և անբերք են, բայց հովիտք և ձորք բարերերք յոյժ, մանաւանդ ի կողմանս հարաւոյ արևմտից, քանզի հիւսիսակողմն արևելեան անջրդի և մացառուտ է. սակայն հարաւային մասն կրէ պատ ի սասանութեանց երկրի, ծծմբային ծխովք և աղբերօքք պատեալ. անտառք ի կաղապրիա ևեթ գտն, որպէս Սիլա՝ ընդարձակ յոյժ:

1138. Ի ծովեզերին բազում ծոցք և նաւահանգիստք են, զոր օրինակ Մոնֆիլատոնիա ԱԳրիկանց՝ նին յաս Մոնդէ Գալլոն. ծոցն Տարենտաս և Սգուիլակևայ ի Բռնիսան ծովեզն. և ի Տևուեզ՝ նեանն Ս. Եւփիմիա, Բոլիգասգոյ, Սալեռնոյ, Կեաթզիա, Կաեդա.

Մի միայն է լիճ գլեաւոր, Զելանոյ, զոր Հռովմայեցիք Փուկինոս կոչէին, առ ոտամբ բարձրաբերձ լերանց Ապենեանց ԱԳրուցայք. յորվ գնաք են որ մտանեն ի լիճս յայս և ելք ոչ գոյ ի նմա, վասն որոյ յորգեալ ջուրն, և յայս սակս կոչեցիք նմանս կայսր Եա բանալ ջրանցս՝ երկու փարատս ընդ երկայնութիւն ընդ ՄՀ լերանց և ժայռից, և զջուրն տանել ի Կալիլիանոյ (Լիրիս). յետ բազում ժամանակաց սասանութեամբք երկրի արգելան ընթացք ջուրն ընդ ադրեալսն:

1139. ԿԼԻՄԱՅ. ԲՈՐՒ ԵՐԿՐԻ. — Քաղցր և ջերմկի են օդք Նէապոլսոյ քան զայլոց խոսկան գաւառաց. ձմեռն լերինք յաչխարհի ասս, բայց ի գաշտս և ի խոնարհագոյն տեղիս յեզանակին յայնիկ անձրեւք առատ, այլ բուսաբերութեան երկրին ոչ ինչ վնասք. ի բարձունս լերանց ևեթ խզանէ ձիւն, այլ և անդ ոչ տևէ յերկար. բայց տօթ արեգական զբանսոյ յամբայիի զամիս չորս, և ցամաքեցուցանէ զջուրս և զբոյս. մանաւանդ ևեթ հողին ի հարաւոյ արևելից ընկոյզ (վիրոդոյ), կամ ի հարաւոյ արևմտից (վնակեգոյ և կաբվեոյ), որ են խորշակք Սիրիկոյ. յայսք ամենայնի վերայ օդն բարի է յոյժ, և ձախինք որ ուրեք ապահանն զոյն չեն ինչ ընդ արմատներն, եղէգն չաքարի, բամբակ, եգիպտացորեն, մուրտ և այլք ծառք ջերմին կլիմայից, առանց գործանոյ պղտոքերելով. իսկ ի գեղեցկութեան դրից և տեսլարանաց երանելոյ աշխարհն Դրախտ էրթոպոյ. բայց մշակութեան անփոյթ են բնակիչքն, շինականք ի պղերգութեան և ի սարկութեան կան, երկիրն անգործ բաժանեալ է ի կալուածս ուսագոյ. բայց միայն չքջակայքն կէսպոլսոյ, այն է կամպանիա, կարի բարեպէս մշակեալ են: Գլխաւորք բերքն են ընդեղինք, գինի, ձէթ, և ամենայն ազգ պտղոյ զոր բերէ աշխարհն Սպանիոյ. յոսս վաճառվոյ կան այդեք աղինս և բարկ գինւոյն՝ որ կոչի Արասսուբ Քրիստոսի, և միս ևս որ Ցուհնոյ գինեասի. տրմեք, ծխախոտ, վուշ, բամբակ առատ, և այլն. երկինք, և սարագէղ գառինք՝ զոր ի լերինս և ի գաշտս արածեն որպէս ի Սպանիա. այծեամին, եշ, ջորի, խոզ, ցուլ վարշի. ոսպէ և ձուկն ծովս. երկաթ և պղինձ, ծծումբ, պղպեղ, աղ հանքային, մարմարիոն, լաւա, և ազգ ազգ քարանց: Մարմին և Թրմնոյ բազում զնան հասուցանեն երկրին, և առաւել քան զամենայն՝ սասանութիւնքն որ ի հարաւակողմանս. ահագին յոյժ եղև սասանութիւնն 1783 ամին, յորմէ այլափոխեցան իսին երեսք երկրին կալաբրիոյ, լերինք գետնասդղ եղեն և գաշտք լեռնացան, գետք փոխեցին ընթացս իւրեանց և հովիտք ընդացան, աւերեցան քաղաքք բազումք և 40,000 մարդիկ կորեան. և յետ այնորիկ ի վերայ հասին սրանձրեինք և անպատութիւն երկրի:

1141. ՒՆԱԿԻՏՐ. ԿՐԹՈՒԹԻՒՆ. ՁՈՒՏԱՐՈՒԹԻՒՆ. — Թիւ բնակաց Նէապոլսոյ ժամանէ ց'6,650,000, որք ուղղափառք են կրօնիւք, 85,000 յունադաւան Ալպանիացիք բնակին ցրիւ յամենայն կալաբրիոյ և Բուլիայ. 16 արքեպիսկոպոսք են ի Թագաւորութեան կրկին Սիկիլիայ և 77 եպիսկոպոսունք, իբրև 33,000 քահանայք, 12,000 միաձոնք և 10,000 միաձոնուհիք: — Ի տրաձնդս ուսմանց յետ նեայք են Նէապոլսեցիք, 4 համալսարանք են նոցա, 4 լիկէոնք մեծք, գպրոցք և վարժարանք 3,000 ի Նէապոլսոյ Թագաւորութեան միայն: — Աբուսեսաք առաւել բարեաւաճեալ են. մշակութիւն և խաշնադարձութիւն հասարակաց է պարապուն. և բան գաւառաց գաւառաց գարման չերմոյ, մեղուք, ձեռագործք, վաճառականութիւն, տուրնաւրիկ ի ծովս. Շահատան քաղաքք են Նէապոլիս և Բալերմոյ:

Ապետութեանց հինգ կարգք են Նէապոլսեցեաց, Ս. Գեննարիոսի (Հաստատեալ ի 1738), Ս. Ֆիլիպինոսի (1800), Ս. Կոստանդեանոսի, կրկնակ Սիկիլեոյ, և Փրանկիսկոսի Ա (1829):

1142. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՔ. — Նախնի բնակիչք տորին Խալիոյ ազք անտպագք էին ի պետատեան սեբնդոց. ի ժամանակի հիներկրեան Հռովմայ գաղթականք Ցունաց բնակութիւն հաստատեալ

յափունս Նորըն հիմնեցին քաղաքս, որպէս Տարենտոն, Սիբարիս, Կրոտոն, Պոսիդոնիա, Լոկրիս, Հէլեզեան, որք և փոյթ ընդ փոյթ ծաղկեալ քաղաքավարութեամբ ծաւալեցին զնոսն և ի միջնաշխարհս, առ սակաւ սակաւ մուծեալ ի նոսա և զկրօնս և զբարս Հելլենացւոց, յորս սակս և Մեծ Յունաստան կոչեցաւ աշխարհն։ յանդգնեալ ամաց հինգհարիւրից Հռոմ մայեցեալ սերեցին Նոցա, և ի բառնալ ընթանալոյս Թեան Նոցին՝ Թագաւորք խաղային յաջորդեալ Ռոմուլոսէ, և յետոյ Գնաց Թագաւորք։ ի Յէրն Ջ. գարս կայսերք արևելից հալածեալ զԻտալս մայրզկաղաքն խաղացեալ ի հիւսիսոյ նուաճէին և գՅաբասկոզին խաղային։ յայնժամ հաստատեցան անդ իշխանք Նուճիանք և ապա գբուճիանք։ Ոչ յետ բազմաց ի վերս երևելեացն Սարակինոսք՝ որք կանխաւ իսկ սերեալ էին Սիկիլեոյ, և զետնոցա կայսերք Գերմանիոյ։ և կագէին յամէրտակէ յերեքաց զաշարայիք Յունք և Գերմանացիք։ իսկ ընակիչք երկրին կոչեցին ի Թիկուռնս գՅորմանացիս զաղգ Տղոր, որ գնա ևս բռնացեալ էին միոյ մասին Գաղղիոյ։ որք եկեալ հաստեցուցին զժողովուրդն և գաթան առատ վարձուք։ Ասի խրախուսեալ երկոտասան որդւոց Տանկրետեայ իշխանի Հոդվերայ գունդ կազմեցին մանն յԻտալիա։ Ռոպերտ Ռարտարագոյնն ի նոցանէ տեսեալ զի պատրաստ գժկամակի ընդ իշխանութիւն ոչ միայն Արաբացւոց այլ և Յունաց և Գերմանացւոց, խորհեցաւ իբրև ի ընդհանուս նմին աշխատել և տիրել Իտալիոյ։ և Հռոմէացիքն իսկ հայրապետին եղև նա դուքս կալաբրիոյ և Բուլեայ, և եղբայր իւր Ռոմեր գուքս Սիկիլեոյ, որ և երկայնակեաց լեալ ժամանակաց զաստիճան կալուածս եղբարց իւրոց յԻտալիա։ Որդի նորին Ռոմեր ի նուաճեալ և գհաստատակապետութիւնս նէապօլսոյ, գնապուսայ և գՀաստատակապետութիւնն ի Բալերմոյ։ Ի վախճան ժԲ գարու ապատեցաւ Կորմանեան ազգին, և ինքնակալք Գերմանիոյ Քանհէոդ լինէին իբրև ազգակիցք նոցին տիրել նէապօլսոյ, այլ պապն հնարս հնարեալ էտ զմագն ի կարգս Ընժու եղբայր Սրբոյն Լուդովիկոսի, որ և սպանեալ զՔոնրադին կալաւ զմագաւորութիւնն, բայց ոչ ոգ ջամբ. քանզի Թագաւորն Արագոնայ խնամի Հոհենշտաւֆէն ազնի, յորմէ եր սպանեալն, և ժամանակ նորին կարգեալ նուաճեաց գՍիկիլիա։ յաջորդք կապոլսոյ ի Գաղղիացւոց անտի սերեցին նէապօլսոյ մինչև ի սկիզբն ԺՋ. գարու, յորում ժամանակի Գոնսալվոս Կորգուայ զբովաքան Ուղղահան փերթ. Նանտոսի հալածեաց զնոսա յԻտալիոյ մինչև սասոիկ մարտս պատերազմի բազում արիւնահեղութեամբ։ յայնմ հետէ զամն 200 միացեալ Սիկիլիոյ ընդ նէապօլսոյ եկաց ընդ իշխանութեամբ Սպանիոյ կառավարեալ փոխարքայիւ։ ազնուականք և եկեղեցւոյն ոսկա յոյնացեալք Յունութեամբ գրաւեցին յիւրեանս զերկիրն, հարկաբ ծանուցք եդան ի վերայ ժողովրդեան, որ յետ ԺԷ դարուն Յունիոր Թեոֆոբեր լուծ իբր, որպես և ձկնորս ոմն Մազանիելլոյ անուն խռովս յարուցեալ փոքր մ'ևս ևս զբռնաբ ածէր զԻտալն։ Ի սկիզբն ԺՀ. դարու իբրև Գաղղիա և Աւստրիա կազդին վասն գրաւելոյ ղտերութիւն Սպանիոյ ի սպառ ոչ արգելի տոհմին՝ Թագաւորութիւն նէապօլսոյ վճռակեցաւ Աստղայ և ապա (1717) Աւստրիոյ, յիսոյ ի հաստատել Գաղղիացւոց ի Սպանիա՝ նուաճ գիման և զկնայսելիս ի 1733. բայց կարգոյս Գ. արքայ Սպանիոյ ի 1759 ետ զայն փերթիանտասի որդւոյ իւրում ազատ իշխանութեամբ. սա քանզսաւ բարեկարգէ զդեհատութիւն իւր, այլ առ խռովոյս Թեամբ Գաղղիոյ հանաւ յիւրմէ աշխարհն և կոչեցաւ Պարթենոպեան հասարակապետութիւն։ Նաբոլէոն ի հիւպատոսէն իւրում գարձոյց ի նա զաշխարհն և ապա ի 1805 վերսոին ի քաց առեալ ի նմանէ ետ եղբօր իւրում Յովսէփայ և ապա քեռասն իւրում Միւրադայ Յովսիմիայ, որ անկաւ յամոռոյ ի 1815 ի վտարել Նաբոլէոնի, սակայն կամելով անդրէն էլանել ի գահ ձերբակալեալ եղև և սպանաւ ի սրիկայից։ յայնմ հետէ փերթինանոս կալաւ գամոռն մինչև ի 1825. յետ Նորա որդի իւր Փրանկիսկոս Ա. և ապա որդի Փրանկիսկոսի Փերթինանոս Ե ի 1830։ Ի 1821 հաստատեցաւ առեան խորհրդականաց ազգայի, յորոց 16 Նէապօլսեցիք էն և 8 Սիկիլիացիք։ Սիկիլեոյ կղզւոյն կայր ուրոյն իշխան փոխարքայ, այլ կաւհեալ զատանիլ ի Նէապօլսոյ Նուաճեացս անգրէն յամին 1849։ Յաջորդութիւն Թագաւորութեան անգամեան յարուս և յեգս. Թագաւորն կոչի Ազբայ Կըրնակ Սիկիլիոյ և Երուսաղէմ. Ժառանգ Թագաւորութեան՝ Իշխան Կալաբրիոյ։

1143. Նէապօլիս յառաջ ժամանակաւ բաժանէր ի չորս մեծ նահանգս որք են Կամպանիա, Ապրուցք, Բուլիա և Կալաբրիա, յորս են այժմ 15 գաւառք. ի տեղագրութեանս զերկուսն ևս բաժանումն յանգիման անցոյգ, նախակարգեալ առ տեղեաս զգաւառան և զնոսա բնակչաց նոցին ի 1845։

Գաւառք	Բնակիչք
Ա. Նէապօլիս	780,434
Բ. Երկիր Գործոյ	721,971
Գ. Մօլիզա	353,083
Դ. Աապրուցք Ներքին	301,746
Ե. ——— Արտաքին Ա	216,486
Զ. ——— Արտաքին Բ	307,708
Է. Իշխանութիւն Արտաքին	384,507
Ը. Գնդապետութիւն	311,517
Թ. Իշխանութիւն Ներքին	537,606
Ժ. Պաղնիգագ	481,288
ԺԱ. Կալաբրիա Ներքին	414,932
ԺԲ. ——— Արտաքին Ա	306,328
ԺԳ. ——— Արտաքին Բ	372,281
ԺԴ. Պարի	491,331
ԺԵ. Ոգրանտա	401,488
	6,382,706

Ա. Կամպանիա

1144. Այս նահանգ որ կոչի և Երկիր Գործոյ (Terra di Lavoro), զի յոյժ արգաւանդաւոր է, առեմեան մասն է Նէապօլսոյ յափշտա Մինչերկրականին նին. Սպիներան լերինք յարեւելից կողմանէ ձգեալ գործեն ի նմա հովիտս բարեբերս և զուարճալիս. անդ են գեղահունք Կաբիլիանոյ, Վոլտուռնոյ և Սեբեայ. կօտակալուճիւք ջրիք են ի սմա։

1145. Ա. ԿՈՒՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՆԷԱՊՕԼՍՈՑ.— Ա. Մինչերկրականին.

ՆԷԱՊՕԼԻՄ կամ ՆԱՒՈՒԼԻ (Napoli, ի հնումն Պարթենոպէ).— Մայրաքաղաք, աթոռ ամենայն իշխանութեանց տերութեանն և արքեպիսկոպոսի. գեղեցկութեամբ գրիչ և կլիմային նուազունս ոմնի հաւասարս իւր, յԵւրոպա ղնասանդնուալիս և



Նէապօլիս

գնալերմոյ ևեթ. կառուցեալ կայ իբրև ամիիթեատրոն մի յոյժ մեծագոյ գեաակի 50 հազարաւոր բարձր յերեսաց ծովու, ընդ մէջ գեղածիծաղ ծոցոյն Նէապօլսոյ և Պուէնեան լերանց, որոց երկայնակալ ի սահմանս ծովուն՝ ասի և անուն ամբառնան զարաբանդական Միզենա և Գամալելլա, շուրջ փակ առեալ ի գեղից, ի պարտիզս և յաւերակաց հոյակապ շինուածոց. յոր յաւելեալ և զբերրի և զդալարագեղ զուարճալիսն երկրին, գեղոլորգեանն երեւելիս, ընբարձրաւոյ վաճառականութիւն և զմեսաստրական տանց յոլովութիւն՝ ցանկալի յոյժ թուիցի Նէապօլիս ի բնակիլ. սակայն չենք ճարտարապետիք չգոն ի նմա որպես յայլ քաղաքս Իտալիոյ, նաև ոչ եկեղեցիքն (որ են 122) թէպէտ և ոսկով և նկարուեք պըճնեալք. տունք քառաչարի են և հնգայարիք են։ Նշանաւոր են արքունի պալատն գեղեցիկ կառուցեալ ի 1660. պալատ իշխանին Սալեռնոյ գեղեցկազարդ պարտիզք. պալատն լերին (Capo di Monte) որ է հին բնակարան Թագաւորաց. տունն զբօսանաց Թագաւորին պարտիզք հանգիստ, ուսումնարան, համալսարան, աքսաւանոց. Վիգարիա կամ Կաստուեան ամբոց՝ երբեմն բնակութիւն Կօրմանոացի Թագաւորաց, այժմ հասարակաց ժողովարան, և այլ ևս։ Մայր եկեղեցին Ս. Գեննարիոսի ունի կրկին ձոխ մատուռս, ի միում պահի հրաշագործ արիւն արբայս. Կայր եկեղեցի Ցիսուսի գեղեցիկ լեկեղեցս Նէապօլսոյ. եկեղեցի վանայ Ս. Գլարայ ուր Թաղին ննջեցեալքն յարքունի զարմին. Ս. Մարիամ Կարմրեան գեղեցկաչէն. եկեղեցին Վերաբերաց, ուր կան սաղարկերակայ կայանք կամ գեսնադամբանք նաեսի քրիստոնէից փո-

բեաք ի վիմ, յերիս բաժանեալ յարկս, առաջի մի և մատուռիք են ի նմա . — Ս · Փրանկիսկոս Պաւլի՝ որպ չև ևս է առաքեալ չինուհիւն այլ գեղեցկու-Թեամբ գերազանցիցէ զայլսիվն : Բայց ինկելոցեացն՝ են ի Կեսպոլիս 149 մենաստանք. յորոց ի միում ի կոստաստանի՝ պահին ցանկալի Նշխարք և գործք չարչարանաց Ս · Լուսաւորչին Հայոց, և պատուին ուԹերեսպ ռահանմարութեամբ ամ ըստ ամէ : Ցիմաստասիրեանս յիշատակելի են Համալսարանն հիմնեալ ի 1224, անուանի յաւէտ վասն իրաւագիտութեան լատրանին, լինկեոն Փրինչ անուն, վարժարան Նկարչու-Թեան և արձանագործութեան, ուսուն գաղափարելոյ զձեւագիրս գտեալս ի Հերքուլանում, զինուորական վարժարան, Ռէմարան Նաւատղութեան, պահարան Նուագարանաց, գպրոց բժշկութեան անանոց, գպրոց բազմարուեստի, արքունի աղքատանոց, պարտէզ ծառ-կաքաղութեան, երկու դիմանոցք, չորք մատենադարանք հասարակաց, յորս գլխաւոր է Պօպպոնեանն 150,000 հատոր գրոց · Թանգարանք Հանքաբանու-Թեան, բնական պատմութեան, բնաբանութեան, տարբաղաձեութեան · Թանգարան հնութեանց յատուկ Նարնիին, յորում կան բազում ձեւագիր մատենից հինք և պատկերք և անգրիք որպէս Հերակլեայն և Տաւրոսի կամ Ցէղի, որ երբեմն ի Հռոմի պահէին ի պալատան Փառնէզի, և անօթք և կահք, և այլն · Պօպպոնեան Ռէմարան հնութեանց, գեղարուեստից և գիտութեանց · տունք մարգասիրութեան բազումք : Ի Թատերս՝ որ են 17, նշանաւոր է Ս · Կարլոսն անուանեալ ընդարձակագոյն քան զամենայն Թատրոնս խօսելոյ և գեղեցիկ, նոյնպես և Տէլ Ֆոնտ և Սան Գաբրիելոյ : Ի հրապարակս, որոց ի հասարակի անանուն է ձև, գլխաւորք են՝ հրապարակն արքունի պալատանն՝ ուր Կարոլոսի Գ և Ֆերտինանտեայ Ա կան անդրիք, հրապարակ ուսումնարանին, հրապարակ բերդին հնգկողմեք պղպեջք՝ զբօսարան ազնուականաց : Ի փողոցս երեսիվ է Դոլեասիին անուանեալ լայն և երկայն որ գնայ ընդ ամենայն կողմանս քաղաքին, երկուստեք բարեշէն տանիք վայելչագեալ. փողոցն Գիայա՝ լայնի ծովուն, Գրոսոյ՝ որ հանէ հոյակապ կամրջաւ յարքունի դղեակն Գաբոյ ոե Մոնգէ : Ջբօսարանք Ռէմիլիչ՝ են Գիայա և արքունական գրանցան · Գիայա երանելագոյն հովանաւոր ծառք և վանդակք, մարմանդիք և նաղնիքներք զարդարեալ է · յարքունի պարտիզին կայ ուսարան կանխիմասպաղաղ. 55 ռանաչափ չքնաղատ նորին · Նոյնպես և յամբարատկին որ ի պաշտպանութիւն նաւատնգաստին կան Թաւերք և զբօսարանք ամրոխին : Աձաւել քան զ'400 պանդոկք են ի Նէապոլիս, նոյնքան և տունք քաֆէի, 700 կապելլաք և զբօսարանք, 46 անկէնոցք ազքատաց և հիւանդաց : Հինգ միլիոնաբնդք կամ ամրոցք են քաղաքին, յորս մեծագոյնն Ս · Ելմոս կայ յարեւմուտ քաղաքին, չինեալ յատուկ Կոլմնոտացի Թագաւորաց · Նոր Բերդն ամուր որ ունի յաղնեան կամար երեսիվ, ի նաւահանգստէն մինչև յամբարատկին ձգի, և է նաւարան իմն ունելով Կալերդուհիւն ընդ առաջնոյ ամրոցին սորոբրիոնոյ անցիւք · և այլ երկեր են առ արքունիւնք, առ չորկայիւն և առ նաւահանգստատեն : Ցարեւելից կուսէ և ի հարաւոյ ամբարտակն մեծ պաշտպանի գնաւահանգիստն, ի հիւսիսոյ ամբարտակին փոքր · ի սպառուած մեծին կայ աշտարակ լապտերակիր լուսատու նաւուց : Նէապոլիս կենդրոն է վաճառականութեան տերու-Թեանն · կայ ի նմա գանձարան և ժողովեաղ վաճառականաց · գործարանք ժամացուցի, մեաքսի, յախ-ճապակւոյ, օճառի, սուտ ծաղկաց, լարից քիսթաց, և այլն : — Խաղաքաղ ռամիկն յար ի վարդոյս կոչին, իբրև 80,000, բերսք են և անկիրթք, զարուեստս իւրեանց ըստ պատճի աւուրց յաւուրս փոփոխին, մերթ նաւավարք, մերթ բեռնակիրք, և մերթ ձկնորսք եղեալ, անվերարկու Թափառին յար ի վարդոյս որպէս և արուեստաւորք իսկ արտաքոյ կրպակաց և կաշայք ի գրունս տանց նսանին ի գործ · զտարիք և եռանդունք են բարուք, վեհմիդիրքք առաւել քան չարաճախաձք : Ռն · 417,000 ·

1146 · Շուրջ զքաղաքաւս բազում վայրք են նշանաւորք · յարեմտակողմն ի Ճանապարհն հրուանդանին Միզինոյ ձգի գաշտ մի լի ուեւրակոք տաճարաց, զբօսարան տանց Հռոմայեցւոց, ուր հինգն Համաւեէին լինել զմեսս գիծոյց · ի Ճանապարհի անդ կանգնեալ կայ և Պաւսիպիոյ լեռան ի հրաքղեից կերպարանեալ, խոռոչացեալ ի կողմ մինչև ի միս կող 2,000 ոտնաչափ երկայնոյ. Թեամբ իբրև պատ մի գողտրի 30 ոտնէ լայն և 50 ոտնաչափ բարձր · կոյն նա քառանձաւ Հռոզիչբերդ : — Դաման վիրգիլեայ, որոյ համար-



Քարանձաւ Հռոմիլիոյ

հալ է և տերեք ի Ճանապարհորդաց սպառեալ. — Լիճն Ագեռնոյ ի բերան քարայրին ի գոգ միջոց, որոյ ջուր ուրեք ուրեք եռայ առանց ջերմութեան · օդք վայրացն անառողջք են. — Խորութք կամ քրտնարաք Ս · Գենեարիոսի յեզերս ընձի, ուսանի ծխէ շոգի ծծմբային. — Քարայրն Շան որոյ ստորին մասն ցեալ է կաղուկ. — Ագռաւոյն հովիտ ընդ միջ ժայռից և զոսիւք նոցին ջերմուկք ծծմբային աղբերաց · — Սոլֆաթարա հրաբուխ վիրացեալ անբեր ամայի · կաւուտա և ապառուտա երկիր ծծմբային. — Ձանապարհ կամպանիոյ՝ յորում գտանին աւերակք հին չինուածոց և գերեզմանաց :

Ռուոցոլ, (Puzzol), Պուտեոլիս) · — Քաղաք 9.000 բնակչաք, յորում բազում աւերակք են նշանաւորք · զոր օրինակ ամֆիթեատրոնն (կոլոսէոն) մեհեանն Ադամաղաչ Սեբաստեայ, տաճարն Օգոստեայ՝ որ այժմ մեծ եկեղեցին է. և արտաքոյ քաղաքին յատուկ բլրի միոջ զբօսարան տուն կիկերոնի զոր նա Ակադեմիա և Պուտեոլանն կոչէ. — Նոր լեառն կոյր բարձր, որ յերիս աւուրս կերպարանեցաւ կան-

դնեցաւ ի սառնութեան 1538 ամին, յորմէ նուազեցաւ և ջուր Լուիզին էն որ ըստ վկայելոյ ովսաթոսի բերէր աշխէս ձկունս և ոստրէ, այժմ ձախէ է հոն նորին։ — Խորտիջ Տրիեսթոյ կամ Կերտնի ուսած ծխէ շտգի բարձր և ջերմ, կարևոր ի պէս բժշկութեան։ — Քարայրն (Grotta) ուր ըստ հնոց ա. ռասպելեաց Միթրիայն կամ Հարցուհին Կումայ պատգամախօս լինէր։ Սակաւք գեռ մնանէ ի սա, և ըստ առասպելին և սա մուտք է գետոյ։ — Աբեմեան լիճ ի լերանցանկէն, զոր Վիրգիլիոս աֆաւոր ինն և սերմանած նկարագրէ, պայծառ են ջուրք նորա և ձկնաշատ, 400 ոտնաչափ խոր, և չրջապատ նորա 1800 ոտք։ — Կումա, առ լճին, անուանի առ Հռովմայեցիս ի ժամանակս հարստութեան և զեղս բարոյից բնակչացն. անդ կայ Երջանիկ կամար (Arco felice) գուռն մի հին. Տաճար Հանայից (Tempio di Giganti) առ հին պարսպաւոյ կումայի։ — Աշտարակ Հայրենեաց (Torre di Patria) համարի գերեզման Սիպիոնի, և տուն զբօսանաց նորա նորա էր ի տեղւոջս յայսմիկ։ — Լիճն Ֆուզարոյ՝ այն է Աքերոնէ հնոց բանասացեղծից, որ ընդ անձուկ ջրանցս Թափի ի ծով, ի նա խառնի գետակն փոքրիկ Կոկիտոն ձայնեալ առ հինս։

1147. Պաձս (Baja)։ — Քաղաք անուանի ի ժամանակս Հռովմայեցւոց առ Ֆուզարոյ լճաւ, աւերակաք հոյակապ շինուածոց տեսանին ի նմա, փըլատակք պալատան Ցուլեայ կեսարու, և մեհենեաց Աստղան, Աննահատ և Վերնեայ. աւազանն որան չէրլի, հասոր մեծի աւազանի միոյ։ — Հարիւր սենեակք (Cento Camerelle) որ են ստորերկրեայ խորք և Թուխն բաղանիս լինելէ առ հինս։

Պաձս (Bacola, Պաւլի)։ — Գեղ փոքրիկ։ յոմին նորա կայ նաւահանգիստն՝ ուր Կերտն կամեցաւ ջըրահեղձոյց առնել զմայր իւր Ագրիպպինա, գերեզմանք շուրջ պատին զքաղաքաւն, յորս նշանաւոր է Ագրիպպինայն որ սպանաւ ի տան գերջին։

Լիճն Մեռեալ Ծով (Mare Morto), որ հաղորդեալ Թիւն ունի ընդ ծովու. յափունս սորա հինք դէպին զնաւհանան գաշտս ոգւոց երանելեաց։

Հրաւանդանն Միզենայ՝ ի հարաւային կատար Բուջ ցոլայ ծոցոյն. սա զանդ առնոյր նաւատորմիղ Հռովմայեցւոց պահ առնել ծովուց մինչև ի Հերա կլեան արձանս. ի սորա սարին կայր քաղաք մի զոր Լոմպատացիք և Վարակինոսք քանդեալ աւերեցին. մնայ լապաներն ի բարձու ի լուսաւորութեան նաւաց։

1148. Ցարեկլս Նեապոլսոյ, ի ծոցոյն մինչև ի գլուխն Գամբանելլա, գեղեցիկ է տեսիլ երկրին և նշանաւոր անդիք ի նմա, — Բուրեխէ, գեղ փոքրիկ բնակեալ ի 6,000 մարդկանէ հոգւով ի լեառն վեսուվ ի ղլուխ Հերակլեայ վայրի. կայ ի նմա մեծագործ տուն ազգունի, որոյ պատգեղ ձգին մինչև ի ծով ելքն. — Ռեզինա, աւան մեծ ի գեղջն, ի նմա է Ֆաւորիտա պալատ իշխանին Մալեձնայ. առ սմա և Հերկուլանոս (Hercolano)։ — Քաղաք որ ի սառնութեան մեծի ի Թուխն 79 ծածկեցաւ ընդ լաւային և ընդ ապեգործ քարամբք ոք փակեցին զնա 60 ոտնաչափ Թանձրութեամբ, և է Հերքուլանոն ընդ յատակաք Բորդիչի և Ռեզինա գեղոյ. ի 1711 զառաջինն ի փորելն ջրհոր գտան նշմարանք հին քաղաքին և ի 1738 սկիզբն եղև խոյղ և ինդիր առ նելոյ որ ի նմա ևիւթոցն։

Բոմբեի (Pompei, Պոմպէուպոլիս)։ — Կովին սառնութեամբ խորասուզեալ՝ գտաւ ի 1748, այժմ երևի ի նմա փորոնն կամ հրապարակն կամարակապ, տաձարք, Թատերք, տունք, չուեմարանք լի համբարք, և կահք, արձանք և անօթք որ գասեցան ի Պարոնեան Թանգարանս. ի Բորդիչի պահին 1600 պատկերք հանեալք ի Հերքուլանոնէ և ի Բոմբէեայ ջրախառն նկարոյ։ Ի Բոմբէի նշանաւոր է տուն կ. Սալուստեայ, և զքանչելի միւռեան յատակն որ Նըկարէ զմարտ Ազիքանդրի ընդ Դարեհի։

1149. Դուրբէ տէլ կրեճոռ (Torre del Greco, այն է՝ Աշտարակ Ցուլեայ)։ — Կէս փարախաւ հեաի ի Բոմբէեայ, ունի գործարան բաղոյ. յամին 1794 հնզեցք լաւայի աւերեցաւ գլխովին քաղաքս այս։ Բնակիչք 16,000։

Գաստէլլամարէ (Castellamare)։ — Ի հարաւոյ ափունէն ի գեղաշուքարձ վայրի, ունի նաւարան, մըԹեբանոցս, բաղանիս, գործարան Ֆաբրիկէ խմորոյ. քաղաքս այս մասամբ չինեալ է աւերակաք Սպասեալ հին քաղաքի որ կործանեցաւ ընդ Հերքուլանոնի և ի նմա հեղձամաշ եղև երեցն Պլինիոս։ Բն. 20,000։

Սորրենդոռ (Sorrento)։ — Քաղաք ի ձորսարուԹեան անուանի. հայրենիք բանասացեղծին Դասսոյի։ Բն. 6,000։



Սորրենդոյ

1150. Հուպ ի ծովեզրն կան կղզիքն Գաբրէա և Բրոչիսա և Խպիա։ Երեք փարախաք հեաի է ի մայրաքաղաքէն լեառնն Վեսուվ հրաբուխ բարձրացեալ ի բարերջոյս դաշտ ոստ 3,700 կոնաձև տեսլեամբ. Ճանապարհորդք ելանեն ի նա ի Ռեզինա գեղջէ և իջևանին ի Ս. Սրկիչ վանս, յորմէ և ի վեր սկսանի բոլոր լերինն լաւայիւ և մխրոյ և ազգի ազգի քարամբք գժուարադնալի յարգարեալ. ի կատար լերինն Խառնարանն բացեալ է կէս փարախս տասնեակաւ և 200-300 ոտնաչափ խորութեամբ. ի բազում գոյց ծխէ անդուլ շուէջ ծծմբոյ. ի խորս վեհն երևին կոյսք մխրոյ հրաշէկ, որպ գագաԹամբք կոչին բերանք հրաբղխին, յորոց ըստ ժամանակի ժամանակի ծուռանայ սէուն ծխոյ և բոցոյ և ահագին դղրդմամբ հրացան քարինք արձակին ցմեծ չափ հե-



Խառնարան Վեսուվիոյ

աւաւորութեան. իսկ ի ժամանակի վերափփման և ժայռքման հրաբխին տեսարանք աճապարագրիք պատահեն. մրրկակ ծխով և քարամբք պատի լեառնն. հեղեղք լաւայի հասանեք հրահալելեաց պատառեալ զկողս լերինն ընդ նոր սահմանս յորգեալ զկուն որպես գետք հրեղէնք, զուարթութիւն գաշտաց ընդ երկայն ասպարէզս փոխի յանապատ սիրտաեսիլ. յայսպիսոյ վերաշնչութենէ կործանեցան քաղաքքն Հերքուլանում, Բոմպէի և Սգապէա: Բայց կայք և շրջակայքն վերստին ցասան փորպան չուրջանակաւ գեղիւք և քաղաքօք, պարտիզօք և այգեօք վայելչացեալք են. անտի եղանէ ազնիւ գինին Արաասուք Բրիստոսի, և ծոյն գինի: Ցեւեան հրաշնչութենէք լերինս եղեւ ի 1850 (փետր. 12) և ի տարուջս (1852 սասանութիւն յեղս մարտի):

1151. Ռ. ԵՐԿՐՈՐԴՈՑ. — Երկիր բարեբեր որ ի հեսպերայ ձգի մինչև ի վիմակս Եկեղեցւոյն զեղերքք ծովուն:

ԳԱՂԵՐԴԱ (Caserta). — Բաժանեալ ի նոր և հին, գլխաւոր քաղաք. ունի պալատ մեծադործ. ջրանցս որ անցեալ ընդ երկուս լերինս և ընդ ձոր մի խոր 180 ոտնաչափ տաճի զջուր հեռի 10 փարսախաս. յարքունի պալատեան նշանաւոր է անգասանին 98 կամեայ սեամբք. գործարան մետաքսի Սան Լևչիոյ կարեւոր չորք: Բն. 20,000:

ԿԱՊՈՒԱ կամ ԳԱՊՈՒԱ (Capua). — Ուռ. Վուլտուռնոյ, ի հնումն մայրաքաղաք Կամպանիոյ, և անուանի Ճոխութեամբ և արգասեօք անդոյ. ունի մայր եկեղեցի գեղեցիկ: Բն. 8,000: — Հինին Կապուա յոլսում Ամերեաց Ընկերալ էր ի սեպտ. Սանգա Մարիա Մատչիորէ փոքու քաղաքի, ուր կան վիլատակք ամիփիթեատրոնի, և այլն: Բն. 9,000:

1152. ԱՒԵՐՍԱ (Aversa). — Ջուարճագեղ քաղաք մերձ ի Նէապօլիս, ունի լիմարանոց մի և որջանոց մեծ: Բն. 18,000:

ԿԱԵԴԱ (Gaeta). — Քաղաք ամուր ի հիւսիսակողմն. ունի նաւահանգիստ համառուտ, գիրք քաղաքին նըման են ձիպրղագոյց: Բն. 3,000: Այս նոտաւ այժմու սրբազան քահանայապետն Պիոս Թ խուսեալ ի Հռոմէ, ի 25 նոյեմբ. 1848 ամին ց'Ա սեպտ. 1849 տարւոյ:

ԱՐՓԻՆՈ (Arpino). — Քաղաք վաճառաշատ, հայրենիք կիկերոնի և Մարիոսի: Բն. 12,000:

ՄՈՒԴԻ ԳԱՍՍԻՆՈ (Monte-Cassino). — Աւաքին մենաստան Բենեդիկտեանց յաւաստաժուռ լերին, հոյակապ շինուածովք և կարեւոր գիւանօք. հիմնեցաւ ի 528 ի սրբոյն Բենեդիկտոսէ. աստ եկաց առ ժամանակ մի և կասպոդոր իւնան բազմահմուտ ի Ջ դարու:

1153. Գ. ԻՇԽԱՆՈՒԹԻՆ ՆԵՐԻՆ ԿԱՄ ՄԵՐՋԱԴՈՑՆ (Principato Citra). — Ի ծովէ զերին, ընդ ամէն կէսապետոյ և կալաբրիայ. երկիր բարեբեր այլ անմշակ:

ՍԱԼԵՐՆՈՑ (Salerno). — Գ. Ռ. ի համանուն ծովածոցին, անուանի էր վանն համալսարանին հիմնեալ ի 1150, յորում երեսուն էր լարանն բժշկութեան. փոխան համալսարանին հիմնեցաւ լիկէոն ի 1817. մայր եկեղեցին շինեալ է առերակոք տաճարին պետանի, առքնեալ նորին կան ըղանատարը վիլատակք կիւդոպեան որմոց և յիշատակարանաց Ցուծաց և Հռոմոց: Ի սմա է շիրիմ Գրիգորի Է որ մեռաւ



Պալերմոյ

ատա Ի 1085 · Լինին ատա և ծծնավաճառք : Բնա-
կիչք 12.000 :

ԱՄԱԼՖԻ (Amalfi) · — Արքեպիսկոպոսանիստ քա-
ղաք անուանի յոյժ Ի միջին գարու ազատ նաւա-
հանգստատեղ : Բն · 3.000 :

1154 · Գ · ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ԱՐՏԱ-
ՔԻՆ ԿԱՄ ԲԱՑԱԳՈՒՅՆ (Principato Ultra) · —
Այն է Սամնիոն հնոց, ունի հովիտս բարեբերս,
բայց ոչ բարւոք մշակեալ :

ԱՒԵԼԼԻՆՈՅ (Avellino) · — Գլ · Ք · վաճառաշատ
և ձարտարարուեստ : Բն · 22,000 : — Ի տասնամեայ
Աբբայից փարթս քաղաքիս կան անուանիքն Ի վեպս
Հռոմմայեցւոց Կաւդինեան կամասանք :

ԱՐԻԱՆՈ (Ariano) · — Ուր որով կան գարանձաւք
ձեռագործք : Բն · 13,000 :

Բ · Ապրուզք

1155 · Այս նահանգ Ի հիւսիսակողմն լեռնային
է և բարի Ի մանաւանդ պաճարայ քան Ի բուսաբերու-
թիւն :

Ե · ԱՊՐՈՒԶՔ ԱՐՏԱՔԻՆ Ա (Abbruz-
zo Ulteriore I) · — Ի միջ Ապենեանց և Ադրիականին
Ի ծագս հիւսիսոյ, Ի ձարտարուեստն արուեստից
բարգաւաճ :

ԹԵՐԱՄՈՅ (Teramo) · — Գլ · Ք · ատ Թորնթե-
նոյ : Բն · 10,000 :

1156 · Զ · ԱՊՐՈՒԶՔ ԱՐՏԱՔԻՆ Բ
(Abbruzzo Ulteriore II) · — Ցարևմտեան վերնոյն, և
ևս լեռնավայր :

ԱՔՈՒԻԼԱ (Aquila) · — Գլ · Ք · ատ Բեսգարայ
ունի բերդ մի : Բն · 15,000 :

ՉԵԼԱՆՈ (Celano) · — Ուր երի համանուն Լճին
որոյ վրայ վարսակ երկայնութեան է, և թերի Ձուկն
առատ և ջրաներ Տաւս : Բն · 3,000 :

1157 · Ե · ԱՊՐՈՒԶՔ ՆԵՐՔԻՆ (Ab-
bruzzo Citeriore) · — Ի հարաւոյ կողմէ վերնոցն,
ունի վանկրոյ գետս :

ԿԻԵԹԻ (Chieti) · — Գլ · Ք · Ի վերայ Բեսգա-
րայ, արքեպիսկոպոսանիստ է · ունի վաճառս գի-
նեղ, ձիթոյ և Մետաքսի · ատ հաստատեցաւ միաբա-
նութիւն թէագին կրօնաւորաց : Բն · 16,000 :

Գ · Ապուլիա կամ Բուլիա

1158 · Դաշտային է այս երկիր քան զայլ մա-
սունս Ի՛տալոյ, ունի աւազուտս և ձախճախին
մօտս, և կայ Ի հարաւոյ Ապրուզացւոյ :

Ը · ՄՈԼԻԶԱ · — Ի հարաւակողմն Ապրուզաց
գաւառ բազմամարդ :

ԳԱՄԲՈՅ–ՊԱՍՍՈՅ (Campo-Basso, Ցած-Դաշտ) ·
— Գլ · Ք · ունի գործարանս պղտղամանկ : Բնա-
կիչք 10,000 :

ԱՆԵՈՒՆ (Agnone) · — Ունի և սա գործարան հրա-
զինուց և երկաթեղինաց : Բն · 8,000 :

1159 · Թ · ԴՆԱՊՏՈՒԹԵԱՆ ԳԱ-
ՒԱՌ (Capitanata) · — Ունի լայնածաւալ դաշտա-
յայս առագելալ Ի Ձերվարդ և յՕՖանդոյ գետոց,
այլ փոխանակ մշակութեան Թողեալ յարօտս արջա-
ոց և երիվարաց · Ի ծովեզերն դան լճէք և աղ
առաջինք որ տան աղ ծովային :

ՓՈՃՃԻԱ (Foggia) · — Ուր Ձերվարդիւս, գլխաւոր
քաղաք · ունի վաճառ շահաբեր, յորինոյ, գինւոյ,
ասու և ոստրէի · և ածնավաճառս : Բն · 26,000 :

ՄԱՆԳՐԵՏՈՒԻԱ (Manfredonia) · — Ուր անուանա-
խիտ կարկանոյ լերանց, ունի նաւահանգիստ և ա-
ԹոռԱրքեպիսկոպոսի : Բն · 6,000 :

1160 · Ի · ՊԱՐԻ ԵՐԿԻՐ · — Պաղպեր գա-
ւառ այլ անջուր, և Ի ձարտարուեստն մասին ոչ
յեանեալ :

ՊԱՐԻ (Bari) · — Ծովափայեաց գլխաւոր քաղաք
ամուր · ունի վաճառս ձիթոյ և բամբակի կերպասուց ·
լինէն մի և Թաւոր : Բն · 28,000 :

ԴՐՈՒՆ (Trani) · — Եւ սա ունի նաւահանգիստ,
միջնաբերդ, գեղեցիկ մայր եկեղեցի բարձր աշտա-
րակաւ զանգակաց և աթոռ արքեպիսկոպոսի : Բնա-
կիչք 16,000 :

ՊԱՐԼԵԹԴԱ (Barletta) · — Ի բերան Օֆանդոյ, վաճառաշահ նաւահանգիստ, ունի զարթանս ծովային աղի · Բն · 23,000 ։

ՊԻԹՈՒՏՈՑ և ԱԼԹԱՄՈՒՐԱ և Ի ծովափին ՄՈՆՏՈՊԼԻ (Bitonto, Altamura, Mondopoli) · — Երկրորդական պանիացող կառուցեալ · Իւրաքանչիւր խրճ 16,000 բնակիչս ունին ։

1161 · ԺԱ · ԵՐԿԻՐ ՈՐԱՆՏՈՑ · — Իբրև թեթակղզի մի · բարեբեր է հողի, ունի ընդեղէնս, ձիեղէնի, պարարտարօտ մարմանդս · Ագրիականի, Ջոնիցք Ոդրանտոյ և Ծոցի Տարենտոյ պատին զնովաւ ։

ԼԻՉՉԷ (Lecce) · — Երկու փարսախոք հեռի Ի ծովէ, մի Ի բարեչէն և գեղեցիկ քաղաքաց Իտալիոյ · Բն · 22,000 · — Ի սահմանս սորա լինի քարի համանուն, յորմէ գործեն անօթս ։

ՈԹՐԱՆՏՈ (Otrando) · — Ամուր քաղաք արքեպիսկոպոսանիստ, այժմ նաւահանգիստ նորա չէ կարեալ, որով և փառք քաղաքին խրճիթացեալ · Բն · 5,000 ։

ՊՐԻՆԴԶԻ (Brindisi) · — Ամուռ է արքեպիսկոպոսի · Նաւահանգիստ սորա տակաւ աւազովն կուտակմամբ անգործելի լինի նաւից · Ա յս է Իրունտուսիոն քաղաք Հռովմայեցւոց ուր կայր մասն մի նաւատորմին նոցա · Նաև Ի միջին դարս երեւելի էր վասն նաւասցն որ դէպ նային յարեւելս · առ խաչակիրք 60,000 բնակիչք էին Ի նմա, այժմ 7,000 անգ · ամենայն լինչ Ի քաղաքիս յետս ընդդէմ վաճառական է, և օգք իակ ապականեալ վասն ընդարձակելոյ հաճախցն ։

1162 · ԿԱԼԼԻՊՈԼԻ (Gallipoli) · — Նաւահանգիստ ամուր և վաճառաշահ Ի վերայ Տարենտայ ծոցոյն · Բն · 8,000 ։

ԴԱՐԱՆՏՈ կամ ՏԱՐԱՆՏՈ (Taranto) · — Արքեպիսկոպոսանիստ քաղաք առ համանուն ծովածոցոյնի, ուր ունի նաւահանգիստ ապահաւ և ոչ սակաւ վաճառաշահ · Հին քաղաքն, որ գան զայժմուս ընդարձակ էր, կանգնեցին Լակեդեմոնացիք 700 ամք յառաջ քան զՔրիստոս, 300,000 մարդկան բնակիչ Ի նմա մինչ ծաղկեալն էր · Գանձի անդ սարգ մեծ որ Ի նորին անուն գտեալ ասի · Բն · 20,000 ։



Ոդրանտոյ



Տարենտոյ

Դ · Կալաբրիա

1163 · Թերակղզի Ի կոշին հարաւոյ արեմտից, լեռնաւէր, անտառախիտ, բարեբեր և ջերմին ։

ԺԲ · ՊԱՋԻԼԻԿԱԴ (Լուկանիա) · — Գնաւն Պանդանոյ և Պասիենդոյ ոռոգեն զաս · պատեալ է յԱպենեանց և Ի ծոցոյն Տարենտայ · ամայի է և անբեր ։

ԲՈՏԵՆՑԱ (Potenza) · — Գէ · Ռ · Ի լերինս Ապենեանց ուր բաժանեալ նոցա Ձգին մասամբ յՈգրանս և մասամբ սաս Ի Կալաբրիա · Բնակիչք 10,000 ։

1154 · ԺԳ · ԿԱԼԱԲՐԻԱ ՆԵՐՔԻՆ (Calabria Citra) · — Լեռնային, անտառային, պարարտաբոյս և բերբի ։

ԳՈՋԵՆՑԱ (Cosenza) · — Քաղաք արքեպիսկոպոսանիստ, Ճարտար յարուեստս և վաճառաշահ մե-



Ցեսխ Ապենեանց Ի Կալաբրիա



Գաչտաւայրք Գոզենցայ

տաքսի վաճառուք. կայ յատին գրագիր վաճառ առ երի Սիլայ անտառի որոյ 28 փարասխ տարածութեան է։ Բն. 13,000։

ԳՈՐԻԼԻԱՆՈՑ (Corigliano, Կորիղլանոն). — Ի վե-



Գորիլիանոյ

ձակի ուրիք, ուր աձէն քաջ նաղնջենիք, կիտրոն, ձիթենիք և այգիք։ Բն. 6,000։ — Առ Տարենտայ ծոցին երևին աւերակք Սիբարիս քաղաքի, որոյ բնակիչք համբաւեալ էին ի զեղչութեան։

1165. ՀԻ. ԿԱԼԱԲՐԻԱ ԱՐՏԱՔԻՆ Բ (Calabria Ultra II). — Ի հարաւոյ կողմանէ վերնոյն։

ԳԱԴԱՆՅԱՐՈՑ (Catanzaro). — Գլ. Ք. ոչ ինչ կարի հեռի ի Սգուվիլաք ծոցոյ, ունի գործարանս մետաքսի։ Բն. 13,000։

ՄՈՆԴԷ ԼԷՈՆԷ (Monte Leone). — Եւ սա գործարանս մետաքսի ունի։ Բն. 10,000։

ՍՔՈՒԻԼԼԱՔ (Squillace). — Ունի գործարանս յախճապակւոյ։ Բն. 4,000։

ԲԻԶԶՈՒՈ (Pizzo). — Փոքրիկ քաղաք առ Ս. Եւփիմիոյ ծոցոյն. աստ արգելլին ղմիւրա ի 1815. յայնմ հետէ քաղաքն յորջորջեցաւ Հ—ո—ր—է, և ապահարկ արար զայն թագաւորն։ Բն. 5,500։

ԳՐՈՒՄԷ (Crotone). — Քաղաք փոքրիկ առ աւերակաք հնոյն Կրոտոնայ միջի՛ն ծով. որ էր Միլոնի ընչիցն հայրենիք։



Սգուիլաք

1166. ՀԵ. ԿԱԼԱԲՐԻԱ ԱՐՏԱՔԻՆ Ա (Calabria Ultra I). — Ի հարաւակողմն վերնոյդ, ջերմագոյն ի գաւառս կալաբրիոյ։

ՌԵՃՃԻՈՑ (Reggio). — Նաւահանգիստ վաճառաշատ ի նեղուցն Մեսսինայ. ի 1783 մեծաւ սաստուածեամբ կործանեցաւ քաղաքս. ունի ձեռագործս կերպասուց և կտաւեաց, և ոգեվից ըմպելեաց և ձէթ. սա է հռետիրիկն քաղաք կառուցեալ ի Կոզքսացւոց։ Բն. 22,000։

ՃՈՐՃԱՔ (Gerace). — Արքեպիսկոպոսանիստ քաղաք առ երի ծովուն չինեալ աւերակաք Լոկրիայ որ էր ինչ հեռի անտի։ Բն. 6,800։

Կրկին այս կալաբրիայք առ Հռոմայեցիս Բրուտիոն կոչէին, ուր Անիբաղ ընդերկար ձգնեցաւ ընդդեմ զօրութեան Հռոմայ. կալաբրիացիք յարուածեան անուանի են ի դէպս ընտեցիս։ Ի լերինս անդ նոցին բնակէ ժողովուրդ խաշնադարման սոպա և սիմար։

Կղզիք յատուկս Դեսպօղաց

1167. Ս. Յարեմտակողմն ի ծոցն կաէդայ կան

ՊՈՆԶԱՑ (Ponza). — Կղզիք վեց բարեբերք և հրաշկիք, ընդ կուսակալութեամբ Գործոյ երկրին, և Թանգարանք են վաճառուց նկելոց։

Ռ. Ի ծոցն դէսպօղաց ընդ նովին կուսակալութեամբ,

ԻՇՔԻԱ (Ischia). — Կղզի 7 փարասխ քառ., զուարճագիկ և բերրի, ունի ջերմուկս. և բնակիչս 25,000։ — Ցաւքիա փոքու քաղաքի կան բաղանիք։ Բն. 3,500։

ՊՐՈՉԻՏԱ (Procida). — Կղզի գինեբեր և պաղատիա, բարեբոյս։

ԳԱՊՐԻ (Capri). — Առ գամբանելոյ հրուանգաներն, հրակիր և ապառաժուտ. 4,000 բնակչաք, որոց պուտետ է ձկնորսութիւն և որս լորից. հոյակապ ապարանիցն Տիբերեայ կայսեր աստ նշմարին աւերակք. հրաշալեր և զարմանալի է անձաւն Ջաւերժատարածանց կոչեցեալ 125 ոանաչափ խորութեամբ ի ծովու, որ գտաւ ի 1826։

Գ. Ցաւքիոյ Ագրիպպայնին ընդ գինագետութեամբ են

ԴԻՐԵՄՏԻԵԱՆ (Tremiti) կղզիք չորք սակաւամարդք։

Բ. ՍԻԿԻԼԻԱ.

1168. Ազգաբնութիւնը Սիկիլիոյ մասունք են Սիկիլիա կղզի, բայ Հնոց Սիկանիա կամ Սիկիլիա կամ Տրինակրիա, և Լիպարեան (Եօլղեան) կղզիք, Ուսթիկա, Եգիատք, Բանդելլարիա, և այլք մանունք ի հարաւակողմանն • ի ցամաքին բաժանէ զՍիկիլիա նեղուցն Մեսսինայ որոյ կէս փարսախ է լայնութեան, և ի նմա են անուանի ժայռքն Ռեմա և Գալիփդոյ, որ են Սիւլլա և Քարիբդիս նախնեաց • Երկք հրաբանդանք են յերից կողմանց կղզւոյն, Փարոս, Բասսարոյ և Դրեպբանի • Լերինք պատեն զհիւսիսայ. կողին և բազուկ մի նոցին ի միջոյ երկայնի ընդ հարաւ և կուն Բորի կամ Կիպարոսի լերինք • բարձրագոյնք ի սոսա ժամանեն ց'3.000 ոտս բարձրութեան, Ս-Յուլիանոս (Երիքս), Սբարվերոյ կամ Պերուտերի • բայց Եթնա լեառն բարձր է 10.300 ոտնաչափ • Հովիտք բազումք տարածեալ կան ի գոգս լերանց բարեբերք յոյժ • — Գետք մանունք են Սիկիլիոյ, որք ուղղորէն ի Լերանց իջեալ ի ձմերայիկ յարուցանեն հեղեղս, այլ յամառան ցամաքին • գլխաւորք ի սոսա են ձիաբեդգա յարեւելակողմն և Սալսոյ ի հարաւոյ •

1169. Պնմոյ Սիկիլիոյ Նման է Պալաբրիոյ, և Քերմագոյն եւս, այլ բարեխառնեալ ի ծովային սողոսիկ, բայց Ջհանուային վայրացն ոչ են առողջարար օդք • Նաև լիճեխաման շուենչք Քերնակիոք չուէն սատ յերկար որպես ի Սպանիա և ի Պալաբրիա • բայց սակաւ սահմանութիւնք երկրի հասուցանեն ուռճատպս անհնարինս • Երկիրն արգասաւորագոյ բերբ գամենայն ազգ բերոց հիւսիսային Աֆրիկոյ և հարաւային Եւրոպոյ • գինի, ձէթ և մեսաքս քաղիկ եւս յարգասաւորութիւն գային • եթէ ժողովրդեանն մշակութեան խնամ կալեալ էր • առատ է և ի բերս ընդեղինոց, և հանքոց • Եղէգն շաքարի որ բնիկ էր Սիկիլիոյ այժմ յերկին գլխովին առ անհետութեան բնակեալ երկրին •

1170. Նշանաւորք են ի կղզւոջս երկքին հրաբուխքն, Եթնա, Մագալուպա և Գալանիդոյ • Եթնա որ և Մոնտիսկլոզի յարևելակողմն կղզւոյն սահմանեալ է. Նապատեէ, շրջավայրք նորա մինչև ի 40 փարսախ լայնչիւ. զանգեալ և յոյժ բարեբերք են, և գեօրգ բազմութ անգամոր • ց'6.000 ոտնաչափ բարձրութեան լերինն անեն կաղնիք և եղինի և այլ ծառք անտառք • անտի և անդր լերին դէղ գալար, այլ դէզք և խառ ի խառ լաւս և մտիւր և ձիւն, ուրեք ուրեք ամբառնան և բլուրք որպես զինոց ծխելով • ի կատար լերինն խառնարանն 2 փարսախ տարածութեամբ բացեալ, ցուցանէ գուբս կամ բերանս, յորս միջագուբն են 60 ոտնաչափ է շրջագայս և անգագաթ եղանէ անտի սիւն բոցոյ և ծխոյ և մտիւր • Հողին որոտաձիր, ասրաչէկ յատակ գետնոյն, և մրրկեալ ծուխ ծխմտոյն ոչ Թոզուն համարձակ նկատել զմիւնն • բազում վտանգ հասանէ կրել Ճանապարհորդաց որ կամիցին քննել զայն որպես զվէսուվիոն, որոյ զբօսալից և գիւղերն են եղբ • Յետնա ելանեն ի գագաթս քաղաքէ որ առ ոտամբ լերինն կայ, յորմէ մինչև ի հինգ-լոսի գետ գեղցիկ է ճանապարհն և այգեք պըճնեալ • բայց ի սպառուածոյ անտառացն մինչև ի սահմանս ձեանն երթալ և սեպանալ լեառնն, բլուրք քարուտք և լաւայի կոյսք խիտ առ խիտ ընդ առաջ ելանեն • իջևանք ուղևորաց են անձաւք երկու երկու



Կատար Էտնայ

փարախաւ հեռի լերկրաց, Քարայրն Ա.յծեմանց կամ Անգղացւոց և Քարայրն Գառնկլուսչիոյ • յերորդում իջևանին առ անուանեալ Աշտարակի Փիլիսոփային (Torre del Filosofo) կայ սխոռ ուր գարմանեն զջորիս ի վերելակս Եթնայ, որ և ոչ սակաւ աշխատութեամբ հասուցանեն ի գագաթ լերինն • անտուստ երևի լայնածաւալ սեւսարան, կղզին հարմրէն և որ զնովաւ պարք կղզեաց և Սաորին խոալիա, և ի պարզութեան օդոց նշմարին յայնկոյս Միջերկրական ծովուն ափունք Աֆրիկոյ • Սասանութիւնք և տրացանութիւնք սակաւ լինին Եթնա, և միայն բազում հասուցանեն, յաւուրց Հռոմայեցւոց մինչև ցայժմ ուշացուն անգամ անգին ազէտքս գառնացնելք, և չարաչար յոյժ եղև ի 1693, յորում Գագաձա և 40 քաղաքք ընդ նմին կործանեցան, և 100.000 մարդկան կորեաւ • յետին սասանութիւն եղև յամին 1831 և հասոյց զեան մեծ •

1171. Մագալուպա կայ ի հարաւակողմն արևմտեան հուպ ի ձիրձենդի, լեռնակ 300 ոտնաչափ բարձրութեամբ կուսակեալ ցամաք կաւոյ յամայութեան ուրեք • ի գագաթան նորա կան բազում գուբք ջոյ յետնադան, երբեք երբեք բարձրացեալ ջոցն իբրև 10 ոտնաչափ վարեն զտիղմն և զկաւ ընդ առաջ վայր ըղոյն • այս հրաբուխ կերպարանեցաւ ի 1777 ի սեպտ. Յահ3ի միւսմ • — Գալանիդոյ հուպ ի Մագալուպա առ երկի Ըհաքայ յային Ծովուն 1.000 ոտնաչափ բարձր, ի Թիկունս և ի կատար նորին կան փոսք ծխահանք ջերմինք, և յատս նորին աղբեր ծերմջրային ջոց •

1172. ԲՆԱԿԻՉՔ. — Սիկիլիացիք (2,300,000) ազգեաք են քան զԻհէապոլէսեցիս, արուեստ նոցա միակ է ասատյանակութիւն, առնեն վաճառականութիւն ի

Ծովը. իբր 58,000 միանձուկք և կրծնաւորք էին նոցա սակաւ ամք յառաջ բնակեալ ի 1,100 վանս. 78 գիւղաք և 1000 պարտչաք։ — Շաբաթաբան Հռոմայեցի անուանէր Սիկիլիա ի հնումն զայն ազգի ազգի բնակութեան. հաստատակամութիւնք նորա բարգաւաճք նաւաորմիդր հանէին ընդ ծով. այժմ խոպան անջատեալ է. բնակիչքն նուազեալք և գրեթէ հատասրեալ. Թուրք բնակեց երկուց միայն քաղաքացն՝ Սիրակուսայ և Ակրականդայ. տունք անպատասպարք և բնակք բոկ և մերկ. ի բազմաց ի քաղաքաց իջևան ոչ գտանի ուղևորի, գեղ և ոչ մի ի գաշտաավայրս, բայց հիւղք ազքատին. երկիրն ամենայն բաժանեալ է ընդ ազնուականս և ընդ եկեղեցւոյն ուխտ. և ճանապարհք անգամ արահետք ոչ գոյին յառաջ քան զամն 1832։ Սիկիլիացիք բարուք նրբամիտք և եռանդունք են, վեհմիտիդիք և պղերգք. աւազակք և յուլսզակք յոլով են ի նոսա, ղորս չէզև բաւական անհետ ածել տերութիւնն. բայց հաւատարիմք յոյժ համարեալ են ի խոստմունս իւրեանց, և անցանել զբանիւ ամեն մեծ է առ նոսա։

1173. Յառաջնումն հատուած ի հեղինակացուց բզնակեաց յափունս Սիկիլիոյ, և գաղթականք նորա անուանիք էին Սիրակուսացիք, Ակրականդացիք, կաձանացիք, Լէոնտանացիք, Մեսսինացիք, Սելինունացիք և Գելացիք. զնոքն երկրորդի պատիկեան մարտին Հռոմայեցիք հանին զսիկիլիա ի ձեռաց կարքագեդոնացւոց. յետ անկման ինքնակալութեան նոցին՝ Գենսերիկոս զառաջինն և ապա Թէլեսարիոս գրաւեաց զայն. յետոյ Արաբացիք ի Թունիս 827, և ապա Նորմանեանցիք ի 1072. և ի սպառել տոհմին նոցա ՝ի ձեռս ՚ի Հոհենշտաուֆեան Հոհենշտաուֆէն տոհմին. բայց ապստամբութեամբն (1282) որ Հսկիտանիք կամ Կախաստանին Սիկիլիոյ կոչի, առաջնորդելով Յովհաննու Բրոչիտայ տուաւ կղզին առ Պետրոս Արագոնացի. և ետկաց ընդ երկար ընդ եզ իսանուածութեամբ Սպանիացւոց, մինչև կրկին միացաւ ընդ Նեապօլոյ. և ի 1806 եղև իբրև Թագաւորութիւն անջատ, մինչդեռ Ֆերտինանտոս արքայ զրկեալ ի գահէն Նեապօլոյ նստեր ի կղզւոջս։ Ի վերջ կոյս 1847 ամին ինդրեցին Սիկիլիացիք ընդարձակ ստմանագրութիւն, և ոչ հաւանեալ տուելոյն՝ ի սկիզբն 1848 ամին ապստամբեցան քաղաքքն. և հաստատեցին վարչութիւնն առաջմանեակս՝ մերժեալ զառն Թագաւորին Նեապօլոյ, և կարգացեալ Թագաւոր զիւր յորդոյ Թագաւորին Սարտեներոյ. մարտ եռաւն անհնարին ընդ Նեապօլսեցիս և բազում աղխոց տալեալ նուաճեցան ի վերջէ ուրեմն։

1174. Ցերիս հովիտս բաժանի Սիկիլիա ի Մացարա, Նոգոյ և Տեմոնա, և յեօթն գաւառս, որք են Թուով բնակչաց յամին 1845.

	Գաւառք	Բնակիչք
Ա.	Բալերմոյ	465.169
Բ.	Ճերգենդի	233.764
Գ.	Դրեպանի	182.809
Դ.	Գալգանիսեդդա	176,298
Ե.	Մեսսինէ	349.183
Զ.	Նոգոյ	250.862
Է.	Կագանա	382.528
		2.040.610

Ա. Հովիտ Մացարայ

1175. ԺԲ. ՊԱՆՈՐՄՈՍ ԿԱՂԵՐՄՈՍ.— ԿԱՂԵՐՄՈՍ (Palermo, Պանորմոն). — Մայրաքաղաք Սիկիլիոյ, նման կեսապօլոյ ունի նաւահանգիստ վաճառաշահ և բազեղիր. մասն մի քաղաքին նորաշէն է և հոյակապ է, և մասն մի այլ հին և ապականի. Ճանապարհքն Դօլեսոյ և Մազեռա հատանեն զնոքա։ Բնակչաց թուի ՚ի տարեսկիզբն որ յայն սակս Ձորք բաժինք կոչի (Quattro Cantoni). դիմաւորք շինուածքն են արքունի դղեակն և հրապարակն, հրապարակն Ծովու շինուածոցն, անկեղանդն, մայր եկեղեցին, վանք վեղարաւոր կրօնաւորաց, ընդ որով եկեղեցական կանգնեն զդիակունս մեռելոց ՚ի խորշ գաղանաց և անփուտ տեղւոջ. եկեղեցի Ս. Յովսեփայ, և են 60 եկեղեցիք ՚ի Բալերմոյ և 80 վանք. Ճանաչանգաստին երկու ամրոցք են և գեղեցկասլաց Ճեմելիք. համալսարան հիմնեալ ՚ի 1394. դիւանագ, պարտէզ բուսաբանութեան, Ճեմարանք, երեք մատենադարանք հասարակաց, դրամատեղի, գործարանք մետաքսի։ Առքաղաքին կանգուն կան երկու բերդքն Գուլպա և Նիխա կառուցեալք յԱրաբացւոց. յորմէ Բելկինիոյ լերին զբօսանաց գղեակն Ֆաւորիտա, և այլք. ՚ի լերին անդ կայ մատուռն Ռոզալիայ կուսի պաշտպանի քաղաքիս և համբոյն Սիկիլիոյ, որոյ բազում և տարապայման հանդիսիս կատարի ամն յանխափ բնակչաց։ Բն. 180.000։ Ի յետնում խռովութեան և յապստամբութեան քաղաքիս՝ ոչ սակաւ վանդիսյաւ սա յառաջն իւրում ՚ի Նեապօլսեցւոց։ Փեսիկեցիք կառուցին զքաղաքս զայս, Կարքեդոնացիք բարգաւաճեցին և Յունք կոչեցին Պանորմոս (Համարատանդրուան), վասն բազմութեան նաւահանգստոյ որ ՚ի նմա։

1176. ՎԻԼԼԱ ՄՈՆՐԻԱԼԷ (Villa Monreale). — Ոչ ինչ շատ հեռի ՚ի Բալերմոյ և միացեալ ընդ նմա գեղեցկագոյն Ճանապարհաւ Սիկիլիոյ. ՚ի հնչիւն զանգակաց ամրոցի քաղաքիս սկիզբն եղև սպանութեանց Սիկիլիացի Հսկմանցն (Vesperi Siciliani) ՚ի 1282։ Բն. 14.000։

Դե՛րմինի (Termini). — Գողաֆայեաց քաղաք, ունի նաւահանգիստ, չափմարան ընդելինաց և հոյակապ մայր եկեղեցի. բն. 16,000։


Գորլէոնե (Corleone, Ագրիգեսթրա). — Ունի տուն բանագատ գործաւորաց. բն. 16,000։

1177. ԺԷ. ԳԱԼԱՆԻ ԴՐԱՊԱՆԻ. — Ցորուք համանուն գլխաւոր քաղաք

Դրապանի (Trapani). — Որ ունի նաւահանգիստ ամուր և վաճառաշահ. յորմէ ի բնակչացն պարապին յորս բամոյ, յորմէ չինեն զարդս, նշոյսկս և յոգնեղէկ, ի սաթէ, յալաստադրէ, և այլն։ Բնակիչք 26,000։

Մարսալա (Marsala). — Ի պոէոյ սարի (Լիլիբէօն), նաւահանգիստ ունի այլ աւազով լցեալ. են ի նմա և զաւրանք ծովային ազն։ Բն. 24,000։

Ալկամո, Մազդարա, Գաստէլ-Վետրանո (Alcamo, Mazzara, Castel-Vetrano). — Ունին իւրաքանչիւր 8,000-13,000 բնակիչս. առ ընդեր սոցին կան



Աւերակք Սեգեստեայ

աւերակք Սեգեստեայ և Սելինոնդայ. ի սմա նշմարին փլատակք վեցից տաճարաց որ ընդարձակութեամբ առաւելուն քան զամենայն մեհենեայ Հռոմ մայեցւոց։

1178. ԺԸ. ԳԱԼԱՆԻ ՃԻՐՃԵՆԴԻ. — Ցորուք

Ճիրճենդի (Girgenti). — Համանուն քաղաք և նաւահանգիստ, չափմարան ընդելինաց. առընթեր քաղաքիս են աւերակք Ակրականդայ նախանձորդին Սիրակուսայ, յորում 800,000 մարդկան բնակեալ էր երբեմն. կայ ի նմա ճեացորդ տաճարին Ողիմպեանն Ադամազդայ որ համբաւէր առ հինան լինել մեծադոյն ի տաճարս Նուիրեալս հօրն գից։ Բն. 16,000։

Ալկադեց (Alicata). — Ի բերան Ալազոյ, ունի նաւահանգիստ և վաճառս ընդելինաց. և ի սահմանս սորին էր հին քաղաքն Գելա։ Բն. 14,000։

Շիաքքա (Sciacca). — Եւ սա ունի նաւահանգիստ և վաճառ ընդելինաց. ջերմ և ծծմբային ջուրս ի սահմանս իւր։ Բն. 16,000։

1179. ԺԹ. ԳԱԼԱՆԻ ԳԱԼԱՆԻՍԵՏԴԱ. ԳԱԼԱՆԻՍԵՏԴԱ (Caltanisetta). — Բարգաւաճեալ ի մարտարուեստեան արուեստից։ Բն. 16,000։

Գաստրոճո-Ջիովաննի (Castro-Giovanni). — Ամուր քաղաք, ունի աղահանս։ Բն. 12,000։

Դերրա Նուովա, այն է Նոր երկիր). — Ունի նաւակաց խորշ ի ծովեզերին։ Բն. 10,000։

Բ. Հովիտ Նորոյ

1180. Ի հնամենի աստ որ ի հարաւակողմանէ Են աւազուտ և քարուտ դաշտավայրք։

Ի. ԳԱԻԱՌ ՍԻՐԱԿՈՒՍԱՑ.

ՍԻՐԱԿՈՒՍԱ (Siracussa). — Եպիսկոպոսանիստ քաղաք ամուր յՈրթիւկեան կղզւոջ, ունի նաւահանգիստ երկուս վաճառաց ձիերոյ և գինւոյ. աւերակք հնոյն Սիրակուսայ, որոյ 10 վարսախ էր շրջապատ և բնակիչք ի նմա 1,200,000. գեռ ևս ցուցանեն զհետս հոյակապ շինուածոց, որպիսի են ամփիթէատրոն մի մեծ, թէատր վիմափոր. Լագոմիա, որ էր բանտ արգելանաց, և է ի նմա կոչեցեալ դուռնէն Լսելիք Դիոնիսեայ հառեալ ի վիմի, որպիսի են և տարբեր կրեայ գերեզմանքն գեղեցիկք քան զՀռոմայն. իսկ Աթենասայ տաճարն այժմ ի մայր եկեղեցի փոխեալ է։ Ի սմա ծնան քերթողքն Թէոկրիտոս և Մոսկոս, և Արքիմիդէս մեծն չափաբերաց. ի սահմանս քաղաքիս լինին աղիւս գինիք և պապիր ծառ որ այլուր Լեւրոպա ոչ գտանի։ Բն. 18.000։

ԱԿՈՍՏԱ (Agosta). — Քաղաք ամուր, ունի նաւահանգիստ և վաճառ աղի։ Բն. 14,000։

ՄՈԴՈՒԱ (Modica). — Ի հարաւոյ կողմանէ առ ծովեզերն, 28,000 բնակչօք, որ պարապին ի խաշնադարմանութիւն և ի մշակութիւն բամբակի։ — Հոսպ ի քաղաքս ի հովին խիտիգա կան գերեզմանք հաստեալ ի ժայռի։

ՌԱԳՈՒԶԱ (Ragusa). — Ընտիր գործարանս ասուէղինաց։ Բն. 16.000։

Գ. Հովիտ Տիւռնայ

1181. ԻԱ. ԿԱԻԱՌ ԳԱԴԱՆԻԱ.

ԳԱԴԱՆԻԱ կամ ԿԱԴՈՒԶ (Catania). — Ազբեսիս կոպոնանիստ քաղաք գեղեցիկ և շահավաճառ յոյժ. ի սասանութենէ 1693 ամին թէպէտ և մասամբ յաւեր գարձաւ և նաւահանգիստն լցաւ աւազով, բայց բնակիչքն վայելուչ և յարգարեցին զամենայն. ունի գործարանս մետաքսի և գեղին սաթի. համալսարան



Գադանիա

ՀԻՆԵԱԼ ի 1443, վարժարան, Ճեմարան արուեստից, Թանգարան Պիսգաբի էչանին, Թանգարան գրամոց, Թանգարան բնական պատմութեան, և Մենաստան Բենեդիկեանց. ի Մեացուածս հնութենեանն կայ ամփիթէատրոն մի ընդարձակ քան զկոլոսեոնն Հռոմ մոյ, և թէատրոն մի. Շրջնավայրքն բարեբերք են, թէպէտ հողն խառնեալ լաւայիւ։ Բն. 56.000։

ԱՃԻ ՌԵԱԼԷ (Aci Reale). — Աւ. ծովեզերին ի վերայ բլրոյ լաւայի, ունի գործարանս կապուտ, և տունավաճառս յոր գայ ամբոխ մեծ։ Բն. 16.000։

ԳԱԼԹԱՃԻՐՈՆ (Caltagiron). — Ի միջնաշխարհին, անուանի ի Ճարտարութենան, ունի վարժարան համբաւաւոր։ Բն. 22.000։

1182. ԻԲ. ԳԱԻԱՌ ՄԵՍՍԻՆԷ. — Ցոբոմ

ՄԵՍՍԻՆԷ (Messine). — Դէ. Ք. որ կայ յԵզը



Նաւահանգիստ Մեսսինայ

կրէին, նշանաւոր է վասն գրիցն և բարւոք նաւահանգստին. ունի միջնաբերդ և ամրոցս որ պաշտպանէն նմա. կործանեալ երկրաշարժութեամբ յամին 1783, գեղեցկագոյն նորոգեցաւ. նշանաւոր է Ս. Գրիգորի Մենաստանն և մայր եկեղեցին. ունի գործարանս ձեռագործոց մետաքսի, ոսկեվաճառս և որս ձկանց. աճառ է արքեպիսկոպոսի, և մայրաքաղաք էր Սիկիլիոյ մինչև ցվախճան ԺԵ դարուս։ Այս է Մեսսինա հին և ի նահնուքն Ջանկլէա քաղաք անուանի։ Բն. իբր 100.000. յառաջ քան ըզ-

խռովուԹիւն Սիկիլիոյ, յորում ռմբակոծեալ քաղաքէս ի ղորաց Թագաւորին յոյժ անչքեցաւ և աւերեցաւ։

ԳԱՍՏՐՈՒՈ ՌԷԶԱԼԷ (Castro Reale). — Բնակիչք 13,000։

ՊԱՆԴԱՏՋՈ (Bandazzo). — Ցօտին Եռանայ։ Բնակիչք 16,000։

ԴԱՈՐՄԻՆԱ (Taormina). — Ի ծովեզերին արեւելից, ունի քարահատս մարմարիոնի, ամփիԹէատրոն փորեալ ի ժայռի, և այլ հնուԹիւնս։ Բն. 4,500։

Կղզիք Հիւսիսային Սիկիլիոյ

1183. ԼԻՊԱՐԵԱՆ ԿՂԶԻՔ (Libari, Եօղեան). — Թուով մետասան, ի հրաբղխից արտաքինեաք. ի սոսա գլխաւորքն անուն է Լիպարի, 16,000 բնակիչք, և գլխաւոր քաղաք նորին համանուն ունի Նաւահանգիստ և 12,000 բնակիչս։

ՈՒՍՏԻՈՒԱ (Ustica). — Ի հիւսիսի արեւելից, 2,500 բնակիչք որք պարապեալ են յորս բռնոյ։

ԵԳԱՏԵԱՆ ԿՂԶԻՔ (Egadi). — Որ Հռովմայեցւոց արտասահմանուԹեան վայրք էին հանգիպ Դրեպանի սարին։

ՓԱՆԹԵԼԼԱՐԻԱ (Pantellaria). — Հպատուրեցին ԱՒգրիկէ քան ի Սիկիլիա, երկիր քարուտ. բերէ գինի, բամբակ, և ջաղիչ. 7,000 բնակիչք են ի նմա։ — Ի սասանուԹենէն 1831 ամին կղզի նոր կերպարանեցաւ ընդ միջ սորա և Շիթագօա ափանց կրկին փարսախաւ տարածուԹեան, և կոչեցաւ Ֆերտինանտէա։

Ա Ն Գ Լ Ի Ա Կ Ա Ն Ի Տ Ա Լ Ի Ա

1184. ԱՆԳԼԻԱՑԻՔ յեզերս Իտալիոյ ունին կալուած զերեսին կղզիան Մալտա, Կոձոյ և Գոմինոյ, որոց միահամուռ 23 փարս. քառ. է տարածուԹեան և իբր 130,000 Բն։ Գարուտք և ամայիք են կղզեքն, զոր բնակեցան փուԹանաւ հինաւ յարգասաւորուԹիւն ածին, բերելով հող ի Սիկիլիոյ. օգք ոչ են ջեռնակալ և երկիրն բերէ զպտուղս հարաւային Իտալիոյ, գինի և բամբակ առատ. ժողովուրդն պարապի ի վաճառականուԹիւն, ի ձկնորսուԹիւն և յերկրագործուԹիւն. յամին 815 Արաբացիք տիրեցին կղզեացս, որք ապա ի 1090 ամ. ցամին 1828 կրեցին զրաղդ Սիկիլիոյ. Կարլոս Ե ետ ընծայ ասպետաց կարգին Ս. Յովհաննու. ի 1798 Գաղղիացիք յԵգիպտոս նաւելով տիրեցին կղզեացս, և ի 1800 ամին և այսր Անգլիացիք յինքեանս ձգելով պահէն. բայց բնակիչքն զօրէնս իւրեանց անփոփոխ կալան։

1185. ՄԱԼՏԱ (Malta). — Փարախս 17 քառ. Բն. 110,000. կարևոր յոյժ Անգլիացւոց վասն նաւահարմին նոցա, Ճարտար նաւազք են և Մալթացիք ժիք և կորովք։ Գլխաւոր քաղաք նորին է Լաւալեթ դասեալ ընդ ամրագոյն քաղաքս աշխարհի, ուր Նաւթ կառավար կղզեացս. ունի Նաւահանգիստս կրկին վաՃառաշահս. ի մայր եկեղեցւոյն կայ չիրիմ Լաւալեթայ և այլոց մեծանուն ասպետաց կարգին. Նաւաթանք, հիւրանոց, լիկեան, գրատուն հասարակաց 90,000 մատենիւք, պարտէզ բուսաբանուԹեան,



Մալթա

վանք առաքելուԹեան քարոզչաց, և վարժարան անգլիացւոց յորում ընդունին համակս յամենայն ազգաց։ Ի ՃոխուԹեան և ի մաքրուԹեան հակառակորդ է Սիկիլիոյ քաղաքաց, և անգլիացի ախորժակք տակաւ ընդունելի լինին ժողովրգեանն։ Ընտանի է պաշարումն քաղաքիս ի Սիւլէյմանայ Բ, որում ըզդէմ կալաւ քաջն Լաւալէդ ի 1565։ Բն. 35,000։

— ՁԻՒՐ ՎԼԱՏԻՄԻՐ՝ որ է հին մայրաքաղաքն Մալեայ 6,000 բնակիչք։ Ի հնումն Մալդա կոչէր Մելիտինէ, և Ժողովուրդն ի փիւնիկեցւոց սերեալ էր։

1186 · ԿՈՋՈՒՈ (Gozzo). — Փարախս Ց քառ.։ բնակիչք 16,000։ Գլխաւոր քաղաք ամուր Կոլլայ 3,000 բնակիչք։

ԿՈՄՈ կամ ԴՈՄՈՒՈ (Comino). — Ժայռ աժայի, ունի թերդ փոքրիկ և երբ 1,000 բնակիչս։ — Ի 1798 կարգ Ս · Յովհաննու որ և Մալթայի փոխադրեցաւ ի կառավար Սիկիլեոյ և եկաց անդ առ ժամանակ մի։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՔ ԻՏԱԼԻՈՅ

1187 · Ձլխարհն Խաղիոյ կանխագոյն քան զբաղումն յաշխարհս մարգարեակ եղեւ, մինչև ասել ոմանց՝ յորդւոց Նոյի զաղթականս եկեալ անդր, և ոմանց բնիկս և ոչ եկս ասել ղհին բնակիչս Նորա։ բայց Թուխ յասիական ազանց Ծովիզներոյց նախ եկեալ բնակեցան Նաւուս և ապա ցամաքաբաւ։ Կնոտրոս ի պեղագիանց 1700 ամաւ նախ քան զԲրիտաոս ած Յիտալիա զաղթականս, որ կոչեցաւ այսպէս յանուն Խաղիոսի միոյ ի յաջորդաց Նորին։ Ցանոս՝ զոր ոմանք երկրորդ Նոյ կոչեցին՝ 1426 ամաւ նախ քան զԲրիտաոս եկեալ ի Թեսսալիոյ հիմնեաց զՈմագաւորութիւն Լատինի։ յետ երբ 60 ամաց՝ Եւանդրոս Արկադացի զՄալանդեան պեւռութիւն, և Տիւռնենոս Լիգացի զՏոբրուքացոյն կանգնեաց։ սորա յետ երկուց կոչեցան և Ռաղնեք և Տուսկեանք, որք կառուցին քաղաքս պարսպաւորս, և արուեստից և դպրութեանց և հմտից պարապեցան։ ընդարձակեցին և զիշխանութիւն իւրեանց, հասուսանելոյն զԻաշնակցութիւն 12 քաղաքաց, յորոց ոմանք կան ցայսօր Ժամանակի։ Ցառաջ և յետ Տրոյիոյ պատերազմին եկին և այլ զաղթականք ի Ցունաց և ի Փռիգիոյ Ասիոյ, յորոց և Մեծ Ցունաստան կոչեցաւ տարբերին Խտալիա։ ի նոցանէ եր և Ենէաս փախստական՝ ի Տրովադայ՝ որ զբաւմբ էած զՈմագաւորութիւն Լատինի (1260 նախ քան զԲրիտաոս), և ի նորին ժառանգ Հռովմիւլոս կանգնեաց զՀռոմ և զսիեզերահռչակ տերութիւն Հռովմայեցւոց (753 նախ քան զԲրիտաոս) որ յետ 250 ամ ի հաստատակատարութիւն հաստատեալ՝ տակաւ զըրացեալ ընդարձակեցաւ, կալաւ զամենայն Խտալիա, և ապա զամենայն ծանուցեալ աշխարհս Եւրոպիոյ, և զեզերս Ափրիկոյ և զարբգաւաճադոյն կողմանս Ասիոյ · զորոց տերութիւն միապետական Օգոստոս առեղ ինչ յառաջ քան զգաւառս Փրկչին յաշխարհ, հաստատեալ զինքնակալսն հարստութիւն։ Ընդ Հռովմայ քաղաքին սկսաւ պայծառանալ և Սիկիլիա առ Թագաւորեաց Սիրակուսայ, որ ապա ընդ կարքեգոնացոց անկեալ իշխանութեամբ՝ մարզ եկաց Հռովմայ։

1188 · Խակ Հռովմ եղծեալ զեղծեալ յարգասեաց բազում յաղթանակացն և յաւարէ աշխարհի ընդ լծով արկելոյ՝ Թուլացաւ յառաջին արուեստիւնէն, և յանառակութիւն հատաւ առ ինքնակալքն · վասն որոյ և յապստամբութիւն մտաբերին գաւառքն ի տար աշխարհս։ Ի սկզբան ի գարու՝ մեծ փոփոխութիւն աթար Կոստանդիանոս կայսր՝ ընկալեալ զբրիստոսական հաւատս և հալածեալ զդիս Լատինի · բայց զաճառ ինքնակալութեանն փոխագրեալ ի Բիւզանդիոն և զերուբինեան բաճանեալ յերկուս և չբիս մասունս՝ ոչ կարաց յառաջին զօրութիւնն հանել. և ոչ Ուրացողն Ցուլիանոս՝ որպէս յուսացին, որ արագամահ խակ եղեւ։ Ի վերջ կոյս ի դարու սկսան խլրտել Գոթք և Գերմանացիք և կուսակալք Գաղղիոյ, զորս առ վայր մի կասեցոյց մեծն Թէոդոս · այլ առ որգւովք Նորա խպաս անչքեցան վաղք Հռովմայ։ Ալարիկոս արքայ Վխիգոթաց (արեւմտեան Գոթաց) եմուտ յաղաքանակաւ ի Հռովմ՝ որոյ կայսր կարգեալ էր Ընորիոս որդի Թէոդոսի, և չարզոգք Նորա կապեցին զկայսերութիւնս մեծի քաղաքին։ Ցետ սակաւուց Գենսերիկոս առաջնորդ Վանդալաց՝ Թափեաց զՎրիկիկէ ի Հռովմայեցւոց · Աստիղաս Հռոմ արքայ ասպատակեաց ի Գաղղիա և աւերեաց զԱռալիա · (ի փախստականացն հիմն արկաւ Վենետկոյ քաղաքին և տերութեանն) · բայց զոր Աստիղաս եձոյ՝ մաշեաց սուր Գենսերիկոսի (455) որ ոչ խնայեաց և Հռովմայ · յետ Նորա զամս քսան փոխեցան բազում իշխանք ի Հռովմ, այլ բազգ Նորա երթային և խնարհէր · յետին իշխան կամ ինքնակալ եկաց Հռովմուղոս կամ Օգոստուղոս որդի Ովբեռեայ, ընդ որում զարթեալ Վխիգոթաց կոչէին զԱդուաքր առաջնորդ Հերուլաց՝ որ արկեալ յաձոյ Հռովմայ զՕդոստուղոս (476) եւարձ գահընկէծեաց Հռովմայեցւոց յետ 1229 ամի չհնութեանն Հռովմայ · և կոչեցաւ Թագաւոր Խտալիոյ։

1189 · Կամ յաջորդեաց նախանձաւոր Նորին Թէոդորիկոս արքայ Ոստրոգոթաց (արեւելեան Գոթաց) · յետ Նորա ինքնակալք արեւելից ջանացան ի ձեռս բերել զԽտալիա · Բելիսարիոս և հայկազեան կնքեսկս Պասրիկ զամս 17 մաբս եգեալ գաւաւեցին զքաղաքն (552) · բայց յետ ամաց ինչ (568) սահմռկեցան բաժանել զայն ընդ Լոմպարտացիս, յորոց բնակուվենէ

Լոմպարտիա կոչեցաւ հիւսիսի Իտալիոյ, եւ ի մասն որ ընդ իշխանութեամբ կայսերաց Բիւզանդիոյ՝ կարդեցան բգեաղիք։ Լոմպարտացիք առ սակաւ սակաւ տիրեցին բոլորումն Իտալիոյ եւ հաստատեցին զՀայրենի դգերմանական օրէնս իւրեանց. բաժանեցին զաշխարհն յերեսուն մասունս եւ կարգեցին դուքս ոգս և կոմս հպատակս Թագաւորին։ Յամին 773 Մեծին Կարոլոսի կալեալ զՔիսիէր զառաջնորդ նոցա զմոն բգեղեցին այլոյք հանդերձ գաւառաց՝ վճռակեց ցոյզ Պապին, և ինքն զինի կոչեցաւ Թագաւոր Լոմպարտիոյ և կայսր Հռոմայ (800)։ Որդիք նորին զամս 74 պահեցին զաշխարհն՝ այլ անվերնութեամբ ըստ կամս Ժողովրդեանն վարելով, և ի Թուին 888 իբրև Կարոլոս Ցոյր զրկեցաւ յաթոռս, յարեան նախանձ ընդդէմք յաիշատակել զԱգա Լոմպարտիոյ. Պհռանժէ Ֆրիուլայ մարկիս, կի Սբոլեսայ մարկիս, Լամպերդ և Լուգովիկոս Ալբեայ, Ռոտոլֆոս Ք աբբայ Պոբբիոնեայ, Հուկոս կոմս Բրովանսայ և որդի Նորա Լոթաիրոս, որք ընդ միմեանս մարտուցեալ յաջողեցան իրերաց յիշխանութեանն որ տեւեաց ամս իբրև 200։ Ջայս աղմուկ երկար խռովութեանց պարապ առեալ որ ընդ նոքօք հպատակ իշխանքն էին գլուխ ամբոխին. և հաստատեցան հաստատկութիւնք դիմաւորք քաղաքաց՝ որ են Միլան, Բահա, Փլորենց տիա, Բիզա, Գենուա, Նեապօլիս, և այլն։ Ի վերայ այսոցիկ յաւելան և այլ փոփոխութիւնք անցից, արշաւանք Ոլնկարաց ի հիւսիսի Իտալիոյ ի ժ դարու, Սարակինոսաց տիրել Նեապօլեայ և Սիկիլեայ, Յունաց ջանք վերստին զնուանիս նուաճելոյ և Նորմանացոց ի Նեապօլիս Թագաւորել։

1190. Թագաւորութիւն Լոմպարտիոյ յետ աղմըկացս տուեալ էր ՅՈՒԹան կայսր. այլ քաղաքք Լոմպարտիոյ ի ինդիր ազատութեան յարուցին մարտս դժնդակս ընդ երեսք բազում արիւնահեղութեամբ. զոր դառնութիւն առաւել ևս բորբոքեաց հակառակութիւն կուելիանց ընդ կիպելինս վասն յաջորդութեան կայսերաց Գերմանիոյ՝ ի սպառել ՈՒԹենեան զարմին, և կագ կայսերացն ընդ Պապին վասն կոչելոյ ինքնակալս Հռոմայ. յոյր սակս բովանդակ Իտալիա ղինեցաւ ի մարտ։ Յաջողեցաւ ի խռովութեան սատ Նորմանացոց տիրել Տարաւային Իտալիոյ, Գերմանացոց՝ հիւսիսոյ, և Տպրատպետացն Հռոմայ՝ միջնաշարհին։ Իսկ ի ԺԲ դարու ի ըսպառել Հոհվլիան զարմին երբև տուին Հոհենշդաուբ. ֆէնայ կամբր մառնել ի ժառանգութիւն Նորին՝ Պապին ընդդիմանալով յոսն կացին ամենայն պետութիւնք Եւրոպայ և վախճան գործոյն լիներ բարձումն Հոհենշդաուբ. ֆէնայ զարմին, միաբանել Լոմպարտեան ազատ քաղաքաց ընդդէմ կայսերաց, և կարգոսի Ընժուս տիրել Նեապօլեայ։ Բայց ի կարճել ձեռն ինքնակալաց ի հիւսիսային Իտալիոյ՝ սպրդեցին քաղաքական խռովութիւնք. ամենայն քաղաքի մէն մի թագաւոր կամ իշխան կայր յԱԻԻ դարու ինքնագլուխ. բայ ի հաստատակութեանց Գենուայ և Վենետկայ, և ամենեքին հակառակամարտք։ Ի ԺԻ դարու վերստին հնարեցան Գերմանացիք կորզել զիտալիա, և դարձեալ վառեցաւ հուր տեւելութեան կուելիանց և Կիպելինաց. բայց Ժողովրդեանն զայս նըշեաւ զգուտա իւր ինդրելով՝ ազատհովագուտին լիներ կուտակից. տակայն ոչ սակաւ գմարան վառեին գուռն ինքնակամ պինդքոր գինուորելոց, որ սպաս տանեին յորոց միանգամ առատութեամբ ընդունելին գիմաչան։

1191. Յայսքան մարտից և խռովութեանց ընդ յան բազում տոհմք ազնուականաց և ամբոխ ոչ սակաւ. անարգել ձեռներէց եղեն երեւելի զարքն Վիսգոնդի, Էսդէ, Մէսիլի, և այլն, կանդնել ղքաւսը Թիւնս Սաւոյայ, Միլանու, Մոտենայ, Փերարայ, Ռոպպինայ, Լուգգայ, Բարմայ, Դոսկանայ, սոփաս և բարգաւաճեալ պատճառաք եղեն վառնուանութեան և արուեստից և դպրութեանց. ի նոյն ջանս Թևակոխեալ և Տպրատետաց Հռոմայ հանդերձ կըրկին Ծովիչխան հասարակապետութեամբըն Գենուայ և վենեկայ՝ վերալիս պանծալի կացուցին փառաք յոյժ յոյժ առաւել քան որչափ առ Հռոմայեցւոյսն էր։ Բայց ոչ փոքր խափան լիներ յառաջադիմութեանցս հակառակութիւնն վասն յաջորդութեանց պետութեան Նեապօլոյ և Միլանու, զոր ի միմեանց յաւիշտակել Տնարէին Սպանիացիք, Գաղղիացիք և Աւստրիացիք՝ երբաքանչիւր յառաջ բերեալ զերաւութս իւր. Գաղղիացիք. առ Ը Կարոլոսիւ և ԺԲ Լուգովիկոսիւ տիրեցին և նոցունց և Գենուայ, յորմէ խիճացեալ Տպրատետացն հաստատեցին զմիաբանութիւնն Սպանիոյ, Գերմանացւոց, Ընդվզեցաց, վենեկայ և այլոց ազգաց ընդդէմ Գաղղիոյ. Նեապօլիս վերակից Փերտինանտոսի, Միլան՝ տանն Սֆորցայ։ Բազումս Տնարեցաւ գրանկիկաս Բ ի ձեռս բերել զկորուսեալ գաւառսն, երբէք էաս ղգրսութիւնն Միլանու, բազում անգամ յաջողեցաւ ի մարտի, այլ ամենայն յաջողուածոցն վախճան արար սպանութիւն Բահիոյ (1525) յորում և ինքն անկաւ ի ձեռս կարղոսի Ե. յետ այնորիկ խաղաղութիւն Տաստատեցաւ յԻտալիա գոր մի ոջոյն, և չերեն խռովք ի սպառել Իտալոյ տոհմիցն ի Փերարայ, և Ռոմբարդացն յԱբրպինայ, և գոնզագայն ի Մանդուայ։ Փերարա և Ուրպին տան եղեն վճռակին եկեղեցւոյ, և Մանդուա տուաւ կարղոսի Նեհերայ որում պաշտպան կայր գաղղիա։

1192. Ի սկիզբն ԺԸ դարուն գարձեալ միաբանեցան գոմ բորբոքեցան կռիւ և կռիւ վասն յաջորդութեան Սպանիոյ, և Բարմայի և Փլորենտիոյ, զի և ի տղուշց զարձեցան Իաուանդիք Փռանսեզաց և Մեդիկեանց, և զինի բազմադէմ անցից բաժանեցաւ մեծագոյն մասն ի տալիոյ ընդ Սպանիացիս, Աւստրիացիս և ընդ Սաւոյացիս։

Եւ խռովութեամբն ի 1792 Գաղղիացիք մխալ ի Սաւոյա մարտնչէին ընդ Աւստրիացիս, և ի 1796 Պոնապարդէ մեծանշան յաղթութեամբք տիրեաց հիւսիսային և մինչեն Իտալիոյ. Սարդինիոյ Թագաւորին կղզին ևեթ Թուրս. Սաւոյա, Բիեմոնդ, Նիցցա և Մոնֆերրատ ընդ Գաղղիոյ ի մի ամար գրեցան։ Մանդուա, Միլան, Բարմա և Մոտենա ի մի հասարակապետութիւն խմբեալ կոչեցան Ցալկոյս-Ալպեայց. եկեղեցւոյն վիճակ եղև հասարակապետութիւն Հռոմայ. Գենուա՝ հասարակապետութիւն

Լիկուրիոյ, Նեապօլիս՝ Պարթենոպեան Հասարակապետութեան։ Մինչ Պոնաբարդէ յեգիպտոս էր՝ Ասարիաքը ջնջեցաւ Ռուսաց Թափեղին գիտալիա, այլ նորա ընդ հուպ դարձ արարեալ՝ յաղթութեամբն Մաբենկոյի էառ զամենայն գերութեան, և նոր հաստատեաց վարչութիւնս տերութեան, զնա սահմանադրութիւնն Ցալկոյս-Ալպեացց փոխեաց յԻտալական հասարակապետութիւն, և զինի ի Թագաւորութիւն, որոյ ինքն էր Թագաւոր, և փոխարքայ իշխան եղ զՆեպիանեոս Պոհամնեզ զուարջոս իւր։ Ետրուրիա և Հռոմի միացան ընդ Գաղղիոյ, և Նեապօլոյ Թագաւոր տարս կացուցաւ։ Յետ անկման Նապօլէոնի ի Սարդինիոյ Թագաւորութիւնն յաւելաւ և Սաւոյայ, Լոմպարդիա տուաւ Աւստրիոյ և կոչեցաւ Լոմպարտեան–Վենետիկ, Ետրուրիա վերստին երկրորդի Ֆառանդի կայսերն. ի նմին ցեղէ կացուցաւ գուքս Փառմոյ. Բարմա և Բիաչենցա Մարիա Լուիզայ Եղեն կալուածք առ կենդանեան Լեմ։ և տեառք Բարմայ Ֆառանդ կացին Լուդովյ։ Նեապօլիս և Հռոմի զաբձան առ բնիկ իւրեանց իշխանս. և ամենայն կարգն առաջինք նորոգեցան, Թէպէտ և յոգունց ցանկալի էր միաբնեան պետութեանն բոլոր։ դակ խոսիոյ՝ զոր խորհէր Նաբոլէոն հաստատել, յորմէ յուսային և հին օրինացն գամ գտանել, ի ՝նպաստս իւրեանց, բայց ի հաստատել տերութեանցն որպէս յառաջ քան զնաւոլութիւնն՝ խաբեալ ի յուսոյ իւրեանց, ի 1820 ի լինել խռովութեան ի Գաճիսի, Նեապօլիս և Պարթենոպէ ազգաբնակ մերժել զսպանիական օրէնս վարչութեան իւրեանց, և յԱւստրիացւոց խափանեցան։ Եւ ի խռովութեան Ցուլիսի (1830) ազատասէրք խոսիոյ գարձեալ ապստել յաջրուցին ի Մոտենա և ի սահմանս Պապին, բայց և յայսմ Նուաձեցան յԱւստրիացւոց. ընդ որ զարեալ Գաղղիացւոց առաքեցին և ինքեանք զորս պահապանս նստել յԱնկոնա, զորս յետ ամաց յետս դարձին։ և առ միշտակէ զերծանելոյ քաղաքն յօտարազգի զօրաց, Գրիգորիոս ԺԶ Հայրապետ Հռոմայ հրամայեաց ի սահմանս տերութեանն իւրոյ կատարել զամն անուանս նակցին իւրոյ սրբոյ Լուսաւորչին Հայոց։

1193 · Բայց առ յաջորդսն նորին այժմեան քահանայապետիս թ Պիոսիւս՝ որ առ ի բարեբաստութիւն պետութեան իւրոյ՝ ձեռն արկ հաստատել նոր կարգս քաղաքական և Թագուհիութեան արար քրիստոնեայ ժողովրդեան նորա և զնա ինքն գՀայրապետն ստիպեցին խոյս տալ ի գահէն, և ձեռնամուխ եղեն ի պատերազմին ընդդէմ Ասարիացւոց՝ յաղթութեան Լոմպարտիոյ և Վենետկոյ, հաստատեցին հասարակապետութիւն ի Հռոմի. մինչդեռ և յայլ ամենայն ի տալեան պետութիւնս խռովք յուզեին գործեալք յազատասիրաց Հռոմիոյ և ի գաղղիական հասարակապետութեան նախանձու. Թէպէտ և պետքն ընդհեղին սահմանադրական օրէնս և առեանն նուիրեալ կաց ժողովգեան, այլ ի ռամկավար դիտմանէ նորա խնդացին. վասն որոյ կէսք զինու. զորութեամբ իւրեանց, այլք Ասարիացւոց օգնականութեամբ նըւաձեալ նստուցին զապստամբութիւնն. որոյ յաջողեալ և զեր կալուածոն յԻտալիա անդրէն զբռամբ ածել, զԻրիան յ'9 օգոստ. 1848, զՎենետիկ ի 22 օգոստ. 1849, Եմուտ և ի վիճակ Հռոմայ. հասին և գաղղիացիք և պաշարմամբ ի նեղ արկեալ առին զՀռոմ. գործ արար քահանայապետն յաթոռ իւր, ամփոփելով զնախ ընդհեալ ազատութիւնսն. տուգանեցաւ Ասարիոյ յաղթահարեալ տերութիւն Սարտինիոյ որ ապստամբելոցն Թիկունք լինէր. հանգարտեաց խռովութիւն Իտալիոյ, այլ ընդ զինուորական վարչութեամբ Նուաձեալ ոչ է գիտելի երբ ըզհաստատ խաղաղութիւն վայելեցուք։

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏ

1194 · Բանաստեղծութիւն յԱԲ դարու մեծաց Իտալիա յոՏ երգահանիցն Բրունետտոյ։ յԱԳումն սկիզբն եղև խաղերին գրելոյ, և յայնժամ հնարեցան ազգի ազգի երգս, որպէս զնուագս (Sonetto), զպարերգս (Canzoni), և այլն։ Տանդէ Ալղիկիերի բանաստեղծ անուանի նախ քան զայլսգրել զերգսն գերեզմանացն Աստուածային Տեսլեան (Divina Commedia) անուանեալ, յորում իմաստասիրութեամբ ին և խրթնութեամբ Ճառէ զիրենից և զքաղաքական իրաց որպիսի ինչ զպիտանին կարծիք էին նմանեալց և իւրոց ժամանակակցաց։ Առ նմանս և յետ նորա բեզերգսա արար նուագս և քնարերգակ երգերեցածս. և Պօգգաչիոյ որ գրեաց զՏեկամերոն անուանեալ գիրս 100 վիպագ արձակ բանիս որ և յորինակ ընծայեցաւ խաղական արձակ բանի։ — Ի ԺԴ դարուն գիւցազներգակ երգ Ճոգք կացին. Բուռչչի որ երգեաց զաւելշաբար զշահատութիւնս Նախկին Մորկանդէսի. Պուլտաղ զերերեցածն Որլանոս Սիրահար (Orlando Innamorato) և Արիոսդոյ բանաստեղծ մեծ գՈրլանոս Մոլեգին (Orlando Furioso), և երկ Որլանոսն մի՝ի քաջացն որ ընդ Մեծին կարոլոսի նահատակեցան՝ի մարտս. այս երերեցածն Արիոսդոյի ցարդ ևս մեծարի յոչ առ նուազեալս։ — Պետրառոս Դասոյ գրեաց ի ԺԶ դարուս զԱմահիմն երերեցածն և որդի նորա գերահմտացն Տօրկուատոս Դասոյ զերուսաղէմն Ազատեալ (Gerusalemme Liberata) որ անցոյց զանցոյց զամեներգսդրութիւնսք խաղալանք. սա յօրինեաց և զՀովուական երգն Ամինտա, որում յաջողեցաւ կատարելի յաղագս վերեր երգերեցածողին Հովիւ Հաւատարիմ (Pastor Fido)։ — Կատարեալ գիւցազներգութիւն հնարեցաւ ի ԺԶ դարուս. Դասսոնի որոյ երերեցածն Գոյլ յափշտակեալ (La Secchia rapita) յորում պատմէ զպատերազմն Մոտենացւոց ընդ Պոլոնիացիս՝ի պատճառս փայտեայ գուլի միոյ։ — Պետ-

Նի Ճարտար եւ կատակաբան գտաւ։ Սալվադոր Ռոզա երգիծագիր։ Դիապերտա քնարերգակ։ — Ցուցեր Առասն և յԱթ գարու անուանի կայեն քան զԼազուսին Բարիին և Ալքիերի, Մոնդե, Բիխեմմենդե։ Ֆոսկոլոյ և Նիկոլինի, որք և ողբերգակք են։ Մանչոնի այժմեան մեծանուն քերթող անգլիացի և գերմանական գարուհեան հետևող քան գաղղականին՝ որպէս նախորդք իւր արարին գրեաց զմեծահամբաւ վիպասանութիւնն Խօսեցեալքն (Gli Sposi promessi)։ Բայց Խոլացիք առաւել սիրեն զկատակերգութիւնն ազգական քան զայլ ազգս Քաղերգութեան, յայսմ անուանի եղեն Կոցցի և Կոլտոնի։

1195· Մակացութեանց կանուխ եմուտ Լիտալիա զարգացումն։ բժշկութեան աճեաց Սալեռնոյ և իրաւաբանութեան գարոյն Պոլոնիոյ ուր երբեմն 10,000 համարիկ ուսանէին եկեալ յամենայն ազգաց Եւրոպայ՝ անուանի յոյժ եղեն ի ժ և ի ԺԻ գարս։ և յետ այնորիկ կանոնեցան կային համալարանք ի բազում քաղաքս և ձեռնաուութիւնն իշխանաց և գթից ոչ սակաւ նպաստ լիներ բարգաւաճանաց գպրութեան։ մատենագիրք յոլովք յաջորդեցին յայնմհետ մինչև ցաւուրս մեր յազգս ազգս ուսանց, զոր օրինակ Վիլլանի (մ· 1348) պատմիչ Փլորենտիոյ· Մարսիլիոս Բիկինոս իմաստասէր Թարգմանիչ Պլատոնի· Բիբոյ Միրանդոլացի այր բազմահմտու· Գալիլէոս հանճարեղ աստեղաբաշխ գտիչ գիտակի· Դոլրիչելլի բնասէս գտակ Ծանրաչափի· Կոսիչլիարտինի վիպագիր· Մագդալեբլի (1469–1527) մեծ պատմիչ Փլորենտիոյ, և յաչս անուանի վան փիլոսոփայական և քաղաքական գրուածոցն, Նշանաւոր է մատենիս իշխան մականուանել յորում Քառասնամեայ պատմութիւն բռնական· Սաբելի գրեաց զգ պատմութիւն Տրիաներնեան Ժողովրդոյ· Տավիլա վիպասան գրեաց զքաղաքական մարտից Գաղղիացւոց· Ճանոն (Giannone) գրեաց զպատմութիւն Նէապոլ սոյ· Սաճառոլա, Վանինա, և Պրունոյ Տիորտա նոյ, որք վան ընդդիմանալոյ ուսմանն Եկեղեցւոյ ի դիր իւրեանց Տրոյ այրեցան· Գասսինի և օրդիք իւր աստղաբաշիք և չափաբաշիք· Բիաջցի աստեղաբաշխ· Կալմանի, Վոլտա, Գատալդի, Սբալանցանի, բնասէրք· Պեգգարիա և Ֆիլանձիերի օրէնսգէտք և խմաստասէրք· Եւ ի յետին ժամանակս աՆուանի եղեն Գրիմոր ՃՋ քառասնամեան գրուքն· ի պատմութեան, Պոդգա, Լիդգա, Պալպոյ, Տէնիննա, Միլպալի· Դոմանիոյ, Ռոզմինի և Ճիտպրգի ի փիլիսոփայութեան· ի բանասէրութեան՝ Բելլիդոյ, Գաբրէր, և այլն։

1196· Ցետ բառնալոյ արևմտեան ինքնակալութեան բարձաւ և գեղարուեստից գիտութիւն Լիտալիոյ· մինչև անադան ուրեմն յԺԻ գարուս վերատին երեւեցաւ· նկարչութիւն ծաւալեցաւ յընդհանուրս Խոալիոյ, և պատկերահանիք անմահացրք հիմնեցին զանուանի վարժարանն Փլորենտեան, Վինեկեան, Հռոմայեցի, Լոմպարտեան, և այլն։ Չքնորհնաեանն հատատուեաց Ճիմապուէ (1240–1310)· յաջորկերտութեան նորին անուանի եղեն Ճիոտդոյ (1270–1336), Լէոնարդոյ Վինչի (1452–1519) այր մեծահանճար, բանաստեղծ, արձանագործ, Ճարտարապետ, անպատրաստ երգիչ· Միքելանձելոյ Պունարոդդի (1568–1646) երևելի յոյժ և և ի Ճարտարապետութեան և յարձանագործութեան· Վանինոյ կամ Անգրեաս Սարտոյ (1488–1530)· Հռոմայեցի վարժարանին հիմնադիր եղև Պետրոս Վանուչչի կամ Բերուձիացի (1446–1524), աշակերտ նորին Ռաֆայել Սանտոյ Ուրպինացի (1483–1520) գերազանց զամենեքեանսիք· աշակերտ և հետևող բազումք եղեն սորա, յորս արժանի յիշատակութեան են Ճուլիոս Հռոմայեցի (1492–1546) և Դիչիոս Կարդիաղոյ· — ի Վենետկեան վարժարանին անուանի եղեն Պելլինոյ երկուս եղբարք, Մանդինեա Անդրեաս եւ երկուս որդիք նորա, մեծանունն Դիզիանոյ Վերչելլի (1477–1576), Պոլոս Վերոնեզի (1530–1588)։ — ի Լոմպարտեան վարժարանէ Գորրեձիոյոյ որ և Ալլեգրի Անտո, Ռոյալզիոի մականուանեալ Ֆրանչիա· Գարրաչչոյ երեք եղբարք յորս կրեսն Ննիբալ գերազգեցիկ· Կուիլոյ Ռենի· Դոմենիկոյ Տոմինիչինոյ (1581–1641), Գարաւաձձոյոյ Միքելանձելոյ (1569–1609), Սալվադոր Ռոզա (1615–1673) այր բանաստեղծ։

Ընդհանուր փորագրութեան ի ԺԸ գարու ծագիեցաւ· Ֆինիկուերրա և Ռայմոնդ զառաջինն անուանի եղեն, և յետ նոցա Ռաֆայել Մորկէն, Լոնկի, Պօռքի, Ալտեռլոնի և այլք բազումք։

1197· Առաջին արձանագործ երևելի Լիտալիա ի Նորոնձել ուսանի և գեղարուեստից Կնայ Ննիբալա Բիզանոյ ԺԻ գարու· ապա Կիսլերդի որ արար ըզ զարմանագործ գրուծս մրցարանին Փլորենտիոյ· Միքելանձելոյ մեծն· Տոնագելլոյ որոյ անուանի են երեք անգրիք Ս· Պետրոսի, Ս· Գրիգորի և Ս· Մարկոսի, ի Ս· Մարկոս եկեղեցւոջ Փլորենտիոյ· Պենէվենդոյ Շելլինի, միանգամայն և փորագիր և ժամացուցագործ· Գեհենիկ, Ալվարտ, Գոնծելլի, Ռոսպի, և Գանովա ի սկիզբն գարուս որ զբազմիք գերազանցեաց և յետ նորա չեղև որ հաւասար նմա։

1198· Միեւնոյն Նկարուց արուեստ հետիոտ էր ի նախնեաց, այլ Լիտալիա կրկին ԺԻ գարու մեծանաւ ի գալանոյայ ուսմենէ, բազումք աշակերտեցան առուեսանն· ԺԻ գարու անուանի եղև Պաղոս ահ Քրիսոգիորիս և աշակերտք իւր· կրկին են միեւնոյն Նկարուց արուեստ, Հռոմայեցի և Փլորենտեան՝ որ գծուարին է քան զՀռովմկական, և միայն մանր նրբկաղք գործին այսոր։

1199· Ճարտարապետութիւն ի ԺԻ գարու պայծառացաւ· առաջին Ճարտարապետ այժմու ոճոյն եղև Պրունեղեսքի (1377–1444), որոյ Ճարտար չինած է գմբեթ եկեղեցւոյն Փլորենտիոյ փոքր այլ գեղջկի քան զՍ· Պետրոսին Հռոմայ· Պրամանդ առաջին եկայ ի Ճարտարապետս որ վաստակեցան ի Ս· Պետրոս, յետ նորա Միքելանձելոյ, Ռաֆայել Ձիոքոնտոյ, Սան Կալլոյ և այլք· Պալլադիոն (1518–1580) որում ոչ ոք գտաւ հաւասար ի յետնոց։

1200· Երաժշտութիւն ևս Լիտալիոյ ծաւալեցաւ ի համարեն Եւրոպա· սկիզբն ազգի նուագածութեան մարդ է գնել զնուագս երգոց միաձայնութեան որ

ի վեցերորդ դարէ և այսր ի կառաւարչութիւն ածան։ Կուիտոյ Ագրեանոս հնարեաց վերաժշտական խազս ի ԺԱ դարու. յԺԴ և ի ԺԴ դարուս յաճախեաց նուագարանաց երգել, զոր յաւէտ ի ԺԶ-ին Բալեսթրինա (1529-1594) վայելչացոյց, վերածեալ յայն և զոր ըստ երգս, ընդունելի եղև ամենեցուն նորս այս ազգ երգոց, և ի նմանէ ծագեցաւ գլխի Թատերգութիւնն, անուանեալ Օբերա (Opera)։ յայս ազգ երգահանից անուանի եղեն Սգառլատդի, Տուրանդէ, Լէյդ, Եոմելլի, Սարդէ, Բիչչինի, Սագգինի, Բերկոլեզէ և առ մեջք, Ձիմարոզա (1754–1801), Բաիզիելլոյ, Սալիէրի, Ռիկինի, Ֆէրուալիի, Սբոնտինի, Ռոսսինի, Պելլինի։ Մեծապէս սատար եղև յաշխուժելոյ նուագերգութեան Յոսալիա և քաղցրութիւն իտալական լեզուին և ներդաշնակութիւն և երգչացն քաղցրաձայնութիւն, և բաղում Թանգարանք նուագարանաց կամ երաժշտանոցք։ ի դարուս յայսմիկ կացին ականաւոր երգիչք յարանց և ի կանանց, Ֆարինելլի, Գաֆֆարելլի, Մարգէզի, Գրեշենդինի, Պենելլի, Վելլուդի, Կարչիա, Դամպուբինի, Ռոսալինի, Լասլաշ, և ի կանայս՝ Մարա, Պորտոնի, Սեսսի քորք երկու, Գադալանի, Պորկոնեոյ, Բասդա, Բիզարոնի, Մալիպրան, Յուլիա Կրիզի։





ՏԱՃԿԱՍՏԱՆ ԵՒՐՈՊԱՅ

Տարածութիւն 25,000 *վարսախ* □. *Բնակիչք* 16,000,000:

1201· Սահմանք Տաճկաստանի են՝ ի հիւսիսոյ կողմանէ՝ Աւստրիա և Ռուսաստան, յարևելից՝ Սեաւ Ծով և Վրասպոր և Մարմարա, ի հարաւոյ՝ Եգէան Ծով և Յունաստան, յարևմտից՝ Ադրիական և Յոնիական Ծովք և Դալմատիա· ձգի ընդ միջ 38°–48° հիւսիսային լայնութեան, և 13°–27° արևել. երկ· իբրև 25,000 փարսախ քառակուսի, հանդերձ իշխանութեամբքն Դանուբայ:

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

1202· Դիտել· Լիճք· Գլխաւոր գետ Տաճկաստանի է Դանուբ որոյ ուրեք ուրեք ի սահմանս աշխարհս 2 փարսախ լայնութեան է· սա յեօթն առաջս բաժանեալ Թաւիի ի Սեաւ Ծով· ի Դանուբ խառնին յայնմ՝ Սաւա գետ հուպ ի Պելգրատ որ ի Տինարեան Ալպեայց իջանէ, և Մորաւա որ ի Պալգան լերանց իջեալ գնայ ընդ Սերուիա, և Խքեր գետ որ անցանէ առ Սոֆիաւ· յահեկէ Արդա կամ Օլգ որ խազայ ի վալաքիա, Սերեդ որ ոռոգանէ զՄոլտաւիա, Բրուեթ որ զՄոլտաւիա հատանէ ի Ռուսաստանէ: Յետ Դանուբայ հզոր գետ

է Մարեյա (Երբոս)՝ որ անցեալ ընդ Ագրիանուպոլիս՝ Թափի Ալբլակեզադան. անդր Հոսին և Գարասու (Մարիսան) և Վարար, իջնալ ի Պազարայ Էրէբէան և. Սալամպրիա (Պիլէոս), որ ի Պինդոսէ իջեալ անցանէ ընդ Թեսալիա ընդ մէջ Ղրիւմպոսի և Ովսայ և մտանէ ի Ծոցն Թեսաղոնիկոյ. Ասբորդամաս (Աքէլոյս)՝ գնայ ի Ցոնիականն, Տրիւ՝ անցեալ ընդ Ալպանիա խառնի ընդ Ջուանցա Օգրանայ։ — ՁՏ-գրիական հոսին վարուստ կամ վէտաս, Ոգոմալի կամ Դոպլի որ և Տեվոլ, Պոյանա կամ Մորգագա, Ալպանիա, Կարեդա ի Դաղմատիա։

1203. ԼԵՐԻՆՔ. ՀՈՂ. ԿԼԻՄԱՑ. — Բա-զում են Լերինք ի Տաշկասան, ձիւնախաղաց և ոչ մի. ի սահմանս Ագրիականին Տիւարեան Ալ-պեայք, Պազքան (Հէմոս) որ ի Մոռգէննկրոյ ձգի ցեզերս Սեաս Ծովուն ի հրուանդան Խմիւկք. ի սոսա բարձրագոյն է Որսկոյռս և պարս Սարը-Տաղ Լերանց (Ոսկրգոս), 9,000 ոտնաչափ. հինգ Ճանա-պարհք անցի գործեալ են ի Պազքան Լերինս յոտե-սուն փարախս տարածութեան, Երկուքն տանին հանեն ի մայրաքաղքն և երեքն յԱգրիանուպոլիս. Եւտոս լաւագոյն է ի Ճանապարհս յայսոսիկ։ Ի հասա-րակի ափսիպայ են կողք Պազքան Լերանց, առատագոյք և խորոխք և անդնդախորշ ձորաձորատակք միշտ ընդ միշտ ընդ առաջ լինին ուղևորաց. բայց ի միջնամյուս ուրեք Լերանցն Ծաւալին գաշտք գեղամկաք խուռն վտակաց խաղալով ի սիզամէա գալարաձոյլ. ուրանօր և տաղաւարք ցիր ընդ ցիր սփռեալք և տուարածա-կան կենաց անսեթեւեթ տարազայք։ Բաղումք Լե-րանցն ընդ հիւսիսի Երկայնեալ ձգին անդր քան զդ-Դանուբ մինչև ի Կարպաթեանս, ի հարաւոյ զե-զերք Աբշլակեզադոյ մինչև ի Կոստանդնուպոլիս, ոտքս Ագրանտիս կոչին. Պազքան Լերկուս հաս-տար մասունս հատանէ զաշարհն։ Լերինք Ցուհնա-տանի ընդ հարաւ Տաշկասանի ձգին. իսկ ի Մակե-դոնիա կայ Լեառն Աթոս անջատ 4-5,000 ոտնաչափ բարձր։ Կարպաթեան Լերինք ի հիւսիսոյ արևելից աշ-խարհիս զԱլազքիա և զՄոլտաւիա ի Դրանսիլվանիոյ բաժանեն։ Ընտանք պահին զնատար Լերանցս, և հովիտք բարեբերք զլերանցամէիս. Թեսալիա ի վաղ ժամանակաց անուանի էր յարդասաբերութեան. Նը-մանապէս և ի հիւսիսակողմն Կարպաթեանց և ա-մենայն իսկ կողմանք Տաշկասանի արգաւանդագոյնք են։ — Պլմայ դաւառացն որ յայնկոյս Պազքան Լե-րանց՝ նման է Լոմպարդիոյ. իսկ որ յայսկոյս՝ հա-րաւային Խալիոյ. բայց ի Վալաքիա և ի Մոլտա-վիա ցրտագոյն է. զուարճալի է յոյժ կլիմայ Թեսա-լոյ և Մակեդոնիոյ։

1204. ԲԵՐՔ. ՎԱՃԱՌՔ. ՁԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ. — Տաշկասան Թէպէտ ոչ է քաջ մշակեալ՝ այլ բա-րեբեր է երբև զի ի բարգաւաճ աշխարհաց Եւրո-պիոյ. բերէ ընդհանրին, ցորեան, օրիզ, մալեզ, ար-մախ, բամբակ, ծխախոտ, վուշ, կանեփ, ոտրոն, միրգ և պտուղ և գինի և վայտ անտառի։ Ի բո-վանդ ընծայի ոսկի, արծաթ, կապար, Երկաթ, պը-ղինձ, ծծումբ, աղ և աղբղաք։ Ցանասունս Եր-կրին անուանի են Երիվար և Ջորի, հէշ, արջառ, այծէ և գառինք. ի Պուլկարիա և յայլ գաւառս ոչ-րեք վարեն և զուգա. Մեղու չատ բուծանեն ի գա-ւառս հիւսիսոյ Պազքան Լերանց, և չերամ ի հա-րաւոյ. գոանին և գաղանք ի Կարպաթեան Լերինս։

1205. Վաճառականութիւն ներքին չէ բարգա-ւած, այլ յայլոյ է ի ծովէն ի ձեռն եւրոպական ազանց. ի Տաշկասանի տանին զշամարս կարևոր պնոյից, և ածեն նիւթս գործելոյ. վաճառաշահ գաղաքք անուանիք են Կոստանդնուպոլիս, Թեսա-ղոնիկէ, Ագրիանուպոլիս, Փիլիպպուպոլիս, Վառ-նա, Պեկիրտա, Ռուսճուկ, Ջուրջև, և այլն։

Գլխաւոր արգասիք Ճարտարութեան են, խաղտս, սեկ, բամբակեղէն և մետաքսեայք, պղինձ գործեալ, և այլն։ Ջարդիս ի հաստատուն շղթեշարժ մեքենայից ի գվնաւոր քաղաքս պետութեանն՝ կերպարանա-փոխ լինի հին Ճարտարութիւն արևելեան, և տակաւ ի յոտաջադիմութիւն գնայ։

ԲԱՂԱՒԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

1206. ԲՆԱԿԻՉՔ. ԿՐՕՆՔ. — Թիւ բնակչացն Եւրոպական Տաշկասանի համարի 16,000,000, յորս Տաշկիք կամ Թուրքք կամ Օսմանեանք ի Թուրք Թա-Թարաց հատուած եկեալ տիրեցին աշխարհին. և են Թուով իբր 1,200,000. — Յոյնք 1,000,000, յորոց ո-մանք ի կղզիս և յամուր Լերինս ազատաբար կեան, և են ի նոսա հէնք և յեղուզակք յանդգնութք. — Սլաւեանք 7,700,000 որ ի կրթութենան հռոմէական պետութեան գաղթեցան ի հիւսիսային գաւառս աշ-խարհիս, ոտքս են Մոռլագք, Պոմնացիք, Սերուխա-ցիք, Ռուլղարք, Խռուտագք և Սեաւլեռնցիք. — Ա-ռաւուրք կամ Ալբանիացիք որ ի Լիւրիկեցւոց ան-տի են 1,500,000. — Վալաքիացիք և Մոլտաւացիք որ Թուին ի Հռոմայեցւոց ծագեալ, վասն այնորիկ և Րումինք կոչին՝ 4,000,000. Թաճարք 230,000. Հայք 400,000. Հրեայք 80,000. Գնչուտք 80,000. Հա-սարակաց լեզուս աշխարհին է Տաշկացն՝ որ է բար-բառ Թաճարաց խառնուածեամբ արաբացի և պար-սիկ լեզուաց. յետ տաշկականին՝ յունականն լսի յա-ճախ։

Տաշկաց կրօնք են մահմետական օրինք և Սիւննի գնդ, զի 72 գնդս կամ աղանդս մահմետականս հա-շուեն. մահմետականք են և Պոմնացիք և մասն մի Ռուլղարաց. ընդ ընտ ի միլիոն մահմետականք հա-շուին. իբր 11,500,000 յունադաւանք. հայք 400,000. հռոմէականք 250,000։

1207. ԿՐԹՈՒԹԻՒՆ. — Ի կրթանս ուսմանց յոյժ յետնեալ գտանէր Օսմանեան մինչև ցժամագա-րութիւն այժմեան ինքնակալին, Թէպէտ և գպրոցք կամ մանկանոցք չեն կարի նուազունք յաշխարհին, հանդերձեալք առ մզկիթք. այլ ընթերցանութիւն միայն և գիր ուսանին անդ մանկունքն. և կոչին գպրոցքն Մէքթէպ, և վարժապետք՝ Մէկտէպ, ուր բար-

Հրագոյն ինչ ուսանին: Զարդիս հաստատին ի մայրաքաղաքին վարժարանք սեպհական ուսմանց, ուր յամենայն աղգաց ընկալեալ լինին մանկունք և կրթին յեբրայական վարժապետաց. այսպիսիք են վարժարանք բժշկութեան, երկրագործութեան, պայազատութեան, զինուորութեան, և այլն: Յաճախեն այժմ և տպագրարանք և հրատարակին օրագիրք, որպէս Ազդարար Օսմանեան ի տաճկի և ի դաղղիացի, լրագիրն Ճէրիթէլ-Հէ-ոփ., գաղղիական օրագիրք Journal de Constantinople կամ Echo de l'Orient (Արձագանգ արեւելից), Courrier de Constantinople (Սուրհանդակ Կոստանդնուպոլսոյ), և յոյն իտալական լրագիրք ի Կոստանդնուպոլիս. հայերէնքն՝ Մասիս և Նոյեան Աղաւնի, յորոցանէն Դէլէ-Հա-ոփ. եւ Պ-ֆէ-ոյ, և այլն: Ի Զմիւռնիա հրատարակի Աւետյան տարօրեակ ի հայ լեզուս, Արեւելեան հրեարէն, գաղղիականքն Impartial, Amalthée, Journal de Smyrne: Գոն լրագիրք և յիշխանութիւնս Դանուբայ, և Մոլդաքսանդրիա Եգիպտոսի: Են և այլ բանասիրական օրագիրք Հայոց և Յունաց հրատարակեալք ի զանազան քաղաքս. ուրանօր ունին տպա, մանաւանդ առաջինքն գոլոյց բաղումս և ուրէք վարժարանս:

1208· ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԵՒ ԴԱՒՒ ՊԱՇՏՕՆԵՒԹ· — Միապետական է վարչութիւն Օսմանեանց. Թագաւորն է միահեծան տէր ի քաղաքսն և ի հաւատոյս, սէտ համբէն տէրութեանն և խամ մեծ մահմետական կրօնին. վասն որոյ կոչի Փառիշահ, Սուլթան, Հիւնքեար. այս ինքն՝ Թագաւոր, տէր և իշխան պետութեանն և կենաց և մահու. ի Թագաւորական տունն ասագագոյնն հասակաւ է յաջորդ Թագաւորութեանն. իսկ եգբ չուներն իրաւունս Թագաւորելոյ (1):

Դարձեալ կոչի խաքան կամ խան, այս ինքն՝ միահեծան կայսր կամ ինքնակալ ծովու և ցամաքի: Դարձեալ, խալիֆէ՝ ըստ հոգւոյ իշխանութեանն և հաւատոյ փոխանորդ Մահմետի (2), ոսոխ և է մեծ խամ իւրոյ կրօնին: Բայց յամի 1840, ըստ նորոգ սահմանագրական օրինաց (Թանզիմաթի խայրիէ), փոքու ինչ ամփոփեցաւ բացարձակ իշխանութիւնն Նորին, զի խոստացեալ է Թագաւորն ոչ գրաւել զինչս և զտացուածս աղատաց և պաշտպանակալաց որպէս յառաջն, որ կոչէր Մալի մուսաւերէֆ· որպէս չկամբէ գարձեալ ըստ կամաց սպանանել զոք:

1209· Նախ քան զարձումն Ենիչէրլուաց աւագրեթար պալատին ի բազում դասս կարգեալ էին, բայց այժմ տարբերքն ոչ սակաւ. նոյնպէս և զօրութիւն և ազդեցութիւն ունէին ի վերայ մեծի Դրան, մանաւանդ նեբքիշապան և երբեմն սենեկապան և երբեմն զինակիրն, այլ ի նոցանէ մարթի էր ընդ միս մտանել արքայի· իսկ զարգիս մանաւանդ յօդիենդրուքենէն որ ի սիրշէանէ, կամ ի թանզիմաթէ և այլոց, ոչ իւիք ունին զօրութիւն, բայց յորս յանկարծ իցեն պաշտամն իւրեանց որ ի պալատան: Եւ են ըստ այսմ դասակարգեալք:

Ա· Տարիւ սահաեթիւլ չէրիֆէ ազասը: — Նեբքիշնակետ, որ ունի զաստիճան միւշիրի, և միշտ կարգի յարիրկեցի սևոց. ունի զպատիւ վերատեսչութեան մզկիթացն մէբքեբէի և մէհմենէի, և է գլուխ ամենայն նեբքիշեացն արքունի կանոնացն: Նեբքիշնիքն են սպասաւորք արքայի ի կանոնացն, և են նոքա եւս աստիճանաւորք:

Բ· Խամի էվվէլ Հազրեթի չէհրիեարի: — Երէց կամ Մաթրանապետ (Aumônier) արքայի ի յառաջակայիցն Րումելի գաղէքեսրի, որ ունի զնայն աստիճան և պատիւ. Սա յատուց ուրբաթու ըստ կրօնական պաշտօնին առաջնորդէ արքայի մատուցանել զաղօթս ի մզկիթին և զերկրպագութիւն: Է և այլ ոմն երկրորդ սորա, խամի սանի կոչեցեալ, որ աստիճանաւ սորուն է քան զառաջինն, և ունի զպատիւ յառաջադաս մոլլայի:

Գ· Սէր դուրանի հազրեթի չէհրիեարի: — Սինեճկատէտ առաջին· ունի զաստիճան և զպատիւ փէշրիեի· և է իշխան պալատականացն, և տեսուչ դորոց նոցին: Ընդ տեսչութեամբ սորա են ամենայն իրք որ սեպհականք իցեն անձին արքայի, զոր օրինակ ընտրութիւնք և նորոգութիւն արքունեաց, որ ըստ օրէնս ծախք, և ծախք հանգրեցից և այլոց կարևորաց կանոնացն, և պահապան թէնիսպահ զրաց և երաժշտաց· և սեպհական պաշտն նորա է իհաւ ունել պահպանութեան կենաց արքայի: Դարձեալ և սա ունի զոմն երկրորդ դուբանա՝ միրկիլիյի աստիճանաւ և պատուով· և այլ ևս դուբանպէք գոն, որք երբեմն լինին ըստ հաճոյից արքայի չորս կամ հինգ, և ունին զաստիճան և զպատիւ միրի ալայի:

Դ· Մասպչին հէսէյդան պաշ քեաթիպլի: — Ասա՛ղին քարտուղար, որ է խորհրդեան գրիչ· ունի զպատիւն աստիճանին կարգի աւագորդրոյ դրան գրչաց (խալէմի)· պաշտօն սորա է գրել զամենայն հրամանս արքայի, և զամենայն գրուածս հրամանաց և պատասխանեաց եթէ առ գուռն և եթէ առ այլ աւագ պաշտօնակալս առաքել առ օրին· զի ի գնել սորա զնոր կնիք ի վերայ պահարանի թղթոցն՝ յայսոնի ընշանակ է թէ ի հրամանէ արքայի և նորա հաճոյ թեամբն է այն ծառայի: Ունի սա սասարս ընդ իւրև ի գործ սպասաւորութեան գպիրս չորս, որոց գլխով ի գրչաց գրանն, ունին զաստիճան երկրորդի կարգին:

Ե· Թաքտճան գրուածոց օտար աղգաց, զոր է երբեք զի կացուցանեն ի զինուորական կարգ, ի հրամանգելոյն յԵբերայս: Զարդիս ունի զպատճանն ոմն ի ֆէերիս փաշայից:

Զ· Մասպչին հիւմայուն միւտիր: — Ցնոսս տպագրի պալատան· երկրորդ աստիճանաւ· պաշտօն իւր է ամենեսեան և բարեկարգել զնախագիրսնոս տպագրեաց· և է իբր տեղակալ առաջնոյն սենեկապետին:

Է· Թէլթխոճի էվէլ: — Թղթաառար կամ սուրհանդակ

(1) Օսմանեանք ղտերութիւն իւրեանց ոչ եթէ մահմետական տէրութիւն համարին իբրև զՄարգ, և այլն· այլ տէրութիւն Մահմետի որ յատեանն կալոյ է աստեն· և ըստ մտաց նոցա տէրութիւնն իբրև Օսմանեան տէրութիւն կարէ կործանիլ, բայց իբրև տէրութիւն Մահմետի ոչ երբեք:

(2) Մէհմետ, Մէհէմետ, Մահմետ, և Մուհամմետ, Թեկսէտ և զնոյն նշանակիչեն, բայց Մահմետ և Մուհամմետ զբրենագրի միայն կոչեն:

արքային. որոյ է տանել զհրամանագիրսն ընդ արքային և՝ զդաշտան գրուածն արքունի առ վրացն կամ մեծ էսպարզոն, և զայսպարարութիւնն խորհրդա-բանին. և զգրութիւնան եկեալ ի դահլան աշխար-հաց տանել ի գրանէն առ արքայ : Ոչնի և առ զերբ կրօդ ոմն տասար իւր և օգնական :

Ը. Քաւուհնոյ քառասի : — Պաշտօն սորա է տա-նել զառանձին հրամանագիրս և զբանս արքային առ վրացն և առ աւագերեսս տերութեանն : Զար-ձեալ և սորա է երկրորդ ոմն :

Թ. Լաճապալ ամբրէ մեծարի : — Ախոռապետ, յորոյ ի ձեռն են ամենայն կազմածք ձիոց և կառաց արքունի :

Ժ. Քափուճըլար քէթխիւտասը : — Վէրտաեսուչ դռնապահաց :

ԺԱ. Խաղնէի հիւմայուն պաշ վէքիլի : — Տեղապակ դահնձապետի յառաջին կարգի. ոնենկասկա է սա արբ-քայի ի կանացոյն, և երկրորդ պատուով յետ ներ-քինապետին, և է իշխան ներքինեացն. սոքա լինին եր-բեմն ըստ հաձոյից արքային ի միոյ մինչև ի վեց. և կոչին Մուսայիվ տղաքարը, այն է սպասաւորք արքասորբաբք:

ԺԲ. Մէհտի իւլեայի սալճանաթի սէրհէ պաշ ա-ղասը : — Ես մի ի նախապահ ներքինեաց. առաջնոյն սորին է տոգիս քան զառաջնոյն. և պաշտօնն սէրհէա-պետութիւն մեր արքայի. ընդ իշխանութեամբ նորա են ներքինիք մարն :

ԺԳ. Խաղնէի հիւմայուն քէթխիւտասը : — Գանձա-պետն մեծ յառաջին աստիճանի:

ԺԴ. Պաղի սատեհիւլ ալիէ սալասը : — Իշխան ա-ռանգատանն ուր պահին գրօշն և հեղք ի մարուացն և աքեմն (խրտխայի չէրիք) Մահմէտի :

ԺԵ. Խաս օտա քէթխիւտասը, և խրտխայի սատ տէք սէր հատէմէսի : — Սենեկապետ ատանդատան և դղօվս սպասաւորաց տանն այնորիկ :

ԺԶ. Խաղնէի հիւմայուն պաշ քահէխլի : — Դերվ-բապետ դանձուցն արքայի :

ԺԷ. Եամլերի հարսկ : — Թնդնապահք արքունի, որք են ուխ անձինք յայլ և այլ աստիճանաց զինուորա-կան կարգի, յորս է գնդապետ մի հեծելազօրաց (Սիվլար միրի ալայը), և մի ոմն Սիվլարի ալայ էնինի, երեք Սիվլարի զօլ ալասը, մի ոմն Էրբեանի հարպ պին-պաշի, երկու փխտահ ալայ էնինի. և ամենեցուն սո-ցա են հեծելազօրք և զօրականք մինչև ի Զավնէշն :

1210. Ամենայն իրք պետութեանն կատարին ի ձեռս խորհրդական առնէից, զոր ինքնագիծ հրա-մանաւ Թագաւորին հաստատեալ դնեն ի գործ. քանզի իշխան է Թագաւորն միթէպ զխորհուրդս խոր-հըրդականաց, և ըստ կամաց նոցուց փոփոխել և բառ-նալ զպաշտօնս ամենայն պաշտօնակալաց և առնելոյ-ցաց օրական և զբնկանացն խլամէ կոչելոցդ :

Որովհետև Թագաւորն է պետ կրօնին Մահմէտի և պետ Թագաւորութեանն, ունի երկուս փոխա-նորդս. մի ԶՔէչխ-իւլ-Իսլամն, որ է գինապետ՝ դլուխ իւլամայիցն. և իւր օրինապահ կրօնական կարգաց և օրէնսգրութեանցն Մահմէտի, այն է Ֆէթհէյի չէ-բիքի, և իւր գաւառաւր ի գաւել ժողովուրդն և տալ վճիռս ըստ մահմետական օրինաց : Ընդ տեսչու-թեամբ սորա են ամենայն մոլլայք, նայիպք, քա-զիպք, խմամք, մուֆթիպք և մուեզզինք, մուֆէթ-թէյքն և վաղապէն և ֆէթհվա էմինին :

Երկրորդ ընդարաքսին, այս ինքն զնայպերան մեծ կամ զԱլգուն, իւր փոխարքայ· ն է իշխան և տրա-մանատար ներքին և արտաքին գործոց, և տեսուչ ամենայն իրաց պետութեանն, և կարգաւորութեան եկամտից և ծախուց և զբոլութեանց ցամաքի և ծովու. հսկէ իրաւանց ժողովրդեանն, և քննէ զնորհուրդս խորհրդականացն. վարձաւորէ զարժա-նաւորս և պատուհասէ զանցաւորս ըստ օրինաց սահ-մանագրութեանն, ի դիմաց արքայի գործելով զամե-նայն. յայն սակս կոչի Ա.էքիլն մուխթալք, և կրէ զնո-ւնիք արքունի: Երկոքին սոքա, այս ինքն դեներան և վքուէլն, են համամասնիք միմեանց և գերադոյն իշխանք պետութեանն յետ արքայի, մին ի քաղա-քական իրս, և միւսն ի կրօնականս և ի հաւատոյս :

Իակ ըստ դիւանական կարգի (թէշրիֆաթ) յետ սաղարաղանին զառաջին ոունին զարձ պատուոյ այնք ի կուսակալաց, որ ընդ կուսակալութեանն իշխանու-թեան ոունէին և զզաստիւ փոխարքայութեան առան-ձին միոյ մասին պետութեանն, որպիսիք են կուսա-կալքն փոխարքայք Եգիպտոսի, Թունուզի, և այլն :

1211. Ցետ սոցա են աւագ որեար պետութեանն որք կոչին Ա.իւթէլեյի սալճանաթը սէրհէ, այս ինքն բարձրագոյնք իշխանք և պաշտօնեայք մեծամեծ գոր-ծոց տերութեանն. որք են,

Ա. Սէրասկէրն մեծ. որ է ընդհանուր հրամանա-տար ամենայն զօրացն ցամաքի :

Բ. Քափտան փաշա : — Ծովակալն մեծ, ընդհա-նուր հրամանատար նաւատորմին և ծովային զորաց. յորոյ ի ձեռն յանձնանէին ամենայն ծովային էրք. և է վերատեսուչ ամենայն նաւաշինութեանց որք են ի կղզիս և ի սահմանագրութիս :

Գ. Ռէչլիղի ահչեամի սալիէ : — Կախտաքչին արքա-րութեան գերագոյն տանտէրն, ուր քննին ամենայն էրք ներքին գործոց, և բոլոր ժողովրդեանն և կարգ տեսչութեան կուսակալաց արտաքին գաւառաց. և հսկէ իրաւանց ժողովրդեանն ըստ օրինաց կրօնին և սահմանագրութեանն նորոց :

Դ. Խարճիկ նազըրի : — Վերատեսուչ արտաքին գործոց ընդ ամենայն պետութիւնս վերաբերելոց ըստ իւրաքանչիւր դաշնագրութեանց. և գործել է տե-սուչ ազգային գործոց ամենայն հպատակաց տերու-թեանն որք լինին հնազանդեալք օրինացն Մահմէ-տի. ունի ընդ իւրև հիւպատոսս յամենայն տեղիս :

Ե. Մալիէ նազըրի : — Գանձապետ և համարակալ եղեալ և մահց գանձուց պետութեանն. ունի ընդ իւրև ի-բրև խորհրդական և օգնական երկուս համարակալս, զմին եկամտիցն Ասիոյ մասին, և զմիւսն Բումելիի· ընդ որս երկոցունց Մուհասէպէճին (հաշուապար) գովիրք, և ըստ կարգի եղելոյ գալապակցին և գե-ղերք ուրոյն գործոց աշխարհին : Բայ ի սո-ցունց է և առեանն Մալիէ մեջլիսէ, ուր քննին ամենայն առարկայ և հաշիւք գանձատանն, և հաշուետուքն արտաքին գաւառաց առաքեալք ի կուսակալաց աշ-խարհացն այնոցիկ, և տուեալք ծախուց բանակաց,

և այլոց արքունի դործակալաց, յորոց առաքին ի ձեռս համարակալացն և հաշուաբարացն և դպրացն կարգելոց ի դանձապետէն և ի ժողովոց նահանդացն։

Սոքա հնդէքին համալսարանք են իշխանութեամբ և զօրութեամբ, և ձեռն նոցա ձգի ընդ ամենայն տեղս տերութեանն, և ունին զառաքին տեղի ներքին քոյն իսկ խորհրդարանի պետութեանն՝ որ կոչի Մէճլիսի խան։

Ի նախարարացս եթէ ոք յառաջադոյն սատրազամ էիցէ լեալ և կամ սեբասկէր, և կամ եթէ փեսայ էիցէ արքայի, և ասպա Թէսլէա ի սատրազդոյն ինչ գտանիցէ պաշտօն, նախապատիւ է ի հանդիսի։

1212 · Ալլ գիտել պարտ է աստանօր, զի ամենայն աստիճանք պատուոյ և իշխանութեան զինուորականին յարմարեալք են, վասն որոյ և զինուորականն նախադաս է քաղաքականին, և քաղաքականն կրձնականին։ զոր օրինակ՝ Ֆէրիք ի զինուորականն, Րիւթպէկ իւլա ի քաղաքականն և Գաղէսքէր ի կրձնականն համապատիւք են միմեանց, բայց զինուորականն միշտ նախադաս է։ ի Ճէքրիա տեղեկութիւն ասացելոցս, ահաւասիկ դնելք առաջի զբեսին կարգս աստիճանաց պատուոյ հանդերձ համեմատութեամբ նոցին ընդ իրեարս։

ՋԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՔ	ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՔ	ԿՐՕՆԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՔ
Միւշիր, Եռաթուղ } Փաշայք Ֆէրիք, Երկաթուղ } Փաշայք Լիւա, Միաթուղ } Փաշայք	Վէզիր, րիւմէկէ պալա	. . . . .
	Միրիմիրան, րիւմէկէ իւլա	Գաղէսքէր
	Միւրիւէ իմէրա, րիւմէկէ սանի միւէմէյիզլի	Սատմոզլ փայէսի
Միրալայ	Րիւմէկէ սանիճ, ըմեամոզլ ամիրէ	Մէքքէ փայէսի
Գայմագամ	Րիւմէկէ սալիճ, քարուճու պաշը	Մոլլա
Պիւյպաշը	Րիւմէկէ բայրա	Միւաէրրիս
Գէզ աղասը	Րիւմէկէ խամիճ	Գասը

Միւշիրք ի հանդիսի ուղին ի վերայ գլխարկի իւրեանց ի ճակատուն ոսկերչին և անդամանդեայ կիսալուսնաձև գաղնի և ի միջի Թուղա և գնան պաշտօնի իւրեանց, որպէս սէրասկէրն՝ զաբեդաին, Թոփհանէ միւշիրն՝ զՊիդաճօթ, և այլն։ Ըստ սովորութեան միւշիրք ի հնգազգէ նաւակս գնան ընդ ծով, և ի նշան որոշիչ նոցին պատուոյ են միշտ ընդ նոսա տասնապէսք (չավուշ) կրկին, հրացանս ուսն նեղով ի ձեռին։ Ֆէրիք փաշայք ունին երկուս տատասկս, այլ առաջ հրացանի։ իսկ լիւա փաշայք մի ևեթ ունին տատասկս անչրացան։

1213 · Չինի սոցա իբր երկրորդական համարեալ աւադանին · որոց տասիճանք են բարձր, կոչեցեալ Րիւմէկէ պալա, և են՝

Ա · Սասրի ալի միւշէկլարի։ — Խորհրդական և օգնական վզիին, և համարի փոխանակ եպաքոսին · զի ամենայն գէր խորհրդոց, կանոնագրութեանց, բռնադրոյ և յայտարարութեանց մեծի և փոքու տաեներ կալցան՝ ի ձեռն սորին աւանդին և կարգադրին · և առ պարտ անպակաս գտանել ի գրան, թէ և եպարքոսն չգտանիցի։

Բ · Էվքաֆի հիւմայուն նազըրլի։ — Վերատեսուչ եկամտից և ծախուց սեպհական կալուածոց արքայազնին մզկեաց և այլոցն և աղքատանոցաց, և առ հասարակ ամենայն կալուածոց որք են ի մասնաւոր պետս ժողովրդեան մեծի և փոքու · քանզի յատենէ սորա վճարին առ և ծախք տանց, պալատից, հրպակաց, արտարիից, և այլն · և ի նմանէ ընդունին զմուրհակս սեպհականելոյ գնսին · և ունի առեան ուր դատին և քննին վէճք գնալուածոց · զոր ձեալ ի կողմանէ արքային է անտես մզկեացն որ ի Մէքքէ և ի Մէտինէ, ի հոգալ զպետս նոցին և ինամել զնկեալսն ի կողմանց անտի · ունի ընդ իւրև գանձ, կոչեցեալ խազինէ էվքաֆի հիւմայուն։

Գ · Խազինէճի հասաս նազըրլի կամ Ջազպհանէճ նազըրլի։ — Տեսուչ գործերացոյն, և է տեսուչ սեպհական կալուածոց և եկամտից արքային և տեսուչ ծախուց արքունի հոգաբարձուին։

Դ · Թէճաբէճէ նազըրլի։ — Տեսուչ լրաց վաճառականութեան · ընդ իշխանութեամբ նորա է ժողովել վաճառականութենէն (Մէհթէսիբ Թէճաբէճէ), ուր գասին վէճք վաճառականաց և արհեստաւորաց, և է ինչն նախագահ ժողովոյն · գործէալ տեսուչ է չինուածեան հասարակաց ի մայրաքաղաքին և չորեքասան ձանեսյս · և ունի մանաւոր ժողով կոչեցեալ Մէճլիսի էսնիճէ։ Ունի զնոգ ինամոց և զարգացման արհեստից և վաճառականութեան, և առ այս կարգեալ կայ և ժողով առանձին Մէճլիսի նաճիաս կոչեցեալ։

Ե · Չաւուշիճ միւշիրլի։ — Ոը է քաղաքապետ և հսկող քաղաքին և արուարձանացն · ունի ընդ իւրև զինուորս 2,500 · ընդ սորա ինամիք է բանսի քաղաքական յանցաւորաց, և յաւուրն սորա գտանին յան-

ցաւորը և պատժին, ի մանաւոր ժողովի անդ որ կոչի Մեհենի զանաիե։

Բայց ի վիճաբանից կամ յաւադաբերոյս՝ յառաջին կարգ հնդեցուցեն և այլք երկրորդիս են և այլ վիճաբանք ի նախապատիւ անձանց, որպէս ե-թէ ի փեսայից արքային իցեն կամ ի նախկին եպարքոսաց, և կամ յաւագաց որք յորքունի ծառայութեանս վաստակեալ իցեն, կարգին ըստ կամաց արքային ի ժողով անգր խորհրդատանին պետութեան։

Ալլ զի սաորագանն է նախադահ ժողովոյս և նմին աեթե անկ է առնել զգահաբոյժին, վասն որոյ և զորս կամի ի յեռնոցս յայսցանե, զնոսին աեթե կոչէ ի ժողով։ Երկիցս գահաբոյ ժողովս յեօթնեկի, և ի նմա քննին վերսին ամենայն կարգադրութիւնք այլոց սաորնագոյն ժողովոց, յորոց զանգրծագրելսն Թագեւցեալս ինքեան մերժեալ և զընդունելեացն առնու ջնաստառութիւն յաքբայէ։

Սպքբ կալմի բարձրագոյն խորհրդարանն պետութեան ի գուռն արքունի կոչեցեալ Մեհենի խաս կամ Մահառա. և ի ձեռն նախագահի վճռորն ամենայն իրք պետութեանն ներքինք և արտաքինք ե-թէ կրծնակաք իցեն և ե-թէ քաղաքականք։

1214. Գոն և այլք որք են պաշտօնեայք և գործակալք սերուցեանն, և համարին գառաւորք և նախարարք, և որոշին չերիս գասս. ե. Սուտուրի իւլմին կամ Խւլամա (յառաջադահ օրինականաց)։ ե. Մէնասիան տիճան հիմայուն կամ Խահանձիկեանի տիճանի հիմայուն, կամ Ռէձալի տէվէճիի անձն, որք են պաշտօնեայք բարձրագոյն գրան։ ֆ. Ջաձիճանի ասկերիէ, պետք զորաց։

Սուտուրի իւլմին՝ այս ինքն յառաջադահքն յորինականաց դասէ, բաղկացեալ ի գառաւորաց և յաստնականաց ժողովոյն և գառաւարարացն Պօլսոյ, և են դասեալք ըստ այսմ կարգի. Կադզասկեր Էշխէֆն (գլուխն էմիրաց). երկրորդն գառաւորք Եւրոպակողմանն և Անթոլ (Աթաոլ և Րումելի գաղեսքերի). գառաւորն Պօլսոյ. և ին անձինք յայնցանէ որք կոչին Սուտուրի Րումելի. և ուճ անձինք որք կոչին Սուտուրի Ընտոլ. և քան և վեց ևս այնորիկ որք կոչին Սանաձել փաչէին։ Յերից ի յետին գասակարգէ օրինականաց տասա. վերաբերեալն ի գառաւորութիւնն Րումելիի, Անթոլ և Պօլսոյ, և են Թուռլ անձինք 47 Թէպէա և երբեմն առաւելուս և կամ պակասք Թիւ նոցա։

Մէնասիան տիճանի հիմայուն, այս ինքն պաշտօնեայք բարձրագոյն գրանն. բանկացեալ է ի հինգ կարգէ գրչռնի ասոիճանաւորաց, զորս կոչեն ըրիճպէն իւլա (բարձր ասոիճանաւոր). ըրիճպէնի Եվվէլ, ըրիճպէնի սանի, ըրիճպէնի սալիս և ըրիճպէնի բապո. և ասոիճանաւորքս այսոքիկ են, տիճանի տավի նազըրի, մասարիֆաթի նազըրի, Թերշհանէ նազըրի, Մէքեէպ նազըրի, սերասկեր միւշտէշլարի, ռէֆտեր էմինի, Թոփհանէ նազըրի, պէշլիկճի տիվանի հիմայուն, տիճան տիվանի հիմայուն, Թեշրիֆաթի, Թաթվիմհանէ նազըրի, ասաոլ ռէֆտերտարի, Րումելի ռէֆտերտարի, մէքեէոպ սաորի ալի, տահիլիէ քեաթիպի, խարճճիէ քեաթիպի, Թերշհանճի տիվանի հիմայուն իհԹիասպ նազըրի. և անդամքն գերագոյն ասոճնին արգայութեան, և գործք կոչ ի ցանազան պաշտօնս կարգեալք, որք հասանեն մինչև յ'200 անձինս, և երբեմն աւելի կամ նուազ։

1215. Խակ Ջասլիճանի ասկերիէ կոչեցեալքն (պետք զզրաց) կարգեալ են յայլ և այլ պաշտօնս պատշաճեալս առ գինուորութիւնն. որպիսիք են գիւրիք որք ընտրեալ են ի վերակացութիւն գինուրական գործոց, հիւանդանոցաց, գինուորանոցաց, և բերդարիւց. վերակացուն ռազմամթերից, արաբողական (Թէչրիֆաթճի) զրաց, և այլ գիերիք և լիվայք որք ի նահապետին ունին այլ և այլ պաշտօնս։ Ոչ ինչ Ճշդիւ սահմանեալ է վասն Թուոյ պաշտօնեայացս։

1216. Յօրինականն կամ ի գառաղականն (Սուտուրի իւլմին)՝ որոյ գլուխ է գենպեան, երևին երբեակ աստիճանք պատուոյ մի քան զմի բարձրագոյն, և են Միւշաղիմ, Միւհեբրիս և Մուլա։ Խակ աստիճանք կարգի ևս են երեք, որք են Գաղըի (գառաւոր), Միւֆթի (վճռատու) և Խամ (Ժողովգնպատու)։ Կան և ուսանողք կամ հաճախք որք Սոֆտա կամ Տահիշիէա անուանին, որոց աւարտեալ վկրօնական ուսմանն՝ մտանեն յայսոսիկ կարգս։— Մուհայրէթիէն բաժանի ի ստորնագրեալ այսպես. Նեվազ կամ Նայիպ, Գաղըի կամ Գառը և Մեվլոի կամ Մուլա։ Որպես և ի սորէ ի վեր երանէ ըստ այսմ կարգի. Տեվլեի, Մուհրէձէի, Գիլաոի Խամեի, Մէքքէքի միւքերրեմէ, Մէհմինէի միւհիվլերէ, Սոամմոլ գաղըսի, Ալաոոլու գաղեսքերի, Րումելի գաղեսքերի։— Խամանէթեան ևս են երեք ասոիճանիք, Գազղէմ, Միւհզղին, Խամ։ Արասքդ են սոցա Շէյիք և Տէվրիշք ի տարբեր կրնս և կարգս բաժանեալ։

Արդ Օսմանեան պետութիւնն ըստ օրինական կամ գառաղական սեաղութեանն՝ ունի վերին սաեան բազղդ՝ Ալրզ սաասր (անհնակ ծանուցման) կամ Հուզուր (ներկայութիւն) կոչեցեալ՝ որոյ նախագահ բազի գենպեան, և ստեինպլեն են Րումելի և Ընտոլու գաղեսքերին, Միւֆթեթիչքն, Գեղեմս էմինի, և վ.ագաս ֆֆէնտին, և այլ պաշտօնակալք գրան գենպեան։ Խակ ի պաշտօնատարաց բարձրագոյն գրանն՝ գառնի Տալի նազըրին։ Ալս սաեան գումարի երկիցս յեօթնեկի։

Բայց ի վերագոյն ասացելոցն են ընդ բոլոր Տաճկաստան՝ Ալեխա և յԵրզրում 24 գառաւորաց սաեթոզք Մեվլեվիէճ կոչեցեալք, և 110 սեղակալութիւնք Նեվապիէճ անուանեալք։ Ոչ են ի համարի սոցա Դանուբեան գառաւքն, զի յայսոսիկ ոչ առաքին գառաւորք։ Եւ 24 Մեվլեվիէճքն այսոքիկ են. 7 Տէվլեի, 10 Մուհրէձ, 3 Գիլաոի Խամեի, 2 Մէքքէ և Մէհմինէ։ Ընդ սեաղութեանց գառաւորացս են բազմապատիկ սեղակալութիւնք (Նեվապիէճ), զորս կարգեցք յառաջիկայ. յառաջնում գառազանի որ ի ձախմէ գնելով զՄեվլեվիէճս (գառաւորութիւնս) ըստ կարգի ասոիճանաց, և ի գառազանն որ յաջէ գնելով զնեվապիէճս (սեղապահութիւնս)։

	ԴԱՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԱՑՍ Է ՄԵՎԱԼԵՎԻԵԹ ԳԱՄ ՄՈԼԼԱ			ՆԱՀԱԳ	ՏԵՂԱՊԱՀՈՒԹԻՒՆ ԱՑՍ Է ՆԻՎԱՊՈՒԹ ԳԱՄ ՆԱՑԻՈ
1	Մէքքէ	Ասիա	Ա. Կարգ	. .	
2	Մէտինէ	Ասիա		. .	
3	Շամ	Ասիա	Բ. Պէյտաի Խամէ	2	Երբքիւբ. Պասրա։
4	Մըսըր	Աֆրիկէ			
5	Պրուսա	փոքր Ասիա		12	Գըլաչի Սուլթանիէ. Երտէք. Պիւէնիք. Քիւթահիէա. Գարահիսարի ապլիկ. Ան կարա. Սինոպ. Չաֆքրանպոլու. Վիքան Հէնիր. Պոլու. Իզմիտ. Գաստէմունի։
6	Էտիրնէ	Եւրոպա		4	Քըրք-Քիլիսէ. Սիլիվրի. Թէքիրտաղ. Կէ ղիլոլու։
7	Ֆիլիպէ	Եւրոպա		5	Սիլիսարէ. Րուսճուք. Վառնա. Թըռնովա. Վիտին։
8	Էյիւպ	Կոստանդնուպոլիս	Գ. Մուխրէճի	4	Թէրքոզ. Ջաթալճա. Չէքմէճէի–Քիւչիր. Չէքմէճէի–Սաղիր։
9	Ղալաթա	Կոստանդնուպոլիս		11	Պէյքթաշ և յարուարձանս Ըսկյուտարի. Իւսկիւտար. և ի մայրաքաղաքին են նայիլպ ուժ ընդ գատաւորութեամբ Սատպօլ-գաղղիի։
10	Հալէպ	Ասորիք		1	Հէմա։
11	Գուշտուի Շէրիֆ	Պաղեստին		2	Ակքեա. Համիա։
12	Քիւտահիա	Ասիա		7	Հէքքիայի. Մուսուլ. Տիարպէքիր. Մէրզիֆոն. Խարբուրդ. Արապկիր. Մալաթիա։
13	Տրապիզոն	փոքր Ասիա		4	Գարահիսարի–Շարքի. Սամսոն. Ափսու. կիւմիւշխանէ։
14	Իզմիր	փոքր Ասիա		9	Գարասի. Ազվալըք. Մաղնիսա. Կիւղլ–Հիսար. Տէնիզլի. Մէնթէշէ. Խարբերթ Համան. Այթաքիա. Թէքէ։
15	Սէրաւիկ	Եւրոպա		11	Սէրոզ. Տրամա. Պողճա ատա. Լիմնէ. Միթիլլու. Սագըզ. Ըսատաքէոյ. Ռուտոս. Գըլիպըզ. Հաներա. Գանանիկ։
16	Եէնիշէհիր	Եւրոպա		6	Ռէսլի. Կարասա. Եանիա. Պէրաթ. Էրկլի. Թուհալա։
17	Սոֆիա	Եւրոպա		8	Խալիմա. Հիշ. Սամագով. Ռէսգրէնոիլ. Իսկիւպ. Փիրզէն. Փիրլէպնէ. Պէլիզրատ։
18	Պաղտատ	Ասիա	Դ. Տէվրիե	. .	
19	Թարապուլուսի Ղարպ	Աֆրիկէ		. .	
20	Պէյրութ	Ասիա		2	Թարապուլուսի Շամ. Տաղդիե։
21	Այթիւսպ	Ասիա		2	Պէհէռնի. Ուրֆա։
22	Էրզիրում	Ասիա		4	Զըլդըր. Գարզ. Վան. Մուշ։
23	Մարաշ	Ասիա		11	Ակսիա. Իկէլի. Գոռնեա. Նիճէ. Ակսարա. Թէքտաշ. Եօզղատ. Գայսէրի. Սիվաշ. Ամասիա. Տիվրիկի։
24	Պուսնա	Եւրոպա		5	Մոսթար. Իլվճանիք. Մոնաստիր. Ըշկոտրա. Օխրի։
				110	

1217. Ամենայն վէճք և բողոք Ժողովրդեան յառաջագոյն օրինական, կամ լաւ ևս ասել, կրօնական դատաստանաւ կատարէին. բայց զնոյն բարձման Եէնիչէրեաց սկիզբն էառ փոփոխութիւն առնելոյ, մանաւանդ ի 1840 ամ. ապա և ի հաստատութենէ թանզիմաթի՝ առ՝ արական կամ վաճառականութեան վէճք դատին յատանձին Ժողովս կարգելոյս վասն այնոցիկ. նոյնպէս յարուցանին գաւառս յերեսփոխանս Ժողովս կուսակալութեանց կատարին. վասն որոյ դատարանս երկուս որոշեալ են, մին յօրինական իրս և միւսն ի քաղաքական։ Օրինականքն են ըստ վերոյ գրելոցս. իսկ քաղաքականն է նախ՝ վերին ատեանն արդարութեան (Մէճլիսի ահչէամի տալիէ)։ բ. Մէճլիսի Թէճարեթի։ գ. Մէճլիսի փօլիս, կամ Չաղտիկէ (ոստիկանութեան), ուր քննին քաղաքական օրինաց յանցաւորք։

Ի մեծամեծ Նահանգս աշխարհաց (Էյալէթին էլ վիս կամ Սանճաք) կարգին կուսակալք, որք կոչին Սանճաք վալիի, կամ Էյալէթ միւշիրի, կամ Մութեասըֆին փաշայք. և ի գաւառս (լիվա) Նոցին՝ կարգին տեղակալք կամ կողմնապետք (քայմագամ), և ի վէճական (Նահիէ)՝ ոստիկանք (մուհասըլ) և ի գեհս (քաղա)՝ դատաւորեալք (միւտիր)։

Եւ ի կուսակալութիւնս ևս են ուրոյն ատեանք Էյալէթի կամ Սանճաք Մէճլիսի անուանեալ, յորս ա. մենայն իրք վէճական կուսակալութենէն քննին. և ժողովք դումարին ի նախապատիւ արանց ի տաճկաց և ի հպատակ ազգաց։

1392։ Իսկ ի վերջին ամս գարուեալ յուզեցաւ վէճ և պատերազմ ի Դանիա վասն գքսութեանց Հոլշտայնայ և Շլէզուիկայ։ որք անդաստին ի ժե գարէ ընդ Դանեաց Թագաւորութեամբ էին, այլ դուքսք Կոդդորբայ պայազատութեամբ կառավարէին զնոսին։ և Թէպէտ Թագաւորք Դանեաց բազում անգամ զնոսա զօրութեամբ Նուաճեցին զնոսա, սակայն և՛ յայնժամ և ի ժողովն Վէնեայ (1815) ուրոյն ետն կալուածք համարեին գքսութիւնքն, մանաւանդ զի Հոլշտայն և Լաւենպուրկ ընդ Գերմանական Դաշնակցութեան համարեցան. քանզի և բնակիչքն Գերմանացիք են ազգաւ և ոչ Սկանդինաւեան։ Ի ժողովն անդ Վէնեայ ընդունելի եղև ի պակասել արուժ Թագաւորին Դանեաց՝ Թագաւորել և իգայ, բայց վասն գքսութեան Հոլշտայնայ չեղեն ընդունելի օրէնքս այս։ Վասն այնորիկ ի մեռանել Ֆրեդերիկեայ Ջ (1839) բազում վէճք յուզեցան վասն իրաւանց յաջորդութեան գքսութեանն, և զպրացեալ վիճմանցն ի մարտ մեռաբերեցին գքսութիւնքն, մանաւանդ յորժամ և խլրտումն համերէն Գերմանիոյ յուզեցր զնոսա ի սկիզբն 1848 ամին։ յորում ժամանակի մեռաւ և Ֆրիսիանոս Ը Թագաւոր Դանեաց։ Գքսութիւնն Շլէզուիկայ յառաջ բերեալ զհին օրէնս Ֆրիսիանոս Ա (1460), ինդրեր միաւել ընդ Հոլշտայնայ (1844)։ և ի միջոցի ինդրոցն բողոքեցին Հոլշտայնեցիք զաստուածնել զերաւունս Դանեաց ի Գերմանացոց։ և իբրև զայն ևս մերժեաց առեան Թագաւորին իւր օրինաւոր ժառանգութեան ասելով զգքսութիւնն, Հոլշտայն բողոքեաց առ Դաշնակցութիւնն Գերմանիոյ (1846), առ որ և Թագաւորն բանագնաց եղև. և հաստուածեամբ ժողովրդոյն գոն գործէր հաձել զգքսութիւնս և ընդրհել զմիութիւն Շլէզուիկայ ընդ Հոլշտայնայ. այլ ի բանագնաց և ձեպել նոցա սպրծնայք Թագաւորն, և նոքա խոպան մերժէին զբերնս տերելոյ եկաց ի վերայ գքսութեանցն և ոչ ևս առաքին զնուբրակս իւրեանց ի ժողով տերութեանն։ Ի սկիզբն 1848 ամի Փետերիկ Ը (յունուար 20) Թագաւորեալ ընդրհեաց ժողովրդեան կամքն առեան Նուբրակաց, այլ ոչ զատոյց զգքսութենանցն ի Դանեաց, որպէս նոքա պահանջէին. վասն այսորիկ և ինքեանց ժողովուլ հաստատեալ զՇլէզուիկ խառնել ոչ միայն ի Հոլշտայն՝ այլ ընդ նմին ի Գերմանական Դաշնակցութիւն, ազդ արարին Գերմանիոյ և ապստամբեցան ի Դանեաց (մարտ 24) որով սկիզբն եղև եռամեայ մարտի. զառաջինն ձեռն ետուն գքսութենացն Բրուսք իբրև պաշտպանելով իրաւանց Դաշնակցութենն, և վանեցին զՈանիս որք նուաճէին զգքսութիւնսն. և Դանիք հրաժարակեցին պաշարումն Նաւահանգստոց Բրունսիոյ, և համարձակ ի մարտ մտին ընդ Գերմանացիս ընդ դաշնակիցս Բրուսաց, քանզի և Սուէտք խոստանային ի Թիկունս հասանել նոցա. և յետ պատերազմ ինչ երկուստեք զլքան զինադուլ առնել զամիս ևեթն, և կառավարել զգքսութենան իշխանքն ընտրելովք ի կրկին Թագաւորաց Դանեաց և Բրուսաց։ Դարձեալ սկիզբն եղև մարտի յամին 1849, ի կես նորին Ապրիլիանն պետութիւն միջնորդ եկաց հաշտութեան, Թէպէտ և գքսութիւնքն ոչ զլքան ի պայմանն հզելոյս. այլ Բրուսք յանձն առին ճանաչել զերաւունս Դանեաց, և ոչ ևս ձգնել զմիութիւն Շլէզուիկայ ընդ Գերմանական Դաշնակցութեան, բայց զի ընդ Հոլշտայնայ միացեալ կայցէ. զոր յանձն առեալ էր և Դանեաց։ Սակայն Դքսութիւնքն տակաւին պահանջէին զերաւունս իբրեւց միջև նուաճեցան զնոսա զօրութեամբ ի սկիզբն 1851 տարւոյ. յայնմ հետէ փոյթ է տերութեանն յանձն ձէ վերստին և հաստատել նոր կարգաւ զգքսութիւնսն հաստատեալսն Գերմանական Դաշնակցութեան, և ժողովրդն Լոնտոնի՝ որ յայս սակս։

ԴՊՐՈՒԹԻՒՆ

1393։ Ականատեսք ոչ եղեն յառաջադէմք իբրև զԳերմանացիս ի դպրութեան։ բայց քերդուածք նոցին հետեսք ի ԺԱ-ԺԲ գարս կարևորք են վասն պատմութեան առաստելեաց հետախականացն։ ի ժամանակի անդ կային Սուէտն ոչեհէն և Լանկ Սաքսոց գրամատիկոս և խնամասցին Մնորդոյ. և յետ գարուց զառաջինն անուանի եղև առ նոսա Հոլպէրգ (1684-1754) ի բանաստեղծութեան, անուանի են կատակերգութիւնք նորա. ի յետին բանաստեղծս նոցա երևելի են Էօհլենսլաեկեր (Oehlenschlaeger), Էվալտ, Թարուբ, Ռահկեզէն, Ինկեմանն. անուանի քան զամենայն խնամասնս Դանեաց եղև Դիդոյ Պրահէ (Tycho Brahe) ի ԺՋ գարս, աստեղաբաշխ մեծ, որ հնարեաց նոր դերս տիեզերագ զիտղմանն ուանգնացուցեալ. Թոլոմէոսեան առ մեք յարձանագործութեան անուանի եղև յոյժ։

1394։ Ի Սուէտիա գշխոյն Ֆրիստինէ եմոյծ ընձաշակ խնամասխրութեան. ԺՀ գարու զարգացաւ առ նոսա ուսուցն բնական պատմութեան. հռչակելի եղև յընդհանուրս բնապատումն Լինիէոս վարժապետ համալսարանին Ուբսալայ, յաւէտ վասն գասատրութեան տնկոց յուսումն բուսաբանութեան,

որում աշակերտեցան ամենայն բուսաբանք Եւրոպայ. յետ նորա անուանի եղեն Վալլերիոս և Գրոնդգաու հանքաբանք, Պերկմանն և Շէել (Scheele) տարրալուծք, և Պերղելիոս առաջին ի տարրալուծս այսր գաբրուս: Ընտանի եղև և Խմմանուէլ Սուէտենպորգ որ Ճառեաց զուամանց և ապա արար մատեան մի ի լսոին բարբառ իւրև մարգարէական աղդմամբ գրեալ բանս ցնորականս և ուրուք խմասանալից զինուելենէ, զկրօնից քրիստոնէութեան և զերկնից. բազումք ցարդ աշակերտին բանից սորա յԱնգղիա և յԱմերիկա: Ի քերդուածեան Սուէտք զհետ երթային գաղղիական ոճոյ, մինչև կոտորածս Գ և ՃԺմարանն Սուէտիոյ և յետ նոցա Պելման զարթուցին զոգի աղգային բանաստեղծութեան. ի 1803 յՈւբսալ բացաւ լսարան բանաստեղծութեան, յորում անուանի գտան Ատդերպոմ, Կայեր պատմիչ և Դեկներ քերդող եպիսկոպոս, նմանապէս և Վալլին և Ֆրանցէն եպիսկոպոսունք: Յարուեստատուրս Սուէտաց մեծանուն հանդիսացաւ Սերկել անդրիանադործ (մեռեալ ի 1814). ևս և Պեսդրեմ և Ֆէկկլվերկ արձանագործք. և աեսարանական նկարիչն Հէօրսդերկ (Hoerberg):





ՌՈՒՍԱՍՏԱՆ

ԿԱՄ

ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԱՅ

Տարածութիւն 1,036,000 *փարս.* □. *Բնակիչք* 70,000,000:

1398. Տիեզերածանուկ ինքնակալութիւն Ռուսաստանի տարածեալ է յարևելս Եւրոպայ, ի հիւսիսի Ասիոյ, և ի հիւսիսի արևմտից Ամերիկայ. տարածութիւն նորին համարի 1,036,000 փարս. քառ. 270,000 յԵւրոպա, 700,000 յԱսիա, 66,000 յԱմերիկա. չեկաց յաշխարհի հաւասար սմին պետութիւն ընդարձակ, որ գրաւէ զեօթներորդ մասն ցամաք երկրի և զ26 մասն բովանդակ հողագնոյս. հեռաւորութիւնն յարևմտեան ծագէն ի Պոլընիոյ մինչև ի նեղուցն Պէհրինկայ ընդ մէջ Սիպերիոյ և Ամերիկայ 3,500 հրաստաս է; ի մեծի տարածութեան երկրիս կան բազում ընդարձակ գաւառք ամայիք անմշակք, վասն որոյ ժողովրդոյն սակաւութիւ է առ երկրաւն:

Սահմանք Ռուսաստանի են ի հիւսիսոյ՝ Բևեռային ովկիանոսն առնվազատ, յարևմտից Նորուեկիա և Սըւեդք, Պալտիկ, Գերմանիա, Տաճկաստան. ի հարաւոյ Տաճկաստան, Պարսկաստան, Թաթարք, և այլն. յարևելից Ասիոյ՝ Սառուցեալ ովկիան և Պէհրինկ, յարևելից Ամերիկայ՝ Նոր Բրիտանիա կղզի. և կայ ընդ 16°–62° արեւմտից երկայնութեան և 38°–70° լայն: Եւ քանզի անմարթ է որոշել սահմանս երկուց մեծամեծ մասանց Ռուսաստանի՝ Եւրոպականին և ասիականին, մանաւանդ զի չկայ խոր և ի քաղաքական բաժանմանն, հարկ է մեզ զբովանդակ Ռուսաստանի միանգամայն տալ ընկարագիր աստանօր, բնական և քաղաքական, զտեղագրութիւն ևւեթ քաղաքացոյն Թողեալ բնիկ ասիական մասինն հանդերձ այլ ևս գիտելեաք ընծեին գաւառաց:

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

1396· ԼԵՐՒՆԻ· — Ի հասարակի գաղաղին է աշխարհն Ռուսաց, բայց են ի նմա 12 տլուք լերանց, յորոց Նեբրոպա են – 1· Լերինք Լաբոնիոյ և Ֆին-լանտիոյ։ – 2· Վալաամի կամ Վղքանոքի (Ալանաս) ի սահմանս Կովկասի որ ի բարձրագոյն գաւառ միջնոյ Ռուսաստանի։ – 3· Բազուկ մի կարպաթեանց եր-կայնեալ գնեհեսգերաւ։ – 4· Տաբրիզեան լերինք որ ի Ղրիմ մինչև յահտնիս Սեաւ Ծովուն ձգին (բարձր 3,000–5,000 ոտք)։ Յնախ – 5· Կովկաս լերինք բար-ձունք և գեղեցկիք տեսլարանք յորս էչտուբղ բարձ-րածայրն քան զ17,000 ոտս, և կասպից լճաձև։ – 6· Արարատեան լերինք Հայաստանի, յորս բարձրն Մասիս 16,200 ոտնաչափ։ – 7· Ուրալ (հիւբերպո-րեան) լերինք որ անջրպետեն զնոր ասիական և զնոր եւրոպական Ռուսիս ձգելով 500 փարսախ ընդ եր-կայնութիւն։ – 8· Ալդայի լերինք յորս կան հանգք ոսկւոյ և արծաթի, որպէս և յՈւրալ ոսկի և բլա-դին. փոքր Ալդայի լճաձև գաւառային սահման Սև-պերիոյ բարձր է 6,500 ոտք։ – 9· Սայան լերինք ընդ Սիպերիս և ընդ Մոդղլ։ – 10· Նէրչինսքի լերինք՝ որ ի Սայան լերանց ձգին մինչև ի հիւսիսային ովկիա-նոս։ – 11· Օխոճսքի կամ Սդանովայի լերինք յարևել-եան Սիպերիոյ։ – 12· Քամչադքա յԱրկերկիս։

1397· ԼԻՄՆԻ· — Ի լճաձև առաջին մարի է գնել զկաւքեանն ծով 24,000 փարսախ քառ· յարևելից կոյկասու· յոր բազում գնաց հոանն, այլ ինքն որ-պէս կարծի ջուրն հաղորդութիւն ընդ այլ ծովս· 125 ոտնաչափս բարձր է քան զՍեաւ ծով, Թուի թէ յառաջնումն ոչ էր անջրպետեալ ի նմանէ և յԱ-րալ լճէ, ապացոյց նորա ցածունք են և ջուրն ձկնա-բեր, երից նուազ ապի քան զնոսա, և ի ձմերայնի սառի։ — Աբալ լճէ 3,000 փարս· քառ·։ — Պայքալ յԻրքուցք ի Սիպերիս· — Ձանի ի Դոմբ· — Ալդին յԱլդայի լերինս· — Իլմէն ի Նովկորոտ· — Ռէչքուս հոգալ ի Լիվոնիս· — Լադոգա 800 փարս· առ Ռե-գերսպուրկայ· — Օնեգա յՕշունէգ՝ ուր կան և 2,000 Հոգք· — Սարմա և Բայանա և Քոլքոս ի Ֆինլանտիա։

1398· ԳՆԵՏ· — Յորլքա և մեծամեծք են Ռուսաս-տանի յհեբրոպա և յԱսիա, որք հոսեն ի Ծովս Ծովս· – 1· Ի հիւսիսային ովկիան Թաիմին Բասուխին որ յԿ-նարալ լճէ գայ և ձևէ զսահմանս Սուբեաց և Ռու-սաց· — Ռուքա՝ որ ընդ ռուսաստանն Լաբոնիս ընթա-նայ· — Ռեչքուա՝ որ յԱրալեանց բղխել ի Ռեբրի և անցեալ ընդ Վլղոկայ և ընդ Նբրնանկէզ ընդունի զծագանակ զԱսա։ – 2· Ի Սպիտակ Ծով, Տուինա որ ծագանակ զԱսա։ – 2· Ի Սպիտակ Ծով, Տուինա որ և Տուինիա հիւսիսային գրաւեալ միութեամբ Սուխո-նա և Եուկ գետոց, Թաիմ ի Ծոցն Արհանկելսկ· ծագանակն զնա յաջմէ Վիչեկսա (Vitchegda) և Ռի-նեկսա։ – 3· Ի Պալգիկ Ծով, Դուինէ՝ որ ի Սը-վեասց գայ, Ռեմի, Ուչեա, Բիհշոյքի՝ որք ընդ Ֆինլանտիա ընթանան և Թաիմին ի Պոլճինեան Ծոց։ Ի նոյն Ծոց Թաիմի և Ռուսից, իսկ Ռիմէն կամ Ռուն-ձեկ՝ ի Ֆինլանտեանն· յայս Ծոց մտանէ և Նեւա որ ընդունի զՋուբս Լատոգայ լճէն և անցանէ ընդ մայրաքաղաքն Ռեդերբսպուրկ, և ծածանգակս ունի ըզ Սուբր, Վոլքսով և Վոքսա կամ Վուռդա· ի նոյն Թաիմի և Նարվա որ զՋուբս Ռեյքոնս լճէն ընդունի· — Տուինա որ և Տուինա Հարաւային անցեալ ընդ Վի-դեպսք և Ռիկա Թաիմի ի Լիվենեան Ծոց· — Կնեւ-մէն որ անցեալ ընդ Գրոդնոյ մտանէ յարևելեան Բրուսիա և ի Ռեմել կոչի անդ, ունելով ծածանգակ զՎիլիա ի Վիլնա· — Վիսդուլա որ յԱրաարիոյ ե-կեալ հասոյց ի Լեհաստան և մտանէ ի Բրուսիա, Թաիմի ի Փրէշ-Հաճի, և ընդունի ծածանգակս զՎիե-բրդ, զՈսկ, զՎարկ, զՎիլքաս և զՊեռուսս։ – 4· Ի Սեաւ Ծով, Դանուբ, Բրուտ որ սահման հա-տանէ ընդ Մոլդաւիա, Ցնիեսդեր (Պորիսթենէն) որ յԱշատորիոյ գայ և անցեալ ընդ Մոհիլեւ և Եկաթերնոս՝ Թաիմի ի Ծոցն· — Ցնիեսթեր որ սկսեալ ի Սմոլենսկայ հասոյց մինչև ի Քերսոն, ընդունելով յաջմէն զՊե-րեզինա, զԲորիսթէ, Դեսնէրով և Պոկ, և յահեկէ զՏետնա և զՎլղոսքա։ — Տոն (Դանապիս) որ յԱլա-խաս Ծոյնս Թաիմի, ընդունելով ծածանգակս յաջմէն Նեց և յահեկէ զՎլղոսքեան, Քերքեր, Սեաղմիտկա և Մանիչ· — Քուպան (Հիւազանէս) որ բղխե ի հիւ-սիսային կովկասոյ և ընդ Ազիմասք և Եչերս ըն-Թանայ, յերկուս բաժանեալ առաջս՝ մին ի Սեաւ Ծով և միւսն յԱզաս հոսի· — Ռիոն (Փասիս) ընդ ամբ Մնկռելոյս և Խեբեթիայ հասոյ ընդունելով զԲը-վերիմ և զՏիեհենա-ցխայն, և մերձ ի Բոպի հոսի ի Ծով։ – 5· Ի կասպից Ծով, Ուբղալ որ և Նաբիք կոչե-ցեալ, բղխե ի համանուն լերանց միջասահման ընդ Եչերոպէ և ընդ Ասիա, մերձ ի Կոսրիեֆ առանե ի Ծոյնս, ընդունելով զԱպաթարա յաջմէ և Ոիվեք յահե-կէ· Վոլգա որ և Եթիլ կամ Խաէլ որ բղխե ի Վլղ քոնցի անտառի Վալբայ և միջագոյն է գետոց Եւ-րոպայ, անցանէ ընդ բազում քաղաքս և ածէ քան զԱստրախան և Քրասնոյարսք բաժանեալ ի 65 առաջս կամ բան նահանգաց և ըստ մերոյն խոյնեցաց յ70 վտակս՝ մտանէ ի Ծոյնս գործելով կղզեակս· ածան-գակք սորա՝ յաջմէ են Օքա, Ուբաձնա, Մոսքուա, Քլեազմա, Սուբա· յահեկէ Դուբերյա՝ Մոլոկսա, Շէչքնա, Քամա որ հզօրագոյն է քան զայլ ածան-գակսն, և վերագաս և Պիեչկայա· — Ռուսս՝ որ ի հիւ-սիսային կողմանց կովկասոյ բղխե և առագանէ ըզ-փոքրն Նալպա և զՌուսմքայա, և ընդունի զԲրոտ-քումս որ խառայ ի Հերոնէսք· — Դերբէք որ բըզ-խե ի Մքինվալի կամ ի կաղբ լերանց, և խառայ ընդ Օսսեթ և ընդ Քասպատա, ընդունելով զՄուձնա, Աքասյի, Չերբէք, և այլն· — Սուլաք որ ընդ Ալար և ընդ Ենգերի խառայ և ընդունի զԲրոյս· — Սա-մուրա որ ի կովկասոյ գայ և ընդ Տաղստան խա-ռայ· — Կուր և Երասխ որ ի Հայոց լերանց բղխեն և ղՀայս և զԱլբս առագանեն, և խառնեալ ի սահ-մանս Պարսից Թաիմին ի Ծովն·

1399· ՀՐԱՆՑՔ· — Ոչ սակաւք են ի Ռուսաս-տան, Թէպետ և ոչ յորժ երկուքք և բազմառաջք· յորս զառաջին տեղին ունի Լատոգայ ըզանցքն՝ որ քերելով գափաքեք լճէն գնայ ի մայրաքաղաքն կոյս, ուրանօր երից առաջք բաժանեալ գնան ի Պալգիկ Ծով

և ի Կասպիական, և են սոքա Վիշին-Վոլոչք ի Դվին, Դիքվին ի Մոզոկա ձեռաւ, և Մարիա ի Բիակինք, երեքին ևս յանգին ի Վոլգա գետ։ Ի Բե-դրսպուրգայ ձգին այլ ջրանցք ի լիճս Լադին և Օնեգա և յԱրխանգէլ։ Երկու այլ ջրանցք հաղորդեն զՊետ-գիկ ընդ Կաթերից ծովու ի ձեռն Վիանց ժամանակի Վոլգայ, և Մարիա ջրանցիկ ընդ Սուխտայ գետոյ։ Իսկ զՊետգիկ ընդ Սեաս ծովու հաղորդեն երեք ջրանցք ի ձեռն գետոց Ոլոյ, Պերելինայ և Պոե-կայ։ Ձգին և այլ նոր ջրանցք ի Նիժնիյայ ի Լիպատ և Վիետաս Նաւահանգստաս, և ընդ մէջ գետոց Նիժ-նիյայ, Տուէայ և Վիազուէյայ։

1400 · Երկաթուղիք սակաւք են ցարդ ի Ռուսաս-տան · չափով մի ի Բելգրսպուրգայ տանի ի Բաս-լովաք, անտի մինչև ի Մոսկուա, և անտի մինչև ի Նիժնի-Նովկորոտ չտասնան ։ Ի Լէհս Վարսաւիա երկաթուղեաս հաղորդի ընդ Գրաքովիոյ ։ — Ի մեր-ձագոյն սահման Ցոնայ և Վոլգայ գործեալ է եր-կաթուղի ի դիւրութիւն հաղորդութեան կազդից և Սեաս ծովու։ Ցարգարի արդ և չափ՝ի Նուզպուրգի քաղաքէ սահմանակից Բրուսայ ընդ Լիպատ Նաւա-հանգիստ Պալթի ծովու։

1401 · ԿԼԻՄԱՑ ։ — Ի չորս գոտիս մարթ է զանա-զանել զկլիմայ ռուսաստան աշխարհացս ։ — Ա. Բևե-ռային գօտի ընդ 67°–76° հիւս ։ լայնութեան · սահ-ման գաշտաձև, յորում չիք երկիր արգասաբեր, ոչ անդաստանք և ոչ ծառք պտղաբերք և հովանաւորք։ Ձհասիձք գրաւեալ ուժին դմին ման երեսաց նորին, որ յաճախ ասահուցեալ և մամռալ պատ, և ի ա-պոյ ամարայնի եղկացեալ մառախլապատ գործեն զդէն։ Սակաւք տմանք Լաբնացիք և Սամոյետք և Ջուռք բնակեն ի տորերիրեայ դուռս, և կեան յոր-սոյ վայրի այձեմանց հիւսիսոյ, ի հաւուց և ի ձրկ, նորսուԹՒնէ ։ — Բ. Հիւսիսային գօտի, յորմէրայս ընդ 57°–67°, իակ յԱսիա ի հարաւակողմն ևս · և սա ան-մշակ է գաւառ ցրտին և հողմուտ · անտառք և լիճք և ձախՃախտաս ջրելոք տարածանին ի նմա · յԵՒ-րոպա երկրագործութեան կայքոյն մինչև ի 60°, իսկ նագարանութեան մինչև ի 64°։ ի մասին ասս բնա-կեն որարերք և ձնորոք ։ — Գ. Գօտի բարեխառն կամ Միջակ, ընդ 50°–57°, որ է եւրոպական գա-ւառք Ռուսաստանի բարեբերք քան զայլ մասունս աշ-խարհին, Թէպէտ և ցրտութեան առաւել է քան զա-բեսիեան գաւառաց Եւրոպիոյ ընդ նովին լայնութեան տատիճանք · ասիական ման գօտւոյս ցրտագոյն ևս է, բայց յարգասաւորութեան չէ տարբ քան վեր-բոպականն ։ — Դ. Հ֊երմ կամ Հարաւային գօտի, ընդ 38°–50°, որ է հարաւակողմն Եւրոպական Ռուս-տաներն · Թէպէտ և կլիմայն չիցէ գԺնգակ, բայց եր-կիրն անմշակ է և բազում ուրեք ամայի անասուն, խրճՀատեալ լերինքն Կովկասու անդ տարածանին · միայն ի հարաւակողմն Ղրիմայ կան պտղաբեր և գե-ղեր քաջք, այլ և անդ ձմեռն կարճձեռն է · ՅԱ-սիական մասին գօտւոյս խոպան անբեր են գաւառքն ։

1402 · Ի հասարակի որպէս տեսաք դասային և հարթածաւալ է Ռուսաստան, մանաւանդ ընդ հիւ-սիսիւ · լեռնաշղթայք ի հարաւոյ կողմանէ Լեհի կան և ի միջնաշարհին Ուրալ լերինք ամբառնան · սա-կայն երկրագործութեան ոչ յաջողէ վասն ցրտու-Թեան առատմանեաց ի հիւսիսակողմն, և վասն ա-ւազուտ անյարմարութեանցն (որ ի Դանուբայ մինչև յՈվ կիանոն հիւսիսոյ ձգին) ի հարաւակողմն · յԱսիա յայնկոյս Ուրալեանց գոն ուրեք նշմարի երկիր գոր-ծեալ · Նաև յԵւրոպա սահմանք Մոսկուայ չեն բար-ւոք մշակեալ, բայց այս ոչ երկրին Լեհ է Թերու-Թիւն այլ և բնակչացն ։

1403 · ԹԵՐՔ · — Բովք առատ են ի Ռուսաս-տան, յորոց տարեկան շահ լինի առաւել քան զ160 միլիոն ֆր։ Ոսկի առաւել ելանէ քան յայլոց պետա-Թեանց Եւրոպայ և Ամերիկոյ · Հանքք ոսկւոյ կան յԱլտայի և յՈւրալ լերինս · յՈւրալեանց յամին 1835 հանին 130 կենդանիս ոսկւոյ, որ է 22 միլիոն ֆր։ 400 կենդանիս արծաԹոյ, 35–40 կենդանիս բրասին։ — Պղինձ գտանի յԱլտայի, յՈւրալ և յՕՐենԹ · Եր-կամ յամենայն լերինս Սիպերիոյ և ի Կովկաս և ի Վարսայի · կապար ի Տիլիզնահա, ի Կերչինսքի, յԱլտայի և ի Լէհս, ուր կայ և զինկ և յանդհս-մանդ · աղահանք յոլով են ի Ռուսաստան, և աղի Հակ · որպէս Ելեցան լճէ առ Վոլգայ, և այլն · կան և աղրեալք աղի ջրոց, որպէս Սոլիքամքք, Մգարսայս Ռուսաս միջն յԱսին լճէ · Ջերմուկք և հանքային ջուրք գտանին ի բազում կողմանս Ռուսաստանի, բայց լճն յաճախեալ ի մարդկանէ կամ առ վայրացն գԴԷՒԼԵՒԹեան կամ վասն բնակչացն խորԹաբորյից · վասն այսորիկ ի Գանգահոնկորաք Ջերմուկս կով-կասու կառուցաք բերդ յաՐԼԵՒԹեան ցերեսաց աս-պատակաց · անուանի են բաղնիքք Լիբէցքայ 90 վարսախաւ հեռի ի Մոսկուայ · — Բազում ազգք քարանց են ի Ռուսաստան, կէՀ և ալապաստր և յասպիս և պրոփիւր և գիրուխս, կառնիս և ապա-գիտն, այլոցն հանդերձ · գտան և նշմարք ագամանդի յՈւրալեանս · — Գեմահածուխ առատ է · Ի հիւսի-սակողմն աշխարհն ի սահմանս Սիպերիոյ և այլոց գտանին ոսկերք մեծամեծք և կմախք անարի գազա-նաց ընդ ձեամբ, զոր առաքեն ի վաճառս ։

1404 · Երկրագիրն աւազոտք սահմանաց Ռուսաստանի ընդ հիւսիսի և ընդ հարաւ մերկք են ի Ծառոց, բայց միջնաշարհն անտառային է, որով փոխան ածից վարին գիպայս առատ · եղևլին և Նոճ և կազամախ և կաղին հնդեղէն նմանեալք տարածեալ Ժամանակին մինչև ի սահմանս սառամանեաց · — Ցորեան առատելու-քան զվերս բնակչաց, գործեն պինու օղի և առա-քեն ևս ի վաճառս ընդ Պալթիկ և ընդ Սեաս ծով · պատուղ սակաւ է յերկրին Ռուսաց և ի Գերմանիոյ առաքի անգր · այլ յԱՀտերխան և ի Ղրիմ և ի Կովկասեան գաւառս լինի առատապես · խաղող ի միջին գաւառս լինի առատութեամբ ի կերակուր քը-նակչաց · կայ ի Ռուսաստան և կանեփ, վուշ, ծը-խախոտ, Տուպայն, և խաղողեղ ի Սիպերիա ։

1405 · Ցանասունս երկիրացդ ցեղ ընտիր է ի ձա-րասային Ռուսաստան առ վրանաբնակ Ժողովրդաս, որք գարմանեն և զուգու · արջառք սակաս են, ի Լէ-հաստան Լեհ քաջ գործմանին · գառինք Թէպէտ և յոլով այլ անհնամ, վասն որոյ և գեղին սակաս տան։

Ի Ղրիմ կայ լաւագէտ ոչխար ներագեղին և գանդուր, և պարարտագոյն գառինք Սեպերիոյ և Կովկասու և Ղրիմայ։ Ի հիւսիսակողմանս որպէս և



Ձեռ

Սկանտինաւիա՝ այծեամն հիւսիսոյ (ռէն) վարի փոխան արջառոյ. և քաշելագոյն փոխան գրաստու վարեն զաղջ-ան զրաւոր ուժով։ Սեպերիացիք պարապին յորս գաղանաց և երեց յորոց մարթ իցէ գործել մուշտակ, զոր օրինակ են կզնաբխս, աղուէս,



Շուներ Քամչատկայ

ընջեղ ծովային, արջ, գայլ, կուղբ, նապաստակ, ագռ. սգռ. այծեամից, և այլն։ Լինին անդ և հաւք վայրենիք։ Ի ծովս հիւսիսոյ և արեւելից որսան զազգ ազգ կէս ձկանց յորոց հանեն իւղ, և ի կաստից ծովէ և ի ալզեայ ձուէն առատ յոյժ ի կերակուր։

ՓԱՂԱՓԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

1406· ԲՆԱԿԻՉՔ· — Առաւել քան զ70 միլիոն մարդկան բնակին ի Ռուսաստան, յորոց ԱԵւրոպա իբրև 63 միլիոն, և իբր 7 միլիոն Ասիա, 65,000 Ամերիկա. և ամի ամի ածէ ժողովուրդն իբրև 800 հազարաւ, և շատ աք երկայնակեաց գտանին անդ։ Ի միջի բազմութեան ասի 1,420,000 ևԷի են ազնուական, 550,000 պաշտօնեայք եկեղեցւոյ ընտանեաք իւրեանց, 2,800,000 վաճառականք արուեստաւորք, 260,000 վաճառականք, 2 կամ 3 միլիոն ազատ գիւղականք և վաճառական ժողովուրդք, և առաւել քան զ45 միլիոն գիւղականք ստրուկք, կէսք յարքունի կալուածս ընդ ծառայութեամբ և կէսք յազնուականաց և սակաւուց ոմանց վաճառականաց։ Հաշուէին ի Ռուսաստան իբրև 100 ազգք և լեզուք, որոց



Գիւղօրայք Ռուսաց

ամենեցուն վեց գլխաւոր ցեղք են կամ արմատք ազգաց։

1407· Ա· ՑԵՂ ՍԼԱՒԵԱՆ· Որոյ ազգք են Ռուսք, Խազախք, Լեհք, Սերուխացիք, Մոլուսաւցիք, Լիթուանացիք, Գալըցիանացիք, և այլն, միաժամուռ 58 միլիոն մարդկան, բնակելոց յերկրին Ռուսաստանի յափանց Էլոյայ և Ագրիախանին մինչև յարեւելս Ասիոյ։ — Ռուսք սփռեալ են յամենայն գաւառս աշխարհին, միջահասակք են և կորովք, բնակիչք ներքին գաւառացն բարեբարոյք են և մարդասէրք, այլ ոչք ի սահմանս բնակին և ընդ այլոց ազգաց առնեն առևտուր խորամանկք են և ընչաքաղցք· Ճարտարք յոյսանեալ այլ ոչ ի հնարել· սիրեն զգինի և զգբի և ըզբաղանիս շոգեջերմ, յորմէ էլեալ մահանեն ի ջուր ցուրտ· Ազնուականաց իշխանութիւնն մեծ է ի վերայ ծառայից, բայ ի ապահանելոյ, յորմէ բազում անկարգութիւնք սպրդեալ են առ սխմարս յազնուականաց։

1408· Խազախք զնոյն բարս, կրօնս և զլեզուս Ռուսաց ունին· ապա ի Քրիեայ գաղթեցան ի սահմանս Լհհաց յափունս Տիխերերայ, և ազգականութիւն խառնեցին ընդ Չերքեզաց և ընդ Թաթարաց եկելոց· զառաջինն փոքր Ռուսք կոչէին և յեսոյ Խազախս կամ Քոզաք այն է Սպառազինք· ի սոցանէ ծագեցաւ տոհմն Զափոռոժսքի Խազախաց որ էր գունդ երիասաւրդաց զինուորելոց ընդդէմ Տաշկաց· և զնին այլ տոհմ Սլըպտա Խազախաց, որ կալան բերնակութիւն յամայն սահմանս ընդ ԱԷ Տան և Տըճնակութիւն յամայն սահմանս ընդ ԱԷ Տան և Տըճնկերեր գեացն։ Ի 1654 Նեղեալ Խազախաց ի Լեհաց անաի ընդ պետութեամբ Ռուսաց անկան, բազում անգամ Զափոռոժսքի Խազախք փորձ փորձեցին ընդվզել այլ կորուսին և զառաջին ազատութիւնս իւրեանց վասն գաւառաձնութեանն ի պատերազմին ընդ Օսմանեանս ի 1775։ Ոմանք ի Խազախաց ընդ երկար թափառական կենաք կեցեալ յարկայ տեղիս ի 1792 սատցան իւրեանց բնակութիւնն զգաւառն ընդ Տան և ընդ կերտ մի Ռուսաստաց ի սահմանս Կովկասու, և բնակեն անդ որպէս պահպանիք սահմանաց Չերնոմորց անուամբ։ Անուանի են արուեստիւք ի Խազախս բնակիչքն ի սահմանս Տոնայ ի 10,000 քառ· փարս· վայրի, ուր յառաջն Թաթարաց կայանք էին· ի սոցանէ էլին գաղթեցան յայլևայլ կողմանս Ռուսաստան Կրեմկեցիք Խազախք յափունս Դերբէքայ, Խազախք Օրենպուրգայ, և Խազախք Սիպերիոյ որ Ռուսաձեցին զերկիրն զայն ի Ժ.Ձ դարու· Խազախք Տոնայ պահեն անայլայլակ զկարգ զինուորութեան իւրեանց, ամենայն արուեստ մանուկ նոցա պարտաւորեալ է ի զինուորել· կարգ ըստ կարգէ փոփոխեն զպահպանութիւն սահմանացն, ինքեանք

ընտրեն զզջավաթս իւրեանց, միայն զԱթամանն որ է գլուխ նոցա՝ ընտրէ ինքնակալն Ռուսաց։ Խաղալիք Թուով իբր 600,000՝ ազատք են ի ծառայութենէ, պարապին յերկրագործութիւն, ի ձկնորսութիւն և յորսորդութիւն։

1409. Լինէ կամ պղտիկացիք, ՝ի միմեան, հաւասար Ռուսաց ունին զծագումն, զկրթութիւն և զբնին. զամս երկուս պատերազմել ընդ Ռուսաց՝ էր ոմն տեսիլ և էր ոմն որպես այժմ՝ ծառայք եղեն նոցին. և հռովմկացիք են կրօնիւք։ — Սերուիացիք, Ռուգք, Պուլղարք, Վլահք և Մոլտաւք բնակեալք ի սահմանս Տաճկաստանի 500,000։ — Լինէ ռուսինացիք իբր 2 միլիոն ազատք մինչև ի ԺԻ դար՝ անկան ընդ իշխանութեամբ Լիհաց և նոքօք հանգերձ ընդ Ռուսաց։ — Լեհք կամ Գուբրնացիք յԺԻ դարու նուաճեալ ի Ցեւառնեան ասպետաց՝ ընկալան զքրիստոնէական կրօնս. ապա եղեն ընդ ձեռամբ Լիհաց և Ռուսաց մինչև ի ժամանակս Մեծին Պետրոսի, որ նուաճեացն զնոսա. կրօնիւքդ յոլովք նորոգողք են. Ազգքանդերը կայր ազատ արար զնոսա ի սարկաքենէ։

1410. Ռ. ՅԵՂ ՖԻՆՆԱՑ. Ժողովուրդ բնակեալ ի Ֆինլանդիա և ի հիւսիսի Եւրոպայ և անդր քան զՈւրալեանս 3,500,000 Թուով. սոքա Թուին հաւատեալք ի Աստուածոյ ի գալուստ Քրիստոսի. Մահմետ միայն ի Ֆինեան ցեղի անուանի եղեն ի քաղաքականութենէն. բազում են տոհմք Ֆինեան ցեղին, յորս դժուար երեք Ֆինլանդացիք, Լիվլանդացիք, Էսթենացիք որ ունին հաստատ բնակութիւն։ Ֆինլանդացիք գործատէրք են և պարապին ի մշակութիւն ընդ ցրտաւառոյդ կլիմային. գաւազնին զԱՀպստերսկի խոստանալութիւն, սիրեն վերջս և զքերթութիւն և քաղցրաձայն է բարբառ նոցա. բնակարանք նոցա ազատութիք չունին ոչ պատուհանս և ոչ դնան։ — Էսթենացիք 400,000 ազգ բնակին յԷսթոնիա և ի մասն ի Լիվոնիոյ։ — Լիվոնացիք ի Լիվոնիա և ի Գուբրնանիա։ — Այլ ամենայն տոհմք Ֆինեան ազգիս և այնեմամբք իբրեանց առանձնական երթևեկին ի գաւառս սահմանեցեալս հնուսիսի, որսով և ձկամբ պարենաւորելոք։ — Լաքոնք յարեւնս Սպիտակ ծովուն 5,000 Թուով։ — Վօդկուք յայսկոյս և յայնկոյս Ուրալայ, 6,000։ — Չերեմիսք ի Տարաւակողմն, երկրագործք են։ — Վոգուակք 30,000, յորոց շատք տակաւին հեթանոսք են։ — Չուվաշք յարեւնս Վոլգայ, 100,000 ըստ մասին քրիստոնեայ և ըստ մասին հեթանոսք։ — Մորտուինք առ Օքա և Վոլգա գետովք Թափառական ժողովուրդ ունիցս 70,000, յորս 25,000 քրիստոնեայք կան։ — Պերգեաք 34,000 ժողովուրդ հեթանոս ի զանազան տոհմից։

1411. Դ. ՅԵՂ ԹԱԹԱՐԱՑ. 2,500,000. Թաթարք ազգակից են Թրքաց, յարմանց կապակից ծովու էգին ընդ Մողոլաց և էգին սերել Ռուսաստան. մասն մի նոցա ցարգ ևս ազատ է. անձինս գերք են մաքրասերք. ժուժկալք և գործօնք. կրօնիւք մահմետական։ — Ղազան Թաթարք յառաջն բազմամարիւք և զօրաւորք էին։ Թաթարք Ասիաբիսանու, Թաթարք Տաւրիդեայ, Կողոյի Թաթարք, Քուբմուք Թաթարք, Պաշքիր Թաթարք, յորոց շատք Թափառական կենաս վարեն. խրիզդք կամ Ղրիղզ խաղալիք Թափառականք, արք կատաղիք, սրեանոր բուք. երեք գունդք կամ տոհմք են նոցա՝ մեծ, միջակ և փոքր. — Եպագուզք բնակեալ յԻրկուզ ժողովրդի հեթանոս տասրացեալ ի բարուց Թաթարաց։ — Պուհարք սփռեալ ի Սիպերիա, են ի ազգանէ որք յափռնս Արալայ կեան ազատ կենօք։

1412. Դ. ՅԵՂ ՄՈՂՈԼ. Յորմէ 500,000 ազք միայն գան ի Ռուսաստան. երբեմն անուանի էր ազգդ Մողոլաց յաշխարհակալութենէն. կարճք են հասակաւ, մանր և երկայնաձև ակօք. գոշամորուք, խեղաճիւր գնացիք. ոտիզք, ածգոյնք. ամենեքին սքա զնամոյն օրէնս ունին և անառն կեան. յԻրգուզք բնակեն 7,000 Մողոլք որ ինքնակամ հնազանդեցան Ռուսաց։ — Ղալմուխք յրուեալ յափռնս կասպից, ընդ Տան ընդ Վոլգա և ընդ Ուրալ՝ վրանանակք են, գարմանեն զուգս և ուանն զմիս և ըզկաթն ձիոյ, 200,000 միայն ունցին ի Ղալմուխաց ի Ռուսաստան. քանզի շատք չուեցին գնացին առ Ձինս։ — Պուրեաք 100,000՝ յԻրգուզք և յափռնս Պայքալ Լճի։ — Մանչու, յորոց առնմ է ինքնակալն Ձինաց, յառաջագոյն բնակէին ի Սիպերիս՝ ուստի անցին առ Ձինս։ — Պուհարեաց յարեւելեան Սիպերիս, երեք ազգք են նոցա, Ձիաւորք, Ձկնորդք և Հովիւք այնեմամբ հիւսիսայնոց. 25,000 Դունկուզք են ընդ Ռուսաց պետութեամբ։

1413. Ե. ՌԱՆԿԱՐԳ ԻՒՆՈՒՑԻՑ ԳԱՒԱՌՈՒՑ. Ժողովրդեա այսոքիկ Թափառականք ի ծագս հիւսիսային սահմանաց յարեւելս Սիպերիոյ Թուին ի մոզղից սերեալ. կան ի սորերկրեայս նկուսս որսով և ձկնորսութեամբ և այնեմամբք իբրեանց, Հշոյ գիտութեան ոչ ծագեաց բնաւ առ նոսա. Տարիք Ռուսաց ամի ամի մերթս սահմանեն և այլ ազգ մուշտակս. Թուով են իբրև 80,000 և բաժանին ի բազում տոհմս, որոնցիկ են Սամոյեդք ազգ փոքրահասակք, սևագունք, գիմեսերք, ալաճոլիք։ — Օսթեակք Օպի և Օսթեակք Ենիսէի որոց այլազան է բարբառ։ — Չուցք և Գիլմուկք որ բնակեն ի հիւսիսակողմն արեւելեան Ասիոյ, կեաք ազատ և կեաք ընդ իշխանութեամբ Ռուսաց, յորոց գոհանին և յԱ-



այր



կին

Քամչատալք

մերիկա Ռուսիոյ։ — Քամչատալք որ ի հիւսիս քնակեն շատք հեթանոս, կերակրին ձկամբ և ձարպով ձկանց։ — Գուրիլք բնակիք կղզեաց մերձ յափռնս Ցաքոնաց, կեան յորսոյ և ի ձկնորսութենէ առաւե-



Տնակ Քամչատայում

լեալ ի գիւրութեան կենաց քան զայլ խաբարբոյ աշխիքս, են որ ընդ Ռուսաց իշխանութեամբ են և են որ ընդ Յաբոնաց։ — Ալէուդք որ Ալէուդեան կղզիս. զոսա Ռուսք վարեն յորոգութիւն ծովային ընդեաց, ազգ խնամի են քամչատալից։

1414. Ջ. ԿՈՂՄՈՍՈՒՆ ԱՋԽՈՒ. Իբր 3 միլիոն մարդկան ի բաղում ազգաց այլալեզուաց և այլագնից. ազգա մշակեն զվճաղս իւրեանց և յոլովք առաքակութեամբ ընուն զպահասութիւն պարենիցն. բազ ըեյազք են մարթով և քաջարիք, հանճարեղք, այլ զուրկք ի կրթութենէ. երբեմն ընդ պարսից և ընդ Տաձկաց իշխանութեամբ անկեալ. այժմ չտաք ազատք են և ըստ կամ ինքնակից լինին Ռուսաց. ազնուանի են ի սոսա Չերքէզք ազգ անձնագիւղ, կորովի, աւազակաբարոյ, մաշվուսական կրօնիւք. Չերկիրն ժառանգութեամբ ունին ազնուականք. և գործ սոցա է որսորդութիւն և աւազակութիւն, և պատերազմ ընդ Ռուսաց. Չերքիս զոր ըմբռնեն ի մարթի՝ վաճառեն Տաձկաց. բայց մարգասիրութեամբ հիւրընկալ լինին։ — Ոսեզք և Ինկուշք 200.000 բնակեալ ի Լերինս, նշմարի ի նոսա նշան ինչ քրիստոնէութեան ընդ աղօտ, այլ վարք նոցա հեռի են ի նմանէ։ — Ազգաց կամ Ախխազք 250.000 ի սահմանս Չերքէզաց խաչագրի քան զնոսա։ — Լեզգիք 650.000։ — Ի հարաւակողմն կովկասու բնակին Վիրք ոլոք զամբյոլով ընդգիմացան տիրապետութեան Պարսից և Տաձկաց, այլ յետ մահու Հերակլեայ Թագաւորի իւրեանց՝ հպատակեցան Ռուսաց ի սկիզբն գարուս. աւերակք եկեղեցեաց և քնուածոց վկայեն նախկին հոգւոյ Վրաստանի։ Սահմանակից և ազգակիցք են Վրաստանի Մընկրհաբ, Խիբլեթ, Կուբլեվ, ուսոի Տաձիկք ընտրեին զմարգագերն ի վաճառ, որոց միասնուռ թիւ է 600.000։

1415. Բաց ի ցեղից ազգաց այսոցիկ կան ի Ռուսաստան առաւել քան զ3 միլիոն տարազգիք, զոր օրինակ են Հայք 800.000, Յունք 50.000, Գերմանք 20.000, Հրեայք իբրև 1,500.000. յԵւրոպական ազգաց Գերմանացիք բազմաթիւ են քան զայլս իբրև 600.000 գաղթեալք ի ձանազան գարս, և կէսք հրաւիրեալ կոչեալ ի կրթութիւն և յարուեստս պարապելոյ. գոն և մուտք 35.000. Գաղղեացիք 6.000, և խաղացիք Նուազուշք։

1416. ԿՐՕՆԳ. — Եկեղեցին արեւելեան կամ յունական է կրօնք պետութեանն Ռուսաց, զոր դա-

ւանեն Ռուսք, Լիթուանացիք, Խազախք և Վլիքք և Հայք մասամբ. ի 1702 ամի և այսր կայսրն Ռուսաց համարի փոխանակ պարիսպքին կոստանդնու-պոլսոյ և գլուխ եկեղեցւոյն. յորոյ ուղղութիւն հաս-տատեալ է անուանեալն Սուրբ Սիւնհոդոս կարգա-գիր՝ ընդ գլխաւորութեամբ ինքեանցին և փոխանոր-դի նորա աշխարհակիր. իսկ պաշտօնեայքն են ե-րիս դասք պատուաւոր եկեղեցականաց, այսինքն են Մետրապոլիտք, արքեպիսկոպոսք և եպիսկոպոսունք. յետ սոցա այլ կրկին. 7 Մետրապոլիտք են Ռուսոց, 28 արքեպիսկոպոսք և 40 եպիսկոպոսք. պաշտօնեայք եկեղեցւոյ իբրև 120,000 և միանձունք 16,000. որոց են 880 Մենաստանք և կուսաստանք: Ի կրճուհիւն կղերաց 3 հնմարքանք են, 43 կղերիկասարքք, 150 վարժարանք: Յերիս արտի ուխտ եկեղեցւոյ նոցա, ի վերին՝ այն է կարգ եպիսկոպոսաց, ի մերին՝ որ է երիցանց, քահանայից և սարկաւագաց, և ի վեր-կանս՝ որ են միանձունք Բարսղեանք. զեկեղեցա-կան պաշտամունս ասեն ի լեզուս Հնկաւանաց կամ ի հին Սլաւեան. յԺէ դարուս անտառն յեկեղեցւոյ ասի ոմանք և կոչեցին զանձինս Դպրովիրեցի այս է դասանդաց հին կրօնից: Հռովմէացւանք են Լեհք և սակաւք յայլոց ազգաց իբրև 7,500,000, որոց երկու արքեպիսկոպոսք են, ի Վարսաւիա և ի Մոհիլեւ. և իբր 3,000 եկեղեցականք. 1,750 միանձունք, 1,880 եկե-ղեցիք և մատրունք, 150 վանք, 32 կուսաստանք: — Նո-ր ընդունեալ 3,500,000, որոց են 900 եկեղեցիք և աղօթա-տունք, 460 պաշտօնեայք: — Հայք ունին առանձին սիւնհոդոս ԺԲ Ջիւմաճին, և գլխաւորն նորին՝ գլուխ Իւրեանց: — Հրեայք 1,500,000, ունին 600 սինակո-կայս, 2,350 աղօթատունս, իբրև 1,000 բաբանի և 4,000 դպրոցս: — Մահմետականք են իբր 4 միլիոն, ունին 5,500 մզկիթս, 15,000 պաշտօնեայս կրօնից, 6,510 դպրոցս: — Հեթանոսք են իբրև միլիոն մի:

Ռուսք ընդ որս և Հայք և Յոյնք և Վլիքք հին ա-մարտուն վարին, որով խաղացումն տարւոյ նոցա 12 առաջեքք յեսին քան զկիրգորեանն, զոր համերն Եբրայա և Ամերիկա ընկալեալ է:

1417. ԼԵՋՈՒ. ԿՐԹՈՒԹԻՒՆՆ. — Լեզու Ռու-սաց բարբառ Սլաւեան, ազգակից է չկնասն, պա-հեմ և լեհ լեզուաց. Նշանագիրք նոցա են տառք յատնաց և հռովմայեցւոց խառնուածեմբ տասը տա-ռից ինչ. բայ ի Ռուսաց լեզուէ լսի ի Ռուսաստան լեհն, Ֆինեան, Թաթար, գերմանացի, մոլդ, ձեր-քեզ, և այլք յոլովք:

Յաւուրց Մեծին Պետրոսի ծագեաց լոյս գպրու-թեան և բարձր կրճուհեան ի Ռուսաստան և բար-գաւաճեաց յատուրս Ազեքսանդրի առաւել քան առ նախորդօքն նորա, և յետ նորա առաւել ևս յատուրս մեր. վարժարանք ի կրճուհեան և ի տունս ազ-նուականաց ի Գաղղիացւոց և ի Գերմանացւոց ան-մէ են, բայց տակաւին ոչ է քաջ ծաւալեալ ի Ռու-սաստան տրահնդ ուսմանց. 7 համալսարանք են ի Ռուսաստան, իբրև 60 մարզասուիք, և իբրև 3,500 դպրոցք: Օրագիրք իբրև 80 տպասարքին ի Ռուսս:

1418. ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆՆ. ԱԶԱՏԱԿԱՆՈՒ-ԹԻՒՆ. — Արուեստից ձարաքուածին համար ի Ռուսս յաւուրս Պետրոսի Մեծի, առ որով 21 գոր-ծարանք կառուցան. այժմ կան առաւել քան զ7,000 գործանոցք և 500,000 գործաւորք, ընդ զանազան-ս որ ի զարմանս և ի գարհուրս. վաճառք որ յարուեստից նոցին հայթհայթին են իւղ կտաւատի և կանեփոյ, նաւթ, մոմ, օճառ, սեկ, կաշի, կտաւ, չուխայ, բամբակ, ապակի, երկաթ, պղինձ, ղէնք, և այլն, և այլն: Յոլովք ի գործարանացս են ի գա-ւառսն Մոսկուա, Վլատիմիր, Ռեզեքապուրկ, Ֆա-լուգկա, Օրէլ, Ռուբոք, և այլն: Ձարարուածին զոր ուրեմնից առաւել քան զառաւել զարգացաւ յետ 1823 ամին, յորում խնամ օրինաց արգելաւ չտնել վաճառս յօտար աշխարհաց. զառարիք ցքեղ յոք-նեմնէ են, քանզի ամի ամի 8 միլիոն տակառ ցքեղ ծախի ի Ռուսաստան:

1419. Վաճառականութիւն ի գարուս յայսմիկ յաճոյեցաւ ի Ռուսիս և վասն Ճանապարհաց գիւ-րութեան և խրախուսանաց Ազեքսանդրի կայսեր և Նի-կողայոսի. իբրև 100 միլիոն րուպլեաց վաճառս հա-նեն ամի ամի ի Ռուսաստանէ, և աւելի կամ նուն-չափ մտնեն. վաճառքն հանեալք են, ցորեան, վուշ և կանեփ, և սերմն նոցա. փայտ, երկաթ, պղինձ, տաճ խոզու. բաշ ձիոյ, փետուր, մուշտակ, կաշի, սեկ, չուխան, կտաւ, ալ բուտոց, ծիրանս, մոմ, և այլն: Գլխաւորք ի վաճառս որ բերին ի Ռուսաստան են, գինի, թէյ, կերպաս, շաքար, կաֆէ և անանձ, և այլն: Ի Ձինաց գայ թէյ և խաղո-ղեվ և Նանկին. ընդ Պարսից և ընդ Ձինս վաճա-ռաշաւ տուրեսուիք լինի ի ձեռն կարսանաց. ի մէ-ջին գարս նախ քան զգիտել Ամերիկոյ և Բարելուսոյ այսպիսի տուրեսուք կարի յոյժ յաճախեալք էին. Մոսկուա և Գօնկորտա հանդարտնոք էին վաճառուց մասին միայ Ասիոյ ի պետս արեւմտից Եւրոպայ, և զարգիս վաճառաշաւք են նոքա որպէս և Քազուկա, Օրէնպուրկ, Ֆուբոք, Քեբան, Վարսաւիա, Լոս-պլին, և այլք: Նաւաշհանգիստք վաճառաշաւք ի Պալթիկ են, Ռեզեքապուրկ, Ռիկա, Պպոյ, Ռեվել, Հելսինկիֆորս. ի Սեւս Ծովս՝ Օտեսսա, Քեբան. ի կասպս՝ Աժաէրխան. ի Սպիտակ Ծովս՝ Ար-խանկել: Ցամին 1849 ամին ի նաւաշհանգիստս Ռու-սաց 6,865 նաւք վաճառաքարք և էլին 6,620:

1420. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ. ԴԱՄՔ ՄԱՐԴԿԱՆ. — Բացարձակ ինքնիշխան է միապետութիւն Ռու-սաց. բայց Ազեքսանդր կայսր կամեցաւ ընդ օրինք սրկանել զիամս ինքնակալ. հրամանք ինքնակալին Ուբաս կոչին. գվճաւոր պաշտօնեայք սեբուբեանն են Նահան ինքնակալութեան՝ որոց հինգ պաշտամունք են, և Նահան խորհրդ պետութեան՝ որոյ երկո-սասան պաշտօնեայք են: Նէրակոյն հակ ի վերայ օրինաց պահպանութեան, սինհոդոսն սրբազան՝ ի վերայ կարգաց եկեղեցւոյ. մասնաւ քաղաքավարու-թեան և պատժոյ յօրինելոյ է քան խրատս. Մեծա-համբաւ խրատարանիք Եւրոպայ: Ժառանգութեան աթոռոյն ի պահանջ սրտաց անցանէ և յէգս. ի Մոսկուա լինին հանդիսք օծութեան և թագադրու-թեան: Ինքնակալք Ռուսաց յաճախ կոչին Մեծ իշ-խանք, և ապա Ձար անուանեցան, Մեծն պետրոս

սեպհականեաց վկայոյ մակդիր և վնքնահաշի ամե-նայն Ռուսաց, յոր յարեն և այլ չքոյ անուանս, որ-պէս Զար Խաղանայ, Ասպրախանայ, Լիվոյ, տէր Բաքուվոյ, մեծ իշխան Սմոլենսքայ, և այլն. աքբայա-զունքն կոչին մեծ դուքսք և մեծ դքսուհիք:

Երեք գաղք աշնուականայց են Ռուսաց, աշնուա-կանք հին տոհմից, աշնուականք աւքօնուստ անուա-նեալք, և աշնուականք՝ պատճանեալք. սոքա յեսինքն բաժանին ի 14 գասս, որոց առաջին ուղ ժառան-գութեամբ Թագուն զաշնուութիւն: Աշնուականայց ընորհեալ է ունել սորուկս, այսինքն գինակիսն ի կալուածս իւրեանց. պետութիւնն ունի իրրև 17 մի-լիոն սորուկս. են աշնուականաց և այլ առանձինն ընորհք:

1421· Պատուանշանք կամ աստիտութիւնք Ռու-սաց են, Ս· Անդրէի կարգ՝ հաստատեալ ի 1698· Կատարինեայ կարգ՝ վասն սիկնայ (ի 1714), Ա-լեքսանդրի Նեւսքեայ կարգ (ի 1722)· Սպիտակ աք ծուղ կարգ (ի 1333 ի Լիվոյ հաստատեալ)· Ս· Աննայի կարգ ի 4 գասս (ի 1735)· Ս· Ստանիսլաո-սի կարգ յ՝3 գասս (ի 1765 ի Լիվոյ)· Ս· Գէորգ-գայ կարգ ի 4 գասս (ի 1769)· Ս· Վլատիմիրայ կարգ ի 4 գասս (ի 1782)· բայ յայսցանէ՝ ընորհն արգեանց պատիւք մեսալք ոսկեղէնք և արծաթեղէնք և խաչք:

1422· ՀԱՒՈՒ· ՋՕՐՈ· — Եկամուտ պետու-թեանն Թուի 550 միլիոն ֆր·, պարտք 5,380 միլիոն: — Թիւ համարէն զբոյց Ռուսաստանի համարի իբրև 900,000 արանց, յորս իբրու 150,000 հետեւոց, հրա-նոթք 1800· գաղթականք, աշնուականք, եկք և գի-տունք, և և վաճառականք ազատք են ի զինուորու-թենէ· իսկ այլք ցամս 20 կամ 22 կան ի զինուո-րութեան· ի 1820 կարգեցան ի գնդասոր քաղաքս զինուորական գաղթականք: Երեքեղի ամրոցք Ռու-սաց՝ ի Ֆինլանտիա են՝ Սվեասորգ, Հելսինկֆորս և Ֆրեդերիքքսամ· Քրոնշտատ ի կղզւոջ ուրեք Բեդերս-պուրկ· Ռիվկ և Ռեվել յերիերս բնակեալ ի Գեր-մանացւոց· Տիմնամուրկ ի Վիլկբաք· Խաչիկ և Պետեր ի Պետերպուխ· Զամոսք և Պոլեն ի Լե-հաստան և Վարաւիա: — Զինուորութիւն ծովային հաստատեաց Մեծն Պետրոս և տիրացաւ Պալթիկ և Սեաւ ծովուց· 50,000 նաւամարտք են Ռուսաց, 75 նաւք մեծամեծք եռակարգք և երկկարգեանք հան-գերձ չոգենաւուք, մինակք 150, մանուանք առաւել քան զ՝300· Հանդիսարանք նաւատորմին են Քրոն-շտատ և Սևաստոպոլ, ևս և Արխանկել, Աժակրխան և Կիրճոյսկ:

1423· ԴՐԱՄՔ· ՋԱՔՔ· — Հաշուեգրամ Ռու-սաց է ---ին արծաթեայ՝ որ արժէ 4 ֆր· իսկ Թղ-թեայ ռուբլի 1:12 և բաժանի ռուբլի ի 100 ---ես պղնձեայ: Ոսկի գրամք են Իմպերիան (imperiale) 10 ռուբլի· կէս կայսերական· — Բլատին գրամ՝ ---ը՝ 6 ռուբլի, և կէս սուգագ: Յաճախագոյն վարի Թղթեայ գրամն 5, 10, 25, 100 ռուբլեաց· — Չափ ճանապարհի Ռուսաց է Վերստ՝ որ է 104⅔ ման սաժէնի (1,0668 քիլոմէտր)· և է վերստն 500 ---ին կամ Յուղ, սաչէնն բաժանի յերիս կան-գունս, որ-ին· Ոտն ռուսական հաւասար է անգղա-կանին (135⅑ գծաչափ գաղղ·)· Կշռոց միութիւն է ֆունտ՝ որ է 409½ կրամ, և բաժանի յ՝36 լոթ կամ յ՝96 սոլոդնիկ և յ՝9216 ման (---ի)· 40 ֆունտ առնէ 1 բերկովէտ՝ որ է 16,374 □ մանուաչափ Բարիզ· հեղուկաչափ վեդրա 619½ մանուաչ· □:

1424· Ինքնակալութիւն Ռուսաց ըստ վարչութեան բաժանի յեօթանասուն և երիս գաւառս կամ ի կուս-ակալութիւնս· ոմոհեալ են և գաւառքն ի չորս-նակս կամ ի գնէս· յորս են գաւառք ինչ որ սե-փական օրինօք վարին, զոր օրինակ Ֆինլանտիա, Խա-զախք Տաթար, և այլն:



ՌՈՒՄԱՍՏԱՆ ԵՒՐՈՊԻՈՅ

1425. Ընդդեմ սա յԱսիոյ կովկաս և Ուրալ լերամբք և գարա գետով. ուր աշխարհք են ի նմա և 58 (1) գաւառք, և են այսոքիկ, Թուով բնակչացն յամին 1846.

Ա. Պայդիական Գաւառք

1.	Բեգեբսպուրկ	Բն. 643,700
2.	Նաթանէա	310,400
3.	Լիվոնիա	814,100
4.	Գուբլանիա	553,300
5.	Ֆինլանդիա	1,412,300

Բ. Մեծ Ռուսք կամ Մոսկովք

6.	Մոսկուա	1,374,700
7.	Սմոլէնսք	1,700,600
8.	Բաքով	775,800
9.	Դուբր	1,227,000
10.	Նովկորոտ	908,000
11.	Օլոնէց	263,100
12.	Արխանկէլ	253,000
13.	Վոլոկտա	822,200
14.	Եարոսլաւ	1,008,100
15.	Քոսդրոմա	1,054,600
16.	Վլատիմիր	1,236,500
17.	Նիժնի Նովկորոտ	1,178,200
18.	Դամպով	1,750,900
19.	Բեազան	1,365,900
20.	Տուլա	1,227,000
21.	Քալուգա	1,006,400
22.	Օրէլ	1,503,000
23.	Քուրսք	1,680,000
24.	Վորոնէժ	1,658,000

Գ. Փոքր Ռուսք կամ Ուքրաինիա

25.	Քիէւ	1,605,800
26.	Չեռնիկով	1,430,000
27.	Բոլդաւա	1,783,800
28.	Խարքով	1,467,400
	Գումար	32,013,800

(1) Ի սկիզբն 1851 տարւոյ յաւելաւ միւս ևս գաւառ 59 Սամարա անուն, ի մասանց Սարադովի, Սիմպիրսք և Օրէնպուրկ գաւառաց, և մասն մի ևս Սարադովայ խառնեցաւ ի գաւառ Աժտերխանու:

	Նախընթաց գումար	32,013,800

Գ. Միւսիսեան Ռուսք կամ Ղազան

29.	Բենզա	1,087,200
30.	Սիմպիրսք	1,318,900
31.	Ղազան	1,342,900
32.	Վիատքա	1,662,800
33.	Բերմ	1,637,700

Ե. Թաղաւորութիւն Աժտերխանու

34.	Աժտերխան	284,400
35.	Սարադով	1,718,600
36.	Օրէնպուրկ	1,948,500

Զ. Հարաւային Ռուսաստան

37.	Ղազախք Տռնայ	704,300
38.	Եքաթերինոսլաւ	870,100
39.	Տաւրիա	572,200
40.	Ղազախք Զեռնոմորսքի	124,100
41.	Քերսոն	842,400
42.	Պեսարապիա	792,000

Է. Լիւոնաւիա

43.	Վիդեպսք	790,000
44.	Մոհիլեւ	931,300
45.	Մինսք	1,046,400
46.	Վոլինիա	1,445,500
47.	Բոտոլիա	1,703,000
48.	Կրոտնոյ	907,100
49.	Վիլնա	863,700
50.	Քովնոյ	915,500
		55,522,400

Ը. Լեհաստան 4,860,000


51.	Մազովիա	
52.	Քալից	
53.	Գրաքովիա	
54.	Սանտոմիր	
55.	Լուպլին	
56.	Բոտոլսքիա	
57.	Բլոք	
58.	Աւկուստով	
		60,392,400

Ա· ՊԱԼԴԻԱԿԱՆ ԳԱՒԱՌՔ

1426· Վաւառքս այսքիկ յԱԺՂ դարէ և այսր յաւելեալ՝ ի Ռուսաստան՝ ի վաճառականութենէն և ի քաղաքավարութեան յաւաջագիմ գոյն քան զայլ ամենայն գաւառս։

Ա· ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԲԵԴԵՐՍ-ՊՈՒՐԿ· (Լենկրատ)։

ԲԵԴԵՐՍՊՈՒՐԿ կամ ԲԵԴՐՈՊՈՒՐԿ, որ է ՊԵՏՐՈՍԻ ՔԱՂԱՔ Սուրբ մականուանեալ (Petersbourg)· — Մայրաքաղաք ամենայն Ռուսաստանի առ նեղեայ գետով յարևելեան ծայր Ֆինլանտեան ծովի, չինեալ գեղեցկայարգար և մեծասարած յամին 1703 ի մեծէն Պետրոսէ և զարդարեալ առ Բ կատարելագոյն։ 12 թաղք են նորա յորոց ևեռնէք կան ի ջրագաթս նեղեայ ի հարաւոյ նորին· փողոցքն լայնք և երկայնք և ուղղաձիգք և առնէք նմանաչէնք՝ վայել չուԹեան կերպարանս ատ քաղաքին յոյժ, այլ վասն համակ միաձևուԹեանն տաղտուկ ածէն տեսանելեացս· տունք ազնաշէնք են ի հասարակ, յաճախք այլ ընդարձակք յոյժ· ի հոյակապ չէնսն նը-շանաւոր են լայնածաւալ և քառակուսի Ձմերանոց



Հանգանակ Վաճառականաց

պալատ կայսերն յԵրեայ, որոյ 462 ոտք են երկայնուԹեան և 344 լայնուԹեան· մեծ մասն հրկեզ եղև ի 1837, և կրկին կառուցաւ ի միւսում ամին· հանդէպ պալատիս կայ գորացի սիւնն Ալէքսանդրի Ա, միաստեղ կառնիս վեմ 84 ոտք բարձր, 12 ոտ-նաչափ տրամագծաւ· ի կողմանէ պալատիս կայ գաղտարան քնակուԹեան կայսերին՝ Բ Ermitage ա-նուանեալ, և տաբերդեան պալատն, յորս Թանգարանք է 2000 ընտիր նկարուց, ջնջող մատենից և զարդուց· Ազգարանքն Միխայէլովի և Անիչքովի, ա-պարանք ծովապետին, հանգերձ նաւարանաւ և մը-ԹերանոցՔ և համբարանոցաւ, և այլն, ի մեծի հրա-պարակի ուր հանդէպ զօրաց լինին· Ընդ նշանաւոր և հետաքրքրեն չինուածս քաղաքին համարեալ է և փայտեայ տանն՝ յորում քնակեր մեծն Պետրոս՝ ի չինուԹեան քաղաքին· Յեկեղեցիս նշանաւոր է զարդմանաչէն կառնիտեայ եկեղեցին Սուրբ Խաչակայ՝ որոյ չինուԹիւն չէ ահաբոեալ, և կայ նա ի մեծի հրապարակի խաչաձև, 278 ոտն ընդ երկայն, 153 ընդ լայն· գմբէԹ մեծ կայ ի միջակին և մատուռք չորք աշտարակաւորք ի ծայրսն, չորք Ճակատք են նորին սիւնազարդք· եօԹն գրունք, յորոց երեքն՝ 30 ոտնաչափ բարձր և 12 լայն· 343 ոտք են բարձրուԹեանն մինչև ի խաչ գմբէԹին· Մերձ ի տա կայ պղնձահալ վիԹխարի հեծելապատկեր անգրի Պետրոսի մեծի, 17 ոտնաչափ ի բարձրուԹիւնն, զոր կանգնեաց Կատարինէ Բ ի կռանիտեայ վիմի մեծի՝ մակագրեալ

Petro Primo Catharina Secunda MDCCLXXXII.

Մարմարիոնեայ պալատ ինքնակալին. կաթոլիկէ Տէրամօրն Ղազանայ ի Նեւսքի Բէրսբէգիվ՝ի գեղեցիկ



կաթոլիկէ Տիրամօր Ղազանայ

և ծառայարգար փողոցի քաղաքին։ — Ս. Նիկոդէոս եկեղեցի, անկեանց պետրուն մանկուց, Տանդանակ վաճառականաց, մատենադարան կայսերական իբր 450,000 տպագրեալ գրոց և 20,000 ձեռագրաց։ Հասարակաց ժողովարան, զինարան, գանձարան վաճառականաց. Մոլլեն մէնասան ուր 5,000 աղջկանց մնան։ Մեծ չուկայն Ձմերային կոչեցեալ Ջիհնայի Բինոք, և արեւելեան չուկայն Կոստինդիանովը։ — Ս. Պետրոս և Ս. Պօղոս եկեղեցի՝ ուր Թաղին արքայազուկք և պահին յայնմանակ դրօշուց, բարձր է աշտարակ նորա 340 ոտնաչափ։ Եւ պալատք իշխանաց բազմաց և պաշտօնակալաց, և ուսումնարանք, յորս գնաւորք են համալսարանին հինեւալ՝ի 1821. Ճեմարան գիտութեանց բարեկարգեալ՝ի մեծաւ հոգաբարձութեան Եւլերայ գերմանացւոյ, Ճեմարան բժշկութեան, գիտանոցք երկու, Ճեմարան արուեստից, գոլորշեաշարժաբանութեան, ուսուցիչներ իրաւաբանութեան, գոլորշեաշարժութեան, երկաթագործութեան, գոլորշեաշարժ նաւուն, վարժարանք չորս, գոլորշեաց օրիորդաց, և այլն, և տունք մարգասիրութեան, Թանգարանք ազգի ազգի նիւթոց, ընկերութիւնք իմաստասիրականք։ Գործարանք ձեւագործեալ 200, յորս երեսփի է գործանոց ապակեաց, յախճապակւոյ, գորգոց, և ձուլարանք. և վաճառականք նաւթիսկ յաջող. Նաւահանգիստ բնագործելոյ է Քրոնչլոտա, յորմէ չոգենաւք գնան՝ի Նաւահանգիստս Պալթիկականին։ Ի բերան Նեւայ կան իբրև 40 կղզիք զբօսանեաց և Ճեմարանք քաղաքին. և՝ի չորս կոյ եզերս պալատք զբօսանոց ինքնակալին, յորս երեսփի են Զարսկոյէ-Սիլօ՝ զոր կառոյց Եղիսաբեթ Հոյակապ չինութեամբ. և զարդիս գործեցաւ չուխղ երկաթի անգամբ. Բէկերհոմի մերձ՝ի Ծով որ հայի՝ի քաղաքն և՝ի Նաւահանգիստն. Օրանիէնպաում և սա հոսէ՝ի Ծովիզն։ Բայց շրջավայրք քաղաքին ամայի անապատք են, ուրիք ուրիք երեսին անտառք. ամենայն վայելուչութիւն քաղաքիս արդիւնք են Ճարտարութեան Մեծին Պետրոսի։ Բն. առաւել քան զ'800,000։

1427. ՔՐՈՆՇԼՈՏ (Kronstadt). — Ձանգիման մայրաքաղաքին՝ի Կոալին կղզւոջ կառուցեալ՝ի Մենչին Պետրոսէ (1703) քաղաք ամուր և Նաւահանգիստ Նաւատորմին, ունի մեծերառնոց, Նաւակայս և զինարան, վարժարան Նաւուղղութեան. երեք են Նաւահանգիստք մին պատերազմի Նաւաց, միւսն Հանդերձեալց և զինման Նաւաց, երրորդն վաճառաբերից, որ ուր նին աշտարակ լայնատերակիրս և մաքրարան։ Քանդք երկու անցանին ընդ քաղաքն չինեալք՝ի Պետրոսէ և՝ի կատարեհնաց. յերկուցն միւսն կայ խոտալանն պալատ, որ այժմ վարժարան է Նաւուղղութեան. կայ և անկեալեաց Նաւաստեաց 2,500 անկողնոյիք. Նշանակարք է և պարտէզն Ճեմելեաց, յորում գոն Ծառք Ճեւատունկք Պետրոսի։ Բն. 15,000, պահակաւք և զինուորք 40,000։

ՇԼԻՍՍԵԼՊՈՒՐԿ (Schlüsselbourg). — Ամրոց՝ի տեղւոջ ուր Նեւա ելանէ՝ի լայնակաց լճէ, ունի գործարանս բամպակի։ Բն. 24,000։

ՆԱՐՈՒԱ (Narwa). — Ւա՛ համանուն գեաւկին, ուր նի Նաւահանգիստ մի. ասա յայլմանակ մեծ տարաւ Կարոլոս ԺԲ՝ի 1700։ Բն. 6,000։

1428. Բ. ԿՈՒՄԱԿԱԼՈՒԹԻՆ ԵՄԹՈՆԻԱ. — Գաւառս այս և որ գինի սորա են երկուքն՝ անուանին Գերմանացւոց գաւառք, զի շատք՝ի բնակչացն ազգաւ Գերմանացիք են։

ՌԻՒԻԼ կամ ՐԷՒԱԼ (Réval). — Ամուր քաղաք, և Նաւահանգիստ պատերազմիկ և վաճառական Նաւաց. ունի գործ ազնուականաց։ Բն. 30,000։

1429. Գ. ԿՈՒՄԱԿԱԼՈՒԹԻՆ ԼԻՎՈՆԻԱ. — Կոչին բնակք գաւառիս սերեալք յԼիւեոնացւոց, ի Լէգաց և՝ի Լիվաց, զորս Նուաճեցին գաղթականք և ասպետք Գերմանացիք՝ի միջին գարս, և չետ նոցա Գանիք՝ի 1220 և ապա կրկին Գերմանացի կարգն Տևտոնաց. և 1561 կարգապետ նոցա Կոդհարտ Քեդլէր հնազանդեցաւ արքային Լենհաց և չետ ամաց լինչ Սուեդք տիրացան երկրին, յորոց էառ զայն Մեծին Պետրոս։

1430. ՌԻՒԱ (Riga). — Քաղաք ամուր յոյժ, վաճառաշէն և Ճարտար, ի վերայ Տուինայ գետոյ երիւք վարսաւոք հեռի՝ի Լիմնիոյ ծովէ. ասա նաեի վարիչ և տեղակալ երից գերմանական գաւառացն. Նշանաւոր չինուածք՝ի սմա են կրկին վարժարանքն, գիտարան, եկեղեցիք, մարբասուն, Թանգարան բրանական պատմութեան, մատենադարան. կառնուին մասնաւոր, ջանգք, Թաար, խանուարք վաճառականաց և զարան չաքարի, և այլն. ամի ամի 50 միլիոն ֆր. վաճառս հանեն ասա, և անեն 15 միլիոնից։ Բն. 75,000։

ՏՈՐՊԱՏ կամ ՏԷՕՐՊՏ (Dorpat, Dörpt). — Ի գեղեցկավարդ գաշտի յամուտս Էմնոպաց, անուանի է համալսարանն գերմանացի զոր կանգնեաց Կուստաւս Ադոլփոս՝ի 1632 և կրկին ուղղեցաւ՝ի 1802. ունի գիտանոց, մատենադարան, պարտէզ բուսաբանութեան, և այլն. վարդապետք են համալսարանիս Բառոդ և Աբելք որ եկին՝ի Ծասիս՝ի քննել զնաւանն, միւն՝ի 1829, միւսն՝ի 1845։ Ի համալսարանի սոս վարժին և հայազգիք ոմք՝ի սպասս Ռուսաց։ Բն. 15,000։

1431. Դ. ԿՈՒՄԱԿԱԼՈՒԹԻՆ ԳՈՒՐԼԱՆԴԻԱ. — Բարեբեր, անասնային և ջրաբեր քան զայլ գաւառս. անկաս՝ի ձեռս Ռուսաց ՝ի 1795։

ՄԻՏԱՒ (Mittau) · — Գ.· Ռ· բարեչէն, ունի հրապարակ և պարտէզ, վարժարան, դիմանոց, դրատուն · Հուսկ ի քաղաքն կայ դղեակ հին ոճր պանդխտեցաւ Լուձովիկոս ԺԸ· Բն · 30,000 ։

ԼԻԳԱՒ (Libau) · — Նաւահանգիստ վաճառաշահ ի Պալտիկականին, ունի բաղանիս Ծովու· Բն· 12,000 ։

ԵԱՒՈԳՏԱԴ (Iacobstad) · — Քաղաք փոքրիկ, առ որով Սգրուվ չափեաց զվիջօրէականն · Բն · 4,000 ։

1432 · Ե· Մ Ե Ծ Ռ Ո Ւ Ս Տ Ա Ն Ի Ն Ֆ Ի Ն Լ Ա Ն Տ Ի Ա Ց · — Ընդ մէջ պալտիկականին, Նորուեգիայ և Արևմտկիւղ · լերինք բաղումք անցեալ ընդ գաւառս այս՝ յանդին ի Սկանդինաւեան Ալպեսյս · Հարաւակողմն բարեղք մշակեալ է և բազբերք · Բնակիչք Ֆինացի լուԹերականք են · ի բևեռն սահմանս բնակեն 5,000 Լաբոնացիք, որք զաւանչին գրաւեալ էին զամենայն զգաւառն, և յԹ դարու հալածեցան ի հիւսիս ի Ֆինեան կամ Զոմտի ազգաց, զորս զամենեսին նուաճեցին Սուէտք յԺԳ դարու և ապա Թողին Ռուսաց · Ցուբ հաղարապետութիւնս կամ ի գաւառս բաժանի այժմ Ֆինլանտիա, որոյ սեփական օրէնք և զրք և հաւք են, և մայրաքաղաք նորին Հէլսինկֆորս · և այս են գաւառք և Թիւ բնակչաց նոցա ըստ 1840 ամի ·

Գաւառք	Բնակիչք
Օպոյ Պիոռնէպորկ	252,000
Քուոռթիոյ	170,000
Ս · Միքայէլ	134,000
Նիլանտ	140,000
Դաւասդհուս	145,000
Ուվեսպորկ	126,000
Վազա	204,000
Վիպորկ	250,000
	1,421,000

1433 · ՎԻՊՈՐԿ (Wiborg) · — Ամուր քաղաք և նաւահանգիստ ի Ֆինլանտեան Ծովի, ունի վարժարան մի · սա էր յառաջնումն մայրաքաղաք Ռուսական Ֆինլանտոյ · Բն · 8,000 · — Ոչինչ կարի հեռի ի քաղաքէս կան Բիուդերլաք քարահաղ կառնիցի · — Կը շանաւոր է ի սահմանս Վիպորկայ և Ջուվէճի խմդրաքիլ 100 ոտք բարձր, զոր գործեն սահմանք Վրաստեայ ։

ՕՊՈՑ (Abo) · — Ի մուտս Պոթնեան Ծոցի ի Պիոռնէպորկ, քաղաք շահաշատ և բարգաւաճեալ յարուածոյ Հարտարութեան · յատաջագոյն մայրաքաղաք Ֆինլանտոյ · ի 1827 Եղև ի սմին հրդեհ որ Հարակեաց զհամալսարանն, զմայր եկեղեցին և 800 տունս · Բն · 16,000 ։

1434 · ՀԵԼՍԻՆԿՖՈՐՍ (Helsingfors) · — Ամուր նաւահանգիստ ի Ֆինլանտեան Ծոցի և մայրաքաղաք մեծի դքսութեանն, յատաջագէմ ընծանալ ի քաղաքավարութեան, յետ անշքանալոյ Օպոյի · Նշանաւոր է ի նմա նոր կամրուղիկն, ապարանք Տերակուտին Ֆինլանտոյ և Ժողովարան ազնուականաց · Բնակիչք 18,000 ։


ՍՒԷԱՔՈՐՍ (Swéaborg) · — Ամրոց անառիկ ի վերայ ԵօԹն քարաժայռ կղզեաց, պաշտպանէ զմայրաքաղաքն · ունի մեՀերասոց և համբարանոց · առաջին քաղաք է պատերազմական ի Ֆինլանտիա, կառուցեալ ի 1749 · Ծախսեալ 12 միլիոն ֆր · Բն · 4,000։

1435 · Ի մուտս Պոթնեան Ծոցոյն կան Ալանդ քառասուն կղզիք ըստ բաւականի բարեբերք, յորս 80 կղզիք ևԹե են բնակեալք ի 44,000 մարդկանէ սերեալոց ի Սուէտացւոց, որք յաջողակ ի նաւավարութեան, և ամրոցս բազումս կառուցեալ է անդ Սբ. Աեւոյց, զի նոքա են տեարք արշիպելագոսն ։

Բ· ՄԵԾ ՌՈՒՍԻՔ ԿԱՄ ՄՈՍԿՈՎՔ

1436 · Զ· ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՄՈՍԿՈՒԱՑ · — Ըստ կարի բարեբերք, և ի Հարտարութեան յառաջացեալ քան զայլ գաւառս ։

ՄՈՍԿՈՒԱ (Moskwa) · — Քաղաքն համձնաւոր գեղոյն, նստեալ ի վերայ բլլակաց, առաջին մայրաքաղաք և երկրորդ աԹոռ ինքնակալին, կեդրոն վաճառականութեանն Ռուսաց և ցամաքի · Հինեցաւ բարեկարգ քան զառաջինն յետ Հրդեհի 1812 ամին · Ե փաբաս է տարածութեան նորա · չորիր մասին պարսպէ և մարգագետինք են · յոլովագոյնք ի տանցն փայտաշէն են · ի չորս Թաղս բաժանի, որ են Կրեմլ կամ Քրեմլին նախնի բնակարան ինքնակալին, Քիթայկորոտ, Պէլոյկորոտ (Սպիտակ քաղաք), Սէմլ եանօյկորոտ · Քրեմլին ունի խոտան և պատաւարս, և ի նմա են հին և մեծ ապարանք արքունի Քրեմլ կամ Քրեմլին Հայնեալ, զորոյ մեծ մասն ի հրկեզ արարին ի մուտս Նաբոլէոնի ի Մոսկուա · եկեղեցիք, մենաստանք, շուկայք, և այլն · յորս նշանաւորք են երեսուն եկեղեցիք, երիք պալատք կայսերա-



Քրեմլին

կանք, ժողովարան Տերակուտին, զինարան · ի միում յերից կամուրջիցն կայ աշտանակ արծաԹի 2,800 լիպայ կշռո, և ատ պահին ինքնակալ ·



Ժողովարան Երևակոյտին

յայլում կան դամբանք ինքնակալաց կացելոց յառաջ քան զՔրիստն Պետրոս և բարձր աշտարակն Իւանայ Վելիքի, և զանգակ մի մեծատարր 20 ոտնաչափ բարձր, 22½ տրամագծաւ. որ կշռէ իբրև 4,000 կենդինար. գմբեթք ոսկեվառաք պսակեալք զրար. ձուկն գրեմլինայ վսեմական ընծային զանսկ նորա։ — Ի Քրիստիկորս որ նշանակէ Քրիստոս քաղաք, նշանաւոր է կաթուղիկէն և մեծ շուկան 6,000 քարանձէն կրպակօք. ի Թաղի աստ են կայանք վաճառականաց։ Ի Պետրիկորս են բազում պալատք քարանձէն, կրթարանք, անկէանոց մեծ անտերունչ մանկտուց, գանձարան վաճառականաց, ձուլարան հրազնդաց, իբրևանք Թղթատարաց, Թատերք, 73 եկեղեցիք, և այլն։ Չորրորդ Թաղն պատի զերկբովքեան, և ի նմա են զինարան, մեներանոցք, վարժարան զինուորականաց, և 103 եկեղեցիք։ Արուարձանք 30 են քաղաքին և գլխաւոր ի նոսա Կնեզիզքայա Սլոպոտա որ ե ասել Կերմանացւոց արուարձան։ — Ընդ ամենայն 1,000 եկեղեցիք և մատրունք են ի Մոսկուա, գլխաւորի նոսա Ս. Փրկիչ, Ս. Բարսեղ, Վասն բնակութեան Մոսկուայ իբրև 60,000 արամբք, քանզի ազնուականք գան ձմերել ի նմա. բազմաթիւ են գործարանք ի քաղաքին և բազմութիւն գործաւորաց. անուանի ի գործուածան են բամբակ, լուխայ, գլխարկ, մետաքս։ ԲՆ. իբրև 400,000։ — Ի սահմանս մայրաքաղաքին կան պալատք զբօսանաց ինքնակալին և ազնուական տոհմից զարդարեալ զբաւարձալի գարձատեաք. անուանի է ճանապարհն դիր ընդ Մոսկուայ և ընդ Բեզբորոդ 160 փարսախ, իբրևանք հանդերձ. և չափով երկաթի, որոյ սաւաստեցաւ չինութիւն ի 1851։

1437. Մ-ա-ի-ս-կ, և Պ-ր-դ-ն-ո (Moschaïsk, Borodino). — Գեղաք անուանիք վասն յաղթութեան Կայսրեանն ի 1812, որով ազատ խաղաց եմուտ ի Մոսկուա։ ԲՆ. 48,000։

Դ-ր-ո-ց-ո-ց (Troïzkoï). — Քաղաք փոքրիկ. անուանի է վասն մեծի վանասանին Երրորդութեան անուանն Նեղց Դրոիցքոյի Սէրգիէս (Troïzkoï Sergiew) որ պատուալ է սատար պարսպաւ, 9 եկեղեցիք են ի նմա, պալատ մի կայսերական, լսարան աստուածաբանութեան 300 հոգեկաց, մատենադարան, և այլն. ի մայր եկեղեցւոյն կայ գերեզման Ս. Սարգսի և Թամկագին անօթք և սրբազան սպասք, և զանգակ մի 1,400 կենդինար։ ԲՆ. 8,000։

Ք-ո-լ-մ-ն-ա կամ Ք-ո-լ-մ-ն-ո-ց (Kolomna). — ԵՒս Մոսկուայ գեաոլ, վաճառաշատ և ի ձարտարութեան արուեստից բարգաւաճ. ԲՆ. 15,000։

1438. Ի- կ-ո-ի-ս-ա-կ-ա-լ-ո-ի-թ-ի-ն-ն Ս-մ-ո-լ-ե-ն-ս-կ-ո-ւ.

Ս-մ-ո-լ-ե-ն-ս-կ (Smolensk). — Ամուր քաղաք ի վերայ Տնիեբերայ, վաճառաշատ. պատերազմ մեծ եղև ատ և հրգեհ ի 1812. ի ժե դարու 200,000 բնակիչք էին ի նմա, ի ԺԷին առին զսա Ռուսք ի Լիթուանացւոց, և յայնց ժամանակաց երեկելի էր Ռուսաստանի։ ԲՆ. 16,000։

1439. Ը. կ-ո-ի-ս-ա-կ-ա-լ-ո-ի-թ-ի-ն-ն Բ-լ-ե-ս-կ-ո-վ.

Բ-լ-ե-ս-կ-ո-վ կամ Բ-ս-կ-ո-վ (Pleskow, Pskow). — Հին քաղաք մեծաւ եպիսկոպոսանիստ, ունի վարժարան կրերաց և մարզատուն։ ԲՆ. 13,000։

1440. Թ. կ-ո-ի-ս-ա-կ-ա-լ-ո-ի-թ-ի-ն-ն Դ-ո-ի-ե-ր.

Դ-ո-ի-ե-ր (Twer). — Գ. Ք. ամուր և բարեչէն ի խառնուրդս Դուբրցայ և Վոլկայ ի զուարճալի վիճակի. ունի կրթարանս և գործանոցս. և եպիսկոպոսարան, և տեղավաճառս։ ԲՆ. 25,000։

Դ-ո-ր-ճ-ո-ք (Torschok). — ԵՒս Դուբրց գետով, ունի գործարանս սեպհ։ ԲՆ. 16,000։

Վ-ի-շ-ն-ի-վ-ո-լ-ո-ճ-ո-ք (Wischeni-Wolotschock). — ԵՒս Դուբրցաւ ի գլուխ մեծի ջրանցին ընդ կասպից, ընդ Սեաւ և ընդ Պալթից ծով. ԲՆ. 10,000։

1441. Ժ. կ-ո-ի-ս-ա-կ-ա-լ-ո-ի-թ-ի-ն-ն Ն-ո-վ-կ-ո-ր-ո-ց.

Ն-ո-վ-կ-ո-ր-ո-ց վ-ե-լ-ի-ք-ի-ո (Nowgorod-Wéliki, այս է՝ մեծն Նովկորոտ). — Ի տեղւոջն յորում Վոլգայ ելանէ յԼիմն լճէ. ի միջին դարս ծաղկեալ վաճառականութեամբ դաշնակից գոլով վաճառական

քաղաքացն Գերմանիոյ, և 400,000 բնակիչք ևին Նորա. կայ ցարդ ի նմա Բրնեմէ, արքունի պալատ, և 62 Եկեղեցիք, յորս նշանաւոր է կաթուղիկէն Ս. Սոփիա պղնձի գրամբք. անդ գտաւ Ռուսաստան-Բրատաա մատեան օրինաց Եարոսլաւայ. Բն. 16,000։

1442. ԺԱ. ԿՈՒՍԱԿԱՂՈՒԹԻՒՆ ՕԼՈՆԷՑ. — Յորում 2,000 լինիք և Ճահիճք են և անտառք և կարկառք քարանց. ի լճանն գլխաւորք են Լատոկա և Օնեկա. բնակիչք ի ֆինեան ցեղէ։

ԲԵՏՐՈԶԱՎՈՑՍՔ (Pétrosawodsk). — Աւ. Օնեկայ, վաճառաշահ նաւահանգիստ, ունի ձուլարան հրանոթից։ Բն. 9,000։

1443. ԺԲ. ԿՈՒՍԱԿԱՂՈՒԹԻՒՆ ԱՐԽԱՆԿԷԼ. — Երկիր անապատ ընդարձակ քան զԳաղղիա, և ծայր հիւսիսային Ռուսաստանի յԵրոպա. գլխաւոր բերք նորին են փայտ անտառի, և երէ և այնեաեաւ հիւսիսային, և մուրտակ. ի բնակիչսն կան Լաբոնիք և Սամոյեդք 3,000։

ԱՐԽԱՆԿԷԼ կամ ԱՐԽԱՆԿԵԼՍԿ (Archangel). — Գլ. Ք. Նաւահանգիստ ի Տուինա 15 վարսակ հեռի ի Սպիտակ ծովէ. ունի մեծաքանոց, շուկայ մեծ, վաճառատուն. տուն մագնիսական, այսինքն է տեղի աստեղաբաշխական և ութեղերական քննութեանց. ընտարան աստուածաբանութեան, գպրոց նաւագնացութեան, ձկնորսութիւն արծնկայի և կիսի. աճուռ արքեպիսկոպոսի. երիք ժամք են կարճագոյն ասուր յԱրխանկէլ. Բն. 22,000։

1444. ՆՈՎԱՅԱ-ՋԵՄԼԻԱ (Nowaia-Semlia). — Երկու անբնակ կղզիք ի Սառուցեալ ովկիանոս, 14,000 փարսախ տարածութեամբ, զոր Հոլանտացիք գտին ի 1594, ձկնորաք և գրաւորք գան այսր որսալ վայրի հաւս, ղեկաս և զիսիկս. — Այնր քան զնովայա Զեմլեա ի նմին Սառուցեալ ովկիանոս կան վաճառք և ՀԱՒԱՔՈՑՆ կղզիք։

1445. ԺԳ. ԿՈՒՍԱԿԱՂՈՒԹԻՒՆ ՎՈԼՈԳՏԱ. — Ընտառային և Ճախճախուտ.

ՎՈԼՈԳՏԱ ի վերայ Տուինայ, ՈՒՍՏՅՈՒԳ ՎԵԼԻԿԻ (Wologda, Oustioug-Wéliki). — Սահմանակից քաղաքք վաճառաշահք յոյժ. միոյ միոյ են, բն. 16,000։

1446. ԺԴ. ԿՈՒՍԱԿԱՂՈՒԹԻՒՆ ԵՐՈՍԼԱՒ.

ԵԱՐՈՍԼԱՒ (Yaroslaw). — Ի վերայ Վոլգայ, ունի գործարանս սեպհ, կաւաուղ և այլս ևս. լճիկն անուանի զուգապատիւ համալսարանիւ, մատենագրան մեծ, ընկերութիւն Ռուս լեզուի. Բն. 34,000։

ՌՈՍՏՈՎ (Rostow). — Քաղաք վաղեմի ուխտատեղի. ի մոնաստանս նորա գան առաւել քան զ7,000 վաճառականս. Բն. 8,000։

ՌԻԲԻՆՍԿ (Rybinsk). — Ի վերայ Վոլգայ, համբարանոց վաճառուց զոր ասանին ընդ ծով ի Նիժնին գաւառս Ռուսաստանի. Բն. 10,000։

1447. ԺԵ. ԿՈՒՍԱԿԱՂՈՒԹԻՒՆ ԿՈՍՏՐՈՄԱ. — Երկիր բարգաւաճեալ մշակութեամբ և արուեստից ձարտարութեամբ, ունի գործարանս կաւուց։

ԿՈՍՏՐՈՄԱ (Kostroma). — Գլ. Ք. Մերձ ի Վոլգա. Բն. 12,000։

1448. ԺԶ. ԿՈՒՍԱԿԱՂՈՒԹԻՒՆ ՎԼԱԴԻՄԻՐ. — Սա յետ Մոսկուայ բարգաւաճեալ է քան զայլ գաւառս պետութեանն, մշակեալ բարեր. 200 գործարանք բամբակեայ կաւուց են ի նմա և սեպհ։

ՎԼԱԴԻՄԻՐ կամ ՎԼՈՒՏԻՄԻՐ (Wladimir). — Գլ. Ք. յատակնուն մայրաքաղաք եր Ռուսաց. Բն. 12,000։

1449. ԺԷ. ԿՈՒՍԱԿԱՂՈՒԹԻՒՆ ՆԻԺՆ-ՆՈՎԳՈՐՈՑ. — Գաւառ բարեբեր և յառաջադէմ ի քաղաքավարութեան. ի բնակիչսն կան 100,000 Մորտուինք, 300,000 Թաթարք, ևս և Չուվաշք և Չերեմիսք։

ՎԻՃԱԿՆ ԳԼԽՈՑ · — Որ ի Ս · Հելինեայ մինչև ի Սուտ գոգ, երկիր փոքր այլ բարգաւաճ յամենայնի քան զայլ վիճակս գաղԹականին · Քաղաքն Գլխոյ կամ Հրուանգանին կառուցեալ է ի Հարաւոյ Սեղանոյ գոգոյն, ուստի նորա քարաշէնք են և փողոցք և հրապարակք ընդարձակք և գեղեցիկք · վասն մի ամենայն ընդ քաղաքն հանդիպ ջանցիւք յորոց ափունս արեւկեալ է Ծառոց ՃնՁիւեաց · Ե եկեղեցիք են ի նմա, ապարանք դատաւորի, Թատր, փակարան անասնոց, պարտեզ մի բուսաբանուԹեան, պանդոկ, վարժարան և գրվրոցք · վանք կուսականաց են ի հարաւակողմն քաղաքին · իսկ յարևելակողմն քաղաքին կառուցեալ է բերդն, յորում կան հանդարանոցք, զինուորանոց, անկեանոց որբոց · ՑամրուԹեան և ի վաճառականուԹեան՝ նշանաւոր է յոյժ քաղաքս · նաւք յամարայնի կան ի նաւահայս Սեղանոյ գոգոյն, ի Ճմերան ի Սուտ կամ ի Սալտանա · բն · 22,000 ։

1622 · Ի հարաւոյ քաղաքին վերամբառնայ ԴաՁիլպէրկ կամ Սեղանոյ լեառն (Table Mountain) բարձր 3,500 ոտն · երրորդ մասն նորին ի վերոյ գայլախաղաւատ է և ստորոտն կառնիս · արևմտեան լեառնն է բնիկ Սեղանոյ լեառն, արևելեանն կոչի Սատանայի լեառն · իսկ յարևմտակողմն քաղաքին կայ լեառն Առիւծուս կամ Լիւն · վերին Սեղանոյ բաղուկք ասարտին ի գլուխն Բարի յուսոյ · Ընդ մէջ Սուտ և Սեղանոյ նաւակայից առ Կոոքսէյ գետք են վերինք որ բերեն զնաւակեալ կոստանեան գինին ։

ՍԻՄՈՆԴՈՍ կամ ՍԻՄՈՆՏՈՂՍ (Simonstadt) · — Քաղաք փոքր առ Սուտ (Ֆօս) գոգով, ի վաճառականուԹեան նախանձաւորդ մայրաքաղաքին ։

1623 · ՍՏԵԼԼԵՆՊՈՇ (Stellembosch) · — Գլ · Ք ·



Գլուխ Բարւոյ Յուսոյ

համանուն վիճակի 2,000 բնակչօք · — Մորաւեան եղբարք հիմնեցին զգաղԹական կանգեղուկս, որոյ 1,400 բնակիչք են, յորմէ ի Քաֆիրաց անտի ։

Այլ գաղԹական հաստատեցաւ ի կրնգոուէ ի 1808, որ ի հիւսիսոյ քաղաքին Գլխոյ ։

1624 · Բ · ԱՐԵՒԵԼԵԱՆ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ · — Յորում գիւաւոր քաղաք

ՖՈՐԴ-ԷԼԻԶԱԲԷԹ (Port-Elisabeth). — հիմնեալ ի 1820, յեզերս Ագկոայ խորշի, ունի նաւահանգիստ և շահավաճառ։

1625. Ի հիւսիսոյ դաւառին Գլխոյ Յոհի լայնածաւալ բարձրաւանդակէն Ափրիկեայ, այլ հանդամանք վայրացն անծանօթք են մեզ. յարևմտակողին կեան վանաբնակ Ժողովուրդք, յորս գլխաւորք են փոքր կամագք և Հոթանտաք, յարևելս Պուշմէնք. ի հիւսիսի գետոյն Օրանժայ բնակեն Մեծ կամագք, և Պեճուանք։

Բ· Ռ Ա Ֆ Ր Ա Ս Տ Ա Ն

1626· Լ՚ևխարհ Ռաֆրաց յարևելեան սահմանաց անտի Գլխոյն Յոհը ընդ ամենայն հարաւային արևելեան ափունս Ափրիկեայ. այժմ Ռաֆրաստան ամփոփեալ համարի ընդ մէջ սահմանաց Գլխոյն և Նադալայ. զորոյ և զսորին գաւառս հասին Անգլիացիք, այլ մարտ հակառակութեան մղի ընդ նոսա յերկուց ամաց հետէ, յեա լռելոյ մարտիցն յամին 1847։ Ի հիւսիսակողմանս երկրին Ռաֆրաց յայտնեցաւ յամին 1849 լիճն Նկամի և գետն Զուկա։ Բնակիչք կողմանցս զանազանին ի տոհմս տոհմս. որք ալէս Պեչուանաս, Զուլահ կամ Զուլահ, և այլն։

Ի հարաւային Ռաֆրաստան Անգլիացիք հաստատեցին զՔԱՂԱՔ-ՈՒՒԼԻՏԵՄՍԴՈՐՓ։ Իսկ քաղաքք բնիկք Ռաֆրաց ծանօթք՝ են Նորն ԼՈՆԴՈՆՈՒ 6,000 բնակչօք, որպէս ասի. և ՊՈՒՐՏՇԶԱՆ 16,000· ՄԱՏՈՒՆ, 10,000։— Քարողիչք Գաղղիացիք հաստատեալ են բնակութիւնս յափունս Սեաւ գետոյ և Գալետոնի, առաջինն փիլիպոլիս կոչի, երկրորդն՝ Գալեթան։

Գ· Ն Ա Դ Ա Լ

1827· Երկիր գաղթականին Նադալայ կայ ի հիւսիսոյ Ռաֆրաց և յարևելից հիւսիսոյ Գլխոյն, և յայնմանց հնդկային ովկիանոս. ձգի ընդ միջերկրայս երբ 100 մղոն. և համարեն տարածութիւն նորին երբ 5,000 փարս. քառ. արևմտակողմն երկրին բարձրանդակ է, և են անդ Տրաքենսպերկ կամ Վիշապայ լերինք, յորոց իջանեն գետք և բարեբոյս գործեն զերկիրն քան զամենայն մասունս հարաւայնոյն Ափրիկեայ. բարեխառն է և հղմաչն. բայց ծովակողմնին ջերմին չոյժ։ Գոնէին յերկրի աստ ամենայն բերք հարաւակողմանն Եւրոպիոյ, և անասունք ազգի ազգի, և ի բովուց՝ երկաթ և ածուխ և ազգ ազգ քարանց։

1628· Հոլանտացիք զառաջինն հաստատեցին աստ գաղթականս, և տեղի եռուն Անգլիացւոց. բնիկք երկրին են Զուլահ Ռաֆրաստանիկք, առաւել քան զ100,000։

Գլխաւոր բնակութիւնք Նադալայ են Տ՚ՈՒՐՊԱՆ՝ի ծովեզերին, ի Բորդ Նադալ գոգ, շահաստան. և ԲԻՐԴԵՐՄԱՐԻՏԶԲՈՒՐԳ, 45 մղոնաւ հեռի՝ի ծովեզերէն, ի միջավայրս երկրին, որ և աճեալ է կողմնակալին Անգլիացւոյ։



Ա Ր Ե Ւ Ե Լ Ե Ա Ն Ա Ֆ Ր Ի Կ Ե

1629. Ի ՍԱՀՄԱՆԱԳ անսի Կադալայ կամ՝ ի Գոդան Տելլակոպ մինչև ի Ծոցն Աբոնայ՝ հզիրք Ա-ֆրիկեայ զՀնդկային ովկիանոս՝ կոչին Ափունք արևելից, իբրև 1,000 փարսախ յերկայնութիւն։ Երկրի սատ գետս հզօր ընթանայ Զամբեզէ, որոյ ակունք անծանօթք են, այլ բերանք յայտնի՝ ի Ջանցս Մոզամպիքայ՝ քառասունք։ Այլ գետք, Լիմպոպա, Լոփֆիկ, Սապաթի, Կոկալ որ՝ ի Սոֆալ խաղայ, և այլն։

Բնակիչք Արևելից Ափանցս են խաչիւնք բարբարոսք. մանաւանդ Ծովեզերեայքն. կալլայք ազգ հզօր՝ ի Հիւերկրեայս բնակիչ. Սոմալիք բարեմարիք են, և են սոքա յետինդ մահմետականք. իսկ այլքն կռապաշտք։

1630. Ըստ քաղաքականին Արևելեան ափունքս Աֆրիկեեայ՝ ի բաղում աշխարհս և սերութիւնս կոտոր բեալ են, յորս գլխաւորք են Սոֆալա, Մոնոմոգաբա, Մոզամպիք, Զանկէպար, Սոմալի, Աբան. և այլն։

Ա. ԱՓՈՒՆՔ ՍՈՖԱԼԱՑ ԵՒ ՍԵՆԵԱՑ.— Որ՝ ի Լակոպ ձգին մինչև՝ ի բերան Զամբեզայ՝ որ գործէ ջրվէժս բազումս յերկրի սատ և ողողանէ յորդաջուր վտակօքն զբազում կողմանս, և գործեալ Տելտա մեծ ընդ 18° և 19° հար. լայն. մտանէ քառավաակ՝ ի Մոզամպիք. անտառք ոչ սակաւք կան՝ ի խորս գետափին։ Արաբացիք տիրեին սմա՝ ի գալ անդ Բորդոգալից, որ հալածեալ զնոսա խաղացին անցին՝ ի խորս գետանէ զրովս ոսկւոյ, այլ վերսկեցան՝ ի յուսոյ իւրեանց. փոքրիկ կալուած է նոցա ընդ մէջ սարիցն Գոբրինդ և Տելկաոյ և՝ ի ներքին սահմանս։ Առ Զամբեզայ կայ ամրոցն Դեգե՝ ուր ինչ համանուն գետոյն։ Սոֆալա սատ ունի բերդ մի։ ՔԻԼԻՄԱՆԷ՝ ի հիւսիսի Զամբեզայ նաւահանգիստ Բորդոգալից.— Սննդ կամ՝ Սենէ սատ Զամբեզայ սահման կոչինակալին 2,000 բնակչօք։

1631. Բ. ՄՈՆՈՄՈԳԱԲԱ ԵՒ ՄՈՆՈՄՈԶԻ.— Առանձնակ պետութիւնք են՝ ի մէջ երկրեայս. ընդ 16°–20° հար. լայն. առաջնոյն մայրաքաղաքն կոչի Զիմպաոե։

Մոնոմոգաբայ՝ ի հարաւոյ Մոնոմոգաբայ, և գետն Մանիկայ գնայ ընդ Նա, յորում գտանին ոսկւոյ փշրունք։

1632. Գ. ԱՓՈՒՆՔ ՄՈԶԱՄՊԻՔԱՑ. Ի Զամբեզայ ձգեալ մինչև՝ ի գլուխն Տելկաոյ՝ ափունք գժուարամատոյցք են, վասն կուտակեալ աւազանն. նեղուցն ընդ մէջ ցամաքին և Մատակասգար կղզւոյ՝ Մոզամպիքայ անցք ասացեալ, լայն է 100–130 փարսախ, ասպարէզ կէտ ձկանց, և քաղցըր ջրոց ակնաղբերք՝ ի Նմա, յորոց ոմանք բարձրանան մինչև յերեսս Ծովուն. բնակութիւն Ծովափանցն էջ բարի. բնակիչք ներքնագաւառացն Մաքաս կոչին, սևագէմք և զաղիրք են տեսանելով և քաջ պատերազմք։ — ՄՈԶԱՄԲԻՔ (Mozambique), քաղաք Բորդոգալաց, աթոռ է կողմնակալին և եպիսկոպոսի, կառուցեալ յաւազուտ կղզեկի մերձ՝ ի ցամաք. տունքն բարձրայարկք են, փողոցք մինչեւ՝ լինի անդ վաճառ մարդագիրուց և ոսկւոյ, բնակիչք իբրև 7,000։ Մէջ-ռիւ, ասան Նորաշէն առ խորշի Ծովուն, յոր խուսեն բնակիչք Մոզամպիքայ, զի չեն բարի օդք նորա։

1633. Դ. ԱՓՈՒՆՔ ԶԱՆԿԻՊԱՐԱՑ. Որ՝ ի գլխոյն Տելկաոյ ժամանեն ցամուտս Աչաշայ. և են՝ ի մասին սատ բաղում պետութիւնք Աբաթացւոց, է որ ազատ և է որ ընդ իշխանութեամբ իմում Մաշկադայ. բաղում են անտառք թաւուք երեոց և գազանաց բնակութիւն։

ՔԻԼՈԱ (Quiloa), կղզի հուսք՝ ի ցամաք՝ ի հարաւոյ, յորում ՔԻԼՈԱ քաղաք՝ երբեմն գլուխ քաղաքաց պետութեան մեծի, այժմ ընդ ձեռամբ Մաշկադայ իմում. ունի նաւահանգիստ գեղեցիկ։

ՄՈՄԲԱՍԱ, ի հիւսիսակողմն, քաղաք գլխաւոր՝ ի կղզւոջ Թագաւորութեանն Մոմպասայ։

Ընդ մէջ Քիլոայ և Մոմպասայ կան կղզեկ ՄՈՆՖԻԱ և ԶԱՆԶԻԲԱՐ, ուր երբեմն կային վաճառականք Աբաթացւոց, ընդ իշխանութեամբ Մաշկադայ իմում։

Ի բերան Քիլիմանի գետոյ կայ ՄԵԼԻՆԴԵ (Mélinde), քաղաք համանուն Թագաւորութեան, որ երբեմն բարգաւաճէր՝ ի ձեռս Բորդոգալաց։

1634. Ե. ԱՓՈՒՆՔ ԱՑԱՆԱՑ.— Անապատ մեծ չ3° հիւս. լայն. մինչև՝ ի սարն Կարատաֆուխ, գժուարամատոյց սակս մրրկաց. հիւսիսակողմն լեռնային է, անդ են սարք Կարատաֆուխ և Ֆելլխա։

Զ. ՍՈՄԱԼԻ.— Գետս ընդ Կարտաֆուխ և ընդ նեղուցն Պապ-էլ-Մանդեպ՝ յորում բնակեն Սոմալիք և Կալլայք և առնեն առևտուրս ընդ Արաբացիս և ընդ բնակիչս խորին Աֆրիկեայ. գլխաւոր քաղաք նոցա ՊԱՐԳԻՐԱ, 10,000 բնակչօք, ունի նաւահանգիստ լայնդ. մարդիկ կողմանցս Թիաձգիք և գանգրահերք են, բայց ոչ անգեղեցիք։

ԽՈՐԻՆ ԱՓՐԻԿԷ

1635· Ի ՄԻՋ աշխարհացն զորոց ցարդ Ճանաչեցաք, ի հարաւոյ Սուահանայ և ի միջի Արևմտեան և Արևելեան ափանց՝ սահմանի Խորին Ափրիկէ, յոր ցարդ Ճանապարհորդք ոչ իշխեցին հետախուզել վասն օգոյն ապականութեան և խժդժագոյն բարուց բնակչաց նորին, և բազմաց փորձ փորձեալ խաղալ ի ներքին գաւառս՝ կորեան չարամահ։ Բայց ի յետին ամեն նոր Ճանապարհորդք Անգլիացիք և այլք համարձակագոյնս սկան յառաջ խաղալ. և մի ոմն ի նոցանէ եգիտ զերկիրն Ճակկա (Jagga) յայնկոյս Մոնոմոտապայ, և զձիւնախառնուց լեառնն Քիլիմանճարոյ. և խորագոյն ևս ի մէջերկրեայն Ծանուցան Թագաւորութիւնք Գոջջամցեաց և Մրորոհումց։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԿՂՋԻՔ

1636· Պատանեաց կղզիք որ յերկերս Ափրիկեայ մօտ կամ հեռի յարևմտից նորին, Արևմտեայք կոչին, և են յԱղանդական ովկիանոս. տակաւք ոմանք և մանուանք կան ի մէջերկրականին. այսպէս և որք ի Հնդկային ովկիանոս են կղզիք՝ Արևելեայք կոչին, զի յայնմ կուսէ Ափրիկեայ կան։

Ընդարմտեայս Ափրիկեայ համարեին և Ասորեաք և Պատեղրա, որք արդ մանն համարին Եւրոպական կալուածոց Բորդոգալաց· յորոց ձեռս են և ոմանք ի կղզեացս Ափրիկեայ, և այլք՝ Սպանիացւոց և Անգղիացւոց. և են առքս սկսեալ ի հիւսիսոյ.

1637· Ա· ԳԱՆԱՐԵԱՆ ԿՂՋԻՔ.— Եօթն մեծ և երեքտասան փոքունք. Նախնիք Երանելեաց կղզիս անուանէին զոսա. և քանզի կղզին Երկաթոյ համարելը խորագոյն լինել յարևմուտս քան զամենայն ծանուցեալ մասունս երկրի՝ անդ հաստատեցին զառաջին միջօրէին։ Ի գանարեանս ստեպ լինին սաստանութիւնք, բաղում են հրաբուխք ի նոսա, և որ չիջեալ և և որ ծխեալ. հողին և անդրև տաղտուկ ածէ, թէպէտ և կլիման բարի է յոյժ։ Արևելակողին կղզեացս տապագին է և ամպոտ, և վտանգեալ ի բազմութենէ մարախոյ. գլխաւորք ի բերան են գինի, ցորեան, պտուղք հարաւային աշխարհաց, և գեղձանիկ Թուրմն.— Կախնիք Թէպետ և ծանեան այլ անկոյծ արարին զկղզեաց. յամին 1344 Լուդովիկոս Սեբոա ի պարգևի ընկալաւ զնա ի Կղեմէս Զ, ապա պապք եւոան զնոսա Սպանիացւոց, որք ի 1478 առաքեալ նաւատորմիղ տիրացան կղզեացն ընդ սուր հանեալ զբնակիչսն, որք կուանչք կոչէին, արք ուժաւորք և որպէս Թուխ ի գերկոր ազգէ. ի քարայրս կղզեացն գտանին գիակունք նոցա անփուտ, այլ վաղ լուծանին օդառեալ։

Երեքին սոքա կղզիք Աձկերտանաց, Գւերս և Կրեցհրոզաց, ի հիւսիսակողմն ապառաժուտք են և ապատանարանք այնեմանց։

1638· Լանցերոդս (Lancerotta).— Ի հիւսիսոյ բնակեալ կղզեացն, անքեր և սակաւաքուր. ունի հրաբուխ լեառն։ Բն. 20,000· մայրաքաղաք Թեկոհէ։— Կառն Նաւահանգիստ։

Ֆորդեվենդուրդ (Forteventura).— Ի հարաւոյ Լանցերոդայ, 13,000 բնակչօք, երիզոտ, գինեվետ· մայրաքաղաք Սանդա Մարիա պեդենտուրիա։

Գանարիս (Canaria).— Ցարևմուտս վերնոյն, կղզի գեղեցիկ և լեռնային ձիւնախառնուց գագաթամբ ի ձմերսին. ունի ազբիւր ջուրց, արմաւենիս, գինի, ձէթ, ցորեան, մեսաքս. բնակիչք իբրև 80,000· մայրաքաղաք բարեչէն ցիտատ ել լաս Բալմաս, ածոտ եպիսկոպոսի և վերին աստիճան գանարեանց. Նաւահանգիստ նորա Բոնտորոս ել լա Լուռջ. բնակչք 10.000։

Դեներիֆ (Ténériffe).— Ցարևմտից հիւսիսոյ Գանարեանց գլխաւոր ի կղզիս արշիպելագոսին. բերէ գինի և մրգս հարաւոյ. սրածայր գագաթն Դենեբրիխայ բարձր է յերեսաց ծովու 11-12,000 ոտնաչափ, և է հրաբուխ հանապազ ծխեալ. ի գոլտմանն յետնում ի 1707 աւերեաց զնաւաքաղքեայ քաղաք և զնաւահանգիստ նորա, կատար նորին լասպիս կաղ

մեալ է, տրամագիծ խառնարանին 1325 ոտք. ի ձմեռնային ժեամբ ծածկի. ի հովտին Լաս Կուանքաս 100 կարգ խուզ ի խաղող լուսային են յորոց միոյն 100 ոտնաչափ ԹանդրուԹեան է: Բնակիչք 100,000: Ցամաքատ աւազուտ ի հիւսիսի արևելից կայ ՍԱՆԴԳՐՈՒՄ, մայրաքաղաք բարեչէն, ունի նաւահանգիստ և ամրոցս: Բն. 8,000. իսկ նահանի մայրաքաղաքն Կուանչաց ՐՈԴՐԻԳՈ՝ կայ ընդ հիւսիսի ի զաւարձալի վայրի: Բն. 7,000: — ԼԱՊՈՒՆԱ, ի խորս կղզւոյն ի բարեբոյս դաշտի, 12,000 բնակիչք:


1639. ԿՈՄԵՐԱ (Goméra, Կապրարիա). — Անտառային, ջրաբեր, բարեբեր, յարևմտից կուսէ Դինեքրիֆայ: Բն. 9,000: Մայրաքաղաք Ս. ՍԵԲԱՍՏԻԱՆՈՍ, խորու 2,000 բնակիչք:

ԲԱԼՄԱ (Palma, Յունունիա). — Յարևմտից հիւսիսոյ կամերայ, բերբ մրգս, գինի, մետաքս և եղիգն շաքարի. 30,000 բնակիչք են նորա:

ԵՐԻԱՆՈՑ ԿՂԶԻ որ է ՖԵՐՐՈՑ կամ ԵՐՐՈՑ որ և ԲԼՈՒՎԻՒՆԱ և ՕՄՊՐՈՍ (Ile de Fer, Hierro, Pluvialia, Ombros). — Ամայի և անջրդի, սահաւաձիակ. միջօրեին հասատաեալ ի կղզւոյս 30՝ րոպէիւ խոնարհագոյն է յարևելս կոյս:

1640. Ռ. ԴԱԼԱՐԻ ԳԼԽՈՑ ԿՂԶԻՔ այն է (Capo Verde, Ilbas Verdas, Իչեաս Վերտաս). — Կազմած ԹագաւորաԹեանն Բորդոգալաց, երկիրն ամայի և օգն անառողջ. է երբէք՝ զի գետինք ոչ անձրևէ անդ, և լինի երաշտ և սով անհնարին, որպէս եղև և ի 1833, յորում երիս մասն բնակչաց կղզեացդ ոմանց գիտապատ անկան: Բնբք Նոցին են որիզ, մանգ, նարինջ, պտնան, լիմակ, բամբակ, և ազ ծառս առատ, վասն որոյ և ՏՈՑ ՍԱՏ կոչեցաւ անուն միոյ ի կղզեացն, որոյ Թիւ է 20, և բնակեաց Նոցին 50,000 Բորդոգալաց և խառնեաց. անդր աբարբեն Բորդոգալացիք գոտատապարտս. մայրաքաղաքն ՍԱՆ ԹԱՆԳՈՑ (San Thiago) լքեալ և տպաւորք է այժմ, զի կռղմնականն Նահ ի ԲՈՐԴՈՑ ԲՐՈՑՑ որ ունի հաւանդիստ բարի և ամրոց խարխուլ. — ՒՒՐԳԵՐԻ ՄԱՆ մականուանեալ ամոտ եպիսկոպոսի:

1641. Գ. ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԿՂԶԻ (Ascension). — Իբր 300 փարսախաս հեռի յափանց Աֆրիկէայ. իբր 6 փարսախ տարածուԹեամբ. լեռնային և անջրդի. յորում գտանին տատրակք մեծամեծք և այեէմունք: Սպանիացիք գտին զկղզիս յամին 1501 յաւուր ծնեի Համբարձման Տեառն. այլ բնա-



Սորբ Հելինե կղզի

կիչ կայոր ի նմա, որպէս և ոչ այժմ. բայ ի սակաւուց Վագրացւոց, որք տիրացան կղզւոյն յամին 1815, և հաստատեցին ոճԹևան ի ձորձ Դոլնին ծովեղբի, վասն երԹևեկի նաւաց:

1642. Դ. ՍՈՒՐԲ ՀԵԼԻՆԷ. — Ընդ 16° հար. լայն. և ընդ 10° արևմ. երկ. կղզի տպառաժուա 8 փարսախ շրջապատաւ, 360 փարսախ հեռի յափանց Աֆրիկէայ. մեծահռչակ արգելարան Նաբո-

լճերի։ Մի միայն է լեռան կղզւոյս քարուտ, ուստի խալան ջուրց ազրերք և բլուրք գալարազգեստք երևին. անմատոյց են ափունք կղզւոյն բաց ի խորչէն Ճէյմեգորջին. բարձրագոյն ի սոսս կղզւոյս է Կասաան Անասկայ 2,700 ոտնաչափ, կլիմայ նորին բարձրք, երկինք անամպ, ջերմ ի մրրկաց և ի վոհմորկաց, այլ երբեմն զովիկ յանձրևոյ ցամս ինչ. այս ԹեբուԹեին նորին և բազմաԹիւն վայրի պտղոց ոչ ներբեն առոքանալ հասկաց ցորենոյ, բայց պտուղ բազում բերէ երկիրն. բարձունք նորին բուսաբերք են, հովիտք և սոսրոտք անբերք. գոտին անդ կաքաւ, քաղցրաձայն Թռչունք և ամենայն ազգ անասնոց մեծաւ և բնակիչք 7,000։ Գտաւ կըղզիս այս ի Բորդոգալաց յամին 1502 յաւուր ծնեան Ս. Հեղինեայ դըշխոյ. Հոլանտացիք ժառանգեցին զայն ի 1600, և Անգղիացիք ի 1650 առեալ զարքին զայն կայսրան Նաւացն ԵրեՔսնից յարևելեան Հնդկաց։ Ի միայն քաղաք է կղզւոյն Ձէյմսթաուընի ի գուարճագեղ հովիտ առ գոգով միով ամրացեալ բերդաւ և 7 մարտկոցաք. բարի է և չինուԹիւն նորին, ունի Թաղ մի և գիւանոց. հոյակապ ապարանք իշխանին և պարտէզ նորա գեղեցիկ. չտաք ի բնակացն ցրիւ և ցրիւ կեան, յամենեցուն մարտի և մայիսի միայն գառնան ի քաղաք, զի յայնժամ հասանին նաւք Հնդկաստանի։



Դերեզման Նաբոլէոնի ի Ս. Հեղինէ

Լինին բարձրաւանդակ է 2,000 ոտնաչ. գիւղաքաղաք ի Նաւեղն յԱմագրալիա։ Գլխաւոր ի կղզիս յայսոսիկ կոչի յանուն հանգերձն կղզեացն. իսկ այլքն՝ Բնդհանուր որ երբեմն Ամերիկոյ ձայներ, և Լինեւ, յաւելագոյն Սոհակաց կղզի, և այլ կղզեակք ինչ անբնակք։

1643. Ե. ԴՐԻՍԴԱՆ ՏԱ ԳՈՒՆՀԱ. կղզիք, յանուն գտողին իւրեանց, բայց Անգղիացիք Հանդստեան կղզիս կոչեն զնոսա. Նաւուղիղ մի ամերիկացի սոսգաւ զոսա ի 1811, և ապա Անգղիացիք ի 1813 հաստատեցին անդ գաղԹականս. պարսպին ի մշակուԹիւն քաղՔիւ և չաքարոյ. կան ի կղզւոջս վայրի այծ և խոզ. ի լերինն են ցուրտ աղբերք. նաւք Անգղիացւոց զկայ առնուն առ ստ քաք ի Նաւեղն յԱմագրալիա։ Գլխաւոր ի կղզիս յայսոսիկ կոչի յանուն հանգերձն կղզեացն. իսկ այլքն՝ Բնդհանուր որ երբեմն Ամերիկոյ ձայներ, և Լինեւ, յաւելագոյն Սոհակաց կղզի, և այլ կղզեակք ինչ անբնակք։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԿՂԶԻՔ

1644. Ի ԿՂԶԵԱՑ սասի Հնդկային ովկիանոս, է որ բնիկ տեարս ունի և է որ Եւրոպացւոց պետուԹեամբ կալուած է, Անգղիացւոց և Գաղղիացւոց և Բորդոգալաց։ Չառաջին տէրն ունի ի Նոսա Մասակագաբ կղզի, որ ոչ միայն զանցանէ զմեծուԹեամբ հանուրց կղզեաց Ափրիկեայ, միանգամայն խոշ առելոց, այլ և մի ի մեծագոյն կղզեաց երկրի ճանապէ. վասն որոյ և առանձին աշխարհ մի Ափրիկեայ ասելի է զնա։ Զորք պարք են կղզեացս.

1645. Ա. ՄԱՏԱԿԱՍԿԱՐ. — Զոր Բորդոգալք Ս. Լաուրենտիոս կոչեցին և Գաղղիացիք ԿՂԶԻ ՏՈՓԵՆՏ, բնիկք երկրին Մատեգաս կոչեն, այս է Լուսնոյ կղզի։ Չև ևս է քաղ ծանուցեալ, բայց միայն եզերքն, ՈՒրդ Թուփ անտառախիտ և լեռնավայր. ի հիւսիսոյ կողմանէ ունի զվիճակորս լեառն, և ի հարաւոյ զՊոտգիմենի. երկարին ևս բարձր 10,000 ոտնաչափս. յարևմտակողմն կան Նաւակայք անբոյնք, յարևելակողմն՝ ծանծաղուտք։ Բազում են գետք

Մատակագարայ յորս զեւան կոկորդիլոսք. երկիրն արգասանդաւոր է մանաւանդ ի հիւսիսի, ունի և ձախճախուտս. կլիմայ բարեխառն, այլ անհաստիք համարի Եբրայեցւոց։ Մատակաք կոչին բնակիչքն, խառնուրդ Արաբացւոց, Պարսից, Խափչակաց և այլոց ցեղից. անտիտպաշտ հեթանոսք են, և ահագին Թիւնս ինչ մահճական օրինաց ունին, որպես ասի, ՀԱրաբացւոց ուսեալ, և լեզու նոցա յարաբացւոյն և ի մասն հառնակ բարբառ է. բարեկազմ են մարմնով Մատակաք, համբոյր բարւոք և հիւրասէրք. ունին բազում պետութիւնս ինքնիշխանս. Թատամս ոմն ի Հալաչ ցեղէ ձեռներէց լեալ կանգնեաց զիագաւորութիւն Մատակագարայ, և նուաճեալ զբազումս ի ցեղիցն՝ խորհեցաւ ածել զնոսա ի կրեռնութիւն. և յայս սակս դաշինս եդ ընդ Եւրոպացի ազգս. Թեանց, առաքեալ մանկունս ի Լատուն և ի Բաբիզ ուսանելէ զբէնս բարեկարգութեան. Թիւ էս ի 1816 Անգղիացի քարոզեալ բնակել յաշխարհն Իւրում, որք և հիմնեցին գաւրոցս և վարժարանս. յանէն առ բառնալ զբէնս սորկոռնեան. այլ ոչ ժամանեցան ցան բարեաւ կամացն ուղղել զամենայն, քանզի կին նորա սպան զնա և նստաւ յաթոռ նորին. և խռովեցաւ պետութիւնն։ Զօրովարդն համարի 4 կամ 5 միլեան, այլ սահմանք երկրին ընդարձակք են քան զԱգղիա։ Ի ներքին կողմանս կղզւոյն կան անտառք ազգի ազգի արմաւենեաց, և գ-ոյ-ոց և ոսպնեաց և փայտ էբենոսի. ի լերինն՝ արծաթ, պղինձ, անագ, երկաթ՝ զոր գիտեն գործել բնակիչքն. և գոհար ակռանք. յահիւնէ և զմուռսի և շաքիւլա և բեւբեղ։ — Զայս կղզի ի 1506 գտին Բորդոգալք, և յետ նոցա եկին Հոլանտացիք, այլ ոչ հաստատեցին բնակութիւն. բայց Գաղղիացիք ի 1665 ջնջէ կալան անգնաւոր և բնակեցան, ոչ ինչ խորչելով յանթաբերեսան օգոյն և յատելութենէն բնակչացն։

1646. Քան գառաւք են Թագաւորութենէն Մատակագարայ, և գլխաւոր ի նոսին ՀՈՎԱՀԱՆ ԵՐԿՒՐ, որոց մայրաքաղաք է ԴԱՒՄԱՐԻՈՑ ի բարձրաւանդակի, 12 աւուրց ձանապարհաւ ի խորս կղզւոյն, 25 կամ 40 հազար բնակչօք։

Ցարևմտեան ափունս կան ՍԵՒԱԼԻԱՒՀ գառաւք, յորս գործեցուած քաղաք նաւահանգիստ, ՄՈՒԶԱՆՏԱՀ որոյ 30.000 բնակիչք ասին լինել։ — Ցարևելեան ափունս գառաւք ԱՆԲԱՒՐԱՑ, ուր խորչեն ԱԳՈՒԱԻԻ և նաւահանգիստ ՇՈՒԶԵՏ ի ձեռս Գաղղիացւոց. ոչ ինչ շատ հեռի ասի կայ Ս. ՄԱՐԻԱՄ կղզի ի ձեռս նոցին Գաղղիացւոց. որոց ի ձեռս է և ՓՈՒԼ-ԲՈՒՆ քաղաք յերկրին ՊԵՏԻՄՄԱՐԱՒ. — ԴԱՒՓԱՒԻԼ մերձ ի սահմանս վերին քաղաքացն, առեալ աւերեցաւ ի Գաղղիացւոց ի 1829։ — ՆՏՕՒՐՈՒՆԴ քաղաք յերկրին ԱՆԴԱՀԻՄ։ — Ի հարաւակողման ափունս Ս. Լ-ուղ-ոյ գոգ ծովու և նաւահանգիստ ՏՈՒՆՈՒՑ, կալուած Գաղղիացւոց։

1647. Բ. ԳՕՄՈՐԵԱՆ ԿՂԶԻՔ լերք ի մէջս Մոզամպիքոյ անցեալ ի հիւսիսոյ. 50 կամ 60 փարսախաւ հեռի ի ցամաքէ. երկիր բարեբեր ընդ բարեխառն և զուարճալի կլիմայիւ, այլ սակաւ ջուրեակ վասն ասպատակութեան Սէգալացւոց՝ որ քանդէն զքաղաքն և գերի վարեն զբնակիչս նոցին։ Գլխաւոր ի կղզեաս կոչի ԳՕՄՈՐ 30.000 բնակչօք, այլքն՝ ՆՅՈՒՈՒՍ կամ ՅՈՒՈՒՆՆ, ՄՈՒՒԼԱ և ՄՈՑՈՂՈՒ. ՀՆՉուռաւան կայ փոքրիկ քաղաքն ՄՈՒՌԱՈՒՈ, ուր նստի սուլթանն, ունի բերդ և 3.000 բնակիչս։

1648. Գ. ՄԱՍԳԱՐԻՆԵԱՆ ԿՂԶԻՔ, յանուն Մադագարիաս լուսիանացի նաւապետի որ եգիտ զսոսա յամին 1505. կան յարեւելից Մատակագարայ, երբեմն էին ի ձեռս Գաղղիացւոց, որոց արդ ձեռք միայն ՊՈՒՐՈՒՈՍ կղզի 310 փարսախ քառակուսի. ունի սա լերինս բարձունս ի մէջերկրեայսն, յորս Ձեռնց կատար 9.000 ոտնաչափ բարձր է. ի հարաւոյ կողմանէ կայ հրաբուխ որ երբեք երբեք բորբոքեալ աւերածս ածէ. ի միջին լերինս կան անտառք և արեւբակունք. ափունք կղզւոյն միայն մշակեալ են և բերեն քաղիէ, ծխախոտ, մուշկ, չաքար, կինամոն, բամբակ, լեզակ, սպղպեղ, որիզ, մանր. գադաց. բայց չեն բաւական Ժողովրդեանն բերքս այսոքիւ. Ծովեզերքն քարուտք և ափաժայռ են, չեք անբոյթ նաւահանգիստ կամ նաւակայք ի նոսա. կիմայ բարի, այլ օդք մրրկածին. Ժողովուրդն հրզև 110.000, յորս 70.000 ստրուկք են. ի 1829 ածին անգր գաղթականս ի Չինաց։

ՍԵՒ ՏԵՒՒ կամ Ս. ԴՈՄԵՆԻՈՒ է մայրաքաղաքն բարեչէն ի հիւսիսակողմն կղզւոյն, 9.000 բնակչօք. Նաւակայք նորին չեն ապահով։

1649. Ցարևելից հիւսիսոյ կղզւոյս կայ ԳԱԼՂԱՈՒ կամ ՓՈՒՆԱՒՏԱ ԿՂԶԻ (Ile de France) որ այժմ ընդ իշխանութեամբ Անգղիոյ կոչի ՄՈՐԻՍ կամ Ս. ՄԱՒՐԻՏԻՈՍ. ունի հրաբուխս շիջեալս, ափունքն ապառաժս ժռաքս են, այլ ի միջակին ամբառնայ բարձրաւանդակ լերինն որոյ բարձրութիւն ժամանէ ց՛2.500 ոտնաչափ. գեաք և անտառք բազում են ի կղզւոջս, որ ըստ այլոց հանգամանաց նման է Պուրպոն կղզւոյ. փոքրիկք սակս լինին ի նմա, յորոց ի 1818 կործանեցաւ Բոր-Լուի քաղաք ի բուռն հողմոյ։ Ընդ Պուրպոնայ գառաւ կղզիս այս ի 1505, բայց Գաղղիացիք նաւ առաջինն ի 1715 բնակութիւն կացին անտանեաք, և յայնմ հետէ բարգաւաճեցաւ վայելչութիւն կղզւոյն. յամին 1814 առաւ Անգղիացւոց. որք զայսոցս խրթնաց ի կալկաթայ ածեն զայս։ Բնակիչք 180.000։ Գլխաւոր քաղաք ԲՈՐ-ԼՈՒԻ (Port-Louis) այս է՝ նաւահանգիստ լուգդվիկոսի կամ նաւահանգիստ հիւսիսի արևմտից. ի սմա է աթոռ կուսակալին, ունի նաւահանգիստ բարւոք և 26.000 բնակիչս։ — ԲՈՐ-ՊՈՒՐԴՈ, ունի նաւահանգիստ յաբեւելից հարաւոյ կղզւոյն. յայնկոյս նորին կայ ԲՈՐ-ՄԱՀԷ, և այլ քաղաքք մանուածք յայլևայլ կողմանս, ուր գնան վասն որոյ կրիայից։

1650. Ի սահմանս յայսոսիկ պատիճ պեղանդաւէն Սէն Բիեր վանեալ զարհածս պղոյս և վիրաւորեալ, և զաղէտալի նահանջութիւն նորին, որ Ձմեռատապեալ էակ եղև. և պատկեր եկեղեցւոյն Բամբակամասոյ՝ որ յիշատակի ի վիպասանութենէն՝ տեսցի ի միւս տոմ իջի։



Եկեղեցին Բամբլմուսայ ի Կղզւոյն Գաղղիոյ

1651։ Դ։ ԱՄԻՐԱՆԴ և ՍԻՇԷԼ, կամ ստուգագոյն ևս ՍԷՇԷԼ (Seychelles)։ — կղզիք ի հիւսիսի Մատակասգարայ. առաջինքն անբնակք են, իսկ ի Սէշէլեանս որ են Թուով 12 ընդ Ձեւամբ Անգղիացւոց, են 7,000 բնակիչք. գլխաւոր կղզին կոչի ՄԱՀ՝ լեռնային և անտառային, ուրէ նաւահանգիստ բարւոք, ուր գան կրեայք մեծամեծք։ Ի 1780 ամէ և այսր սկսան մշակել անդ զընդոյզ մշկոյ և զմեխակ։

Ընդ կղզիս Ափրիկեայ դասին և որք ի հարաւային Ովկիանոս անբնակ կղզիքն ԱՄՍՏԵՐԴԱՄ և Ս։ ՊՕԼՈՍ, յորս գան միայն ոչսորդք կիսոց։ — Իսկ ՍՈՓՈՐԱ կղզի որ հուպ ի գլուխն Կարտաֆուէ և ստորև Ծոցոյն, մարզ է խմային Մշկադայ, վասն որոյ և մարթէ ընդ Արաբիոյ գրել զնա։



Իշխան Աշանդայց

(թխ. 1603)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՔ ԱՓՐԻԿԵԱՅ

1652. Մ՝եսարեմ կամ Մեծքայիմ և փուշ՝ որդիք Քանաց որդւոց Նոյի սերմանեցին զերկրագործ Ափրիկեայ։ առաջինն Լեգիպտոս՝ որ ցարդ կրէ զնորին անուն՝ Մըզր կոչէլով, և ի Նաւպիա և Աբեթովպիա և ի հիւսիսային աշխարհս. իսկ երկրորդն յարևմտակողմն և ի միջնաշխարհս. յորոյ սերնդոյ հաւանօրէն ծագեալեցան և ի հարաւային կողմանս աշխարհին. իսկ ի մերեւմնեանց՝ Թուխ Թէ արևէլեան բնակիչք ոմանք։ Բայց Եգիպտացիք միայն քաղաքական օրինօք անուանի եղեն ի հնումն, ընդ նոսին և Եթովպացիք, և երրորդ՝ կաբեդոնացիք եկեալ Լաւից։ Եգիպտացիք անհեգեգ առասպել մեծ աղօտացուին զսկիզբն պատմութեան իւրեանց, դիս և դիւցազունս կարգեալ նահապետս Թագաւորաց իւրեանց, և ապա մարգս. որոց առաջին հաւատին Ա՛հնէս աշխարհալէն և օրէնսդիր, 25 դարուբք նախ քան զՔրիստոս կեցեալ. և այլք բազումք, որոյ և ընծայեն չնուազս քաղաքաց և տաճարաց. բայց մինչև ց՝3,000 ամն նախաքրիստոսեան ամբողջ տասնդութեան հետս գտանիլ չեգիպտական վէպս. Թէպէտ և այն առանց երկայնութեան է, զի Եգիպտացիք հնագոյն կամ մի՛ի հնագոյն ազգաց երկրի կացին և չիշատակարանս հինս քան դյոգունց կամ զբնաւից Թոզին կանգուն. մինչև ոմանց զըզրգոնեան սահմանութ չեա ջրհեղեղին կարծել կամաւ, բայց բան այլոց ոչքննահեց կրնբագրիչք են, իբրև 12–18 դարուբ յառաջ քան զՔրիստոս։

1683. Ի Գիւս սուրբս առ Աբրահամաւ՝ սուղ ինչ պակաս 2,000 ամաբ նախ քան զՔրիստոս, չիշատակին Թագաւորք Եգիպտոսի Փարաւոն անուն, որ է մակդիր չքոյ և նշանակէ Արեգակն կամ արեգնաքան. զայնս ժամանակաւ Թուխ կանդնեալ Մեհիկաց մեծի քաղաքի. ուր հաւանելի է Թէ Յովսէփ Թոռնորդի Աբրահամայ՝ երկրորդ եկաց փարաւոնի 1,700 ամաբ նախ քան զՔրիստոս. և էին առքս ի կարգէ ԺԸ հարցասութեան Թագաւորաց աշխարհին. զի ի Մենեսայ ց՝1900 ամ նախաքր. համարին 17 հարսաւորիւնս կամ ցեղս Թագաւորաց կացեալ Լեգիպտոս, և Թագաւորս աւելի քան զ՝300, յայս է Թէ և ժամանակիցս և ոչ յաջորդս միայն։ Ժ՝ն հարսաւորիւնն կոչեցելոց, օտարազանց ոմանց էր հովանաց հիւկսոս կոչեցելոց, որք բազում աւեր ածին աշխարհին։ Սկսասորիս յԺԹ հարսաւորիւնն 15 կամ 16 դարուբ նախ քան զՔրիստոս՝ առաջին աշխարհակալ մեծ եղև Լեգիպտացիս, և կալաւ զմեծ տան Ասիոյ. այլ ոչ նա և ոչ որք ի յաջորդացն արքաւնին Լաւիս՝ պահեցին ընդ ձեռամբ զաշխարհս՝ յորոց վերայ բռնացան։ Ոչ ինչ մեծ կամ նշանաւոր լիշատակի լեա Սեսոսորիս Լեգիպտոս ցիչ դար նախ քան զՔրիստոս։

Ցայն ժամանակս Թուխ և Եթովպացոց Թագաւորս ունէլ առանձնակս. այլ ոչ է յայտ Թէ Ջարեհ որ ի Սուբը Գիւս սէզի լեա Սողոմոնի էգէ սասպ Եթովպիոց ասաի. ըստ աւանդութեան բնիկց երկրին՝ առաջին Թագաւոր եկաց անդ Մենիլիսեք որդի Սողոմոնի ի Սաբայ սիկնոջէ։ — Ա՛ս Նոքօք բարգաւաճեր և Թագաւորութիւն Մերոյեայ՝ որ է այժմեանս Շէնսի ի Նաւպա. զոր և ոմանք երկրագործն համարին և գայեակ տրահանգաց Եգիպտացոց. անդ պատ ասն մեծ ընդունէր Ամմոն աստուած, և քուրքն Նորա տեաղք էին երկրին. Թագաւորութիւն Մերոյեայ Թուխ պայծառացեալ յայժ յոսի գարուբ նախ քան զՔրիստոս. իսկ յետ հինգ գարուց՝ բռնաւորի ուրուսին ազգաս արարեալ զքաշանայսն՝ նուաղեր զաշխարհն։ Աւերակք հոյակապ չինուածոց Մերոյեայ գինն ցարգ յանապատացեալ աշխարհին ի զարմանս հետաքնին մարդկան. ուր երկու և երեք տաղար ամբ յառաջ կարասանք վաճառականաց գային Լեգիպտոսէ և ի Լիբիոյ և ի Կաբեդոնէ։

1654. Կաբեդոն՝ ասիական գաղթական՝ հատատեցաւ Լիբիոյ ի գաւառին Դուննազոյ, 872 ամբ յառաջ քան զՔրիստոս՝ ի Դիդոնէ կամ Դիդեսայ քեռէ պիգմալիոն արքայի Տիւրացոց, յորմէ խոյս տուեալ՝ կառոյց ատ գաւանն Պիրսա, և զնովաւ զմեծ քաղաքն կաբեդոն կամ կարթագինէ. որոյ բնակիչք Տարտարեացիք զանձնեան ընդ ձեռամբ ունէլով ընդ կաբեդոնի և զՈւտիկէ և զՏուբնես (Դուննազ) քաղաքս, ընդ սահման՝ ուր Լիպոսիս քաղաք, և ընդ Տարաբ՝ ուր Փոքր Լեպտիս և Թապսոս. այլ և յեզերս հիւսիսոյ Ափրիկեայ հաստատեցին բնակ կոլոնիաս. և ապա և յարևմտեան ափունս առաջ Նորգոնեացիք Ումնոի, վեց գարուբ նախ քան զՔրիստոս։ Վաճառականաբերութեամբ հետամուտք՝ ետուն զանձինս ի նաւարկութիւն, և ոչ միայն յարևմտեան փիւնիկեացոց և փ. Ասիոյ գեզերին, այլ միջտանիք լեալ ի Մինդերրականն՝ հատատեցին գաղթականս ի Սարդինիա, Կորսիկա, Սիկիլիա, Մալգա և ի Պալեարեան կղզիս Սպանիոյ։

1655. Գեօգեհերդ գարուբ նախ քան զՔրիստոս՝ Եգիպտոս խոովեցաբ քաղաքական պատերազմաբ, մինչև երկոտասան իշխանաց միաբանեալ տիրեցին նմին (671–656 ամ՝), և ապա փամմետիկոս միապետեալ աշխարհին և եգ զամոռ իւր ի Սայիս։ Յայնմհետ նորա նեբասով և այլք՝ մարտ ետուն ընդ Թագաւորս Բաբելացւոց՝ որք տերեին յայնժամ Ասիոյ, և մեծ յաղթեցան առ յետնոյն Թագաւորէ Գուգեայ. վասն որոյ և մեծ հատուած հրեից հանդերձ Երեմիա մարգարեիւ գնաց Լեգիպտոս՝ յառաձան երբասաղէմ։ Իսկ ի միւսում գարուբ իբրև պարսք բարձին զինուեալքն Լեգիպտոսի մեկնեան և Լեգիպտոս առաջնորդութեամբ Կամբիւսեայ որբայ Կիւրոսի, և բարձին զերկիր պատերազմեան Թագաւորութիւն Եգիպտոսի (525 ն. Քրիստոս)։ Նա ինքն կամբիւս ապաստակ սիրեաց և յաշխարհն եթովպացոց, բայց միայ մասին եւեձ նորուն յաջողեցաւ տիրել։ Ա՛նուհետև Եգիպտոս զամս երկերիւր՝ մերթ ընդ պարսից լծով կայր և մերթ ապստամբեալ՝ բնիկ Թագաւորօքն

տնտեսութ, մինչև Աղեքսանդրի Մեծի բարձեալ զԱրաբսից բանակալուածութիւն՝ ընդ ձեռամբ արաբ և ղեգիպտոս (332 Ն. Քրիստոս)։ և հինն արկ հռչակապանծ քաղաքին Աղեքսանդրիոյ, զոր պայծառացուցին պըտղութեան Թագաւորք՝ գարս երեք։ յետ որոյ Հռոմայեցիք մեծացան յԵգիպտոս, զառաջինն իբրև խաղաղաւորք գժաւելոց պայազատացն, և ապա իբրև տեառք, մինչև Օգոստեայ կայսեր բառնալ զԹագաւորութիւնն Կղեոպատերայ յետոյ Թագուհւոյ Եգիպտոսի (31 Ն. Քրիստոս)։

1656. ԵՒս Պողոսեան Թագաւորք՝ որք ի ժամանակի անդ բարգաւաճագործք քան զամենայն պետութիւնս դասեցին յինքեանս իմիաստասիրականս, և զանուանի մտաճնագարանն Աղեքսանդրիոյ կանգնեցին և զնիգիրս յերբայական լեզուէ՝ հառն յեղուլ ի հելլենական, պայծառանայր և կարգեցան Հռոմայեցիքն վառնառականութեան և զօրութեամբ ի ծովս. այլ շարժէր զնաւատն հզօրագունի պետութեան ազատի, զՀռովմական ընկերշաւութեանն. և երկոյն ի մարտ գրգռեալ ընդ նմա գերազանչակ պատերազմսն (264–241 Ն. Քրիստոս. 218–201 և 150–146), յորս յերկրորդում նուագին՝ Աննիբալ Հարտաագրդին զօրավարաց՝ արշաւելոյս սպառազուսս կորստեան սպառնայր Հռոմիոյ, երկոյս ևս տեղի տայր հակառակորդին, և յերրորդումն՝ անկանէր մեծն Կարքեդոն ի բռնէն Հռովմայեցւոց (146 Ն. Քրիստոս) և պատուհաս 17 յաւուր և յաւեր մատեր, և վաճառէին 70 բերս բնակչաց նորա. և երկիր նոցա մնոր կայր Հռովմական պետութեանն՝ Ափրիկեան գաւառ կոչելով։

Ի յետին գարս Կարքեդոնացւոց հարստութեան և յետ նոցա հաստատեալ կայնի ի հիւսիսի Ափրիկեայ Թագաւորութիւնք երկու մանուկք, Նումիդացւոց՝ յարևելակողմն Աղճերեայց և ի հարաւակոյս Դուռնեզաց, և Մաւրիտանացւոց՝ յարմատակողմն Աղճերեայ և ի հիւսիսի Մարդոյ. որք զնոյն զկարքեդոնի կատարած ընկալան՝ նուաճեալք ի Հռովմայեցւոց։ Ջնոցն բազդ ընկալաւ և կիւրեհնէ Թագաւորութիւն միոքս, յարևելակողմն Դարատպղոսայ, որ պայծառացնայր Հօթին գարուբք յառաջ քան զՔրիստոս, և յ'97 ամի (Ն. Քրիստոս) մարդ կնոց Հռովմայ. որ մի բան միոջէ բարձեալ զիշխանութիւն ափրիկեան պայազատացն՝ կալաւ զՀռոմերէն հիւսիսակողմն նորին՝ ի կրճեն Սիւրէայ ցՄաղրագաման, և հաստատեաց կողմնակալս ի գաւառս գաւառս, որոյք քաղաքավարեր աշխարհն ընդ ինքնակալքն մինչև մերձ ի կէս Ե դարս. և յայնմ ժամանակի պայծառանայր Ձեմարանն Աղեքսանդրիոյ և վարդապետութիւն նորոց Պղատոնականաց, և քրիստոնէից հարց։

1657. Ցամին 429 գնեմերկոս արքայ Վանդալց՝ եկեալ ի Սպանիոյ՝ կալաւ զԲարբարոսաց աշխարհս և հաստատեաց պետութիւն, որ տեւեաց գար մի, և բարձաւ ի Բելիսարիոսէ զրկաւորէ արեւելեան կայսերայ (533 յետ Քրիստոսի), որք ժիրեցին գարձեալ Ափրիկեայ՝ գար մի ոչ ևս։ Եւ ապա մնին Աբրաթայիք ԷԳիպտոսս (636), և յամս քան նուաճեցին զամենայն Ափրիկէ՝ զոր երբեմն կալեալ էր Հռովմայեցւոց. և յառաջ ևս անցեալ սփռեցան ընդ հիւսիս. բայց նզնէին ջնջեցին զյուսեական յիշատակս, ընդ որս և զմատենադարանն Աղեքսանդրիոյ, և ծաւալեցին զմահմետական օրէնս և զԱրաբացւոց բարս և լեզուս։ Ձսկիպտոս կառավարէր տեղապահ խալիֆային Պաղտատայ, որ նստեր ի Գահիրէ՝ զոր գիտդադ կոչէին Ալբաթայիք, զԼարբարոսաց աշխարհ՝ միւս տեղապահ՝ որ ի Քայիրուան նստեր, ի հարաւոյ Դուռնեզայ, և բարդաւաճէր աշխարհն այն յոյժ յոյժ, որպէս և ասերակք քաղաքացոյն վկայք կան։ Իսկ ի տկարանալ զօրութեան ամիրապետացն Պաղտատայ՝ ի կէս Թ դարու, կողմնակալք Բարբարոսաց և Եգիպտոսի՝ ազատ իշխանք եղեն. յատաջնումն հաստատեցան Թագաւորութիւնք, յորս հզօրագոյն ի Ֆէս. և յերկրորդումն տիրեցին մի ըստ միոջէ տոհմիք Դաբլուհեան, Ֆաթիմեան, Ալձհիւթեան, և յետ նոցա Մէհդիւթեաց, որք կային և առ հարստութեամբ Օսմանեանց։

1658. Օսմանեանք ի սկզբան ԺԲ դարու ձեռն արկին յԵգիպտոս, և տակաւ ի Բարբարոսաց աշխարհ, բաց ի Մարդոյ, որ ազատ մնաց սեփական Թագաւորութեամբ։ Նուաճեցան և Եթովպիա, որ վարէր բնիկ պայազատաց հնոյ Թագաւորութեան ի վազ ժամանակաց հետէ, ընկալեալ և զքրիստոնէութիւն ի Գ դարու. բայց բնիկն Եթովպիա վայելէրազ միշտ յազատութեան. ի Զ դարու (822) ԷՂեսեան կամ Եղեսացան Թագաւոր Եթովպացւոց եբարձ զիշխանութիւն Քամբրեանց յԱրաբիա. ի ԺՏ (960) Էզտա Թագուհի եբարձ զանհնոյն Թագաւորութիւնս Եթովպիոյ և միապետ կացոյց զորդի իւր ի Չագայեան տոհմէ, յորմէ էր և Լալիպալա Թագաւոր, որ էտ եկեղեցիս և մատուրնս յոլովս հաստատեալ յանձամս։ Իսկ յ'ԺԳ դարու պայծառացաւ հարցաւութիւն Սաղոմոնեան անուանեալ ազգայից, որք կոչէին զինքեանս Նեկուտ Սաթիոպիա, այսինքն է՝ Թագաւոր Թագաւորաց Եթովպիոյ, և զեկեղեցական իշխանութիւն ևս վարէին։ Ի Ժ.Ձ դարս Ծանոթացաւ Եւրոպացւոց աշխարհն Եթովպիոյ, բայց գեղագնութիւնք վաղ հասան. և աշխարհն գաղձալ յառաջին կրճս և սովորութիւնս միաց։ Այսպէս և հիւսիսային Ափրիկէ սեւաց միաց ընդ օրինօք Օսմանեանց. բայց միայն գաւառն Ձեզայիրայ անկաւ ի ձեռս գաղղիացւոց, որք և ոչ յառաջ քան զքազում ամս ընդարձակելին անդ զսահմանս իւրեանց։ — Ցեղս անցելոյ դարու պինաբարդ կալաւ զնոսն մի Եգիպտոսի, այլ Եթող ընդ հետ. միայն հնախրական հետաքննութիւնք խմասանոց զըրս ընդ իւր տարեալ էր՝ արշալոյսք եղեն ծանոթութեան զարմանալի շինուածոց և սրբագիր արձանաց Եգիպտոսի։ Ցետ նորա յայտ գարու՝ փոխոխութիւնս եմայծ յԵգիպտոս Մէհդիմեան Ալի փոխարքայ, որ և ազատարձակ յՕսմանեան գրանէն՝ մարթիւ ի ձեղ սակ զինքեանսն, և յերբորդական զըրութենն նուաճեալ հաշտեցաւ. և Թունս նորա ունի արդ զնաբջուքութիւն աշխարհին և զնաւոլոյ։

Այլ ինչ ինչ գէպք և ծանոթութիւնք աշխարհին Ափրիկեայ առանձինն տուրս, որպէս առանձինն ինչ անցք և աշխարհագրական ծանոթութիւնք

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԱՅ ԱՓՐԻԿԵԱՅ

1659. Որպէս և՛ տեղագրութիւնէ իսկ կողմանց Ափրիկեայ ծանուցաւ՝ աշխարհս այս ցարգ անծանօթ կայ ըստ մասանց մասանց, և ևս անծանօթագոյն՝ ի հնոյն էր, մինչև՛ կարգի առաւել առնուլ զայն. և ոչ միայն թէ աշխարհն, այլ և ծանօթագունին իսկ գեաոց՝ նիւղոսի ակունքն ընդ անգիտելիս համարեալ էին. ափունք ևեթ Միջերկրականին յայտնիք էին, և քաղաքական օրինօք վարեր անդ ժողովուրդն. իսկ ափունքն արևմտեայք և արևելեայք, և ամենայն հառաչանօք աշխարհին ի մեծէ անապատէն և ի վայր, բնաւին փակեալ ին կայր. բայց և սակս այնորիկ իսկ յորդորեր զՀեռաղաւռաքենէն բնաւքին մարգիան խնդրել բանալ զնաքոնեան. յոր սակս և անդամին ի վաղ ժամանակաց բազումք փորձեցին ճանապարհ բանալ ընդ անծանօթ երկիր, մերթ յաջողութեամբ և մերթ անյաջող եղեալ, մինչև ցմեր իսկ ժամանակս, յորում յաշխատին այսպիսի ուղևորութիւնք և տակաւ վերանայ ծածկոյթն Ափրիկեայ:

1660. Տիւրացիք և Կարթագինացիք առանց երկրաբանութեան ծանեան զաներս ինչ հիւսիսոյ և արեւելից Ափրիկեայ, այլ ոչ է յայտ ցոր վայր ժամանեցին կամ միջամուխ եղեն ընդ ցամաքն. կարծիս է բազում ի գիտից թէ և նաև Ոզոմանի գաշնակիցք Քիրամայ Տիւրացւոց՝ գային ի Սոփալա որ յարևելեայ ափունս Ափրիկեայ, այն է Սոպհալն Ս. Գրոց. Թէպէտ և ոմանք այլոյր սահմանեն զերկիրս զայս ոսկերերս:—Նեբաւոզ արքայ Եգիպտացւոց պատուիրեաց փիւնիկեցւոց նաւագնեն և պատեցին զամենայն Ափրիկեաւս, ի կարմիր ծովէ ընդ Հնդկայինն և ընդ Աղանդեանն նաւեսցեք՝ քերելով միշտ զափամբք և ելիւն ի Հերակլեան սրճանս, այսինքն է՛ ի Միջերկրական ընդ մէջ Ափրիկեայ և Սպանիոյ. բայց չէհաս մեզ սոյգ զինչ ի ցամաքի գոհն կամ ծանեան սոքա. բայ սմին օրինակի երկայնականք են և պատմագիր Հերոդոտեայ հետաքննութիւնք ինչ այլոց ոմանց. գարձեալ և Անտոնի Կաթրեգոնացոյ նաւագնութիւնքն զարևմտեայ ափամերձ Ափրիկեայ, ուր և հաստատեաց գաղղիական էրա, Թէպէտ և սոյգ է, այլ ոչ է յայտ՝ ուրն և աեղիքն, զի և ոչ մի յայտնուանցն զոր յիշէ նա՝ պատշաճին այժմու անուանց. ոմանք կարծեն թէ չէր նորա անգր քան զսիաննս Մաղքպայ ի վայր խաղացեալ, բայց բազմաց ընդդէմ նեղի է, թէ մերձ ի հասարակածն յառաջ խաղաց:

Մինչև ցժամանակս գաղղիացւոց ոչ ինչ նոր ծանուցաւ յԱփրիկէ. առ սոքօք փոքր մի լաւագոյն տառգիտական ծայրք հիւսիսային եղերայ աշխարհին, այլ հառաչանօքն համարեք անբնակ և մինչև ի հասարակածն ժամանել, և զզուշահետական իմն ձև ունել հիւսնակողմանն, որպէս է տեսանել ի տախտակս Ե. բառոսՓեներեայ: Ի վերջ կոյս Ա գարուն՝ սուզ ինչ ի ծանօթութիւն եկին արևելեայ ափունք Ափրիկեայ, որպէս է ուսանել ի Շրջանառութենէն Կարմիր ծովոն, որ զոմնում ժամանակաւ գրեալ իսկ է. և յԲոմ գարձ առաւել ևս ծանուցան մինչև ի Մոզամպիք և ի Տելկաոոյ, որպէս և գուշակէ ի Նկարագրութենէն Պտղոմէոսի. որ ստորագրէ և զնորին Լիբիա և քաղաքս բազումս ի նմա, անծանօթս մեզ. այլ Թուի Թէ այն ամենայն ի հիւսիսի մեծի անապատին էր և ոչ ի խորագոյնն Ափրիկէ. իսկ զարևմտեայ ափանց ամենեին անստոյգք են բանք նորա: Ցետ Պտղոմէոսի մինչև ի ժամանակս Արաբացւոց ասպատակութեան չէ գարուս, չյաւելաս ինչ նոր ծանօթութիւն զաշխարհէն:

1661. Սոքա ոչ միայն յափունս Միջերկրականին հաստատեցին տեղութիւնս բարգաւաճս, այլ և ի խորս Սահրայ անապատին, ուր և յարգ կան սերունդք նոցա, փոլղահք կամ Ֆելլղահս ձայնեալք. գլխաւոր քաղաք նոցա և չհաստատ էր կանս կամ Ղանս, այժմեանս Խանդ կամ Ղանդ, որ լցեալ էր գանձուք ոսկւոյ, զոր հանէին ի վանկարայ գաւառէ որ ի հարաւոյ կուսէ առ վտակաք Նիւղոսի. անտի ընդ արևելս սփռեալք հաստատեալք էին ի Գոնդու և Տիխամ. և յայնմ կուսէ ի Սաքքարու զոր Դաքքոր կամ Դոդոբոր կոչէին, որպէս և յարգ լսի անունք. բայց արևմտեանն Ափրիկէ չէր քաջ ծանուցեալ և Արաբացւոց իսկ: Ցետ բաղում գարուց Լէոն ոմն Սպանիացի մահմետական եաս ծանօթս ջաշխարհէն, և եգիտ զԻսիդորեան նախնչան և հզորագոյն քաղաքաց կողմանցն այնոցիկ, և յարևմտեայսն զՏինէ չհաստատ մեծ, զոր նա կինէա կամ կինոա կոչէ:

Ի ԺԵ գարս սկսան ծովայնք խուզարկութիւնք Ափրիկեայ. և Բորդուգալք զառաջինն գոհն և ծանուցին նորանոր ափունս և գաւառս. մինչև ի 1497 զգերասիդակ գլուխն Բարօղ Ցուսոյ ի ձեռն Վասգոյ ասկամայ, որով ճանապարհ նոր ի Հնդիկս բացին: Նոքա սկսան խաղալ և ՀԷջերկրեայս ի խնդիր Թագաւորութեան անուանեալոյն Ցովհաննու երկցու, զորմէ ի վաղնջուց ոմանց ճանապարհորդաց լսեալ էին Թէ բնակէ ի խորս աշխարհին և քրիստոնեայ է կրօնիւք. և էր նա Թագաւորն Եթովպիոյ, այլ ոչ գիտէին նոքա: Ժամանեցին մինչև ի Դիմ պուգրու և ի Ճէննէ. և յարիմասկոմէ ի Կամխիս և ի Կաֆիխս, որպէս յետոյ գաղղիացիք և Անգղիացիք գոհն անդ ազգս որ խոսկին զլեզու նոցա. հաստատեցին գաղթականս և ՀԱիուէնս ոսկւոյ և ԱՀԵմինս և ի բերան Նիլիբոյ զոր նոքա Ցօրմոզ կոչեցին, և և ի Գոնկոյ, ուր և յարգ կան: Իսկ ընդ ծով քերեալք զգլխով Բարօղ Ցուսոյ պատեցին զամենայն արևելեայ ափամերձ և անցին ընդ Կարմիր ծով գնալ ի Հնդիկս: Գալիլէամ ոմն որ առաջին առաքեցաւ այսր ի Թագաւորէն Բորդուգալաց, ի գաւչին իւրում եմուտ ԱեԹովպիա, և ծանոյց Թագաւորին, որ և առաքեաց անդր քարոզիչս և ընկալաւ դեսպան ի Թագաւորէն Եթովպացւոց զոմն Հայազ

գէ, զի ի վաղ ժամանակաց գաղթական Հայոց կամ եկեք վաճառականք գտանիէին Յեթովպիա, որք և յաւգուտ[թ]իւնս և յեկեղեցական բարեր աշխատանս ելանէին. բայց Խորհրդաբեր ոչ ետուն տեղդ ծանո[թ]ուի[թ]իւն զանխարէն, թէպէտ և շատ ինչ գրեցին զանմանէ:

1662. Լուեալ Անգղիացւոց եթէ Դիմոդէքդոս անկեալ է ի ձեռս ինքնակալին Մարոգայ յելս ԺԶ դարու, առաքեցին ի սկիզբն ԺԷ դարու Նաւս ընդ Նիկէր՝ գնալ ի շահաստան անդր. այլ ոչ յաջողեցան, և երկիցս և երիցս փորձեալ քան: Ի միւսում դարու գարձեալ եկին ի ներդիր ընթացից Նիկէրայ, և գարձեալ ոչ յաջողեաց: Իսկ Գաղղիացիք ԺԻ դարու հաստատեցին բնակու[թ]իւն ի Սենեկամիսս, և հետազոտեցին զերկիրն զպատկառս և զլեռն Տիվպիէ, առին ծանո[թ]ս և զԻմիդուզքդուէ:

Յելս կուսն ԺԸ դարու Անգղիացիք հաստատեցին յամին 1788 զԱխրիկէան ընկերու[թ]իւն ի քննու[թ]իւն աշխարհին. յոր և առաւել փութացուցին զնաւս տեղի կուս[թ]իւնք զոր լուան ի վաճառականաց ոմանց Ափրիկեցւոց եկելոց ի Լոնտոն, զՊոռնու գաւառէ և զՆիկէր գետոյ և զձանապարհէ կարաւանի որ ի Դարքաղնասայ գնայր Ա[ք]ադէզ: Յամին 1795 Մունգկոյ Բարք եւլեալ ի Կամպիոյ՝ ճանապարհ արար մինչև ի Քաարդա, և ապա մինչև ի Սեկոյ Մայրաքաղաք Պամպարույ. Նա զառաջինն ետես և եա սոսոյգ տեղեկու[թ]իւն զնիկերայ. յետ տասն ամաց միւսանգամ ճանապարհ արար և անց ընդ Դիմդուզքդու, որպես կարծէ, այլ Թագաւորն Եուրեայ գեռասկիժ արար զնա: Բաղումք և այլք յառաջ և յետ Նորա՝ սպանան ի բարբարոսաց ի հետաքնու[թ]եան իւրեանց: Զհին Բարքայ Նշանաւոր Ճանապարհորդ եկաց Պըրքհարտ որ յամին 1809 եվ ի գահերեայ և քննեաց զնաւոսիա: Իսկ յամին 1816 Անգղիացիք առաքեցին զնաւապետն Ոըքբէյ Նաւել ընդ բերան Գոնկոյի ի ՄՀբերկրայս և սոսոգել Թէ եցէ նա Նոյն ընդ Նիկէրայ. ոչ յաջողեցաւ նա ի գործն. իսկ Գէմբել որ ընդ Նիկէր Նաւէր՝ առ ի Նոյն քննու[թ]իւն, եմուտ յերկիր Գուալհայ. յետ Նորա Կրէյ Նաւապետ՝ ժամանեաց ի Կալամ: Ի վերջ կուս 1822 ամի Անգղիացիքն Տըն[ք]էմ և Գլաբբէրդըն ընդ Ոսոգուրաս խաղացին ի ֆէզզան և յանապատն մեծ, անցեալ ընդ տոհմն Դուարիք և Դիպպուս, և մտին ի Քաշնէմ գաւառ Պոռնուայ և ապա յայլս ի գաւառաց Նորա, յետ պատեալ զարեւելեայ ափամբէ Ղադայ լճին մեծի. ապա և ի Մանդարա Թագաւորու[թ]իւնն՝ որ ի լեռնապատ սահմանի, և ի Լոկկոն՝ որ սարածանի զՀարի գետոյ: Գլաբբէրդըն եմուտ և ի Հուսաս և ի մեծ քաղաքն Սաքքաթու, եաես զՀուսաքրամս գետ, և գարձաւ ի Պոռնու, անցեալ ընդ Գասմիս քաղաք: Յերկրորդում ուղևորու[թ]եան իւրում չոգաւ նա ի Եարրպա, և քերեալ զԲոնկ լերանիք անց ընդ Քիամա և Վաւա քաղաքս, և եկն ի Պուսսա առ Նիկէր գետով. և անտի ընդ Նիբֆիչ և Զէկզկէկ գաւառս ի Սաքքաթու, յորմէ մեկալ ի լուսեալ ըզԿուպէր երկիր, գաւեցաւ յասպնջականին իւրմէ ի Թագաւորէն Սաքքաթուի և անսակրեալ մեռաւ: Դաւադ Նորա Լէնտըր գարձ արարեալ ԱՆգղիա և ժամանակեալ ի պետու[թ]ենէն՝ յամին 1830 գարձ արար ԱՓրիկէ ի Պուսսա, կամելով սոսոգել Թէ ուր յանգկցին խաղք Նիկէրայ. և անցեալ ընդ Թագաւոր[թ]իւն Եուրեայ, մեծաց ի գեան, յորում եգիա զԴոակոզի կղզի, և զիասպսա քաղաք յամին գերասոյն, և խոնարհագոյն զԼկկա քաղաք բարգաւաճ. ապա հանդկեալսա ի խառնուրդս Ցասոսայ գետոյ և այլոց ևս, և մերձ եղև ի Ծոյն Պենինայ, մինչև ի քաղաքն Քիրրէ, ուր գերի վարեցաւ ի բնակեալ տեղւոյն, և տուեալ փրկանս՝ յառաջ վարեաց զնաւարկու[թ]իւնն և էլ ի Ծով. և այսպէս սոսոգեաց զի գեան Նիկէր Թափի ի Ծով. ինքն գաւաճանեալ մեռաւ յերկրի անդ:

Իսկ ի հարաւակողմն Ափրիկեայ՝ Հոլանտացիք նախ ի կէս ԺԷ դարու հաստատեցին գաղթականս ի Գլուխն Բարեյ Ցուսոյ, և մերձ ի սահմանս Քարբոս անասպատ. բայց Անգղիացիք ի վերջ կուս ԺԸ դարու խաղացին ի խորս ի սահմանս Քաֆրայց և սորոսանանայց Օդդենդացւոց. յամին 1801 Դրըդգէր և Ըմբըրվիլ գտին զնեն գետն Օրանժ և մտին ի Լադգաբու քաղաք Պոսհուանաց. յորմէ և ի վեր կամելով խաղալ այլոց ոմանց Անգղիացւոց առաքելոց ի պետու[թ]ենէն՝ սպանան ի բնակչացն. բայց քաղցրակիր Գէմբել եմուտ ի խորս երկրին և եգիա քաղաքս բազմամարդս: Ցետ Նորա Թոմբըն և այլք մերձեցան ի Նագալ և ի վիճակս Փուլուհաց, ուր և կամեցան Հոլանտացիք գաղթական հաստատել, բայց չառք չարչար կոտորեցան ի նոցանէ: Յամին 1822–26 հաստատեան Ռաբն (Owen) հետազոտեաց զարևելեայ ափունս Ափրիկեայ, սոսկ ինչ և զարևմտեայս, և ի 1837 ձէյմս Ալեքսանդր ընդ հետս. արևմտից Գլխոյն քննեաց զՁամբասս երկիր: Ցետ Նոցա բազումք Ճանապարհ արարին զնովին կողմանք մինչև ցահուրս մեր, որպէս յամին 1849 Լիվինկսթըն և ընկերք իւր գտին զվկայի լիճ, և յետ ամի Նոյն Ճանապարհորդ եգիա միւս եա լիճ, և հետևոյ Նորա, կըզ զիջք բնակչօվք, և գեա Դեռնճ որ Հարցրէ զերկոսին լիճսին: Այլ տակաւին բազում ընթացք գեռոց էև եւս են քաջ տեղագրելք, և ամենայն խորհրդն Ափրիկէ աչարշ անճանօթ է: Իսկ ի հետևոյին Ափրիկէ և յանապատին բազում ինչ տոսոգեցին Գաղղիացիքն Փուռնել, Ռընու, Գառէդ, և այլք:





Ա Ս Ի Ա

Բ Ն Ա Կ Ա Ն Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր

1663. Ընդարձակագոյն ի մասունս աշխարհի և նախապատիւ առաջին բնակութեամբ մարդկան և հրաշալի անցից՝ Ասիա, կոչեցեալ յանուանէ գառաւի միոյ ի Լիւդիա կամ Ժողովգեան ազգաբանեան և Թորգոմեան ցեղից, կայ ընդ 24° Լ. և 172° մա. երկ. և ընդ 1°–78° հիւս. լայն. ունէ լոյս տարածութիւն 2,200,000 քառակուսի փարսախաց. երկայնութիւն նորա յԱրեւելեան Սարէն որ առ Պէհրինգեա մինչև ի սարն Ռաս-Պաա յԱրաբիա հաշուի 8,820 մղոն, և լայնութիւն յիւրալայ մինչև ի Գամկոնճա գետ՝ 3,780 մղոն։ — Սահմանս ունի ի հիւսիսոյ կողմանէ զծովս Պոնտոսի, Կասպից, Զուառուցեալ ովկիանոս, և զերկրագնդական Ռուսաստան. յարեւելից կուսէ՝ զՊէհրինգ և զմեծն Ովկիան. ի հարաւոյ՝ զծովս Հնդից և զՀնդկական ովկիանոս. յարեւմտից՝ զՊապ-իւ-մանդեպ և զկարմիր ծով և զկիրճն Սիւէզայ՝ որով ընդ Աֆրիկիայ կայ, իսկ մերձկարմրականացն և Դարդանեան նեղուցն անջատի յԵրոպայ։

1664. Ծովակ. Կիրճք. Հրուանդանք. — Զորք ովկիանք պատին զԱսիա։ — Ա. Սահմանք հիւսիսային ովկեան, տարածեալ ընդ մէջ արեւելք. ափանց Կորդին Ջէմչեայ և ափանց կուսակալութեան Դոպոլըգեայ, և գործէ զմեծ ծովածոցն Գոբոյ և զծոցսն կամ զդոգն Օպ և Ենիսէյ. իսկ ի ծագս հիւսիսոյ գործէ զդոգն Թայմըրսկայա, Թագվեսկայա, Խաբարով, այլովք հանգերձ։

Բ. Ովկեան կամ խաղաղական զարևելակողմանէ պատեալ գործէ միջածովս, որպէս պէհրինգ ընդ մէջ Քամչադեայ, Ափեռգեանց և հիւսիսային ծայրի Ամերիկեայ. Դարբասկի կամ Օխոտսկ ծով ընդ մէջ ըից Ամերիկեայ. Ճապոնեայ ծով ընդ մէջ Քամչադեայ, Օխոդսքայ, Գուրիլեանց և Խասղ. Արևելեան ծով կամ Թաղիմայ ընդ մէջ Գորէայ, Մանջուքայ, Ձինաց և հարաւային ծայրից ճաբոնայ. Մանի մի ծովակս Դեղին անուանի ծով կամ Հոնի. Ձինաց ծով ընդ մէջ Ձինաց և գաւառաց այնր կողմանն գանգիսի, և ունի զծոցս Թանկինայ և Սիամայ մանուանբք հանգերձ. ծովք Մալաքեայ ընդ մէջ կղզեաց միջածովք ի մերձկրկեանս հասարի։

Գ. Հնդկեայն ովկեան ընդ մէջ Աֆրիկեայ, Ասիոյ և Ովկիանիոյ, ունի զծոցն պենկալայ ընդ մէջ Հնդկաստանի և անդրագանգիսեան կողմանց, և զծոցն Էօմանայ ընդ մէջ Արաբիոյ, Պարսից և Հնդկայ. և ի մեջ

յեր, և ի հիւս. կուզերագայ կան ծոցք փոքունք Ա-ռաջայ և Ա-բ-ւոյ. իսկ ի մէջ Արաբիոյ և Պարսից Ծո-ր Պ-ռ-ւն, և յարևմտակողմն ընդ մէջ Արաբիոյ և Ա-փրիկեայ՝ Ծո-ր Ա-բ-ւիոյ որ և Կարմիր Ծով. են և ի պինդ գոգք կղզին, Մ-ւ-ք-ա-ն ի բերան Սալսուե-նայ և պնդ-ն-ա առ Մ-կ-նայ։

Դ. Աշխարհագրական ովկիանոս գործէ զԱիլ-ք-ն-ր-կրա-կան յատուկ որ և Եւրոպայ վիճակի. իսկ ի մէջ Ասիոյ փոքու և Ասորւոց երկրի գործէ զԱղէ-ա-ն-դր-ի-ոյ Ծոց. ուրաքոր են և այլ Ծոցք մանուիք. որ-պէս Ս-ք-ա-ն, Մ-ֆ-ր, Ջ-ր-ա-ն-ի, և այլն. իսկ Մար-մարա և Սեա Ծով յորինին յատկական կոչման Ծոցս և գոգս։

1665. Կիրճք անուանիք են, Պ-գ-ի-ա-Մ-ա-ֆ-ա ընդ մէջ Լ-ա-ճ-ի-ոյ և Կարմիր Ծովու. Ո-ր-մս կամ Հ-ր-մ-ւզ ընդ մէջ Լ-ա-ճ-ի-ոյ և Պարսկային Ծոցոյ. Մ-ն-ա-ր ընդ մէջ Սկ-յ-ա-ն-ոյ և Հնդկական ցամաքակղզւոյ. Մ-ա-ֆ-ֆ-ս ընդ մէջ Մալագդայ և Սումադրայ, և Սի-ն-ի-ոյ. Հ-ա-ն-ի ընդ մէջ Հայնան կղզւոյ և Գանդ-նայ. Ջ-ա-ց-գ Փ-ր-ն-ց-ոյ ընդ մէջ Փորտուգ-ի կղզւոյ և Ձինաց. Ռ-ր-ի-ա ընդ մէջ Ճաբոնայ և Քորէայ. Ծ-ա-ի-ր կամ Ս-ա-ի-ր ընդ մէջ Կ-ի-ֆ-ն-ոյ և Ե-ա-ոյ. Լ-ր-ի-ա-ն ընդ մէջ Ե-ա-ոյ և Դարաբայի կղզւոյ. Ա-ն-ի Թ-ա-ի-ա-ոյ ընդ մէջ Դարաբայեայ և Մանչուրաց. Պ-կ-ր-ի-ոյ որ կայ անջրպետ ընդ Ասիա և ընդ Ամերիկա։

1666. Հրուանդանք բաղում են ի ծովեզերս Ա-սիոյ. Ի Սառուցեալն ովկիանոս, Օ-ն-ի-ն, Թ-ա-ն-ա-ի, Ս-ե-ր-ա-ն-ի-ն-ի որ և Հ-ա-ն-ա-յին Ս-ր, Ս-ի-ա-Ն-ա՝ Հեպարուայ ի մեծն Ովկիանոս, Ա-ր-ի-ե-ն-ն գլուխ ի Պ-ն-ր-կին. Օ-ի-ա-ն ծայր Ռամչեադրոյ ընդ հարաւ, Ա-ա-ի-ա-ն ի Ռուսկինէն, Փ-ա-ա-ն ոչ ինչ կարի հեռի յառաջնոյն. Դ-ա-ն-ի-Պ-ա-ա-ս ի Մալագդա, և այլն. Մ-ա-ա-ր-ի Արաբիա ի մեծս պարսկային ծոցոյն, Ռա-ա-ե-ս-ի-ա-ե ի ծոգս ելից Արաբիոյ. Փ-ր-ի-ա ի հարաւոյ նորա. Ռ-ա-գ-ա-ի կարմիր ծովու. ի Միջերկրականէն Ք-ե-ի-ա-ն-ա ի հարաւային ափունս փոքուն Ասիոյ. Պ-գ-ա յարևմտեան ծոգս Ասիոյ Արշիպելագոսի. Ք-ե-ի-ն ի Ի-ն-ի ի մեծս ծովու. ի հիւսիսի Փ-ն-ոյ։

1667. ԿՂԶԻՔ են Թ-ր-Ա-կ-Զ-ի-ք. — Ա-բ-ա-ք-ա ոմանցն ցամաքակղզի մեծ է Ա-ա-ա, և յետ նո-ա Տ-ե-ն, Մ-ա-ֆ-ա, Ռ-ր-ե, Ռ-ա-ի-ա-ա, Զ-ա-ւ և Ս-ա-ի-ա-ա և Ռ-ա-ա ի Սիպերիա. յարևմտակողմն Ա-սիոյ՝ Փ-ա Ա-ա, և ի հարաւային ծոգս Ձինաց՝ Լ-ր-ի-ա. իսկ կղզիք, յովկիանն հիւսիսոյ՝ Պ-ե-ր-ի, Խ-ն-ա-ա-ն-ի, Ռ-ր-ե-ի և Ն-ր Սիպերիա, Ա-ր-ա-ի Հանգիստ բերանոյն Ռ-ի-մ-ա, յովկիանոս մեծի՝ Ս-Լ-ր-ի-ա ի Պ-ն-ր-կին, Ռ-ր-ի-ա-ն-ե, Ե-ա-ա, Դ-ա-ա-ա-ի, Ն-ի-ա, Ռ-ի-ա-ա, Սի-ա-ի, Ռ-ր-ե-ն-ե պարք, Լ-ե-ա-ե-ն-ա, Փ-ր-ն-ա, Հ-ա-ն-ի, Ց-ա, Փ-ն-ո-ի, և այլն. յովկիան հնդկաց՝ Ա-ն-ի-ա-ր-ս, Մ-ե-ի, Ն-ի-ա-ա-ր, Ա-ա-ա-ն-ի, Ա-ա-ֆ-ա, Ս-ի-ա-ի, Մ-ա-ի-ի, Լ-ա-ֆ-ե-ի-ի, Ի Ծոցն Պարսից Ռ-ի-ի, Հ-ե-ր-ե-ա, Պ-ա-ի-ն-ի. Ի կարմիր ծովու՝ Փ-ե-ի, Ճ-ե-ն-ե, Գ-ա-ա-ա, Ռ-ա-ի կղզիք և այլն. Ի Մի-ջերկրականին՝ Կ-ի-ա-ա, Հ-ա-ա-ա, Ս-ա-ա, Ա-ր-ի-ե-ե-ա-ա, և այլն։

1668. Ե-ն-Ռ. — Բաղում և հզօր գետք են Ա-սիոյ այլ ոչ որպէս զԱմերիկոյ անարիք. և ոչ մի ի գլխաւոր գետոցս ընդհանուր ընդ արևմուտս, այլ ա-ն-ի-ն-ի ընդ արևելս, կամ ի հիւս. և ի հարաւ. ի սոցանէ Թարիին յովկիան հիւս. օդ՝ յոր խառնի և Իր-ի-ս. Ե-ե-ի-ն-ի վտակս ունի յով-ս-ի-ն և ջրեր Ռ-ի-ի, խառնի ի նա և Ա-ի-ա կամ Վ-ի-ն-ի Դ-ա-ի-ա-ա, Է-ն-ա՝ որ գնայ ընդ Սիպերիա։

Յովկիանոսն Մ-ե-ի ի Հնդկականն հասին՝ Ա-ա-ր կամ Ա-ի-ա-ն-ի, որոյ վտակք են Ա-ր-ա և Շ-ա-ա, Հ-ա-ն-ի-ա կամ Ռ-ա-ա Մ-ա-ի-ն, Ռ-ե-ի կամ Ն-ա-ի-ե-ի-ի՝ որոյ երեք հզօր Թիք են Ռ-ի-ն-ե-ի-ի, Ե-ա-ե-ի-ի և Մ-ի-ե-ի-ի. Մ-ա-ա-ա-ի, Ս-ա-ի և Խ-ա-ա-ա-ի ընկնին ի Դ-ի-ի-գ-ա. Գ-ա-ի և Պ-ա-ն-ա-ր-ա որ և Մ-ի-ն՝ միասին Թարին ի Ծով. Խ-ա կամ Սի-ա-ի որ Թարի ևս. Ե-ր-ա և Տ-ի-ր-ի որ համանուանապար Շ-ա-ի-ա-ա կոչին և ի Պարսկային Թարին Ծոց. Ա-ր, Եր-ա ի կաղբից Ծովէ, և այլք, զորոյ ուրոյն լցեին բանք գիրք։

1669. Լ-ճ-ք. — Ծ-ի կ-ա-ի-ն իբր 17,000 փարսանս քա. զառաջին տեղի ունի ի լճէն Ասիոյ և համբերն երկրի ընդարձակութեամբ և գիւտագործ-ւով քան զնաւս, և ընդունի զկուր Եփրատայ հանդերձ. Ա-ր-ւ 1,300 փարսախ քա. ի Մ-տ-ր-քաստանս և ընդունի զԽ-ի-ն-ն (Գ-ե-ն-ն, Ա-ք-ս-ս) և զԻ-ի-ն-ն. Դ-ե-ի-ա-ւ ի Թ-ա-ր-ք-ա-ա-ն. Լ-ր կամ Լ-ա-ն-ա և Պ-ա-ե-ի ի գ-ա-ա-ս հնագանդեալս Ձ-ե-նաց. Պ-ա-ա-ն-ա-ր, Ռ-ա-ա-ն-ա-ր ի Ձինս. Ն-ա-ն ի Դ-ի-ի-գ. Ջ-ե-ն-ի ի Ր-ա-ա-ի-ջ. Պ-ի-ե-ի-ե ի Պ-ա-ր-սս, անգ և Ո-ր-ի-ա. Վ-ն և Ս-ա ի Հայս. Մ-ե-ա-ի Ծ-ի ի Պաղեստին, բաղում և այլ մանր լիճք ի կողմանս յայսոսիկ. Պ-ա-ա-ի ի Ռուսիա մեծագոյն յեա Կ-ա-ի-ի և կաղբից, Դ-ա-ր ի Սամոյետս։

Ջրանցք ի Ձինս և ի Հնդկաստան միայն են նա-ա-ի-ի-ք, ի Ձինս Ե-ա-ա կամ Ա-ր-ի-ի Ջրանցք երկայնագոյն է քան զամենայն ջրանցս, զի է 200 փարսախ երկայն։

1670. Լ-ր-ի-ն-ի. Բ-Ա-Ր-Ե-Ի-Ա-Ն-Դ-Ա-Կ-ի. — Լ-ր-ի-ք Ասիոյ ի հասարակի ձգին ընդ արևելս և ընդ մեծաս, և յելից անտի ցամաքս Միջերկրականին՝ գրեամբք անանձնական մեծամեծ պարք են ընդանց, զորս մարթ է ստուգել յերբեքամանի պարս, սկսեալ յարևելից սահմանաց հիւսիսոյ։

Ա. Ա-ա-ա կամ Ս-ա-ա-ի-ի Լերինք, որ ի ծոցոյն Պ-ե-ր-ի-ն-ոյ ձգին ցծոցն Ո-ն-ա-ա-ի-ոյ. այլ բարձրագոյն կասաք ի նոսա ստորև է քան զ4,000 ոտս։

Բ. Ռ-ա-ի-ե-ա-ս-ի Լերինք յարևելից Ա-ա-ն-ոյ, յորս են հրաբուխ Լերինք բարձունք, և գերագոյնքն ի նոսա Ռ-ի-ի-ա-ա-ի 14,800 ոտն. Շ-ի-ի-ա-ի հրաբուխ իբրև 10,000 ոտն. Ա-ա-ա-ա հր. 8,000։

Գ. Ա-ա-ա-ի, որ պատէ զաղբերակամբք Իրդիզայ և Ե-ն-ի-ի-ա-յ, և զանազան անուամբ կոչի բան տեղեացդ, յարևելից կողման կոյս Դ-ա-ի-ա-ա. ընդ մէջ Լճին Պայքալայ և Ռ-ա-ր-ա-ր-ա-յ Ս-յ-ա-ն-ի, և անգր քան զայն՝ Վ-ե-ի-ն Ռ-ե-ն-ե։ իսկ ի հիւս. արևելից խառնի Լ-ե-ա-ն-ի-ա-ե-ն-ի Լերինս. բուն և մեծն Ա-ա-ի կայ առ Ա-ր-ա-ն-ոյ Լճաւ, իսկ Փոքուն ա-ն-ա-ն-ա-ի Ա-ա-ի ընդ ինչ սահմանաց Ձինաց և Ռուս-ա-ց. կատարք սոցա չեն սրածայրք որպէս զԱլ-

պէսայս · այլ հովտամէջ, և բարձրութիւն նոցա չանցնի զ12,000 ոտիւք · Պիէս-Իս բարձր է 10,500 ոտս · Դոգոմոգոյի է Թև Ազգայեաց ընդ ՀԷՍ-սահմն և Պալնաշ Լճաց ։

Դ · Թէսե-սան այսոքիսի է Երիսէրէնս, յաշխարհն Ձիւնաց ի միջասահմանի Ասիոյ, երկիք բարձրագագաթամբք նշանաւորս, որք կոչին Պիսոս-տոս (լեառն սուրբ), Սիս-ըսան (ձիւնապերիք) և փէլան (կապոյտ Լեառն)· ընդ արեւելս ձգի Թեհնան ի Պարթեւ և խոնարհ յանապատն Քոպի, և վերստին ամբառնայ առ Հոանիկոյիս և կոչի կասպր · Եև մի նորա ընդ արեւելս յատաքեալ ճառնի ի լերինս Քոհեաց և Մահ-տոց · Ասս-թաս միւս Թև նորա ընդ հիւսիսի, և պատ որ ի հիւսիսոյ ընդ հարաւ գնայ, և են ի յետ նուազն կատարք բարձունք 20,000 ոտս ։

Ե · Քու-հն-Լոն կամ Քու-է-Լոնի, որոյ մերձագոյն տան ի Պոլոր կոչի Յ-ոհ-Լիի (Մոխոյ կամ Կապոյտ Լեառն), ընդ միջ Ազգայեայ և Հիմալայեայ, գոն և ի պարուրս կատարք բարձունք գան ի 20,000 ոտնաչափ ։

Զ · Յարևմտից որոյս ամբառնայ Հինդոս-տ և ձգի Թև սորա մինչև ի Պարպասոսան · իսկ Օքս-ոս անցեալ ընդ Հոանիկոյդ տանի ի Բուն Ձին · Թև մի լերանցս տարածանի ի Դիսէդ, և այլք ի Սիամ և Ս.ԱՆոտ. բարձրագոյն կատար պարուս է ի Քա-պոլ 18,990 ոտք ։

Է · Հիմ-ալա, յորում են բարձրագոյնք լերանց երկրի ի գաւառս Հնդկաստանի, գերազանցեալքն Քին-Լինձինս, Կոսն-թան և Տաքսէրի է անցանեն զ25,000 ոտիւք · արևմտեան տան Հիմալայեայ կոչի Հինդոս և ձգեալ ընդ Քապուլ և Խորասան ժամանէ ի Պարս · բազում Թևք են սորա անջոք տարածեալք ի գաւառս Հնդկաց ։

Ը · Կ-վա լերինք ձգին ի հիւսիսի արևմտից Պարսից և անջնանեն զԱսիա յԵւրոպիոյ · բարձրագոյն կատար է ի Կովկասեան Էլբուրզ 17,384 ոտս ։

Թ · Հայոց լերինք, յարևմտից լերանց Պարսից կամ Իրանայ որ Թևք են հինաւբնհայ · և են անջրպետք կամ պարակիպք Կովկաս և Տորոս լերանց · բարձրագոյն կատար լերանցս է Աբուբաեան Մասիս, 16,254 ոտք ։

Ժ · Տաւրոս կամ Տորոս լերինք յարևմտից լերանց Հայոց, տարածեալք ի Փոքր Ասիա և յԱսորիս · յորս բարձրագոյն կատար է Էրճիէս (Արդիսս) ի Փ · Ասիա 12,200 ոտք ՍԱՒԹՔՈՒՐՈՍ կոչեցեալ Թևի · միւս ևս Թև կոչի ԼԷՐՈՆ · 8,800 ։

ԺԱ · Աբուդիս լերինք, են որ զծովեզերբս ձգին ՀՒՕ-ՍԻնայ ցՄոկասոր ասր, են որ ի ՄՀլերկրեայս տարածանին ի Ռհքան գլխոյ մինչև ի աւհմանս Մէքքէի, և են որ ի հիւսիսի Շամոյ կոչեցեալ · Սոդեր լեառն յԱրին բարձր է քան զ10,000 ոտս ։

ԺԲ · Հինդոս լերինք կամ Կոշ, լայնածաւալ հովիտք գանգնեն, յնդոսի և ՀԷՍինայ բաժանեն զտոս ի հիմալայանից · Աբեխենտ կոչի, որք ի հիւսիսոյ ձգին ընդ հարաւ · համարին արմաքս համարեն պարսն և դնան ի գաւթեայ մինչ ի գոմորին գլուխ · ըստ սոցանէ ձգին Ազոս լերինք ԱՀՄԻր · իսկ Կոշ Աբեխենտ տարածանին ի Սալեմ, գաւառագիրք, Պալակք մինչև ի Գրիչնս · ընդ միջ երկոցուն Թևոցս կան ՆէվէՀ լերինք · ընդ միջ Դաւգեայ և Կոտալ վերոյ գետոյ կան Պէյոր լերինք · որպէս և ընդ միջ Գանգիսի և ՀԷՍինայ՝ Վինդհ լերինք · մարթ է և զլերինս ՍԷյհնայ յոյս պատ գտանել ։

ԺԳ · Ո-ըսէնս լերինք, վիճակեալք և Եւրոպոյ · գլխաւոր Թև նոցա ի Քարա Գլխոյ ձգի մինչև յերկիր Խըրղըզոց · իսկ բնիկ Ուրալեանք գնացանին յորջորջմանէ ըստ տեղեաց տեղեաց, բարձրագոյնք են Վէրխոտուի Ո-ըսէ · են և կղզեաց Ասիոյ լերինք բարձունք քան զ10,000 ոտս ։

1672 · Ա յսքանեաք մեծագոյն պարուրք լերանց ընծայէ Ասիա և բարձրաւանդակս լայնանիստս և վերամբարձս, որպիսիք են Մողոլեանն 3–4,000 ոտք, Դիսիեէտանք 15,000, Պուխարայն 6,000 ոտք, Հայաստանեայք իբր 6,000 ոտք, Պարսպասիրեանն ի Թուրքաստան, Ասորւոցն, Տէքանայն 2,000 ոտք, և այլք ։

Հարթաւանիք նշանաւորք ոչ գոն յԱսիա, բայց միայն ի Քհանչան, և աննշանք ոմանք ի Հայաստանեայ լերինս · յոլովագոյն են են ի կղզիս Հաբանաց, և և ի Ռուսիաստան, և ի Հնդկաց կղզիս կայ Պուբէն տրապայտ լեառն ։

1672 · ԴԱՀՏՐ · — Ի մեծաձիգ գաշտս և հովիտս նշանաւորք են Կերէլ, Նէբու, Պուխ, Դիսէր, Հայ-Խանն, Կուսայինն և Մոհոյ · և յետ այսոցիկ Հընդկանց և Ձինաց, և կողմանց Եփրատայ · իսկ անապատք և կապճաւոք կարի յոյժ ընդարձակ տարած են Ասիա, ոչքայն իսկ տան հիւսիսային Ռուսիոյ և մեծ տան հարաւային և կիս Թուրքաստանի և Խըզղազ աւազուտ է, անդ են անապատքն Խիւ, Գոպ, Խաբէվ կամ Խիվա, որ յարևմից Ռքսոսի, Գոբոտ · և Գոբեզ-ոմ, որք յարևելից Արալայ · ի Հընդկաստան՝ Աձիր, ի Պարսկաստան՝ Աձի, Կշան և Մէշհեդ · Պոբ-նը-Շամ յԱսորիս, և քաջածանօք ազգացաքն Արաբիոյ ։

1673 · ԿԼԻՄԱՅ · — Բազմադիմի է կլիմայ Ասիոյ ըստ ընդարձակութեան աւհմանացն, և վասն բազում բարձրաւանդակացն՝ ոչ զոհագոյութիւն գտանի բարեխառնութիւն օդոյն ընդ աստղաբաշխական գծերսն · հիւսիսային մասին ցրտի է յոյժ, մինչև անգիի և գետոց ջամիս ասն պղտիալ ձեալ · հասառէ և գետոց ջամիս ասն պղտիալ ձեալ · հասրաւականի ջերմին է, ոսրիք և բարեխառն, և երկու յեղանակք միայն են օգոց անք · մարտայինն և անձ, մինչև ընդ միջ 30°–80° լայն · յասկս ցրտին բնակին · միջինն ընդ միջ 30°–80° լայն · յասկս ցրտին է և ջեր, այլ արևելակողմն բարեխառն, արևելեան գաւառք բարեխառն ունին կլիմայ, բայց հիւսիսակողմն ցրտին և ծովեզերք մերկածաւիք · արևմտակողմանցն քաղցրագոյն է կլիմայ, որպէս զնոսա-էին Եւրոպիոյ · ի հար · Ասիա կանոնաւոր յերկա նակք իջանեն տարաւիք անձրևաց ջամիսս ոչքայն, զգեսս յարուցանեն և զջրանցս ընձն · Ընդ արևմտից գարնիւք ի հանապատ Թիւնէ ջուրքն ի սկզբ՝ ապա կանին օգք, այլ ի բարձունս՝ առատ քան է կլիմայն ։

1674 · ԲԵՐՔ · — Ամենամեծ ի Ասիա յայգս ազգս բերոյ անշնչից և ընչաւորաց · Բազմ հարուստք Թէսկետ և ոչ քաջ հետաքրքրեալք յասիոյն կողմանս մինչև ի Ռուսիա · Ասիա ունի զանազան ազգս մարդկան, որոց ոմանք են ի ծայրագոյն աստիճանի կատարելութեան, և ոմանք ի ծայրագոյն աստիճանի անկման · Ասիա է ծնունդ ամենայն կրից և ամենայն ազգաց մարդկան

1992. Կոչի և Իւզպէքստան, և է մասն հնոյն Բակարիոյ և Սոգդիանիոյ, սահմանս ունելով ի Հ. զԽոքանտ. ՀԵ. զՌուսաստ. ի Հար. զԸռապօվ, և ի Մ. զԽիվա. մեծ մասն երկրին ասաղատ է, բայց հովիւք և ափունք Ամուրայ բարեբերք. վասն որոյ Արարացի աշխարհագիրք գրեալ կոչեն զերկիրն, այլ անճշակ կայ ի ձեռս Թափառական և վայրենի ժողովրդեան։

Ցիւն գաւառս բաժանի Պուխարա, որ են Պոխարա, Քարաքուլ, Ռեմինա, Միանքալ, Սըմբրղանա, Եուզղանք, Խուրչի, Տաշ-ի-ապ, Պալա։

ՍԱՄԱՐՂԱՆԴ կամ ՄԸԲՐՂԱՆԴ. Ձմերոյ է խաղնին, ի բարերեր հովոյն Օչհաֆչանայ. անուանի են գալրօք նորս և գերեզմանք հոյակապ արանց։ Լէնկթեմուր յամենայն քաղաքաց Աֆղ ղերս նուաճեաց՝ վարեալ գնաղտարս բնակեցոյց ի սմա, ընդ որս ասի տարեալ անդր և գնտիր ընտիր մատեանս ի Հայոց աշխարհէ և յայլոց կողմանց և ծածկեալ տաքսի, և որպէս ասի է ի նմա և Յուլարան հրաշալիք էն, և առագաստ ի Սիհոնայ։ Բնակիչքն Իւզպէքք և Տաճիկք և Խըրղըզք։

ԽՈՔԱՆԴ. Մայրաքաղաք, ունի ջրանցս ի հաղորդութիւն ընդ Սիհոնի, գործարանս բամբակի և մետաքսի։ Բն. 100,000. սահմանք նորին քաջ մշակեալք էն, բայց անփայտ։

ՄԱՐՂԱՆԴ և ԽՈՃԱՆԴ. Քաղաքք մեծաւեծք ի նմին նահանգի։

1993. Կոչի և ՖԵՐՂԱՆԱ և ՔՈՓԱՆԴ, ընդ մէջ անառատին Խըրղըզաց. Ձինաց Թուրքաստանի և Պուխարայ. լեռնային է և առագաստ ի Սիհոնայ։ Բնակիչքն Իւզպէքք և Տաճիկք և Խըրղըզք։

ԽՈՔԱՆԴ. Մայրաքաղաք, ունի ջրանցս ի հաղորդութիւն ընդ Սիհոնի, գործարանս բամբակի և մետաքսի։ Բն. 100,000. սահմանք նորին քաջ մշակեալք էն, բայց անփայտ։

ՄԱՐՂԱՆԴ և ԽՈՃԱՆԴ. Քաղաքք մեծաւեծք ի նմին նահանգի։

Գ. ԽԻՎԱ.

1994. Կոչի և ԽՈՐԵԶՄ (Դարալշիա) և ՕՐՂՈՒՃԱՀ. սահմանս ունի ի Հ. զԽըրղըզ և զԱրալ. ՀԵ. զԽաքաքիաք և զՊուխարա, ի Հար. զԱֆղանստան, ի Մ. զԱսկասպիականն. երկիրն առագաստ յԱքսոսէ՝ քաղ բարեբեր է. բնակիչքն՝ Իւզպէքք, Ուղուզք, Թիւրքմինք. գոյանին և Աֆղանք և Հրեայք և Տայք սակաւ, և Իուրաք գերեալք յԵլըզպկաբար ի կողմից սահմանաց. բայց զարգիս դաշինս խաղաղութեան եդեալ ասի խանին ընդ ինքնակալին Ռուսաց։

ԽԻՎԱ. Գլխաւոր քաղաք յայլ վտակի Ամուրայ. ունի պատուարս, դղեակ խանի, մզկիթս յոլովս, վաճառ գերեւակ, և 12,000 բնակիչք։

ՈՒՐՂԱՆՃ ՆՈՐ. վաճառաշատ և երեւելի քան զԽիվա ի հիւսիսոյ նորին։ Բն. 12,000։ — Ցարևմտակողմն յերկրին որ ընդ միջ Արալայ և կազթից Տոլօն՝ խոշորանգ բնակին ազատ թիւրքմինք։

Դ. ՔՈՒՆՏՈՒԶ

1995. Ի հարաւոյ արեւելից Պուխարայ, ի հովիտս Ոքսոսի և Քամայ ժամանդակի Քաւլուլ գետոյ, գաւառ և պետութիւն նոր. որոյ հան իշխէ և Պատախշան գաւառի, ուր բարձրաւանդակք են լերանց և Ամու գետ։ — Գլխաւոր քաղաք է ՔՈՒՆՏՈՒԶ, այլ փոքրիկ և սակաւամարդ։

ԽՈՒԼՈՒՄ, 10,000 բնակչօք։

ՊԱՏԱԽՇԱՆ կամ ՖԻԶԱԶԱՊԱՏ՝ այժմ կիսաւեր է։

Ե. ԽԸՐՂԸԶԻ

1996. Որ է անապատ խըրղըզ թաթարաց, սահմանս ունելով ի հ. Ալիսերիա. ՀԵ. վերդիվ և դշինս, ի հար. զնահանգս Պուխարայի, ի Մ. զկուրալ և զկասպիականն. որոյ տարածութիւն է առաւել քան զ60,000 վարսախ քառակուսի, երկայնութիւն իբրև 1,300 մղոն և լայնութիւն առաւել քան զհազար. Ուր նի զոսս Ազգայի լերանց և զՈրալոսաղոյ՝ որ է Թիան-շան Չինաց, և այլ բարձրաւանդակս և բըլուրս, յորս գտանին բուք, կապար, երկաթ, անագ և արծաթ սակաւ։ Բայ ի կաղիից և ՀԱրալայ ուր նի լիճս աղոս, զՊօտաշ, Խիւ, Ո-դաշան, Տէչէվէ, և այլն. և գետս զիւղիւ և զՍիր-դէրէա։ Կլիմայ աշխարհին ոչ է առողջաւուն, տապ և ցուրտ անհնարին լինին և երադ յաջորդեն զիրար. բոյսք պատուական ոսկաւք են ի խըրղըզ։ Բայց յանանոց ուղիղ ոչխար ընտիր և մեծ և շատ. զի իբրև միլիոն մի առաքեն ի վաճառս ամի ամի ի Ռուսք և ի Չին և ի Պուխարա. ընտիր են և այծք՝ նման Դիպեթեանց, և ուղտ կրնողունակ, և ձի մանր՝ այլ սակաւն։

Խըրղըզի Թուով առաւել քան զշ միլիոն, յերիս առնմն բաժանին, որպէս կանխաւ ասացաք, և ի 80 ժողովուրդս. այլ ամենեցուն մի բարբ և մի լեզու է, որ է Թուրքայ բարբառ։ Կոլովիք են մարմնով և բարեկազմք. շատք՝ խաշնարածք են և ջուաբնակք. կերակուր հասարակաց է միս և կաթն ոչխարի, և հաց կորեկեայ։ — Կրօնիւք մահմետականք են, և ոմանք կռապաշտք։

Վաչկատութիւն՝ առաջնորդական է նոցա, զի ընտրեն իւրեանց իշխանս առաջնորդս և ըստ կամի փոփոխեն։

ՀՆԴԿԱՍՏԱՆ

Տարաճոգբիւն 350,000 փարս. □. — Բնակիչք 210,000,000։

1997. ՅԱՅՍ անուն կոչի հատուածն հարաւային Ասիա, յերկուս Թերակղզիս զատեալ, անջրպետս ունելով զմեծ գետն Գանգէս, և որ ընդքաջ շուրջ կըզզէ. աշխարհ մեծ և ընդարձակ, սակաւածանօթ առ հինսն. քանզի և Ալէքսանդր ինքն Մեծն ոչ մեծացաւ ի խորս նորա. Լուսիանոսացիք նախ առաջին յաւարտ ԺԵ դարուս Ճանապարհ բացին վաճառականութեան ընդ Նա և ընդ Եւրոպէ. և յետ դիւտի Ամերիկոյ՝ որ Արեմտեանն Հնդկաստան կոչեցաւ, զսա սովորութիւն եղև Արեւելեան Հնդիկս կոչել. զի ի նկարագրութեան աստ յերիս բաժանեմք մեք յաջորդս. այսոքիւն են բուն Հնդկաստան կամ Ա յս կողմն Գանգիսի, Հնդկաստան ՅԱյն կողմն Գանգիսի, և Հնդկայիկ կղզիք. Ցամաք մասն ձգի ընդ 68°—107° արեւել. երկայնութեան և ընդ 1°—35° լայնութեան. և տարածութիւն երկրին կղզեաքն հանդերձ իբրև 350,000 փարսախ քառակուսի, և բնակիչք ի նոսա իբրև 210 միլիոն։

Ա. ՀՆԴԿԱՍՏԱՆ

ՅԱՅՍԿՈՅՍ ԳԱՆԳԻՍԻ

1998. Լ՚երևմտեան մասն Հնդկաց, որ և Ցայսկոյս Գանգիսի, կոչի բուն Հնդկաստան, և ձգի ընդ 65°–90° երկ. և ընդ 8°–33° լայն. չափ մեծի երկայնու. Թեան հիւսիսոյ ի հարաւ է 660 փարսախ, և լայնու. Թիւն յարևելից յարևմտեան 550. Համօրէն տարածու. Թիւն երկրի 180.000 փարսախ քառակուսի: Սահմանը նորա են ի հիւսիսոյ կողմանէ՝ Հիմաւլայա լերինք, յարևմտից՝ Պերսկաստան և Աֆղանստան, յարևելից՝ Այն կոչին Գանգիսի, ի հարաւոյ՝ Արաբիոյ ծով և Ովկիանոսն Հնդկաց:

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

1999. Եզերք Հնդկաստանի չեն շատ ծերպերկինք և ծովամուտք. բայց միայն յարևմտակողմն ունի վեցորեն բաց և զգոդն գոգաւոր, իսկ յարևելակողմն զմեծ ծոցն պենկալա. ի գոմարին գվոյ յարևմտեան բերան գանգիսի՝ չիք բնաւ խորշ նաւակաց. չկան և կղզիք մերձ ափամերձն, բայց միայն յարևմտակողմն և այն ոչ մեծք ինչ. միայն Սէյլան կղզի կայ յերկար հարաւոյ:

Իսկ զամբք երկիր Հնդկաստանի յերկուս հատս. Նէ անասյաս մեծ, հիւսիսակողմն Հիմաւուտան ասի, հարաւակողմն Տէքան: Ցերկերս հիւսիսային մասին կան բարձրաբերդ լերինքն Հիմաւա որ ի հարաւ կոյս խոնարհին, և երկայնին անդ պարս զուգահեռականս լերանց, որ առ փոքր փոքր ի՚ներն ի գաշան մեծ, ուսուի գանգես ընթացեալ յարևելս կոյս՝ հոսէ ի ծոցն պենկալայ՝ ի Հնդկային Ովկիանոս. բարերեր են յոյժ ափունք գանգիսի. բայց հարաւակողմն ի Սինասայ ափունք գանգիսի. բայց հարաւակողմն ի Սինասայ մինչև ի ծոցն պենկալայ՝ աւազուտ է երկիր անբեր և անմարդի: Տէքան բարձրաւանդակ է անբեր. Կոտ և անմարդի: Տէքան բարձրաւանդակ է անբեր. Կոտ լերինք երկայնին զուգահեռական զաւազուտ ծովափամբք. ի զառիվայր լերանցդ յարևմտից կոսակ առնին անհատաբ, այլ գետ ոչ գոյ յորդաջուր. իսկ արևելեան կողմն բարձրաւանդակին հարթ է, և գոն ի նմա գետք մեծամեծք. ի հարաւոյ բարձրաւանդակին հովիտ գետնիկ և խորին և ճառագայթ ֆարսախ լայնութեամբ յերկուս հատանէ զՏէքան ծովէ ի ծով. և սպառուած հարաւակողմն մինչև ի սարն Գոմբէյն ձգին Դրամեներ լերինք. ծովափունք արևելեան Գորոմանդել ձայնեալ տափարակ են և գժուարամատոյց նաւաց. բայց յարևմտեան ծովվերս գոն բարի նաւահանգիստք:

2000. ԳԵՏՔ, ԼԻՃՔ. — Գվնաւոր գետք աշխարհին Հնդկաց են Ինդոս կամ Սինդ, որոյ երկու առաջք են Լոսոս և Շեոս. բաժանի յերկոտասան և յառաւել վտակս զանազանեալս անուամբ, և խաղացեալ ընդ բազում գաւառս Հնդկաց Թափի ի ծոցն Իօմբայ. անդր Թափին և Ներդոսբոս կամ Նարմադա և Դոբդի ոչ աննշան գետք. իսկ ի պենկալայ ծոցն մտանեն Գոդերի ի կազաց եկեալ, Բահմապուտրա ի Մայսորայ, Գրիշնա կամ Գրիբնա՝ ի նոյն յարևմտեան կազաց ուսոի և Կոսաների. Պրահմապուտրա ի սահմանաց Ասոսամայ. և վերագոյն բնաւելիցն Գանգես որոյ երկու բազուկք են Պահադրոի և Ալոհանոս, յորոց առաջինն բղխէ ի Հիմաւլայայ լերանց ի 14.000 ոտից բարձրութենէ. Հասանի ի բազում վտակս և առաջս, յորոց մի և է Բրահմապուտրա:

Ձկք ի Հնդկաստան լիճ մեծ, այլ մանուածք և ամկասք ի բարձր հովիտս Հիմաւլայայ. և լճէն Գոլբոր որ ընդունի զջուրս Գրուշնայ և կոտավերիայ: Ի հիւսիսոյ և յարևելից ծոցոյն Գուրայ կայ երկիր ընդարձակ երկու 6.000 մղոն քառ. ազգաւ կեղևով ի՚ն պատեալ, և շրջակք այլ շրջք են ի՚նմա, յորոց ափունս և ի կղզիս զեռան մեղուք և հաւք վայրենիք, լինին անդ և գրիվք և իշամեղուիք:

2001. ԿԼԻՄԱՅ. — Թէպէտ և ոչ մի կլիմայ է ամենայն կողմանց աշխարհիս, այլ ի հասարակի ջերմին է, մանաւանդ արևմտակողմն սահմանք սիներայ, և չիք եղանակաց փոփոխումն անդ, այլ զժամանակ մի ևեթ անդրիք իշխանեն որպէս ի ձմերայնի, և ամենայն ուրեք տաճիչ են օդք. բարձրաւանդակն Տէքան նոյն զովագին է և առեալ անդրևէ անդ. եղերքն կարի ջերմագին. ի հասարակ գիշերոյ մինչև ցառաւօտ հողին շնչէ ի ցամաքէ, յառաւօտէ մինչև յերեկոյ՝ ի հողին շնչէ ի ցամաքէ, յերեկոյէ մինչև ի հասարակ գիշեր՝ խոպան ծովէ, յերեկոյէ մինչև ի հասարակ գիշեր՝ խոպան ծովէ, յերեկոյէ մինչև ի հասարակ գիշեր՝ խոպան ծովէ. Տասն գաշնաւոր լուծ հողմունք և զայրանայ տասն. Տասն գաշնաւոր հողմունք զկես ամին յարևելից հիւսիսոյ շնչեն և ընդկան յարևմտից հիւսիսոյ. որ յարևելից գայ անդրևաքեր է՝ ի սեպտեմբեր ամսոյ մինչև ի նոյեմբեր, յորում ժամանակի փոխի հողին յարևմտեան և առաւելուք ի ծովայնոյն, մինչդեռ յարևմտեան ափունս մրրիկք և տարափք անդրևայց պատահեն. հետ զնաց հասանայ ի՚ներանց յարուցանեն զբեռս ի ղեզք հասանայ ի՚ներանց յարուցանեն զբեռս ի ղեզք հասանայ ի՚ներանց յարուցանեն զբեռս և ոզոպանեն զաշաոբեա, և եթէ յերկարեսցեն ուշնել զերեսս երկրին՝ խափանի մշակութիւն և ամ հասանէ. բայ ի կանոնաւոր հողմոց ասի մինին անդ և խորշակք:

2002 · ԲԵՐԻ · ԿԵՆԴԱՆԻ · — Չկը իբրև ըզ-Հնդկաստան ուխարչ բարեբեր և առատ՝ ի բոյս և՝ ի կենդանիս · ի գազանս գիւաւորք են վագր ազթայա-կան, որոյ լինի երկայնութիւն մինչև տասն ռանաչափ, որջանայ յանտառս Պենկալայ և ցզոլ՝ ի պրտուս գետ-ափանց, իսյանք ուխարհին փղօք ելանեն որսալ զնոսա · առիւծ՝ ի սահմանս Սինայայ եւեթ գտանի · ընձառիւծ չատ, գայլ, շնագայլ, եղջերու, վլեր, վա-րազ, կապիկ ազգիազգի, փիղ՝ որ անասց գասուխա-րակութեան և չպատահիկ՝ ի մարտի և՝ ի բնականու-թիւն · ռընգեղջերւոր այժմ սակաւ յոյժ գտանի · Ցընդ-առնի անասունս ձի և էշ բազմութիւ այլ ոչ ընտիր որպէս զՊարսից և զԱրաբացւոց · եղն զօր փոխան գրասուս վարեն, յուլ վարչի կամ պիտոն · բազում ազգք ոչխարաց, և ուղտ սակաւ · — Գվնաւորք յայ-գի Թաչնոց են վասիան, սկրամարգ, ալաւնի, վա-ռեակ վայրի, Թուրթակ · Ի ծովս լինի ձուկն ա-ռատ և կէտ և սղոցաձուկն և կրիայ, նոյնպես և՝ ի գետս, յորս գտանի և կոկորդիլոս · Գաբրէ օձ Հընդ-կաց գառնաջնոյն ընասեներայ՝ ի ձայն նուագարանաց, առնէ նա յերկայնութիւն մինչև 22 ռանաչափ · Իսկ պոա վիշապ սոսկալիներայր զվայրէ յուշս և զվնդերս անգամ ուժգնագոլիկ մանուածոյքն ջախջախեալ ոզբ ոզբ ջարձէ զվի յայնցանէ, այլ յորժամ ընուբ զորո-վայնն՝ լուծանի Թմբրել և ոչ կարէ խլտակել և գիւրին է յայնժամ լսախոս և բրջաջ հարկանել և առատակել զնա · առաւել՝ ի Սէյլան կղզւոջ գտանի պոա · Կան՝ ի Հնդկաստան և տատղակի մինաաք, որպէս ՃանՃ, ջորեակ, մլըւին, մրջիւն ձերմակ · կարիճ, պատնեաս-ւոր ձձիք, և Թրթռուր, մեղու և չերամ որդն որ բերէ մեապա պատուական յոյժ · որդան կարմիր, և այլն ·

2003 · Ի Բ---ալ գիւաւորք են՝ որիղ առատ, զոր երկիցս և երիցս և յորիցս եակ ժողովին՝ ի տարւոջ, յորեան, գարի, կորեկ, մաղէ, ընդեղինք և բանջար · եղեգն շաքարի, պղպէղ, դեղին ազ-ինչ պղպեղի յորմէ գործեն ըմպելի · մեկոն՝ որ առնէ՝ ի Հնդկաստան 40 ռանաչափ՝ ի բարձրութիւն, և կազմին անուի ափիոն ազնիւ · այգի սակաւ · բամ-բակ ընծիր՝ ի պենկալա և այլուր · Լեզակ՝ որոյ բոյս բանջարեղէն ուտիւն է յատապարս լերանց, և ներկին՝ ի տերևոց նորս քաղի · կան և այլ ներկութիւ տունկք՝ ի Հնդկաստան · Ի հիմնալայս և՝ ի Տէքան ազնիւ մե-ծամեծ ծառք, զոր օրինակ Ի-ի՝ ի կագ լերինս ընծիր քան զկաղնի՝ ի կառույս նաւաց, ոսկեկալ, արմաւենի, ծ---ի-ք, պ---ս- եղեգն որ առնէ յոյժ՝ ի բարձրու-թիւն և՝ ի տատարութիւն, մինչև վարել զայն՝ ի պէտս տանց չինութեան · պ---ն սրբազան ծառ Հնդկաց բարձրանայ մինչև յ30 ռանաչափ և ձգէ արմատս՝ ի խոր յորոց վերընձիւղին նոր պանաք, որպէս զի մի միայն ծառ՝ ի տուղ ժամանակի գործէ անատակ մի գիւրաքաս տերևախիտ յոյժ, բաւական՝ ի խափանել զձառագայթս արեգական · այլ կարևոր քան զայ-նան է գոգոյ ծառ որ առնէ մինչև 80 ռանաչափս՝ ի բարձրութիւն, և կեաց 100 ամ · Ի տերևոց նորս (15 ռանաչափ երկայն) գործեն բաշմոց և առատասս և Թուղթ · Ի տերևոցն փթթին ծաղիկունք որ բերեն ողկոյզս ընկուզից, և պատանեք նոցա վերին յորմա-նակ, և կանեք ի Թէյ · միջուկ պտղոյն ունի կա-րիք կակուղ և ցեխալ կաթնային ղովացուցիչ հիւ-Թով, որ՝ ի հասուննալալ պտղոյն Թանձրանայ, յայն-ժամ հանեն անաի իւղ վառելի · կակուղ մասիք տե-ղւոց մինչ Թարմն են՝ բարւոք են՝ ի կերակուր, և՝ ի հիւծոյ նոցին գործի օշարակ · փայտիւ ծառոյն մարթ է կազմել Թէյնև կառս · Պտուղք նչերտալոյ ոչ քաջ պտղաբերեն՝ ի Հնդկաստան բաց՝ ի կիսրունէ և՝ ի նարնջոյ · բայց գոն անդ և անուշահամ պտուղք որ ոչ գտանին այլուր · զոր օրինակ են բ---ն նման վարդի · ս---ք՝ որ՝ ի սարդևենս լինի, ռ---ս որ տայ նեղ կարմիր · բաց յայսցանէ՝ ի Հնդկաստան և յաւէս՝ ի Քաշմիր գոն աղինս և գեղեցիկ ծաղկունք, որպէս վարդ քաղցրահոտ, յորմէ ընծիր վարդեջուր կազմի, և ս---ծ ծաղիկ ջրային ·

Հ---ծ ծանօթք սակաւ են՝ ի Հնդկաստան · ոսկի գտանի յաւազ գետոց ինչ · արծաթ և պղինձ սակաւ · երկաթ առատ այլ կակուղ · անուանի է ազամանդ Հնդկաստանի, և պատուական քարինք, որպէս բիւ-րեղ, ամեթիստս, ակատ, տպազիոն, յակինթ, շա-փիրոս, գոմար և այլ ազգք ականց · ընծիր ազա-մանդ լինի՝ ի սահմանս Կոլքոնտայ և Որոլկոնտայ յայրս և՝ ի լիկագոյն հող և՝ ի գետս ուրիք · Ճո-խութիւն իշխանացն Հնդկաց յակաց ասամ մատա-կարարի · Ի քարինս ընծիր են կառնիտ, պորփիւր կիճ, սլապագոյր և ատազաքար · ադամար՝ ի սահմանս Սինայայ · Ի պենկալա կայ աղբյուրակ և ազ՝ ի ջուրցն ցամաքելոյ միացեալ, և ոսկեբորակ՝ ի լինս բարձրա-բերձ լերանց ·

2004 · ՎԱՃԱՒԻՐ · — Գվնաւոր վաճառք Հընդ-կաց են բամբակեայ կտաւք հարիւրատեսակ, կերպաս ասեաքսայ, շալ, սպիոն, բամբակ, որիզ, շաքար, պղպէղ, ամանգալ փայտ, խիժ առատագական, լեզակ, մեապա, կինամոն, ակռնիք, մորճ գաղանաց · Եկք վաճառաց պարագրաւոր են չուխա, Թաւիշ, պորյր, կապար, հրաղէնս, ցեխ, ասղնեգործք, բռնատ, Թուղթ, պաճուճանք, հայելի, քաֆէ, խունկ, Թէյ, ըն-դհոյզ մշկոյ, և այլն · Շահաստան քաղաքք՝ ի ցամա-քի՝ են Տաթթասպատ, Սկրատ, Տրլլի, Ալահաբատ, Պենարէս, Բագդատ, Տագքա, Խնտուր, Կակիմբր, Հայտերապատ, Ամբեզաբր, և այլն · Գովելիբնակք՝ Կալկատա, Թունկալի, Մատրաս, Սուրատ, Գամ-պայա, Մանկալօր, Կոա, Քալիքուտ, Քոչին, Նի-կաբաղնամ, Վիզակապատամ, և այլն · Վաճառակա-նուԹիւն՝ ի ցամաքի յաշղակալ է՝ ի ձեռս Պահա-նաց Հնդկաց և Հայոց և կէպրաց, իսկ ծովակինն յաւէս՝ ի ձեռն Անգղիացոց ·

ԲԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

2005 · ԱԶԳԱՔ · — Ցարևմտեան Թերակղզւոջս 156 միլիոն բնակիչք, են յորս 103,500,000 ընդ Անգղիա-ցւոց իշխանութեամբ, 48 կամ 50 միլիոն ընդ պաշտ-պանութեամբ նոցին կամ հարկաւոր, և 5 միլիոն ա-զատք · Կալուածք Անգղիացւոց մարգաշտաք են քան

զայլ. Նահանգս • ամենայն ժողովուրդն Հնդկաց 'ի քաղաքս և 'ի գեղս բնակէ, վճռ 'ի Նոսա վաճառս բնակ և Թափառական • աղքատապ անկէք գործեալ են պատկառ եղեգամբ և կաւով։ Բնիկ ժողովուրդ երկրին Նեռոս կամ Հինառս կոչի, իսկ օտար բնակիչքն են Պարսիք, Աֆղանք, Պելուչք, Արաբացիք և ևիկ որ վասն վաճառականութեան գան, Հայք, Հրեայք, Դիւղեացիք. Պիրմանք, Ձինք և Եւրոպացիքան ազինք։

2006 • ԼԵՋՈՒՆ • ԴՊՐՈՒԹԻՒՆ • — Նախին լեզու Հնդկաց «ՃՃ-ւիէ» այժմ առ ինքսառնս ևւեթ լսի • 52 տառք են ամուսիցիցն որ ֆէլեռնաւոր յորդորքն, և գրին որպէս 'ի մերում լեզուի յահեկէ ընդաձէ • Հինդ կամ Հինդուստան որ և «ուրդ» բարբառ ծաւալեալ է քան զայս և յաւելս լսի յԱպրա և 'ի Տրլի • և յետ նորա պինդալ, Դամոզ, Մալապարա, Դելհինկ, Մարադ • իակ Մողոլաց լեզուս խառն է 'ի Հնդկաց բարբառոյ, յարաբացոցն և 'ի պարսից • լսին և լուսիանացի բառք 'ի գաւառս որ երբեմն ընդ Նոցին ձեռամբ եին • Ընդհ մառնագրութիւնք Հընդկաց բովանդակեալ է 'ի ասնսկրիտ լեզուս, և ամենայն մառնագիք նոցա չափական բանիւ գրեալ են • և ունին մառնանս 2 և 3,000 ամաց • յորս գիւաւորք են կրկին վիպասանութիւնք, Մ-ՀՈՈՐ-ԲՈՐ, որ է վէպ պատերազմաց որդւոցն Պէնդուսայ, և Բ-ՈՅ-ՆԱ, որ է արկածք անցից Բամայ Թագաւորի Ուռայ, կամ գործք Վիշնու գից մարգացելոյ • որք կարի երկարաբանք են, այլ ունին և գեղեցիկ ասացուածս • Ցուսանութիւն միայն 'ի համարզպանն Հնոացեալ գաս Նին Հնդիկք, և զնուանութիւն 'ի Նոցանէ առին Արաբացիք, և 'ի սոցանէ՝ Եւրոպացիք • Ճարտարք վկային և յերկրաչափութիւն, Նա և հնարզք իակ գիտութիւն • պահանն և յաստեղագիտութիւն • ունէլ զնուութիւնս սուղ ինչ պակաս 5,000 ամաց • այլ ոչ են սայդք հաշիւք Նոցա • բարբաւաճեալ են առ Նոսա և բնաշխոյական և բարբական հրահանգք • իակ յայլ ամենայն ուսմունս յեռանեալ են • և չուենին նոր գտութիւն, և չաթք 'ի մառնիդ Նորոց լեզուաց Նոցա՝ մեկնութիւնք են հնոյ լեզուին • 'ի բարբական գրուածս Հնդկաց անուանի են Օրենք Մանուայ ոմք կամ լինն գարուք յառաջ քան զՔրիստոսի գրեալք, և վերայք մառնագք Իրաւտուց և օրէնութեանց՝ հնագոյնք ևս։

2007 • ԲԱՆԻՔ • — Հինառաք բնակեալք յայսկոյս Գանգիսի իրբև 130 միլիոն, երբեք ոչ Թողին զՀայրենիս իւրեանց • միջահասակք են և բարկազնք մարմնով, և գունով գեղնագոյն • 'ի հասարակի ազնուահասք սպիտակագոյն են քան զիսաժամուժն, Նրբաչէք, փայտկաք, փոքրաձեռք, այլ Ճարտարք և ժուժկալք բարուք յոյժ, անպաճոյճք, պարզունակք • յոգոնից զգեստ կրկնոց մի ևւեթ է կամ պատմուճան Նոյնբ, և փաթոյրն 'ի գլուխ • բայց 'ի հանդիսի աւուրս զարդարին պէսպէս զարդուք, ապարանջանս բազմաց և խալաքոյս պրնձից գնեն, գինս և անբանս ունգաց • Հիւրասէրք են և գիմածք առ մարդիկ և առ անաստուն, բազմակնութիւն չէ արգելեալ առ Նոսա, բայց ուսագնացն ևւեթ են կանանոցք • սակայն ամաւրիք անպատիւք են • Ախոք Հնդկաց են ագահոգութիւն, անփութութիւն և թուլամորթութիւն • որով 'ի վաղնջուց հետ տանին տարեպար օտար ծոյ, փախչին 'ի մարտ և 'ի ծանր ծառայութենէ, զնանգիսա միայն խնդրեն • յորսորդութիւն և յայլ կրթութիւնս նմանիս ոչ պարապին • այլ կան 'ի գնին խաղալոց և կայթից քրմաց իւրեանց՝ որք 'ի մեկնանս և 'ի ուսմունս պատիւ մեծ ընդունին 'ի ժողովգունէն • բայց սիրեն և զատարինչ խաղ որ 'ի Նոցանէ համարի հնարեալ • զոր ամենայն 'ի բազմինս գեգերին • զուկեզ ծաղեն և ըստկելեալ Նորբրն արբենան, ձգեն զծուխ ոչ միայն զպատպաքի այլ և զկանեփոյ իրեք որ ածէ ապշութիւն մտաց Նոցա • ունին Նուագարանս բազմազգիս, բայց երաժշտութիւն Նոցա չէ քաղցր եւրոպացի լսելեաց • Ըստքնկոնս մեծալոյզ են որ այրեն և են որ հնոյ տան •

Չվանդնոց ուսանգութիւնս ոգւով չափ անփոփոխ պահեն • առ 'ի Նահանգ անտի 'ի չորս տասնմն որոշին, ոչ որ կարէ խառնիլ յոտար տոհմ կամ ինքնութիւն չասատաեալ ընդ այլոմ • և որ պակասի ոք 'ի պատուիրանս օրինաց իւրոյ ազգատոհմին՝ մերժի յիւրոցն և զամենայն կեանս իւր անարգ համարի • յորոյն ուրոյն ցեղս բաժանին տոհմքն, և իւրաքանչիւր Նոցա գոն պյաղան ծէսք, այլ 'ի գիւաւոր իրս ամենեքին միով օրինօք վարին • զոր օրինակ 18 ցեղից արգելեալ է ուսուէ մսեղէն, 70 ցեղից Թոյլ տուեալ • առ ոմանս Նեբեալ է այրեալ կրկին ամուսնանալ, առ այլս անհրաժեշտ համարեալ է ընդ առն իւրում Թաղել կամ այրել, և պաշտանեալք անգութ գործոյս՝ անգրանիկ Նորին և այլ որդիք և մերձաւոր ազգականքն • այլ Անգրկացիք խափանեցին զամարդի սովորութիւն օրինացս այսոցիկ • Ւսասքին գասուցս կամ տոհմից՝ է պէտին որ ըստ ասասպելեաց Հնդկաց 'ի գլխոյ պրահմայ արտակիսաէ, վասն որոյ 'ի տոհմիս յայսմանէ կարգին քահանայք և մառնագիրք և վնասուրութեան ապաք և ամենայն գաստարոյք և ազգապետ • որքազան համարեալ է տոհմն և յայսմսեբեան մեծի վայելէ • մեք են սպանանել զՊրահմին յանցաւոր, այլ զայս Նորա բրեն կամ սպրաբերք առեն 'ի տոհմեն • ունին և կրնս խիտ հրաժարելոյ և մաղ և 'ի ձկանց և 'ի կնոջ, և բաղադրատարերք ձգնութեամբ ատագրութեան Հասանեն 'ի տոհմի իւրեանց • սոցա միայն է իշխանութիւն ընծեռնուելոյն • զուարբ գիրս իւրեանց՝ — ՚ի • ՎԻՇՆՈՒ-ՊՈՒՐԱՆ, տոհմ մարթիկ, այժմ վայրապատին լեալ • ՈՒՇՈՒՆ և Նոյնբ 'ի ՄՈՒՀՈՐ ժողովուրդք Համարին 'ի տոհմիկ ասաի վնեալ • — ՚ի • ՎԻՇՆՈՒ, վերջին տոհմ ազնուականացաց, ասքա երկրագործք և վաճառականք են • Տրամագեալ է և սոցա գնահատեալ ընծեռնուլ արքայան մառնանս • ՚ի • ՍՈՒՐՔՈՒ • Արուեստաւորք, ամենեքին գնացրնեի արուեստն ուսանին, և գործեն յօտար ինչ պարապել • — Բաց 'ի ջրկեցուց ասաի տոհմից կայ և հինգերորդն Բուիս ասացեալ՝ որ է ժողովուրդ խոտան և պիղծ համարեալ, և մահաս գատաւոսն է 'ի վերայ Նոցա եթէ յոք հպկիցին, և 'ի խաւէն անգամ ընդ Հնդկաց ձեաս 'ի վերայ շրջանց պնդեն, զի մի շուշէ Նոցա հասցէ ուսիք • իրբև զանասուն բացակեցին յա-

մայիս դեպերին տաղտկալի և զզվելը սպասս հարկաւ նեն. բայց Ընդվզոցիք ժողովին զնոսա և կրճեն ի զինուորութիւն:

Մ-ն-ոցք ցեղ են յերբորդ տոհմին, քանքի ի հեծեծելութիւն, մասամբ ազատք կեան յարևմտակողմն Հընդկաստանի բնակեալք. սոքա հաղորդին և ընդ մահմետականս և ընդ քրիստոնեայս և ոչ պահեն զամենայն օրէնս Հնդկաց: — Ռ-ն-ոցք յերկրորդ տոհմէ զատեալ ի նոցունց, ի զինուորութեան անուանի էին որպէս զՄահրատս: — Սիւ-ի պատերազմիկ ժողովուրդ բնակեալ յերկրին ընդ ամէն Սինասյ և կարթայ, ի ժե դարս զառաջ ի հաղորդութենէ կրօնից Հնդկաց, և աստուածականք են աղանդիս, որք ազատագրք և հեծեծեալք քանքի: — Ի խորս աշխարհին ի լերինս բնակին Ռ-ոյ, Մ-ոյ, Կ-ոյ, Բ-ոյ-ոյ, Պ-ոյ-ոյ, Կ-ոնկ և այլ ազգք, որոց սեփական բարբառք և կրօնք են: — Ի Մալապար կան 20-80,000 Թ-ո-ն-ոց. որ են սերեալք ի քրիստոնէից գարշոզուածեմբ առաքելոյն Թովմայի, հնազանդին պարբերաբար Մուսուլի. վերիս միայն ընդունին խորհուրդս, զպիրտութիւն, զկարգ և զհաղորդութիւն, և յեկեղեցիս իւրեանց զնային նշան միայն կանգնեն, և ոչ այլ ինչ պատկեր. ի ժամանակս տիրապետութեան Լուսիտանացւոց գաբան յոտղպահութիւն, այլ յետոյ կրկին զաղանդ իւրեանց ընկալեալ՝ այժմ ընդ պաշտպանութեամբ Անգղիացւոց կառավարեալ լինին ի քաղաքիդ և ի ծերոց իւրեանց: — Սոքա են բնիկ ժողովուրդք Հնդկաստանի:

2008. Օտար ժողովուրդք հաստատեալք ի Հընդկիս՝ են Մ-ոյ-ն, մահմետականք՝ յԱ և ի ժ դարս աշխարհակալութեամբ բնակեալ ի Հնդկաստան, ազգ խառնեալ ընդ Հնդկաց, օտարացեալք ի նմա. նուաճելնէ բնիկ Մողոլաց, այլ ի բաս նոցա տակաւին նշմարի քաջութիւն և ժրութիւն. անդուռք և ազատք են, և հեբասեբք. Թագաւորութիւն նոցա միապետական էր, և Թագաւորն կոչի մեծ Մողոլ, վզուսկին՝ Սուլտան, կուսակալք՝ Նապապք կամ Սնզամք, և Փաքիր՝ ճգնաւորք նոցա նահանջողք կրօնից: Ընդ սոսա համարին և Ա-ի-ղներ, յորոց և Ռ-ն-հիլան ցեղ: — Կ-ո-ոյ-ոյ կամ Փարսք Ս-ի դարու ե. կեալ ի Հնդկաստան բնակին յարևմտակողմն, են մեծաւոն վաճառականք ի նոսա և Հարստ արուեստաւորք: — Ա-ո-ն-ոյն եկեալք ընդ Մողոլոց կամ յետ նոցա՝ վաճառականութեան պատճառի, ի Մալապար միայն 100,000 Ազաբացւոց են: — Հայք վաճառականք են և բնակին ի Ծովեզերեայ քաղաքս. անուանք են և մեծագետնաձոխութեամբ յառաջ քան դալ Ազգիացւոց: — Հրեայք ունէին պետութիւն փոքր ի Մալապար. սոքա ասեն զինքեանց ի ցեղէն Մանասէի լինել, և առ գերութենէն գաղթել ի Հընդկաստան: — Ազգիացիք որ տեղք են աշխարհին գան Յեբրոպայ և միս գնեն զինուորութեան և ատաղ պաշտամանց, Թուով իբր 40,000: — Լուսիտանացիք յափուռնս ևս Հնդկաստանի այժմ կալուածս ինչ ունին. սերեալքն ի նոցանէ ընտանութեամբ Հնդկաց Թ-ո-ն-ո կոչին, որ է լուսիտանացի սեռ, Թուով 500,000: — Օտարազնեայ Եբրոպացիք 5,000:

Լուսիտանացիք ծաւալեցին զքրիստոնէութիւն իւրեանս բազի հարկաւ, վասն որոյ և ոչ յօժարութեամբ ընդունելի եղև ժողովրդեանն. Հալածացիքս որ յետ նոցա եկին անփոյթք եղեն զայնմանէ. ի սկիզբն ԺԸ. դարուս Նորազնդաց առաքելոցն քարոզիչս և ուսուցիչս և Թագաւորն Պահանայ ձեռնտու էր նոցա. բայց Ազգիացիք յաջողեցան առաւել քան զայլս որսալ զՀնդիկս յաշակերտութիւն իւրեանց կրնից կառուցեալ բազում դպրոցս, և հաստատեալ ընկերութիւնս քարոզչաց:

2009. ԿՐՕՆՔ. — Հնդիկք կառապետք են և բազում առասպելս բանքան ի քերդուածս իւրեանց. ասեն ունել դես 333 միլեոն, զորոց չգիտեն ի հարկէ զանուանս. բայց առաջին և գերագոյն եակ որոյ չիք պատկեր, կամ դրօշակ ի սահմանս ուրեք, Համարին զՊ-ո-ն-ն կամ Ղ-ե-ռ-ղ-ն-ա, մանկունս որ, անմեռազոր, անմեռասուրբ. ի նմանէ ծագէ Պ-ա-ն-ի բնութիւն. և Պ-ր-ա-ն, Վ-ի-ն-ու, Շ-իվ երբորդական անձինք, որպէս և կոչին իակ Դ-ե-ւ-ո-ք-ն. Պրահմա վասն հայրասէրութեան զսկեցաւ ի մէնկից, Թէպէտև հանդիսիս ասեն նմա. սա արարիչ համարի, Վիշնու խնամակալ, Շիվա եղծիչ և հրոյ հաշատակ, որպէս Վիշնու՝ ջրոյ, և Պրահմ՝ հողոյ. զսա կերպարանեն զբերգիչքն նասեալ ի կարապ գիշերք. Վիշնու որ յայտնեցաւ երկրի հինն կամ 21 կերպարանիք՝ ըստ ամենայն դիմաց աշտոցիկ ինչրի, բայց յաճախ ե. ևեւոցուածեն զնա մանուկ գեղեցիկ և յայնժամ կոչի Բրիշնա. Շիվա կամ Ռ-ո-ռ-ն եռաւելագ և ուսմբաղուկ ի փայլատակումն շանթից ինչրի. Պատանի համարի նոցա ի կին՝ Հոգիք սահմանեալք ի Պրահմայ մասամբ հեսանչին նմա և պատուհասակոծ եղեն, և Թախանձանօք բարի ոգւոցն անգրէն արժանի գան Բաղուէության. Պրահմա գործակցութեամբ Պատանեայ զգիսն ապատամբելոյ եգ յաշխարհն ասո ի գաղանս և ի տուհկս յորոց փոփոխին անգուել յայլս. այս ազանդ հոգեփոխութեան է առ նոսա: Բայց յերից սասն աստուածութենացդ և ի գերագոյն էակէն, պատանին Հնդիկք և բազմութիւն տարբերաց և գնդից չարս և բարիս: — Պ-ա-ռ-ա առ ոմանս երկրորդական աստուած, առ այլս՝ հնամապատիս է. պատանեան ազանդ արգելու առնել պատկերս աստուածական, քահանայից հրամայէ անարգիս լինել և մնակեացս. բազմութիւն են ազանդաւորքս ըստ ոմանց մինչև 300 միլեոն, որք հաւատանս կրեալ ի Հնդկաստան ծաւալեցան ի բազում ազաբերս Ասիոյ: — Պատանին Հնդիկք կամ պատուհան եօթն գետս մեծամեծս և առաւելապէս զԳանգէս, յոր լուանան և յոտիս եղանեն աղբերաց և ջրվիժից նորին: Ցանանսնաս սուրբ համարին զերն և գետ, գիծ, գապիկ, գարագաչ, զօձ և ի տուհկս զոգոս և զպանան: Սրբազան պատմութիւն նոցա գրեալ է ի նահին մատենս ի Վեսաս՝ յոլեքհանեալ Ճառից, և ի վերջնոցս նոցին, ուր Ճառք են և զոտանդ և զբարեպաշտական վարդապետութենէ: — Տաճարք նոցա Բ-ո-ի կոչին և պատուհասք նոցին կամ քահանայք պատմեք կամ պատանեք. տաճարք մեծամեծք և հոյակապք ի սահմանս Գորմանդելայ անցանեն զմեծութեամբ

ամենայն չինուածոց, չինեալք կճիւք և կամիսս քա-
րամբք և ալիւսով· ի հասարակ քառակուսի է ձև
տաճարացն և անկիւնք նորին ուղղեալք ի դէմս չո-



Պատկեր Պուտտայ

րից հողմոց· ի միջակայք չորից կողմանցն կայ մէն մի
աշտարակ բրգաձեւ 3 կամ 400 ռանաչափ ի բարձ-
րութիւն 8 կամ 11 յարկիք, և ոսքեք գործին չորք
մուտք տաճարին, որոյսիցն երեսք աշտարակացս
պատկերօք աստուածոց և անանոյց գրուագեալ են·
առ որմովքն են աղօթատեղիք ժողովրդեան և մատ-
րունք վանս քահանայից և ասագաց· ի միջակի չո-
րից որմոցն սմբաձեայ սրբատաշեն բրգաձև առաւե-
լագոյն և գրուագօք քանդակեալ· ընդ ծակս գրանցն
մտանէ լոյս ի ներքս, ուր կայ անգրի վիճակաւր միոյ
կամ յոլովից աստուածոց, և որմունքն ներքին քան-
դակօք զարգարեալ· է ուրեք ոչ և ի մուտս գրանցն
գնեն անգրի գից· և են կուռքն ի կճոյ կամ ի պղնձ-
ոյ և յոսկւոյ, պատուական պատճառանօք զգես-
տաւորեալ և գոհար ակամբք ընդելուզեալ· այլ քան
զծնողութիւն գինն զարգարանաց հրաշալի է տեսու-
թեան ան մեծահասոյց չինուած տաճարին հասակ
ի քարէ կոփածոյ· ի մէջինի միոյ ի Շալմոպարամ
կայր շղթայ կանխո 137 ռանաչափ յերկայնութիւն
չորից պատ առեալ, միոյ միոյ ի մանեկան 3 ոտ-
նաչափ էր պատգածի և թանձրութիւն 2 կամ 3
ոտք· Գլխաւորք ի մէջինիցս են ի վերինն Տէքան
և ի կագ Լերինս և ի կղզիս Սալսէդ և ի Փղի կղզ-
պիս, իսկ որ չորս կողմանս փոքունք են, պրաշմանիք
որ տաճարին պաշտօնեայք են· ազատ են չամենայն
հարկաց և վաճելեն ի բերս ընդարձակ կալուածոց
իւրեանց· սոքա լուանան և զգեստաւորեն զդիս,
մատուցանեն նոցա զնուէրս ժողովրդեանն, մինչդեռ
ինկանոցքն բաբւեն և լապտերք և ջրագունք լուսա-
ւորեն՝ և գուսանք պատեբէք պարս պարեն առաջի
նոցա· ի հանդիսի աւուրս և ի ծնս զոհեն անա-
սունս, Թուի Թէ յառաջնումն զոհէին և զմանկունս·
զկնաւոր ոճն նոցա չիւռանալ տևէ տասն
օր, ուխտաւորք ի հեռաւոր վայրաց գան ի տաճարն
ուր ոճն կատարիցի· բազում են պատուէրք պահոց
և մաքրութեանց և ազօթից և ընծայից առ ժողո-
վուրդն, որոյք քաւութիւն մեղանացն վճարի կամ
տաժանելի ուխտագնացութեամբ· են որ կամաւոր
ապաշխարութիւնս յանձն առնուն տարապայման խրա-
տութեամբ· — են հնդկաց գպրոցք և վարժարանք
ոչ սակաւ, այլ ի կրթութեան յետնեալք են·

2010 · ԱՐՈՒԵՍՏԻ· ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ· — Ա-
նուանի են հնդիկք ի բարգաւաճանս երկրագոր-
ծութեան, ոսոսպնդութեան, և Տարտարապետու-
թեան· ի վաղնջուց ժամանակաց ածեալ է նոցա
լրութեանութիւն և ի ծառայութիւն զանազանս· և
ընտանի հատուց կրթութիւն՝ ի նոցանէ Թուի տա-
րածեալ յարեմուտս· Ճարտարք են յոյժ յերկրագոր-
ծութիւն, և մանաւանդ ի ջրաբաշխութիւն և յո-
ռոգումն անդաստանաց, որով զանազատ վայրս ի
դրախտ փոխարկեալ է· յոր սակս և պէղեալ է նո-
ցա գուբս և ջրհեղեղս ահագին մեծութեամբ և ջեր-
հորս 200–300 ռանաչափ խորս· ի կաթ վաղուց հե-
տէ մշակին ցորեան և որիզ, կորեակ, գարի, շա-
քարեղէգն, կնջիթ, մանանեխ, գոգոյ, արմաւենի,
պղպեղ, լեղակ, բամբակ, Թուէ, պանան, և այլն·
ի մանգուականաց ընկալան զնարոյզ, զձուզ, դեղձ,
ծիրան, տանձ, նուռն, նարինջ, սեխ, սոխ, սփիռն
մեկնի, և այլն· և յեւրոպացւոց զմանիլ, զբանա-
ինձոր, այլոցքն հանդերձ· Զատրազգործութիւն
բամբակի և զայնէից հնդիկք գնարեալ են, և գնէր-
պատգործութիւն մեռաքսի՝ հաւասար Ձնոց ի
վաղնջուց ի կիր ակեալ, Թէպէտ և յայսմ ստորև են
քան զձինս· Գերազանցեն Տարտարութեամբ և ի
հիւսուածս քաշվիրեան շալից և անկուածոյ կտա-
ւուց· Ճարտարապետութիւն հնդկաց երեի ի տա-
ճարս կոտոր ևեթ, և նշանաւոր է ընդարձակութեամբ
և հաստատուն կառուցմամբ չինուածոց և մանր
գրուագօքն, այլ ոչ և ընտիր ախորժակօք· իսկ պա-
լատք կամ տունք գեղեցիկք չկան ի հին քաղաքս նո-
ցա, քանզի ի քարայրս և ի ստորերկրեայս սովոր կէն
բնականալ· չկան նոցա և չիրմք և մահարձանք, քան-
զի զդիս մեռելոյ տրուվ ծախեին, և որ այժմ երևին
ի զդիս մեռելոյ տրուվ ծախեին, և որ այժմ երևին
ի քաղաքս նոցա հոյակապ չէնք՝ յետ մահմետականաց
գալստեան չինեալ են· Չկան նոցա և Ճանապարհք
արահետք և ոչ կամուրջք և կարաւանատուներ·


2011 · ՔՈՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆ· — Քա-
նակի աշխարհագրական և ըստ տեղական բաժանման՝
հնդկաստան սրտհեր ի մասունս հինգ, որ են հիւ-
սիսային հնդկաստան, հարաւային կամ բնիկ հնդ-
կաստան, հիւսիսային կամ բնիկ Տէքան, հարաւային
Տէքան կամ Քրիշնա, և Կղզիք· իսկ ըստ այժմու քա-
ղաքական վարչութեան՝ ի չորս բաժանի, ա· Անգ-
լիացւոց կալուածք· բ· Հարկաւոր Անգղիացւոց·
ֆ· Ազատ պետութիւնք հնդկաց· դ· կալուածք Ե-
րոպկացւոց·

Ա. ԿԱԼՈՒԱԾՔ ԱՆԳԼԻԱՅԻՈՑ

2012։ Իրենք-Թիւն վաճառականաց Անգլոյ ի Հնդիկս Ճարտարութեամբ իւրաւարար և խաղաղարար կացեալ գիտելոց և անգլուխս ժողովրդոց Հնդկաստանի, ի տուղ ժամանակի զբաղումս յայցելէ երեսուս-պարս կացոյց, զալյս գաղնակից, զոմանս հարկատուս և զալյս հպատակս. որով կերպարանեցաւ պետութիւն ինն նոր ընդ անգլիական թագաւորութեամբ, և տա-կաւ աճեալ զբօրութեամբ և հարստութեամբ անուա-նի եղև քան զթագաւորութիւնս Հնդկաց։ Գլուխ ընկերութեանն որ և Կախագահ կոչի՝ ընթրի ի Թա-գաւորէն Անգլոյ տարեւոր ժամանակաւ։ Յերկուս վիճակին անգլիական գաւառք Հնդկաց, կէսք սեպ-հական կալուածք են նոցա և կէսք հարկատուք միայն կամ գաղնակից։ Բնիկ կալուածքն բաժանեալ են ի չորս հնգանգս կամ կուսակալութիւնս, և մի մի յայցնէ ի գաւառս և այնք ի վիճակս. և են նա-հանգքն կալկադա, Ալահապատ, Մատրաս և Պոմ-պայի։ Իբրև 200.000 զօրականք են ընկերութեանն ի պահպանութիւն երկրին։ Հասք 550 միլիոն ֆր. ծախք 480 միլ. պարտք 1,500,000,000։

2013։ Ա. ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՊԵՆ-ԿԱԼԱՑ, որ և ԿԱԼԿԱԴԱ. Որ է հիւսիսակողմն Հինդուստանայ և մասն մի Տէքանայ. սորա վիճակք են պենկալա, պահար, Օրիսսա, Ռաղնա, և այլն. յորս բնակիչք 38,000,000. քաղաքք նշանաւորք,

ԿԱԼԿԱԴԱ. Մայրաքաղաք Անգլիական Հնդկա-ստանի առ հնուկի վտակաւ Գանգեսի ի ճախակոյս դաշտի. աճուն նահանգաւին Ասիական ընկերութեան,



Կալկադա

նպիսկոպոսի միոյ, և այլն. ունի բերդ հզօր, մեծ և գեղեցիկ ո-ւէյնի անուն, և յերիս բաժանի քաղաքն. այսինքն են, ա. Սպէ-ն քաղաք որ է Եւրոպացոց բնակութիւն, գեղեցկաչէն, լայնարձակ փողոցք և քարայատակ. կան ի նմա հայկապ եկեղեցիք, մըզ-կիթք և մեհեանք, գեղեցիկ պալատ կողմնակալին, թէատրոն և պարտէզ անկաքանութեան. բ. Ք-ռ-ն-ե-ս. որ է հնդկաց բնակութիւն անյարգարս և մեծն. տունք կաւիղէն և եղեգնաչէն աւերածածուկ. գ. Աբուաբազար։ Գործարանք բազումք են ի կալկա-գա և վաճառականութիւն առաւելեալ քան զամենայն քաղաքաց Հնդկաստանի՝ զի նաւք մեծամեծք գան ընդ Հ-ուլ. բազմաթիւ են ի կալկագա և ուսում նական ընկերութիւնք և օրագիրք յիսնիւ չափ։ ընդ որս է և Հայոց Ազմարանն Մարգասիրական անուա-նեալ հանդերձ տպագրատառս և լրագրով. և ոչ սակաւ վաճառականք հայազգիք Անգլոյացւոց հա-ւասար քաղաքավարեալք։ Իսկ յԱնգլիական ընկե-րութիւնս երևելի է Ասիականն քան զամենս որ այ-լոցն։ Բն. 450,000։

2014. Զանազանութիւն. Քաղաք մեծ և գեղեցիկ, ի ձեռս Գաղղիացւոց, այլ ընդ անգլիական իշխանու-թեամբ. ունի գործարանս բամբակի, վաճառ մուշ-տակի, մշկոյ, ճակոյրոյ կերպասուց, խաշգեղոյ։ Բն. 40,000։

Սերամպուր. Գեղեցիկ քաղաք 15,000 բն. զոր յամին 1845 Անգլիացիք ձեռնկն ի Դանեմաց. ունի վանս քարոզից առ Հնդիկս։

Մոնրհեսեպաս. Վաճառաշահ քաղաք առ Գան-գեսիս. աճուն անկլեան նաւահան։ Բն. 160,000։

Տնարհիա. Երբեմն մայրաքաղաք Պենկալայ; առ վտակի Պրահմապուտրայ. ունի գործարանս նուրբ կը-տաւուց։ Բն. 200,000։

Մուրշեդ. Մերձ ի Մուրշիտապատ, վաճառաշահ քղ. 18,000 Բն։ Ցերի սորա կան աւերակք կ-ո-ր լայծաւալ քաղաքի, յորում բնակիչն երբեմն առա-ւել քան զ2,000,000 մարդկան. նշանաւոր է քա-ղաքս կոմիշղնորա, ոսկերչին անուանեալ մկնիկին, մեծագործ գրուիք քաղաքին և առաւել սրմանիչն։

2015. Ռանդա. Գլ. քաղ. Պահար գաւառի, որ ի հիւսիսոյ պենկալայ, առ Գանգեսիս, հնդիկ չինուա-ծովք, ունի գործարանս առուի, բամբակի, մետաքսի, ասիներն։ Բն. 200,000, և վաճառականք բազում։

Մանդա. Աս կոկոս վտակաս. ի սմա է վիճ-խարի Թղենին պանան, որոյ առուեր ի միջոցին ջը-ջաբերի 1116 անգլիական ոտիք։

Կանգ. Քաղաք մեծ յոր ամ չամի գան 100,000 ուխտաւորք, զի հպյրենիք համարի Պռամայ։

Մոնսիր. Պերմինկիւմ Հնդկայ կոչի վասն բազմա-պատիկ գործարանաց զինուց, պղղովակի, դանա-կի, և այլն։ Բն. 30,000։

Պենկարիս. Սրբազան կոչեալ քաղաք առ Հնդկս և Ամենք նոցա, աճուռ գլխաւոր Պռահմանց ի վա-ղուց ժամանակաց, որք ունին ի նմա վարժարան մե-ծահամբաւ. կայ անդ մկնիկ մեծ կառուցեալ յԱբ-բունկղեայ, և մեհեանք շատ յաճախեալ յուխտա-ւորաց. փողոցք և տունք մկնիկք և անձունկք են որ-պէս և այլոց հնդկային քաղաքաց բայց բազմայարկք.

ցուվք և կապկունք գիշանուէքք Թափառին ի հրա-պարակս. և եկք յամենայն գաւառաց Հնդկաց գան անդր և աղքատք անթիւ. անուանի են վաճառք չալի և ադամանդի և ազնիւ կաւաւոյ պէնարեայ: Բն. առաւել քան 600,000:




Պէնարես

2016· ԲԱՆ ՃԱՊ գաւառ, որ նշանակէ հընդ-գաղութք, ղի ոտգի հինգ վաճաք Թագոսի, կայ ի հիւս. արևմտից Հնդկաստանի, կոչէր և Լահոռ. յա-նուն մեծի քաղաքին. յորում իշխէին և մարտիկ ազգն Սիքաց կամ Շէյխից· Ազգնացիք նուաճեցին զնոսա յամին 1849 և մտոյ կացուցին զԲանձատ 3,000,000 բնակչօք. և մասին միոյ նոցին՝ յորում և Լահոռ քա-ղաք՝ կարգեցին իշխան հարկատու, վասն որոյ և յե-տոյ յիշեսցի այն. իսկ Բանձատ համարեցաւ մասն պէնկալայ կուսակալութեան, ընդ նմին և Բեշաւէր գաւառ Աֆղանաց: Գլխաւոր քաղաքք յետ Լահո-րոյ ի Բանձատ՝ են Ամրիդսիր և Մուլդան, զորոց զինի. Ընդ կուսակալութեամբ պէնկալայ են և գա-ւառք ինչ յայնկոյս Գանգիսի, զոր անգէն տեղա-գրեսցուք:

2017· Ռ· ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԱԿՐԱ, կամ ԱԼԼԱՀԱԳԱՍ, որ ասէրակն մասն համարի ա-ռաջնոյ կուսակալութեանն, և են ի նմա 32,500,000 բնակիչք:


ԱԼԼԱՀԱԳԱՍ· Գլ· Ռ· համանուն գաւառին ի մէջ. պէնարեայ, և առաջին յամրութեան. առ գե-տաբանաձև Գանգիսի և Ճոմնայ: Բն. 70,000· ուխտաւորք ամի ամի գան այսր մինչև քան բիւրք, յուխտ գետաբանիցն:

ԱԿՐԱ· Առ Ճոմնայ, յանուն գաւառին որ ի մէ. և ի հիւսիսոյ վերնոյն, ամեռ էր Էքպերայ մե-ծի. աւերակքն վկայեն նախնի վայելչութեան քա-



Շիրիմն Թաճմահալ

ղաքին. կայ ի նմա նշանաւոր մզկիթն մարգարէ-ատացեալ համակ ի սպիտակ կռոյ, անգատատակ մի և կռեայ վերինն Թաճմահալ գեղեցկագոյն համարեալ ամենայն չինուած. քառակուսի տրամադիր, 194 անգ-ղայի կանգնաւ երկայն, գմբէթ ունելով ի վերոյ 70 ոտն տրամագծաւ. յորք մեքենայք սմբատեան յան-



Աներակը Ակրայ

կիսնա Նորա գեղեցիկ քանդակաք. զսա Շահ Ջիհան ամբարձ հինը Լուրջ սերելոյ: Բն. 96,000:

ՏԵԼԼԻ (Delhi)· Եւ սա գլխաւոր քաղաք գաւառին Տըլհայ ընդ մէջ Գանգիսի և Ջումնայ, անուանի էր որպէս զԱկրա, և աթոռ իշխանազուն Մողոլաց· 2 միլիոն բնակիչք էին ի նմա յայնժամ, այժմ իբրև 200,000· ի հոյակապ վէնուածոցն Յայլոց ընդարձակ պալատ Ինքնակալին, մզկիթք, կամուրջ մի, մատն Շալհնար գեղազարձ պարտիզաց, Քալէ Ինձհիա որ է սեաւ մզկիթ, և Ջէմա Մէ֊ճիդ գեղեցկագոյն քան զամենայն մզկիթս Հնդկաց, ի բարձրաւանդակի շրջապատեալ կամարակապ սիամբք· երկայնութիւն մզկիթին 260 ոտք անդր· ունի և ջրհոր հատեալ ի ժայռէ խոր յոյժ: Յբարեգործ մեծ որ ածէ ջուր ի Ջումնայ: Յարքունական պալատսանն կեայ արդ Էքպէր ի ռոճկաւ Ընդհանուցոց: Ի սահմանս քաղաքին կան աւերակք հնոյն Տըլհայ, յորս նշանաւոր է մեռտղայ սիւնն՝ գաւազան Պերսոյն անուանեալ, վերինն հիւսմայիւնայ, Քուգդուպ միևնոյն վերիմ՝ որ է աշտարակ 27 անկիւնի հեգայարկ, 244 ոտք բարձր, գեղեցկաչէն և ճարտարադործ:

2018· ՀՈՒՐՏՎԱՐ· Ցեզը Գանգիսի, ուր դան ուխտաւորք վկայել ի գետն, իբր միլիոն մի արանց ամսամէ, և վաճառականք յանուանի առնալաճառս նորին:

Ծէրհ֊ի֊ֆոր· Ուխտաւորաց հռչակաւոր առ Ալաքանանաս Կանկայ:

Կան֊ի֊դէյ· Ուխտաւորաց պատճառ յոտս Հիմալեյեան լերին, ուստի բղխէ Պաղերագս Կանկա յ'13,000 ոտնաչափ բարձր լեռնէ:

Պ֊ուդ֊ի֊ֆէթ· ի բարձրաւանդակ տեղւոջ, ունի հարուստ առեալ գժուարամատոյց, յոր ասի յոտանց մի-լիոն մի ուխտաւորաց գալ ամ ըստ ամէ:


Ցափուռնա ծոցոյն պենկալայ յՕրիսա գաւառի կայ մեծահռչակ և եռասրբեան ուխտատեղին Ճ֊կ֊ռնաթ կամ Փ֊ուրի տաճար Վիշնու դից, վէնուած գարմանալի յապառաժ լերին՝ ի կառնիս քարէ բարձր և գըժուարամատոյց գրամբ որմնափակ· ի գալ այսր ուխտաւորաց յանհետգեղ կառս բարձեալ շրջելոցդանեն զդին, և կամաւոր մահուընք լինին ընդ անուամբն արկանելով զանձինս, բայց արդ նուազեալ է չար սովորութիւնն:

Պ֊ուրի֊ցկի· Գլխաւոր քաղաք Ուռիկքուհա գաւառի· Ճարտարարուհա ի գործածս կապերակից և ասղնագործաց: Բն· 70,000:

Ա֊ւտ֊որ֊ա· Գլխաւոր քաղաք Ջումանի լեռնական գաւառի· բարձր է 5,000 ոտս յերեսաց ծովու:

2019· Գ· ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՄԱՏՐԱՍ· Մասն Տէքանայ, յարեւելակողմն և մասամբ յարեւմուտս առաւել քան 22,000 փարսախ քառակուսի, բնակիչ ի 16.000,000 մարդկանէ· բաժանի ի բաղումգաւառս որք են Գառնագիք, Գոյմպատուր, Մայսուր, Մալապար, Գանարա, Պալակատ, Չիրքար:

ՄԱՏՐԱՍ· Գլխաւոր քաղաք Նահանգին և Գառնագիք գաւառի, որ որպէս զկալկաթա բաժանի ի Սպիտակ և ի Սեաւ· բնակութիւն Եւրոպացւոց բարեչէն է և ի նմա է Ս· Գէորգ առաջի բերդ· յորում են ապարանք կուսականին, Եպիսկոպոսական



Քուդդուպ Միևնար

եկեղեցին, գործատուն դրամուց, վէնուորանոցք· Նշանաւոր է վարժարանն հաստատեալ ի 1812, գիտանոյն, ասիական ընկերութիւն անկաթանութեան·

գործարանք բամբակի · վաճառականութիւն մասնաւորապէս յաւէտ ընդ Հինաց է, ընդ Պարսից և ընդ Մոքայ։ Բն · 430.000, յորս ոչ սակաւ Հայազգի վաճառականք։

ՄԱԼԻԱԲՈՒՐ կամ Ս · ԹՈՄԱՍ · Երկու փարասխաւ հեռի ի Մատրասայ զուարճալի քաղաք կառուցեալ ի Բորդոգալաց, անտի ուղղափառ եպիսկոպոսի։

ԱՐԿՈՒ · Առ Բալաւրայ 40.000 բնակչաք, ամուր քաղաք, ունի տիկին մի մեծ։


ՉԻԼԼԱՄԲՐԱՄ · Ունի բակոտս չորս · տաճարին մեծի 360 ձողաչափ է երկայնութիւն, 240 լայնութիւն, ըստ ընդարձակութեանն նշանաւոր է և գեղով արուեստին։

ԴՈՒՊՈՒՄԱԼԻ · Քաղաք մեծ, յորում կայ ընդարձակ և մեծագործ բակոտ 800 միաւտանի սեամբք պատեալ, որոց 20 ոտնաչափ է բարձրութեան և ճարտար գրուածագործ · մի ի չորից աշտարակացն երկոտասանայարկ բարձր է 222 ոտն · ի բուն տաճարին կայ Բուդդեն արձան վիթխարի և անդրի ցլոյ ի սեաւ կճոյ։

ՎԻԼԼՈՒՐ ամուր քաղաք առ Բալաւրայ, ուր նըստին սերունդք Դիվրու Սահիպայ ընդ պաշտպանութեամբ Անգլիացւոց։

Մ՚ՈՒՊՈՒԼԷՐԻ կամ ԵՒՆՈՒԼԻՊ · Գեղ նշանաւոր վասն վաղեմի աւերակաց իւրոց · առ ծովափին ի տեղւոյն ջուրց երկին 7 տաճարք, գամբանք և ժայռք հատեալք ի ձև մեհենից · և պատկերք մարդկան և գազանաց զարմանագործք։

2020 · Դաստիր առ գաւառիսայ աթոռ լատինական Դանձորայ · կայ ի նմա տուն քարաշէն, տաճարք բազումք յորս նշանաւոր է բակոտն հոյակապ բրգաձև, յորում ցուլ ի սեաւ կռանիոյ 16 ոտն երկայն և 12 և կէս բարձր · Բն · 30.000։



Բակոտ ի Դանձոր

Նեկապտամ · Շահաստան ծովափնեայ։

ԴՈՒՆԶԻՒԱՐԱՆ առ Գաւառիսայ, ունի բերդ մի և տուն քարաշէն · տաճար մի անուանի յապառաժի · Բն · 80.000։

Ի ՄԱՑՈՒՈՒՐ գաւառի, ՍԵՐՒՆԿԱՊԱՏԱՄ աթոռ Հայոցերայ և որդւոց Նորա Վիրքու Սահիպայ, ի կըլզուրջ ուրեք գաւառիսայ · երեք մասունք են քաղաքին, բերդն կիսաւեր, բուն քաղաքն, ասպարանք տաք գրուագք · մի ի չորից աշտարակացն երկոտասանայարկ բարձր է 222 ոտն · ի բուն տաճարին կայ Բուդդեն արձան վիթխարի և անդրի ցլոյ ի սեաւ կճոյ։

Վելլուր ամուր քաղաք առ Բալաւրայ, ուր նըստին սերունդք Դիվրու Սահիպայ ընդ պաշտպանութեամբ Անգլիացւոց։

Մ՚ՈՒՊՈՒԼԷՐԻ կամ ԵՒՆՈՒԼԻՊ · Գեղ նշանաւոր վասն վաղեմի աւերակաց իւրոց · առ ծովափին ի տեղւոյն ջուրց երկին 7 տաճարք, գամբանք և ժայռք հատեալք ի ձև մեհենից · և պատկերք մարդկան և գազանաց զարմանագործք։

2020 · Դաստիր առ գաւառիսայ աթոռ լատինական Դանձորայ · կայ ի նմա տուն քարաշէն, տաճարք բազումք յորս նշանաւոր է բակոտն հոյակապ բրգաձև, յորում ցուլ ի սեաւ կռանիոյ 16 ոտն երկայն և 12 և կէս բարձր · Բն · 30.000։

Հայաբեր Ալեայ, առ որով և գերեզման նորին յոր եդին Անգղիացիք և զդի որդւոյ նորին յամին 1799 · ունի տիկին մեծ, Սէբաստիա տաճար, Նազարեան · և այլն · Բն · 20.000։

2021 · Ի ՄԱԼԱՅԱՐ գաւառի ի ծովափունս աբեմանց կան քաղաքք ·

ԳԱԼԻՒՈՒՐ · Վաճառ կամս Լուսիանիայի · յամին 1498 եղ այսր, ուր սերբեր յայնժամ ջամբրին սին

այնիկն լհյան հղը. Հայաբը Ալի և որդի Նորա քանդեցին զան։ Բն 30,000։



Միրինկաբադաւ

ՏԻՄԲԻՒ. փաքրիկ քաղաք ի խոր գաւառին, ա-Նուանի վան սիւնհոդոսին որ Հռե յամին 1599, յո-րում հաստատեցաւ ամենայն քրիստոնէից անսալ Հռովմէական ուղղափառ կրօնից։

Ի ԳԱՆԱՐԱ գաւառի ՄԱԳՈՒԼՈՐ քաղաք վաճա-ռաշատ. Նաւահանգիստ Նորա չէ բարւոք, գլխաւոր վաճառք Նորին են ոլիղ։ Բն. 30,000։



Մանկալը

Ի ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՉԻՐԻԱՒ գաւառի, ՄԱՍՈՒ-ԼԻՒՒԱՆ, ամուր քաղաք, ունի գործարանս լերկի, բամբակի, շաքարի և այլոց կաուռ որ չէ կոչի։

2022. Դ. ԿՈՒՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՊՈՄ-ՊԱՅԻ (Ի Buon Pahia Բորդոգալաց, որ է Բաղի Նաւահայաք). Ցարևմտակողմն Հնդկաստանի. ընդարձա-կեցաւ Նահանգս ի 1818 աշխարհակալութեամբ Ան-գլիացոց լերկրին Մարագաց և ի 1843 Նուաճեալով զերկիրը Սինտաց. և արդ տարածութիւն Նորա է 15,000 փարսախ քառակուսի, բնակիչք 10,000,000։ Գա-ւառք պոմպայեայ են Ալբուկերկապատ, Պէճապուր, Խանաէյշ, Կուճրատ։

ՊՈՄՊԱՅԻ. ՅԵզը հարաւակողմեան ափամուտ կըղ-զօղ. գլխաւոր քաղաք, ունի Նաւահանգիստ մեծ և



Պոմպայի

բարի բաւական մեծամեծ Նաւուց իսկ, յորում են և Նաւակայք տորմիղն Անգլիացւոց. ի բերդին կան ապարանք կողմնակալին, և Հընդկային ըն-կերութեանն, և մեծ բանտք ի պէտս կառուց-ման Նաւից. յետ տրդեհի 1803 ամին կրկին կառուցաւ քաղաքս բազմաթիւ եկեղեցիք և մեհենք, այլ չքք ի Նոսա գեղեցկաչէն և ոչ մի. վաճառականութիւն քաղաքիս է ընդ Ա-բաբիոյ և ընդ Պարսից. որոց վաճառուց համ-բարանդ է, որպէս և եղեմտիոյ, Մալեզիոյ և կողմանց կողմանց Հնդկաց. Հայք և ակնք Ժողովուրդ պարապին ի վաճառականութիւն։ Բն. 300,000։

2023. ՍԱԼՄԵՆ կղզի աւազակոյտ ամբարտա-կաւ կցեալ է ընդ Պոմպայեայ, ընդ 13° հիւս. լայն. 28 փարսախ քառակուսի, 50,000 բնակչք. բարե-բեր է երկիրն. կան ի Նմա Դաւնա քաղաք հին և տաղտկալեայ տաճարք, որպիսիք գտանին և ԵԼԵՖԱՆԹԱ գաւառի ընդ մէջ կրկին կղզեացս, ուր կայ վիճակաբեր արձան փղի, յորոյ անուն և կղզին կոչեցաւ։



Ասրեզ կղզի

Ի ՊՆՃԱՔՈՒՐ գաւառի ի ծովեզերին կայ Վ.Խո-րհ ամրոց և ՊԱՆԳՈՒՐ քաղաք փաքրիկ և աւերակաց ՊԵՆՃ-ՈՐ կամ Վ.Խ-ՈՐ մեծի քաղաքի, յորմէ ցարդ կանդուն կայ Մաշալաբա չերիմ Մուհամէտ շահի, ո-րոյ գերեզմ 10 ոտնաչափ ևերկ Նուաղ ունի զարա-մագիծ քան զվ. Պետրոսին, և տայ ձայնարձակ ար-ձագանգս որպէս գերեզմ Ս. Պօղոսի ի Լոնտոն։ Չորք միհրապք Նորա կանգնեալք յանկիւնան ունին 140 ոտն բարձրութեան. ոչ ինչ Նուազ հոյակապ է և չերիմ Խարահմայ Բ, տղիներն մեծ և պարիսպք քա-ղաքին։

2024. ԳՈՒՅՃԱՐԱՏ կամ ԿՈՒՋԱՐԱՏ. Գաւառ ի հիւսիսի հնդկաստանի. ընդ մէջ Գուրայ և Գամ-պայայ ծովածոցիդ՝ յորս Թափին վտակք և գետք ընդ որս և կերպասուստ, վասն որոյ յերկոսեան անդրևայ ջրհեղեղք լինին յափռնս Նոցա, այլ ամարաին ցա-մաքին յատպուստ վտակք նեղբին կողմանց. տարած-ծութիւն Նորին 1400 փարսախ, բերք՝ ընդակ, բամ-բակ, ծխախոտ, ափիոն։ Գլխաւոր քաղաք Սուրատ, ի բարեբեր գաշտի 6 փարսախաւ հեռի ի բերանոյ Գ-ՆԳ-Ի. միջնաբերդն ի Մողոլաց կառուցեալ է. վաճառականութիւն մեծ է Նորա ընդ Չինս և ընդ

Պարս. անուանի էր անկելանոցն կամ փարախն զոր Պրահմինեանք չինեցին վասն անասունեաց և ծեր անասնոց: Բն. իբրև 600,000:

ՊՈՐՈ կամ ՊՈՐՈՉ, ՊՈՐԻՒՆԱՉՈՒ կոչեցեալ ի Ցուցանց և ի Հռովմայեցւոց· ամուր քաղաք առ ներփոտամոյ 30,000 բնակչօք: — ՌՈՒՆՆ քաղաք մեծ 70,000 բնակչօք: Ի կղզեկի միում գեղոյն կայ հսկայաձև պատկեր Ծառ որպես ասի երեքհազարամեայ, չքնաքերնեայ Թիւն հասուսարած ոսոց նորա 2,000 ոտն անդղիացի, բաւական ի հովանաւոր 7,000 արանց: Կան ի Գուշքրադ իշխանութիւնէն մանուկք ընդ պալտապանութեամբ Ընդղնացոց: Գլխաւոր քաղաքք նոցա. ԱՀՄԵՏԱԲԱՏ, յորում բազում են շէնք մեծագործք, որպես մզկիթն մեծ, մզկիթն փղոսկրեայ, ղ զարգարեալ է փղոսկրեայ և արծաթեղէն քանդակօք: Բն. 100,000: — Մերձ է ի սա Ռ***ԼՀ գեղեցկեկ կղզեկաւ և պալատամբ:

2025. Ս ԻՆ Տ. Գաւառ տարածեալ զահմանք Ինդոսի, կայ յարևմից պետչէսատանայ և յարևելից անասպատին Հնդկաց, որ Թուր կոչի ի տահմանս սորա· իբրև 7,000 փարս. քառ. Էմիլք ի պետչէ ազգէ տիրեին երկրիս ցամն 1849, յորում մարտիւ նուաճեցան Ընդղնացոց: Երկիրն ընդ մէջ վտակաց Ինդոսի որ գործեն տեղաց՝ բարեբեր է. ընծիր է ո. ըստ երկրին, ունի և չաքար և գապաք և լեզակ.

ՀԱՑՑԵՐԲԱՑՆ. Գլխաւոր քաղաք, յարևելից Ինդոսի· 20,000 բնակչօք:

ՄՈՒՆՆ. Մերձ ի Հայոցերկայան, ուր յաղթեաց Թիւն մեծ գործեցին Ընդղնացիք:

ԴԱՒՒԴ. Ի ծայր սեւդ.սին, հին մայրաքաղաք երկրին: Բն. 18,000:

ՔՈՒՐԴԶԻ. Նաւահանգիստ Սինոյ յարևմտակողմն սեւդ.սին: Բն. 13,000:

ՍԻՀՈՒՆՆ. Համարի մայրաքաղաք Սիմպուտաց յիշատակելոց յարչաւանս Ալիքսանդրի:

Ի· մրջև անգղնական կալուածոց կան տասկաւին պետութիւնք Հնդկաց և գաւառք ընդարձակք հպատակեալք Ընդղնաց և հարկիք: Վարչութիւն քրիստոնէից Ընդղնաց կան

րեցաւ ոմն անգղիացի զբօսակիր Ուոխոյ Նահանգի Հայոց։

2029 · Ջ· Պ Ո Բ Ա Լ (Bhopaul)· Գաւառ փոքր, յաջմէ կերպուռատայ գետոյ ձգեալ՝ի վինխյա լերինս կոյս· Իշխան երկրին է բաձա ոմն տոհմային։ Ժո· ղովրդ 650,000։ Գլխաւոր քաղաք Պ Ո Բ Ա Լ՝ի սառ· րոտս վինխյայ։

Ե· Պ Ո Ի Ն Տ Լ Ի Ե Ր Ե Ո Ի Ն Տ Ն և Ո Ւ Ե Լ Վ Գա· ւառք, մասն հասարեին Ավստրիոյ, ՝ի սահմանս Սիմոյ· և ունին պետութիւնս մանուսս հարկատուս Անգղիացւոց։ — Քաղաքք նոցա Պ Ե Ռ Ե Ա, Հ Ա Ս Ա Ն, Գ Ա Ե Լ Հ Ե Ա Ր, Ռ Ե Լ Վ։ Բնակիչք գաւառացն Պոռնա· լեքռնեայ 650,000։


Ը· Ն Ա Կ Ե Ո Ի Ե Ր կամ Պ Ե Ր Ա Ր· Ընդարձակ նահանգ, սահմանակից Նիզամոյ՝ի հիւս· արեւելից, իբր 8,000 փարս· քառ· ՝ի բարձրաւանդակին Տե· քհանայ· առոգեալ՝ի Մահանուտսի գետոյ և յօժան· գակաց կոտաւերեայս· բերէ առատս ցորեան, որ և ընտիր համարի՝ի բովանդակ Հնդկաստան։

Ժողովրդք 5,600,000· գաւառք Պ Ե Ր Ա Ր, Օ Ր Ի Ս· Ս Ա, Կ Ո Ռ Ն Տ Ո Ւ Ե Լ Ն Ա Ն։

Գլխաւոր քաղաք Ն Ա Գ Ո Ւ Ր Ո Ւ Ր 80,000 բնակիչք։

2030· Թ· Ն Ի Զ Ա Մ· Ընդարձակ պետութիւն ՝ի միջնադարս Հնդկաստանի, ունելով գաւառս ըզ· Հայտերապատ, զՊիտեր, և զմասուս Ներուն կապա· տայ, Պերարայ, Խանդեէյայ, իբր 12,000 փարսախ քառ· և բնակիչք ՝ի նմա 9,500,000։

Տ Ա Ճ Ա Ր Ո Ւ Գ Ա Ս· Գլխաւոր քաղաք յետ վտակի միոյ Գրիշնայ, 80,000 բնակիչք։



Գլխաւոր մզկիթ ի Հայտերապատ

Կ Ո Լ Գ Ո Ն Տ Ա· Ամրոց հռչակ՝ի Հայտերապատ· գանձա· տուն էր ազատանաց անկոց գտելոյ՝ի սահմանս անգ·

Ա Ր Ո Ո Ն Ա Գ Ա Ս· Ի հիւս· արեւմտեան կողմն Նի· զամոյ, 60,000 բնակիչք։ Ի սմա է հոյակապ լերինք գտանին Ներունկղիզայ։ — Մերձ Ա Ն Ե Ր Ե Ն Ա կապատ կան անուանի ձեռագործ քարափոր տաճարք Էլլորայ· և իբր 10 փարսախ հեռի՝ Աւռ գետոյ, ուր Ո Ե Լ Լ Ի Ն Կ· դէն յայլմէնայ հնդկաց։

2031· Ժ· Մ Ա Հ Ր Ա Տ Ա Ց Ե Ր Կ Ի Ր· Ցարև· մտեալ հիւսիսոյ Տէքանայ· ուր առնին Մահրատաց իշխեր բուռն զրուէնեամբ, զոր ետեղ Աքմեա չահ Թագաւոր Քապուլայ յամին 1761, և յետ նորա Անգղիացիք նուաճեցին ՁՄահրատս· այժմ երեք պե· տութիւնք են հարկաւոր նոցա Ս Ա Ն Տ Ի Ա Ն Ա, Ջ Ո· Լ Ա Ք Ո Ւ Ր և Ս Ա Ո Ո Ի Ն Ն Ե Ր-Վ Ա Ր Ր Ի ՝ի Պ Ե Ն Ա Ռ Ո Ւ Ր· որոց տարածութիւն է 1500 փարս· քառ· և ժո· ղովրդ 2,400,000։

Ս Ա Ղ Դ Ա Ր Ա Ն· Ամրոց հռչակ յափունս Գրիշնայ։

Պ Ե Ն Ա Ռ Ո Ւ Ր· Անուանի առ Ա Ե Ր ո Ւ Ն կղիզաս, յորում միլիոն մի բնակեաց էր յայնժամ· այժմ կիսաւեր կայ, չերիմք, տաճարք, պալատք և մզկիթք յոլովք՝ի նմա· և կոչի Պալիբռա Տէքանայ։

Ժ Ո Ղ Ո Վ Ո Ւ Ր· Եթ սա մասն ինքնակալու· թեանն Մահրատաց, տարածեալ զիիւնով մասամբ ներպուռատայ՝ի բարձրաւանդակին Պալուայ, ՝ի հիւսիսոյ վինխյայ լերանց· Ժողովրդք 1,550,000։ Գլխաւոր քաղաք Ի Ա Տ Ո Ր։

Ժ Ո Ղ· Շ Ի Ն Տ Ի Ա· Եթ սա ՝ի Մահրատաց պետու· թենէ հասեալ մեծ, որ՝ի գլխոյ ծոցոյն Գամպայայ ձգի ցափունս Ձուիայ, և ունի զմեծ մասն բարձ· րաւանդակին Մալուայ· ուր լինի ընտիր ափիոն և բամբակ և խաղող· Բն· 3,400,000։

Կ Ո Ռ Ե Լ Ի Ո Ր· Գլխաւոր քաղաք և ամրոց հզօր, ՝ի հարաւոյ Ագրայ, զոր նուաճեցին Անգղիացիք յամին 1842· Բն· 50,000։

Ո Ջ Ա Ն Ն (Oojein)· Ի Մալուա, քաղաք սրբազան, 150,000 բնակիչք։

2032· Ժ Ո· Մ Ա Ց Ո Ւ Մ Ն Ե Ր։ Ընդարձակ գաւառ ՝ի հարաւակողմն Հնդկաստանի, պատեալ կուսակա· լութեամբ Մահրատաց, երիվր բարձրաւանդակ և բարեբեր· ունի և խաղող և նռնոյս և միւռգս ընտիրս· Տարածութիւն երկրին իբր 3300 փարս· քառ· Ժո· ղովրդ, 2,350,000· որոց իշխէ բաձա հարկատուս։

Մ Ա Ճ Ո Ւ Ր Ո Ր· Գլխաւոր քաղաք ՝ի հարաւակողմն· Նշանաւոր է ՝ի նմա անգղի կամսի ցլու։ Բն· 50,000։

Ս Ե Ր Ե Կ Ն Ե Ր Ե Ա Մ· Ի կղզւոջ միում գետվերեայ, 30,000 բնակիչք· աճուռ էր սա Դերքուս Սահլսայ, և առաս յԱնգղիացւոց յամին 1799։

Պ Ա Ն Կ Ե Լ Ո Ր· Քաղաք մեծ և ճարտար ՝ի ձեռա· գործս կերպասուց և բամբակեվինայ· Բն· 60,000։

Ժ Ո· Գ Ո Ձ Ի Ն· Գաւառ փոքրիկ ՝ի հար· արև· մտեան ափսնս Հնդկաց, ՝ի հարաւոյ Մալուա· բայ· ունի բերս անուռատելիս· Իշխան երկրին է բաձա ոմն· բայց գլխաւոր քաղաքն Գ Ո Զ Ի Ն կայ ընդ ձեռամբ Անգղիացւոց։

2033· Ժ Ե· Դ Ր Ա Ի Ա Ն Գ Ո Ր· Գեղեցիկ գա· ւառ ՝ի հարաւոյ Գոզինայ ցգլուխն Գոմորին· ունի անտառս, յոր գոգաւորն փիղք, վագրեք, կապուտիք և գոմիշք· Ոմն նաւահանգիստս վաճառաշահս· Ժողովրդք իբր 1,470,000։ — Գլխաւոր քաղաք Դ Ր Ի Ա Ն Գ Ո Ր, ՝ի հիւսիսոյ արևմտից Գոմորին գլխոյ։

Ժ Ջ· Դ Ա Ճ Մ Ի Ր· Գաւառ գեղեցիկ ՝ի համա· նուն հովտին, ՝ի հիւսիսակողմն Հնդկաստանի ՝ի բան· ձայսպ· առոգեալ ՝ի ձիւրամ գետոյ, որ գոլոչէ ՝ի նմա Ա Լ Ե Ա Ձ լիճ, և պարսպեալ բարձրաբերձ լերամբ հիմայսպ· Ընտանի և հովանի հաշվիրայ գեղեցիկ բուսաբերութեամբ և ընտիր ընտիր պտղովք և ծաղ· կանիք, յորս վարդն գերագոյն· Համեստալ են և չուք գաշխիրեան ՝ի ստեղ այծուցն· Ժողովրդք իբր 3,000,000։

Ս Ե Ր Ե Ո Ի Ն Կ Ո Ր կամ Գ Ե Ա Ր Ե Ր· Գլխաւոր քաղաք· յափունս ձիւրամոյ· Բն· 40,000։

ԻՍԼԱՄԱԳԱՏ • Ա՛ս Նովին գետով։

ԺԻ • ԼԱՀՈՒ • Ջրմուխ կախեալ ասացաք ի տեղագրութեան Բանճապայ Նահանգին կուսակալութեան Կալկադայ։ Գլխաւոր քաղաք Նորին Լահոր Երբեմն աճեալ մեծի Մողոլի, այժմ անշքացեալ է. կառուցեալ է յիւր Ռասի գետոյ։ Բն • 70,000։

ԱՄՐԵՏՍԻՐ • Ամուր և բազմաւաճ քաղաք, և տեղի պաշտաման գլխոյն Նանեքայ։ Բն • 100,000։

ՄՈՒԼԹԱՆ • Եւ սա վաճառաշահ, անուանի վասն համալսարանին մահմետականաց • Բն • 60,000։

ԺԸ • ՍԻՈՒՆԻՄ • Գաւառ փոքր ընդ մէջ ազատ պետութեանց Նեպալայ և Պուռնայայ, ի սահմանի բարձրագունից լերանց Հիմալայայ։ Ժողովուրդ երկրին 170,000 • որոց իշխէ բաձա մի և նոսի ի քաղաքին ԴՈՒՄԼՈՒՆ։

Գ • ԱԶԱՏ ՊԵՏՈՒԹԻՒՆՔ

2034 • Մի ըստ միոջէ նուաճեալ պետութեանց Հնդկաց ընդ ձեռամբ Անգլիացւոց, նկեալ և պոռնան ունցին ցարգ ազատք յայս կողմն Գանգեսի, յաբեւելս և ի հիւսիսի արեւելից աշխարհին, ի լեռնային սահմանս, որոց բնակիչք արուրագործք են քան զայլ հինաւուս, և ճարտարք յառաւօրս։

Ա • ՊՈՒԴԱՆ • Ցարեւելից նկեալ և ի հիւսիսի Պրահմաբուգայ, անձուկ երկիր լեռնական • Ել 8,000 փարս • քառ • որում իշխէ բաձա ոմն՝ Տէվ մահանուանեալ, և նսոի ի Դասուխուդոն քաղաք յարեմտեան սահմանս երկրին • Ժողովուրդն 1,500,000 ի Մողոլեան ցեղէ Թուխ։

2035 • ՆԵՊԱԼ (Nepaul) • Ընդ մէջ Դիպկեգայ, Սիքքիմայ և անգլիացի կալուածոց, 7,000 փարսախ քառակուսի • 2,500,000 բնակիչք • ի հիւսիսոյ նորա ամբառնան հիմալայեան բարձրաբերձ լերինք, ի հարաւոյ այլ լերինք որ անջրպետեն զնա ի հինաւուսնայ, ի բարձունս լերանցն կան անասունք և վայրկք ջուրց, կլիմայ բարեխառն է և կենսատու • բնակիչք ազգաւ ի հնդկաց են, այլ խառն ընդ նոսա բնակին և ցեղք ինչ Դիպկեգայ և Մողոլից։

Գլխաւոր քաղաք ՔԱՏՄԱՆԴՈՒ, անուանի ի գիրս հնդկաց • — ԿՈՒՏԿՈՒՐԻ և ԲԱՏՈՒ կոչեցեալ, բարձր է լերինսայ ծովու 4,500 ոտն • յորում կան փայտաշէն տաճարք և ապիւսեայ տունք • Բն • 30,000 • — ԿՈՒՐՏՈՒ քաղաք հայրենիք է արքունի տոհմին։

Դ • ԿԱԼԻՈՒԱԾՔ ԵՒՐՈՊԱՑԻՈՑ

2036 • Ա • ԿԱԼԻՈՒԱԾՔ ԲՈՐԴՈՆԱԼԱՑ • ԿՈՒՆ • Գաւառ յահմտից արեւմտից, ի պետաբուր, առ Մանուսաւա գետով 90 փարսախ • 100,000 բնակչաք, յորոց չասք քրիստոնեայ հնդիկք են • կոչ կամ ԲԱՏՈՒՏ քաղաքս յայսոդ ի վաճառականութենէն, ա Թոռ է կողմնակալն կառուցեալ ի կղզեկի ի բերան Մանասաւ • աստ նսոի նախագահ Եպիսկոպոսն Հընդկաց • 200,000 բնակիչք էին ի նմա, այժմ 2,000 • քանզի առ ձեռնէզյ օգոյն չուեցին և չասք բնակեցան ի նոր քաղաքն որ ի ցամաքի • յեկեղեցւոջն Յիսուսեանց նշանաւոր է դամբան Ս • Փրանչիսկոսի Քաւաբերեան որ Ասաբեալ կոչեցաւ Հնդկաց • Նոր քաղաքն կոչ, բարեչէն ի բերան Մանասաւայ, աճող է փոխարքային և առագործոյն, ունի նաւահանգիստս կրկին անջրպետ • Բն • 20,000։

ՏԻՈՒ • Կղզի ի հարաւոյ կուզերագայ լեռնային, անջուր, անբեր • ՏԻՈՒ քաղաք ունի նաւահանգիստ բաբի • Բն • 4,000։ Ասա երկիցս Լուսիտանացիք քաջօրհնեալք տարան պաշարման։

ՏԱՄԱՆ • Գաղաք փոքր ի կուզերագ ունի նաւահանգիստ և 6,000 բնակիչս, որք նաւակառոյցք են արուեստիս։

2037 • Բ • ԿԱԼԻՈՒԱԾՔ ԳԱՂՂԻԱՑԻՈՑ • ԲՈՆՏԻՇԵՐԻ • Գաւառ յարեւմտեան հարսնամեջ լայ, 70,000 բնակչաք • ի համանուն քաղաքի նսոի Գաղղիացի կողմնակալն Ասիոյ • կայ ի նմա արքունի տաճար, վարժարանք, պարտէզ անկաթա և վերին տաճար, վարժարանք, պարտէզ անկաթա և վերին տաճար, վարժարանք, պարտէզ անկաթա և վերին

Բ· ՀՆԴԿԱՍՏԱՆ

ՅԱՅՆԿՈՅՍ ԳԱՆԳԻՍԻ

2038· Հինդկաստան այս որ կոչի և Հնդկա-Երկիր, ընդարձակ և բարեբեր, ոչ է մէկ քաղաքանման որպէս պղնդկաստան· բայց միայն երկիրք նորա և քաղաքքն որ ի բերանս մեծաւն գետոյ· ձգի ի 27° մինչև ի 1° հիւս· լայն· և 88°–107° եր· երկ· Սահմանքն ի հիւսիսոյ՝ Երկ և Պուգան, յարևելից Երկ և Ծովք Երկնայ, ի հարաւոյ Ծովք Երկնայ և Պենկալայ, յարևմտից Ծոցն Պենկալայ և Պուգան Երկնայ· ունի զծոցս Հիամայ և զԻնդկքինկայ·

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

2039· Թուի յառաջնումն Մալակայ կղզւոյ հաղորդութիւն լեալ ընդ Սումադրայ և որս ընդ այլ կղզիս, և Ասիոյ կցեալ ընդ Աւստրալիոյ, որպէս հիւսիսայնոյն Ամերիկոյ ընդ հարաւայնումն ի ձեռն Բանամայ· Այսչափ ինչ ընդերքին գաւառացն յայտ է, զի գետք մեծամեծք ի հիւսիսոյ ընդ հարաւս ընթանան և հասանեն զաշարշն ի մեծամեծ դաշտս· յորմէ պարարտացեալքն զերկիրն· դիմաւորք ի գետոցս որք Թափին ի ծոցն Պենկալայ, են Պրահմբուտրա, Աբոտ, Խոսոպի գետ անարի, Ծիդդան և այլն· իսկ ի ծովն Երկնայ՝ Մենամ կամ Սիամայ գետ, Գոմագ կամ Մենամ-Բեռի, Սան կամ Տենոյի, Սան-գոի· Պարք երանց անտառախիտք ձգին ի ծոցն դիւս, և կարի պտղաբերք են· ածխ գագարիւն գազանք ամենից, փիղ և ռընգեզջիւր, վագր, յովազ, կապիկք մեծամեծք, և հաւք բազմատեսակ· ձուկն և գազտակուր առատ ի ծովս և ի գետս· ի վաճս նոցա գտանի ասաղ ոսկւոյ, և են հանքք արծաթոյ երկաթի կապարի, պղնձոյ, և ընտիր անագ ի Մալակա՝ ինչն ասացեալ· քարինք պատուականք, տպազիոն, շափիրազ, այլոյքն հանդերձ·

Ի բուսական սեռի նշանաւորք և յատուկք են աշխարհս՝ արձուկ կոչեցեալ ծառ, զորոյ փայտ Զինք ծախեն ի մեհենս փոխանակ խնկոյ· և այլ ազգ ազգ փայտից և խեժք պատուականք· այլ ամենայն բերք և կլիմայ նման է բնիկն Հնդկաստանի·

ԲԱՂԱԲԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

2040· Թէև բնակչաց Հնդկա-Զին Թերակղզւոյս հասմարի 24 միլիոն· որք ի նմին ի Հնդկայ ազգէ են այլ բարուք խոտիք և յեսենեաք ի կրթութենէ· բնակք արևելեան կողմանց խառն են ի Զինայ և քաջակիրթք են քան զայլսն· ի հարաւակողմն բնակէ Մալայի տոհմն· կրօնք ժողովրդեանն ի հաւասարակի պատուսեան դնին է·

Ժողովրդարձն պարապի յերկրագործութիւն, և մշակէ առատ քան զամենայն զորիս, որով և մնան· մշակեն և բամբակ, Թթենին վասն չերամ որդոյ, լեզակ և գետաք· Ձեւագործս ունին միայն մեսաքեաց և բամբակեայ կերպասուց· չինեն և զանգակս մեծամեծս ի սեաս մեհենեաց· Գոչինչինացիք ճարտար նաւագործք են· և գոն ի նոսա վաճառականք, այլ յաւելս Զինք են որք բառնան զաղխամաղոն և տանին ի Զինս և յայնմանս Հնդկաց· և բերեն անտուսա՝ յախճապակ և Թէյ և ձեւագործս չինացիս·

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆ· — Երիք մեծ ազատ պետութիւնք են Թերակղզւոյս, Շիամ, և Աննամ և Մալակա, և կալուածք Անգղիացւոց· ընդ որս գրելի է և Պիրման, զորոյ զգաւառս ինչ ի վաղուց հատեալ էր Անգղիացւոց, և ի հերուն (1852) բուռն պատերազմաւ նուաճեցին զերեքին զորոյն իսկ պետութիւնն· Միահեծան և բռնաւորական են վարչութիւնք ազատ պետութեանցն·

Ա· ԿԱԼՈՒԱԾՔ ԱՆԳԼԻԱՑԻՈՑ

2041· Անգլացւոց կալուածք գլխաւորք յայնկոյս Գանգեսի են գաւառք Պիրմանայ՝ որոց տէրացան ի 1825 ամէ և այսր· և են Ասսամ, Արաքան, Դեբ-նասերիմ, և արտաքոյ նոցին Բենանկ կղզի, մանն մի Մալակայ և Սինկաբորը կղզի· Ընդ կուսակալու-Թեամբ Պենկալայ են գաւառքս այսքիկ·

Ա· ԱՍՍԱՄ· — կայ յարեւմտից հիւսիսոյ Թեբակղզւոյն, ունի սահման ի հիւսիսոյ զՄուղան, յարեւմտից զՊենկալա, ի հարաւոյ և յարեւելից զՊիրման· 6–9.000 փարսախ քառակուսի, 620.000 բնակչաք· Հովսային է երկիրն ոռոգեալ ի Պրահմապուտրայ և պարփակեալ ի լերանց, բարեբեր է հողն, և կլիմայն որպէս զհիւսիսային Պենկալայ· անտառք բազումք են յԱսսամ, յորս գտանին միջատք որ գործեն զկարմիր խէժն, որպէս և չերմանց յոլովութիւն է անդ և մեռաքոյ· ի գետոց հանեն ոսկի ոչ սակաւ· Բնակիչք ազգաւ Հնդիկք են և քաջարիք քան զայլ ցեղս Հնդկաց· յառաջնգոյն պիրմանք սպրեցին նոցա, ի 1826 ամէ և այսր Անգլիացիք պաշտպան կացին, և զաշխարհն վարէ բաձա մի, որ նստի ի ՃՈ-ՐՈՑ քաղաքի յային Տ՚ԻԹ՚Ա· գետոյ·

Ասսամցիք ի հիւսից եղեգնաձեղունս բնակեն, և յանձրևային եղանակի ի մակոյկս եղեգնաձածուկս ծփան ի վերայ ծովամեռ գաշտաց ի յորդոմեծիճ անձրևի·

2042· Բ· ՃԻՆԴԱ և ԳԱԾԱՐ· Լեռնային գաւառք ի հարաւոյ Ասսամայ, 350.000 բնակչաք· անտառախիտ և երեսաւոր·

ԳՈՍՕՐՈՒՐ քաղաք է գաշարայ առ Պարաք գետով, որ ժամգակէ զՊրահմապուտրա·

Գ· ԱՐԱԳԱՆ· Անձաւուկ սահման ե երկրի, յարեւելից ծոցոյն Պենկալայ· և պարոյս լերանց անկըզպետի ի Պիրմանայ և յԻռաւաուտեայ· Ափունքն ՃՂՃղիկնք են և մանր մանր կղզիս ունին, Ճախնայիկք և վատասուն օգով· բայց ունի և բարեբեր վիճակս· Թիւ ժողովրդեան, 250.000·

ԱՐԱԳԱՆ Գ· Ք· առ Համանուն գետով, որ կոչի և Ք·-ԼՈՔՒ· Բն· 10.000·

ԱՔՒՏԻՊ· Վաճառաշահ քաղաք ի փոքու կղզեկի ի բերան գետոյն, նոր մայրաքաղաք Համարի·

Դ· ԴԵՆԱՍԵՐԻՄ· Ցայս անուն կոչին գաւառք ընդ երկայն ծոցոյն Մարդապանայ, և են ՄԱՐԴԱՊԱՆ, ԵԲ, ԴԱՎՈՑ, ՄԵՐՈՒԻ կամ ԴԵՆԱՍԵՐԻՄ· Ամենեքին լեռնայինք են բայ ի Մարդապանայ· և կղզիք մանունք ունիմք· Կլիմայ՝ ջերմին յոյժ, այլ ոչ վատառոյգ· Բերք երկրին լեղակ, ութք ընկոյզ, բամպակ, սեաւ պղպեղ, ժանիք փղոյ, մոմ, ծխանեղիք, և այլն, և գեանաձուխ· Բնակիչք 120.000·

ՄՈԼՄԵՆ ի Մարդապան, առ Սալուէն գետով, գլխաւոր և վաճառաշահ քաղաք, 35.000 բնակչաք, յորս գան և Հայք և Պարսք·


ՄԵՐՈՒԻ· Բարեշէն քաղաք ի բերան Դենասերիմայ·

ԴԱՎՈՑ· Ի բերան Իւրանուան գետոյ· Բն· 10.000·

Բ· ԱԶԱՏ ՊԵՏՈՒԹԻՒՆՔ

2043· Ա· ՊԻՐՄԱՆ· Երկիր ընդարձակ յաւրևմտակողմն Թեբակղզւոյն յայնկոյս Գանգիսի· Հեղուսն ի մարտի էր ընդ Անգլիացիս· Չոզբ պատուհասէն է· այլ ոչ են քաջածանօթք հանդամանք երկրին, ոըրոյ տարածութիւն համարի 30.000 փարսախ քառակուսի, և բնակիչք 4.500.000· Ցառաջ քան զամն 1756 երկիր Թագաւորութիւնք էին ի Պիրման, Արաքան, Աչա և Բենգու· Երկուստեք զսահմանք պիրմանայ ձգին պարբ լերանց՝ որով ի միջի գործի հովիտ ընդարձակ ոռոգեալ յհաւաւտի գետոյ· բերք նոցին են որ ի միջին հնդկաստան, այլ ընտրբք սեւասկաս·

Պիրմանք նախապատիւ քան զայլ ժողովուրդս երկրին պէտճան կոչեն զանձինս և Թուին ի Մողոլաց ազգէ· գեղապաշտք են անձամբ, ներկանեն զատամունս իւրեանց ի սեաւ, ոմանք և զերեսս· ժրաջանք, զուարթք, աշխոյժք, այլ ի մարտի անագորոյնք· աղբատք գրեմեթ մերկք և բոկք շրջին, և կերակուր նոցա է որիզ և ձուկն· կրեն հովսացուս արք և կանայք· — երկուս բարբառք են նոցա, սրբազան և ռամկական, էական և ֆոբեան, երկոցունս ևս որիշ ալիփաբեք են· սերեն զանասատզծուածին, և են նոցա քերդուածք և վիպասանութիւնք· Ձդիակունս աւագ մարդկան այրեն, զառակին թաղեն կամ ընկենուն ի գետ· Ընդհանականց նշան է թիւ շրթայիցն զոր կրեն յահեակ ուսի զանձինս փարեալ, մինչև 12 կարգս շրթայից ընծրհեալ է նոցա, ընթանականին 24 կարգք· սերեն ընծաս և ընծաւարանս, են նոցա աղէիազգի փողք և քնարք· և ի հասարակի կրթա-



Փռում Պիրմանաց

սէր բարս ունին քան զբազումս յասիական ժողովրդոց · առնեն և առաքառս ընդ Հինաց և ընդ Ասղիացւոց · կրօնք Պիրմանաց է պուտտեան աղանդ, Պոտ կոչեցեալ · բայ յայնմանէ պաշտեն 100,000 դիս և դիցուհիս, ընդ որս և զառասնայ յանուն Ռոտ · քահանայից կրկին գոյք են, կէսք Ռոհան կամ Ռահնի կոչին և կեան ամբոր ի միաւսանան որ Վոհ կոչին · և են նոքա խմաւսունք ազգին, պարապեալք ի դասատարակութիւն մանկտւոյն և ի կրթութիւն ժողովրդեան, և մարգասէրագոյն բարս ունել ասին, և յետին անանկք ուսանին ընթեռնուլ առ նոսա · և այլք Դաւթոհն կոչին և են միանձունք մերաբակեալք, նոյնպես ի հրահանգութիւն ժողովրդեանն պարապեալ · տաճարք նոցա նոքանշանք իմն են անչէրեզ սեամբք և զարդուզք քանդակաց խիտ առ խիտ : — Բազում անգամ մարտուցեալ ընդ Անգղիացիս և տուժեալ գաւառս մեծամեծս յամին 1826, կրկին բորբոքեցին մարտս սաստիկ յամին 1852, և չարաչար հարեալք ի ծովն և ի ցամաքէ՝ նուաճեցան առ վայր մի :

2044 · Ամարապուրա · Ցեզը հաւաստատեալ · վանս մեծի հրդեհին և սաստնութեանն լքաւ, ղի մայրաքաղաք էր ինքնակալին : Բն · իբր 30,000 : Նշանաւոր է ի սմա տաճարն Արագանայ 250 փայտեայ ոսկեզօծ սեամբք :

Աիա կամ Ռանգա-Բուրա · Բազում տաճարք են ի նմա փայտակերտք, որպիսիք են և տուքն : Ցամին 1834 այս քաղաք հաստատեցաւ լինել իշխանատեղի նիստ · և յետ ամաց հնգից ալարեալ ի սասանութենէ անչքեցաւ : Բն · 30,000 :

Մանգոյ · աւան, յոր նստեր ինքնակալն յետ աւերածոյն Ասայ :

Բեկոն · Մայրաքաղաք համանուն աւերութեանն · Պիրմանք քանդեցին զայն, և Թողին միայն գՇուէմաու (ոսկեմեհեան) տաճար մեծակառոյց բրգաձև աղիւսեայ ոլեմանկիւնի խարսխաւ բոլորշի կատարաւ, յորոյ ծայր ագուցեալ է հովանոց երկաթի ոսկեզօծ, 56 ոտն շրջաբերութեամբ, 331 անգղ · ոտք են բարձրութեան նորա · յատեղակս քաղաքին բնակէն իբրև 7,000 արք :


Ռանկոյն կամ Րանգոյն · Աւ հանուն վտակն Խաւսատեայ, անուանի նաւահանգիստ և բազաւոր վաճառականութեամբ, և մեծերանոց նաւաց կառուցման · 40,000 բնակիչք էին նորա, յորս և Հայք և Պարսք և մահմետականք · այլ յամին 1852 Անգղիացիք ռմբակոծ արարեալ գրեաթէ խեղան կղզին զքաղաքս զայս :

Մերմ ի Ռանկոն նշանաւոր է Շուէթաղն ուխտատեղի մեհեան բրգաձև, ունի հովանոց 29 ոտնաչափ շրջբնականաւ · բարձրութիւն տաճարին 338 ոտք, որով բարձրագոյն հանրի ամենայն ծանուցեալ շինուածոց Աւիոյ · ոչ ինչ հեռի անտի կայ պղնձաձոյլ զանգակ եօթն կանգուն ի բարձրութիւն և 6 ի շրջաբերութիւն, 12 բթաչափ Թանձր :

2045 · Բ · Սիամ կամ Շիամ · Կայ յարեւելից Պիրմանայ, ընդարձակ գաւառ և հզօր պետութիւն, ընդ 96°–104° արև · երկ · և ընդ 7°–20° հիւս · լայն · անյայտ է ներքին գաւառին, բայց պարբ լերանց երկոտանեք երկայնեալ գործեն ի միջի հովիտս մեծ ի մէնամ գետոյ ոռոգեալ, որ ի յուլիս ամսոյ մինչև ի դեկտեմբեր առատացեալ զեղուլ և պղպեքերս չարդարէ զսխումս իւր · կլիմայն տապադին է և չնաշակաւ · սահմանք Շիամայ ձգին և յեզերս Մալակայ մինչև ի Գամբոճ կղզի, նոյնպես և չարևելակողմն զծովածոցսն · Համարէն տարածութիւն 28,000 փարսախ քառակուսի, և ժողովրդոյն 5,000,000 մարդկան, Թէպէտ և ոմանք համար ին 3 միլիոն միայն, և այլք 6 կամ 8 միլիոն · Երկիրն բաց ի գետափանց անտառային և աւազուտ է · բերք նոյն են որ չայլ կողմանս Թերակղզւոյն, որով և եղէգն չաքարի միայն ընծիր են ի բուսականն : — Շիամացիք Թուխ կոչեն զանձին, զընտանութիւն Շինաց ունին · կարճիկք են, գլուխ նոցա քառակուսի ինն ճնշեալ, ճակատ տափակ, աչք մանուկք և շիկակաք, չքմուխք Թանձր, ականջք երկայն, հերք և մորուս նուազ · սիրեն զկնիս և զՀիւրս, չնՀեն աւազաց, հարեւաք են զաւգահրութեան և զվնկրութեան · կերակուր նոցա է ձուկն և որիզ, ծխեն զծխալ և զվնկեզէլ · մեծաւորք բնակեն զշշարակ արմատս · շրջին կիսամերկ · բնակութիւնք նոցա ի վերայ գերանաց կամ ցցից կառուցեալ են բարձրացեալ յերեսաց երկրի վասն ջուրցն



Պատուհ Նաւակ Շիամաց



Տաճարն Շուէմատու ի Բեկու

ողոլման . մեծատուներք բազում ծախս առնեն ի զարդ գ•ան հանդիսի նաւակաց որով չքնին : Կրօնիւք պուտտեականք են , պաշտեն զՍո•ժմնա Գ•ոդ• . աստուածամարդկան պաշտօն ընծայեն և ապիսակ փղի : Թագաւորին ամենեկին ինքնակամ է իշխանութիւն , ազատ և անազատ սորուկք համարին նըմա • բնաւ ոչ երեկ նա ժողովեան խորհուրդ , և պաշտօնեայք նորա գետնատող մատչին առ նա • երբեք մարն ընչից մեռելոց յայլբուխս գրասի • պաշտամունք տե-



Թագաւոր Շիամայ

րութեան ժառանգութեամբ անցանեն յորդիս :

ԱՑՈՒ ԹԻՒՆ զոր Եւրոպացիք ՍԻԱՄ կոչեն քեռայրաքաղաք է ի Մենամ կղզւոջ . հին ի նմա բերդ , գաղպաք , 200 տաճարք , յորոց չատք կանդուն կան ցարդ • նոյնպէս և արտաքոյ քաղաքին են ոչ սակաւ մեծագործ վիհուածք : Բն • 30,000 :

ՊԱՆԳՈՒՔ կամ ՊԱՆԳԱՍՕՔ ընդ 13° հիւս • լայն • չափ հասան նաւահանգիստ , արքայանիստ : Բն • 60,000 , կիսով չափ Ձինք : Երբ ի սմա Գաղղիացւոց կառուցեալ ամրոց մի զոր ի 1690 կործանեցին բնակիչք տեղւոյն : Թալ մի քաղաքիս կառուցեալ է ի վերայ լասոյ ի խաղս Մենամայ • բազում են մեհեանք Պուտդայ ի սմա :

2046 • Գ• Ան Ա Մ • Երբեմն գաւառ էր սա Ձինաց տէրութեան , վասն որոյ և Անամ կոչի , որ ի

Ձինաց լեզուն Արևմտաց լսի, գոլով յարևմտից կողմանէ Ձինաց աշխարհի, յարևելս Թեբակղզւոյն, ընդ 9°–23° հիւս լայն. 100°–107° արև. երկ. ընդ մէջ Ձինաց, Պիրմանայ, Սիամայ և Ձինաց ծովոյս, որ գործէ ի սահմանս նորա զծոյն Անամայ կամ զԴոնկքին: Գառաջագոյն Անամ բաժաներ ի հիւսիսային և ի հարաւային կամ ի Դոնկքին և ի Գոչինչին յոտրոյն պետութիւնս, զոր ի 1799 միաբանեաց իշխանն Անամայ հարաւայնոյ` ոտյտասմբեալ ի Ձինաց. տարածութիւն երկրի նորա համարի 18,000 փարսանգ քառակուսի, և ժողովրդք առաւել քան զ12 միլեոն, բայց են որ նուազ յոյժ համարին: Հիւսիսային մասն ևեթ Անամ մարդաշատ է, քանզի այլ գաւառքն լեռնավայրք և երկրոտքք են. անտառք հին, ատուրց պահին զսպաս լերանցն գազանաւտս և օձաւս: Գլխաւոր գետ երկրին է Գամդամ կամ Մայեռ՝ որ ի Դիպէդայ գայ, և են նորա կանոնաւորք զեղուածք. կլմայ հիւսիսային գաւառին բարեխառն և ապաիք է, բայց ջուր չէ քաղցրահամ, վասն որոյ Թէխ բժիշկն զանխմութիւն նորին. ի ծովափունս ընէ խիտ մրրիկ և չէք անդ նաւասնդիտ անքոյթ: Դուն յԱնամ ոսկի, երկաթ, պղինձ, տապալիոն, գոմար, և այլն:

Վասն ցամաքայն գաւառս հիւսիսային Անամ բարգաւաճ է, բազմապատիկ ջրագործիք երկրին ոռոգեալ է ըստ կարի արգասաբեր, բերէ շաքար, պղպէղ, կոճապղպեղ, բամբակ, լեղակ, մուշկ, մեխակ, Թէյ, և չերամ որ նիւթէ մետաքս ընծոյ: Ի ձկնորսութեան հռչակեալք են Ընհաղեայք, Թէպէտ ոչ հեռանան յափանց ծովոյս. առևտուր նոցա բարգաւաճ է, այլ ըստ տարաց չառնեն վաճառականութիւն, բայց միայն ընդ Ձինաց:

Անամք ի Մողղալ ցեղէ են և նմանք Ձինաց. զգենուն պատմուճանս երկայնս և լայնս, սպիտակ գոյն առ նոսա սգոյ տեսակ է. Թագաւորն և աւագանին գեղին զգենուն. փոխան պատառաքաղի ի սեղանի վարեն սրածայր կարճ բարսմունս զոր և զգօտւոյ կախեն ցանկ. բարուք մարդասէրս և ազնիւ բնոյս ասին լինել, միանդամայն և պղերգք և որկորեալք և Թեթևամիտք: Օգիս մեռելոց խրճանց ջեմանանակ մի գաւազան պահեն ի տան և ապա թաղեն: Ցուսման և ի հրաժանգս արուեստից յառաջադէմք են նաւասարդ Ձինաց, զորոց Թարգմանեալ ունին զմատեանս. են նոցա և աւագական քերդուածք զքաջազանց իւրեանց. բարբառ նոցա նման է Ձինաց լեզուի և նշանագիրք նոյնք են նոցա: — Ի հաւատս կրօնիչ՝ Թագաւորն և մեծամեծք կոնփուկեան են, ռամիկն Պուտտեան. ընդ որս և իրրև 300,000 քրիստոնեայք ուղղափառք. զի զքրիստոնէութիւն քարոզեցին առ նոսա Բորդոգալք և առաւել ևս Գաղղիացիք. տաճարք նոցա չեն գեղեցկաշէնք, քահանայք ոչ ս-- կոչին զաւերզրպապաշտութիւն սերմանեն ի ժողովրդեան:

Թագաւորին միապետութիւն զարգս ի վերին և ըստ հայրանիստ կերպարանի. աւագ պաշտօնակալք յազատաց միայն կարգին. զրնկալ զինուորութեան նոցա և հասից և մտից բարւոք կանոնեալք են ըստ եւրոպական կարգաց, որպէս պատմեն ճանապարհորդք:

2047. Պնդիճոկ կամ Բանգկոք, առ Սանկքոյի նաւարկելի գետով է հին մայրաքաղաք, ունի ամրոց Թիլեա, և արքունի տպարանս ընդարձակ: Բն. 40,000: — Իսկ այժմեան արքայանիստ քաղաք է Հուէ կամ Քիոճուճան յարմունս Գոչինչինայ, ի հարաւային Անամ, յեզր կուկ գետոյ. ունի միջնաբերդ պնդարան, մեթեռոցս, տաճարս, ձուլարան, և այլն: Բն. 50,000:

Գամդոճ. ի կղզեղ միում Մայքաուճկայ, ունի արքունի պալատ, և մեհեանս:

Սգճոկն կամ Լոիճոնոյ ի գամպոճ, նաւահանգիստ երեսելի ի բերան Տոնայեայ, անդ զտեղի առնու նաւատորմն. Բն. 100,000:

Ի սահմանս Ձինաց և երկուց ազատ պետութեանցս Սիամայ և Անամայ ի լեռնավայրս բնակէ Լաոս ժողովուրդ, որոյ մասն մի հնազանդ է պետութեանցն, և մասն մի ազատ:

2048. Դ. Մալագի կամ Մալագդա. (Արեւա-Բերդոնիսոն) Թերակղզի որոյ չէն քաջայայտ սահմանքն, կարծի ունել իբրև 8500 փարսախ տարածութեան. պարբ լերանց 7000 ոտնաչափ բարձունք ձգին ընդ երկայնութիւն նորա, անտառագեղք և ջրարբիք, կլմայ բարեխառն, և բերք երկրին ընծիւք, մանաւանդ ածաս և ֆոկ քաղցրահոտ և առնչահամ պտուղք. այլ մշակութիւն, ճարտարութիւն և վաճառականութիւն ամենևին յետնեալ են առ բնակիչն, որոց Թիւ համարի 1–800,000. Մաքք կամ Մալացիք մի ի հնդից ցեղից մարդկան՝ փոքր են մարմնով քան զԵրոպացիս այլ բարեյոգք, Թիակերք և գանգուրք, մեծաբերան, խայտակն, կարճաքիթ, երկայնադէմ, անմերձուս. բարուք անգութք, արիւնահեղք, հանապազ մերկք և զինեալ չորքին, և զէնք նոցա են ֆէյս սուր, և նետ գեղեալ. աբջ միայն ի մարտս, յաւազակութիւն և յորսորդութիւն պարապին, զորդն ամենայն ի կանայս Թողեալ. և սոքա զարդասէրք են յոյժ և պճնին ոսկւով և շքիւ, ապարիջանօք և ագամանդիւ. կերակուր նոցա է ձուկն և արմաւք, յրմպակելեաց միայն սփիոն յաճախեալ է առ նոսա. կրօնիւք մահմետականք են. բարբառ նոցա քաղցրալուր է:

Հիւսիսակողմն կղզւոյն զարգիս ի ձեռս Անգլիացւոց է, արևելակողմն Սիամաց. հարաւակողմն ևեթ ընդ ինքնիշխան տերութիւք կառավարի. այլ քաղաքս կանոնեաւն հնոյք չերևին ի նոսա. չէք նոցա քաղաք նշանաւոր. բայց Մալագդա քաղաք, 5,000 բնակչօք ընդ ձեռամբ Անգլիացւոց, ընդ որոց էր հանոնեաւմբ կան 36.000 ոգիք միայն:

Ազատ պետութիւնք են Մալացկոր, Բաճաճ, Ճոհոր, ի հարաւակողմն Թերակղզւոյն. իսկ ընդ ձեռամբ Սիամայ Լիկոր, Բաճեան և Բիեցկ կամ Գունեցկ:

Ի նեղքին Լերնոս գոն և տոհմք Բաթուճեաք, ամենևին բարբարոս:

Գ· ՀՆԴԿԱՅԻՆ ԿՂԶԻՔ

2049· Յերէս պարս գահին կղզիք Հնդկաց· եր-
կուք ի Հնդկային ովկիանոս, ոմն յայսկողմն գան-
գեսի, և ոմն յայնկողմն, և միան ի խաղազականն
ովկեան, կէսք ի սոցանէ կալուածք են եւրոպեա-
կան պետութեանց և կէսք ոմանի և բնիկ պետու-
թիւնս, յորս են միահամուռ 29,000,000 բնակիչք։

Ա· ԿՂԶԻՔ ՅԱՅՍԿՈՂՄՆ ԳԱՆԳԻՍԻ

2050· Ա· Ա Ի Ց Լ Ա Ն· Մեծ և կարևոր քան
զամենայն կղզիս բնիկ Հնդկաստանի, կոչի և Սիմու-
տի և առ հին Տապրոբաղա կամ Սելէկէ· նէզուզ
Բաւ և Ծոցն Մահաճ բաժանէ զսա ի հարաւոյ Հընդ-
կաստանի որ յայսկոյս Գանգեսի· տարածութիւն նո-
րա 3100 վարսախ քառակուսի· Անհարթութիւնն
հիւսիսակողմանն և կոյս կոյս ասաղձ որ ի տե՛ս-
տուածեան Ծովուն ի վեր երևին՝ կարծեցուցանեն
սահանուածութեամբ զսառուցեալ ի ցամաքէ· ի Ծովա-
կողմն կուսէ Սէյլան ունի լերինս յորս բարձրագոյնք
են Բէթրտալա-կա իբրև 7300 ոտք, և Կոմբ կամ
Սոր Ադամ 6680 ոտնաչափ· ի գլուխ նորա կայ
վէմ կառնիտևայ ընդ փոքու մարգաւազ, յորոյ վերայ
պաշտեն Պուտաեանք զվնիքս ոտից Պուտայ, և հին-
տուք զնիվայ· իսկ Մահմետականք ասեն, նախահօրն
Ադամայ անդ առանձնացեալ ի Ցգնուածին զամս
200, վասն որոյ Սոր Ադամայ կոչի վայրն· առ նո-
ւազ գնալ Սէրենիպ, ցուլտ վտակ, յորում մարգն
ոսխասաղք· Անտառք գեղեցիկք են ի լերինն, ա-
րևելակողմն նոցինպէս լեռնավայր է և նաւահանգիստս
ունի անբոյսթա, բայց արևմտեան ափունքն գնտագոյնք
են և նաւահանգիստ ոչ գոյ ի նոսա· կլիմայ երկրին
նման է Տէքանայ, մշակութիւն ոչ է բարգաւաճեալ·
գլխաւոր բերք նորին են կինամոն, քաջիկ, պղպէղ,
որիզ սակաւ, միրգք· Կայ ի Սէյլան և փիղ փոքր
հասակաւ· ի բովուզ անգիկ, շարիկ ևս և գոշար,
և մարգարիտ պատուական ի Մանաար Ծոցի· յատ-
կութիւն և ի փետրուարի իբրև 30,000 մարդկան գնան
ի գանուածի ափունս յորս մարգարտոյ։

Բնակիչք կղզւոյն Թուով 1,500,000 Սինհալէ կո-
չին և օրինս հաւանական կարծի՝ Հնդկաց ազգակիցք
են, որպէս և նման նոցա ի լոյս գասակարգս զա-
տուելեալ· Սինհալացիք գաղթ են բարուք այլ ի բար-
կութեան վրէժիւնդիրք յոյժ· զաղանգ պատուական
ունին· բայց և քրիստոնեայք յոլովք են ի նոսա,
և շատք հաւատկանք· ի լերինս և յանտառս բնա-
կեն պէ՛ս-կամ վէդդաք ժողովուրդ և կան յորոց
անասնոց· կան ի ժողովրդեանն և Դուբոյխ որ են
սերունդք Լուսխանացւոց յազգականութենէն բնա-
կաց երկրին։

Լուսխանացիք զառաջինն ի 1505 հաստատեցան
ի կղզւոջս վասն յաջողելոյ ի վաճառականութեան
արգասեաց կինամոնի, այլ սակս հարատաևարութեանցն
առելի լեալ իշխանի կղզւոյն գիւրամուտս արարին
զՀոլանտացիս ի կղզին և ինքեանք մերժեցան (1656),
այլ և զՀոլանտացիս վանեցին Անգլոացիք ի 1795, և
նուաճեցին զինամի զարթայանիան և զինագործն
գերի վարեցին ի Մատրաս։

2051· Ի հինգ գաւառս պրտհին զՍէյլան, յորս-
ելեան, հարաւային, արևմտեան, հիւս· և միջին։

Բնիկ գլխաւոր քաղաք կղզւոյն է Գալտի յեղ
Մահաճին գեաղ, 3,000 բնակիչք· պատեալ յան-
տառաց և ի լերանց· կան ի նմա մեզգոցածք վա-
զելի արքունեացն և որ ի նմա մեչետին, յորում
պահի ցարդ առասին մի Պուտայ· Հուսկ ի Տ՛ոմ-
ւա կան մեչետք հատեալք ի վիմի· — Ալիմմա մայ-
րաքաղաքն է Գալոմպոյ, ի ծովեզերին յարևմտա-
կողմն կարի վաճառաշատ, ունի ամրոց բաբէղէն, և
40,000 բնակիչս· ի սահմանս նորին են վիճակք հե-
նամոնի· — Աւրքէյ գեղ փոքրիկ ի ծովեզերին ուր
որսան գմարգարիտս· — Դիւհնդոմալէ ունի նաւահան-
գիստ մեծ և անբոյսթ քան զնաւսս որ յարևելեան
Հնդկիս· ամեայ է քաղաքն այլ անմարդի և սահմանք
նորա անապատս· — Պալիհուլոյ, և սա ունի նաւա-
հանգիստ վաճառաշատ· — Կալ կամ Նուա Կալօ
յարևմտակողմն Տարասային ծովեզերակ, ունի ամրոց
բերդ և նաւահանգիստ, անուանի առևրշաւոն օ-
գուտիւ, վաճառականութեամբ, և առատ բերմամբ
ձկան։

Կոնրանդրուս· Քաղաք է աւերակ կառուցեալ
յԱ դարու· կան անդ մեծագործ մնացորդք չինուա-
ձոց, կշռոյ սրմանք և բրգունք· և ի Դոնդուր յայ-
լեալ քաղաքի բոլորշի մեչետիք և մեծամեծ անդրիք։

2052· Բ· Լ Ա Ն Տ Ի Վ Ի Ա Ն կղզիք յարև-
մտեան Մալայապայ ընդ 70°–72° արև· երկ· և ընդ
10°–12° հիւս· երկ· քարուքար և անբերք· յորոց
միայն 17 բնակիչք, այլ գիժաւարամբերձնալիք առ
խորակաց բառոց· ի ծովեզերին ժողովեն զ՛ո՛ր-
խեցեմորթ, զոր վարեն Հնդիկք փոխան դրամու·
Բերք կղզեացն են գոգոյ նեթ· Բնակիչք խաձուղք

են Արաբացւոց և Հնդկաց մահմետական կրօնիք, իբր 7,000 ոգիք. են նոցա իշխանք ազգայինք. բայց կղզին կալուած համարի Անգղիացւոց։

2053. Գ. ՄԱԼՏԻՎԵԱՆ կղզիք, յարեւմտից հարաւոյ Տէքանայ, առ հասարակ մեծ և փոքր իբրև 12,000 կղզիք. շուրջ պատեալ ի խարակաց բայց որպէս զի գծուարին է նաւաց մերձենալ ի նոսա. 40 կամ 50 միայն բնակեալք են և բարերբեր քան զԱգաթիվեանս և առնեն առևտուր ընդ Հընդկաց որ յայսկոյս գանգիսի. խաղաղականք և համբոյրք են բնակիչքն մահմետական ազանդով, և իշխէ նոցա սուլթան ազատ բնակեալ ի ՄԱԼԷ տուրս և գեղեցիկ քաղաքի ի համանուն կղզւոյն. բայց և նա համարի ընդ պաշտպանութեամբ Անգղիացւոց։

Դ. ՉԱԿՈՍ կղզիք ի հարաւոյ Մալտիվեանց, խարակք են բայց և բերեն միայն գոգոյ. գլխաւոր կղզեացն է ՏԻԵԳՈ ԿԱՐՑԻԱ. սակաւամարդ են յոյժ կղզիքս։

Բ. ԿՂԶԻՔ ՅԱՅՆԿՈՅՍ ԳԱՆԳԻՍԻ

2054. Ա. ՔՆԱՄԱՆ կղզիք ի ծոցին Պենկալայ, յորս ջրիք գլխաւոր են և ուժգին փոքունք պատեալք յեւս մանուանց. կլիմայն անչափ տօթագին է Եւրոպացւոց. Անգղիացիք ի հիւսիսի մեծին Անամանայ յարգարեցին զԱ-ՆԱ-ՆՅԱ Նաւահանգիստ յոր ուղղին նաւք ալեկոծեալք. լեռնային են կղզիքս և անտառամոյք. բնակիչք իբրև 3,000 ի խաչկաց անտի, ամենևին զուրկ են ի կրթութենէ. Նայ տրաքուիս մի ի Պ-ՐՐԷՆ կղզւոջ։

2055. Բ. ՆԻԿՈՊԱՐ կղզիք ընդ 90°–92° աբևել. երկ. և 6°–9° հիւս. լայն. 10 կղզիք միջակք և մանուանք յոլով. բարերբեր են յոյժ, այլ ախտաբեր օդով, և կքեալք Եւրոպացւոց. Դանիք ի 1760 տիրացեալ կղզեացս կոչեցին յանուն Փրեսերիկոսի, այլ մեկնեցան ի 1768, և յառաջ քան զամս կաւ ամս՝ Թողին Անգղիացւոց։ Բնակիչք 10,000 ի Հնգկաց անտի որ յայնկոյս գանգիսի, աղաղք և անգլուխք գաղարեն ի գիշոյ մանուանս, և պարէն նոցա է ձուկն, բայց մարգասեղք են բարեք։

2056. Գ. ՄԵՐԿԻ. Անտառամոյ և լեռնային կղզիք յայնկոյս գանգիսի ընդ 94°–97° արևելեայն երկայնութեամբ և ընդ 6°–14° հիւսիսային լայն։ Գլխաւորն ի կղզիքս ՍԱՒԱԿՈՒ կամ ԵՈՒՖՈՒՏԵԱՆ անձուկ ջրանցիւք բաժանեալ ի ցամաքէ, երիվր տափարակ և անտառային. բնակիչք իբր 12,000 ի Նմա, Մալացիք և Հինդ. ուր նի վաճառ և բոյն Թուղնոց ուտելի, այլ ոչ յոյժ հաճելիք։

2057. Դ. ԲԵՆԱՆԿ կամ ՐՈՒԼՈՑ ԲԵՆԱՆԿ կամ ՈՒԵԼԶ ԻՍԼԱՆԴ կղզի. ի մուտս ջրանցիւ Մալակայ, 20 վաթսուն տարածութեամբ. ունի լերինս և անտառս և վտակս, պտղաբեր վճաճաս և վաճառականութիւն բարւոք, կլիմայ բարեխառն և կենսատու. Անգղիացիք ի 1785 տիրացեալ կղզւոյն սերմանեցին անդ եղէգն շաքարի և քաֆէ և պղպէղ. առնեն տուրսառ մեծ ընդ Հինս և ընդ Մալակայ։ Բնակիչք կղզւոյն 40,000։

ՃՈՐՏՈՐԱՑՆ. Ջալաք բարձրաճաճ և ամուր, ունի մատենադարան և լցագիր։

Հանդեպ կղզւոյն յեղեր Թերակղզւոյն կայ ՈՒՏԱԼԷՋԷԼԻ գաւառ 50,000 բնակչօք՝ ընդ վարչութեամբ իշխանի կղզւոյս։



Սիճկարայ

2058. Ե. ՍԻՆԿԱՓՈՒՐ. Սպառուած հաբատոյ Մալակայ, 34 վարսախ քառակուսի, 50,000 բնակչօք. երկիր բարերբեր ընդ բարի կլիմայիւ. վասն յաջողելոյ վաճառականութեան ընդ Հինայ՝ Անգղիացիք տիրացան նմին ի 1818, և այժմ երթայ և յաջողի կղզւոյն. կառուցին զՍԻՆԿԱՓՈՒՐ քաղաք վաճառաշատ, ուր նստին և վաճառականք Արաբացւոց և Հպայոց և եկք ի Հինաց. ունի վարժարան մասնայ, լցագիր մի, պարտէզ տնկաբանութեան. և բն. 20,000։

Գ. ԿՂԶԻՔ ԹԱՂԱՂԱԿԱՆ ՈՎԿԻԱՆՈՒ

2059. Բնդ 93°–130° արև. երկ. 19° հիւս. լայն. և 11° հար. լայն. սեռական կան կղզիք ի հարաւոյ Հնդկաստանի յայնկոյս Գանգիսի. Եզուսպրէ Պարպոզա զառաջինն ի 1519 ետ Յանուանէ զայնցանէ. Լուսնասնայիք և ըստ նոցանէ Հոլանտացիք կալան անդ զտեղի, և ապա Անգղիացիք փոխանակեցին և Յանուագին զՆանգամանս կղզեացն։ Ընդ երիս Ճանապարհս գան այսր Լեբրոպիոյ, մի ընդ անցս Մալակայ ընդ ԱՀը Սումատրայ և արեւելեան Թերակղզւոյն, երկրորդ ընդ Սունդա ընդ ԱՀը Սումատրայ և Ճաւայ և այս յաճախեալ է. երրորդ ընդ Պալի ընդ ԱՀը Ճաւայ և Պալեայ՝ ընդ որ ի հարկի ևեթ Նաւեն. բայց և յաճախինան անդ վաճառք պատահին ի յորձանաց։ Ի չորիս խուցիս վերածեալք զկղզիս զայսոսիկ, ի Սունդա, ի Մոլուկ, ի Փիլիպպեանս և ի Սուլուս։ Ոմանք յաշխարհագրաց Ովկիանիոյ ման համարիցան զկղզիքս զամենեսեան։

2060. Ա. ՍՈՒՆԴԱՅԻՆ Կղզիք. յանուն Սունդեան անցին. Ա. ՍՈՒՄԱՏՐԱ և զսա բնակացեայ նորին Նաեվնոց, ընդ 93°–104° արև. երկ. ընդ 6° լայն. հիւս. և ընդ 6° լայն. հար. 20 կամ 23,000 փարսախ քառակուսի. պարք անառագախիտ լերանց տարածեալ են ընդ հանուրս և բարձր է ի նոսա գագաթն 15,000 ոտս, են անդ և տիրաբոյիքք. գետք բեհեզաք ի սոյնէ հոսեն ընդ արեւելս կոյս. կլիմայն Թէպետև ուրեք ընդ հասարակածիւ այլ բաքեխառն է քան զԱրեւելեան ափունքն ևեթ վասն մերիցն անհանգուրժելի են Եւրոպացւոց։ Ի բերան բաց յայնցանէ որ հասարակք են և ցամաքի Հնդկաց, գիշատուորք են հանքք ոսկւոյ, պղնձոյ, անագի, ծը-ծմբոյ և զինկի. և պղպէղ շատիր. քաֆուր, և ծառնկի հակայ ---ֆիլէֆ- առատեալ որպ 3 ոտնաչափ է տարածուռնեան. ազգ ազգ կապկաց, որպէս օրանկ-ուտանկ և Ճիպոյոն, փիլ, վագր, վարազ, ցուռ, խոզ Հնդկաց. ---լօֆ- Թռչունն որ է ազգ ծիծառան, գնէ զբոյն իւր ի բարձրագոյն ի յանկոխիլն ծայռս, ի Սալանկա կղզւոջ յոլով են ծիծառունքս, վասն ուրոյ և զանուն տեղւոյն առին։ — Բնակիչք Սումատրայ իբր 2,500,000 են որ բնիկք են, որպէս Պոեղայ, Ռեֆֆլէ, Լաֆ---ն։ Պագայք ի լերինս բնակեալ վայրագք և անագրոյիք. իսկ յեմիցն բնակեալ ի հարաւակողմն կղզւոյն Զինաց ազգակից համարին. ազա ունին տարօրինակ սովորութիւն գրելոյ և գրելագասակ գլխոյ տափակս յարգարել և գրանշանս երկայնել. և եկք Մալացիք Թռուով և գանձանքն երկայնել. և եկք Մալացիք Թռուով և առևուտ քան զբնիկս. բայց ի սոցանէ բնակին ի Սումատրա և Ճինք և Ճաւացիք և Եւրոպացիք վաճառականք. Ընծանոթ են ցարդ ներքին ազաարշն և ափունք հիւսիսոյ՝ վասն վայրենի հինից որ անդ կեան. իսկ ի ծանոթ պետութիւնս ընքնիչանս գիւատուորք են.

2061. ԱՃԻՆ. Ի հիւսիսակողմն կղզւոյն, մարգասատ, բարեբեր, վաճառաշահ. ԱՃԻՆ մայրաքաղաք յառաջագոյնէ ի վաճառականութեան. Բն. 36,000։

ԲՈՏԻ և ՍԻՆԳԻԼ յափունս արևմտից՝ ընդ 2° հիւս. լայն. ունին նաւահանգիստս։

ՄԻՆԱՆԿԱԲԱՈՒ. Պարուրեալ ի խոր ազաարհին, քանզի յառաջն սահմանք նորա ձգէին մինչև ի Տոլափունս. այլ Թագաւորութիւնս այս ցարգ հակառակութիւն է ի կղզւոջն։ — ԲԱՆԿԱՐՏԱՆԻԿ գՂԶ. հաւոր քաղաք, ուր գան Մալացիք յոլով։

ՍԻՆԳ. Ցարևելակողմն, ուր յելևզակաք նեղեն զանցորդս ընդ Մալակա։

ԽՏՐԱՔՈՒՐԱ. Ցարևմտակողմն, իշխան երկրիս հարկառու է Հոլանտացւոց։

ՐԱՒԱՄՊԱՆԿ. Ցարևելից հարաւոյ, ի 1811 իշխան նորին ևս ընդ սուր հանել զամենայն այր հոլանտացի, վասն որոյ հալածեալ զնա Անգղիացւոցն առին զպահպա կղզի և զերկիրն գարձուցին ի հոլանտացիս։ Դիւաւոր քաղաք ՐԱՒԱՄՊԱՆԿ ի բերան հաւարկելի գետոյ, իբր 30,000 բնակչաք։

Բայ ի սոցանէ կան ի Սումատրա քաղաքք նշանաւորք ի ձեռս Հոլանտացւոց. ՊԵՆՈՒԼԷՆ ընդ 3° լայն. հար. ունի բերդ Մուրջոյ անուն և 6,000 բնակիչս։ — ԲԱՏԱՆԻ ընդ 1° հար. լայն։ — ԴՈՒՌՈՒ. ՆՈՒԼԻ խորշ ծովու կայսրան հաւատարմին, ունի բերդ ամուր։ — Ցարևելակողմն Սումատրայ նշանաւոր է ՊԱՆԴԱ կղզի 1,000 փարսախ քառակուսի, 30,000 բնակչաք, յորում կան րուք անագի, զոր հանեալ Ձինաց առաքեն յաշխարհ իւրեանց։ ԽՈՒՈՐ գիւաւոր քաղաք ունի բերդ կառուցեալ ՀՆԱՆգիացւոցեան։ — ՊԻԼԼԻՏՈՆ կղզեակ ունի երկաթահանս։ Մխահանուն ընդ ձեռաւք Հոլանտացւոց հանաձեալ կան 1,650,000 ոգիք ի Սումատրա։

Ցարևմտեան Տարաոյ Սումատրայ ընդ 12° հար. լայն. գտան ԳՒԼԻՒՆ կղզիք։

2062. Ռ. ՃԱՒԱ. Գիւաւոր ի կղզիս Արշիպելագոսն Հնդկաց և աճառ աերութեան Հոլանտացւոցն ի Հնդկիս. յարևմտից յարևելս ձգի ընդ 102°–112° արև. երկ. և ընդ 6°–9° հար. լայն. 6,000 փարսախ քառակուսի. Լերինք բարուք են ի ճաւա անասոս քառակուսի. յորս գան իբր 30 հրաբուխք, բարձրութիւնն նոցա 7–13,000 ոտնաչափ. տակ լինի անդ սաստկութիւն մեծ. Հարաւակողմն ափապոյ սպառաժուռ է և անմատոյց, հիւսիսակողմն տափարակ և մերձ որով և օդն ազահանելաչ, յորմէ և շատ ախտացաւոց մեռանին արագահաս. ասի Թէպետև և սաստիկ այլ ոչ առաւել քան զԲենկվղէնգան Հնդկաստանի. իսկ ներքին գաւառացն բարեաք է կլիմայ. Բովք ոչ գոան ի Նմա, այլ երկիրն բերրի է յոյժ. գիւաւորք ի բերս նորին են՝ քաֆէ, շաքար, լեզակ, պղպէղ, և բոյն Թռչնոց. Միրգ. անձր կամ պոռնոյ (Ծառ Թռչնաբեր) վասն մահաբեր հիւ-

Թոյն · ձկ ի ձաւա չորքոտանի վայրի բայց վագր, և եղջերու, և ի ջուրս կոկորդիլոս փորր · օձ յան տառս, մրջիւն ձերմակ չատ, որ ապականէն զկահ և զպատճառ ռանց ։

Բնիկք կղզւոյն ձաւացիք ինն միլիոն և աւելի եա՝ ազգակից կարծին Հնդկաց, բնաւորութեամբ յոյզք և վատասիրտք են տառապեալք ի բռնաւորաց · յառաջ քան զգալուստ Եւրոպացւոց մի թագաւորութիւն էր կղզւոյն և կարի բարեկարգ, որպէս երևի ի յիշատակարանացն գտելոց · ի Բռնգալա դաշխ կան աւերակք տաճարաց, արձանք և քանդակք ձարտարարուեստք, որ զառաստկս կրօնից հնոց կերպարանեն · դահճին այսպիսի աւերակք և ի Պորսպոլոյ և ի Սինկասարի · Բարբառ նոցա ի Հնդկաց լեզուէ ծագեալ է · Խոհ սրբազան լեզու նոցա միշտ ալ ռանգրիտ · ռուխ այլ բարբառ ։



Տարազ բաղարացւոց



Տարազ պարատականաց



Տարազ գիմոորաց

Ձաւացւոց

բաւ բնակեաց Ծովեզերեայց · Ցամին 1406 ընկալան սոքա զմահմետական կրօնս, ընդ որում ոնին և հեթանոսական աւանդս · և Թուական նոցա ի 73 ամին Վրիստոսի սկսանի · առ սոսա օրինաւոր համարի բազմակնութիւն, և սպասաւորք առաջաց կանայք են · սերն գնաղս ըստ բազդի և գնահ աքաղցից ։

Մալացիք տարականք համարին ի ձաւա · Ձինք ժիւք են և ագահք, վասն որոյ արհամարհեալ ի ձաւացւոց · Հոլանտացիք ռսկաւաթիւք են, և զբանկանք նոցա ազգաւ Գերմանացի · ընդ իշխանութեամբ Ընդհանուացւոց պատ բարգաւաճել Երկիրն · ի գալ զառաջինն Հոլանտացւոց ի 1594 յորք սերութիւնք եին ի ձաւա, Պանդամ, Եհոթերա, Ջերոպոն, և Պադարամ որ տակաւին ևս կանգուն կայ, իակ առաջինքն ի Հոլանտացւոց նուաճեցան ։

2063 · Բնիկ կալուածք Հոլանտացւոց ձգին ի հիւսիսի և յարևմտակողմն կղզւոյն բնակեալ չ՝3 միլիոն մարդկանէ · Պանդամ զոր նախ կատուցին Հոլանտացիք, այժմ աւերակ է · ի 1619 յարևելակողմն ափանցն չինեցին նոքա զՊԱԴԱՒԻԱ քաղաք ընդ 6° լայն · հար · ի խոր հովիտ, ընդ որ անցանէ Եաթարա և բազում վտակք, զորով անկեալ է ծառաց · այլ օդն ինսուիչ է յոյժ · վասն որոյ նուազեալ բնակչացն այժմ են ի բրև 118,000, յորս գոն և Հայք վաճառականք երկու 20 տունք ։

Կողմնակալն և ատաք պալատնեայք, Հոխք և վաճառականք բնակեն ի Իայարէ և Մալենէդէ աբուարձանս որոց բարի է օդ · պատճառ ապականութեան օդոյն է խանգարել ջրագործից և մերանալ յետ մեծի սատնութեանն ի 1699 · Գլխաւոր շինուածք քաղաքին են ապարանքն գաւառապետին, իակ նկեղեցիք և ջրանցք և տունք խարխլելով և կիսաւեր են · Նաւահանգիստն ունի բերդ մեծ և կայանս նաւուց՝ որ ատաղոյն կատակելով անգնալի լինի նաւաց · ի բնակիչսն են 15,000 Եւրոպացիք, Ձինք 25,000, այլք ձաւացիք ։

Պենթենտուրա · ի լեռնային վայրի 3,000 ռանաչափ բարձր յերկաց Ծովու · ունի պալատ կողմնակալի և պարսպեալ բուսաբանութեան ։

Ջերոպոն · Ունի նաւահանգիստ և 10,000 բնակիչս — ՍԱՄԱՐԱՆԳ, առ Համանուն գետոյն ընդ 108° երկ · արև · ընդ բարի կլիմայիւ · ունի ամրոցս և վաճառաշէն նաւահանգիստ · Բն · 40,000 · — ՍՈՒՐՈՒԱՑԱ, ընդ 110° երկ · արև · բարգաւաճագոյն քաղաքացն ձաւայ, ունի նաւահանգիստ անկասկած, նկեղեցիս և 50,000 բնակիչս ։

2064 · Թագաւորութիւն ՄԱԴՈՒԱՐԱՄայ ձգի ընդ արևելս և ընդ հարաւ կղզւոյն · Հոլանտացիք յերկուս բաժանեալ զայն՝ եւոուն երկուց ընդգիմամարտ իշխանաց, արևելեան իշխանն ռուխան կոչեցաւ, ա-




Պադաւիա

բևմասկողմանն ..... ապատ են նոքա յիշխանաց Թեան իւրեանց՝ այլ ոչ բոլորովին ներծ յօրինաց Հոլանտացւոց որք ունին ամուր քաղաքս յատկապէս։

ՍՈՒՐՈՒՏԱՐԱՏ. Ընդ 7° հար. լայնութեամբ իջնա նախատ է ՍՈՒՍՈՒՆԱՄԱՑ, յորին Ս.ս գետոյ, իբր 100,000 բնակչօք։ Սուրգանն նոտի ի ՉՈՒՏՉՈՒՐ ԳԱՂԱՒԱ ընդ 107° երկ. արև. 3 փարսախաւ հեռի ի հարաւային ծովեզերէն։ Բն. 90,000։

2063. Գ. ՄԱՏՈՒՐԱ. Ընտիկ ջրանցիւք ծովու բաժանեալ ի ձաւայ, 208 փարսախ քառակուսի է տարածութեան կղզւոյս, և 250,000 բնակիչք, անուանեալ ի նահանգութեան. մասն մի կղզւոյս ի Հոլանտացւոց ձեռս է, և միւսոյ մասին



Մահնաձ ի Մատուրա

երկու սուլդաք իշխեն։ ԲԱՏԱՒԻԱՅՈՒՄՆ, գլխաւոր քաղաք ի հարաւակողմն։

Ցարևելից կուսէ ձաւայ սահեալ են մանր կղզիք Սունդայ, յորս այսօրիկ են գլխաւոր.

Դ. ՊԱԼԻ որ և ՓՈՔՐ ՃԱՒԱ. 280 փարսախ քառակուսի, ի հրաբղխից սասանութենէ ի վեր երևեալ և բարերար. բնակիչք 900,000 ազգաս մալացի, քաջարիք են քան զնիբձաւորս իւրեանց. կէսք զպատուեան ազանդ գաւանին և կէսք Ջրիվէյի, և որպէս զՀնդկիս չորս գաւակարգս ունին. եօթն բաժանք տիրեն կղզւոյն։

Ե. ԼՈՄՊՈՔ. Ցարևելից կուսէ Պալեայ, 195 փարս. քառ. Եւրոպացիք դուն ուրեք գան ի կղզիս յայս, վասն զի գժուարաճասոյց է. հրկիզն լեռնային է և անուռաւթիս այլ բարերիս։ Բնակիչք Թուին 1,200,000, որոց իշխէ բռնապ մի։ Գլխաւոր քաղաքք ԼՈՄՊՈՔ և ՄՈՒՏՈՒՄ։ Հոլանտացւոց մատչ է կղզիս այս։

Զ. ՍՈՒՄՊԱՒԱ. Ցարևելս Լոմպոքայ, 1030 փարսախ քառակուսի. ունի զԻՆԴՈՒՀ հրաբուղխ, որ յետ մեծի պատահմանն ի 1815 փլուզեալ հարեմ տակաւ. կան ի նմա որպէս և ի մերձակայ կղզիսն հրաբուխք ոչ սակաւ. վից իշխանք են երկրին, որ սակ բարերաք գոլ և հաւատնգիսատ ունել։

Է. ՓԼՈՐ (Ծաղիկ) · 1100 փարսախ տարածութեամբ, անծանօթ ըստ հանգամանացն։

2066. Ը. ԴԻՄՈՐ. Ունի պարս լերանց որոց զրուս տարածեալ ի ծովս արգելուն զնուս։ Բնակիչք 1,500,000 Մալացիք բնակեն ի ծովեզերս. Ներքին գաւառացն են բնակիչք Բաթուացք, իսկ ի հիւսիսի Ժողովուրդն սերեալ է յայզկանութենէն Լուսիտանացւոց։ ԳՈՒԲԱՆԳ (Coepang), քաղաք է փորք առ գոգով միով ուր նաոի կուսակալ Հոլանտացի։ Դափրչիա ամրոց մերձ ի քաղաքն։ — ՏԻԼԻ գաւառ յարեւնս հիւսիսի, ուր կայուածս ունին Լուսիտանացիք, իսկ Մալաց բազում են բաձալք իշխողք։

2068. Թ. ՊՈՒՆԻՈՒՕ. Մեծագոյն կղզեաց. ընդ 107°-117° եր. և ընդ 4° լայն. հար. 7° լայն. հիւս. 27,000 փարսախ քառակուսի. որոյ ներքինք կողմանք չէ ևս են ծանուցեալ, բայց բարերք և անասնային գոլ կարծին. իսկ ափունքն ծանօթագիտ են և օգն ինասիչ. հրաբուխք երկրին չիջեալ են. Ինդոգոլէ լեառն բարձր է իբր 13,000 ոտս։ Բերք դիմաստրք և սեփականք, ոսկի, ադամանդ, քարեղր, պղպեղ։ Ժողովուրդ 3.000.000, աւելի կամ պակաս, յորոց Մալացիք բնակին յափունս ափերակեղեմուտ բաղում կողմանց, ի ներքին գաւառս Տայակ ժողովուրդ, վայրագ և քաջարի, յար ի կռիս մարտից պատային, զիւաւորիւնս Թշնամեաց պահեն ի բնակարանս իւրեանց, և զնոք նոցա գերեվարք են։ Բազմազոր և Նեղինիւքք բնակին ի լերինս և ի Թաւուտս անտառաց, բարձր են հասակաւ, անգեղեայ գիմք, խայտակն, տկարք զօրութեամբ։ Ի Պառնէոյ գան և Ձինք իբրև 200.000 որ գործեն ի բովս ոսկւոյ և մշակեն պղպեղ։

Գլխաւոր տերութիւնք Մալայ են, ՊԱՆՃԱՐՄԱՍԻՆ Համանուն քաղաքաւն ի հարաւային ափունս, առ որով կանգնեցին Հոլանտացիք ղԻՆԴԻՈ ամրոց։

ՍՈՒՐԱՏԱՆԱՆ և մայրաքաղաք իւր յարեմտից հարեայ, ունի ափիուն առատ։

ՍԱՄՊԱՍ · Ունի ոսկեհանք մեծ · անդ ամրոց մի է Հոլանտացւոց ԲՈՆԻՈՒԱՆ անուն։

ՊՈՆՆԻՈՒՕ և մայրաքաղաք իւր ջրաքարէիւք պատեալ, առանք նորա ի վերայ ցցոյ և ի վերայ լասակից չինեալ են. կոկորդիլոսք վերան ի ջրանցան. ունին ի նմա Ընգղկացիք վանս ինչ։ — Պատուհանացորդն ի նմա Ընգղկացիք բնիկական Սուլտան. բայց ի մասին Պառնէոյ իշխէ ինքնակալ բաձալք։

Ի բերան Պառնէոյ գետոյ հուսս ի ծովեզրն կայ ԼԱՊՈՒՆԱՆ կղզի փոքր. զոր սուլտանն Պառնէոյ՝ եռ Ընգղկացւոց յամին 1843. և նոքա հաստատեցին անդ բնակութիւն և ոստիկան մի, վասն գեսանձոյ զոր հանեն անտի։

2068. Ժ. ՁԻԼԵՊԵՍ. Կղզի մեծ յարեւելս կողմն Պառնէոյ զատուցեալ յայնմանէ Մաքասասար ջրանցիւք. տարածութիւն 7,000 փարսախ քառ. ընդ 117°-123° երկ արև. ընդ 2° լայն. հիւս. և ընդ 8° լայն. հար. Լերինք տարածեալ ի նմա չորս Թերակղզիս գործեն, յարելից կողմանէ երիս մեծամեծ ծովածոցս Թողով. գետունին հրաբուխք ի լերինս հիւսիսակողմն։ Բնակիչք 2,500,000 ազգաս Մալացի ի բաղում ցեղս բաժանեալ, որոց գլխաւոր են Մ.....ք Ժողովուրդ քաջարի և վճիռագործ, հաւատասիրութեամբ ծառայեն ի սպասու բաձալից և պահպանք են նոցին. Պ.ւ.ի. Ժողովուրդ ի հիւսիսի բնակ. ի ներքնագաւառս կան և այլ ցեղք։

Մալացկէ մահմետականքը են նախանձայոյզք յոյժ. ունին ազգային գպրոցներն, քերդուածս և վիպասանութիւնս: Բազում բանիւք են որ խնեն նոցա աշխատասիրական իին իշխանութեամբ. Հոլանտացիք ձեռնէրկ լինին ի վերայ սոցա, այլ սեփական կալուած նոցա անձուկ է: — Գլխաւոր քաղաք կղզւոյն է Մաքասսար յարևմտակողմն հարաւային թերակղզւոյն. Հոլանտացիք ի 1668 տիրացեալ կառուցին ի նմա ՁԻՒՈՒՆԴՍՏԱՍ՝ որ ունի նաւահանգիստ վաճառաշահ. բն. 10.000: — Պունի իշխանական քաղաք է Պուկասս: — ՄԱՆԱՏՈ՝ ի ծագ հիւսիսային թերակղզւոյն, կալուած Հոլանտացւոց, ուր կայ ոսկեհանք: — Ջմիջաս կղզեաս կան մանուկք սիրահարք յարևելից և ի հարաւոյ նորին:

2069· Բ· ՄՈԼՈՒԿԳԱ ԿՂԶԻՔ· յարևելակողմն Ձեվեպսի ընդ 125°–132° երկ· արև· 3° լայն· հիւս· և 8° լայն· հար· յերկու ժողովս կղզեաց բաժանին· Լուսիանացիք զառաջինն ի 1514 եկին ի կղզիսս յայսոսիկ, և Հոլանտացիք ի 1599 հալածեալ զնոսա կալան զամենայն կղզիս· Կլիմայ նոցին ինսաական է յոյժ, վասն որոյ յամենայն օրում արեւելեան կարգեցին զնոսա· գլխաւոր բերք երկրին է առնիկ մկկոյ զոր ինամալ մկանին անդ ի բազում գաւառ հեռ, և շատ մեծ է անոի· այլ կարևորաց ի պարէն կենաց կարօտին կղզիքս:

Ա· ՊԱՆՏԱՆ կամ ՆՈՒՈՒՄԵՆ կղզիք, յորս մեծագոյն են ՊԱՆՏԱ և ՆԵՒՐԱ երկոցունն ևս յոգի է կլիմայ՝ — ԿՈՒՈՒԿ-ԱՈՒ ուր մկանին ըստ որակաց պոլսեցի, ունի հրաբուխս՝ — ԱՅ բարգաւաճագոյն ի կղզիս յայսոսիկ՝ — ԴԻՈՐՈՒԱՒՈ և այլք գրեա թէ անծանօթք՝ — ԱՐՈՒ կղզիք երկկարգք զոր ոմանք յԱՒստրալիա գասն, բնակեալ ի Մալացկ և ի Տ-ՐՒՔ-ՈՒՐԻ· յորոց ընդ իշխանութեամբ Հոլանտացւոց են 160,000 ոգիք:

2070· Բ· ԱՄՊՈՒՆԱ, երկք մեծ կղզիք և ութ մանուկք· բնակիչք 300,000: ԱՄՊՈՒՆԱ գլխաւորն ի սոսա ունի աղբերս և առուս, և կլիմայ բարեխառնագոյ մի յերկուս հասանի զկղզիս զայս, զոր Լուսիսահանգիստքն 1511 գտին և Հոլանտացիք ի 1605 ժառանգեցին· գլխաւոր բերք երկրին է մխիակ, որոյ ծառ նման գտնի յամենայն ոտնաչարի ի բարձրութիւն, ծառիկ նորա և պտուղ ընծոյ են ի համեմունս՝ — ԱՄՊՈՒՆ քաղաք վիճակաւոր ամրոցաւ, բարեչէն այլ վաճառելով ի սասանութենէն· Բն· 7.000: — Բազումք ի բնակչաց Ամպոնայ քրիստոնեայ են:

2071· Գ· ՌՆԿ ՄՈԼՈՒԿԳԱ կղզիք, զոր Հոլանտացիք ժառանգեցին ընդ Նախորդսդ, սակաւաբեր. նակք են, յերկերս նոցա կան Մալացի մահմետականք:

ՁԻՒԼՈՆ, գլխաւոր ի Մոլուկգեանս բերէ վնաս. Նուքթիէն Ձեվեպսոյ և ունի իշխանս բազմաս· Հոլանտացի իշխանն նաեւ ի Դեսնան յարևմտեան Ձիլոնայ, յորմէ 100,000 ոգիք են ընդ ձեռամբ Հոլանտացւոց· Շատք ի սուլթանաց Մոլուկգեանց հարկատու են Հոլանտացւոց:

2072· Գ· ՓԻԼԻՊՊԻՆԱՆ կղզիք, ի հիւսիսակողմն կոյս քան զմինդոյն կղզիս Ասիոյ, 12 մեծ կղզիք և բազմութիւն մանուսց կղզեաց ընդ 117°–124° երկ· արև· և ընդ 4° և 20° լայն· հիւս· զոսա եգիս Մաքելլան յամին 1521, որ և մեռաւ ի Մաթան մարտնչելով ընդ բնակս կղզւոյն, Սպանիացիք ի 1571 տիրացան նոցին, Թէպէտ և ազատ է բնիկ ժողովուրդք կղզեացն: Հրաբուխք բազումք են ի փլուպեանս, որոց բարեբեր է երկիր· կլիմայ բարի, օդ գիշեր և անտանելի Եւրոպացւոց, վասն որոյ անթնամ է մշակութիւն երկրին և հանգաց գործ· Բնակիչք 4 միլիոն ըստ մասին Ռաբ------, բնակեալ ի լերինս և յանտառս, և ըստ մասին Դ-ի-ւ կամ Պ-ո-ր մնացեալ ազգաբ, որոց տեարք էին կղզւոյն և ընկալան զքրիստոնէական կրօնս: Բաց ի սոցանէ կան անդ և Ձինք իբր 80.000· Սպանիացիք իբրև 3.000, որոց փոխարքայ վարէ վերհանութիւնն զամս վեց· ուղղաւիճագ հանդիսիս մեծաս կատարէն զպատշաճ իւրեանց:

ՄԱՆԻԼ կամ ՄԱՆԻՒԱԼԱ որ և ԼՈՒՍԱՆՈՆ, մեծ և գլխաւոր ի հիւսիսային ի փիլիպպեան կղզիս 2,500,000 բնակչաց· Սպանիացւոց ձերբս կողմանս կղզւոյն կալեալ է, ի յորմզդումն և ի միջակին բնակեն Մալացկք և Բաթուաք· Սպանիացիք 15 գաւառս ունին· ՄԱՆԻԼԱ մայրաքաղաք ընդ 14° լայն· հիւս· առ գետով ծովու, ի բերան Բ-ա-ի գետոյ, ունի միջնաբերդ, 8 արուարձանս, եկեղեցիս, վանորայս, քարայատակ փողոցս ի գիշերի լուսաւորեալս, և 240,000 բնակիչս· վաճառականութիւնն չէ յոյժ բարգաւաճեալ· է նորա նաւահանգիստ անքոյթ·

ՊԻՍՍԱՆ կղզեաց յոլովից տեարք են Մալացկք քրիստոնեայք և մահմետականք, առաւելաբք ի յերկրակաց ՄԱՔԻՏՏԱՆԱՈՑ, որ և ՄԻՆԴԱՆԱՈՑ· և է սա ի հարաւակողմն Փիլիպպէնից, կղզի մեծ և գեղեցիկ և բարեբեր, ունի հրաբուխս բազումս· ի ծովամուտս բնակին Մալացի հինք որ առաջագոյնք Թեմբ կեան· քակ ի ներքին կղզւոյն վայրագագոյն են ժողովուրդք և որպէս կարծի մարդակերք, կրօնիւք յոլովք մահմետականք են: ԱՄԱՆԱԿԱՍ գլխաւոր քաղաք աճեալ հզօր սուզդանի, տունք նորին կառուցեալ են ի վերայ ցցից· Սպանիացւոց առաւել քան 4800,000 հոգւոյ են ի կղզոջս, և գլխաւոր քաղաք ԱՍՊՊԱՍԱՍ ամուր ըստ բաւականին 1,000 բնակչաք, յորոց շատք պատասխանեալ յանցաւորք են· հինք մեծաւորք ՀՈՅոցն ընտան յանդրուան:

2073· Գ· ՍՈՒԼՈՒ կղզիք երկու 60, ի հիւսիսոյ Պոռնէոյն ձգին ի հարաւ Մինահասոյ, ընդ 5° և 6° լայն· հիւս· ընդ 116°–120° երկ· արև· բարեբերք և բարեյ կլիմայի վիճակեալք· բերք սեփականք կղզեացս են բոյն Թռչնոյ և մարգարիտ: Բնակիչք 200,000 և աւելի ևս, որպէս Թէսլ, յազգէ Մալացի ի ցեղէ Պիսայոյց, մահմետական կրօնիւք, յերևելագիս անուանիք· Սուլթան կղզեացս նաեւ ի Ս-ո-ս- կղզւոյ ի Պոռնէ քաղաքի, իշխէ նա և մասին մեծ հիւսիսակողմն Պոռնէոյ, և կոչի ԲԱԼԱՒԱՆ կամ ԲԱԼԻԱՊՈՒԱՆ անծանօթ կղզւոյ, որ ձգի ընդ մէջ Պոռնէոյ և Մ-ո-ր-ս 75 վաթսուն յերկայնութիւն·

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՔ ՀՆԴԿԱՅ

2074. Հնդկաստան գարս յոլովս անձամբ ճաց յարևմտեան Ասիոյ և Եւրոպոյ, և Թէպէտ՝ ի վաղուց փիւնիկեցիք և Բաբելացիք վաճառականքն ընդ Հնդկաց, այլ չետուն կամ չէհաս առ մեզ՝ ի նոցանէ տեղեկանալիւն. և ոչ աչխարհակալուԹիւնք Շամիրամայ կամ Պարսից կամ Ալէքսանդրի՝ բարձին զնաւարն որ ծածկէր զաչխարհն լայնածաւալ. առ յեռնովս սուղ ինչ ծանուցաւ արևմտեանն Հնդկաստան, և գիասցաս՝ զի ոչ միանեծան ինքնակալուԹիւն՝ այլ մանր պետուԹիւնք բաժանեալ ունին զաչխարհն. ընդ որոց իշխանուԹեամբ եկաց և ց՛ԱՆ դար Քրիստոսի։ Յորում ժամանակի Մահմետ նաՀասեալ Ղազնեւեան տոհմին եմուտ՝ ի Հնդկաստան որ յայսկոյս Գանգիսի, ուր տիրէին երկոտասան Թագաւորք, և նուաճեալ զնոսին՝ եցոյց ճանապարհ մահմետականաց խաղալ յաչխարհն բազմանոթ, տիրել և վայելել յարգասիս երկրին. քանզի բնիկք նոքին բաժանեալք ի տոհմս և յազգս և ի պետուԹիւնս յոլովս, և տիրալք ի հրահանգս մարտի՝ ոչ կարէին զդէմ ունել աչխարհակալացն. ց՛ԱԺԲ դարուս գրեալ Թէ համօրէն բունն Հնդկաստան նուաճեալ էր ի մահմետականաց, և ի միւսում դարուս յառալ անցին և ի Տէգան։

Զկնի այնր գարուս Դիմիտրիենկ ասպատակեաց ի Հնդիկս՝ Մողոլ զորաց, յաւարի եհար զՁԳԱԼԻ՝ կոտորեալ ի Նմա տասն բիւր ի բնակացն. այլ ի մեկնել նորա՝ բնիկ իշխանք կալան զաչխարհն ց՛ԺԴ. դարուս յամին 1525 Պապէր խան Մողոլաց՝ եմուտ ի ՏԷԱԼԻ և հաստատեաց ի Նմա զաԹոռ իւր։ որդի նորա Հիւմայուն հալածեալ ի Հնդկաց՝ գործ արար յաղԹանակաւ և նուաճեալ զաչխարհն՝ հաստատեաց զինքնակալուԹիւն Մեծ Մողոլաց ի Նմին (1554)։ որդի նորա Էքպէր՝ Մեծն անուանեալ որ տիրեաց ամս 50 (1555–1605) ընդարձակեաց զսահմանս տէրուԹեանն նուաճեալ զամենայն Հնդկաստան զընկին. զոր և պահեցին որդի նորա Ճիհանկիր և Թուռն Ճիհանշահ. սորա որդի Աւրունկ Զէպ՝ տիրեաց և Մեծի մասին Տէգանայ, և գինքեաց գահն բազում, զի ունէր հաս առաւել քան զ1000 միլիոն փառգաց, Թող զգանձս ականց պատուականաց և ջըքնալ գոյից. սա կարգեաց ի վերայ աչխարհացն նըշանակս կուսակալս և իշխանս, որք կոչին Նաւապատ, Նաձէրք կուսակալս և իշխանս, որք կոչին Նաւապատ, Սուբա, Զէմինտար, և այլն։ Ցնա մահուան նորա (1707) քաղաքական պատերազմունք և խռովութիւնք՝ դիւրամուտս արարին զիշխանս ի ներքս։ յորոց Նաւոր Շահ՝ հինգերորդ յարձակեալ կողոպտեաց զգանձս ինքնակալաց և աւերեաց զքաղաքս կողմանս աչխարհին. յետ նորա Ափղանք և Մարաթք յարձակեցան ի վերայ աչխարհին և մայրաքաղաքին Տըլհեայ. որոյ ինքնակալք՝ ոչ բաւելով զդէմ ունել բարբարոսացն՝ ապաՀինեցան յօգնուԹիւն Անգղիացւոց, և առ փոքր փոքր մտոք կացուցին նոցա զաչխարհ իւրեանց, ընկալեալ առձիկս ի նոցանէ։

Ի վերջ կոյս ԺԵ դարուս (1498) Բորդուգալք բացեալ ընդ ծով ճանապարհ ի Հնդիկս՝ հաստատեցին վաճառատուն և գաղԹականս ի Ծովեզերեայ քաղաքս, և ապա տակաւ յառաջ խաղացեն ի մէջերկրեայս ուրեք և ի կղզիս։ Յոր ևկին զՀնա նոցա՝ հոլանտացիք յԼս ԺՀ. դարու և կալան զմիձանձ կղզիս Հնդկաց։ Իսկ Անգղիացիք ի սկիզբն ԺԷ դարուս հաստատեալ էին զընկերուԹիւն արևելեան Հնդկաց, որ առ սակաս սակաս տիրեաց մեծի մասին բունն Հնդկաստանի, և ընդ հարկաւ կացոյց զպատշաս ի Թագաւորաց երկրին. յորոց երկու կամ երիք միայն կան ցարդ ազատք. և զարգիս պատերազմ է նոցա ընդ Պիրմանաց. ընդ որս մարտուցեալ և յամին 1826 հաստեալ էին գաւառս ի պետուԹենէ նոցա։ Պիրմանիք անգամին ի ԺԲ. դարէ անուանիք եղեն քաջալԹեամբ՝ նուաճեալ զԱկկուանցիս և ահարկու լեալ ամենայն իշխանաց կողմանցն։

2075. Հնդկաստան յայնկոյսն Գանգիսի՝ ի միջին գարս՝ անկաս բոս մասին ընդ ձեռամբ Ձինաց և Մողոլաց՝ եկեալց ի Ձինաց աչխարհէ. բայց ի գալ որոյ Բորդուգալաց ի սկիզբն ԺԶ. գարուս՝ գոհն Թագաւորութիւնս ուժ, զԱչա, Բենգու, Արաքան, Շիամ, Լաոս, Գամպոձա, Անամ, Նասամ, յորոց Շիամ, Լաոս, Գամպոձա, Անամ, Նասամ, յորոց ոմանք կան ցարդ, այլք նուաճեցան Անգղիացւոց։ Թէբակղզի Մալագեայ ցամն 1160 ընդ ձեռամբ կայր Թագաւորին Շիամայ. յետ այնորիկ եկին Մալայեցիք և Սումատրայ կղզւոյ և հաստատեցին զիշխանութիւնս իւրեանց ի սմա. յինեցին զՄալագեա քաղաք յամին 1253. յորմէ և համօրէն Թէբակղզին էառ կոչումն։ և բարգաւաճաց յոյժ վաճառականութեամբ. նաեւ ի Ձինաց և ի Ճաւանաց, ի Պարսից և Աղաբիոյ և Աֆրիկեայ գային ի նաւահանգիստս նորուն յառաջ քան զգալ Բորդուգալաց. որք գաչնես վաճառականութեան հաստատեցին ընդ սուլտանին Մալագեայ, այլ ի հանդիպ չարժեալ զայլս յազգաց և առեցեալք ի բնակացն՝ զնոսա զօրութեամբ կալան զՄալագեա յամին 1519 ցամն 1641, յորում Հոլանտացիք հօրեղեցին զայն. այլ վաճառականութիւն և բարգաւաճանք նուաճեցին ի Թէբակղզւոյն ի սակս գժտութեան Եւրոպացւոց և բնակութեան բնիկ իշխանաց կողմանցն։

բում են ցարդ ազատ իշխանք ի սահմանն, իսկ վերնոյն իշխէ Թագաւորն Շիամայ. և Մալագա վճռակալ է Ընդհանուց ի 1824 ամէ հետէ։

Շիամ Թուի ի վաղուց բարգաւաճեալ քաղաքական կարգաց, քանզի աւերակք մեծամեծ քաղաքաց և հոյակապ շինուածոց գտանին ի նմա. ի կիսոյ ԺԲ դարու ցկէս ԺԷ, խռովեցաւ աշխարհն մերձ ընդ մերձ ի պիղմանաց և ի քաղաքական կռուոյ. յամին 1633 եկին այսր գաղթականք քարոզիչք և զբաղմն ընդունելութիւն մեծ. և առաքեցան գնապանք ի Լուգովիկոսէ ԺԴ. և առ առ ի Շիամացւոյն. այլ յամին 1689 բարձաւ առնմն արքունի և ընտանուն Թիւն ընդ Եւրոպացւոց. և յամին 1769 յաջորդեաց միւս ևս առնմն ի գահ Շիամայ զոր և ցարդ ունի։

Ընդհ որյառաջն Թագաւորութիւն Դոնքիրնոյ կոչէր՝ ընդ իշխանութեամբ Զինաց կայր, Թէպէտ և առանձնակ Թագաւորս ունէր անդստին յամին 1335. գաւառ էր Դոնքիրնոյ և Գոչինչին, այլ ի վերջ կոյս ԺԸ դարու ապստամբեաց, և անկաւ ընդ պէսպէս փոփոխութեամբ, մինչև հաստատեցաւ յազատութեան՝ հռաձեալ ընդ իւրեւ և զհամպոճա և զբնիին Ընդհ.

Կղզեաց Հնդկաց նախկին դէպք անյայտք են. մանաւանդ կրօնք ծաւալեցան ի սոսա անդստին յաւուրց սմիրպակեաց Ասրաթացւոց, քանզի վաճառականք սակս գային ի կղզիան. յորս ճաւս զբաւոր իշխանս ունէր և տիրէր ի վերայ այլոց տանց, հզօր էր և Սումադրա, յորմէ եկին Մալայեցիք և տիրեցին Մալաղքայ. իսկ ի Պռանէոյ հաստատեալ էր իշխանութիւն Զինաց. Մոլութիւնք ժամանակս բազում ի կռուի էին ընդ միմեանս, վաճառականութիւն բարգաւաճէր յամենայն ի հասս, և հաստատեալ էր նոցա վաճառակից ընկերութիւնս։ Ցեբրոպացոց՝ նախ Խորտուգալք ի սկիզբն ԺԶ դարու եկին և հաստատեցին բնակութիւնս ի կղզիս յայտնի։ և յետ գալոյ՝ Հոլանդացիք, որք և տիրացան բազմաց ի կղզեացն հալածեալ զԽորտուգալս, և ցարդ ունին զկալուածան։



Հնդիկք գրահատեալք

Ջ Ի Ն Ա Յ

Ի Ն Ֆ Ո Ն Ա Կ Ա Լ Ո Ի Թ Ի Ի Ն

Տարահոտիւն 700,000 *փարս.* □. — *Բնակիչք* 370,000,000:

2076. Ի ՀԱՐԱՒՄՏՐԴ և լայնածաւալ ինքնակալու-Թեամն Ձինաց սահմանք ի հիւսիսոյ կոչմանէ Ժամանէն ի Ռուսաստան Ասիոյ, յարևմտից՝ յԱզատ Թաղ Թարս, ի հարաւոյ՝ ի Հնդկաստան, յարևելից՝ յՈվհիանոս. միահամուռ տարածութիւն Ձինաց երկրին և հարկատու աշխարհացն՝ համարի 700.000 փարս. քառակուսի, աւելի կամ պակաս, որ է ասել երեք մասն Ասիոյ, և երրո մասամբ առաւել քան զԵւրոպ; կայ ընդ 69°–141° երկ. եր. և ընդ 18°–51° հիւս. լայն:

Ցերիս աշխարհս հատանելիք ջերմութիւնս զայս, ի Բուն Ձին, ի Մեծ Թաթարս, և ի գաւառս որ ընդ պաշտպանութեամբ Ձինաց:

Ա. Զ Ի Ն

Բ Ն Ա Կ Ա Ն Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր

2077. ՀՈՒՆ ՁԻՆԱՑ ԱՀՈՒԱՐՀ տարածեալ ձգի ի հարաւակողմն ինքնակալութեանն ընդ 20°–41° լայն. հիւս. և ընդ 94°–124° երկ. եր. սահմանք նորա ի հիւսիսոյ՝ Մեծ Թաթարք կամ Մոնղոլք, յարևմտից Դիպեդ և Պիրման, ի հարաւոյ՝ Աննամ, յարևելից Ովվիանոս կամ Ձինաց ծով, որ գործէ զմեծ ծոցն Հ-ՈՒՆ-Հայ (Դեղին Ծով), ՀԻՆՈՒՔ, և ՀՈՒՆ կամ ՀՈՒՆԼԻՆ. Ձինաց ծոցն և Դեղինն գծուարանաւելիք են, մին վասն ջրասպուզակ փոթորկի որ խառնվէ ըստեպ զծոցն, միւսն վասն ըլլաձև կուտակեալ կաւոյ գետոցն: Տարածութիւն երկրին Թուի 170.000 փարս. քառ. բնակիչք համարին աւելի քան զ'300,000,000, ի հասարակի յափուշս ջրոց բնակելոք, քանզի բազում կողմանք նոքին աշխարհին ամայիք են. Ձինք զաշխարս իւրեանց ԶՈՒՈ կոչեն որ է ասել Մէջին, Մոլղէք՝ Խոջայի, Ալբաթայիք Սին կամ Ձի, որ ըստ մեզ Ձինք և Սինեացւոց աշխարհ:

Ի հարաւակողմն ընդարձակածաւալ բարձրաւանդակին Ասիոյ ձգեալ կայ աշխարհս այս. որոյ հիւսիսակողմն լեռնային է, արևելակողմն հարթածաւալ և բարեբեր, առուգեալ ի գետոց և ի ջրադարձից յոգունց, զորով սիրեալ է քաղաքաց և գեօղից: Երկու են գլխաւոր գետք Ձինաց, Հ-ՈՒՆ-Հայ (Դեղին գետ) վասն ոսկեգոյն կաւոյն, բղխէ ի Գուքոնոռ և Թաիի ի ծոյնս Արևելեան. և Կ-ՈՒ-Ե-ՈՒՆ, այսինքն է Մեծ գետ, որ յերից գետոց միացեալ հատանէ զմեծ մասն աշխարհին, և ի նոյն ծով անկանի. կան և այլ գետք, որպէս Փ-ՈՒ որ ի Դեղին ծով Թաիի, Դ-ՈՒ-ՍԻ-ԼԱՒ՝ Տիգրիս վերակոչեալ որ ի ծոցն Դանգոնայ: Լիճք մեծամեծք Դ-ՈՒՆԳԻՆ-Հ-ՈՈ 236 փարս. քառ. Բ-ՈՒՆ՝ 177, երկոքին ևս հոսք ի Կանկ-ցէ-քեանկ, բայ յայսցանէ են ի Ձինս և ընտ նման գետք որ ոչ Թաիին ի ծով:

2078. Ջարևմտեան Ձինաց պարսպին բարձրաւոր լերինք, իսկ ի հիւսիսոյ անպատասպար գոլով հանդակոտեցին գոին բարբարոսք ապստամբել յաշխարհն, վասն որոյ Ձինկուանկ ինքնակալ Ձինաց եօթ կանգնել զպարիսպն մեծ երկև 200 մեթր յառաջ քան զերիսասուն. գլուխ պարսպիս յարևմտից հիւսիսոյ ի Ս-ՈՒ-ՉՈՒ քաղաքէ սկսանի և յանդգն լեռերս Դեղին ծո-

վոլ. հասեալ 450 փարսախ. ի գժուարաբուս և ի վտանգաւոր վայրս կրնակի և երեքկին կառուցեալ է զայրիսան, բարձրութիւն նորին ամենայն ուրեք է 25 ոտնաչափ, սաստարութիւն խարխափն 24 ոտք, վերնակողմանն 15 ոտնաչափ և կէս, 5 ոտնաչափ բարձր վանդակեք. յամրութիւն պատուարին երկուսաւեք կառուցեալ է կնճռաձև աչտարակս 12–23 ոտնաչափ բարձրութեամբ, 300 ոտիւք հեռի յիրերաց. յամենայն գետոց պարիսպն կամարաձև գոգացեալ է. երևելի ման նորին է պատուար 20 ոտնաչափ բարձր և 11 ոտք լայն, որոյ երեսք որմիք են և փորամէջն լցեալ որձաքար վիմօք և աղևատով. յառաջագոյն դունդ պահապանաց կայր առ միով միով ի գրանց պարսպին, այժմ լքեալ է ոմիցն, եւ պարիսպն և բաղում ուրեք խարխլեալ։

Ջարմանալի է ի Ձինս և ջնադարձիցն յաճախութիւն, որով հաղորդեալ են ամենայն քաղաքք ընդ միմեանս և ճանապարհ վաճառականաց յաջողեալ ի գահոյնէ մինչև ի Ռեքին. զգվեաւոր ջրանցիցն յամին 1270 եա գործել Ղուալայի խան Մողոլաց, որ տիրեաց Ձինաց, այն է ջրանցն ոսկւոյ, որ ի հիւսիսոյ ձգի ընդ հարաւ, 500 փարսախ, գործեալ եաանկիւն հաւասար. բայց ոչ ըստ միձագործութեան ջրանցիցն են և կապարն կամ գրունքն, և ոչ ամենուրեք միօրինակ են ընթացք ջուրց, այլ ուրեք երթագասաց և ուրեք գահաւոյ։

2079· ԿԼԻՄԱՅ. — Ըստ տարածութեան երկրին՝ զանազանի և կլիմայն. արևմտակողմանքն ըստ տագիրն են վասն լեռնացունչ հողմոց. ծովվերքինն՝ բարեխառն, և ի հասարակի՝ բարի և անվնաս են օդք. ի սահմանս գահոյնայ լինի մրրիկ չըճայտոյտ, և աւերածս գործէ յաշխս. ամարանի տօթ սաստիկ լինի անդ և ձմերանի ցուրտ յոյժ. քաղցր է ամառնային եղանակ հիւսիսակողմանց, և հողմք չոր, բայց զի և առկս մանրամաղ աւազոյ անձին՝ յաւս ազգ առեին. Եռմենան և Ձէյհէյն գաւառք արևմտեայք վտասաւորք են, և տեղիք տարագրութեան յանցաւորաց. միշտոյ գաւառաց բարի են յոյժ օդք։

2080· ԲԵՐՔ. — Տակաւին ամենայն ազգ բերոյ երկրին չէն մեզ ծանօթք. և բաղում գաւառք ամայի և անբնակ դադարք են գազանաց, որպիսիք են վարք և ընձառիւծ. յընտանի անասունս բազմութիւն է խոշեանն. ի գետս և ի ծովս առատ է ձուկն. զնոյնամայ Թռչունն կրճեն ի ձնորսութիւն արկեալ ասնոսք ի պարտոցն զի մի կերիցէ զոր որսայ։ Ի բուսականս նշանաւոր են որիզ, ընդակ, պղտեղ, պեդեղ, ընդեղինք, արեք արմաւ, թէյ, որոյ ծառ մըչափաղաչոյ 5 կամ 6 ոտնաչափ ի բարձրութիւն սերմամբ բազմանայ. յետ երից ամաց ժողովին զտերև նորա մինչև ցեօթնեկորզ ատնորին, և ապա հասանեն զբուն նորա և արմակ նոր բարձանակս. պատուականագոյն է թէյ գեղափթիթ տերևոց քաղելոց յամենան փետրաւորէ, երկու ազգս թէյի գիանն վաճառականք, գեղին՝ որոյ տեսակ է ռանէյ, ֆանոյ, էեբէե, և այլն, և Սեամ՝ ֆանոյ, տոլան, բէեֆոյ, և այլն. ամի ամի երբէ 45–50 միլիոն լիարայ թէյի առաքի յԵւրոպ և յԱմերիկա։ Ցանուտաւս գոն կաղնի և եղևին ծառք, կայ և ծառ ձարտոյղ անուանեալ յորմէ ճրագու ին գործեն. Հալուկ և տալմպոտ ազգ հալուկի և հիւծ նորին. և այլ ինչ հոյզք ծառոց պաղատաք. Թմենի շատ յորմէ և մետաքս ածան. ի գետս գոանին ոսկի և արծաթ, և հանեք անդի և պատուական քարինք, ևս և առատ երկաթ. կապար, անագ, պղինձ. և կրկին ազգ հողոյ ֆուլլե և բէէ-նէէ՝ որով ներկին զյաճաճապսակս. ի Քինկդէ գեղջ 3,000 հնոցք են յաճաճապսակս. Ձինք ընկեն և Թուղթ ի տերևոց և ի կեղևոց պատոյտ ծառոյ և բամբակինոյ և Թմենոյ, Թևրեթա միծատարածս. բայց արուեստ ապագրութեան ի վաղուց հնարեալ առ նոսա տակաւին չեսեսեալ է ի բարգաւաճանաց։

ԲԱՂԱԲԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

2081· ԺՈՂՈՎՈՒՐԴ. — Բնիկ ժողովուրդ երկրին է Ձին կամ Ճինք ի Մողոլեան ցեղէ, որոց Թիւ ընդ երկրայրեթեամբ է առ աշխարհագիրս. ի ոմանք համարեն ընդնակալութեան Ձինաց համարին 170 կամ 200 միլիոն և եթ բնակիչս, այլք 300, և այլք ոչ սակաւք վճռ երթեալ պատմութեան նորոց ճանապարհորդաց և ազգային վիճակագրութեանց, զի առեկ տան աշխարհագիր առնել պետք աշխարհին, համարին աւելի քան 370,000,000, ըստ յետնոյ աշխարհահամարին. որով և քան Ձինաց երկրի հարկ է ունել, երբ 320,000,000 բնակիչս, որ թէպէտ և բազմաց տարապատման Թուի, այլ չէ ինչ անհաւատալի Թէ միա ոք դիցէ և ընդարձակութեան աշխարհին և օդոյն բարեխառնութեան, բազմասերմութեան մարդկանն և խաղաղական վարուց, վկայութեան աշխարհագրաց և մարդաթուի, և համեմատութեան հնդկաց աշխարհի, որ գրեթէ նոյնչափ բազմամարդ է։



ԲՆԻԿ ՁԻՆԻՔ

Եկամուտ ժողովուրդ երկրին Ձինաց են Մոնղոթաթարք և Մոնղոլ երբէ 3,000,000· Մի՞նչ ազգ բնակեալ ի լերինս հովիւք խաշանց· Լաւս ազգ Հնդկաց բնակեալ ի լերինս արևմտից ազատ իշխանաք. Բայն Ձինք կազմուածով մարմնոյ միջակահասակք են, դէղնագոյն, փոքր ոտիւք և ձեռաք, քիթ և շրթունք նման ափրի-

կեցուցն, ականջք երկայն, աչք մանր, հերք սակաւ, ի գա-գաթան գլխոյ երկայն ունելով զոր փետեն կոչեն և նա-խասինս համարին փոքրել զայն։ Նո-րածին աղջկանց ա-գուշանն կոշիկս սեղմ պահել զոտն ի մի ածելոյն, որով կայ ինոյ չափ նոցա ¼ կամ ⅓ բթաքան յերկայնութենէն։



Ոտք Չինացի կանանց

2082. Թագաւորին միայն հրաման է ունել բա-զում օրինաւոր կ անայս. Իշխանութենէն է հարց սպա-նանել զորդիս կամ վաճառել. իսկ զնեալսն յանօրէն ամուսնութենէ բացընկելիս մանուն ի մահ։ Ա-ռ հասարակ մեկիք են բարուք, ամբարշտաճաք, նախան-ձոտք, խորամանկք և կեղծաւորք. ագագանին պղերգ և բռնաւոր, բայց ռամկին գործասէր և ճարտար է. տպագրութենէն, կռմնացոյց, վառօդ և այլ ինչ ինչ կենցաղոգուտ գիւտք կանուխ քան յԵւրոպ հնարեալ էին առ նոսա, այլ ցարդ ևս թերակատար են ա-րուեստն. քանզի ոչ կամին Թողուլ զհայրենի հին ա-ւանդութենէնս և խոնարհել ուանկել յօտարազնեայց. վասն որոյ և արհամարհեն իսկ զգեղեցիկ հնարիւք նկարչաց և երաժշտաց Եւրոպայ, բայց զբացոյցն իւրեանց՝ նպաստիւք քարոզչաց Եւրոպացւոց ուղղեն։

2083. ԼԵԶՈՒ. — Ամենայն բառ լեզուի Չինաց միաւանկ է, և որպէս կարծի՝ արմատք բառից կամ սկզբնակաք չեն առաւել քան գ350, որք ըստ պէս-պէս հնչմանց և արտասանութեան նշանակին մինչև 40 և 50 այլազան իրս. չիք հոլովումն բառից և բայից, վասն որոյ և գժարարութիւն մեծ է խմանալոյ զբան նոցա. բան բարբառին և աթոռական նոցին նորա-ձեւք իմն են, իբր զի մեր մի տառ է միոյ միոյ յ'350 սեւզրայիցն, յորս յաւելուն զայլ նշանագիրս իբր 80,000, զոր հազիւ բաւէ մարդ ուսանել յամենայն ի կեանս իւրում, բայց ի բարբառ ռամկին բաւա-կան է 6,000 նշանագիր. բայց ի տոցունց ունին և այլ ինչ նշանս յարտայայտել զմայնս բառից իւրեանց և զնկամուտ բառից. և գրին նոքա յայնչէ կողմանէ լինին բառ ընդ բառիւ սիւնաձև տողեալ։

2121. ԲՆԱԿԻՉՔ։ — Թիւ համբրէն բնակեալց Ամերիկոյ ըստ նորագոյն աշխարհահամարուց գումարի ի 57 միլիոն մարդկան։ բնիկ Ամերիկացիք Թուին ազգակից ասիական ազգաց ընդ Մողոլեան ցեղին, իսկ էսգիմացիք՝ ընդ Սամոյետաց, համեմատաբար՝ Հնդիկք աւելն Ամերիկացիք։ Բարեկազմք են մարմնով և ուժգնք։ չառագոյն մորթով, երեսք անկիւնաւոր, այտք ուռուցեալ, քիթ կարճ, Նախանին, ըզԹուխ Թանձրս, աչք առ ի շեղ, հեղք Թուխ, մերուսք սակաս։ հանճարեղք և արիասիրտք են և բարուք ազատասեռք և վեհմիտիք։ Երիք ժողովուրդք էին յաւուրս գիւտին Ամերիկոյ յորս քաղաքականութիւն բարգաւաճէր, Մեխիկացիք, Բերուացիք և Ապաչգան ժողովուրդ ի Շիլէ։ իսկ այլք որիշ որիշ կային ձկնորսութեամբ և որսով և ի բերոյ երկրի պարբերաբերալ։ որք Հալածեալ յԵրոպացւոյ խուսէրալ խուսեցին ի խոր աշխարհին և նուազեցան յոյժ յոյժ։ ամենայն գնդի և ազգի էր սեփական բարբառ, որպես զի 438 լեզուս Հաշուին յԱմերիկա և 2,000 բարբառս։ հեռանդոյն միացեալք նահապետք ազգի քրիստոնէից պատկերն զՔՀԾ ոմն Հակ կամ զՀագի մեծ։ Մեխիկացւոց և Բերուաց էին և պաշտամունք կռտից։ Ի բնիկ ժողովրդենէն Ամերիկոյ արդ ասեն իբր 10 միլիոն, յորոց իբր 2 միլիոն տակաւին վայրենաբար և ազատաբերն կեան։ Նշանաւորք ի միացորդս ազգին են Շիլէացիք, Բերուացիք, Գարիպք կամ Գարաիպք, կուասիոնոք Թափառականք առ Օրինոկոս, Արաւականք ազատք ի Շիլէ, Մոխոսք ազատք ի Պոլիվիա, Գաւերով կամ Գաուիրք ի սահմանս Օրինոկոյ։ Մեխիկացիք կամ Ացտէք։ Նեհամք կամ Դեհամք ազատք ի Ն։ Մեխիկոյ։ Դոնշերաք, Շոշոնք և Ապաչականք ի Գոլումպիա։ Սիոսք, Օջաճք, և այլն, ի Հիւսիսային Ամերիկա։ Նաչէզք, Գուլք, Ձերոգք, Ձիաքդայք, և այլն, ի Միաբան Նահանգս։ Խոռոցիկք, Ակինոզվինք կամ Լէնապք ի հիւսիսային Ամերիկա, Էսգիմացիք բազմատոհմք, Բէչերք և Դինուէլեզք ի հարաւային ծայր Ամերիկոյ։

Եւրոպական ազինք լցին զպահասութիւն ամերիկացի ազգաց։ Սպանիացիք, Բորտուգալք, Անգղիացիք, Հոլանտացիք, Գերմանացիք, Գաղղիացիք։ յԵրկուս վերածին արդ ամենայն բնակիչք Ամերիկոյ ի Սպանիս և յԱլբիոնէն։ Սպիտակք ծնեալք յԵւրոպա՝ շէրքն կոչին ի Հարաւային Ամերիկա, և Գէլս ծնեալքն յԱմերիկա. ծնեալք ի խառնութենէ Եւրոպացւոց և Հնդկաց Գէնէս կամ Գենեզս և Մուլաթս. սերունդ Եւրոպացւոյ և խաչկի Գուարէ

ասի, և սերունդք զանազան ցեղից խառնվելոց՝ այլազգանուանութիւն։ Խափչիկք կամ սեաւ սորուկք բամասթիւք են Թե և ոչ որչափ յատկին. սորա գործոնն ղերկիր և ծառայեն ի տունս. հեթանոս հիդիկք ըզնախնեացս իւրեանց ունին զասելով կենաց, իսկ քրիստոնէացքն գրեաթէ ամենեքին հաղագորձք են։

2122· ԿՐՕՆՔ· — Սպանիացւոց և Բորդոգալոց նախ սիրելոյ Ամերիկոյ՝ ծաւալչին ի նմա ղքրիստոնէական կրօնս, և ցարդ աշխարհքն որ երբեմն ընդ իշխանութեամբ նոցին էին՝ ունին զհաւատական ուղղափառս հաւատս. և մեծ կէս ժողովրդեանն Ամերիկոյ զայս կրօնս գաւանի։ իսկ ուր Անգլիացիք սիրեին և սիրէն՝ նորաղանգ կրօնք են անդ, որպէս ի Մխաբան Կահանգս և յԱնգղիական կալուածս։ Թիւ նորադարձից համարի 24 միլիոն, հեթանոսաց կամ սարբարաչարից՝ որպիսիք են աղտս բնիկ Ամերիկոյ՝ 1,500,000· յոլնադատանք սակաւք ի մասին Ռուսաց, սակաւագոյն ևս Հրեայք· այլն ամենայն հաւատական ուղղափառք։ Սակայն և տմարք ի քրիստոնէից հաւատով ունին տակաւին զվանդըզնոյ զհայրենական հեթանոսութեան սովորութիւնս ինչ, զոր և գալո կասարեն։ Հեթանոսքն ամենեքին հաւատան յէն գերագոյն կամ ի Մեծն Հոգի, սակայն տոհմի տոհմի նա և առն առն են ասանձին Թերութիք կամ յատուկ գիք ինչ կամ պաշտելիք տարրականք, զոր Ֆէթիշ- կոչեն, է որ չնչական և է որ անշունչ. չառք և լուսաւորյոց պաշտօն ասանին։

2023· ՀԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ· — Բազում դարուք յառաջ քան զգիւտ Ամերիկոյ ի Կոլոմբոսէ, էին անդ տէրութիւնք բարգաւաճեալք քաղաքական հրաշան. գոք և արուեստից հեթեթութեաք, մանաւանդ Մեխիկացիք և Բերուացիք· որոց և ասերական քաղաքացն յարդ վկայք արձանանան Հարտարութեան նոցին։ Եւ են յարդ ոչ սակաւ ազատ տոհմք ի սերնդոց նախին ազանց, որք զկարելին Հարտարութիւնն անկորուստ ունին, մանաւանդ ի գործածս նկարելն ա նօթից, և ի հիւսուածս խոշոր կաւատց, և խալաթորգութեան և նմանեաց։ Իսկ յետ մտից եւրոպացիքն հրաձեռնաց և մանաւանդ յետ ազատութեան պետութեանցն ի լծոյ նոցա, թէևսկիսեն ի քաղաքական կարգս և յարուեստս հաւասար նոցին եւրոպացւոց, զորոյք գէն իսկ յերս իրս գաղնակիցքն հիւսիսային Ամերիկոյ, երբեմն հպատակք և սերունդք Անգլիացւոց և ևիբքյագրաց ազգաց Եւրոպիոյ։ Վաճառականութեան ձերբ Ամերիկացիք հիւսիսոյ գերազանցեն արդ զնմանորբք յետ Անգլիացւոց, և յաջորդն յայսմ յոլովութեամբ բաթեյարգար Ճանապարհաց և երկաթուղեաց ի ցամաքի, և ջրանցից և չոգեմուղ նաւարկութեան ի գետս և ի լիճս, և ընդ ովկիանոս գիմելով ևՅերասյա· իսկ զարգիս Միացեալքն փորձ փորձեն բանալ և վերջիս Ճաքոնայ ի մուտս նաւուց եւրեանց և յառևտուր։

2024· ՀԱՆԱՊԱՐՀԻ երկայնաձիգք և գեղցիկք յոլով են ի Միացեալ Նահանգս և յանգղիական Ամերիկս, յԱմերիկան կղզիս, և սակաւք ի Սպանիական աշխարհս. ուր կան ճանապարհք նաեւ ի Մեխիկա մեծ պետից Մեխիկոյն, յորոց ոմանք ձգին 1,500 մղոն ընդ երկայն, է որ ընդ գաշս, և է որ անցանելով և ընդ լերինս· իսկ երկաթուղիք յաճախագոյն են յԱմերիկա ի Միացեալ Նահանգս՝ քան յեւրոպական պետութիւնս. գրեաթէ ընդ համարէն երկաթուղիս Աջանդական գաշտաւոյ ընթանան չոգեկառք անցանելով ընդ երեւելի քաղաքս, որպէս Բորդզիա, Բորդամշոհ, Պատըն, Նիւ Եօռք. Փիլատելֆիա, Պալտոր, Վորճեռ, Չարլսդըն, Բհնաս գոլա· յորոց քաղաքաց ձգին այլ երկաթուղիք ի մէջ երկեցայս ՕՀիոյ և ի Միսսուրի գետափունս, ի նը չանաւոր քաղաքս որ յայնկոյս Ալլեհանի· գաղձեալ և եզերք մեծամեծ գետոց չջնապատեալ են երկաթուղեօք· նոյնպէս և ամենայն ճանապարհք բոլորց և չհաւասան քաղաքաց· — Անգղիացիք ունին երկաթուղի ի կանադա· Բերուացիք ընդ մէջ Լիմայ և Գալլաո· ի Պրեզիլ, ևս ձեռն արկեալ է գործել երկաթուղիս· Ի կղզիս Գուբա ճոխագոյն է երկաթուղեօք·

ՀՐԱՆԳԻՔ գիսաւորք Ամերիկա են ի Միսսուրի Կանգնգա, որք հաղորդութեամբ մեծամեծ գետոց և ընդ գետ գիսրին մեծագոյն զճանապարհորդութիւն ի զանգնական Ամերիկա· ի Նոր Նօռքայ ցՆոր Օռլէան՝ մարթ է գնալ նաւարկութեամբ ընդ 2,300 մղոնս, յորոց մասամբ ընդ ջրանցս, և երբեք ընդ լիճս և ընդ գետս· Երեկլի ջրանցք են Էրիանն՝ յԱլպա. նեաց ցՀրիէ լիճ· Բհնսիլվանեան՝ որ ի Միսսուրեթա. ռընայ ձգի ցԱլեկսանի լերինս և ի վոակս ՕՀիոյ· — Ձիլաբեք և ՕՀիոյ ընդ Զորճեթաւըն և Բիդգասբրկ· Մեծ ջրանցք ՕՀիոյ, որ ձգի ի լճէ անսի ցՀրիէ, 263 մղոն ընդ երկայն· — Մորրիս ի Ն· Ճըրզէյ, որ երթայ ի Բհնսիլվանիա· — Ջրանցք Շամբլէյնայ՝ ընդ մէջ Ս· Լաւրենտեայ և Հուսոնի· և այլն· Ցանգղիական Ամերիկա կան ջրանցք ի վերին կապադա, ընդ մէջ Էրիէ, Օնդարիոյ և Օդդաւայ լճաց· Ի Մեխիկոյ՝ մեծագործ ջրանցքն Տէսակէ ու Հաւէհուէդոա ի պաշտպանութիւն մայրաքաղաքին ի յորդել ջրոյ լճաց·

Նոր և մեծագործ ևս Ճանապարհ գործի արդ ի միջոցի Ամերիկոյ ի կրճէն կցորդութեան երկուց մասանց նորին, ի Բանամա, առ ի Կաղորդութիւն երկուց ովկիանոսաց՝ Աջանդականին և Խաղաղականին, ծախուք Միսաան Կահանգաց, գաշնագրութեամբ ընդ պետութեան Կորոն պրանդայ, յորոյ վիճակի կայ Բանամա· և գործն արդ երկաթուղի սկսեալ ի Մանցանիլլա կղզւոյ Աջանդականն սկիզբ և հասեալ ի Կորիոնա, յորմէ ձգեցի ցայն խաղաղականին, բովանդակ ընդ 46 մղոն ճանապարհ, որ և աւարտեցաւ՝ որպէս կարծեմք յաւուրիկս սարւոյս (ի 1854)· և հակիրճն այն անցք երից կամ չորից ժամուց համառօտեսցե զհաղորդ փարախս նաւարկութեանց, Ճանապարհ Կաղոյն բացեալ առ կղզիս ովկիանոսոյ և Հնդկաց· որով և Ճանապարհ մեծանուն լեզի Բանամա, և գնալ երեքեքիք ի պատուհասեան բացուն անցից նորուն·

2025· ՎԱՐՉՈՒԹԻՒՆ· — Գրեաթէ ամենայն պետութիւնք Ամերիկոյ՝ արդ ընկերակցութիւնք են և գաշնակցութիւնք· յորս զառաջին տեղին ունին




ՀԻՒՍԻՍԱՅԻՆ
ԱՄԵՐԻԿԱՆ
ԱՍԻԱ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՐԱՒԱՅԻՆ

Միաբան Նահանգք հիւսիսային Ամերիկոյ, և ըստ օրինակի նոցա յԵրկիրն և այլք, բայց տակաւին ի յեղափոխութեան և ի յոյզս են շատք ի նոցանէ։ Միայն Պրազիլ Թագաւորութիւն է պայմանաւոր, կրկին խորհրդարանաւք կամ Ժողովք առնոկալաց, սակայն և նորա օրինք հաստատականականք են ըստ զանազան գաւառաց։ Ի Հայիդի կանգնեաց Սուլթանն ոմն ինքնակալութիւն նոր, իսկ կալուածք Եւրոպիա ցոց զբնիկ տերանցն վարչութիւնս ունին։

ԲՆԱԿԱՐԱՆԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆ։— Ըստ բնական դրից Ամերիկա զատանի յերկուս Թերակղզիս մեծամեծս, որպէս և կանխաւ ասացաք, և ի կղզիս մեծամեծս յԱթլանդականին, որք արևմտեան Հնդկաստան կոչին. վասն որոյ և սովորութիւն է աշխարհագրաց զպետութիւնս Ամերիկոյ զատուցանել ի հիւսիսայինս և ի հարաւայինս, և ի միջինս՝ զԻշխանութիւնս կրկին մասանցն այսպէս կոչելով։ Իսկ ըստ քաղաքական վարչութեան 27 պետութիւնք են յԱմերիկա, եօթն Եւրոպականք, որք են Ռուսք, Դանիք, Անգղիացիք, Գաղղիացիք, Սպանիացիք, Հոլանտացիք և Սուէտք, առաջին Երեքն զհիւսիսականսն աշխարհին ունին, իսկ այլքն կալուածս ի կղզիս, յորս և Անգղիացիք 20 բնիկ պետութիւնք, յորոց երկուքք միայն ի Հայիդի կղզւոջ, այլք ի ցամաքի. և արտաքոյ սոցին՝ բարբարոս կամ ազատ Ժողովուրդք ի հարաւային ծագ աշխարհին և ուրեք ուրեք ի վերին կողմանս։ Մեք ըստ կարի պատկառ կալով բնական դրից և հին բաժանմանց, միանգամայն և զնոր պետութիւնսն անշրթոհ ունելով՝ որոշեմք զԱմերիկա ի 16 աշխարհս ի տեղագրութեանս մերում, այսպէս.

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿՈՍ.	ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿՈՍ
Ա. Բեւեռային Գաւառք	Ի. Գոլոմպիա
Բ. Անգղիական Ամերիկա	Վենեցուէլա
Գ. Միաբան Նահանգք	Նոր Կրանադա
Դ. Մեքսիկոյ	Գիգոյ կամ Հասարակած
Ե. Մինչին Ամերիկա	Ը. Բերու
Կոստադեմալա	Թ. Պոլիվիա
Սան Սալվատոր	Ժ. Չիլէ
Նիկարագուա	ԺԱ. Լանգանա
Գոստարիկա	ԺԲ. Պրեզիլ
Հոնտուրաս	ԺԳ. Բաթագոնայի
Մոսգիտոս	ԺԴ. Ոբրոկայի
Զ. Կղզիք	ԺԵ. Լա-Բլատա
	ԺԶ. Բագանիա և Կղզիք

ԱՄԵՐԻԿԱ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ

ԲԵԽԵՌԱՑԻՆ ԳԱԻԱՌՔ

2126. Յաղ անուն կոչին գաւառք ձգեալք յայնկոյս 66° հիւս. լայն. զորոց սակաւամասնակոյ ունիք ծանօթութիւն. քանզի ձմեռն յաւելուածական ժամագործ ի սահմանս անդ սառամանեայց, ուր և մնդիկ պաղի. է ղ բլուրք սառին 5–600 ոտնաչափ բարձրութեամբ երեին լուղկանք յերկուս ծովսն. գիշերք ամորեայ պաղ զաղարին, գեղ գալար և շունչ կենդանի արտաքսմանեալ է ի գաւառաց անտի. այլ իզձ շահախնդիր վաճառականաց և որսորդաց կան ձկան՝ համարձակեցուցին զաղբեսերան յատաք խաղալ մինչև յ85° հիւս. լայն. ի սառնապատ ծովս վասն. Երկք ճանապարհք են որ տանին ի ծագս անդր աշարհի, առաջին ընդ միջ կրճկլանապ և Սբերկրիայ, երկրորդ պեհրինի ընդ Բսիա և ընդ Ամերիկա, երբորդ պաֆին ի հիւսիսի Ամերիկոյ։

Ի տերամանդ աշխարհիս բնակին Էսքիմոյիք ազգ մարդ և տակտ տեսակաւ, այլ բարեբորդք բնութեամբ. սեր հայրենեաց ոչ ներէ նոցա մեկնել անտի կամ տալել ընդ երկար յօտար երկիր. բերք գաւառացն են լոգք և վայրի ուռենի. և յընտանի անասնոց շուն միայն ընկեր ճշտասնականացն. կերակուր նոցա ծովային գեռուինք։ Ի ծայր երկրին էսգիմոցւոց կայ հրուռանդան Ս—Ք, յոր վայր ժամանեալ գոսք մեծ ծովացուս։

2127. ՍԻԲԻՊԻՐԿ կղզիք են երիք մեծք և մանունք յոլովք ապառաժոտութ ընդ 76°–80° լայն. հիւս. և ընդ 6°–20° երկ. արևել. երեքին գլխաւորքն կոչին ՍԻԲԻՊԻՐԿ, ԿՂԶԻ ԱՐԻՒԵԼԻՑ ՀԻՒՍԻՍՈՑ և ԿՂԶԻ ՍԻԲԻՊԻՐԿԻ ՀԱՐԱՒՈՑ. վայրերնի է երևայի նոցին և ամայի, սառոյգք լերանցն մինչև 4,000 ոտնաչափս ի բարձրութեան, և հովիք ձիւնապատք ի տասագնին ամարանի բերեն Թուփս արագախառնուրս Ճարակ հիւսիսային այծեմանց. յերանակին յայնմիկ գան որսորգք կիակց յափունս անդ. բայց մեք Թանձր պատէ պնդագոք պղպէմանցն ժամանակս տալոյն։ Ռուսք յարևմտեան ափունս Սբերկրիայ հաստատեցին բնակարան որսորդաց ՍՊԻՐԵՆԳԵՐԿ անուն, և զկղզիան գրաւեցին ընդ իշխանութեամբ իւրեանց յամին 1764. Ազբերկրի կղզիս եգիս Ուէլտիպի անգղացի, յամին 1553։

Ընդ 70°–71° լայն. հիւս. և 10° երկ. արևմ. կայ ամայի կղզին ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՅԵՆ, յանուն Հոլանտացւոյն որ եգիան ջայն յամին 1611. է՛ի նմա հրաբուխ մի և լերինք 6.000 ոտնաչափ բարձրութեամբ։

2128. ԿՐԻՆԼԱՆԴՏ (Groenland). Ուր և կանաչով երկիր. յԼԻ թ կամ ի. գարուն գաւա յԵՆԵՐԿԻԿՈՒԼ Ռաւտայ որոյ հանդիպելով անդ անտառաց և մարգանդից՛ի զարմացման լեալ կանաչ երկիր կոչեաց. անյայտ են ասհմանք նորին՛ի հիւսիսոյ կողմանէ, ՚ի հարաւոյ յանկի՛ի ՓԷՐ-ԷԼ գլուխ ընդ 59° լայն. հիւս. երկայնութիւն նորին ձգի ընդ 20° և 80° արևմ. լերինք սառամանեաց գրաւեն զնորս կղզւոյն զոր և ժողով կղզեաց մարդ է կարծել՛ի ձեռն սառուցից հաղորդելոյս. ձմեռն երկարատև է անդ, ամառն վաղանցուկ և կարի տապագին, որ ածէ մառախուղս և փոթորիկս կամ հողմն ահագին. ՚ի վերջս հարաւային կողմանց երկրիս գիշեր տեւէ 18 ½ ժամ, ի հիւսիսակողմն մինչև ութ ևօթնեակս, բայց հիւսիսային ասացեալ լոյս կամ արշալոյս և ցոյք ձեանց փարատեն ըստ մասին գնալոյ գիշերացն։ Ի կրկնեալ կան բէն՝ հիւսիսային այծեամն, արջ սպիտակ, ագռաւս, կաքաւ վայրենի, ձիւնահաւս, որսական և ջրային հաւք. ՚ի ծովս կէտ և փոկ. իսկ չուն փոխան գրասառս լեի կառաց։ Ի բուսականոց վայրի ուռենիք և մամուռք և լօա. գետնախնձոր և բողկ և արմտիք ինչ պտուղ երկնից մշակին քան Թէ երկրին, որ գնալոյ յաձախ և զգալի և զվարսակ. Եւբոպացիք ածին անդր և ընտանի անասունս, զոր յոյժ գըժուարին է գարմանել։ Բնակիչք Կրէնլանտայ են Էսքիմոացիք որ բերեն գմանուածիսն Մողոլան ցեղին, գձմեռն ժողովել երեսուն երեսուն կամ ևս աւելի բնակին՛ի սորերկրեայ անձուկ այրս կամ նկուղս, զոր չուրջանակի պատէ ձիւն, և կանթեղ մեծ լիւղոյ կիսի լուսաւորէ և ջեռուցանէ. զմանուն բնակին ընդ վանիք՝ գործեալ՛ի մորեղոյ ծովայնոյ հորքուց։ ՀԷՔԱՆոպէն հաւատան՝ի գերագոյն Ոգի և զանմահութիւն հոգւոյ խոստովանին. գարձեալքն՝ի քրիստոնէութիւն գիւրահաւանս ցուցանեն զանձինս. ձեռ առ նոսա իշխանական սերութիւն կամ քաղաքականութեան օրէնք, այլ ատհմ ընդ ատհմի բնակեն մերձ յանկզգալ խաղաղութեան, զոր երբեք երբեք խռովին Եւրոպացիք ցուցեալ նոցա զոյն՝ յոր մոլեան են։ Դանիք տիրեն Կրէնլանտայ, որոյ բնակիչք համարին 20.000 և երիր մասն նոցա քրիստոնեայք են։ — Ձեռ գիւտի երկրիս՛ի Նորմանացւոց խալանայ, յամին 893 կամ 982, յարեւելեան ափունս նորա հաստատեցան գաղթականք յամին 1121, ո. րոց 190 գեօղք և 12 Թէմք էին ընդ միով եպիսկոպոսաւ, և հաղորդութիւն առնէին ընդ խալանացւոց, բայց ոչին 1408 ամին, որպէս ասի, սառամանեաց կուտակութիւն եղից զձմեռապարհս նոցա, և կորեաւ ժողովուրդն սովու կամ որատութեամբ. որով բարձաս և չքացաւ երկրիս մինչև ցամին 1822 յորում Սգորզովի անգլիացի գեւգերեալ գնովաւ և գիտ ցարևելեան ափունսն մերկացեալ՛ի մառախուղ, և հետացեալ վերկրէն գառաջին բնակութիւնս վանիս և բնակիչս ոմանս, որ ոչ համբրէն Էսքիմոացւոց նմանեին. բայց են որք ասեն ոչ յարեւելս այլ՛ի հարաւակողմն արևմտից լեալ զբնակութիւն գաղթականացն քրիստոնէից։ Յամին 1721 Եգեդեոս Ցավհանեան քարոզիչ յայգէն Դանեաց գնացեալ անդր գարձոյց զազգացս՛ի քրիստոնէութիւն, և յետ այնորիկ 18 գաղթականս հաստատելին քարոզիչք, ընդ որս և Մորաւեանք որ 1.000 աշակերտս ունին. գաղթականքս այսօրիկ սրոհնի՛ի հարաւային տեսչութիւնս, մինչև՛ի 68° լայն. և՛ի հիւսիսային մինչև ց՝73°։ Յաւաքնուսն գլխաւոր տեղի է ընդ 64° լայն. ԵՒՒԼԻՒՍՍՈՒՍՍԱԳ 1.800 բնակչաք, և են նորա բուսարեր վիճակք՝ ԿՕՏՏՈՒՍԱԳ, ընդ 94°, առաջին տեղի գաղթելոց, անդ նասի տեսուչն։ — ԼԻՒԹԼՏՈՒՆ և ՆՈՐ ՀԵՒՒՀՈՒՈՒ գաղթականք Մորաւեան Եղբարց հիմնեալք՝ի 1758։ Ի հիւսիսական ԷՊՏՏՒՈՒՍ, ընդ 68°, կաուցեալ՝ի 1759, և ՈՒՐՈՒՍՈՒՆՈՒՍ։ Դանիք գան՝ի կողմանս յայսոսիկ վասն որսոյ կիսից և փոկոց, և այլոց ձըկանց, վասն ձարպոյ ծովային շանց և փետրոյ բագից։

2129. Յարևմտակողմն կրէնլանտոյ Բարրի Նաւամատոյ եգիա պարս կղզեաց. յորս են ՏԻՒԸՆՆ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ (North Devon) և ԳԱԼԼԱՐԻՆՆ հրոմանդան ընդ 76° լայն. որ Թերևս կրէնլանտոյ իցէ մասն։ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳԵՒՈՐԳԻԱ, ՊԱԱՏՏԸՐՍՏ (Bathurst) ՄԵԼՎԻԼ, կղզիք սառամապատք անբերք, անբնակք, այլ գան՝ի նոսա արջք, բէն եղջերու, որ ձարակին զանկաւ ինչ Թուփս և սուճկա՝ զոր բերէ երկիրն։ Յայնկղզեացս՛ի հարաւոյ լինդասդոյս նեղուցն ՅՈՐՔՍՏՐՍԼՒՒ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ կոչի երկիրն ամայի. սահմանակից է նմին ՊԱՆԸՐՍ երկիր, և՛ի հիւսիսակողմն կայ ՍԱՐՒՆ կղզի. — Յարևմտեան Պաֆֆինայ և ընդ հիւսիսի Գրմպրըլէնայ ձգի երկիր զոհ գահեղական կրէնլանտայ, զոր կոչեն ԵՐԻՏՐ ԳՈՐ, ԼԻՒԼՓՈՍՒ ԻՇԽՈՒՆ կամ ՊՈՅՈՆ կամ ՆՈՐ ԿՈԼՈՒՆՑ, և գնալոյ աւելցին նորին՛ի մանուածրի ԳՈՒՏՈՒ ԳԸՄՊՐԼԷՆՏՍ։ Թուի Թէ և սա կղզի իցէ. յարեւելեան ափունս նորին գտան նշմարանք բնակութեան, քանզի և չէ գիտելի ասայն որպէս զարևմտակողմն։

2130. Յարևմտեան հիւսիսոյ Ամերիկայ կայ Ռուսաց երկիր ընդ 133°–170° երկ. Ս. և ընդ 55°–71° լայն. Հ. 100.000 փարսախ քառակուսի, 60.000 բնակչաք. ԿԱՅՏԱՒՔ (Kaidjak), գլխաւոր կղզի յարեւմտից Ասիւոտիչ՝ կամ Ս. Պաւլ անան և նասա. հանգիստ. ՆՈՐ ԱՐԽԱՆԳԷԼ՝ի ՍԻՒՏՔԱ կղզւոջ, է և ասրա նաւահանգիստ և է ամեն կաւահակի Ամերիկեան Ռուսիոյ, ունի զբանիսա, մեծարանդա, փայտակերտ և վայելուչ ապարանս կաւահակի. ընկերութիւնն Ամերիկեան Ռուսայ բառնայ՝ի կղզեացս յայսոսիկ մուշտակս. բնիկ ժողովուրդ երկրին են Էսքիմոացիք. Չուքչիք, Քալիուչք, որոց չիք բնակութիւն կայուն։ Ի չարաշոյ կուսէ ձգին սահմանք Ընդգնայեաց։

Գլխաւորք պարք կղզեաց Ամերիկեան Ռուսիոյ են ԿԱԼՈՒՇԵՒՍՔ, ՈՒՒՑԼՉ, ԵՕՈՔ, ՕՒՈՒԱՑՈՒՏՍ կղզիք, կղզիք ԳՒՈՐԳԵԱ Գ կամ ՊՈՐՈՆՈՖ, ՔԱՏՔԱՔ, և այլն։ Իսկ ի ցամաքի են գաւառք Լոպիմացւոց, Ռիւթինեաց, Չուքչեաց, Քոնեկաց, Քոլուչաց, և այլն։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ

2131. Անգլիական Ամերիկայ սահմանք են ի հիւսիսոյ կողմանէ՝ Բևեռային ովկիան և Կրճնլանտ, յարևմտից՝ Ռուսաց երկիր և Ովկիանոս մեծ, ի հարաւոյ՝ Միաբան Նահանգք, յարևելից՝ Ատլանտական. տարածութիւն նորին համարի գոլ իբր 380.000 փարսախ քառակուսի, այլ սակաւ ինչ մասն նորա ևեթ բնակեալ է, վասն ցրտութեան երկրին: Կոչի աշխարհս այս և ՆՈՐ ԲՐԻՏԱՆԻԱ, և են նորա ութ գլխաւոր գաւառք որք են հանդերձ Թուով բնակչաւն.


Կանատա Ստորին	769.000
Կանատա Վերին	724.000
Նոր Պրունզուիք	256.000
Նոր Սկովտիա / Պրէդոն Գլուխ	200.000
Կղզի Եդուարդայ	63.000
Նոր Երկիր	97.000
Հուսոյն և կողմանք Բևեռին	100.000
	2,002.000

2132. Ա. Բ. ԳԱՆԱՏԱ կամ ԿԱՆԱԴԱ. որոյ տարածութիւն է 30.500 փարս. քառ. զոր Եգիա Ցովհաննէս Գաբոտ Վենետկեցի յամին 1497. Գաթիէ Գաղղիացի ետ ծանօթս զնմանէ, և յամին 1600 Գաղղիացիք հաստատեալ անդ գաղթականս բարգաւաճեցին զվաճառականութիւն. այլ ի 1763 գաշնագրութեամբն եղելով ի Բարիզ Կանագա տուաւ Անգղիացոց: Լայնածաւալ հովիտ գետոյն Ս. Լաւրենտիոսի ձգի ընդ մէջ լերանց որ ի հիւսիսոյ և հարաւոյ ամբառնան, գոն լերինք և ի հովիտ. ափունք ևեթ գետոյն բերրիք են, արմտակրթի և հիւսիսի երկրին անաւասրմոյ է. կլիմայ Կանագայ ցրտագին է, յարևելակողմն զամիս հինգ ամէն, յարևմտեան երեք ամիս, և սառամանիք ունին զերեսս երկրին. ամառն վաղվազակի յաջորդէ մրպէս և սա ամառան. բուսաբեր սահմանք ձգին մինչև ի 50° լայն. Օդագնաց գետ անջրպետէ ընդ երկուս մասունս Կանագայ:

Ա. ՍՏՈՐԻՆ ԿԱՆԱԴԱ կամ ԲԷՊԻԼԻ. Տարածեալ է ի բարեբեր ափունս Ս. Լաւրենտիոսի (S. Lawrence). բնակիչք երկրին ի նահանի գաղթականաց գաղղիացւոց սերեալք են և զնոցուն զբարս և զկրօնս ունին և ազգաւ. գոն և Գերմանացիք նոքեալք. և Հնդիկք սակաւք, կէսք ուղղափառ կրօնիւք, և կէսք ազատ օրինօք յանտառս բնակեալ. սքաս են ի ցեղէ Ալգոնգվինց որ և Շիբաուայի և ի Մոհավքեանց, ընդ որս են և սերունդք խառնոց և հուրոնաց Նուռզուէնք Թուով: Երկիրն բերէ ցորեան և ծառ մի շաբարաբեր. անասունն բազում, ձուկն առատ, աղ սակաւ: Կանագացիք սիրեն զորարդութիւն, և զմորթ երեց առաքեն ի վաճառ ընկերութեան մին Անգղիացւոց յարևմտակողմն Վերին Լճին, ուր գան նոքա ամ ամի իբրև 3,000 արք բարձեալ պատրաստ վասն հնդկաց, ցգի և հրազէն, ծխախոտ և ուտելիս, նաւեն ի Մոնրէալայ ընդ Օդագաս, ապա ընդ ցամաք խաղացուցանեն զմնկոյկան մինչև ի հուրոն լիճ, և անտի ի համբարանոց Վերին Լճին. ոմանք ի գործակալացն առեալ զմուշտակս գառանն ի Մոնրէալ, այլք Ճանապարհ հարթեալ ընդ գետս և ընդ գաւառս գնան ի սահմանս Բևեռային ովկիանոս հայթայթել այլ ևս մորթս. յայս վաճառականութիւն պարապին և առանձնակաք ոմանք և ընկերութիւնն Հուսոյնի, և մորթքն զոր առնուն են չնչերմ, արջառ, կղերմ, կղնաքեսի, ալուճասուս, էլանայ, վարսի ցլուց, լուսանցց, և այլն: — Կուսակալ գաւառիս իշխէ ամենայն Անգլիական Ամերիկայ. է նորա տասան օրէնսդիր խորհրդականաց՝ զոր կարգէ Թագաւորն Անգլիոյ, և նուիրակք ժողովրդեան որպես տասնին Բրիտանիոյ:

Երևելի քաղաքք, ՄՈՆՐԻԱԼ. Աւ համանուն գեղադեակ լեռնակաս ի կղզւոջ միում Ս. Լաւրենտիոսի, կարի բարեչէն. ի մեծ հրապարակի կանգնեալ է արձան Նելսընի ի սեան բարձր. ունի կրթարանս, մատենադարան, գեղեցկաչէն նոր եկեղեցի մեծ ուղղափառաց. բն. 44.000. յոլովք գաղղիացի ազգաս և բարբառով. որք պարապին ի վաճառականութիւն և յառաւուր ընդ բնակչաց Վերին կանագայ և Միաբան Նահանգաց. — Ցեղերս գետոյն Սորելայ կայ ՖՕՐԹ ՈՒԻԼԻԱՄ ՀԵՆՐԻ քաղաք Անգղիացւոց: — Յարևմտակողմն կղզւոյն կայ ՉԻՆ քաղաք յորոյ նաւահանգիստ գումարին նաւք որ գնալ ունին ի Վերին կանագա. — ի բերան Ս. Մօրիս վասկի կայ ԵՐՈՒ-ԳՏՏ (Three Rivers) անուն քաղաք: Բն. 7.800:

ՔԻՊԻՔ կամ ՔՈՒԻԲԵՔ. Մայրաքաղաք, յահե-



Քիպիք

կում Ս. Լաւրենտիոսի որ գործէ ծոց նաւակայ առքաղաքաւս. սորա երկու են մասունք, Վերին քաղաք՝ յորում Ս. Լ-ո-ր-է-ն-ս ամրոց և պալատ կողմնակա-

լին. Սաորին քաղաք, ոչ որպես զվերին բարելքեն և վայելուչ. ի Քեվեք նսեին նպիակսպոսք անգլիական և հռոմէական. նշանաւոր են բերդն և ամրոցք հզօր, եկեղեցիքն և վարժարանքն, զինուորանոցք, մատենագարան, զինարան մեծ, ուսումնական ընկերութիւնք, և այլն: Բն. 40,000, ի վաճառականութեան սաորև է քան զՊոռթըսէյ: ԶՔեվեկք ի 1608 կառոյց Սամուէլ Շամպլէն գաղղիացի, Անգլիացիք առին ի 1759: — Լուիսաւ աւան խոռոգաց աշակերտաց ուղղափառ քարոզչաց:

Գ-ՓՀ աւան, յորում են ճարտարարուեստ ջնարդերք փայտի իննսնիւ չափ, և առ երկ ջրվէժին Մոնմորանսայ. կայ և այլ ջրվէժ գեղեցիկ առ Բաւ-Լէյ գետովը:

Օ-Լէանս աւան ի կղզւոջ յորում մեծերանոցք նահատուցից:

2133. Բ. Վ Ե Ր Ն կամ Ա Ր Ե Ի Մ Տ Ե Ն Կ Ա Ն Ա Դ Ա, զի կայ յարևմս. Սաորնի, և ի հիւսիսայ լճացն և Ս. Լաւրենտեան. կլիմայ սորին ջերմիկ է, վասն որոյ և հերկերն բերբ մեծ. գետնախնձոր, պտուղ և ընդեղէնս, և անասս մեծ յարևմտակողմն գտանսին. բարեբեր են լճափունքն Հուրոնայ, Էրեայ և Օնդարիոյ: Բնակիչք առաւելագոյն մասամբ Ամերիկացիք, եսկ Խռանսացիք և Գերմանացիք սահման յատնուին. սակաւաթիւք Հնդիոնք և Ընթացվայիք ի մշակութիւն և ի հովուութիւն խաչանց պատրասին, քան յարուեստս և ի հնարս ճարտարութեան. բայց ջանիք երկու հասան առ մեջ ի գիտութիւն վաճառականութեան, այս է Ուէսլ 53 փարսախ որ ի Քինկսթըն (Kingston) սկզբնաւորի առ Օնդարիոյ լճաւ. և Վ ֆ ւ ւ ֆ 12 փարսախ յերկայնութիւն որ զՕնդարիոյ հայոցդէ ընդ Էրեայ, գործեալ առ ի խուսել ի վտանգաց Նիագարայ ջրվէժիցն մեծի, զոր գործէ գետն հասնանուն բռնեալ յԷրեայ հոսելով յՕնդարիոյ, և երկայնութիւն նոր 12 փարսախ. ի կես ընթացիցն ուր 4,000 ոտք են լայնութեան նորին հոսի ի գետոյ քարակարկառ ժայռէ 160 ոտնաչափ բարձու, սահմանք ջրոյն յերկուս բաժանին հոսանամբ՝ անջրպետ ի միմեանց կղզի մի, և բերեն այնու զձև պայտի. արևմտեան ջրվիժին 1800 ոտք են լայնութեան, սիւն ցնդոյացն ծխամածիւ անսպառ վերանայ անոտառ, և ձայն սահանցն ի գիշերի ձգի ցչարուսս փարսախս: Ի սասակութենէ սահանաց ջուրցն առ փոքր փոքր մաշեալ քարաժեռիցն յորս գետն Թամփ, երբև 150 ոտնաչափս յեսս ընդգեմ գալեալ էր ջրվիժին յընթացս 40 ամաց, իսկ յառաջ քան զամս ինչ կործանեալ տասպելացաւ ոչ փոքր մասն ի քարաժեռէն.

Դ Ո Ր Ո Ն Դ Ո Ց, որ և Ե օ Ռ Ք. Գնլասւոր քաղաք գասւոյն յամն Օնդարիոյ, ունի ամրութիւնս և նահանգիստս: Բն. 20,000: — Ք Ե Ն Ա Դ Ե Ց, յերկր Ս. Լաւրենտեոսի մերձ յակոնս նորա. 8,000 բնակչաց, ունի նաւահան լաւ. — Կ Ե Ն Ե Ա Ր Ե Ա, հոսս ի հրաշակասւոր ջրվիժն:

2134. Գ. Ն Ո Ր Պ Ր Ո Ւ Ն Զ Ո Ւ Ի Ք. Ընդ միջ կանգասւ, Ս. Լաւրենտեոսի, Նոր Սկովսիոյ և Միսաան հանդիպաց, 3,800 փարս. քառ. ունի անտառախիտ լերինս, և ՀՍ. Ց-Լ Ա Ն Է. գետ որ հոսէ ի գոդն Ֆընֆ (Fundy). ափունք նորա միայն մշակեալ են, ներքին կողմունքն անծանօթ, արևելակողմն անապատ. կլիմայ որպես զՍաորին Կանադայ. ունի ձուկն առատ ի ծովի, և ի բուրաց երկաթ և ածուխ և քարինս պատուականս: Բնակիչք անգլիացիք են ազգաւ, գոն և Հնդիկք սակաւք Ազկոնգինք, որ յատանս բնակին:

Գլխաւոր քաղաք Ֆ Ր Ե Տ Ե Ր Ի Դ Ր Ն Ը, առ Ս. Ցովհաննէս գետով, ունի գպրոց մի և ընկերութիւն մշակութեան և լսգիր. Բն. 3,000: — Ս. Ց Ո Հ Ա Ն Ն Ե Ս, առ Համանուն գետակին ուր Թամփ նա ի Ֆընսի գործեալ նաւահանգիստ վաճառաշատ: Բն. 8,000: — Ս. Ա Ն Տ Ր Ե Ա Ս և Ն Ե Ո Ք Ա Ս Լ, վաճառաշատ քաղաքք, (St. Andrews, Newcastle):

2135. Դ. Ն Ո Ր Ս Կ Ո Վ Տ Ի Ա. Թերակղզի մեծ զոր Ֆընսի գոգ բաժանէ ի Նոր Պրունզուիքսյ. Սկովսիացիք զառաջինն անդ բնակեցան ի 1623, գաղթականիք բազում անգամ սերեցին նմին, այլ ի 1713 ամ. և այսր ետուց ի ձեռս Անգլիացւոց. անասնային և լեռնալայր է. ներքին գաւառին, ծովափունքն և բերդատ. Հաներկն սարաձոռեին Թերակղզւոյն է 1,860 փարսախս քառ. Կլիմայ ցրտագոյն քան զՆոր Պրունզուիքսյ: Ունի բոլս երկաթոյ, ածս, գաճ, կռանիս, գետնամոխս, և այլն. Անգլիացիք և Ամերիկեան անգղիացիք և Հնդիկք երկրագործութիւն ի ձեռն բուելոյ սպասին առած:



Ջարափազ ջրվիժք Նիագարայ

Հ Ե Լ Ի Փ Ք Ս. Գլխաւոր քաղաք ի Տարաւային ծովեղերին,

ունի միջնաբերդ, նահանգիստ, հասարակաց վարժարան, մանուկադարան մի, օրագիրս, ընկերություն, հոյակապ վիճակ, աճող անգլիական եւ սիկոտոսի։ Բն. 15,000։

ԱՆՏՈՒԱՆ։ Ունի նահանգիստ և 1,800 բնակիչ։ — ԼԻՒՆԵՊԵՐԳ։ Է և սորա նահանգիստ և 1,200 բնակիչ, յորս շատք գերմանացիք։ — ՇԵՆ-ՏԵՐՒ, ԲՐԻՏՈՒՆ, ՈՒԻՆՏՋԸՐ, քաղաքք մանուկք։ — Դուրս գնալ, առ որով ամբոխանի ալիք Ծովու ի մակընթացութեան սուս 60-70։

2136. Ե. Գ Ր Ե Դ Ը Ն Գ Լ Ո Ի Խ (Cape Breton). Կղզի 340 վարսախ սարածութեամբ առ Ս. Լաւրէնս. սիտի, հիւսիսային մեծ ընդ անդ. կլիմայն ցրտին է և երկիրն անբեր, արեւմտակողմն սպառածուտ և անմատոյց. ունի բովս ածխոյ։ Քաղաքներն ի հնդն. հրուանգին պատուի։

Սեռնեն գլխաւոր սուն է 1,000 բնակիչք. — Լ. Ի. Պ. ունի նահանգիստ։

2137. Ջ. Կ Ղ Զ Ի Ե Գ Ո Ի Ա Ր Դ Ա Ց Ի Ց. Խ Ա Ն Ի (Prince Edward). Կայ ի ծովը Ս. Լաւրէնսեան 280 վարսախ սարածութեամբ, բարեսուն օդով, հարթածաւալ և անասուածու։ Բնակիչքն Գաղղացիք և Անգլացիք։

ՇԱՐԼՈՏԳՈՐԾԱՆ (Charlotte Town). Գլխաւոր քաղաք, ունի նահանգիստ և 2,000 բնակիչս։

ՅՈՐՔԳՈՐԾԱՆ. Նահանգիստ առ Գոդոլիան գոգովն

2138. Ի. Ն Ո Ր Ե Ր Կ Ի Ր կամ Ն Ո Ր Ը Ն Դ Ի Ս Կ Ղ Զ Ի (Newfoundland). Ընդ 46°-51° լայն. հիւս. և 55°-62° երկ. արեմ. յամենայնս Ս. Լաւրէնսեայ Ծոցոյն և Ալանդեանին, հնդուցն Պելլ-Իլ (Belle Isle) բաժանել զսա ի Լապրատորայ, 4,600 վարսախ է սարածութեամբ նորին. Գայտգ եգիս զսա ի 1497 և Անգղիացիք սիրացան Թաղիալ ի ձեռաց Գաղղացւոց. Ներքին գաւառն լեռնային է և անմատոյց և ուրեք անսաստին, ձմերային ցրտութիւն, մեգ և հողմանք խափանեն զքաշաբերութիւն երկրին, և չիք անգ բոյս սիսանի, բայց գեսնասիճար և սրմիկք ինչ. ունի անսպառ բովս ածխոյ, և երկաթ և պղինձ։ Գարմանեն անգ ընանեն անասունս և երկրավոր ընսիր. անասնի է յոյժ ազգ շանց կոյս երկրի Թաւսմամբ և հարսի, որ մինչ վայրենին է ջնասկ հողից, այլ ընանելացեալ քաջ պահապան լինի և տանց։ Բնակիչք անգղիացիք ազգասէ ոչ ունին հասատատուն օրինս վարչութեան, քանզի ցերբ և ցան ծաւալեալ են ընդ ամենայն կողմանս և պատրպանին ի հիւսիսարեւելից, զի գաղնի ձուկն առատ յեպերս նորուն յատեա յարեւելս հարաւոյ, ևս և ի գեսս։

Ամի ամի հազարաւոր նաւք գան Անգլերայայ և ի Մեսպան գաղնագոց Ամերիկոյ յարեւելեան և ի հաբատային ծովափունսն ի սահմանս կուսակալաց ատաղ, և ջոյն հարուածին է անգ 40-60 ձողաչափ. ի կէս սեմեանն յունիսի սկսանի հիւսիսարեւելեան, ընդ առաւսու սրձակին գիսակոյս լորիւք սրասիք և 16 կարճիւք, և ի ընաւ հատան ձկամբ գաղնան ի ծովիք, ուր հանեալ գձկունս ընդ հովանեաւ յարկայ կառուցելոց յայս պետս՝ հանին գիսորասեան, յարկն և գնեն ի ցամաքել զատուրս 15 կամ 20 գբուշացուցեալ յանձրևոյ։ Անգղիացիք իբր 1,500 նաւս առաքեն 15,000 նաւորդաք ի հիւսորսութիւն և որսան իբր 50 միլիոն ձկանց. Ամերիկացիք 2,000 նաւս և 24,000 նաւորդս. գաղղիացիք յամին 1826 առաքեցին 350 նաւս 10,000 սրամբք և որսացին որս 7,500,000 ֆրանգաց. ի հասարակի 2,000,000 կենդանիս ձկան ապատ ի սարասք երեսն ի ծով երկրէ։ Գարձեալ լինի անգ և որս փոխոց զոր ի մարսի որսան, և է պետանի մերթ նորին և ձարս։

Սէյնթ Ջոնս (S. Johns). Ամեր քաղաք ԱՆԳԼԻՈՅ Թեսկղզւոյնէն 11,000 բնակչաք, յորս յոլովք Հիմորք են։ — ՓԼԱՍՏՈՒԻՒ, ունի նահանգիստ և 5,000 բն։ ՀԱՐՊԳԵՐՍՐԵՑՈՒ (4000), Դ Ի Ս Խ Ո Ի Ե - Հ Ա Ր Պ Գ Ը Ր, երկոցուն են և նահանգիստք։ — Հանգիստ բերանոյ Ս. Լաւրենտիոսի կայ ԱՒՏՈՒՈՈՒՏ անասատանիչ և սակաւ մարդ կղզի 330 վարս. սարածուածեամբ. յապատաժ նորա չորիւն երեվելոցիբ։

2139. Ը. Կատակալ Նորոյ Երկրի իշխէ և Թեղատ կղզւոյն Լ Ա Պ Ր Ա Տ Ո Ր Ա Ց որ ի ծագ արև. հիւս. Ամերիկոյ ընդ 50°-63° հիւս. լայն. և ընդ 88°-82° երկ. արեմ. երբէ 60,000 վարսախ քառակուսի. յարևմտից և ի հիւսիսոյ՝ սահմանի Հուսուպնաս, յարեւելից՝ Ալանդագանաս, ի հարաւոյ՝ Ս. Լաւրէնսեայ ծոցով և Սաորին կանագոյնս. ոչ զբ իշխեաց մինչ ի Ներքին գաւառն, որ լեռնային գոլ կարծի, ցերմուածեան կարձեան կալեալ է զերկիրն, ի 56° և անգր չիք երկիր բուսաբեր. ընդ հարաւ և ընդ արեմսեան գետին անասաբ սակաւք, զայլ կողմանս պատեն սառամանիք. չուրք ծովայինք գան ի հարաւային ծովէզերս. և գաղանք ինչ ի գետասուբեր, որոց մերձ պատանան է ի մէջասակ։ Բնանելիք կողմանցն են Հնդկիկք ձկնորսք և որսորդք ոզք և սանձն տուբեսաւ ընդ Հուսուպնի ընկերութեան. ի հիւսիսային գաւառս բնակեն Լապիացիք որեցիմ Թշնամիք Հնդկաց. Նւրոպացի վաճառականք և ձերնորսք ունին բնակարանս ի կողմանս ինչ սփռանցն. և Մորաւեան Երբայք գաղիանս, Դնսէն, Օոհոռ, Հեբեբոս և Հեբրոն (Nain, Okkak, Hopedale, Hebron)։

2140. Ցարևմտակոյսն Կանագոյ՝ ընդ անասաբ սերուածեան Անգղիացւոց ձկնի Ն Ո Ր Բ Ր Ի Տ Ա Ն Ի Ա Ց և Ն Ո Ր Կ Ա Լ Ե Դ Ո Ն, անծանօթ մեծաց գաւասք, Լ Ա Վ Ա Դ ուածոս լերանց մինչև յ'80° երկ. և ի ծագաց բանասային Ովկիանոս մինչև ի սահմանս Միասն Կանադա գաց ընդ 49° լայն. սարածուածեան երկրին զանցանէ զ280,000 վարսախաբ, յորում ամրոյք և գործատունք ինչ անեն գասանին Ընկերութեան Հուսուպնի սակս վաճառաց սերնոց. սակայն Անգղիացիք և Ամերիկացիք և Ռուսք վիճին ի վերայ ամայուածեանցն այնոցիկ. ցուրս սասակասածոյ է յաշխարհն անդ, մանաւանդ ի սահմանս Հուսուպնի ուր բուսաբերութիւն ոչ երևի անգր քան 58°, եսկ յարևմտակոյսն ձգին անասաբ երևին ծագաց մինչև ի 60° լայն. Երկիրն մեծաւ մասամբ բարձրաւանգակ է խոնարհեալ ի հիւսիս, մասամբ բարձրացեալ է խոնարհեալ ի վասկեր. և բնակիչն անգ գազանք և անասունք սակաւորք, արջ Ձերմակ և Թուխ, Գ-ւ եղջերու մեծու-

թեամբ հաւասար ձիոյ, գոմէշ վայրի սահագէա, եղն վայրի սապատ ոզամբ, էլան, բէն, բեչկ մկնոյ, ա-ղուէս, գայլ, կզնաքիս, լուսանունք, Ճագար, նա-պատակ, և այլն, զամենեցուն սոցա զմորթ և զմուշտակ Հնդիկք երկրին տան վաճառականաց, և զմիս նոցա ուտեն որպէս զձուխն, զի չէք նոցա այլ Ճարակ, բայց խոտ՝ զոր երկիրն ինքեան բերէ և վայ-րի հաւք, որպէս կաքաւ։

Հնդիկք բնակիչք նոքին գաւառաց վրանօք չրջին և հիւղս կառուցանեն ուր յոլովութիւն ի-ցէ որոյ և սպա չուէն չամբք իւրեանց։ Բազմանկուածին օրի-նաւոր է առ նոսա, այլ զնանայս իւրեանց ի գԺըն-դակ սպասաւորութեան տառապեցուցանեն, վասն որոյ բազում մարք հեղձուցանեն զդաւեր իւրեանց. Ծնաբարբ երկայնաձիգ նշան է բարեկամութեան առ սոսա, և ի սկիզբն ժողովոյ և ի հաշտութեան նշա-նակ ձգեն զձուխ ի յայղոյութիւն և ի հաստատու-թիւն գաշնից. ի գադարման որոյ պարապին ի պատերազմին, այլ գաւով և գարաճոք յաձախ վճա-րեն զայն քան Ճակատու մարտիւ. զերկնամիս կըտ-ասամբ կորուանանն ևթէ բերցեն ի ձեռս, և զան-կելոցն ի կուռն զմորթ երեսաց կարձնովին ընդ գլուխն ածեն. սակայն ծանօթութեամբ Եւրոպացւոց տակաւ հրաժարին ի խժական սովորութենից աս-տի. անհնարինս մնլեալ են զհետ ցքէոյ՝ որ պատու-հաս նոցա է որպէս և ախտ ծաղկի և պատերազ-մունք և սով, որ սակայ սպրդին առ նոսա։


Էգիմացիք նուազունք թուով և հալածեալք ի Հնդկաց՝ ապաստանեալ են յանմարդաբնակ ափունն ուր որսով ձկամբ կեցին, և ընտանի անասուն նոցա է չուն, քանզի զերն չյաջողեցան գարմանել։ Բայց զնոքին գաւառացն չունինք ինչ ծանօթս ի վաճառականաց, և բնակութիւնք սոցա են յափունս ծովեք վայրաչէն տունք ցցապատնէշ ամրութեամբ և հրանօթովք, ուր գան հնդիկք բերել զմորթս. Իբրև 4 կամ 500 ոք են վաճառականքն զորոց ա-սացաք, և չուն իւրեանց տեղի ի տեղւոջէ փո-փոխեն։ Ընկերութեանն Հուսոնի գվաւոր բնակ-ման է Եօ-ի ամրոց ընդ 57° լայն. 95° երկ։ Չըր-չիլ (Churchill) ընդ 59° լայն. երկրին ևս առ Հուս-սոն գոգով։ Ընկերութեանն արևմտից հիւսիսոյ՝ Շիբբիվիան ընդ 58° լայն։

Յնդկաց ձեռս է և ԱՐԵՒՄՏԵՑՈՑ ԳԱԼԵՏՈՒԹ ասացեալ երկիր որ ի 48 աստիճանէ լայն. ձգի մինչև ի 58°, յարևմտեան Ապառաժ լերանց (Rocky mountains), յերիս բաժանին ափունք նորա ի Նոր Գոռնուէլ, Նոր Հանովր և Նոր Գեորգիա. կլիմայ երկրին չէ յոյժ ցրտին, վասն որոյ առնին անդ ան-տառք գեղեցիկք և երեվայրի բազում ի նոսա։ Հընդ-կիք բազմաթիւ են յերկրի աստ և բաբառոսք, զա-մենայն գերիս զոր վարեն ի մարտ՝ սպանանեն և ուտեն, բնակարանք նոցա են միջամէջ նաւակք, յոր նստին իբրև 800 անձին միադունդ։ Յափն Ֆրէնչ գետոյ որ ի ներքին գաւառն՝ կայ գործա-տուն ընկերութեան Մոնրէալայ Ո-ե-ք Գ-ե-ֆ-ո ա-նուն, ուր կան 150 անձինք, որոց են ընտանի ա-նասունք և վիճակք գեանաձնոյդ։

Ի հարաւային արևմտեան ծայր Գալետոնիոյ կայ Վանքուվըր կղզի ի խաղաղական ովկիանոս, զոր արդ ընկերութիւնն Հուսոնի մարգարեական առնէ։

Յնդկանգական ովկիանոս ունին Անգղիացիք և ՊՐՏՐՈՈՒՑ կղզիս ընդ 32° լայն. հիւս. և ընդ 63°–64° երկ արևմ. զորս եգիտ Յոհաննէս Պերմուդէ ի 1527, և Անգղիացիք գրաւեցին ի 1672. ընդ ամ-նայն միջ և փոքր իբր 400 կղզեկք են, յորս 8 ևթ բնակչալք 11,000 անձամբք. ամենեքին քարոտք և անբերք և անջրդիք. այլ դոյզն ինչ բերք յարգահանդ-ինչ վիճակս գտանին մալեցոյ, կանեփոյ, ծխախոտի, բամբակի և արմաւենց, և մայր փայտ կարճր պիտանի ի կառոյց նաւաց, յոր պարապին բնակիչքն իբրև 13,000 արանց։ — Պերմուդ մեծագոյն է ի կղզեան և Ս. Գեորգ գվաւոր ի նոսա, զի ի նմին է համա-նուն քաղաքն 3,000 բնակչօք։

Ի ձեռս Անգղիացւոց կան յԱմերիկա և կղզիք բա-զումք գաւառք ինչ ի Կոլյան և ի Հնդուստան, յորս միահամուռ 950,000 ոգիք են հպատակք Անգղլոյ։ զորոց տեսցի զնին։



ՄԻԱԲԱՆ ՆԱՀԱՆԳՔ

ԿԱՄ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿՈՅ

Տարաձոքիւն 2,458,000 *մղոն*. □. — *Բնակիչք* 24,000,000:

2141. ՕՐՈՒՆ աշխարհ լայնածաւալ և յառաջադէմ պետութեան Միացեալ Նահանգաց, զառաջինն հրամանաւ Եղիսաբեթի դշխոյի Անգղիացւոց վրդր Իակէյ չոգաւ լաւեսել յամին 1584, և զցամաքյոր եզ ի Նահէ կոչեաց Վիրձինիա. բայց նախկին գաղթակատնացն ոչ կարացեալ ընդ երկար դիմել հնդկաց՝ խոյս եառուն յաշխարհէն երկիցս և երիցս, մինչև յամին 1625 հաստատեցան անտանօր. և ածեալ ժողովուրդն գաղթականաբ եկելովք յաւուրս վերջին Ստուարգեան Թագաւորին Անգղիացւոց, և արտահամանելովքն։ Յամին 1713 Անգղիացիք տիրեցին Ագաստիոյ, ասպա և զկանադա Նուաձեալ՝ կալան զամենայն հիւսիսայինն Ամերիկա. բայց Ժողովուրդն երթայր և առաւելոյր և բազում իշխանք եին ազատք կերդեալք արքունուստ, որք յամին 1763 հաստատեցին 13 Նահանգս դաշնակից. այլ երբէք անգղիական պետութիւն կամեցաւ կարճել զազատութիւնս նոցա և խափան լինել վաճառականութեան, արկաբ նեղով մաքս վասն Թէի մուծելոյ Անգղիա, ջերմեցեալքն Ամերիկացիք և ձայն ապստամբութեան հընչեաց ի Պոսդըն յամին 1773, և ի խստանալ առեներն Լոնտոնի՝ միաբանեցին ամենայն նահանգքն (1774) և Ժողով արարեալ ի Փիլադելփիա՝ հաստատեցին զանանիվ ի Բրիտանիոյ. և երբև Անգղիացիք բռնութեամբ զինուց յղուեցին զժողովեալսն ի գումար Մասսաչուսէթսայ, ձայն եառն մարտի ի 1775, և բազում անդամ հարեալ զզօրս Անգղիացւոց հրատապակեցին 13 նահանգքն զաղատութիւն իւրեանց ի 1776 ի յոր ամենեան յուլիսի. ի նմին ամ ձերբակալ արարին զզօրավարն Պուրկոյնիոյ 6,000 զօրականաք, որով զինչաս Անգղիա խոնարհել ի պայմանս խաղաղութեան, չնորհելով Ամերիկացւոց առաքել հրեշտակս յաստեանն Անգղիոյ. այլ զուր ջան, զի գաղղիացիք դաշնադիր եղեն ի 1778 ընդ նորոյ հաստատակատութեան, և ի միասում ամին Սպանիա ցնծ. Լաֆայէդ և Քոշիուսքոյ կարգեալ հրամանատար գաղղիացի ոհզակացաց գերի վարեցին 6,000 արամբք զԿոռնուոլիս զօրավար անգղիացի. յետ այնորիկ հարկեցաւ Անգղիա հաւանել ազատութեանն Ամերիկացւոց ի 1782, ի Նոյեմբերի 30. և վճարեցան պայմանք բանիցս ի գաշնադրութեան Բարիզու (1783):

Երեքտասան նախ գաշնակցեալ նահանգք էին Նիւ Հեմփշըր, Մասսաչուսէթս, Ռոտ Այլենտ, Կոննեկտիքուտ, Նիւ Եորք, Նիւ Ջըրզի, Բենսիլվանիա, Մերիլենտ, Տելաուեր, Վիրձինիա, Հիւս. Կառոլինա, Հար. Կառոլինա և Ջերձիա. յերկուց առաջնոց նահանգաց զատան յամին 1820 երկու ևս նահանգք Մէն և Վերմընդ. յաւելան ի Նոսին մի ըստ միոջէ և այլք, Լուիզիանա գնեալ ի Գաղղիացւոց (1803). Փլորիտա հատեալ ի Սպանիացւոց (1819) և ընդ պետութիւնս համարեալ յամին 1844, հանգերձ այլովք. յորս յաւելան յամին 1845 ցամն 1850 բազում գաւառք հատեալք ի Մեխիքացւոց, որպէս Գալիֆոռնիա, Դէքսաս, Ն. Մեխիքոյ, և այլն. որովք միահամուռ այժմ երեսուն և մի Նահանգք են գաշնակցք և չորք գաւառք կամ կալուածք չև ևս համարեալք ընդ պետութիւնս կամ ընդ նահանգս:

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

2142. Աշխարհ Միացեալ Նահանգաց տարածեալ կայ ընդ 68°–134° արևմտ. երկայն. և ընդ 20°–52° հիւս. լայնութեան. սահմանս ունելով ի հիւսիսոյ կողմանէ զանգղիական Ամերիկա, յարևելից զԱտլանտեան ովկիանոս ի հարաւոյ զՄեխիքոյ և զծոց նորուն, յարևմտից զխաղաղականն: Շափ տարածութեան համարի 2,458,000 մղոն քառ. երկայնութեան երկրին ձգի յարևելից յարևմուտս ընդ բոլո-

գակ լայնութիւնն հիւս. Ամերիկոյ մղոնս կըրկ. 2,500, իսկ լայնութիւնն ի հիւսիսոյ ընդ հարաւ՝ աւելի քան 1,000 մղոն։ Բայց արեմտեան կողմանք երկիրն՝ բաց ի Գալիֆոռնիոյ՝ չէ ևս են ընակեալ։

ԼԵՐԻՆԵՐ։ — Երկու պարբ լերանց են որ յերիս մասունս տառանեն զԱշնակից Նահանգս հիւսիսային Ամերիկոյ. անձկագոյն է արևելակողմն զոր պարսպեն Աւելի՛ կամ Աբ֊ալ֊ա֊չեր֊իք. ընդ սուս և ընդ ա֊պա֊ա֊լերինս ձգի երկիրն միսուրեայ և Միսիսիպեայ կարի բարեբեր, դաշտք նորա սիրաւէտք ա֊ա֊ռ֊ա֊ռ կամ մարմանդք կոչին. բայց անտառք սակաւ են ի նմա. իսկ զարևմտակողմն հասանէ ի Ծովէ պարս լերանց որ ի Գալիֆոռնիոյ երկայնի ընդ հիւսիս. ընդ մէջ սոցա և ապառաժոտա լերանց կայ լայնածաւալ հովիտն Գուղտպիա. բարեբեր քան զամենայն կողմանս աշխարհին։

2143. ԼիմՋ ՈՒ ԳԵՏ։ — Մի֊Լի֊սի֊ՊիՓի լճք լիւ֊ըսվ֊սպրիսկեալ է ի տահմանս Միաբան Նահանգաց, իսկ պալք ի լճաց բան մասին աեթ, բաց ի Շ֊ո֊ւ֊Նոյ֊. Ջրանցք բազումք յարդարեցան ի մտ ժամանակս ի գիւրութիւն վաճառականութեան, որպես Էրիոյ ջրանցք ի հարկրդութիւն այնր լճի ընդ Հուսպեն գետոյ 118 փարսախ յերկայնութիւն ի Ծով Ծոռք նահանգի. Մ֊ո֊ւ֊ 32 փարսախ ընդ Հուսպեն և Ցըլառար. Մ֊ի֊ա֊ա֊ 10 փարսախ ընդ Պոսդն և Մերրիմաք. Չ֊ա֊ր֊լ֊ս֊ր֊ն ար ի Սահգինայ առանի ի նահանգիսան Չարլզդնայ 36 փարսախ ընդ երկայնութիւն. Ո֊ա֊ի֊ն֊ի֊ս֊ր կամ Չ֊ե֊ս֊ա֊փ֊ի֊ք և Օհիոյ ի բնն. սիլանիս 124 փարսախ, որ զհոգմանք միացուցեալ ընդ Օհիոյ գործէ հաղորդութիւն ընդ Ոստընկդն և Բիլգսպուրի քաղաքս. Բ֊ե֊ն֊ի֊ս֊լ֊վ֊ն֊ի֊ա ընդ Տրըսառար և Օհիոյ, 220 փարսախ ընդ երկայնութիւն, այլ ոչ ուղղաձիգ. Շ֊ա֊ն֊ի֊ք֊ն ար ընդրեի ընդ Շանդրնայ կղեալ գործէ ճանապարհ հաղորդութեան ընդ Գէլվեք և ընդ Կոր Ծոռք. Օհիոյ 100 փարսախ ընդ կանագայ և Միսիսիպի լիճն, և այլք։ իսկ զգետոց աշխարհս ասանդեցաք ի կանխագոյն նոութեան Ամերիկոյ։

2144. ԿԼԻՄԱՅ ՈՒ ԲԵՐՔ։ — Կլիմայ Միաբան Նահանգաց ի հասարակի բարեխառն է. արևելակողմն ցուտագին քան զարևմտեայ, և հարաւակողմն և մանաւանդ ի Ֆլորիտա առաւելուն ջերմութիւն, բայց ձմերան և ամարան փոփոխմունք վաղ յաջորդին, և ի միում իսկ աւուր տապ և ցրտութիւն փոխիփոխ. անձրև և ցօղ առատ իջանէ ի գետառատ յայնոսիկ. տապ և մեռեալ ջրեղէնք հարաւակողման բազում անգամ ածէն զներին գետնոյս։

2145. Բնիկ բերք երկրի Դաշնակից Նահանգաց են գետնանեխնոր, դապաք, և փայտ անտառի. այլ բարձրաձին և բոլոր յԱրևոսիոյ ածելագք անդր, սակայն ջք նոցա անուշահամ որակութիւն պտղոց, զորս ի չտրեկաց, և բանջարեղէնք յետ սուղ ժամանակի այլափոխ լինին, և չարկ լինի բերել յԱրևոպայ սերմին նոր, և արտք խաղոց չեն անդարաքը. ի հարաւային գետառատ մշակին և որիզ, բամբակ, լեզակ, շաքար, և ի հիւսիսի վուշ։ Բոլք առատ են, աղ և ծծումբ և գետնածուխ, երկաթ, կապար, սլզինձ, զինկ, և ոսկի յատաղի ի Գալոլին. գոն և հանքային ջուրք և ջերմուկք չատ. մանաւանդ ի Վիրգինիա, յԱբթալաչեան լեռնակս. են ի նմին նահանգի և աղի աղբերք։

ԲԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

2146. ՐՆԱԻՃՔ. Արագ արագ աճումն Թուոյ բնակչաց Միաբան Նահանգաց ի զարմանս կարգեալ է քաղաքագիտաց. ի հաստատել հասարակապետութեան 3 միլեան աեթ էր Ժողովրդոց երկրին. ի սկիզբն գարուս՝ 5,300,000. յետ տասն ամի (1810) 7,223,000. և ի 1820՝ 9,643,000. ի 1830՝ 12,867,000. ի 1840՝ 17,064,000. իսկ ի յետին մարդահամուի 1850 ամին գտան 23,351,000. և առաւելուս Ժողովրդոց բազմութեամբ նկաց յԱրևոպիոյ, և նորաստր աշխարհակալութեամբ, և ի սակս գիւրագին հետեւութեանց պարենի կենաց։ Յերկիս վերածին բնակչքն, յԱրևոպացիս, ի Հնդկիս և ի Խաչիկիս կամ Սեաւս։ Էւրոպացիք բազմութիւք են իբր $^{9}/_{7}$ մասն Ժողովրդեանն. և յոլովագոյն մասամբ են Անգղիացիք և Խալտասացիք, ապա Գերմանացիք, Հոլանտացիք Գաղղիացիք, և Սպանիացիք։ Լեզուս հասարակաց է անգղիական, թէպետև գերմանական ևս լսի ի բազում գաւառս. զղնդան ազգաց յորոց զնդագումն ունին՝ բերն և զբարուց նմանութիւն. այլ ի հասարակի հիւսիսային Ամերիկացիք շահասէրք համարեալ են, հարաւայինք հեղգք և անձնասպարք, և բնակիչք միջերկրային մասերուն, գործունեայք, բարեկրթք. Անգղիացիքն վաճառականք և ճարտար արուեստաւորք են, Գերմանացիք երկրագործք, գաղղիացիք զարգուց և կոհուց ձեռագործք և գըրուագրութեան պարագրիչք։ Խաչիկիք 3,200,000 բնակեն ի հարաւային գաւառս և ի տղաքգործութեան պարապին. զգերեաց վաճառ արդելին օրէնք, վասն որոյ սերմգեաց միայն յաբելու յայտնեալ թիւս սևոցն։ Իսկ Հնդիկք որ են բնիկ և ամերիկացիք համարին սուղ ինչ աւելի քան 400,000. որք ընկալեալ են զկրօնս քրիստոնէութեան և երկրագործք են արուեստից և կրթին ի քաղաքական կրթութիւն. իսկ յարեմտեան Միսիսիպեայ կան տակաւին և բարբարոսք։ Բազումք ի նահանգաց բարձին զգերես սարսուռեան, այլ կէսք տակաւին պահեն զայն, և են ի նոսին սարսուռք իբրև 3,060,000. Թէպետ և քան ի արդ եսպառ կարձել զտմարդի օրէնսն։

2147. ԿՐՕՆՔ։ — Կրօնից ազատութիւն մեծ է յԱմերիկա, ամենայն որ ըստ մարմնոյ ելոյ քմայն ընարէ իւր կրօնս, չառաջ դատաղնդք են և անգղիականք զանազանեալ ի բազմատպուի ազանդս. Գերմանացիք լուտերականք են, ուղղափառք Հռոմայականք ի Լուսիանն և ի Մերիլենդ բնակեն. հրեայք Թուով 12,000. Եկեղեցւոյն պաշտօնեից աեթ յանձն են ինամք կրօնից, որ առ նուազութեան կրթասուն նոց ոչ բաւարք ընծայեան. Հաւմականք արդ հա-

շուին աւելի քան 1,800,000, որոց են 27 եպիսկոպոսունք, եկեղեցիք 1,030, քահանայք սուղ աւելի քան ղեհիւ եկեղեցեայ։ Ի նոցաղանդս բազմաթիւ են Եպիսկոպոսականք կամ կարգաւորականք և Միլոտականք։

2148· ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ։ — Երբագ երագ և ամենազան բարգաւաճանօք արուեստից և կենցաղոգուտ գիւրութեանց՝ յառաջագէմ քան զամենայն պետութիւնս աշխարհի գտանին արդ Միաբան Նահանգք. և յարգասիս արուեստից քան զբազումս առաւելեալք, ի վաճառականութեան՝ երկրորդք, Անգղիոյ գաղղ առաջին. այլ յերկրագործութեան, և ի գիւրութեան տեղափոխութեան անձանց և առխամաղից, նմս ձանս պարտեայ, երկաթուղեայ և ջրանցից, և շոգեվար նաւաց և կառաց՝ գերազանցեն զամենեքումբեք. փոքր միս ևս՝ և շոգեշարժ մեքենայիւքն։ Ի վեր քան զամենայն՝ միս եգեալ է անդ երկրագործական արուեստին յառաջադիմութեան, որում և մեծ օժանդակեալ են՝ ճանապարհացն գիւրութիւն, և երկրին ընդարձակութիւն և արգասաբերութիւն. և ի վերոյ ասացեալ՝ խրախոյս և վարձատրութիւն ընկերութեանց և գիւտք պետանի գործեալ և խրատք իմաստնոյ և հրատարակութիւն գիտութեան արուեստին. Ֆարմինկդըն քաղաք փոքր ի Գոննեկդիկըդ Նահանգի, 2,000 բնակչօք՝ ընդունի 150 աշխարեցիս. կան օրագիրս երկրագործութեան։ Յայտ ուրեմն առ է, զի մշակութիւն երկրի ակնագրեալ է Ճոխութեան Միաբան Նահանգաց. և գիւաւորս վառեալ նոքին են բամբակ, դասպաք, որիզ, մանդ, ցորեան և ընդեղինք, չաքար, մոմ, կանեփ, և այլ ինչ անգործ նիւթեք. զոր առաքեն յօտար աշխարհս, առաւել ըզբամբակն՝ Անգղիա։

2149· ՁԵՌԱԳՈՐԾՔ չեւ եւս հասասարեալք անգղիականաց և այլոց ինչ պետութեանց Եւրոպիոյ, սակայն կարի բարգաւանք և բազմազանք են, և յար ի յառաջադիմութեան, որով դոյ յուսալ Թէ յետ ոչ բազում զանցուցեն զայլսն և յայսմ մասին. քանզի և ունին ղօր օժանդակս բարգաւանացն՝ հանքածուղ և երկաթ առատ, և ջուգարձս և մեքենայս և ձանապարհս գիւրս, որովք վաղվաղ հայհոյելոն զանհարթ նիւթս ձեռագործացն։ Գըլխաւոր ձեռագործք նոցա են բամբակեայք եւ առաւելք և ազգ ազգ կտաւուց. Թուղթ, ապակի, և այլ նոյնք և կահք տան։

2150· Ի ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ զառաջին տեղին ունին Ամերիկացիք յետ Անգղիացոց, և հատասար նոցա յածին յամենայն ափունս և կրեն զաղխամուղն ծագաց երկրի. ի նաւարկութեան հարստացք են յոյժ, մանաւանդ բնակիչք ափանց Լաւանդականին. հիւսիսային արեւելեան հանգիպ, մեծամեծ գետոց նաւարկութիւն և ովկիանոս ափանց գիպան գիրք՝ մեծապես տատասր լինին յաջողութեան նոցա. Մասնաւորեսկս նահանգ յառաջագէմ է յոյժ ի մասինս, և զբերորդ ման համարին վաճառուց գաղղ նահանգեանն՝ նա բառնայ ի նաւ։ Զորք ազգք են վաճառուց զոր առաքեն յօտար աշխարհս, ա. արգասիք երկրի, որպիսի են բամբակ, մանդ, դասպաք, որիզ՝ միս կենդանեայ, և սպառ առաւել քան զերբր ման համարին վաճառուցն արժէն. ե. փայտք անտառի. է. ապուր ձկան և ձկնաիւղ. է. ձեռագործք, յորս կարգեալ վերնշանակելոցդ՝ գրեալ են և մերթեք և մուշտակք, և պէսպէս զարդք և գրեանք, իսկ եկամուտ վաճառք զոր ընդունին՝ են ըստ բերս ձեռագործիք Անգղիացոց և այլոց ազգաց, լուխայ, հրացինք, և շաքար, քաքեր, թէյ, գինի, ջեղ, մրգաչիրք, սեղ, ժամացոյցք և գիրք, և այլն։ Ցամին 1850 գին եկամուտ վաճառուց համարիցաս առաւել քան զ1,000 միլիոն ֆրանգաց, իսկ տատածոյցն՝ աւելի քան զ900 միլիոն. Յամին 1851՝ բերաձքն՝ էրին 1,290 միլիոն, տարածքն 1,300 միլիոն։

Հայասան նահանգիկսք Դաշնակցացն են Ն. Եօրք, Փիլադելֆիա, Պոստըն, Ն. Օռլեան, Բորդըլնտ, և այլն. և քաղաքք ի ցամաքի Ալպանի, Դրոյ, Ռոչեսդըր, Լէնքսդըր, Զինչինդաթ, և այլն։

2151· ԿԵՌՈՒԹԻՒՆ հասարակաց քաջիկ քան յայլ աշխարհս ծաւալեալ է ի Միաբան Նահանգս, և գեղեցիկ կարգեք յարդարեալ ի հասարակաց զբօրցս, որց և բաղում ինամով միս դնեն և աատատեղենն ի բարգաւաճանս նոցին. են նահանգք որ հասատատեալ ունին գրամագրութիւ ի պետս վարժարանացն, և են որ հանգանակեն սակարկութեամբ, և ժողով ման վաճառեալ գեմոց հասարակաց՝ նուէրի ի հասս վարժարանաց. միոյ միոյ ի վճռականն և քաղաքաց են ազատ կամ մըի գպրոցք ընդ տեսչութեամբ 12 հոգաբարձուց ընտրելոց ի ժողովրդենէն. միայն գնահատ գրենդն վճարեն համբակք. և ուսանին զսկզբունս ուսանց և զսեփական լեզուին. իսկ ի մեծամեծ քաղաքս՝ նաև զլատին և զյոյն լեզուս. ինամ մեծ ունին բարձրական կրթութեան և անկէտց ի միտս մանկանց զբերնս արգարութեան և իրաւանց։ Գոն և բարձրագոյն ուսմանց վարժարանք և ձեմարանք յամենայն գիւաւոր քաղաքս, նոյնպես ձրի և ազատ դասախրատութեամբ. և ի վերոյ սոցա 120 համալսարանք կամ մեծամեծ ուսուցմարանք ի զանազան գաւառս պետութեան, յորս նշանակոր է Հարվարսոյ համալսարանն ի Մասաչուսէտս, Եալ վարժարան ի Գոննեկդիկդ. ընկերութիւնն Տարդմըտցոյ, Ռըդհեդոյ վարժարանն, և այլն. 40 վարժարանք են ատատատեղութեան, 35 բժշկապատրաստութեան, 13 օրէնսդրատութեան։ Ցամին 1841 ի Միաբան Նահանգս համարէին ընդ մեծ և ընդ փոքր 50,615 վարժարանք, և 2,009,400 ուսանողք, օրագիրք աւելի քան զ800. այժմ քաղաքական օրագիրք աւելի են քան զհազար. իսկ երկրագործականք և կրթականք, որպէս և վարժարանք առաւելեալ յոյժ յոյժ։ Սակայն ի բանասիրականս և ի գեղեցիկ գպրութիւնս և յարուեստս՝ չեն յառաջագէմ Ամերիկացիք. Թէպէտ և ընծայեցին օշ սակաւ պիտանի մատենս, այլ ոչ հեղինակս անհատս, բայց սակաւս ոմանս, որպէս Ֆրանգլին, Ուաշինկդըն, Ըրվին և Ֆենինմոր Գուբըր (Washington, Irving, Fennimore, Cooper)։ Թարգմանեն փութով զընտիր ընտիր երբայական մատենս, և գիւրիմացս յարգարեն զկարևոր գիտելիս ի պետս համ-

կին։ Հաստատեալ ունին ընկերութիւնս ուսումնա-
կանս և մարգասիրականս և հաւատարմոյցս ոչ սա-
կաւ, և անկէ ետքս բաղումս վասն պէսպէս տա-
րութեանց։

2152. ՎԱՐՁՈՒԻԹԻՒՆ միաբան նահանգաց ըստ
օրինացն կարգելոց յամին 1787 ռամկապետութիւն
է դաշնակից կամ միաբան նահանգաց. օրէնսգիրք ի-
խանութիւնն յանձն է ի ժողովէ՝ որոյ երկուս ա-
ւեանք են՝ Ներկայից և Նուիրակաց. Ներկայիցն
ընտրի ի գաւառատոց պետութեանցն՝ երկուս եր-
կու վասն միոյ միոյ ի պետութեանցն կամ նահան-
գաց, և ոչ այժմ 31 նահանգք են դաշնակիցք՝ 62
Ներուխիք են, որք վեց ամ միայն վարեն զիշխանու-
թիւնն, և ընտրին բնիկքն նահանգի յորոյ անուն
ընծային, և անցեալք չ'30 ամենիւքք, որոյ գէթ յիւն
ամաց հետ լեալ իցէ քաղաքացի պետութեանն. սո-
քա գործակիցք են յընտրութիւն պաշտօնակալաց և ի
հաստատութիւն վճռոց. ամ ամի երիր մասն նոցա
փոխի. Նուիրակքն են Թուով 333 և երկու ամ ևեթ
վարեն զիշխանութիւնն, և ընտրին ի ժողովրդենէն,
մի յ'70,680 ոգւոց. ընտրելիքն ընդ բնաւ ազաւքն
համարին իբրև 94,000 ոգիք՝ մի յ'233ից. Նուիրա-
կացն հարկ է չ'25 ամենիւք ուրեմն լինել և յ'7 ա-
մաց հետէ քաղաքացիս գոլ. սոքա առաջարկին օ-
րէնս։ Գէթ միանգամ ի տարւոջ խմբի ժողովն յա-
ռաջնում երկուշաբաթի դեկտեմբերի ի Վաշինկ-
ղըն, և երկրորդն տասանք ընծրեն իւրեանց առնեա-
խաս և պաշտօնեայս։ Նախագահ Ներկայուն տեղա-
կալ է Նախագահի համարին դաշնակցութեանն. զա-
ընծրեն սեփական ժողովք միոյ միոյ ի նահանգաց
յօրէքաժամեայ իշխանութեամբ. որոյ հարկ է անցեալ
գոլ չ'35 ամենիւք, և ծնեալ քաղաքացի և բնակեալ
յաշխարհին գէթ 14 ամ. Նախագահն մանաւանդ
Թէ Նախարարն ունի գործադիր իշխանութիւն և
զառաջնորդութիւնն ի պատերազմի ընդ ցամաք և ընդ
ծով, և խորհրդակցութեամբ ևեթ դաշինս և հաս-
տատել պաշտօնեայս. կարէ տալ վճիռ հակակամ
մեր ևեթ ակամ տեղի, այլ ևեթ նոքա կրկին զնոյն
հաստատեցեն՝ յորհնս համարի նոցայն մեր։ Ցա-
րեր Թոշակ նախագահին է 25,000 տոլար (իբր
150,000 ֆր.) ունի պաշտօնեայս վեց, դպրապետ
պետութեանն, և զբարեուսոյս հանդերձապետի,
պատերազմ և նաւարկութեան, զոստիկան ճանա-
պարհաց և զոստիկան գաւառատանց, որոց հասք են
միոյ միոյ 6,000 տոլար. իսկ ատենաիալոցն յաւուրս
ատենից ատուր ուրաք ուրաք տոլարք են Թոշակ,
ատենաբանէն՝ 16։ Մինչ միոյ ի նահանգաց են ա-
ռանձնակ իշխանք և ատեանք Ներով և Նուիրակաց
և օրէնք սեփականք. բայց ոչ և մի ոչ կարէ ինքնուրոյն
դաշինս գնել ընդ օտար պետութեան, կամ գրամ
հատանել, կամ շնորհել շնորհ ազնուականեան, և այլն։
Ստեպ ստեպ փոփոխութիւն առնեն կալաց ի ըն-
տրութիւն, յոր ի քաղաքական տեսութիւնս և ի
հոգս գրաւէ զինուս ժողովրդենէն. վասն այնորիկ և
յաճախութիւն քաղաքագիտական լրագրաց և վիճա-
բանութիւնք և կողմնակցութիւնք ի նոսա. Թէպէտ
և ընտրեալքն միշտ քուէիւք բազմութեանն ընծրին։
Դատաղական վարչութեան գերագոյն ատեան է ի
Վաշինկդըն և 43 տեառնք ի զանազան նահանգս.
գերագոյն ատենին դատողապետ մի է և ուրք ընծե-
րակալք. գործեալ բովանդակ պետութիւնն կիրն գա-
տողական շրջանակս սրտի, յորս երկիցս ի տարւոջ
շրջին դատաւորք վերին ատենին։

2153. ԴՐԱՄՔ միաբան նահանգաց ունին միաս-
թիւն ղՏ-ուբ, որ բաժանի ի հարիւրեակ. յամին
1846 վճռեցաւ զդաղրնական ֆրանգ համարիչ $18^{9}/_{10}$
հարիւրեակ. որով և տոլարն արժէ իբրև 5 ֆր. և
կէս, և աւելի եւս. Ոսկի գրամ է ութ-ի-ն որ արժէ 10
տոլար։

ՀԱՒՔ դաշնակցութեանն հաւաքին ի մեքսէ և ի
վաճառոյ կալւոյածոց կամ դեռնոյ հասարակաց և
ուստեք ուստեք. հասք 1851 ամին գուաթրեցան 39 մի-
լիոն տոլար. յերկրորդում ամին 62,800,000։ Ծախք
1851 ամին 48 միլիոն, իսկ 1852 ամին 50,953,000։
Պարտք հասարակաց ի վերջ կոյս 1850 ամին՝ գու-
մարեին ի 64,228,238 տոլ։ Բայց և միոյ միոյ ի նա-
հանգացն են առանձինն հասք ի բաժիկ և հարկաց,
և ծախք քաղաքականք, և պարտք։

2154. ՋԻՆՈՒՈՐՈՒԹԻՒՆ. — Միաբան կա-
հանգք ի 11 վիճակս զինուորականս տրհեալ են,
միոյ միոյ ունելով մի կամ երկու կամ առաւել նա-
հանգս. և մեծաւանքն գաթձալ լերինս գնչս վերա-
ծին, յարևելեան, յարևմտեան և ի գնչ ովկիանոս
մեծի որ ի խաղաղականն. զօրաժողի համաչարհա-
կան բանակին է Վաշինկդըն։ Ամենայն ամերիկացի
բնիկ և կարող՝ պարտաւորեալ է ի զինուորութիւն
ի վեշտասանամենից ց'45 ամն, և են այժմ ընդ զի-
նուորութեամբ 1,930,000 ոգիք. այլ զօրականք կազմք
են ինչ աւելի քան չ'12,000։ Ի ծովային զինուո-
րութեան՝ ի խաղաղութեան ժամանակս 7,800 զօրա-
կանք են, իսկ նաւք պատերազմիկք ընդ մեծ և ընդ
փոքր հանդերձ չորեքհարիւր են 80։ Ի ծովային զինուո-
րութեան անձնակամ նուիրին Ամերիկացիք, և Թո-
շակս առատապես ընծրունին. կրկնք և ճարտարք են
յարուեստին ոչ ինչ ընդհատ յԱնգլիացւոց, և նաւք
նոցա և կազմածք ճարտարագիտիք և վայելուչք. Եօթն
նաւարանք և հանգրուանք են տոլորին, Բորդսմըտ
ի Ն. Հէմփըր, Չարլըզդըն, Ն. Եօռք, Ֆիլատել-
ֆիա, Վաշինկդըն, Բենսաքսլա և Բորդսմըտ ի
Վիրճինիա։

2155. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆ. — Ըստ
քաղաքական օրինի դաշնակցութեան հիւս. Ամերի-
կոյ, որպէս և յառաջ ասացաք՝ բաժանի յ'31 Նա-
հանգս կամ դաշնակից հասարակապետութիւնս, և
ի գաւառ մի դաշնակցայ, որ է Գոլոմպիա, և ի
ըորս վիճակս կամ երկիրս, որոց չեւ և է ի կարգս
նահանգաց համարեալ. մի մի ի նահանգացն որո-
հեալ են յառանձնակ գաւառս մանուն՝ որ կոմսու-
թիւնք կոչին. ի տեղագրութեան աշխարհին ակա-
նիմք յարևելեան նահանգաց և իջեալ ի հարաւ,
անցեալ ընդ միջնաշարսն՝ ասարտեմք յարևմուտս.
Նահակարգեալ ասանաւոր ղինիս բնակեալ միոյ միոյ
նոցին և զնոսանէ, զնուիրակացն և զամ գաշ-
նակցութեան նոցա։

	ՆԱՀԱՆԳՔ	ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆ ԱՆԳ. ՄԱՐ. ՔԱՌ.	ԲՆԱԿԻՉՔ ԹՎԱՒՆ 1850	ԿԱՌԱՎԱՐԻՉՔ	ՆԱՒԱՐՏՈՒԹԻՒՆ ԴԱՐՁԱՑՈՒՑԻՉ	ՆԱՒԱՐՏՈՒԹԻՒՆ ՍԿԱՅԱՐԱՆ	ՀԻՒԱՆԴՈՑ ՍԿԱՅԱՐԱՆ	ԱՄՔ ԴԱՏԱՒ. ԿՈՒՐԹԵԱՆ
Ա·	Մէն	32,628	583,018	13	6	151	31	1820
Բ·	Նիւ Հէմփշըր	9,411	317,999	10	3	286	12	1776
Գ·	Վերմընդ	10,212	314,322	14	3	230	30	1791
Դ·	Մասսաչուսէթս	7,500	994,663	14	11	356	40	1776
Ե·	Ռոտ Այլենտ	1,740	147,543	5	2	69	31	1776
Զ·	Գոննեկտիքըտ	4,764	371,947	8	4	215	21	1776
Է·	Նիւ Եօրք	46,085	3,098,818	58	33	128	32	1776
Ը·	Նիւ Ճըրզէյ	8,320	489,381	18	5	58	18	1776
Թ·	Բէնսիլվանիա	44,000	2,314,897	55	25	100	23	1776
Ժ·	Տելաուէր	2,120	90,407	3	1	21	9	1776
ԺԱ·	Մերիլընտ	13,959	575,150	20	6	74	22	1776
	Գաւառ. Կոլոմպիոյ	63	51,670	1				
ԺԲ·	Վիրճինիա	64,000	1,424,863	124	13	152	50	1776
ԺԳ·	Կարոլինա Հիւսիս.	43,800	868,870	68	8	120	50	1776
ԺԴ·	Կարոլինա Հարաւ.	28,200	668,247	29	5	124	45	1776
ԺԵ·	Ճիորճիա	62,000	888,726	93	8	130	47	1776
ԺԶ·	Փլորիտա	58,786	89,459	20	1	40	19	1845
ԺԷ·	Ալապամա	50,722	779,001	49	7	100	33	1819
ԺԸ·	Միսիսիբի	47,151	605,488	56	5	92	32	1817
ԺԹ·	Դիւնըսի	45,322	1,006,213	72	10	75	25	1796
Ի·	Քենթըքի	40,560	993,344	90	10	100	38	1799
ԻԱ·	Օհիոյ	39,964	1,981,940	79	21	100	35	1802
ԻԲ·	Ինտիանա	33,809	990,258	87	11	100	50	1816
ԻԳ·	Միշիկան	56,243	402,041	32	4	66	22	1836
ԻԴ·	Իլլինուա	56,405	855,384	87	9	75	25	1818
ԻԵ·	Ուիսկոնսին	53,924	305,538		3	54	18	1848
ԻԶ·	Այոուա	50,914	192,247	18	2	39	19	1846
ԻԷ·	Միսսուրի	67,380	682,907	62	7	49	18	1820
ԻԸ·	Արքանսաս	52,198	198,796	40	2	75	25	1836
ԻԹ·	Լուիզիանա	46,431	523,094	38	4	97	32	1812
Լ·	Դելքաուա	223,000	230,000	36	2	66	21	1845
ԼԱ·	Գալիֆոռնիա	83,000	6,077		1	18	9	
ԱՆԱՆՑ·	Մինեզոտա	188,000	214,000		2	36	16	1850
	Նոր Մեխիկո	210,744	61,574		1	26	13	
	Ութա	187,923	20,000		1	26	13	
	Օրեկան	341,463	13,323		1	18	9	
		2,312,741	25,377,207	1,299	237	3,466	953	

Տեղագրութիւն

2156· Ա· ՆԱՀԱՆԳ ՄԷՆ (Maine)· Սահմանք սորա են՝ ի հիւսիսոյ՝ կանադա, յարևելից՝ Նոր Պրընզուիք, ի հարաւոյ՝ ծովն, յարևմտից՝ Նոր Հէմփշըր· տարածութիւն 5,004 փարսախ· Ունի Մէն լիբրիւս 1,500 ոսք ի բարձրութիւն, զԱՆ–ՏՒՆ գետս և զ···ՀԻ լիճ· Երկիրն անտառային և բարեբեր է ի հնդկին գաւառս, ախտնէն ոչ նոյնպէս, այլ ձուկն առատ է անդ· կլիմայ տօտագին յամառային և ցրտին ի ձմեռան·

ԲՈՐԴԼԷՆՏ· Գլխաւոր քաղաք վաճառաշահ առ գ···ֆ·ղ գետով, 16,000 բնակչօք·

ԱՒԿՈՒՏԱ· Մայրաքաղաք կարգեալ ի 1841, քաղաք փոքր· ԲՆ· 5,000·

